Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 85

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ քանասիրական տեղեկութեանց

ՄԱՍՆ Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1895

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառւում են Ընկերութեան գրասենեակում՝ եւ կենտրոնական գրավաճառանոցում։

		Ր.	Կ.
1	Թուամագ մեղու (սպառ.) { թարգմ. օր. Ն.	—	40
2	Կարմիր լապտեր { Տէր-Մարկոսեան	—	30
3	Մանկական երգեր, Գամառ-Քաթիպայի	—	15
4	Թովմաս եղբօր տնակը, { թարգմ. օր. Ն.	—	45
	Նոյնը կազմած . { Տէր-Մարկոսեանի	—	60
5	Մորեխ և նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տ.-Բարսեղեանի	—	10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Առաքելեանի	—	10
7	Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց	—	80
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի	—	50
9	Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններ, (սպառ.)	—	50
10	Ռօբինզօնի պատմութիւն, թարգմ. Գիւտ ք. Աղանեանի	—	60
11	Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի, աշ. Ռ. Պատկանեանի	—	75
12	Գառնուկ և Լուսատտնիկ, Շմիդտի, թարգմ. Նուարդի	—	25
13	Սայեաթ-Նովա, ազգային երգիչ	—	5
14	Ծննդեան պատմութիւնը	—	10
15	Աղաթանգեղեայ պատմութիւն	1	—
16	Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեան	—	50
17	Վանայ սազ, Գ. Շերենցի	—	75
18	Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան	—	20
19	Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ	1	—
20	Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմ. տիեզերական	2	—
21	Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը { Տէր-Աղէք-	1	50
	Նոյնը բնտիր թղթի վերայ { սանդրեանի	2	—
22	Ղևոնդ պատմագիր	2	—
23	Սրբազան պատմութիւն (սպառ.) { Ս. քահ. Սա-	—	30
24	Նոյնը ուսուցիչների համար { հակեանի	1	75
25	Սոկրատէս, թարգմ. օր. Թ. Ստեփոյեան	—	10
26	Պատմութիւն Հայոց, Պալասանեանի (սպառ.)	1	50
27	Ուղեցոյց գործնական շերամապահութեան, Կ. Մել.-Շահն.	—	40
28	Ժամանակագրութիւն Հայոց Յ. Դարդելի	1	25
29	Վարդ-Ռէսլին Սալիրի, թարգմ. Ի. Յ.	—	10
30	Նալ և Դամայեանթի, Ֆ. Շմիդտի	—	20
31	Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, Կոմս Լ. Տոլստոյի	—	7

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 85

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց

ՄԱՍՆ Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ։

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Іюля 1894 года.

ՄԱՍՆ Բ.

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ:

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՄԱՍՆ Բ

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԳԼՈՒԽ Ա.

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ. ԱՐՇԱԿՈՒՆԻՔ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

1. Արտաքսիաս, կամ կանգնումն հին Արարատեան թագաւորութեան: 2. Փոփոխութիւնք տիրող ցեղից: 3. Օրինակ իշխանութեան—բացարձակ միապետական: 4. Նկամուտք: 5. Դատաստանական վարչութիւն. Ընկերական կարգք. Օրէնք. Պատիժ: 6. Ազգեցութիւն քրիստոնէութեան: 7. Պաշտօնէութիւն. Գործակալք: 8. Զարդք: 9. Կառք: 10. Զինուորութիւն: 11. Պատերազմ: 12. Փող հարկանել: 13. Դրօշ: 14. Խառնուրդ: 15. Ճակատ յարդարել: 16. Հաղորդակցութեան հնարք. Ճանապարհք: 17. Ամրութիւնք: 18. Սահմանագլուխ իշխանութիւնք: 19. Զօրք: 20. Զօրանիստ տեղիք. Հնարք Մուշեղի, զրպարտութիւն զնմանէ եւ սպանումն: 21. Քակտումն զօրութեանն Արշակունեաց:

1. Արշակունի, այլով անուամբ՝ ստանիկ, այն է արքունական ցեղն Հայոց՝ էր հաւանականապէս սերունդ հին Արարատեան թագաւորութեան, որ չետ կորուսանելոյ զօրութիւնն իբրև 300 տարի, այն է ի Դարեհէ Վշտասպեայ (500 նախ քան գՔր.) մինչև յԱնտիոքոս մեծ, առաւ միւս անգամ զիւր անկախութիւն (189 ն. ք. գՔր.) Արտաշխիւ, կամ, յոյն յորջորջմամբ, Արտաքսիասաւ, նոյն իսկ յԱրարատեան երկրին, կամ ի Հովտին Երասխայ (Ստր. ԺԱ. 14. 2, 3), ուստի և յիրաւի կը կոչուի ի Բուզանդայ երկրորդ «Արարատեան տէրութիւն» (Բուզ. Գ. Ժ.): Այսպէս, ըստ մեզ, աւելի ճիշդ և պատմական է կոչել զնա ընդհատեալ յաջորդութիւն հին Արարատեան թագաւորութեան, քան գուստր պարթևականին, որպէս երևեցուցանէ Խորենացին:

2. Արշակունեաց թագաւորութիւնն, թէպէտ սկսաւ հին արարատեան ցեղիւ, սակայն չտեւեց նոյն ցեղին մէջ որդի ի հօրէ մինչեւ նոյն անուան վերջին թագաւորն Արտաշէս, որպէս կուտայ կարծել նոյն Խորենացին, ըստ օրինակի Յուդայի թագաւորութեան, որ տեւեց ի նմին տան ի Դաւթայ մինչեւ ի վերջին շառաւիղ նորա Սեդեկիա։

Արշակունեաց թագաւորութիւնն, որ տեւեց իբր 550 տարի (189-է ն. ք. գՔր.—428 յետ Քսի), ունի երեք ժամանակ կամ դար՝ ընդարձակ մտօք. յառաջնումն ցեղն Արտաքսիասայ կը տիրէ միահեծան ի սկզբանէ (189 ն. ք. գՔր.) մինչեւ գրեթէ ի սկիզբն քրիստոնէական թուականին. յերկրորդումն, ի սկզբանէ քրիստոնէական թուականին մինչեւ 105, կը տիրեն խառն թագաւորք Հայացեալք այլեւայլ թագաւորական տուներէ մերթ Պարսից եւ մերթ Հռոմայեցւոց կողմանէ, մանաւանդ այս վերջնոց, որոց եւ հարկատու է թագաւորութիւնն. յերրորդումն կը տիրէ Պահլաւ ցեղն, յԱրտաշիսէ Բ. ըստ Խորենացւոյն (Տիրիթ կամ Տրդատ ըստ Տակիտոսի) մինչեւ ի բարձումն թագաւորութեանն (428) ի ձեռն երկուց սահմանակից մեծ տէրութեանց, Հռոմայեցւոյն եւ Սասանականին, որոց խաղալիկ եղած էր թագաւորութիւնն գրեթէ իւր ծննդենէն հետէ։ Զառաջին զերկուս ժամանակսն մարթ է կոչել հեթանոսութեան ժամանակ, զվերջինն՝ քրիստոնէութեան ժամանակ, յորում Հայ ազգն, իբրեւ տէրութիւն, է արդարեւ աւելի տկար, բայց աւելի ինքնագէտ (conscient) եւ բարոյապէս աւելի անկախ, եւ որով կ՚սկսի ազգային պատմագրութիւն, ըստ ոգւոյն՝ քրիստոնէական, այլ ոչ առանց վիպասանական (légendaire) ձեւոյ։

3. Արշակունեաց թագաւորութեան, իբրեւ իշխանութիւն, իսկութիւնն, իւր սարօքն, էր արեւելեան բացարձակ միապետութիւն, ուր կամք միապետին էին օրէնք։ Թագաւորութիւնն, թէպէտ ի բնէ բաժանեալ ի գաւառս, որոց գրեթէ իւրաքանչիւրն էր ինքնօրէն աղեկամի՝ ունէր սակայն միութեան այն կերպը, որ կը կոչուի աւատային եւ որ վաղեմի միապետութեանց շատերուն սովորական կերպն էր։ Այս միութիւնը կազմող մասնաւոր իշխանութիւնք, որպէս անուոյ շառաւիղներ, կ՚երթային միանալ իբրեւ ի կեդրոն յանձին թագաւորին, որ էր «բնակ տէր երկրին» (Բուզ. Գ. ԺԱ. Ի, Ե. Ե. եւ այլուր). եւ այս ոչ միայն յառաջնում ժամանակին, յորում թագաւորութիւնն էր միահեծան, այլ եւ յետոյ եւս, մինչ ինքն իսկ թագաւորութիւնն էր աւատ սահմանակից մեծ տէրութեանց, մերթ միոյն եւ մերթ միւսոյն։ Զայս աւատային ձեւ կ՚ակնարկեն մեր հին լեզուաւ բառք, «ձեռատունկ, ձեռասուն, ձեռակերտ, դաստակերտ»։ Այսպէս Տրդատ, ըստ Ագաթանգեղոսի, ի հրովարտակին առ ամե-

նայն Հայս, կ'անուանէ բոլոր երկիրը «ձեռատունկ և ձեռասուն Արշակունեաց»։ «Ամենայն նախարարք մեծամեծք և ազատք և զօրծակալք և սիրելիք մեր թագաւորաց… [illegible] և [illegible] մեր Արշակունեաց» (Ագաթ. ԺԲ.). և Հայոց հրովարտակն կամ նամակ առ Թէոդոս՝ կ'անուանէ բոլոր երկիրը «դաստակերտ» Համայեցւոց. «Ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց, (որք) ունելով զՆերսեհ՝ անցին և անցին և Ասիացւոց կողմանցն… և յայնչափ մեծ իշխանութեան՝ [illegible] մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին» (Եղիշ. էջ 122, 123)։

Զիշխանութենէ թագաւորին, որպէս ասացաւ ի վերոյ՝ այսչափ միայն գիտեմք, թէ էր արևելեան բացարձակ միապետական և թէ հրաման թագաւորին էր օրէնք։ Թէ կա՞ր արդեօք գէթ նախարարական ժողով, չափաւորիչ կամ որոշիչ ի վարչութեան՝ չէ ամենևին հաւանական. խորհուրդ նախարարաց կամ խրատն էր բարեխօսութիւն միայն կամ աղաչանք։ Հրամանք, որ կ'ելլէին թագաւորին բերնէն, ևս և անիրաւք՝ պարտէին կատարուիլ։ Այսպէս Տիրան, թոռն Տրդատայ, մին ի տկարագոյն թագաւորաց մերոց, տուաւ սպանանել զծերունին Դանիէլ, և ոչ իսկ իբրև բարեխօսութիւն յարգելով ուագանւոյն խրատն։ «Իբրև գայս (զյանդիմանութիւն Դանիէլի) լուաւ (Տիրան), ասէ Բուզանդ, բորբոքեալ ի բանսարկութիւն դառնութեան ամբարշտութեան ցասման իւրոյ՝ տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա։ Բայց մեծամեծ նախարարացն աւագանին շատ եդին ի մտի արքային զի մի կատարեսցէ զչարութիւն կամաց իւրոց. այլ նա ոչինչ անսաց նոցա. սպասաւորքն կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի. ճոպան ի փողս եդեալ խեղդամահ արարին զնա» (Բուզ. Դ. ԺԴ.)։ Միով բանիւ, թագաւորն էր կենաց և մահու տէր իւր բոլոր հպատակներուն՝ առանց խտրութեան մերձաւորութեան և ատոիճանի։ Արշակ հրաման կուտայ Վարդանայ Մամիկոնենի, եղբօր սպարապետին իւրոյ Վասակայ, սպանանել զԳնէլ, որ էր եղբօրորդի Արշակայ (Բուզ. Դ. ԺԱ.). Վասակայ կը պատուիրէ սպանանել զՎարդան զիւրուրոյն եղբայր (Բուզ. Դ. ԺԸ). Պապ կը հրամայէ սպարապետին իւրում Մուշեղայ սպանանել զմարդպետն Հայր (Բուզ. Ե. Գ.), և հրամանքն կը կատարուին անդէն։ Եթէ պարտ է հաւատալ Խորենացւոյն՝ Արշակ զնոյն ինքն զհայր իւր զՏիրան տուաւ առնել հեղձամահ սենեկապետաց նորա (թէպէտ դաղտ). «Հեղձամահ եղև (Տիրան) յիւրոց սենեկապետաց ի հրամանէ որդւոյ ի գաղտնիս» (Խոր. Գ. ԻԲ.)։ Տիրանայ բացարձակ հրամանն կատարուեցաւ նոյնպէս ի վերայ Յուսկան. ոչ խնամութիւն նորա, քանզի փեսայ էր Յուսիկ Տիրանայ, և ոչ կաթողիկոսութիւնն, որ

առաջին պատիւն էր զինի թագաւորութեան, որպէս յետ այնորիկ, նոյնպէս յառաջ՝ կարացին ազատել զմանուկ հայրապետն բացարձակ հրամանէն Տիրանայ. Յուսիկ եղաւ բռածեծ և մեռաւ. «բռածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ, երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոճեալ ընկեցեալ լինէր, զոր բարձեալ պաշտօնէիցն բերին ի գաւառն Դարանաղեաց ի գիւղն Թորդան, և անդ ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ» (Բուզ. Գ. ԺԲ.)։ Ազգեցութեան տէր նախարարի ուրուք անձնական համարձակութիւնն միայն էր երբեմն թագաւորին բռնութենէն ազատող։ Այսպէս, ըստ Բուզանդայ (Գ. ԺԸ.), Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք դիպելով առ Տիրանայ՝ կորզեցին բռնի զերկոսին տղայ մանկունս, որ մնացած էին ողջ Ռշտունեաց և Արծրունեաց կոտորածէն. «Յայնմ ժամանակի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհնդակայ Ռշտունւոյ և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, տղայք սնդիկայք, զորս ածին առաջի թագաւորին։ Իբրև տեսանէր (Տիրան)՝ տայր հրաման հանել փողոտել զմանկունսն, զի նոքա և եթ ճետք մնացեալ էին յազգացն։ Եւ անդ դիպեալ Արտաւազդ և Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց՝ յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ ի դուրս գնացին. զէն ի վեր առեալք, կռուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել»։ Երբ Արշակ յանդիմանեալ ի Խադայ, ըստ Խորենացւոյն, հրամայեաց քարշել և քարկոծել զնա՝ «տայգերք դստեր նորա, ասէ Խորենացին, ի մեծ նախարարութեանցն, ի կորովի և ի քաջ ազգէն Ապահունեաց, սուսերս հանեալ՝ կիսախողխող զքարշողսն առնէին, և յափշտակեալ զԽադ ի ձեռաց նոցա, յիւրեանցն գնացին գաւառս» (Խոր. Գ. ԼԲ.)։

Ոչ անհատներու միայն, այլ և ամբողջ ցեղերու ջնջումն կախեալ էր, յիրաւի կամ յանիրաւի, թագաւորին բացարձակ հրամանէն։ Այսպէս հրամանաւ կամ թոյլտուութեամբ Տրդատայ բարձաւ ապստամբ ցեղն Սլկունեաց (Խոր. Բ. ՁԴ.). հրամանաւ Խոսրովայ նորին որդւոյ և յաջորդի՝ բարձան երկոքին անսաստ ցեղքն, Մանաւազեանն և Որդունին, նոյնպէս Բզնունեացն և Աղձնեաց (Բուզ. Գ. Դ, Խոր. Գ. Բ, Բուզ. Գ. Ը.). ցեղքն Ռշտունեաց և Արծրունեաց հրամանաւ Տիրանայ եղեն գրեթէ բնաջինջ (Բուզ. Գ. ԺԸ.), և Կամսարականացն՝ հրամանաւ Արշակայ (Բուզ. Դ. ԺԹ, Խոր. Գ. ԼԱ.)։

Ինչպէս կենաց՝ նոյնպէս ընչից և ստացուածոց բացարձակ տէր էին Արշակունի թագաւորք։ Պարգևք կ'ելլէին անմիջապէս թագաւորէն։ ԶԱրտաշիատ ասէ Խորենացին, թէ Սմբատայ սպարապետին իբրու, յետ պատերազմին Կասպից, տուաւ կալուածս ի պար-

գև. «Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան… վասն որոյ արժանի ըստ վաստակոցն պարգևէ նմա Արտաշէս զմասն արքունի որ ի շէնս Գողթան և զՈւղտու ակունս, և առ այսոքիւք և զաւարն ամենայն նմա թողու» (Խոր. Բ. ԾԳ.)։ Նոյնպէս Տիրան Ա., ըստ նմին Խորենացւոյ, կուտայ երևելի կալուածներ Դրուասպայ ումեմն Պարսկի, որ էր օգնական Երախնաւու, խնամակալութին տէրութեանն. «Զոր (զԵրախնաւու) սիրեալ արքայի՝ տայ նմա զգահն երկրորդական, և զհօգս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ՝ առ նմա թողու զԴրուասպ ումն պարսիկ, զմտերիմ իւր, որ խնամացեալ էր ընդ նախարարս Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն, և զայգին մեծ յոր մտանէր առուն՝ գետ հանեալ ի ծովէն Գայլատուայ» (Խոր. Բ. ԿԲ.)։ Ըստ Բուզանդայ, Խոսրով, երբև բացարձակ տէր երկրին՝ յետ պատերազմին Մազքթաց, կուտայ զօրավարաց իւրոց, մանաւանդ Վաչէի որ սպաբապետն էր՝ երկիրներ. «Ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով տալ պարգևս արանցն քաջաց, որ վաստակեցին նմա և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն մարտս ճակատուցն պատերազմաց։ Եւ ետ Վաչէի զօրավարի զականս Ջանջանակին և զՁրաբաշխիս և զՑլու գլուխ ամենայն գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս» (Բուզ. Գ. Ը.)։ Եւ զՊապայ ասէ նոյն Բուզանդ, թէ յետ ճակատուց որ եղան ընդ Պարսս, յորոց մին էր Ձիրաւին, զոր կը պատմէ նաև Խորենացին՝ շատ պարգևներ և գիւղեր տուաւ Մուշեղի. «Յայնմ ժամանակի բազում պարգևս և պատիւս և բազում գիւղեան զօրավարին Մուշեղի Պապն շնորհէր» (Բուզ. Ե. Դ.)։ Ոչ պարգև և կալուած միայն, այլև նախարարաց ամբողջ երկիրն, մանաւանդ յանցաւորներուն, ուրիշ նախարարի տալու իշխանութիւն ունէին թագաւորք մեր։ Տրդատայ համար կը պատմուի, թէ Սլկունեաց երկիրն ի Տարօն տուաւ Մամգունայ, Մամիկոնեանց նախնւոյն ի ժառանգութիւն (Խոր. Բ. ՁԴ.), և որդի նորա Խոսրով զերկիր ապստամբ բդեշխին Բակրոյ տուաւ Վաղինակայ Սիւնւոյ (Բուզ. Գ. Թ.)։ Չէր անսովոր թագաւորաց մերոց յարքունիս գրաւել երկիրներ։ Այսպէս Խոսրով զտուն Գատարենոյ գրաւեց յարքունիս. «Եւ զտուն նորա կալան յարքունիս» (Բուզ. Գ. Ը.), և Արշակ գրաւեց Արշարունեաց երկիրներն. «Զտոհմս Կամսարականացն որ էին գաւառաց տեարք, Շիրակայ և Արշարունեաց, ազգաւ առնէր (Արշակ), և զգաւառն ունէր յատան» (Բուզ. Դ. ԺԹ.)։ Ահա արևելեան բացարձակ միապետութեան կատարեալ պատկեր։ Ե՞ր հնար այլ ազգ սպանել թագաւորէ, որ չէր ընդհատ յիւրմէ գրացւոյն, զոյգ պարթե-

ւականէն, հանդերձիւ և ձևով անգամ, ինչպէս կը ցուցնեն առա-
ջին ժամանակին Արշակունեաց գահեկանք արևելեան խուրիւ, որ հա-
գիւ կը տարբերի յոյնմանէ, զոր կը կրէին թագաւորք պարթևք,
ինչպէս կը տեսնուի ի գահեկանս այս վերջնոց։

Չկարէր լինել տարբեր պարթևականէն նաև վարչական դրու-
թիւնն իւր բոլոր ճիւղերով։ Կատարեալ վարչական յերիւրուած ինչ-
պէս առ մեօք, բաժանեալ պաշտօնարաններու, գլխաւորներուն ան-
գամ, ինչպէս ելևմտից, դատաստանի, ոստիկանութեան, զինուորու-
թեան՝ չէ հաւանակա, թէ եղաւ երբէք ի Հայս։ Գործակալք կը
յիշուին արդարև, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, իբրև պաշտօնեայք,
բայց ոչ այժմու մտօք, իբրև գլխաւորք իւրաքանչիւր մէն միոյ
մասին վարչութեան։ Կար աւագութիւն և կրտսերութիւն ի գործա-
կալութեան, բայց ոչ կանոնաւոր ստորակարգութիւն։ Այնպէս ծա-
ռայ էին թագաւորին բդեշխք և աւագ նախարարք, ինչպէս ստո-
րին սպասաւորք, զորս «տնկայս գործակալութեան» կը կոչէ Բու-
զանդ։ Բուզանդ չխտրեր կոչել ծառայս թագաւորին ճոխ իշխաններ,
որպիսի էին բդեշխն Աղձնեաց, և Կորդուաց, Ծոփաց, Սիւնեաց,
Հաշտենից իշխաններն. «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յար-
քայէն Հայոց մի ի ծառայէն նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուա-
նեալ կոչէր բդեաշխն, որ էր մի ի չորից, գահերէց բարձերէց տա-
ճարին արքունի։... Ապա առաքէր թագաւորն Հայոց զերեկկիր ծա-
ռայս իւր, զիշխանն Կորդուաց զՁոնն, և զիշխանն մեծի Ծոփաց
զՄար, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն Հաշտենից
զԴատ հանդերձ բազում զօրօք» (Բուզ. Գ. Թ.)։ Այժմու պաշտօ-
նեայք ևս կը կոչեն իւրեանց տէր զթագաւորն, բայց նշանակու-
թեամբ գլխոյ և ոչ տեառն, և են պատասխանատու, բայց ազատ
վարիչք այլևայլ մասանց միևնոյն քաղաքական մարմնոյ։ Քաղաքա-
կան կամ վարչական յերիւրուածոյ այս ըմբռնումն բոլորովին օտար
էր յոգւոյ արևելեան բացարձակ միապետութեան։ Միով բանիւ, արև-
ւելեան քաղաքակրթութիւնն, ոչ միայն պարսկականն և պարթևա-
կան թանձր և նիւթական, այլ և ոչ հելլենականն վերացեալ և փի-
լիսոփայական՝ ունեցաւ վարչական գործերու բաժանման գաղափարը։
Ինչպէս բուն օրէնսդրութեան, նոյնպէս բուն վարչութեան յղացումն
է հռոմէական քաղաքակրթութեան ծնունդ, զոր արդի եւրոպա-
կանն հասոյց ի կատարելութիւն։

4. Ելևմտական դրութիւնն առ Արշակունեօք չկարէր լինել
տարբեր յոյնմանէ որ էր առ Պարսիկս։ Տէրութեան կամ մանաւանդ
թագաւորին, (քանզի չկար բառին բուն նշանակութեամբ տէրու-
թիւն. տէրութիւն, ըստ բանից գաղղիացի խրոխտ միապետին, «Տէ-

րութիւն ես եմ»՝ էր անձն թագաւորին), եկամուտն էր կալուածական, յարգեանց մշակութեան և հովուութեան։ Գաւառներէն շատք էին կալուած արքունի, որ կը կոչուէին տուն թագաւորին, ընդ տեսչութեամբ մարդպետաց (տես Բուզ. Ե. Ը. և այլուր)։ Թերևս կ՚առնուէր մասն նաև այն գաւառներէն, որ էին կալուած նախարարաց։ Նաև եկամուտք եկեղեցւոյ առ քրիստոնէութեամբ էին կալուածներէ, զորս շնորհեցին առաջին քրիստոնեայ թագաւորք, մանաւանդ նախաձանօթն Տրդատ, որ հին հեթանոսական մեհենից կալուածներն, և այլ ևս բազում, սեպհականեց ի ժառանգութիւն եկեղեցւոյ, որպէս պատմէ Ագաթանգեղոս։ «Եւ զգաստակերտն (Անահտական մեհենին) հանդերձ գետնովքն և սահմանօք նուիրեցին եկեղեցւոյ ի սպասաւորութիւն» (Ագաթ. ՃԸ.)։ «Եւ զաւանն (մեհենին յԱնի) ամրաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյ նուիրէին» (ՃԹ.)։ ԶՏրդատայ ասէ առանձինն. «Եւ թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ գրեաց չորս չորս հողս յամենայն ագարակ տեղիս. իսկ յաւանսն՝ եւթն եւթն երդոյ հող, ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուէր պտղոյ Տեառն մատուցանէր» (ԾԺԹ.)։ Նոյնպէս Խոսրով, որդի Տրդատայ, Մանաւազեանց և Որդունեաց բուն քաղաքներն հանդերձ սահմանօք նուիրեց եկեղեցւոյ. «Եւ ետ (Խոսրով) զաւանն և զբուն գահոյից գիւղն նահապետին Մանաւազեանից զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառական հանդերձ, և զբուն գիւղն Որդունեաց որոյ անուն էր Որդորու՝ ամենայն սահմանօքն՝ յեկեղեցի» (Բուզ. Գ. Դ.)։ Գրիգոր ունէր ինքեան և իւր տոհմին համար առանձին կալուած, որպէս ասէ Բուզանդ՝ զԹորդան և զԹիլ, առաջինն՝ ի Դարանաղիս, և երկրորդն՝ յԵկեղեաց. «Իսկ սոցա (Գրիգորի և Արիստակեայ) պատրաստեցան տեղիք ընակութեան և շիրիմք հանգստեան, մեծին Գրիգորի՝ ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն որ անուանեալ կոչի Թորդան, և սրբոյն Արիստակեայ որդւոյ նորա՝ յԵկեղեաց գաւառի, ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ» (Բուզ. Գ. Բ.)։ Բուզանդ այլուր մինչև հնգետասան կը հանէ զգաւառս տան Լուսաւորչին առ Ներսիսիւ. «Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն, զի հնգետասան գաւառ ունէին իւրև սեպհական ի ընմէ, յԱյրարատ, ի Դարանաղէ, յԵկեղեաց, ի Տարօն, ի Բզնունիս, ի Ծոփս, և որ ընդ մէջ նոցա և շուրջ զնոքօք»։ Կըւէի թէ եկեղեցւոյ կալուածներուն յաճախութիւնը տուած էր տեղի գանգատանաց, մինչև մարդպետին Արշակայ մեղադրել, կամ որպէս ասէ Բուզանդ՝ «թշնամանս դնել Տրդատայ... ազգի, տակի և տոհմի Արշակունեաց, թէ զի՞րդ զայնպիսի տեղիս կանանցահանդերձ մարդ-

կան տուեալ է» (Բուզ. Դ. ԺԴ.)։ Պապ նուազեցուց կալուածներն նոր իմն կարգադրութեամբ. գրաւեց եկեղեցւոյ հողերուն հինգ եօթներորդը՝ թողլով միայն երկուս, և առ իւրաքանչիւր հող մէն մի երէց և սարկաւագ, մնացեալներն առնլով ի ծառայութիւն տէրութեան։ «Հատ յարքունիս Պապ թագաւորն զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց. զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և թողոյր միայն երկուս հողս, և ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գեղ մի, երէց և սարկաւագ, և զայլն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութիւն զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն» (Բուզ. Ե. ԼԱ.)։ Զայս կը յիշէ Բուզանդ իբրև ի հեճուկս Ներսէսի գործուած, բարդելով, ինչպէս պիտի տեսնենք յիւրում տեղւոջ՝ անթիւ զրպարտութիւններ մանուկ թագաւորին վրայ, որ կատարեց՝ ինչ որ 1,500 ամօք յետոյ հազիւ իշխեց կատարել բարեկարգիչ կայսր մը (Յովսէփ Բ.) ի կարճումն դատարկապորտներու բազմութեան, որոց եկեղեցական եկամտից առատութիւնը պատճառ եղած էր տալոյ զանձինս եկեղեցական և վանական յուլութեան։ Յարգեանց մշակութենէ էր ոչ միայն եկամուտ թագաւորին և եկեղեցւոյ, այլև շատ անգամ օտար տէրութեանց տրուած հարկն, որոյ տեսակներն էին հաս, մուտ, սակ, բաժ։ Այսպիսի էր մեծ մասն հարկին զոր կու տային Հայք Սասանեանց յետ անկման թագաւորութեանն ըստ Եղիշէի, որ յետ գանգատելոյ, թէ «ծանրացուցին զհարկ աշխարհին, քանզի ուստի արժանն էր առնուլ հարկս զահեկանաւ չափ, կրկին առնուին»՝ կը յաւելու. «Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից լերանց և դաշտաց և մայրեաց» (Եղիշ. էջ 40), և այլուր (էջ 76), «իսկ զմտից և զսակից և որ այլ ևս էին հարկ աշխարհին՝ բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս»։ Նաև պարգևք որ կ'ելլէին ի թագաւորաց՝ էին մանաւանդ կալուածք, քան ոսկւոյ և արծաթոյ մեծամեծ գումարներ։ Պարգևք զորս Արտաշէս, Տրդատ, Խոսրով, Պապ ետուն զօրավարաց և այլոց, ինչպէս տեսանք ի վերոյ՝ էին կալուածք։ Բուզանդ ի յիշելն Յոհան անուն եպիսկոպոսի ուրուք խեղկատակութիւնն, որով կը կորզէր նա պարգև ի թագաւորաց՝ չյիշեր ոսկւոյ և արծաթոյ գումար, այլ կնքուած մուրհակներ գիւղից և ագարակաց։ «Յոհան եպիսկոպոս որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորսն Հայոց, խաղակատակ լինէր նոցա։... Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս՝ ազէր առաջի թագաւորացն և զուղտու զձայն ածէր կառաչելով, և ընդ կառաչելն ապա մի մի

բան խառնէր ասելով. Ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս բառնամ. դի՛ք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ։ Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղից կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ուղտին Յոհանու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ագարակս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ» (Բուզ. Զ. Ժ)։ Այսպէս ունելն կալուածական հարստութեան զտեղի դրամականին՝ կը ցուցնէ, թէ երկիրն էր տակաւին մեծաւ մասամբ այն չինական հեշտ պարզութեան մէջ, յորում գտաւ զնա Քսենոփոն Արշակունեաց թագաւորութեան սկիզբէն իբր 200 ամօք յառաջ։ Դրամի այս նուազութեան գլխաւոր պատճառ կրնայ համարուիլ թերեւս չունենալն Արշակունեաց սովորութիւն, կամ մանաւանդ արտօնութիւն, հատանելոյ առանձին դահեկան, բաց առաջնոյ ժամանակին, այն է Արտաքսիասայ ցեղին թագաւորներէն, որոց դահեկաններէն հասած են մինչև առ մեզ. Հարկաւորութեան ժամանակ հաւանական է թէ կորոյս երկիրն այս իրաւունքը՝ շատանալով գործածել պարսիկ և հռոմայեցի դահեկաններ։ Չէ պարտ կարծել սակայն, թէ այս պատճառաւ Հայն էր յայնժամ հէք և գծուծ։ Եթէ ճշմարիտ է ականատեսին Քսենոփոնի նկարագիրն զոր բերաք այլուր՝ Հայն ունէր իւր ստորերկրեայ տուներուն մէջ ոչ միայն կերակուր և ըմպելի առատ, այլ և անուշահոտ օծանելիս։ Դրամը չէր կարևոր որչափ զարգիս նոյնչափ ի հնումն, մինչ կը տիրէին դեռ փոխանակութիւնն և բանի աշխատութիւն։ Վաճառականութիւնն Տիւրոսի ըստ Եզեկիելի (գլ. Իէ.), գէթ մեծաւ մասամբ, էր փոխանակութիւն։ Մարգարէն, յետ յիշելոյ այլևայլ երկիրներէ բերուած նիւթեր ի վաճառ, Կարքեդոնէ, ի Յունաց, ի տանէ Թորգոմայ, ի կղզեաց Միջերկրականին, ի Հրէաստանէ, Ասորւոց երկրէն, յԱրաբիոյ, յԵգիպտոսէ, ի Մարաց—արծաթ, ոսկի, պղինձ, անագ, կապար, պղնձի անօթներ, ձի, ջորի, փղոսկր, երփն երփն նարօտից, խունկ, մեղր, իւղ, գինի, ուղտ, խոյ, որոջ, անուշահոտ իւղեր, պատուական քարեր, բեհեզ, այլովքն հանդերձ՝—կը յաւելու. «Եւ երթևեկացն տայիր զվաճառս քո բազմացեալս յաղխամաղխէ քումմէ»։ «Եգիպտոս տանոյր ոսկի, փղոսկր և գերիս յԵթովպիայ, խունկս յԱրաբիայ, գինիս՝ ի Յունաց և ի Փիւնիկեցւոց, աղ՝ ի Սահարայ, և ինքն տայր ընդ այնր ցորեան և այլ ևս նոյնպիսիս, և մանաւանդ Արաբիա կերակրէր միշտ ցորենով զնոսա» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. հտ. Ա. 59)։ Եգիպտոսի և Ասորեստանի հրաշակերտք, յորոց ոմանք կանգուն են, այլոց մնացորդք միայն կան՝ չկանգնեցան արծաթով։ Յուրանք կամ բրգունք Եգիպտոսի շինուեցան հացիւ և խստորով։ Խոսրով Բ. տնկելու համար իւր կրկին

անտառներն՝ հրաման կու տայ սպարապետին Խուրում Վաչէի, «հանել խաշար (հասարակ զինուոր) յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց և տնկել զայն յԱյրարատեան գաւառին» (Բուզ. Գ. Ը.)։

5. Գալով դատաստանական վարչութեան՝ չէ հաւանական թէ կային յայնժամ ի Հայս արդի ոճով օրինագիրք և ատեանք։ Յայտնի է սակայն, թէ չէին և չկարէին անծանօթ լինել Հայոց ընկերական կարգաց գէթ էականներն, որպէս կենաց և սեփականութեան իրաւունք, ամուսնութիւն, տուրևառ, այլովքն հանդերձ։ Լեզուն ազգերու մտաւոր և բարոյական զարգացման պատկերն է, և գաղափարք որոց նշաններն են բառք՝ չեն կրնար առնուլ ծնունդ, եթէ երբ նշանակեալք նոքօք՝ չէին կանխաւ ընտանեցած և իբր թէ տպաւորուած ժողովրդեան բարուց և սովորութեանց մէջ։ Արդ՝ Հայերէն լեզուն ի վաղուց անտի ունի կենաց այլեայլ յարաբերութիւններն նշանակող ամէն բառ, սկսեալ ընտանեկանէն մինչև քաղաքականն։ Հայերէնն ունի ազգականութեան բոլոր աստիճաններուն անուններն, ոչ միայն հարազատներուն, այլև խորթերուն. հօր և մօր և որդւոյ հետ՝ գիտէ նաև յօրայ, մօրու և որջու. նաև խնամութեան անուններ մանր մասամբ։ Կը խտրէ կենաց այլեայլ վիճակներ, ինչպէս ամուսնութիւն, այրութիւն և ամուրութիւն. գիտէ նաև տէր և ծառայ։ Թէպէտ չկար Հայոց մէջ հին ազգերէն ոմանց այն ժողովրդական բաժանումը, զոր Եւրոպացիք սովոր են կոչել կաստ՝ կար սակայն ազատ և շինական, այսինքն՝ հողատէր և մշակ, որ կը թուի պատասխանել սէրֆ կամ վարձակալ (fermier) կոչուած աստիճանին։ Սեպուհ անունը, որմէ կ'ելլէ սեփականութիւն բառը՝ կը տրուէր ազատաց, այսինքն նախարարական տոհմին, և կը նշանակէր՝ Այն որ ունի իրաւունս սեփականութեան, այսինքն ստանալոյ երկիր։ Սեպուհ բառին ուրիշ ձևն է ոստյ, որ կը նշանակէր զինուոր, մանաւանդ ձիաւոր։ Այսպէս կը տեսնուի, թէ հողատէր և զինուոր էր ի բնէ ժողովրդեան ազատ մասն, ինչպէս շինականն էր երկասէր կամ աշխատող (industriel) մասն, այսինքն՝ մշակ, ձեռագէտ և թանգար (commerçant)։ Ահա փառաւոր ազնուականութիւն մի առընթեր պատուաւոր քաղաքացութեան։

Չէ հնար թէ չկային այս յարաբերութիւններն կարգադրող և ի հաւասարակշռութեան բռնող եթէ ոչ օրէնք, գէթ պայմանք։ Խորենացին ուրեք կը թուի հաստատել, թէ կային այսպիսի գրաւոր պայմանք։ Մեր գգօն պատմիչն յետ մեղադրելոյ հին Հայոց անփութութիւնն ի թողուլ պատմական յիշատակներ՝ կը յաւելու. «Այլ ասիցէ ոք արդեօք, վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէսպէս պատերազմացն որ կուռ զմիմեանց զկնի

անհետ ի վերայ գայլն։ Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ լինի,
քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և
Յունաց, որով այժմ գիւղից և գաւառաց (այսինքն՝ անշարժ ստա-
ցուածոց), և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց (այսինքն՝
ընտանեկան յարաբերութեանց, ինչպէս ամուսնութեան, ժառանգու-
թեան և այլն) և հանուրց հակառակութեանց և դաշանց (այսինքն՝
պարտուց, փոխոց և ուրիշ առեւտրական պայմաններու) այժմ առ
մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհա-
կան ազատութեանն պայազատութիւն» (այսինքն նախարարական տոհ-
մերու անհատներուն յաջորդութեան և ուրիշ իրաւանց, թերևս
նաև այն տոհմերուն յարաբերութեան և պայմաններուն շինական
մասին հետ) (Խոր. Ա. Գ.)։ Թէ ընկերական կարգաց և պատշաճից
վրայ կար ճշգրիտ գաղափար ի Հայս՝ առ այս ունինք նաև պատ-
մական ապացոյց։ Նշանաւոր է զոր ինչ ասէ Խորենացին, և աւելի
մանր՝ Բուզանդ, Արշակաւանի պատմութեան առթիւ։ Բուզանդինը
բերենք նախ ի մէջ, թէպէտ այլուր կոչած ենք. «Զայնու ժամա-
նակաւ շինեաց իւր արքայն (Արշակ) դաստակերտ մի ի Կոգ գաւա-
ռի։ Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ,
և հրամայեաց կարդալ քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն, և
զամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն ար-
քունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ումեք ուստեք
ինչ վնասեալ իցէ՝ ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն զոր շի-
նեաց։ Եթէ արիւնական ոք իցէ, կամ վնաս ումեք արարեալ իցէ,
կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի,
և կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ և եկեսցէ յայն տեղի՝ զատ
և իրաւունք մի լիցին։ Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի, և որում
պարտիցին գայցէ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին
զնա և ի դուրս տարցին։ Իբրև ել հրամանն յարքայէն՝ ժողովեցան
այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, գանձահատք,
զրկողք, յափշտակողք, արիւնականք և սպանողք։ Բազում կանայք
զարս թողեալ, բազում արք զիւրեանց կանայս թողեալ և զայլոց
կանայս առեալ, բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմ-
բռնեալ, բազում աւանդառուք զաւանդս և զպահեստս բարձեալ՝
փախուցեալք անդր անկանէին։ Զի թէպէտև կարի յոյժ բազմացաւ
տաղաւակն՝ դատ չկայր, և իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելա-
նէին. վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին թէ իրա-
ւունք մեռան» (Բուզ. Դ. ԺԲ.)։ Զնոյն ասէ և Խորենացին թէպէտ
համառօտիւ. «Ի թիկանց կուսէ լերին Մասեաց շինեաց (Արշակ)
ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց, և ետ հրաման, որ ոք

անկեալ անդր բնակեսցէ, մի՛ լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի։ Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն, քանզի աւանդառուք և պարտականք և ծառայք և վնասակարք և գողք և սպանողք և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ոչ կայր նոցա այց և խնդիր» (Խոր. Գ. Իէ.)։ Չէ ամենևին հաւանական, թէ Արշակ այնպիսի հրաման հանեց իւր տէրութեան մէջ հրապարակաւ և յայտնի։ Զայս ևս պարտ է դասել ի համարի այն զրպարտութեանց, զորս կղերամոլ պատմիչք մեր սովոր են բարդել ազատամիտ թագաւորաց և իշխանաց վրայ։ Սա չափ միայն կրնայ ընդունուիլ իբրև պատմական՝ թէ թերևս կար ներողութիւն իմն կամ ազատութիւն ծառայից և այլոց, որ յանցաւոր կամ վնասակար գտնուելով նախարարաց հակառակորդաց Արշակայ՝ կը դիմէին յԱրշակաւանն, ինչպէս կայ արդի տէրութեանց ոմանց մէջ ազատութիւն, նա՛ պաշտպանութիւն իսկ քաղաքական յանցաւորաց դիմելոց առ նոսա։ Զիարդ և իցէ՝ պատմութիւնը կը ցուցնէ, թէ ընկերական յարաբերութեանց եղծմունք համարուած էին յանցուած և ոճիր, և ասելն, «Դատ և իրաւունք մի լիցին»՝ կը ցուցնէ, թէ այնպիսի եղծմանց համար կային դատաստանք և պատիժք, ուստի և դատաւորք և դատաստանարանք ի պաշտօնէ և ընդ իրաւասութեամբ վերին իշխանութեան իրիք։ Զայս կ'ակնարկէ բառն «արքունուստ», զոր կը յաւելու Բուզանդ. «Եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին»։ Ապա հաւանական է, թէ օրէնսդիր և դատաւոր ընդարձակ մտօք էր թագաւորն, թերևս նաև իւրաքանչիւր նախարար իւր երկրին մէջ։ Չէ պարտ թողուլ առանց յիշատակութեան Եզնկայ սա նշանաւոր հատուածը. «Ընդէր օրէնք ի թագաւորաց դնիցին, և սաստք իշխանաց, և պատիժք ի դատաւորաց. ո՞չ ապաքէն վասն կարճելոյ չարեացն։ Եթէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ չարագործին ածել։... Տեսանեմք թէ թագաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ. և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ և քերէ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ. և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն կամ անձամբ, կամ իշխանօք» (Եզն. Ա. Ժե)։

Եզնիկ կը խօսի Հայոց, և կը խօսի իբրև արդէն սովորական և ծանօթ նոցա, թէ կար դատական և պատժական իշխանութիւն, կը ցուցնէ նաև թէ պատիժք էին, ըստ ոգւոյ ժամանակին՝ խիստ և մարմնաւոր։ Զայս կը ցուցնեն նաև մահապարտաց սահմանեալ

բանտեր, որ կը յիշուին ի պատմութեան։ Զարագործաց համար սոսկալի բանտ էր վիրապն Արտաշատու, զոր ահեղ իմն կը նկարագրէ հեղինակն Ագաթանգեղոսի. «Հրաման տայր (Տրդատ) կապել ոտիւք և կապել ձեռօք և կապել պարանոցաւ խաղացուցանել զնա (զԳրիգոր) յԱյրարատ գաւառ, և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքին, և իջուցանել ի վիրապն ներքին» (Ագաթ. ԺԱ.)։ Եթէ պարտ է հաւատալ Ագաթանգեղոսի՝ վիրապն ոչ միայն էր «անհնարին խորութեամբ», այլ և էր բնակութիւն ահագին օձերու։ Երբ Խոսրովիդուխտ, ըստ Ագաթանգեղոսի, կը պատմէ զիւր տեսիլն, որ կը հրամայէր հանել զԳրիգոր ի վիրապէն՝ «մարդիկն, ասէ, որ լուան»—կամի ասել պալատականք—«սկսան ծիծաղել զբանիւն, և ասեն. Եւ դու ուրեմն մոլեգնեցար, դև՞ ուրեմն հարաւ ի քեզ. այս հնգետասան ամ է, զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկրոտին իսկ ո՞ւր իցէ, զի նոյն օրին իբրև իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսլենէ նոյն ժամայն սատակեալ իցէ» (Ագաթ. Ի.)։ Ագաթանգեղոս նոյն իսկ Գրիգորի կուտայ յիշել զահաւորութիւն այն օձաբնակ տեղւոյն, ուր որպէս թէ հրաշիւք պահուեցաւ նա կենդանի. «Իսկ վասն իմ դու իսկ գիտես, զի հնգետասան ամ կայի ես ի խաւարչուտ ի խոր յանհնարին վիրապին. ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ» (Ագաթ. ԻԱ.). և այլուր (անդ)—«Կեցցէ արդեօք միօրեայ մարդ յանհնարին ի խոր վիրապի անդ յայնմիկ, յորում թաղեալն կայի ես ի մէջ օձիցն իբրև ի շեղջի, և եռային զմարմնովք իմովք, պատեալ կային շուրջ զինև, և կայտառային զանդամովք իմովք»։ Յայտնի է թէ վիպասանութիւնը մեծ մասն ունի այս նկարագրին մէջ, որոյ գլուխն է ստուարացունել այն կարծեցեալ հնգետասանամեայ բնակութեան ահաւորութիւնը, որպէս զի Գրիգորի պահպանութիւնն այնպիսի տեղ և այնչափ ժամանակ՝ ընծայուի ամենախնամ զօրութեան միջամտութեան։ Իբրև պատմական ստոյգ է սակայն, թէ բերդն Արտաշատու էր բանտ մահապարտաց, թերևս ունէր նաև ներքին ստորերկրեայ մասն մեծեղեռն յանցաւորաց համար։ Նոյն Ագաթանգեղոս կը յիշէ այլուր դահճապետ և մասնաւոր տեղի կառափման. «Ելեալ դահճապետն պարծելով չարամահ առնել, ետ հանել զնոսա (զԳայիանէ և զընկերս նորա) շղթայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային, որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս» (Ագաթ. ԺԹ.)։ Նաև Բուզանդ կը յիշէ «դահճապետ» և «տեղի կառափելոյ» մօտ ի Շահապիվան, բանակատեղին թագաւորաց, թերևս յանցաւոր զինուորաց համար։ Անդ գլխատուեցաւ Գնէլ։ «Բուն հարեալք ընկենուին

յերիվարէ անտի զպատանեակն Գնէլ, և ձեռն յետս կապէին զնա, և առեալ գնացին ի տեղի կառափելոյն:... Մինչդեռ Ներսէս բանս ողոքոյ ընդ թագաւորին խօսէր՝ գայր արտաքուստ դահճապետն Երազմակ, մտանէր ի խորանն արքունի. սկսանէր պատմել. Ի գլուխ հանի, կատարեցի, ասէ, զամենայն հրամանս արքունի. առի գնացի զԳնէլ, տարայ մինչև յորմ Սիւսին, սպանի և անդէն թաղեցի» (Բուզ. Դ. ԺԵ.): Օրինակ պատժելոյ զյանցաւորս, որպէս արդէն ասացաւ՝ էր արդարև բարբարոսական ըստ ոգւոյ ժամանակին, որ կը համարէր զպատիճն իբրև վրէժխնդրութիւն մանաւանդ քան ուղղութիւն, և զանագորունութիւն ընդդէմ յանցաւորաց՝ իրաւանց մասն: Բայց և այնպէս յետին անագորոյն տանջանաց օրինակներ յանուն պատժական իշխանութեան կարի սակաւ են մեր պատմութեան մէջ, և այն սակաւք որ կը պատմուին՝ են կամ հանճարեալ, և կամ թելադրեալ: Այսպէս այն քստմնելի և նորագիւտ տանջանք, զորս Ագաթանգեղոս կը պատմէ տրուած ի Տրդատայ Լուսաւորչին և Հռիփսիմեանց՝ են վկայաբանական գիւտ: Յետ շարելոյ իբր երկոտասան ազգս տանջանաց, մին քան զմիւսն քստմնելի, որոց վերջինն էր թափելով հալած կապար, «ջերմ մինչդեռ էր իբրև զջուր», այրել «զմարմինս նորա առհասարակ»՝ կը յաւելու. «Եւ ոչ մեռաւ, այլ կայր մեծ ուժով, և զինչ հարցանէին՝ վաղվաղակի տայր պատասխանի» (Ագաթ. Ժ.): Հռիփսիմէի լեզուն կը կտրեն, և պրկելով ի չորս ցիցս՝ վառած կանթեղներով կը խորովեն մարմինը «ցմեծ ժամս», յետոյ քարեր վարելով գոգը՝ դուրս կը վայթեն զաղիսն, ապա կը փորեն զաչս նորա, «և դեռ ևս, ասէ, կենդանի կայր» (ԺԲ.): Նոյնպէս զԳայիանեանս պրկելով մէն մի ի չորս ցից՝ կը ծակեն անոնց մորթն ի պճղանց, և դնելով փող և փչելով՝ կենդանւոյն կը մորթեն (մորթը հանել) զնոսա մինչև ի ստինսն. ի վերջոյ կը հանեն զլեզուս նոցա ծոծրակներէն, և դուրս կը թափեն զփորոտիս նոցա, բայց զարմանք, «դեռ ևս, ասէ վկայաբանն, կային կենդանի» (ԺԹ.): Արդարև վկայաբանական չափազանցութիւններ: Պատմական է սակայն հալածելն Սահակայ չարաչար տանջանօք՝ ըստ Կորեան Բարբարիանոս (Կոր. էջ 18), ըստ Խորենացւոյն Բորբորիտոն կոչուած հերետիկոսներն (Խոր. Գ. ԾԷ.), բայց, ինչպէս յայտնի է Ատտիկոսի թղթէն առ Սահակ՝ այս եղաւ ի թելադրութենէ Կոստանդնուպոլսոյ մոլեռանդ պատրիարքին: Խորենացին յետ պատմելոյ, թէ սուրբն Սահակ «հրամայէ (Մեսրոպայ) քննել զժանտագործ Բորբորիտոնսն, և եթէ ոչ հեզութեամբ և ոչ սաստիւ դարձցեն յուղղութիւն, չարչարանօք հալածել»՝ կը յաւելու, «Զի թշնամանք ի թշնամանաց վրէժ առնուցուն, և խայտառակեցի

իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց»։ Թէ ո՛վ էին այս բորբորիտոնք՝ չենք գիտեր. թերեւս էին Գնոստիկեան աղանդոյ երեք մնացորդք։ Զարմանալի է սակայն վճիռ մեր քրիստոնեայ վարդապետին, որ, հինգերորդ դարուն քրիստոնէութեան խակ ոգւով, օրինաւոր կը դատէ՝ քան զմեզ տարբեր խորհողներն ի կրօնականս՝ հալածել աշխարհական բազկաւ, և հալածել ցմահ։ Գալով քաղաքական յանցաւորաց, մորթել (մորթը հանել) զայսպիսիս կենդանւոյն՝ էր Պարսից սովորութիւն, զաչս խարել՝ Պարսից և Յունաց, մանաւանդ առ Բիւզանդեան կայսերօք, ինչպէս նաև զկին և զորդիս փողոտել առաջի աչաց հօրն։ Ապստամբներն տնովին ջնջել էր սակայն սովորական առ Հայս։ Մերթ արուները միայն կը սպանուէին, և մերթ արու և էգ միանգամայն։ Այսպէս Մանուազեանց և Որդունեաց համար ասէ Բուզանդ, թէ Վաչէ սպարապետ Խոսրովու «հարկանէր վանէր զազգսն երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ զմի» (Բուզ. Գ. Դ.). իսկ Բզնունեաց տոհմը, նոյնպէս առ Խոսրովաւ, կոտորեցաւ ազգովին. «Ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին (Աղթամար)՝ առհասարակ ոչ զէգ թողոյր և ոչ զարու» (Բուզ. Գ. Ը.)։ Նոյն անգթութիւնը գործուեցաւ Արծրունեաց և Ռշտունեաց, որ, ըստ Բուզանդայ, կոտորեցան ի քսութենէ Հայր մարդպետին առ Տիրանաւ. «Բառնային ի միջոյ (զազգսն), ասէ Բուզանդ, առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէգսն կոտորեցին զազգացն» (Բուզ. Գ. ԺԲ.)։ Ինչպէս նաև Արշակ, ըստ նմին Բուզանդայ, «զտոհմս Կամսարականացն առնէր ապգատ» (Գ. ԺԹ.)։ Մի անգամ միայն կը յիշուի զորդիս փողոտել առաջի յանցաւոր համարուած հօր։ Այսպէս արար Մանուէլ Բատայ Սահառունւոյ, որ քսութեամբ սպաննել տուած էր զՄուշեղ, զեղբայր Մանուէլի. «Եւ զԲատն, որքային Վարազդատայ զքուն, զսպանողն Մուշեղի, կալան իբր որդւովն առաջի սպարապետին Մանուէլի… և մեծաւ դատաստանօք դատեցաւ զանօրէնն Բատ սպարապետն Մանուէլ. նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատէր» (Բուզ. Լէ.)։ Բայց այս էր գործ անձնական վրէժխնդրութեան Մանուէլի։ Մորթել, որպէս ասացաք, էր սովորութիւն Պարսից, որպէս ասէ Բուզանդ զՇապհոյ, թէ «ըստ Պարսկի օրինակին հրամայէր զմորթն ի բաց հանել, և խոտով լնուլ և ի հրապարակի խրուամ ի տեսիլ ծանականաց կանգնել հրամայէր» (Բուզ. Գ. ԻԴ.)։ Արդարև Բուզանդ կը պատմէ ուրեք, թէ Մուշեղ յետ վանելոյ զՊարսիկս ի գալստեան Պապայ ի Հայս՝ կը խորովէր զմազգեղունս, և Պարսիկներէն շատերը մորթելով կը կանգնէր պարիսպներու վրայ. բայց զայս կը գործէր Մուշեղ ընդ հենգն կրակա-

պաշտութեան և ի վրէժ հօր իւրոյ Վասակայ, զոր Շապուհ սպանած էր մորթազերծ մահուամբ. «Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն և աւերէր զատրուշանս մազդեզանցն, իսկ զմազդեզունսն որ մի անգամ ի բուռն անկան՝ զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել, և զբազում պատուաւոր տեարս որ պատուականք էին առաջի թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս, և տայր մորթել և լնուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն»: «Ընդ բազում տեղիս, կը յաւելու Բուզանդ, զայս առնէր (Մուշեղ) ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ» (Բուզ. Ե. Ա.): Անսովոր, միանգամայն անագորոյն պատժոյ օրինակ ունինք ի սպանման Երուազայ քրմապետի, եղբօր Երուանդայ, զոր սպան Սմբատ, սպարապետ Արտաշիսի, կապելով երկանաքար ընդ պարանոցն և ընկենլով ի գրգանս Ախուրեան գետոյ. «Զկնի այսորիկ հրաման տայ (Արտաշէս) Սմբատայ երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զԵրուազ եղբայր Երուանդայ. զոր կալեալ Սմբատայ՝ երկան զուլանէ հրամայէ կապել, և ընկենուլ ի պտոյտ մի գետոյն» (Խոր. Բ. ԽԸ.): Բան զայս անագորոյն էր օրինակ սպանման Հայր մարդպետին, որ չարաչար թշնամանած էր զՓառանձեմ տիկին, զմայրն Պապայ ի բերդին Արտագերից. «Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս օրերացն զոր եդ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր թագաւորին Պապայ, թշնամանս ձաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրև զբոզ մի՝ այնպէս թշնամանեաց զնա ի ժամանակի իբրև եմուտ անդր գաղտուկ, և եդ անարգանս տիկնոջն, և ել անտի և փախեաւ. ետուն զայս ամենայն զրոյց թագաւորին: Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառի յիւրում բերդին որում Ողական կոչէն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ՝ եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշեղ. և ունէր առ նա հրովարտակ, և գրեալ էր ի հրովարտակի անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն: Եւ նա զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր. յղէր առ մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յՈղականն. և էին աւուրք ձմերայնոյ, և սառնկացեալ կցեալ էր գետն Եփրատ: Ապա կոչեալ եղև առ նա Հայր մարդպետն իբրև ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ ի բերդն յՈղական: Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն՝ ունել զնա, և մերկանալ իբրև ի մօրէ, և կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա, և իջուցանել զնա ի գետն, և դնել ի վերայ սառինն կցելոյ գետոյն. և սատակեցաւ ան-

դէն։ Եւ եղև ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի-
ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա» (Բուզ.
Ե. Գ.)։ Որպէս տեսցաք սակայն՝ այսպիսի օրինակք անօսր են
ի պատմութեան մերում։

Ե. Այսչափ միայն գիտենք դատական վարչութեան վրայ առ-
հասարակ։ Չէ պարտ մոռանալ սակայն, թէ յետ դարձին Հայոց
ի քրիստոնէութիւն, երբ քրիստոնէականն սկսաւ փոխանակել հեթանո-
սականը՝ եկեղեցին, յոյր ձեռն կը կատարուէր այս փոփոխութիւնն՝ ու-
նեցաւ հզօր ազդեցութիւն վարչութեան մանաւանդ այս ճիւղին մէջ։
Գիրքը և ժողովոց կանոնք եղան ոչ միայն հիմն երկրին օրէնսդրու-
թեան, այլ և նոյն իսկ օրէնսդրութիւնն։ Այս է պատճառ որ չու-
նինք ի նախնեաց մնացած դատաստանագիրք։ Այս անուամբ գրուած
մի ԺԲ. դարէն յանուն Մխիթարայ Գոշի՝ ոչ այլ ինչ է եթէ ոչ
մեծաւ մասամբ քաղուած սահմանադրութեանց Գրոյն, առաքելա-
կան կանոնաց և եկեղեցական ժողովոց, և չարժէր իսկ դատաստա-
նագիր (code) անուանս։ Առ քրիստոնէութեամբ, երկրին օրէնքն էր,
ինչպէս երբեմն յԵւրոպա՝ կանոնական իրաւունք (droit canon), և
կանոնագիրքն էր դատաստանագիրք։ Շատ հաւանական է, թէ տունք
երիցանց էին դատարանք, և գերագոյն ատեան՝ եպիսկոպոսարանք։
Չէ ստուգիւ յայտ, հաւանական կը թուի սակայն, թէ եկեղեցին, գէթ
անուղղակի, ունէր նաև պատժական իշխանութիւն, այսինքն՝ թելա-
դրութեամբ նորա կը տրուէին պատիժք … Կոստանդնուպոլսոյ Հայ
պատրիարքաց դատարանական իշխանութիւնն, ոչ քաղաքայինն միայն
այլև պատժականն, որ տրուած էր նոցա իբրև առանձնաշնորհու-
թիւն Օսմանեան կայսերաց կողմանէ՝ համարելի է ոչ այնչափ նոր
արտօնութիւն, որչափ ի վաղուց վայելեալ իրաւանց ճանաչումն։
Ամուսնութեան և եկեղեցական կարգաց պահպանութեան խնդիր-
ներ ոչ միայն դատել, այլև անոնց եղծումը զսպել խիստ միջոցնե-
րով՝ էր թոյլ տրուած, մանաւանդ թէ ճանչցուած կառավարութենէ։
Անրով (չուչէով) պատրիարքարան տարուիլ, նաև զան ըմպել կամ բան-
տարկուիլ ստահակելոց և հեստելոց ընդդէմ պատուիրանաց եկեղե-
ցւոյ, ինչպէս պահոց՝ չէր անսովոր իբր կէս դար կամ աւելի յառաջ։
Դատուիլ եկեղեցական օրինօք և քրիստոնեայ դատաւորէ՝ էր առ նախ-
նիս մեր իբրև հաւատոյ մասն, մինչև ամէն հակառակ որ և իցէ կար-
գադրութեան համարուիլ «աղաւաղումն փառաց եկեղեցւոյ»։ Այսպէս,
ըստ Եղիշէի, Սասանեանց դէմ յառաջ բերուած գանգատանաց պատ-
ճառներէն մին և գլխաւորը (գանգատներ, որ առիթ տուին աղե-
տալի պատերազմին Վարդանանց) էր առաքումն ի Հայս պարսիկ
դատաւորի, որ պիտի դատէր հարկաւ պարսիկ և ոչ քրիստոնէական

օրինօք. «Եւս չարագոյն հինգերորդն (այսինքն՝ հինգերորդ պատճառ գանգատանաց), քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն և քրիստոնէիցն. զրգռեաց յարոյց (Վասակ) զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ (օրէնսգէտ պարսիկ) դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյ զփառսն աղաւաղեսցեն» (Եղիշ. էջ 39, 40):

7. Որովհետև յիշեցինք հոս հազարապետը, որ էր գլխաւոր «գործակալ», այսինքն պաշտօնեայ,—քանզի այս մտօք կ'առնուի առ Նախնիս մեր «գործակալ» բառն, իբրև յանուն թագաւորին գործող՝—ի դէպ է խօսել զպաշտօնէութենէ, այսինքն թէ ինչ պաշտօններ կային, որ կը կատարուէին առ Արշակունեօք յանուն թագաւորին՝ մասնաւոր գործակալաց ձեռօք: Բուզանդ ունի պաշտօնէութեան վրայ մասնաւոր գլուխ մի, որոյ բովանդակութիւնն այս է: Ըստ Բուզանդայ երկու էին գլխաւոր պաշտօնէութիւնք, զորս կը կոչէ «սկիզբն գործակալութեան», այսինքն իբրև գլուխ գրեթէ այլոցն ամենեցուն. առաջին՝ հազարապետութիւնն յազգին Գնունեաց և երկրորդ ստրատելատութիւնն, այն է սպարապետութիւնն՝ յազգէն Մամիկոնենից. «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւն թագաւորութեանն Հայաստան երկրին (ի սկզբան թագաւորութեանն Արշակայ) որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու և գործակալքն յիւրաքանչիւր չափու. և սկիզբն գործակալութեանն (էր) հազարապետութիւնն յազգին Գնունեաց, և ստրատելատութիւնն (այն է) սպարապետութեան զօրավարութիւնն... ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին»: Ըստ Բուզանդայ քան զասա խոնարհագոյն կային ուրիշ գործակալներ. «Յայսմ ազգաց և ի խոնարհ (էին) որ (կրէին) գործակալն անուն»: Բայց թէ ինչ էր պաշտօն սոցա՝ չյիշեր Բուզանդ: Նա մանաւանդ, ըստ նմին Բուզանդայ, մեծամեծ նահապետք և տանուտեարք (ցեղերու գլխաւորք) ևս էին գործակալք, բայց գործակալք առանց մասնաւոր պաշտաման. «Թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս, որ գործակալք [illegible]» էին»: Ասոնց ամենուն թիւը կը հանէ Բուզանդ մինչև իննհարիւր. «Ինն հարիւր բարձ, որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեան բազմականացն կարգելոյ». կամի ասել՝ ունէին արտօնութիւն բազմելոյ ի սեղան թագաւորին: (Տաճար, ըստ լեզուի Նախնեաց, կը նշանակէ նաև սեղան, ինչպէս Ուրախութիւն ունի երբեմն խրախութեան, կոչնոյ նշանակութիւն): Այս ամենայն գործակալք կամ պաշտօնեայք ունէին նաև զսպասաւորս իւրեանց, ուստի կը յաւելու Բուզանդ, «թող զտանկայս գործակալութեանն սպասու» (Բուզ

Դ. Բ.)։ Այս շքեղ նկարագիր, զոր կու տայ մեզ Բուզանդ՝ է արդարև ճշգրիտ պատկեր արևելեան արքունեաց, զորոց խօսած են հին յոյն պատմիչներէն ոմանք։

Բուզանդ, ինչպէս տեսանք՝ կը յիշէ երկու գլխաւոր պաշտօն կամ գործակալութիւն յանուանէ, Հազարապետութիւնն և սպարապետութիւն։ Սպարապետութիւնն, ինչպէս յայտնի է՝ էր հրամանատարութիւն բովանդակ զօրուն, կամ, ինչպէս կը սահմանէ Բուզանդ՝ «իշխանութիւն բովանդակ ի վերայ ամենայն զօրաց բազմութեան Հայոց մեծաց»։ Գալով հազարապետութեան՝ այս գործակալութեան պաշտօնն էր, ըստ նկարագրին Բուզանդայ, «աշխարհատես խնամակալութիւն», այսինքն՝ տեսչութիւն ներքին գործոց, և «աշխարհաշէն աշխարհատած գեհկանութիւն», այսինքն՝ երկրի մշակութեան վրայ հսկողութիւն, որ գլխաւոր պաշտօն էր առ Պարսիկս. քանզի Դեհկանութիւն պարսիկ լեզուաւ ունի հայերէն գեղականութեան կամ շինականութեան իմաստ, ուստի և Բուզանդ կ՚անուանէ «շինականաշէն» զազգն Գնունեաց, որոց յանձն էր այս պաշտօն դէթ յոյնժամ։ Վարդանանց ժամանակի հազարապետն, որ ըստ Խորենացւոյն կը թուի լեալ Վահան Ամատունի՝—«բայց յաղթեաց (ի թագաման մարմնոյն Մեսրոպայ) քաջն Վահան Ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ (իշխանութեամբ) մարմնաւորաւ, վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն Հայոց աշխարհիս» (Խոր. Գ. կէ.)՝—զովութեամբ կը յիշուի նաև յԵղիշէէ, իբրև հայր և վերակացու աշխարհին, և որոյ անկումն ի պաշտօնէն էր ըստ նոյն Եղիշէի մին ի գլխաւոր պատճառաց զանգատանաց Հայոց ընդդէմ Պարսից, ինչպէս տեսանք վերագոյնն. «Եւս չարագոյն հինգերորդն (հինգերորդ պատճառ գանգատանաց), քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն և քրիստոնէիցն. զբռնաւորութիւն ի վերայ նորա, և հաշուեաց յոլոյց (Վասակ) զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն» (Եղիշ. էջ. 39, 40)։

Առ Ագաթանգեղոսի կը յիշուին ուրիշ երեք գործակալք իշխան անուամբ, «իշխանն մարդպետութեան իշխանութեանն», «իշխանն մաղխազութեան իշխանութեան», և «իշխանն մաղխաթագակալ ասպետութեանն իշխանութեան», որոց յանձն էին մասնաւոր պաշտօններ, որ կը գուլթեան տանն», որոց յանձն էին մասնաւոր պաշտօններ, որ կը վերաբերէին թագաւորին անձին և տան։ Մարդպետութիւնն էր, ինչպէս յայտնի է՝ ներքինապետութիւնն, որ նշանաւոր պաշտօն կամ պատիւ էր ոչ առ Պարսիկս միայն, այլ և առ Յոյնս, մանաւանդ առ Բուզանդեան կայսերօք։ Մարդպետք, որ «հայրն անուանեալ

էին թագաւորին» (Բուզ. Ե. Զ.), և զորոց պաշտօնը կ'անուանէ
ուրեք Բուզանդ «Հայրութիւն»—«Եւ ի նորա տեղի Հայրութեան
մարդպետութեանն (կացուցանէր Պապ) զԴղակ ոմն» (Բուզ. Ե. Գ.)՝ –
ունէին ազդեցութիւն մեծ առ թագաւորին, մինչև գանգատել զնո-
ցանէ Բուզանդայ բազմիցս, կոչելով զնոսա «չարասիրտ, չարախոր-
հուրդ, չարագործ» (Բուզ. Գ. ԺԲ.), «այր չար և ժանտաբարոյք
անօրէն և անիրաւ» (Գ. ԺԳ.), կը վարէին արքունի կալուածոց վե-
կացութիւնը (տես էջ 7), և ունէին համարձակ մուտ ի կանանոցն
(Բուզ. Ե. Գ.)։ Մարդպետութիւնն տևեց նաև յետ դարձին Հայոց
ի քրիստոնէութիւն, որպէս ասացաք, ըստ դայթակղական օրինակի
Բուզանդեան կայսերաց, Թէոդոսներու և Արկադներու անգամ։ Փար-
պեցին կը յիշէ Միհրշապուհ անուն մարդպետ ի համարս ուխտա-
պահ նախարարաց միաբանելոց ընդ Վարդանայ (Փարպ. Լ.Թ.). այլ
կը խզուէին արդեօք սոքա, թէ լոկ ծեր սովորական անուն պաշ-
տօնի կը պահէին մարդպետ անունը՝ չէ յայտ։

Ասպետութիւնն էր մասնաւոր իմն արտօնութիւն պսակել
զթագաւորն, ուստի և Ագաթանգեղոս ասպետ անուան վրայ, որ
էր Բագրատունի իշխանաց բուն պատուանուն՝ կը յաւելու նաև
«թագադիր» բառը—«Եւ զթագադիր ասպետն» (Ագաթ. ՃԻԶ.)։ Այ
պաշտօնն, ի վեր քան զայլ պաշտամունս՝ կապուած էր Բագրա-
տունի ցեղին կրկին տիտղոսով, «ասպետ» և «թագադիր» կամ «թա-
գակապ»։ Թագաւորին մասնաւոր ցեղէ մը պսակուելու սովորու-
թիւնը, զոր ունէին նաև Պարսիկք՝ կը թուի ունել հեթանոսական
ինչ ծագումն (տես Ա. մասն, էջ 180), և ունէր ոչ կրօնական մի-
այն, այլև քաղաքական նշանակութիւն, մինչև Խորենացւոյն Երուա-
դայ չպսակուելն թագադիր ասպետէ՝ համարել արատ. «Ի մեռա-
նելն Սանատրկոյ՝ միաբանեալ (նախարարաց) թագաւորեցուցին զն
(զԵրուանդ) առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագա-
դիր (Խոր. Բ. ԼԷ.)։ Նաև Բուզանդ գիտէ Բագրատունեաց այս պաշ-
տօնը, և ի վաղուց կը համարի ունել նոցա այն արտօնութիւնը
յիշելով զնոսա ուրեք այն երկու, «թագադիր և ասպետ» տիտ-
ղոսներով, մանաւանդ վերջնովն. «ԶԲագարատ մեծ իշխանն ասպե-
տութեան... կազմեցին արձակեցին» (Բուզ. Դ. Դ.) և այլուր (Ե. ԽԴ.)–
«Տայր (Մանուէլ) նմա (Վաղարշակայ) զդուստր ասպետին Բագրա-
տունեաց ի Սպեր գաւառէ, որ թագադիրքն թագակապքն լեալ էի
ի բնմէ ազգին թագաւորութեանն արշակունեաց»։ Յետ դարձին
քրիստոնէութիւն կը թուի դադրած այս սովորութիւն։ Վերջին պա-
կեալ գլուխ թագադիր ասպետէ եղաւ Աշխէն, կին Տրդատայ, «Եկեա
Տրդատայ յաշխարհն՝ առաքէ զՍմբատ ասպետ, զհայր Բագարատայ

ածել զկոյսն Աշխէն, դուստր Աշխադարայ, իւր ի կնութիւն... և հրամայէ գրել զնա Արշակունի, և զգեցուցանել ծիրանիս և թագ կապել զի հարսնասցի արքայի» (Խոր. Բ. ԶԳ.)։ Այսպէս թագադիր տիտղոսն յետ այնորիկ դուն ուրեք կը տրուի Բագրատունեաց, իսկ ասպետ՝ միշտ, այնպէս որ առ Փարպեցւոյն գրեթէ չկայ յիշուած Բագրատունի իշխան առանց ասպետ անուան։

Տ. Որպէս աւագանին և ընթերակայք, որ էին գրեթէ միշտ մօտ, շուրջ բոլորեալ զթագաւորաւն, մանաւանդ ի ժամ ճաշու և ուրախութեան (Բուզ. Դ. Բ.)՝ նոյնպէս հանդերձանք թագաւորին և սպասաւորացն և ամենայն սպասք տան և սեղանոյ էին արդարև հոյակապ և վայելուչ ըստ արևելեան շքեղութեան։ Ոսկի և արծաթ, ականք պատուականք և մարգարիտ էին սովորական նիւթք զարդուց։ Ծիրանի և թագ գլխաւոր զարդք էին թագաւորաց։ Խորենացին, ինչպէս արդ իսկ յիշուեցաւ՝ ասէ զՏրդատայ, թէ յաւուրն կին զԱշխէն՝ հրամայեց սպարապետին իւրում Սմբատայ Բագրատունւոյ թագ կապել նմա և զգեցուցանել ծիրանիս ի նշան տիկնութեան։ Բայց թագաւորական հանդերձի և զարդուց փառաւոր նկարագիրն ունինք դարձեալ առ Բուզանդայ։ Յետ մերժելոյն Վարազդատայ ի ձեռն Մանուէլի, Պարսից թագաւորն առ որ դիմած էին Հայք՝ թագաւորեցուց զերկուս որդիս Պապայ զԱրշակ և զՎաղարշակ, յղելով նոցա և մօր նոցա Զարմանդխտոյ, ինչպէս նաև սպարապետին Մանուէլի, յորոյ ձեռն եղած էր այն մերձաւորութիւն՝ թագաւորական պատմուճան և զարդ, զոր Բուզանդ կը նկարագրէ այսպէս. «Եւ ետ թագաւորն Պարսից տանել թագ և պատմուճան և զվառ թագաւորացն տիկնոջն Զարմանդխտոյ, և թագս մանկանցն երկոցունց Արշակայ և Վաղարշակայ։ Եւ սպարապետին Մանուէլի նոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մի և գդխոյ պատիւ զարգմանակ ոսկի արծաթ, և ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն հանգոյց թագի, և լանջաց պատիւ ապիզակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց, և շիկակարմիր խորան, և ի վերայ խորանին արծուի նշան, և սրահակս մեծամեծս, և կապուտակ երկնագոյն հովանոցս, և ոսկի սպաս տաճարին (սեղանոյ) առաքէր սպարապետին Մանուէլի» (Բուզ. Ե. ԼԸ.)։ Սամոյր, ինչպէս նաև կարմիր կօշիկ զգենուլ թագաւորաց՝ յայտնի է նաև այլուստ։ Երբ Ներսէս մատու առ Արշակ միջնորդել Գնելոյ համար՝ թագաւորը ծածկեց գլուխը սամոյրին, ասէ Բուզանդ, որպէս զի չլսէր Ներսէսի բարեխօսութիւնը. «Իսկ թագաւորն իբրև տեսանէր զմեծ քահանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն զի մի մեռցի՝ զիւր սամոյրն զգլխովն

ածեալ, զեւր դէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեալ, զի զնո-
րա բանսն մի լուիցէ» (Բուզ. Դ. ԺԵ.)։ Սամոյր կը թուի թէ էր
յայնժամ մեծագին զարդ, զգենուլ զայն չէր սակայն թագաւորաց
միայն յատուկ. Վասակայ փառաւոր զարդարանաց հետ կը յիշուի
նաեւ սամոյր (Եղիշ. էջ 241)։ Բուզանդ զՋաւինայ ումեմնէ անար-
ժան և պճնասէր եպիսկոպոսէ Մանազկերտոյ կը պատմէ, թէ «ամթի-
նեալս և զտապակեալս, զժապաւինեալս նարօտօք ագանէր, զա-
մուրենիս և զկնգմենիս և զգայլենիս ագանէր, և զղուեսենիս զանձ-
մամբ արկեալ անխտիր ի բեմ ելեալ նստէր» (Բուզ. Զ. Բ.). Ինչ-
պէս կարմիր կօշիկ՝ նոյնպէս ոսկի սպաս յատուկ էր թագաւորաց.
այլք չունէին իշխանութիւն վարել այնպիսեօք, բայց եթէ առան-
ձինն հրամանաւ թագաւորին իբրեւ նշան մեծ պատուոյ և աւագու-
թեան։ Այսպէս, ըստ Խորենացւոյն, Արգամայ նահապետին Մուրա-
ցեանց տրուեցաւ իշխանութիւն, իբրեւ երկրորդ թագաւորին՝ ագա-
նել կօշիկ կամիր միոյ ոտին, և ըմպել ոսկի բաժակէ. «Տայ (Արտա-
շէս) և առնն քաջի և պատուականի Արգամայ՝ զգահն երկրորդա-
կան, և պսակ յակնթակապ և գինդ յերկոսին ականջսն, և կարմիր
զգեստ միոյ ոտինն, տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկե-
ղինօք ըմպել նուագօք» (Խոր. Բ. Խէ.)։ Պապ ունէր ոսկի բաժակ
ի ձեռին, երբ հարին զնա ի բազմականին. «Եւ մինչդեռ Պապ ունէր
զուրախութեան գինին ի մատունս իւր և նայէր ընդ պէսպէս ամ-
բոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն յոր յեցեալ բազմեալ
էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր՝ հրաման լինէր հարկանել
զնա» (Բուզ. Ե. ԼԲ.)։ Ոչինչ ընդհատ շքեղ էին հանդերձք և զարդք
պաշտօնէից և սպասաւորաց, մանաւանդ մինչ էին առ թագաւորին։
Այսպէս Խորենացին ասէ զթագադիր ասպետէն, թէ ունէր իշխա-
նութիւն «առանց ոսկւոյ և ականց զկրսեր մարգարտոն երեքտա-
կէն վարսակալ ածել՝ յորժամ յարքունիս ի տան թագաւորին շրջի-
ցի» (Խոր. Բ. Է.). Նկարագիր մութ. թերեւս կամի ասել, թէ թա-
գադիր ասպետն ունէր իշխանութիւն ածել ի գլուխ իւր ապարօ-
երեք կարգ մարգարտէ։ Մարգարիտն այնպէս առատ էր՝ մինչեւ ի
հարսանիս թագաւորաց սփռել մարգարիտ ի տան հարսին, ինչպէ-
ոսկի դահեկան՝ ի տան թագաւորին։ Խորենացին ի վկայութիւն այ-
սովորութեան կը բերէ Հայոց վիպասանաց սա գեղեցիկ երգն զհար-
սանեաց Արտաշիսի. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշի-
սի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան». «քանզի սո-
վորութիւն իսկ էր, կը յաւելու Խորենացին, թագաւորացն մերո-
փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղե-
իբրեւ զհիւպատեանն Հռոմայեցւոց. սապէս և թագուհեացն յառ-

գաստին՝ մարգարիտ» (Խոր. Բ. Ծ.)։ Զներսեսէ մեծէ, մինչդեռ սենեկապետ էր նա Արշակայ յառաջ քան զկաթողիկոսութիւնն՝ ասէ Բուզանդ, թէ «կայր ի սպասու թագաւորին ի սնարս նորա, զարքունական սուսերն, զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակուռ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր» (Բուզ. Դ. Գ.)։ Պատշաճ հանդերձիւ և զարդու երթալ ի խընջոյս կամ ի հարսանիս այնպէս սովորական էր, ինչպէս զարդիս, նոյնպէս ի հնումն, մինչև Տէրն մեր կը յանդիմանէ զայն որ առանց հանդերձի հարսանեաց եկած էր ի հարսանիս. «Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. և նա, ասէ, պապանձեցաւ»։ Արդարև արդար յանդիմանութիւն, բայց պատուհասն չեղաւ ըստ ոգւոյ Աւետարանին, քանզի կը յաւելու աւետարանիչն, «Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն, կապեցէք զդորա զոտս և զձեռս, և հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց» (Մատթ. ԻԲ. 12, 13)։

Արտաքին հանդերձք ժամանակին, մանաւանդ մեծամեծաց, էին դրաստ, այսինքն պարեգօտ կարճ, յորոյ վերայ կու գային վարտիքն, և գօտի զմիջով, զորմէ կախէր նրանն, որ կը թուի լինել սուսեր կարճ, և մոյկ յոտս։ Այսպէս կը նկարագրէ Բուզանդ զԴղակ մարդպետ. «Ի ժամ ընթրեացն հրաման ետ արքայն Պապ տանել պատմուճան ագուցանել մարդպետին Դղակայ, և ագուցին նմա դրաստս և վարտիս և մոյկս։ Եւ էած զգօտին ընդ մէջ իւր զորմէ թուրն կախէր, և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ի գօտւոյ դրաստիցն իջեալ զթուրն և զսուսերն ծածկէր» (Բուզ. Ե. Զ.)։ Նաև անտէրնչութեան ժամանակ, այն է զկնի բարձման թագաւորութեան, նախարարք ունէին իրենց պատուոյն իսկական և վայելուչ ձևը։ Եղիշէ Վասակայ զարդը կը նկարագրէ այսպէս. «Ըստ օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատիւ վարսին, և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զականակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրն զթիկամբն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ երթայր յարքունիս» (Եղ. էջ 241)։

Նաև երիվարք կ'երևի թէ էին վառեալ զարդու, որոյ վասն ունի հայերէնն պարսկահայ բառն «տապաղէն»։ Բուզանդ գեղեցիկ կը նկարագրէ զՄանուէլ վառեալ զինու հանդերձ երիվարաւն. «Իբրև զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ, և տեսանէր զսպարապետն Մանուէլ, ի մեծութենէն հասակին և ի շքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչև ցգլուխն առ հա-

սարակ յանվթար զինէն, ի հաստամեստ յանձնէն և ի հաստատուն երիվարէն և յասպազէն վառելոյն յանշարժ սպառազինէն՝ համարեցաւ կշռեալ ի միտս իւր իբրև զլեառն մի բարձր զանմատոյց» (Բուզ. Ե. Լէ.)։

9. Ձիք գրեթէ ամենևին յիշատակութիւն կայ, զորս վարել արդարև դժուարին էր յանպիտում անհարթ երկրի, լի խորաձորովք, լերամբք և լեռնակօք, անթիւ գետերով և գետակներով։ Առ Բուզանդայ կը յիշուի միայն ժանու կամ ժանուար, իբրև ազգ ինչ գեսպակի, որ հաւանականապէս կը տարուէր ձիովք կամ ջորւովք, գլխաւորապէս կանանց համար։ Այսպէս զՓառանձեմայ ասէ Բուզանդ, թէ եկած էր ի բանակն ժանուաւ ընդ առն իւրում Գնելայ, զոր Արշակ բերել տուաւ զաւով. «Եւ մինչդեռ գայր նա (Գնէլ) ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում... և կին նորա որ եկեալ էր ընդ նմա ժանուաւ՝ ի նմին վաշտու էր ընդ առն իւրում» (Բուզ. Դ. ԺԵ.)։ Եւ զՄուշեղ ասէ նոյն Բուզանդ, թէ զկանայս Շապհոյ զորս բռնած էր զերի՝ արձակեց ժանուարաւ. «Բայց զկանայս Շապհոյ թագաւորին Պարսից, (և զտիկնաց տիկինն զորս ըմբռնեալ էր) ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ, այլ ժանուարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի» (Բուզ. Ե. Բ.)։

10. Վարչութեան քան ուրիշ մասերն աւելի կանոնաւոր էր զինուորականն։ Ոչ միայն Արշակունիք, այն է տիրող ցեղն ունէր զիւր առանձին զօրն, որ կը կոչուէր «արքունի զօրք», այլ և իւրաքանչիւր նախարար ունէր զիւր գունդ։ Այսպէս մարթ է ասել, թէ բոլոր երկիրն էր մեծ իմն զինուորական սատրապութիւն, մանր մանր ցեղապետութեանց բաժնուած, որոց իւրաքանչիւրն թէպէտ ունէր զիւր առանձին գունդ՝ գլխաւոր զօրութիւնն սակայն էր արքունական բանակին, զոր կու գային զօրացունել ի հարկին նախարարակոյտ զօրքն, այսինքն այլև այլ նախարարք իրենց գունդերով, որոց ամենուն ամբողջութիւնը կը կոչէ Բուզանդ «Գումարտակ», որ կը յանձնուէր ընդհանրապէս սպարապետին։ Գէթ այսպէս կ՚ընծայեցունէ Բուզանդ։ «Վստահ էր, ասէ, (Խոսրով) ի ծերունին Վաչէ, ի[illegible]րուն սպարապետն, ի զօրավարն Հայոց մեծաց, և ի քաջն Վահան Ամատունի։ Գումարէր զզօրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա» (Բուզ. Գ. Ը.)։ Եւ այլուր (Գ. ԺԱ.)—«Ապա ժողովէր սպարապետն, զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախումբ բանակն նախարարակոյտ զօրօքն, և ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ»։

Դարձեալ (Գ. Ի.)—«Ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, զի զօրավարքն չէին անդ, այլ ապրտուցեալ էին, և այլ մեծամեծք նախարարացն և աւագ տանուտեարք ազատանին, սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս, յիւրաքանչիւր կալեանս, յիւրաքանչիւր գաւառս գաւառեալ էին»։ Բուզանդ այլ ուրեք կը կոչէ բոլոր Հայոց զօրքն «Արարատեան գունդ». (Բուզ. Դ. Ի.), ինչպէս թագաւորութիւնը կը կոչէ «Արարատեան տէրութիւն» (Գ. Ժ.). «Վարէր, զինէր, ժամակալ լինէր Վասակ, Այրարատեան գնդաւն ելանէր անկանէր ի վերայ բանակին (Յունաց)»։

Չենք գտներ սակայն արդի ոճով որոշ բաժանումներ ի զօրուն։ Գունդ ստէպ կը գործածուի նշանակութեամբ բանակի կամ զօրաց իբրև այս ինչ ազգի։ Այսպէս յաճախ. «Իբրև մերձեցան գունդքն երկոքեան, Յունացն և Պարսիցն»։ «Հայաստան գնդին լինէր յաղթութիւնն»։ «Ապա յառաջ գայր և խնդրէր պարգև Ուռնայր ի Շապհոյ արքայէն Պարսից և ասէր, թէ Կամ լիցի քեզ, արանց քաջ, զի ինձ հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդաւս նահատակ, զի Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զօրացն Յունաց. իսկ ես իմով գնդաւս Հայոց իշխանացն ելից»։ «Մուշեղ սպաս արարեալ դիպէր գնդին Աղուանից»։ Գունդ կը կոչուի նաև մասնաւոր ցեղի կամ զօրավարի զօրք. «Թողոյր (Մեհրուժան) զբանակն Պարսից, և ինքն զիւր գունդն առեալ դայր հասանէր ի Կոգ գաւառ»։ «Մինչդեռ նա (Ներսէս) զաղօթսն մատուցանէր՝ խաղայր ճակատեալ իբրև զհուր ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից. իսկ գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայն գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային» (Բուզ. Ե. Դ.)։ Վաշտ, որ դուն ուրեք կը գործածուի՝ կը նշանակէր փոքր գունդ։ Այսպէս Բուզանդ խօսելով զբազմութենէ զօրուն Մազքթաց՝ վաշտ կը դնէ զկնի բառին գունդ իբրև փոքր քան զայն. «Լինէր հանդէս ի նշանաւոր տեղիս, գնդի գնդի, վաշտուց վաշտուց» (Բուզ. Ե. Ե.)։ Նոյնպէս է առ Խորենացւոյն իբրև խումբ. «Շուրջ զգահոյիւքն (դիական Արտաշիսի) նախ (երթային) որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք (զինուորական պաշտօնեայք), նահապետքն և նախարարութեանց գունդք (բազմութիւն նախարարաց), և միանգամայն զօրականացն վաշտք» (խումբք զօրաց) (Խոր. Բ. Կ.)։ Բայց վաշտ կը նշանակէ նաև որևիցէ փոքր խումբ կամ բազմութիւն։ Այսպէս զբազմութիւնն Գնելայ, որ դաւով հրաւիրուելով յԱրշակայ եկաւ ի բանակն իբրև յայցելութիւն և ոչ իբրև ի պատերազմ՝ Բուզանդ կը կոչէ վաշտ. «Իբրև առաւօտն ծագեաց՝ հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի»։

«Կին նորա որ եկեալ էր ընդ նմա ժանուաւ՝ ի նմին վաշտու էր ընդ առն իւրում» (Բուզ. Դ. ԺԵ.)։ Առ Խորենացւոյն ունինք այս բառին նուազականը, «վաշտական», իբր փոքր վաշտ. «Սմբատայ գնդերոյն զՀետ Երուանդայ եկեալ սակաւ վաշտականաւ՝ զդուռն քաղաքին պահէր» (Խոր. Բ. ԽԶ.)։ Բայց այս ամենայն անուանք, ինչպէս արդէն ասացաւ՝ չեն ցուցներ, ըստ արդի զինուորական դրութեան, աստիճանաւոր բաժանումներ իւրաքանչիւր որոշ թուով, այլ կը ցուցնեն միայն մեծ կամ փոքր բազմութիւն զօրաց։

Հայոց զօրքն էր ընդհանրապէս այրուձի. հետեւակ դուն ուրեք կը յիշուի. և զայս կը պահանջէր արդարեւ երկրին երեսը, լեռնային և անհարթ, դժուարին հետեւակ զօրաց շարժման. միով բանիւ բանակին բոլոր զօրութիւնն էր հեծելազօրն։ Բուզանդ յետ պատմելոյ, թէ Մերուժան խորհեցաւ առնուլ Մանուէլի բանակին ձիանը, և այնու ի բուռն արկանել զՄանուէլ հանդերձ իւրովքն՝ կը յաւելու, թէ բարեբախտութեամբ Մանուէլեանք որ անդէտ էին դաւին՝ յորս ելած էին զայն օր. «Եւ զայլն հասանէին լրտեսքն (Մերուժանայ), գիտեցին զերամակ ձիոց բանակին (թէ) յորում վայրի կային, և չգտան տարան զրոյց։ Եւ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, և խնդալից եղեալ առէր պարծելով առաջի իւրոց զօրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ իցէ զՄանուէլն:.. Ապա սրտմտութեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ յերամակական արշաւէր, զի հնար լիցի նմա նախ զայն ըմբռնել։ Եւ հասեալ ի տեղին՝ զերամակ ձիոցն ոչ գտանէր, վասն զի յԱստուծոյ այնպէս խմն եղեւ իրաւունք պատրաստութեան Հայոց գնդին, զի սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամենայն երամակն ի շէն էր ածեալ, և նոքա դեռ որսոյ պատրաստեալ էին ի հեծանել» (Բուզ. Ե. ԽԳ.)։ Գալով կազմութեան և սպառազինութեան զօրուն՝ պատերազմող զօրքը (քանզի կար նաև սինլքոր մաս մի) կը բաժնուէր երկու, նիզակաւոր՝ որ մեծագոյն մասը կը կացուցանէր զօրուն, և սպարակիր։ Այսպէս ունինք առ Բուզանդայ. «Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց, և էին կուռ վառեալք ինն հազարք ընտիրք նիզակ ի ձեռն, թող զսպարակիրս» (Բուզ. Ե. Է.)։ Սպարակիրք, որ և վահանաւորք, կը կոչուէին այսպէս, վասն զի ասպար էին գլխաւոր զէնք նոցա. իսկ նիզակաւորք, որ էին բուն կռուող մասն զօրուն՝ կը կրէին այս անունը, վասն զի մեծ մասին նոցա զէնքն էր նիզակ. կային նաև որ կը կրէին սուսեր, վաղր, սակր և աղեղն. իսկ զարդք ամենեցուն էին զրահ և սաղաւարտ, որոց միովն կը պաշտպանուէր

մարմինն, և միւսովն՝ գլուխն։ Այս նկարագիրն ունինք յաճախ ի Բուզանդայ. «Ապա հրաման տայր թագաւորն Արշակ Վասակայ, իւրում սպարապետին, գունդ գումարել, զօրս պատրաստել. և նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. քառասուն հազար կուռ վառեալք, որ ընտիրքն և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստի նահատակութեանն, նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկիւղ զանգիտելոյ յարանց ախոյենից, համակ հեծելազօրք, զրահաւոր պատենազէն, սաղաւարտաւորք» (Բուզ. Դ. Ի.). և այլուր ի պատմութեան Գնելայ (Դ. ԺԵ.). «Իբրև մերձ եղև (Գնէլ) ի հրապարակն արքունի՝ անդէն յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք. սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սունաւորք և սպարակիրք հետևակք»։ Բայց ունէր բանակն նաև ոչ սակաւ թարմատար զօրք, գործով կամ պաշտօնիւ տարբեր մարտիկ կամ ճակատամուղ մասէն, ինչպէս կը յիշէ ուրեք Բուզանդ. «Ոչ ոք էր, ասէ, մնացեալ առ թագաւորին, ոչ գունդ և ոչ այրուձի, այլ (ինքն էր) միայն սակաւ սպասաւորօք հանդերձ, և ռահվիրայ մարդկաւն, և խառնաղանջ խորանապահ զօրուն և ռամիկսպաս զօրօքն» (Բուզ. Դ. Ի.)։

Մասնաւոր բանակատեղի, մանաւանդ արքունի զօրուն՝ էր Նահապիվան, իբրև սովորական զօրանոց. «Եւ էր բանակ թագաւորին ի Նահապիվանի, ի բուն բանակի տեղւոջն Արշակունեաց» (Բուզ. Դ. ԺԵ.)։ Նահապիվան կը թուի լեալ քաղաք զօրանիստ հանդերձ մօտակայ երկրաւն, ընդ իշխանութեամբ կամ վերակացութեամբ առանձին իշխանի, որ կը կոչուէր շահապ Նահապիվանի (Ագաթ. ՃԻԶ.)։

Արդի դրութեամբ զինուորական աստիճանք, ինչպէս հազարապետի, հարիւրապետի, յիսնապետի, տասնապետի՝ չկան երբէք յիշուած առ մեզ։ Գալով սպարապետութեան, թէպէտ միում ումեք միայն յանձն էր այս պաշտօն՝ կային սակայն զօրապետք կամ պետք զօրաց ընդ ձեռամբ սպարապետին, և ամենուն վրայ առաջին և գլխաւոր հրամանատար և իշխան էր թագաւորն, իբրև տէր երկրին բովանդակ զինուորական զօրութեան, և որ կարող էր տալ կամ բառնալ առնուլ որևիցէ զինուորական պաշտօն։ Այսպէս կը պատմէ Բուզանդ զԱրշակայ թէ զՄամիկոնեանս, դայեակս իւր, որ առ հօրբ նորա Տիրանաւ «պառակտեալք և քակտեալք էին յընտանութենէն և յամենայն գործոց Հայոց»՝ հաստատեց յիւրեանց նախնի պաշտաման զինուորութեան. «Յայնմ ժամանակի ի խնդիր ելանէր արքայն Արշակ առհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից։... Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց

աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընտանութիւնն, զի պատկտեալք և քակտեալք էին յընտանութենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խռովութեանն Տիրանայ։ Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի նահապետութեան ազգին իւրեանց, և զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւն զօրավարութեան, նոյնպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր» (Բուզ. Դ. Բ.)։ Այսպէս սպարապետք ունէին մի կամ աւելի օգնականներ մշտնջենաւոր կամ առժամանակեայ, զորս կու տար թագաւորն կամ ինքեանք կ'ընտրէին սպարապետքն. բայց որպէս սպարապետքն՝ նոյնպէս օգնականք նոցա պարտէին լինել երևելի իշխանք կամ սեպուհք նախարարական տոհմերէ։ Այսպէս Բուզանդ ասէ զՎահանայ Ամատունւոյ, թէ էր միշտ օգնական Վաչէի սպարապետին, զի ի նոսա յերկոսին էր մանաւանդ վստահ թագաւորն. «Բայց վստահ լինէր (Խոսրով) ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց մեծաց, և ի քաջն Վահան Ամատունի։ Գումարէր զզօրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա, և հանապազ կային ի քաջութեան ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից, և ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց» (Բուզ. Գ. Ը.)։ Այսպէս նաև ի պատերազմին Մազքթաց «նիզակակից» էին Վաչէի սպարապետին «Բագարատ Բագրատունի, Մեհընդակ և Գարեգին Ռշտունիք, Վահան նահապետն Ամատունեաց տոհմին և Վարազ Կամսարական, որ հասանէին հարկանէին սատակէին զզօրսն Ալանացն և Մազքթանցն և Հոնացն» (Բուզ. Գ. Է.)։ ԶԲարկանէ ումեմնէ Սիւնւոյ ասէ Բուզանդ, թէ «էր նիզակակից Մանուէլի սպարապետին զամենայն աւուրս կենաց նորա» (Բուզ. Ե. ԽԲ.), և Փարպեցին (ՀԵ.) զերկուց եղբարց Կամսարականաց, զՆերսեհէ և զՀրահատայ ասէ, թէ «ընդ նմա (ընդ Վահանայ) էին միշտ, և անքակ ի նմանէ և միաբան»։ Բայց որպէս արդէն ասացաւ՝ ունէր իշխանութիւն թագաւորն այլոց յանձնել մասն մի ի զօրաց և զրկել ուրոյն ի պատերազմ առանց սպարապետին։ Այսպէս Խոսրով իշխանաց ումանց յանձնեց նուաճել զապստամբութիւն բդեշխին Աղձնեաց. «Ապա առաքէր թագաւորն Հայոց (Խոսրով) զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն, և զիշխանն Մեծի Ծոփաց զՄար, և զիշխանն Ծոփաց Շահէի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն Հաշտենից զԴատ, և զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զօրօք, որ չոգան յաղթեցին զօրացն Պարսից (որ օգնական էին բդեշխին), և սպանին զբդեաշխն» (Բուզ. Գ. Թ.)։ Նոյն Խոսրով զԴատաբէ ումն իշխան Բզնունեաց զրկեց մեծ բազմութեամբ, իբր քա-

ռասուն հազարաւ ընդդէմ Պարսից. «Եւ մինչդեռ նա (Խոսրով) յայնմ գործ զմայրեօքն անկեալ էր՝ յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով ի ՙՀեր և ի Զարաւանդ գաւառ(է), թէ պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ քո: Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբեայ նահապետի Բզնունեաց՝ գուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն մատենիկ գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամիսն» (Բուզ. Գ. Ը.): Առ Վարդանամբք Առանձար ամն սեպուհ Ամատունի զրկուեցաւ զօրաբաժնիւ երթալ լրտեսել Պարսից բանակը ի Հեր և ի Զարաւանդ գաւառ, ուր և տրուեցաւ փոքր ճակատամարտ ընդ վերջապահ գնդին Պարսից. «Առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան, միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմայն էին՝ սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով, երթալ լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից... և երթեալ Առանձար և գունդն որ ընդ նմա... և զհզօր վերջապահ թևով միով անկեալ՝ զբազումս հանէին ընդ սուր և ինքեանք դառնային ողջանդամք» (Փարպ. Լէ.): Երբեմն ևս, երբ այլևայլ թշնամի գունդերու հետ էր պատերազմը հեռաւոր տեղեր՝ զօրքը մաս մաս կը յանձնուէր այլևայլ զօրավարներու: Այսպէս անգամ մի Արշակ, ըստ Բուզանդայ «զիւր զօրսն բաժանեաց ընդ երիս, և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին, և զերկրորդ գունդն ի ձեռն Բագոսի եղբօր նորին, որ ի գործ արութեան քաջ էր անհնարին, բայց ի գործ իմաստութեանն բախած էր, և զմիւս գունդն թագաւորն Արշակ առնոյր» (Բուզ. Դ. ԻԲ.):

11. Պատերազմունք, ինչպէս զարդիս, նոյնպէս ի հնումն, թէպէտ տարբերք բազում մասամբ՝ չէին մղուեր խառնիխուռն, առանց իրիք արուեստագիտութեան: Այնպէս երևելի զօրավարներ էին Աղէքսանդր, Կեսար՝ ինչպէս Նաբոլէոն և ուրիշ արդի զօրավարներէն շատք: Հայք ևս ունէին իրենց պատերազմական արուեստն ըստ հանգամանաց ժամանակին: Պատմութիւնը կ'ընծայեցունէ մեզ շար իմն զօրավարաց, մանաւանդ Բագրատունի և Մամիկոնեան ցեղէն, որ երբեմն կը գործէին գրեթէ սքանչելիս: Չէր դոյզն ոք զօրավար Վահան, որ, եթէ չէ պատմութիւն Փարպեցւոյն բոլորովին ուեղաբանութիւն՝ սակաւաձեռն գնդաւ իբր երեք տարի զդէմ կալաւ քան զիւրն տասնապատիկ աւելի մեծ զօրութեանց: Գլխաւոր քաջութիւնն էր սպարապետին կամ զօրավարին, որ կը հրամայէր բանակին՝ մանաւանդ ի յարդարել և ի կազմել ճակատ, և այս կազմութենէ կախեալ էր յաճախ յաղթութիւնն: Խորենացին կը պատմէ

թէ ի պատերազմի ուրեմն Արտաշիսի ընդդէմ Հռոմայեցւոց, մինչ որդիքն արքայի առ խակութեան մերձ էին ի վտանգիլ՝ Սմբատ սպարապետ հանելով այնպէս իմն յարդարեց և մղեց ճակատը, որ յաղթութիւնը դարձաւ Հայոց, և Հռոմայեցիք փախեան մինչև Կեսարեայ սահմանները։ «Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս. ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանալ Հռոմայեցւոցն, ոչ տալով հարկս։ Իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ, զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ, որոց հասեալ ի կողմանս Կեսարու՝ զՏիրան և զզօրսն արևմտեան առաջի եղեալ ածին տագնապաւ մինչև ցքաջ ընդարձակ հովիտն Բասենոյ. յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արևելեայ և հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ սաստկապէս վտանգին։ Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ։ Զի թէպէտև ծերագոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն, և հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հռոմայեցւոց մինչև ի սահմանս Կեսարու» (Խոր. Բ. ԾԴ.)։ <u>Ճակատ յարդարել էր</u>՝ կարգաւ իմն և արուեստիւ շարել զզօրն ի դիպան վայրի ըստ դրից և զօրութեան թշնամւոյն, և այնպէս մղել յառաջ։ Ընդհանրապէս կը բաղկանար ճակատն երեք մասերէ որ կը կոչուէին [illegible] կամ [illegible], այն է յաջմէն, յահեկէն և ի միջոցէն. երբեմն նաև չորրորդ մասէ, որ էր իբրև նեցուկ կամ թիկունք օգնականութեան այն երեք բաժիններէն միում կամ միւսումն, մանաւանդ տկարագունին, և կամ այնմ, որոյ ախոյեանք թշնամւոյն կողման էին հզօրագոյն կամ վարժ։ Գրեթէ յամենայն պատերազմունս Վարդանայ և Վահանայ Փարպեցին կը յիշէ այս կարգը։ «Եւ հասեալք ի ժամ մարտին՝ հայեցեալ տեսանէին ըստ օրինի կարգման զգունդսն Պարսից։ Կարգէր և գլուխ գունդն երանելի զօրավարն Հայոց Վարդան ըստ բաւականի այրուձիոյն իւրոյ ընդդէմ նոցա։ Յերիս առաջս բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրաքանչիւր զօրագլխի։ Աջոյ կողմանն կացուցանէր զօրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն... և նիզակակից տայր նմա զՄուշ զաւագսեպուհ յազգէն Դիմաքսենից. և զահեակ կողմն տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ, և զօրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն, և ինքն սուրբ զօրավարն Հայոց Վարդան պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման։ Եւ այսպէս յօրինեալ զճակատն յարձակեցան ի վերայ թշնամեացն»։ Նոյն յօրինուածը կը տեսնենք մեծ պատերազմին մէջ ուր նահատակեցաւ Վարդան և այլքն։ «Սուրբն Վարդան բաժանեալ զիւր գունդն յերիս յառաջս,

միջոցի գնդին կարգէր զխաւոր զտէրն Արծրունեաց և զմարզպետն
Միհրշապուհ՝ հանդերձ իշխանաւն Արշարունեաց Արշաւրաւ և երա-
նելի արամբն Արտակաւ իշխանաւն Մոկաց և այլ աւագ նախարա-
րօքն. և կողմանն աջոյ կարգէր աւագ զերանելին Մաղխազ Խորէն՝
հանդերձ երանելեաւն Թաթլաւ տերամբ Վանանդայ և սուրբ արամբն
Ներսեհիւ Քաջբերունեաւ և այլ աւագ նախարարօքն. և ընդ ահե-
կէն կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովն և իշխանաւն Առա-
ւեղենից Փափագաւ, և այլ իշխան նախարարօքն Հայոց. քանզի
յայնմ կողմանէ առաւելապէս երեւէր ղակիշ գնդին սւենի զօրուն և
այլ զօրաւոր արանց նշանք դրօշիցն» (Փարպ. ԼԹ.)։ «Լուեալ թէ
առ վաղիւն գունդն Պարսից գայ ի վերայ նոցա ի պատերազմ,…
կազմէին և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, բաժանեալ զչորեք-
հարիւրսն ի չորս առաջս. միջին վայրին կարգէին զօրագլուխս ի
ժամուն զիշխանն Սիւնեաց զԲաբգէն և զքաջ սեպուհն Մամիկո-
նէից Վասակ, և ահեակ կողմանն զԳարջոյլն Մաղխազ, և կողմանն
աջոյ զԳնունիսն երկոսին, զիշխանն Գնունեաց Ատոմ և զնորուն
զեղբայրն զԱռաստոմ, և ընդ մէջ երկոցունց մասանցն զքաջն և
զընտիրն զիշխանն Շիրակայ զՆերսեհն Կամսարական և զնորուն եղ-
բայրն պատրաստական յօրինէին, զի որ կողմն տկարասցի, առեն,
նոցա հասեալ փութով զօրացուցեալ օգնեսցեն և յամենայն կողմանց
ույժ լինիցին» (Փարպ. ԿԹ.)։ «Սկսանէր այնուհետև զօրավարն Հայ-
ոց Վահան Մամիկոնեան յօրինել ըստ պատշաճի զիւրաքանչիւր
կողմն ճակատուն։ Զմիջոց կողմն բազում այրուձիովն տայր ի ձեռն
լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի. և ի կողման աջոյ թեւին
կարգէր զԲաշղ Վահեւունի և զԲարգէնն Սիւնի և զԱտոմն Գնունի
և զՓապակն Պալունի, իւրաքանչիւր այրուձիով և այլ ևս յաւե-
լուածով, և յահեկէ կողմանէ հանդերձ ուխտասէր Կամսարականօքն
Ներսեհիւ և Հրահատաւ, և իւր սիրելի եղբարբն Վասակաւ, և ընդ
աջմէ իւրաքանչիւր այրուձիով գնդացն կազմէր զինքն» (Փարպ. ՀԱ.)։
«Զգունդն զօրացն կազմէր Մամիկոնեանն Վահան ըստ օրինի ճա-
կատուն պատրաստութեան, և տուեալ զկողմն աջոյ ի ձեռս Բարշլի
Վահեւունւոյ և Սատոնի Գաբեղենի, և զկողմն ահեակ տայր Վախ-
տանգայ արքային Վրաց, և ի միջոյ կողմանն կազմէր զինքն երկո-
քումբք արամբքն որդւովք երանելւոյ Արշաւրայ և երանելեաւ տե-
րամբն Գնունեաց, և զերանելին ասպետն Սահակ և զԱիւնեն Բաբ-
գէն ընդ մէջ իւր և Բարշլի կացուցանէր» (Փարպ. ՀԳ.)։ Ճակատ
յարդարել կար յառաջագոյն իսկ քան զՎարդանեանս և զՎահա-
նեանս։ Խորենացին կը յիշէ ծերունւոյն Սմբատայ սպարապետին Ար-
տաշիսի ճակատ յարդարելն երիտասարդապէս. «Ի վերջս պատերազ-

մին (Արտաւազդայ ընդ Հոռոմայեցիս) հասեալ Սմբատ հարաւային զօրօքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքային, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ. զի թէպէտև ծերագոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն, և հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հոռոմայեցւոց մինչև ի սահմանս Կեսարու» (Խոր. Բ. ԾԴ.)։ Նոյնպէս բաժանումն ճակատուն յաջ և յահեակ կը գտնենք վաղ իսկ առ Արտաշիսիւ ըստ Խորենացւոյն. «Իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի՝ Արգամայ առեալ զբազմութիւն հետևակացն ի կողմ ելանէր. և Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել, և յառաջեալ զճակատն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր։ Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և յահեակ թևսն էին՝ ի նա խառնեալ միանային» (Խոր. Բ. ԽԶ.)։ Կայ նաև յիշուած «յառաջապահ» և «վերջապահ»։ Այսպէս, ըստ Բուզանդայ, յառաջնում կռուին Պապայ որում օգնական էին Յոյնք՝ յառաջապահ էր գունդն Հայոց. «Սպա զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց և յառաջեաց հանդերձ Հայոց գընդաւն, առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ և զօրացն Յունաց» (Բուզ. Ե. Ա.), և Վարդան, ըստ Փարպեցւոյն, թողուց զիւր եղբայրն զՀամազասպեան վերջապահ. «Եւ զՀամազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ, և պատուիրէր նմա մի զոք բանադատել, այլ յորդորել միայն բանիւք» (Փարպ. ԼԹ.)։

Ճակատ յօրինելու այս կերպը կը թուի լեալ սովորական։ Առ Բուզանդայ ունինք սակայն այլ իմն ազգ ճակատ յարդարելոյ օրինակ, որ ունէր հռոմէական լէգէոնաց կամ մակեդոնական փաղանգին նմանութիւնը, և զոր թերևս ուսան Հայք ի Հռոմայեցւոց։ Այս ճակատուն մէջ սպարակիրք կը շարուէին կարգաւ ամրակուռ վահանօք ի թիկանց նիզակաւորաց, այսինքն բուն պատերազմողաց, և ի վտանգիլ նոցա և յընկրկել՝ բանալով զվահանս իւրեանց կ'ընդունէին զնոսա ի ներքս իբրև յամուր պարիսպ։ Այսպէս սպարակիրք լինէին ապաւէն պատերազմող մասին, և այսպէս կը նկարագրէ զնոսա Բուզանդ ի պատմութեան մեծի կռուին, որ եղաւ ի սկզբան թագաւորութեանն Պապայ ի Ձիրաւ ըստ Խորենացւոյն։ «Լեգէոն զօրուն բազմութիւնն, ասէ Բուզանդ, այսինքն Յունաց զօրացն սպարակիրն, նոյնպէս և Հայոց սպարակիրն, զթիկունս ունէր զօրացն, վահանօք փակելովք զինքեամբք, իբրև զամուր քաղաք ինչ ի թիկանց։ Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զզօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն Հայոց՝ (Յոյնք) ի լէգէոն վահանաւորացն Յունաց, և (Հայք) ի սպարակիրն Հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին։ Իսկ յորժամ ոգի առեալ սակաւիկ մի և

անդուստ ելեալ յարձակէին,... և յաղթահարէին ինչ զնոսա զօրքն Պարսից՝ նոքա իբրև ի բերդ ամուր դիմէին ի լեգէոնն (Յունաց) և կամ ի զօրսն վահանաւորս (Հայոց), և նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին» (Բուզ. Ե. Ե.)։ Բուզանդ կու տայ նոյն իսկ Շապհոյ պատմել զայս աւագանւոյն իւրում զարմանօք.— «Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհ իշխանութեանն իւրոյ հասանէր՝ զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կռուոյն, որ դիպեցաւ նմա՝ ասէր. Զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի, զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու և ի կռիւ մտեալ եմ, և բազում ամք են զի հասի ի թագաւորութիւն, և առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւ զայս է տեսեալ, որ այս անգամս դիպեցաւ ինձ։ Զի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին՝ այնպէս յարձակէին, որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս աշտարակ մի հաստաբեստ, հզօր և անշարժ. և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք՝ նոքա (ի վահանաւորսն) ապաստան լինէին. և նոցա զվահանափակսն բացեալ՝ զնոսա իբրև ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին։ Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ՝ դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զզօրսն Արեաց առնէին» (Բուզ. Անդ.)։ Վահանաւորաց գործն էր նաև նշանաւոր զոք թշնամի վիրաւորեալ՝ փակել վահանօք, որպէս զի չսպանուէր, երբ այնպէս կը հրամայուէր նոցա։ Այսպէս ի պատերազմին Մանուէլի ընդ Վարազդատայ՝ այս վերջնոյն կուսակիցներէն զԳարեգին Ռշտունի, որ անկեալ էր վիրաւոր՝ սպարակիրք Մանուէլեան գնդին կը պահէին վահանօք հրամանաւ աներոյ նորա Համազասպենոյ Մամիկոնենի։ Այս Գարեգին, նախապէս Ռշտունեաց, առած էր զՀամազասպուհի, քոյր Համազասպենոյ Մամիկոնենի, և ի յարձակել զօրաց Շապհոյ ի Հայս յետ ըմբռնման Արշակայ՝ Գարեգին թողլով զիւր կինն փախաւ, և Համազասպուհի անկանելով ի ձեռս Պարսից կախուեցաւ Վանայ բերդին աշտարակէն։ Յետ դարձեան Պապայ ի Հայս, երբ Պարսիկք վանեցան Հայաստանէ՝ Գարեգին դարձաւ ի Հայս։ Ի պատերազմին Մանուէլի ընդ Վարազդատայ՝ էր նա Վարազդատայ կողմէն, և վիրաւորեալ անկաւ ի ճակատուն։ Մինչ Մանուէլեանք որ եղան յաղթող, կը հալածէին զՎարազդատեանս՝ Համազասպեան հանդիպելով Գարեգնի՝ գթաց ի նա և հրամայեց սպարակիրներուն ծածկել զնա վահանօք, որպէս զի չսպանուէր. բայց երբ սպարակրաց գնդապետն անցնելով ընդ այն իմացաւ, թէ Գարեգին Ռշտունի էր, զոր կը պահէին վահանաւորք հրամանաւ Համազասպենոյ՝ հեգնելով զՀամազասպեան՝ զարկաւ սպաննեց զԳարեգին։ Բուզանդ կը պատմէ զայս իւր փափուկ ընտանի լեզուաւ, որ արժանի է ընթերց-

ման։ «Մինչդեռ գունդն Մանուէլեան էին զկնի փախստէիցն՝ գայր Հասանէր Համազասպեան, սեպուհ մ'ի Մամիկոնեան տոհմէն, անցանէր առ անկելովք զխակամբքն և առ խոց վիրաւորօքն պատերազմին. և ընդ նոսին ընկեցեալ էր և զԳարեգին, տէր գաւառին Ռշտունեաց, բայց ողջ կայր։ Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպէի, զքոյր նորին Համազասպուհի անուն ունէր կին։ Եւ իբրև եկն Թագաւորն Տապուհ յերկիրն Հայոց՝ սա եթող զկինն իւր և փախեաւ։ Ապա տարան զՀամազասպուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Վան, և հանեալ կախեցին զնա Պարսիկքն զբարձր աշտարակէն, որ կայր ի վերայ քարանձաւին, ի կախաղանի սպանին զնա։ Իսկ յայնմ աւուր իբրև անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն՝ եկն Համազասպեան անէր նորուն անցանել առ նոքօք. աղաղակեաց Գարեգինն և ասէ. Տէր Համազասպեան, և զիս տես. հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց։ Եւ ասէ ցնա Համազասպեան. Ո՞վ ես դու։ Եւ ասէ. Ես եմ Գարեգին Ռշտունի։ Եւ ետ հրաման Համազասպեան վահանաւորացն որ ընդ նմա էին՝ ասէ. Իջէք և դիք զվահանսդ ի վերայ նորա, և պահեցէք։ Եւ ինքն էանց։ Ապա իջին վահանաւորքն դնել զվահանսն ի վերայ, և կային պահէին ըստ հրամանին տուելոյ։ Ապա յետ այսորիկ գայր Դանուն ոմն գամապետ սպարակրաց գնդին Մանուէլեան զօրացն. եւես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ, և զԳարեգինն պահէին. եհարց ցնոսա, թէ Ո՞վ է այդ, և դուք հեմ իջեալ կայք յայդմ տեղւոջ։ Ասեն նոքա, թէ Սա Գարեգին Ռշտունեաց տէր է, և մեզ հրաման ետ Համազասպեան իջանել պահել զսա։ Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով՝ ի բարկութիւն մեծ բորբոքէր Դանունն և ասէր. Արդ ուրեմն վրէժխնդիր կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել, և Համազասպուհի զքոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա և պահել հրամայէր։ Եւ անդէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա» (Բուզ. Ե. Լէ.)։

12. Փող հարկանել սովորութիւն էր ի ճակատուն, մանաւանդ իբրև նշան յարձակման։ ԶՍմբատայ ասէ Խորենացին, թէ ի ձայն փողոյ յառաջ մղեց զճակատն ընդդէմ զօրուն Երուանդայ. «Եւ Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել, և յառաջեալ զճակատն իւր իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր» (Խոր. Բ. ԽԶ.)։ Բուզանդ ի բանակին Արշակայ ի մէջ վառելոց ազգի ազգի զինու և զարդու՝ կը յիշէ փողարներ. «Բազմաւոր հազար, ասէ, կուռ վառեալք, նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք, անվրէպ կորո-

վեք… բազմաձայն փողարօքն» (Բուզ. Դ. Ժ.)։ Փողերու ձայնն կուտար արդարև ահաւորութիւն։ Այսպէս Փարպեցին յետ պատմելոյ, թէ Վահան ի գալն առ Նիխոր պատգամաւոր Վաղարշու, «մերձեալ ի գիւղն ուր էր Նիխոր, հրամայէր զօրուն որ ընդ նմա էին՝ վառել ըստ օրինի պատրաստութեան պատերազմի»՝ ասէ. «Եւ տայր հրաման (Վահան) հնչեցուցանել զփողսն պատերազմականս, և ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ երկիրն թնդէր» (Փարպ. ՂԱ.)։ Փող հնչեցունել ի բանակին այնպէս մեծ էր առ Պարսիկս, որ սպարապետն միայն ունէր իշխանութիւն տալ հարկանել փող՝ երբ կը մտնէր ի բանակն. ուստի Նիխոր, ըստ Փարպեցւոյն, մեղադրեց զՎահան, որ այնպէս փողով մտաւ ի բանակն Արեաց.—«Ոչ ըստ կարգի Արեաց առնես դու զայդ, ասէ. քանզի ի չուի փողով յԱրեաց բանակ սպարապետն միայն Արեաց իշխէ մտանել, և այլ ոք զայդ համարձակութիւն ի Պարսիկս ոչ իշխէ առնել» (Անդ)։

13. Նաև մին ի կարևոր կարգաց պատերազմի, ինչպէս առ այլ ազգս, նոյնպէս առ Հայս՝ էր իւրաքանչիւր գնդի ունել առանձին դրօշ, որով մարթ էր ճանաչել գունդերն, ուստի և շատ անգամ կը կոչուի նշան։ Բուզանդ զօրաց այլ և այլ ազգ սպառազինաց հետ կը յիշէ դրօշաւորներ. «Համակ հեծելազօրք (էին զօրք Արշակայ), զրահաւորք, պատենազէնք, սաղաւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք» (Բուզ. Դ. Ի.)։ Մինչ Ներսէսի հետ կը նստէր Պապ Նպատ լերան գլուխը, դիտել Հայոց առաջին կռուին ընդ Պարսից՝ սկսաւ կասկածել զՄուշեղէ, թէ Պարսից կողմն անցաւ, երբ նշանք Մուշեղի սկսան չերևել.—«Մինչդեռ նա (Ներսէս) զաղօթսն մատուցանէր առ Աստուած՝ խաղացեալ ճակատեալ իբրև զհուր ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից. իսկ գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթայր. մինչ զի նայէր թագաւորն և տեսանէր, զի ըստ ակն անկանէին, մինչ զի ոչ երևէին թագաւորին նշանքն Մուշեղի։ Իսկ իբրև չերևել սկսան նշանքն՝ աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խլեցեր այրեցեր զնա. զի ասացի ես, բամ, Մի յղեր զայրն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ վնաս գործեցէ» (Բուզ. Ե. Դ.)։ Դրօշը կը թուի թէ կ'երթար յառաջոյ գնդին. ուստի Մանուէլեան գնդին համար ասէ նոյն Բուզանդ, թէ դրօշիւք ելան դուրս աւանէն ընդդէմ գնդին Մերուժանայ.—«Եւ ինքեանք վառեալք, կարգեալք, կազմեալք ի պատերազմն, ի մի վայր գումարեալք, նշանս արձակեալք դրօշս փողփողեալս՝ ըստ Գեւղն աւան ի դուրս ելանէին» (Բուզ. Ե. ԽԴ.)։ Վարդան դրօշներէն ծանեաւ Պարսից զօրաց մէջ Սեւնեաց գունդը.—«Ընդ-

աՀեկէն կողմանէ պատրաստէր զինքն իւրով գնդովն և իշխանաւն Սաւաեղենից Փափագաւ և այլ նախարարօքն Հայոց, զի յայն կողմանէ տատանեալքս երևէին... սինի զօրուն և այլ զօրաւոր արանց նշանք դրօշից» (Փարպ. Լ.Թ.)։ Կ'երևի թէ ոչ միայն իւրաքանչիւր գունդ, այլև երևելի անձինք, մանաւանդ սպարապետն՝ ունէին նշան ինչ իրենց սաղաւարտին վրայ, որով կը ծանօթանային։ Մուշեղ, ըստ Բուզանդայ, իւր նշանը բերաւ Ներսէսի օրհնել.— «Մուշեղ զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս զի օրհնեսցէ» (Բուզ. Ե. Դ.)։ Մերուժան, ըստ պատմելոյ նորին իսկ Բուզանդայ՝ իւր նշանին նման նշաններ տուած էր շատերուն, չյայտնուելու Համար ճակատուն մէջ.— «Մերուժան զիւր զզէնն և զարդ և զնշան սաղաւարտին բազմաց եդեալ էր զնոյն օրինակ, և զբազումս յիւր կերպարանեալ էր ի մէջ իւրոյ գնդին, և ինքն զիւր նշան ոչ ունէր։ Սակայն Մանուէլ իբրև տեսանէր զնորա գունդն՝ Հանդերձ իւրով զընդաւն առիւծաբար վարազօրէն յարձակեալ՝ ի նորա գունդն խառնեցաւ. ուշ եդեալ այնոցիկ որ զՄերուժանայ նշանսն ունէին՝ Համարէր եթէ զՄերուժանն սպանանիցէ, և զբազում տխոյենից Հատանէին զգլուխս, որք զնոյն զնորին Մերուժանայ ունէին զնշանս, և տեսանէին զի չէր նա» (Բուզ. Ե. ԽԳ.)։

14. Ընդհանրապէս գունդք թշնամեաց ի ճակատուն կը կենային դէմ յանդիման բացագոյն ի միմեանց. բայց կը պատահէր շատ անգամ խառնել ընդ միմեանս, և զայս կը նշանակէ բառն «խառնուրդ»։ «Իսկ թագաւորն Պապ կարի տխրէր զեպիսկոպոսապետն Ներսէս ասել, թէ Սոէպ կայ յաղօթս և աղաչէ զՏէր մինչդեռ խառնուրդքս են» (Բուզ. Ե. Դ.)։ «Իսկ թագաւորն Պարսից Շապուհ զայր Հասանէր ամենայն զօրօքն իւրովք ի տեղի պատերազմին, և գտանէր զզօրսն Յունացն և զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին։ Եւ լինէին խառնուրդք ճակատուն. ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից» (Բուզ. Ե. Ե.)։ Կը գտնենք նաև ոչ սակաւ անգամ մենամարտել երկու զօրավարաց երկուստեք, և շատ անգամ յելից մենամարտութեանն կախեալ էր յաղթութիւն կամ պարտութիւն բովանդակ զօրուն։ Այսպիսի մենամարտութիւն ի ճակատու երկիցս կը յիշէ Բուզանդ. մի՝ Մանուէլի ընդ Վարազդատայ.—«Թագաւորն Վարազդատ և սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ, տխոյեանք ելանէին։ Իբրև զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ և նայէր ընդ գայն իւր և տեսանէր զսպարապետն Մանուէլ՝ ի մեծութենէն Հասակին և ի շքեղութենէ անձինն և յամրակուռ յերկաթապատ յօտիցն մինչև ցգլուխն առհասարակ յանվթար զինէն, ի Հաստամետ

յանձնէն և ի հաստատուն երկմարէն և յասպազէն վառելոյն յան-
շարժ սպառազինէն համարեցաւ կշռեաց զնա ի միտս իւր իբրև
զլեառն մի բարձր զանմատոյց։ Սակայն ածեալ զմահ ընդ միտս՝
յարձակեցաւ, զի այնուհետև չունէր ակն անձինն ապրելոյ։ Սակայն
զի մանուկ մարդ էր արքայն Վարազդատ, իբրև ետես զնա այն-
պէս, զի չէր ինչ կուռոյ տեղեակ՝ էած զմտաւ թէ ի զրահսն ոչինչ
կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութիւնն զնիզակն ընդ բե-
րան արկանէր զօրավարին Մանուէլի։ Իսկ Մանուէլ բուռն հարկա-
նէր զնիզակէն. հանեալ ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն
հանէր, և բազում զեւր թափէր զատամունսն, զնիզակն յինքն հա-
նէր յարքայէն։ Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յե-
րեսաց զօրավարին Մանուէլի, և անդէն Մանուէլ զտէգ նիզակին
ի ձեռինն կալեալ, և նիզակաւն ի կառափն մատուցեալ ծեծէր զար-
քայն Վարազդատ. այնպէս տանէր իբրև ասպարէզս չորս» (Ե. ԼԷ.)։
Միւս մենամարտութիւնն աւելի սաստիկ, Մանուէլի ընդ Մերու-
ժանայ.—«Ապա զոյգ մեր եղեալ երկոցունցն՝ տեսին զՄերուժանն զի
յայլակերպս լեալ էր. ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերու-
ժանն Մանուէլ և ասէ ցնա. Ա՛յ կախարդ, ցերբ խաբես ըզ-
մեզ, և վասն քո և զայլս ևս տաս ջարդել. այլ մեք ծանեաք
զքեզ զի ուրացեալ կաս, և ապրել քեզ չիք հնար այսօր ի ձեռաց
մերոց. զի այսօր էած կատարեաց զչարիս քո տէր Աստուած ի գլուխ
քո, և մատնեաց զքեզ ի ձեռս մեր։ Իսկ յորժամ զայն լսէր Մե-
րուժանն՝ անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ,
ախոյեան ելանէր Մանուէլի։ Սակայն յորժամ հարկանէին նիզա-
կօքն, քանզի երկոքեան արքն յաղթք էին՝ երկոքեան ի ձիոյն յեր-
կիր անկանէին։ Եւ անդէն նիզակակիցն Մանուէլի Բաբիկ, տէր զա-
ւառին Սիւնեաց հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին
կարէր (զՄերուժան) ընդ գետինն, և ոչ կարէր յառնել։ Իսկ զապա-
րապետն Մանուէլ իւր վարուանդապատաքն յերկմարն հանէին, և
զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին. և ամենայն զօրացն լի-
նէր փախուստ, իբրև տեսին թէ Մերուժանն մեռաւ» (Բուզ. Ե. ԽԳ.)։

15. Ճակատք, մանաւանդ մեծամեծք, հազարաւոր զօրաց սու-
րերու, ուռիններու և այլ սպիտակ զինուց—մինչդեռ չգոյին հրա-
զէնք—պղնձապատ զրահներու և վահաններու, ոսկեղէն և արծա-
թեղէն նշանաց և սաղաւարտից փայլմանէն՝ մանաւանդ երբ կը
պատահէին հանդէպ արեգական՝ կ՚ընծայէին ապաքէն շքեղ խոն և
ահեղ տեսիլ։ Խորենացին կը նկարագրէ Զիրաւի ճակատուն շքեղու-
թիւնը, միանգամայն ահաւորութիւնն իւր հակիրճ և փայլուն ոճով,
թէպէտ ոչ առանց հռետորական զարդու և պաճուճանաց, այսպէս.

«Զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու։ Եւ էր տեսանել իբրև զպարիսպ ինչ, յորոց յոլովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյթս. և ի վերայ նոցա անխալամ գէսք նշանք արձակեալք իբր զաղարթ ինչ հովանաւոր ծառոց։ Բայց զվիշապացն մանուածս ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փչմանէ օդոյն՝ ոչինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրև զլեառն ինչ ագամանդեայ խոնարհել ի ծով, զբովանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրսն։ Քանզի և զնոսա էր տեսանել իբրև զհզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ, արդարև զջրոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն։... Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք, որպէս փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման» (Խոր. Գ. Լէ.)։ Նոյնչափ սեթևեթեալ, բայց գեղեցիկ է Վարդանանց ճակատուն երկայն և ազդու նկարագիրն առ Եղիշէի. «Իբրև այսպէս պատրաստեցան՝ երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց իբրև ի մէջ ամպոց շփոթելոց ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտից և ի փայլիւն պատենազէն վառելոցն՝ իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նաև ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն՝ իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային։ Քանզի ով իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առհասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս ամբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին։ Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զահեղեան գեալ սկսան։ Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ։ Սաստկապէս բախեալք ընդ միմեանս՝ յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային։

Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տե-
սանէր զընտիր-ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախա-
կողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին,
և զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, և շըր-
ջան առեալ կոտորէր մինչև ի նոյն տեղի: Եւ այնպէս շատ տագ-
նապի ի վերայ հասուցանէր՝ մինչև գունդն Մատեան քակեալ բա-
ժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փա-
խուստ դառնային: Այս դէտ ակն ի վեր համբառնայր Մուշկան Նի-
սալաւուրտն, քակեալ զամանս տեսանէր ի գնդէն Հայոց և զկնի
մնացեալ ի Հովիտս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջա-
լերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդ-
դէմ գնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն
զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիա-
կանց՝ իբրև զքարակոյտս դերբկաց երևէին: Զայն իբրև ետես Մուշ-
կան Նիսալաւուրտն՝ մնայր գազանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա
(գազանացն) նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի.
և ի ձայն մեծ գալարափողացն զիւր գունդսն սփռէր, և յառաջա-
մարտիկ զօրօքն զնա (զՎարդան) ի մէջ փակէր: Իսկ կորովին Վար-
դան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն
գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկա-
տարեալ նահատակութիւնն: Եւ յերկարեալ գործոյ պատերազմին՝
օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք
մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ դիականց մօտ առ
մօտ խառնեալ իբրև զփայտահարս մայրաւորաց: Անդ էր տեսանել
զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և
ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն, և
սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ
որք մնացեալքն էին՝ փախեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս
ամուր ձորոյն, և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միւս ան-
գամ զմիմեանս սատակէին, և մինչև ի մուտս արեգականն անդա-
դար լինէր գործ դառնութեանն: Եւ քանզի զարնանային էր ժա-
մանակն՝ ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազ-
մաց: Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն ան-
կելոց՝ սիրտն բեկանէր և աղիքն գալարէին, լսել զմնչիւն խոցելոցն
և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն,
զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զորտաթափումն զանարի
արանցն, զճչիւն կանացն, զողբս սիրելեաց, զաշխարումն մեր-
ձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմ էր
որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս

ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան» (Եղիշ. էջ 205—209)։ Եղիշէ հաւանականապէս չէր ականատես այն ճակատուն, ուստի այս ահարկու նկարագիրն է լոկ ստեղծումն, չանցնիր սակայն ճշմարտութիւնը, նա մանաւանդ կը մնայ իսկ յետ։ Եթէ գրիչ մարդկային և ճարտարագոյնն, որպիսի էր մեր բանաստեղծ պատմչին Վարդանանց, տկարացաւ նկարագրել հինգերորդ դարու զոյգն պատերազմ մը ըստ հետեւանացն, որչափ ևս աւելի պիտի տկարանայ այլ ճարտարագոյն գրիչ՝ նկարագրել իննևտասներորդ դարու պատերազմ մը, տասնապատիկ աւելի և՛ անագորոյնութեամբ և՛ աղէտիւք, զորս կը թողու զիւր կնի։ Զմոռնանք սակայն, որ մեք հիմա քան զհինգերորդ դարու մարդիկ հազար չորեք հարիւր տարիներու երկայն փորձ մի աւելի ունինք մեր վրայ։

16. Երկրի մը ներքին վարչութեան կարևորագոյն պիտոյից մին են հաղորդակցութեան հնարք։ Յայտնի է թէ արդի արագ և դիւրին հնարք, զորս կ'ընծայեն մեզ ելեկտրականութիւնն և շոգին՝ չկարէին լինել յայնժամ. չէր սակայն երկիրն անմասն ի սովորական հնարից, որ էին հասարակաց ուղիք և սուրհանդակք։ Հաւանական է, թէ գաւառք և քաղաքք, գէթ մեծամեծք՝ կապուած էին իրարու հետ արքունի ճանապարհօք և արահետիւք, և եթէ չկային ևս ձեռագործ ջրանցք, գնաց նաւուց և նաւակաց՝ կային սակայն կամուրջք։ Ագաթանգեղոս կը յիշէ ճանապարհ ի Վաղարշապատէ յԱրտաշատ.—«Ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն... մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք» (Ագաթ. ԺԷ.)։ Կը յիշուին նաև կիցք ճանապարհաց.—«Աճապարէին (զօրքն Հայոց) հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու. ի կիրճս ճանապարհացն արգելլին զնոսա» (զԱնակ և զեղբայր նորա) (Ագաթ. Բ.)։ Բուզանդ կը յիշէ ճանապարհ ի Կոգ գաւառէ ի Բագրեւանդ ընդ լերանցամէջս.—«Էին ի վայրսն, ընդ որ գալ էր գնդին (Մերուժանայ) ընդ ճանապարհն՝ լերինք ինչ, որում ի բնակչացն Եղջերք կոչէին։ Եւ մինչդեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդաւն իւրով՝ դիպեցան նմա ուղևորք, յորս հարցանէր Մերուժան և ասէր. Ճանապարհս ի Բագրեւանդ ընդ որ երթայ։ Եւ ուղևորացն տուեալ պատասխանի ասեն. Ճանապարհ ընդ Եղջերս է» (Ե. ԽԳ.)։ Ծովակներու և գետերու վրայ ճանապարհորդութիւն ևս կար, ըստ Խորենացւոյն, թէպէտ աստ ուրեմն առ Արտաշիսիւ մուծուած.—«Ոչ այսպիսի ինչ (այսինքն՝ մեծամեծ արուեստից և գիտութեանց, ինչպէս աստեղագիտութեան կամ տոմարագիտութեան գիւտք) ճանաչիւր առ նոսա (առ հինսն մեր), և ոչ ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք։... Այս ամենայն յո-

րինի յաւուրս Արտաշիսի» (Խոր. Բ. ԾԹ.)։ Բզնունեաց ծովուն վրայ նաւարկութիւն կայ յիշուած ի հին մատենագիրս մեր։ Բուզանդ ի պատմութեան կոտորածի ցեղին Բզնունեաց ասէ զՎաչէէ սպարապետէն Խոսրովու Կոտակայ, թէ «Զազգ նորա (Դատաբենայ Բզնունւոյ մատնչի) և զկին և զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին Ռշտունեաց յանուանեալն յԱղթամար կղզւոջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առհասարակ ոչ զեղ թողոյր և ոչ զարու» (Բուզ. Գ. Ը.)։

Գալով սուրհանդակաց՝ եթէ չգոյին ևս կանոնաւոր սուրհանդակք, իբրև հասարակաց թղթաբերք՝ կարևոր լուրք սակայն առ թագաւորն և առ զօրավարս և ի սոցանէ առ այլս՝ կը հանէին որչափ մարթ էր արագ օժընդակօք, զորս մերթ գուշակս կ՚անուանէ Բուզանդ, և մերթ գուժկան։ Այսպէս հաւանականաբար սուրհանդակաւ կամ օժընդակաւ հասաւ Պարսից յարձակման լուրն առ Խոսրով, մինչ նա զբաղեալ էր իւր կրկին անտառները տնկելով, «զԽոսրովակերտն» և «զՏաճար մայրին»։ «Մինչդեռ նա յայնմ գործ զմայրեօքն տնկելովք էր՝ յանկարծակի գուշակ հասանէր ի Հեր և ի Զարևանդ գաւառէ, թէ պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ քո» (Բուզ. Գ. Ը.)։ Սոյն ճանապարհաւ եկաւ լուր առ Արշակ, մինչ էր նա յԱտրպատականի, թէ Պարսիկք յարձակած էին ի թիկանց կուսէ և կը քանդէին զերկիրն։ «Մինչդեռ այս ամենայն լինէր՝ գուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, և ասեն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես թըշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս, և արդ դիմեալ գան ի վերայ քո» (Բուզ. Դ. ԻԴ.)։ Հաւանականապէս սուրհանդակաւ հաղորդեց Մուշեղի Մերուժան զՈւռնայրի պարծելն առ Շապուհ՝ ելանել ախոյեան Հայոց գնդին, և զՈւռնայրի գուշակութիւնն առ նոյն Մուշեղ զպատրաստութենէն Շապհոյ՝ միւս անգամ յարձակելոյ յանկարծ ի Հայս։ «Իբրև զօրահատոյց առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ զօրացն Յունաց՝ Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից։ Ապա յառաջ կայր և խնդրէր պարգևս Ուռնայր ի Շապհոյ, և ասէր. Կամ լիցի քեզ, արանց քաջ, զի ինձ պարգև հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ։... Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ և շնորհ կալաւ։ Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի՝ ասաց. Աստ արկեր զգազի գիրկս. բայց թէ ժողովել կարիցես՝ մեծ զարմանք իցեն։ Եւ զաղտուկ խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն ի ձեռն

Հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցանէր, թէ Գիտես և պատրաստեաց, Մուշեղ, զի մեծաւ պարծանօք պարգև խնդրեալ է զձեզ Ուռնայրի արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես (Բուզ. Ե. Դ.)։ «Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յղէր առ նա հրեշտակ և տայր նմա տեղեկութիւն, ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ, զի ոչ սպաներ դու զիս. և Աստուած էած զիս ի ձեռս քո, և դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչև իցեմ ես։ Բայց գուշակեալ իմ քեզ, զի Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զօրօք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից ի վերայ քո» (Բուզ. Ե. Ե.)։ Նոյնպէս նախարարք և Գնէլ Անձևացի նոյն ճանապարհաւ կը թուի թէ իմացուցին Պապայ՝ Դղակայ մարդպետի մատնութեան խորհուրդը, և Պապ առ Դղակ՝ գալ առ նա փաղփաղակի. «Մարդպետն Դղակ, զոր թողեալ էր սահմանապահ ի Գանձակ, որ էր սահման ընդ Պարսս և ընդ Հայս՝... յղէր հրեշտակս խորհրդով առ Շապուհ, և խոստանայր մատնել ի ձեռս նորա զթագաւորն Հայոց Պապ և զզօրավարն Յունաց զՏերենտն և զզօրավարն Հայոց զՄուշեղ, և առնոյր ի նմանէ գանձս պարգևաց սաստիկ յոյժ։ Բայց այլ մեծամեծ նախարարք, որ էին առ նմա, և Գնէլն, տէր գաւառին Անձևացեաց՝ գաղտ ազդ առնէին թագաւորին Պապայ։ Ապա թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդպետն Դղակ, թէ Զզօրդ որ են ընդ ձեռամբ քով՝ գումարեա զայդ, Գնելոյ Անձևացւոյ յանձն արասցես և փաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն։ Ապա իբրև լսէր մարդպետն Դղակ՝... զուարճացեալ դեսպան ձիով փաղ հասուցանէր ի գաւառն Այրարատու... առ թագաւորն Հայոց Պապ» (Բուզ. Ե. Զ.)։

17. Խնդիր կ'ելլէ հոս մեր առջև, թէ թագաւորութիւն մի այսպէս բազմամասն, այնչափ և այնպիսի չհամազգի տարրներէ յօդեալ և զուգեալ, ունենալով մանաւանդ առ երի հզօր նախանձորդ ոսոխ մի, որպիսի էր սասանականն, ինչ զինուորական ամրութիւններով կը պահպանէր զիւր միութիւն։ Իբրև զինուորական ամրութիւն կրնան համարուիլ բերդք, որ մեծաւ մասամբ կը վերաբերէին թագաւորին ընդ վերակացութեամբ մարդպետաց, և որ էին արդարև երևելի կէտեր իրենց դրիւն և հաստաբեստ շինուածով, սակայն չէին բաւական ի պահել զերկիրն՝ դրացի ազգաց, մանաւանդ Պարսից ստէպ արշաւանաց աւերումներէն, շատ անգամ ևս կ'առնուէին պաշարմամբ կամ մատնութեամբ։ Բուզանդ կը յիշէ յանուանէ ութ երևելի բերդեան, տեղիք գանձուց և շիրմաց թագաւորաց մերոց։ 1. Բնաբեղ, յերկրին Ծոփաց, զոր կը կոչէ «բերդ ար-

քունի, ուր գանձքն լեալ էին» թագաւորաց (Բուզ. Գ. ԺԲ, Ե. Ի.)։ 2. Անգեղ բերդ յԱնգեղ տան, այն է ի Բարձր Հայս, «ամուր բերդ» ըստ Բուզանդայ.—«Գային պահ արկանէին (Պարսիկք) շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ. չուան պահ արկին զբերդաւն. ապա իբրեւ ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն՝ թողուին եւ գնային» (Բուզ. Դ. ԻԴ.)։ 3. Անի, ի Դարանաղիս, նոյնպէս «ամուր բերդ» ըստ Բուզանդայ.—«Մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին... ելուցանէին անթիւ գանձս ի բերդէն, եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց, զարանց քաջաց զԱրշակունւոյ» (Բուզ. Դ. ԻԴ.)։ 4. Արտագերք կամ բերդ Արտագերից յԱրշարունիս, «կարի ամուր» ըստ նմին Բուզանդայ, ուր ապաւինեցաւ Փառանձեմ կին Արշակայ յետ կապանաց եւ գերութեան առն իւրոյ, եւ որ, ինչպէս կ'երեւի՝ առնուեցաւ, վասն զի մահ անկաւ ի բերդականսն, եւ ստիպուեցաւ տիկինն լինել անձնատուր (Բուզ. Դ. ԻԴ.)։ 5. Դարեւնից բերդ յերկրին Կովգայ, նոյնպէս «ամուր» կոչուած ի Բուզանդայ.—«Թափեաց յինքն Մուշեղ զամուր ամուր բերդէյն, զոր կալեալ էր Պարսկացն, եւ բերդն Դարեւնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ» (Բուզ. Գ. Ի, Ե. Ա.)։ 6. Ողական բերդ, որ էր ի ձեռս Մամիկոնեանց առ Արածանիով.—«Եւ Մուշեղ սպարապետն էր յերկրին Տարօնոյ յիւրում բերդին, որում Ողական կոչեն, որ կայ վերայ գետոյն Եփրատայ» (Բուզ. Ե. Գ.)։ 7. Օշական, յԱյրարատ, յառապարի (այն է ապառաժուտ տեղ).—«Փախեան ելին յառապարն ի կողմն Օշական բերդին» (Բուզ. Գ. Ի.)։ 8. Գառնի, ի Գեղաքունի, «ամուր բերդ արքունի» ըստ Բուզանդայ.—«Առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի» (Բուզ. Գ. Ը.)։ Բուզանդ ունի նաեւ «Վան բերդ», որով կը թուի իմանալ զանուանի քարաբլուրն վիմափոր սենեակներով, «քարանձաւ» ըստ նմին Բուզանդայ, որ եւ զաշտարակ նորա կը յիշէ.—«Իսկ զտիկինն Ռշտունեաց կախեցին ի միջնաբերդին Վան բերդի» (Բուզ. Դ. ԾԹ.). եւ այլուր (Ե. ԼԷ.), «Տարան զՀամազասպուհի յերկիրն Տոսպայ, ի քաղաքն ի Վան, եւ հանեալ կախեցին զնա զբարձր աշտարակացն, որ կայր ի վերայ քարանձաւին»։ Նաեւ Խորենացին կը յիշէ զԱնի եւ զԱրտագերս, ինչպէս նաեւ զԳառնի եւ զՈղական, զչորեսին եւս «ամուր» կամ «ամրոց» անուամբ։ Խորենացին կը յիշէ նաեւ Բայբերդ ի Սպեր, իբրեւ յատուկ բերդ Բագրատունեաց.—«Իսկ Սմբատ առեալ զերկուս դստերս իւր, զՍմբատանոյշ

և զՍմբատուրՀի՝ նստուցանէ ի Բալբերդի, որս քաջս թողլով ի վերայ ամրոցին» (Խոր. Բ. Լէ.)։ Եղիշէ կ'անուանէ «անմատոյց ամուր» զԴաւնի, զԱնի և զԱրտագերս, և զՈղական կը կոչէ «անկասկածելի», այսինքն անառիկ և ապահով.—«Առնուին զանմատոյց ամուրսն զԴաւնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս,... զանկասկածելի Ողականն» (Եղիշ. էջ 117)։ Նոյն կը յիշէ բերդ Արմաւրի.—«Աւերեաց և զբերդն Արմաւրի» (Անդ, էջ 135)։ Փարպեցին կը յիշէ Բողբերդ ի Բասեն.—«Իսկ Ճապհոյ տարեալ զկանայս Կամսարականացն յամուր բերդն Բասենոյ, զոր Բողբերդն կոչեն՝ թողոյր անդ» (Փարպ. Գ.)։ Փարպեցին կը յիշէ նաև Սագրայ բերդ, յանծանօթ գաւառին Ուրծայ.—«Եւ սեպուհ մի ուրծացի, որում անուն էր Վարազներսեհ, որդի Կողթեկայ իշխանին Ուրծայ, որ էր յերդմանն ընդ նախարարսն Հայոց՝ նենգեալ ուխտին սրբոյ... դիմեալ ամրանայր ի բերդն, որ անուանեալ կոչի Սագրայ բերդ, որ էր բերդ ամուր իշխանութեանն իւրեանց» (Փարպ. ԿԷ.)։ Չէ պարտ մոռանալ և զամուրն Հնարակերտ, զոր երկիցս կը յիշէ Խորենացին իբրև կարևոր բերդ, հաւանականապէս ընդ ձեռամբ Հայոց, հիւսիսային սահմանին վրայ ի մէջ Վիր և Աղուան գաւառաց՝ հիւսիսային ազգաց դէմ իբրև պատուար։ Խորենացին մինչև այս ամրոցը կու տայ ժառանգել Առանայ նահապետին Հայ Աղուանից, և Գուշարայ նահապետին Գուգարաց կամ Հայ Վրաց.—«Կարգէ (կողմնակալ) զԱռան... որ ժառանգեաց զդաշտն Աղուանից... ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ»։ «Իսկ Գուշարայ... ժառանգեաց զլեառն մթին... մինչև ցամուրն Հնարակերտ» (Խոր. Բ. Ը.)։ Յայտնի է թէ կային և այլ բազում բերդք, մանաւանդ յարևմտեան մասին։ Բուզանդ, յետ խօսելոյ զԲնաբեղ բերդէն, թէ չկարացին առնուլ Պարսիկք՝ կը յաւելու՝ «Ի Ծոփս մեծ արշաւեցին, և անդ էին բերդք զոր առին, և էր զոր ոչ կարացին առնուլ». և ի ստորև. «Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն» (Բուզ. Դ. ԻԴ.)։ Նոյն և այլ բազում ուրեք կը յիշէ «բերդեան», այսինքն՝ բերդեր ի բազմաւորականն, առանց անուանց։ Այսպէս զՊարսից ասէ, թէ «Եւ զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս թողուին» (Բուզ. Դ. ԾԵ.)։ և զՄուշեղէ ասէ՝ թէ «Թափեաց յինքն զամուր ամուր բերդեյն, զոր կալեալ էր Պարսկաց» (Բուզ. Ե. Ա.). և այլուր (Դ. ԾԹ.), «Եւ զկանայս փախուցելոցն զնախարարացն տային ի բերդեանն, զի նեղեսցեն զնոսա դաձուցանել յօրէնս Մազդեզանց... Ապա իբրև ոչ մի ոք յանձն առնուլ ուրանալ ի քրիստոնէութենէն՝ չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի բերդսն, յորս տուեալ էր զնոսա»։ Իսկ պարիսպ ունէի-

ոչ մեծամեծ քաղաքներ միայն, որպիսի էր Արտաշատ, այլ և աւանք։ ԶԱրտաշատէ յայտնապէս ասէ Բուզանդ, թէ էր պարսպաւոր, զոր քանդեցին Պարսիկք.—«Յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա». և սակաւ մի յետոյ, «Եւ զամենայն շինուած քաղաքին Հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին, և զպարիսպն ըստ նմին օրինակի... ապականեցին» (Բուզ. Դ. ԾԵ.)։ Եղիշէ երկիցս կը շարէ կարգաւ յական յանուանէ քաղաքներ և աւաններ, որոց ամենքն էին ամրոց և բերդաքաղաք, «ձմերոց և կայանք» զօրաց.—«Յարձակեցան (Վարդանանք) ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին, տապալէին քանդէին։ Առաջին՝ զմեծն Արտաշատ... և առնուին զանմատոյց ամուրսն—զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս, զԵրկայնորդսն և զԱրհնին, զԲարձրաբուղն, զԽորանիստն, զԾխանիստն, զանկասկածելի Ողականն, զԱրփանեալն, զՎանն աւան, զԳուեալն և զԿապոյտն, զՈրոտն և զՎասակաշատն» (Եղիշ. էջ 117). և զՎասակայ ասէ, թէ «Աւերեաց զբազում (ամուր) տեղիս աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին. զԳառնին և զԵրամայիս և զԴրասխանակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զՄարգեանսն, զՑոլակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն տուն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին գլխովին» (Եղիշ. էջ 135)։

18. Թող այս ամրութիւններն՝ միւս ևս մեծ ամրութիւն կընային համարուիլ սահմանագլուխ իշխանութիւնք, որ ըստ Խորենացւոյն որպէս թէ գրուած էին ի վաղուց՝ ի պահել երկրին սահմաններն։ Այսպիսի էին մանաւանդ չորեքին բդեշխութիւնք, որոց Ագաթանգեղոս կու տայ «սահմանակալ» անունը.—«Անոյր ընդ իւր Տրդատ) ի զինուորական կողմանէն զչորեսին զահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նորշիրական կողմանէն, և երկրորդ սահմանակալն յԱսորեստանեաց կողմանէն, և երրորդն՝ յԱրուեստական կողմանէն, չորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն» (Ագաթ. ՃԻԶ.), իշխանութիւններ, զորոց հաստատութիւնն, մանաւանդ արևելեան և հարաւային կողմանն՝ Խորենացին կը համարէ մինչև ցԱրամ իւր, կամ մինչև ի Հայկ, և որոց, ըստ նոյն պատմագրին՝ Վաղարշակ տուաւ վերջին ձևը։ Այսպէս որպէս թէ Հայկ, յետ պատերազմին իւրոյ ընդ Բելայ՝ «Կադմեայ թոռին իւրում հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել զառաջնոյ իւրոյ տանն», և «ինքն երթեալ (յարևմուտս) երրև արևելեան սահմանապահ,

կոյս) դադարէ յանուանեալ տեղին Հարք» (Խոր. Ա. ԺԲ.)։ Իսկ Արամ որպէս թէ «նուաճեալ զարեւելեայն և զհարաւայինն և ի ձեռն յանձնեալ երկուց ցեղից, Սիսակեանց՝ զարեւելս, և ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին (զհարաւայինն)՝ ուչինչ այնուհետև կասկած շըփոթից ունէր» (Խոր. Ա. ԺԴ.)։ Սահմանագլուխ իշխանութիւնք լինին որոշ և կատարեալ, ըստ Խորենացւոյն, առ Վաղարշակաւ, որ արեւելեան սահմանը կը յանձնէ Սիսակեանց և Կադմեանց.—«Յարեւելից կողմանէ զեզերբ Հայկական խօսից (կարգէ) կողմնակալս զերկուց ցեղից նահապետութիւնսն, Սիսակեան և Կադմեայն» (Խոր. Բ. Ը.)։ Հիւսիսային արեւելեան սահմանը կը յանձնէ Առանայ (Հայ Աղուանից).—«Զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն զԱռան, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից» (Անդ)։ Հիւսիսային սահմանը կը յանձնէ Գուգարաց (Հայ Վրաց) նահապետին՝ բդեշխ անուամբ.—«Իսկ ընդդէմ լերինն Կովկասու կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն (Գուգարաց), և նահապետութեանն անուն կարգալ բդեշխ Գուգարացւոց» (Անդ)։ Արեւմտից սահմանը կը յանձնէ Անգեղ տան.—«Իսկ զայր խոժոռագեղ և բարձր, կոպտաբանձն և տափաքիթ, Տորք՝ հաստատէ կուսակալ արեւմտից, և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն» (Անդ)։ Հարաւային սահմանը կը յանձնէ Աղձնեաց.—«Զճարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ բդեշխ մեծ և կուսակալ յարեւմտից հարաւոյ յեզերս սահմանացն Ասորեստանի (կամի ասել՝ Ասորւոց)» (Անդ)։ Բայց ինչ որ յանուն Հայկայ, Արամայ, նաև Վաղարշակայ կը պատմուի առ Խորենացւոյն՝ չէ պատմական, կամ է գէթ երկբայելի։ Բդեաշխք ունէին արքայական ճոխութիւն իբրև երկրորդ գնի թագաւորին։ Բուզանդ կը կոչէ զնոսա «դահերէց, բարձերէց» թագաւորին։ Բդեշխութեանց, իբրև սահմանագլուխ իշխանութեան սկիզբը գտնելու համար՝ հարկ չէ երթալ այնչափ հեռաւոր և անստոյգ ժամանակներ, որպիսի են Հայկայն, Արամայն և Վաղարշակայն։ Բդեշխ բառը կը նշանակէ պէտ աշխարհի, այսինքն երկրի մը իշխան։ Հաւանական է, թէ երբ Արտաքսիաս և Զարիադրէս, կուսակալք Սելևկեանց, լինելով զառաջինն ինքնագլուխ, մին՝ Արարատայ, և միւսն՝ Ծոփաց, սկսան ընդարձակել իրենց իշխանութիւնն, ինչպէս կը պատմէ Ստրաբոն՝ հիւսիսային, արեւելեան և հարաւային դրացի երկիրներէ գաւառներ գրաւելով՝ այն գաւառաց իշխաններուն տուին հին հայերէն բդեշխ անունը (յունարէն բառով τόπαρχος, իշխան երկրի), ընելով զնոսա ինքնօրէնս և տալով պատիւ լինելոյ բարձակից թագաւորին։ Ուստի բդեշխութեան սկիզբը չերթար յառաջ քան զժամանակն Արտաքսիասայ, կամ յառաջ քան զերկրորդ Հարստու-

թիւնն Հայոց, զԱրշակունիս: Բդեշխք, ինչպէս ուրիշ սահմանագլուխ իշխանք, իբրև ի բնէ օտարք՝ էին մէտ յապստամբութիւն: Առ Խոսրովաւ որդւով Տրդատայ՝ Աղձնիք, առ Արշակաւ թոռամբ նորա գրեթէ բոլոր սահմանագլուխ գաւառք, այն է՝ Նորշիրականն, Կորդուք, Մարք (մարական գաւառք), Արձախ, Աղուանք (Աղուան գաւառք), Կասպք, Վիրք (Վրական գաւառք), Աղձնիք, Ծոփք, Անգեղ տունն, Անձիտ՝ ապստամբեցան, թէպէտ, եթէ ստոյգ է պատմութիւնն Բուզանդայ՝ նուաճեցան յետոյ առ Պապաւ ի ձեռն Մուշեղի: Բուզանդայ Դ. դպրութեան Ծ. գլուխն կը պատմէ սահմանագլուխ գաւառաց այս ընդհանուր ապստամբութիւնն, ինչպէս Ը-էն մինչև ԺԹ. գլուխք Ե. դպրութեան կը պատմեն զնուաճել նոցա: Բուզանդ յայտնապէս ասէ զԽոսրովայ, թէ չէր վստահ ի բազումս ի նախարարաց իւրոց.—«Ունէր արքայ օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն, աշխարհակալքն, աշխարհատեարքն, որ էին բիւրաւորքն և հազարաւորքն՝ կայցեն առ արքային և ընդ նմա շրջեսցին, և մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի, զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա:... Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց մեծաց, և ի քաջն Վահան Ամատունի» (Բուզ. Գ. Ը.):

19. Ապա գլխաւոր զօրութիւն ի պաշտպանութիւն երկրին՝ չէին ոչ բերդքն և ոչ սահմանագլուխ իշխանութիւնք: Զմիութիւն և զանկախութիւն երկրին պահող զօրութիւնն էր զօրքը: Խնդիր է սակայն, թէ որչափ էր ընդհանրապէս Հայոց զինուորական զօրութիւնն, և թէ կա՞յր արդեօք զինուորագրութեան օրէնք: Զթուիր թէ կար կանոնաւոր զինուորագրութիւն և որոշ պայման և ժամանակ զինուորական ծառայութեան: Զինուորութիւնն էր ի բնէ իրաւունք և պարտք ժողովրդեան ազատ կոչուած մասին, այն է՝ նախարարական տոհմերուն, և զայս կը թուի նշանակել «ազատ» անունն, որ կը տրուէր այն տոհմերուն արանց, որք և էին միշտ զէն ի ձեռին պատրաստ, ուստի և ունիմք ստէպ առ Բուզանդայ և առ այլս՝ «Նախարարակոյտ զօրք», «ազատագունդ բանակ», այլովքն հանդերձ: Ի Հարկին կայր սակայն զօրս ժողովել և վառել զինու և թոշակաւ, մանաւանդ ժողովրդեան դատարկ և սինլքոր մասէն, որ չէին զբաղեալ շինականութեան գործով, այսինքն արուեստիւ իւիք և կամ մշակութեամբ: Այսպիսեաց կու տայ Բուզանդ «զուգազ» անունը. — «Ապա Հրաման ետ արքայ Խոսրով Դատաբեայ նահապետի Բզնունեաց՝ զուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն, և զհամար զօրուն (այն է՝ կանոնաւոր զօրքը) մատենի գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ» (Բուզ. Գ. Ը.): Ի սոցանէ էր սպասաւորող մասն բանակին,

զոր Բուզանդ կամի յայտ առնել «ռահվիրայ, խառնաղանջ, խորանապահ, ռամիկսպաս» բառերով.—«Եւ ոչ ոք էր, որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրուձի, բայց միայն սակաւ սպասաւորօք հանդերձ... և ռահվիրայ մարդկաւն, և խառնաղանջ խորանապահ զօրուն, և ռամիկսպաս զօրօքն» (Բուզ. Գ. Ի.)։ Զօրաժողով ստէպ կը յիշուի առ Բուզանդայ, թէպէտ ոչ զինուորագրութիւն ըստ օրինի։ Այսպէս զՎասակայ ասի. «Ապա զօրաժողով լինէր Վասակ զօրավարն Հայոց, և որ հասին ի ժամանակի անդ ի ձեռըն նորա՝ տասն հազար հեծեալ ընտիր ընտիր և քաջ այրուձի, կազմ զինու և բազում պատրաստութեամբ» (Բուզ. Գ. ԻԳ.). և ի սորին, «Իբրև զգացին զօրավարքն զօրաց թագաւորին Պարսից, եթէ զօրաժողով է ի վերայ նոցա զօրավարն Հայոց Վասակ» ևն։ Դարձեալ ասի նոյն Վասակայ համար (Դ. ԻԲ.). «Ապա հրաման տայր թագաւորն Պարսից զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց։ Ապա այս բանք վաղագոյն ազդ լինէին առ թագաւորն Հայոց Արշակ և առ զօրավարն նորին Վասակ. ապա և սոքա բազում զօր յաշխարհէ ժողովեցին»։ Եւ զՄուշեղէ ասէ ի գալստեանն Պապայ ի Հայս. «Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետն Հայոց մեծաց, ընտրեաց իւր արս ընտիրս քառասուն հազար, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և զինու» (Բուզ. Ե. Բ)։ Յայտ է, թէ թոշակաւ պարտ է իմանալ ռոճիկ և պարէն, և ոչ արծաթոյ վարձ։

Գալով զինուորական զօրութեան Հայոց՝ կը թուի թէ թագաւորք մեր, մանաւանդ ի սկզբան, կը կանչէին զօրս յօգնականութիւն բարբարոս ազգերէ վարձկանութեամբ կամ յուսով աւարի։ Այսպէս Խորենացին ասէ զԱրտաւազդայ Ա-ոյ, թէ «Զայրացեալ հրաման տայր զօր յարուցանել զհիւրաւորս Ատրպատական նահանգին և զընակիչս լերինն Կովկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղալ իջանէ ի Միջագետս, և հալածական առնէ զզօրս Հռոմայեցւոց» (Խոր. Բ. ԻԲ.)։ Ագաթանգեղոս ասէ զմեծէն Խոսրովայ. «Սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօրս բովանդակել, գումարել զզօրս Աղուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց, հանել զզօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից։... Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ՝ Աղուանք, Լփինք և Ճիղպք՝ Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց» (Ագաթ. Ա.)։ Ի նմանէ առեալ Խորենացին—«Սակայն Խոսրով զօրօք իւրովք և այլ սիրելեօք յարեցելովք յինքն և հիւսիսային ազգօք՝ Արտաշրի յաղթեաց՝ հալածական առնելով մինչև յաշխարհն Հնդկաց» (Խոր. Բ. ՀԳ.)։

Աստ ուրեմն և զՎասակայ սպարապետէն Արշակայ ասի, թէ «Առնոյր զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչէր յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն Հայոց ի վերայ Պարսից» (Բուզ. Դ. ԻԵ.)։

Այլ զբուն զօրաց Հայոց դժուարին է ասել որոշ ինչ։ Ի թուոյ զօրուն Վարդանանց, որ ըստ Եղիշէի էր վաթսուն և վեց հազար՝ յայտնի է թէ ամբողջ թիւ զօրուն Հայոց, գէթ յայնժամ, չկարէր լինել աւելի քան 120,000, քանզի գրեթէ կէս ազգին միայն էր ընդ Վարդանայ։ Բայց նաև ուրիշ ժամանակներ, մինչդեռ կանգուն էր թագաւորութիւնն՝ քան զայս շատ աւելի եղած չերևիր թիւ բնիկ զօրուն Հայոց։ Այս 120 հազարէն քառասուն հազարն միայն կը թուի թէ կը վերաբերէր Արշակունի ցեղին և կը կազմէր զրանակն արքունի։ Բուզանդ, որ սովոր է ստուարացունել զօրաց թիւն, ուր զզօրաց թշնամւոյ են բանք, մինչև ի չորս կամ հինգ հարիւր հազար, երբեմն յևս իմն աւելի հանել զզօրս Պարսից եկեալս ի վերայ Հայոց՝ ի խօսելն զզօրաց Հայոց՝ ընդհանրապէս քան զքառասուն հազարն ի վեր չհանէր զօրաց թիւն յայլևայլ պատերազմունս։ «Ապա գայր հասանէր Վահրիճ չորեքհարիւր բիւրու առաքեալ ի Շապհոյ արքայէն ի վերայ Հայաստան աշխարհին...։ Քառասուն հազարաւ ելանէր Վասակ ընդդէմ նոցա, սպանանէր զՎահրիճն և կոտորէր զզօրսն Պարսից» (Բուզ. Դ. Լ.)։ Այսպէս և Մուշեղ, ըստ նոյն պատմագրի, քառասուն հազարաւ եհար Շապհոյ ամբողջ բանակն յԱտրպատականի.—«Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետն Հայոց մեծաց, ընտրեաց իւր արս ընտիրս, միամիտս, ազատս, ազգայինս՝ քառասուն հազար, միաբանս, միականս, և կազմեաց զնոսա ձիով և թօշակաւ և զինու, երթալ նստել ի սահմանս Ատրպատճացն և պահել զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեաց Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի... Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին (Պարսից) քառասուն հազարաւ» (Բուզ. Ե. Բ.)։ Քառասուն հազար կը թուի թէ էր զօրքն առ Դատաբայ նահապետին Բգնունեաց, զոր Խոսրով Կոտակ յղեց ի վերայ Պարսից։ «Յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով ի Հեր և ի Զարաւանդ գաւառէ, թէ պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ քո։ Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբայ նահապետի Բգնունեաց... ընդ առաջ նոցա խաղալ։... Իբրև հասանէր Դատաբէն՝ խորհուրդ միաբանութեան դնէր ընդ իշխանսն զօրացն Պարսից. կամեցաւ մատնել ի ձեռս նոցա զարքային Հայոց

զտէրն իւր. դարան հրամայեաց գործել թշնամեացն ի վերայ իւրոց զօրացն... յանկարծ յեղակարծումն քառասուն հազար զօրսն Հայոց միանգամայն կոտորէին,... և Դատաբէն չարագործ առնոյր զզօրսն Պարսից և կամէր անկանել ի վերայ թագաւորին Հայոց» (Բուզ. Դ. Ը.)։ Մի անգամ կը յիշէ Բուզանդ եօթանասուն հազար, հաւանականապէս հանդերձ նախարարակոյտ զօրօք, ընդ ձեռամբ նորին Վասակայ.—«Եւ զԴեհկան նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց, այսինքն Մամիկոնենից՝ առաքէր թագաւորն Պարսից Տապուհ յերկիրն Հայոց ի վերայ Արշակայ արքային Հայոց... և զհայացխն ոչինչ թուլացեալ ի քուն գտանէր... Եւ զօրավարն Վասակ ելանէր ընդ առաջ նոցա եւթանասուն հազարաւ, հարկանէր սատակէր զզօրսն Պարսից, սպանանէր զիւր զազգային զԴեհկան նահապետն, և զմնացեալսն առաջի իւր տանէր փախստական ձիահալածք արարեալք» (Բուզ. Դ. ԼԲ.)։ Առ Պապաւ, մինչ Յոյնք օգնական էին Հայոց՝ կը յիշուի իննսուն հազար.—«Ապա յետ այսորիկ թագաւորն Պարսից զամենայն զօրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ... և զօրավարն Հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զզօրսն Հայոց աւելի ևս քան զինսուն հազար» (Բուզ. Ե. Դ.)։ Նոյնպէս յերկրորդ կռուին. «Ապա սորատն Յունաց կազմեաց զզօրս իւր... սոյնպէս և Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց, և էին կուտ վառեալ իննսուն հազարք ընտիրք, նիզակ ի ձեռն, թող զսպարակիրս» (Բուզ. Ե. Ե.)։ Այս օրինակներուն մէջ, ինչպէս յայտնի է՝ համօրէն հայ զօրաց համար է խօսքը, և ոչ արքունի բանակին։

Թերևս Բուզանդ խորհրդով կը ստուարացունէ Պարսից զօրաց թիւը և զՀայոցն կը փոքրկացունէ ի նշան քաջութեան այս վերջնոց, որ սակաւուք կարող էին զդէմ ունել այնչափ անչափ բազմութեան։ Հաւանական կը թուի սակայն, թէ բոլոր Հայ զօրաց թիւն, ի միասին հաշուելով նաև զզօրսն նախարարաց, որպէս ասացաք՝ չէր անցնէր հարիւր քսան հազարը, իսկ Արշակունեացը միայն՝ ոչ աւելի քան զքառասուն հազար։ Չայս կը թուի հաստատել հին ինչ աւանդութիւն առ Քսենոփոնի, որ կը պատմէ, թէ երբ Կիւրոս հարցուց Հայոց թագաւորին իւրում դաշնակցին, թէ որչափ էր զօրութիւնն Հայոց՝ թագաւորը պատասխանեց. ութ հազար հեծեալ և քառասուն հազար հետևակ։—«Կիւրոս ասէ. Լեր ցոյց ինձ, քանի զօրութիւն իցէ քո առ։ Ասէ թագաւորն Հայոց. Ութ հազար հեծեալք են և հետևակք չորք բիւրք» (Քսեն. Կրթ. Կիւր. Գ. Ա.)։ Կը յիշուին ուրեք առ Բուզանդայ նաև «վաթսուն բիւր», «չորեքհարիւր հազար».—«Ապա տայր հրաման թագաւորն

Արշակ (ի խաղալն ի վերայ Յունաց իբրև նիզակակից Շապհոյ) Վասակայ իւրում սպարապետին՝ գունդ գումարել, զօրս պատրաստել: Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստից նահատակութեանն» (Բուզ. Դ. Ի.): Եւ յետ դաշանցն Յովհանու կայսեր ընդ Շապհոյ, իբրև ձեռնթափ եղան Յոյնք ի Հայոց, և Շապուհ կը պատրաստուէր գալ նուաճել խոլառ զՀայս՝ «Այս արագ, ասէ Բուզանդ, ժողովեալ ի մի վայր՝ հանդէս առնէր Վասակ սպարապետն ամենայն զօրաց Հայոց, և գտան հեծելազօր սպառազէնք կուռ վառեալք նիզակաւորք համակ վաթսուն բիւր, միասիրտք, միաբան, միամիտք» (Բուզ. Դ. ԻԱ.): Յայտնի է սակայն, թէ այս թիւք չափազանց են. հաւանականագոյն այն է, թէ Հայք միշտ սակաւուք պահեցին զերկիրն ի ձեռն քաջ սպարապետաց իւրեանց, մանաւանդ քաջացն Մամիկոնենից: Բուզանդ ասէ զՄուշեղէ այսպէս. «Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին: Զտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, և ոչ թողոյր բնաւ ամենևին և ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վարել. ի վերայ աշխարհին կեալ և մեռանել, ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց և ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ՝ յԱստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց. հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին, և յանձն իւր անխայէր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունեաց վաստակէր» (Բուզ. Ե. Ի.):

20. Արդարև, նայելով սոյն յարձակմանց, զորս կը կրէին Հայք մանաւանդ ի Սասանեանց,—(ոխերիմ թշնամեաց և՛ Արշակունեաց, զորս, իբրև պահլաւ հարստութիւն՝ կը համարէին նոքա իւրեանց ոսոխ, և՛ քրիստոնէութեան, որ հզօրագոյն կապն էր Հայոց ընդ Յունաց)—դժուարին էր խաղացուցանել այնչափ զօրս յաճախ այսր անդր այնպիսի երկրի մէջ, որ լի էր լերամբք, խորաձորովք և գետովք մեծամեծօք և փոքումբք. բարեբախտութեամբ նոյն

դժուարութիւնն ունէին սակայն նաև թշնամիք։ Ուստի Մուշեղ, թերևս խրատեալ ի Յունաց՝ խորհեցաւ այլ իմն հնարս յամրութիւն աշխարհին յերեսաց Պարսից և ունել զառաջս այն դժուարութեանց, այն է շինել զօրանիստ քաղաքներ մէն մի կամ երկուս յիւրաքանչիւր գաւառս, և զինուորել զազատս Հայոց արքունի թոշակաւ, որում թուի թէ կամէին նպաստել նաև Յոյնք։ «Եւ սպարապետն Հայոց Մուշեղ, ասէ Բուզանդ,... հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, թէ զիա՞րդ կամ ո՞րպէս շէն լինել մարթասցէ, և հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն։ Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց ի մի մի գաւառն, ո՛ր մին մի քաղաքս, ո՛ր երկուս երկուս, ամուր պարսպաւորս. զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամենայն ազատորն Հայոց կայսերական թոշակօքն զինուորել, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց, ի զօրացն Պարսից։ Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի և անշարժ, զի մի կարասցէ թագաւորն Պարսից յիւր վարել զաշխարհն Հայոց» (Բուզ. Ե. ԼԴ.)։ Սակայն ամբաստանուեցաւ քաջ զօրավարն ի չարախօսաց, որպէս թէ կամէր կայսեր մատնել զերկիրն, և սպանուեցաւ չարաչար ի խնջոյս հրամանաւ մանկաբարոյ թագաւորին Վարազդատայ։ Բուզանդ մանր և գեղեցիկ կը պատմէ զայս եղերելի պատահար։ «Իբրև տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց, թէ մանուկ բանսերթուկ է, զչար ի բարոյ որոշել չգիտէ՝ սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս և կամէին՝ բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա։ Նա առաւել ունկն դնէր մանկտոյն, որ ի տիոց հասակակիցք էին նորա՝ առաւել քան զծերոցն իմաստնոց, որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա։ Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահառունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ՝ կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ։ Վասն այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէ առ թագաւորին Վարազդատայ առ իւրում ստնուն և ասել, թէ Ի սկզբան ի նախնեացն հետէ զձեր Արշակունեաց տոհմին՝ Մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դուքս լեալ էին ի բնէ անտի, և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ. մանաւանդ Մուշեղի, զի այր չար է և նենգաւոր։ Զի սի-

ըմպել է թշնամեաց ձերոց և ատելի սիրելեաց ձերոց, և համակ ընդ
ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ և դժխեմութեամբ։ Ո՞չ
այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատե-
րազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնհաս եղև սպանանել զՇա-
պուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին, և
երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ
գթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ։ Ո՞չ այդ այն
Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպա-
նանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին։ Ո՞չ այդ այն Մու-
շեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ և զօրէն խորհրդովդ զօրա-
վարքն Յունաց սպանին, զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յու-
նաց ի վերայ թագաւորին Պապայ՝ մինչև ետ սպանանել։ Այլ ար-
ժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա։ Այլ թէ
ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղա-
քօք, և զօրանիստ առնէ աստ բնակութեան զօրացն Յունաց։ Եւ
այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորու-
թիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ (զքեզ) և ինքն թագա-
ւորէ։ Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գըր-
գռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրա-
վարն Հայոց սպանանել։ Ապա խորհուրդ արարին, թէ որպէս ըմ-
բռնել կարասցեն զնա, քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն։ Թէ
զգայ՝ ասեն, մեծ պատերազմ առնէ, և ոչ ոք կարէ զդէմ քաջու-
թեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի
հնար։ Այսպէս սպասէին նմա։ Եւ եղև յաւուր միոջ հրաման
ետ Վարազդատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պա-
տրաստութիւն առնել. և կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն
աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Մուշեղ։ Պա-
տրաստեաց Վարազդատ արս ընտիրս հզօրս, զօրեղս, զի կազմ
կայցեն գործոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յեղակար-
ծումն ժամու ի վերայ Մուշեղի։ Զնոսա քաջ ուրախ առնէր մեծա-
պէս, և շատ գինի տայր ըմպել և բազում առնէր զբօսումն ու-
րախութեան։ Արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնո-
ցիկ, զոր էր սպանողն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցէք, թէ
քաջ արբեալ իցէ և զմտօք զառանցեալ յարբեցութենէ սպարա-
պետն Մուշեղ՝ ես յարուցեալ իբրև ի ճեմիշն երթալոյ պատճառաւ,
և դուք պատեսջիք զնովաւ։ Եւ եղև իբրև անցին զառանցին ի գի-
նւոյն՝ ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարազդատ պահէր զան-
ձըն ի գինւոյն. իբրև գիտաց Վարազդատ, թէ արդ յարբեցութենէ
մտաց ինչ չզգան՝ ինքն յարուցեալ իբրև յապարահէ զանց առնե-

լոյ պատճառաւ, և աւագանին ամենայն բազմականացն յոտն կացին առ Հասարակ, իբրև նմա պատիւ ինչ առնել։ Եւ յանկարծ արքն, որոց էր տուեալ հրաման՝ երկոտասան այր կից կից զոյգզկնի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ի միւս բազուկն։ Եւ ընդ առն կալ թագաւորին՝ նայեցեալ ընդ նա, եթէ այս ընդէ՞ր է, և թագաւորին պատասխանի տուեալ ասէ. Ե՞րթ առ Պապ արքայ, հա՛րց և տես, թէ ընդէ՞ր է այդ, և թագաւորն ի դուրս կոյս գնացեալ ելանէր։ Եւ ասէ Մուշեղ. Ի վերայ բազում խոց վաստակոցն արեան և քրտան, և սպաքօքն զքիրտն ջնջելոյ, ա՛յս հատուցումն եղև ինձ։ Բայց իբրև եհաս ինձ մահս՝ թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր...։ Զայս միայն բանս ժամանեաց ասել, և այլ ոչ ինչ ոչ։ Եւ անդէն Բատ Սահառունի զնրանն, զոր յիւրում ազդերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղի, և անդէն ի բաց եհատ զգլուխ նորա» (Բուզ. Ե. ԼԵ.)։ Այսպէս ի դերև ելաւ խորհուրդն ամրացուցանելոյ զերկիրն։

21. Ոչինչ ընդհատ քաջութեամբ պահեց զերկիրն նաև Մանուէլ եղբայր Մուշեղի։ «Ամենայն երկիրն, ասէ Բուզանդ, ի խաղաղութեան էր ընդ հովանեաւն Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա. ամենայն մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց, ուտէին և ըմպէին և ուրախ լինէին մինչև ի բաժանումն երկրին Հայոց և ի քակտումն թագաւորութեանն» (Բուզ. Ե. ԽԲ.)։ Յետ մահուան Մանուէլի եղաւ այս քակտումն, այլ սկիզբն, եթէ միտ դնենք պատմութեան Բուզանդայ՝ անդստին Արշակայ ժամանակէն է ի պատճառս սոէպ պատերազմաց, որ լուծին լքին զազգըն և եղան պատճառ անկման սահմանագլուխ գաւառաց։ Ահա բանք Բուզանդայ. «Զերեսուն և զչորս ամս ետուն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից, և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն։ Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիւրեանց արքայն Արշակ։ Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին. նախ բդեաշխն Աղձնեաց և Նորշիրական բդեաշխն, և Մահկեր տանն, և Նիհորականն և Դասընտրէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց, և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային Պարսկաց Շապհոյ. և պարխապ ածին ի Հայոց կուսէ որ Զորայն կոչեն. դրունս դնէին և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց։ Եւ յետ սորա Գուգարաց բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Դարձմա-

նաձորոյ տէրն։ Եւ որք մօտ էին ի նոսա կողմն այնր ձեռին (այսինքն՝ այն գաւառաց որ էին աւատ), որ շուրջ էին զնոքօք՝ միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ, և չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապհոյ։ Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից։ Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց և ջեռին իշխանութեան (աւատային) տունն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպատական աշխարհաւն. յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց, յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից. եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց, և գնացին առ թագաւորն Յունաց։ Միջնաշխարհն (և) մնացեալքն յերկուացան յարքայէն, և ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս զոր նա կամէր։ Եւ գձձեցաւ թագաւորութիւնն մեծապէս» (Բուզ. Դ. Ծ.)։ Եւ թէպէտ յետ թագաւորելոյն Պապայ Մուշեղ սպարապետ հնազանդեցուց առ ժամանակ մի ապստամբ գաւառներն՝ նորոգումն այն կը թուի թէ չտեւեց ընդ երկար։ Մօտ ի բաժանումն թագաւորութեանն, մինչ Արշակ վերջին ի բաժնին Յունաց, և Խոսրով վերջին ի բաժնին Պարսից կը թագաւորէին՝ երկիրն արդէն անկած և փատթարացած էր։ Բուզանդ յետ պատմելոյ զբաժանումն զայն՝ կը յաւելու ի կատարած կոյս պատմութեան իւրոյ. «Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուազեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայնմ ժամանակն և յապայ» (Բուզ. Զ. Ա.)։

ԳԼՈՒԽ Բ.

ԲՈՅՍ ԲԱՐՈՒՑ ՀԱՅՈՑ ԻԲՐԵՒ ԱԶԳ։

1. Ներքին եւ արտաքին թերութիւնք ազգին։ 2. Սակաւութիւն եւ պակասութիւն դպրութեան։ 3. Ցողղողութիւն ի բարս։ 4. Ապերախտութիւն. Մամիկոնեանք։

1. Յետ խօսելոյ այսչափ զվարչութենէ Արշակունի տէրութեան, զոր իբրեւ արեւելեան արձակ միապետութիւն կ'ընծայեցուցանէ մեզ պատմութիւնն՝ գանք այժմ խօսել համառօտիւ զբուսոյ բարուց Հայոց՝ իբրեւ ազգ։ Հայք էին արդարեւ, բաւին բուն նշանակութեամբ՝ ազգ, վասն զի ունէին ազատ ազգի և ժողովրդեան հարկաւոր ամէն տարր։ Թէպէտ հարկատու և ընդ ազդեցութեամբ երկու հզօր տէրութեանց դրացեաց՝ կը վայելէին ազատութիւն ընտրութեան, օրէնսդրութեան, պատերազմի և խաղաղութեան, զինուորութեան և դաշանց։ Առանց լինելոյ բոլորովին զուրկ տեղական և քաղաքական կարեւորութենէ, ի պատճառս աննման դրից երկրին, ի մէջ երկուց ծովուց, Պոնտոսին և Կասպից, ուրովք բաց էր նոցա ճանապարհ տուրեւառի, միովն՝ յԵւրոպա, և միւսովն՝ ի Հնդիկս, և ի մէջ երկուց նշանաւոր գօտեաց, Կովկասուն և Կորդուաց, իբրեւ հզօր պատուարաց ընդդէմ հիւսիսոյ և հարաւոյ,—բաւական ընդարձակ սահման, որոյ անթիւ ազգերուն մէջ էր արդարեւ Հայն առաջին և գլխաւոր,—հանդերձ այսու լինելով եւս ի բուսոյ բարուց հանճարեղ, երկասէր և ժիր՝ չկրցաւ ձգել յինքն քաղաքակիրթ աշխարհի հայեցուածն և մնաց միշտ երկրորդական. ուստի և պատմութիւն նորա, մեծաւ մասամբ խառն ընդ Պարթեւաց՝ հազիւ կը յիշուի ուրոյն յոյն և հռոմայեցի պատմիչներէ։

2. Այս յետնութեան կամ մթութեան պատճառ էր ոչ սակաւութիւնն միայն—«Եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ» (Խոր. Ա. Գ.)—այլ և մանաւանդ, ըստ մեզ, գրի և դպրութեան պակասութիւնն, որով զրկեալ մնաց այս պատուական ցեղն մտաւոր զարգացման, որ էական տարրն է ի կեանս ազգաց՝ գլխաւոր պատճառէն, փիլիսոփայութենէ, առ որ, եթէ օրէն իցէ

դատել իւր փառաւոր լեզուէն՝ ունէր ի բնէ հանճար, և ստիպուեցաւ շատանալ դարերով իւր անգիր վիպասանութեամբ միայն։ Հայ ազգին մտաւոր պատմութեան մէջ այս մեծ արատն, որչափ և ջանանք սրբել, ընծայելով զայն արտաքին ձախող պարագաներու՝ կը յաղթէ միշտ վճիռ Խորենացւոյն, թէ Հայն ի բնէ չէր սիրող իմաստութեան. «Ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստից» (Խոր. Անդ.)։ (Թող չվշտանան արդի Հայք ընդ այս վճիռ, և ոչ համարին զայն իբրև ցեղային ճակատագիր.—շատ տարբեր դարու մէջ և ընդ տարբեր պարագայիւք կ'ապրինք մենք այժմ)։

Այսպէս Նախնիք մեր, ինչպէս էին թուով՝ նոյնպէս մտաւոր մշակութեամբ մնացին միշտ տկար։ Եթէ յիշենք ևս աւատային դրութիւնն, յորում իւրաքանչիւր նախարարութիւն կը կապուէր ընդ զօրաւորագոյն տիրող ցեղին Արշակունեաց աւանդութեամբ կամ մանաւանդ ի հարկէ քան սրտիւ՝ ոչ այլ իմիք կարեմք նմանեցուցանել զՀայս, բայց այժմու քիւրտ ցեղերու, որ քան զիւրեանց անջատ և վայրագ ազատութիւնն՝ այլ ազատութիւն չեն ճանչնար։ Այս այնչափ ճշմարիտ է՝ մինչև Տակիտոսի «անգէտս ազատութեան» (libertate ignota) կոչել զՀայս։ Այսպիսի տարրներէ կազմեալ և այնպիսի պարագաներէ պաշարեալ՝ արդարև չմարթէր կալ Արշակունի թագաւորութիւնն, եթէ չէր երկիւղն Հռոմայեցւոց, որոց քաղաքականութիւնն կը պահանջէր պահել այս թագաւորութիւնն իբրև պատուար ընդդէմ Պարթևաց և Պարսից։

3. Բայց Հայոց մեծագոյն թերութիւնն իւրեանց տկարութեան մէջ ոչ այնչափ ներքին ազգային միութեան պակասութիւնն էր, որչափ յողդողդութիւնն։ Ցայտ ևս որչափ զկծեցուցիչ է մեզ՝ նոյնչափ ճշմարիտ վկայութիւնն Տակիտոսի։ Զյողդողդ բարս Հայոց՝ կ'ընծայէ Տակիտոս ոչ դրից երկրին միայն, այլ և, որ աւելի խոկման արժանին է ըստ մեզ՝ բարուց մարդկանն։ «Անդուստ ի վերուստ, անէ, հաւատարմութիւն թագաւորութեանն եղև ընդ կարծեօք, և՛ ի բուսոյ բարուց բնակչացն, և՛ ի դրից երկրին» (Տակ. Բ. ԾԶ.). և այլուր (ԺԳ. ԼԳ.)—«Հայք անհաստատք ի հաւատս՝ կոչէին զերկոսին կողմանս (զՀռոմայեցիս և զՊարթևս) միանգամայն։ Բայց և այնպէս և՛ ի դրից երկրին և՛ ի բուսոյ բարուց՝ էին յանկ ի Պարթևս, ամուսնութեամբ խառնեալ ընդ նոսա. անգէտ ևս ազատութեան՝ նախամեծար ընտրէին ի նոցանէ ընդունել տէարս»։ Սակայն ճշգիւ խօսելով՝ և ոչ ընդ Պարթևս ճշգիւ յարեալ էր ազգն. «Ատելութեամբ առ Հռոմայեցիս և նախանձու ընդ Պարթևս, որպէս ասէ նոյն պատմագիր՝ էին առ երկոսին ևս կասկածելիք»։ Այս ճշմարիտ է

մանաւանդ առ հեթանոսութեամբ. յետ քրիստոնէութեան սակայն փոխեցաւ աղերսն, երբ զՊարթեւս փոխանակեցին Սասանեանք, անհաշտ թշնամիք Հայոց, ոչ վասն տիրող ցեղին միայն, որ իբրեւ ազգակից էր Պարթեւաց վերջին թագաւորին, այլ եւ վասն քրիստոնէութեան, որ աւելի սերտիւ կապեց զՀայս ընդ արեւմտեան դրացւոյն: Այնուհետեւ կը տեսնենք զՀայս միշտ դիմեալ առ Հռոմայեցիս, մինչեւ, ի գամ քան զգամ տկարանալ այս վերջիններուն զօրութեան յարեւելս՝ Հայք թողան Սասանեանց ոխերիմ դիտաւորութեանն: Առ քրիստոնէութեամբ, եթէ երբէք միտեցին Հայք ի Պարսիկս՝ ի հարկէ էր այն, երբ տեսան զանձինս թողեալ լքեալ հռոմէական ձեռնտուութենէ: Ի Տրդատայ մինչեւ ամբողջ Հայաստանի տիրող Արշակունի թագաւորաց վերջինն Վարազդատ՝ ամենեքին նստան Հռոմայեցւոց օգնութեամբ: Յայնչափ ժամանակի միջոցին չեն մտներ ի Հայաստան հռոմայեցի զօրք՝ բայց միայն իբրեւ բարեկամ, մինչ պարսիկ զօրք կ'ասպատակեն մանաւանդ քան կռուգան՝ համակ իբրեւ թշնամի եւ աւերիչ: Արդարեւ ոչ փոքր պատիւ է քրիստոնեայ Հայոց, որ այս եկամուտ զօրութեան դէմ, իւրեանց սակաւութեամբն հանդերձ՝ գիտցան պաշտպանել զերկիրն աւելի քան երկու դար: Քրիստոնէութիւնն ուսոյց արդարեւ Հայոց «ի վերայ աշխարհին կեալ եւ մեռանել» (Բուզ. Ե. Ի.): Յիշատակաց արժանի է խրատն, զոր ըստ Բուզանդայ վերջին Մամիկոնեան սպարապետն Մանուէլ կու տայ որդւոյ իւրում Արտաշրի, խրատ՝ զոր քրիստոնեայ սպարապետ միմիայն կարող էր տալ: «Յետ այսորիկ հիւանդացաւ, ասէ, սպարապետն Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեան մահու. եւ կոչեաց զորդի իւր զԱրտաշիր, եւ պատուիրեաց նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ (վերջնոյ), եւ լինել միամիտ (անկեղծ). ջանալ եւ վաստակել եւ տալ պատերազմ, եւ ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել. զի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է եւ ընդունելի, եւ ոչ Աստուած թողու ի ձեռաց՝ յորժամ այնպէս լինիք: Անուն քաջութեան յերկրի թողուք եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք: Եւ ամենեւին ի մահուանէ մի երկնչիք, այլ յուսասջիք յայն, որ զամենայն արար եւ հաստատեաց: Ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա եւ ուխտի նորա եւ ի վերայ բնակ տերանց աշխարհիս Արշակունւոյ» (Բուզ. Ե. ԽԴ.): Երանի՜ էր եթէ ամենայն նախարարք ունենային այս ոգին: Քրիստոնէութիւնն տուաւ Հայոց քաջութիւն, այլ չկարաց ջնջել ի բուսոյ բարուց նոցա յողդողդութիւնը, զոր տեսած էր իբր չորեքհարիւր ամօք յառաջ հանճարեղ պատմագիրն Հռոմայեցի,

ինչպէս տեսանք։ Տակիտոսի դատաստանէն չէ հեռի Վահանայ դանդատն առ նախարարս Հայոց, որ կը հրաւիրէին զնա լինել գլուխ երկրորդ ապստամբութեանն։ Վահան յետ ջրելոյ զվստահութիւն նոցա ի Յոյնս և յայլ դրացի ազգս՝ կը յիշեցունէ նոցա զբուն անհաստատութիւն իւրեանց. «Միաբանել խորհրդոյդ և ասել ձեզ, թէ լաւ է իմաստդ և արարէք՝ ոչ կարեմ ասել և չիշխեմ. վասն զի զԱրեաց ոյժն և ստամբակութիւնն քաջ գիտեմ, և զՀոռոմոց թուլութիւնն և զխաբէութիւնն... և վասն Վրաց արքայի և Հոնացդ զորս ասէք՝ Վիրք առանձին՝ թեթև ինչ աշխարհ են և այրուձիով սակաւաւորք. բայց վասն Հոնաց՝ ո՞ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ, որք չենն ի միջի և չերևին։ Բայց քան զամենայն՝ ես առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդիկ սուտք էք և անվստահք» (այսինքն՝ չվստահելիք). (Փարպ. ԿԶ.)։ Գիտենք, թէ նախարարք երկիցս կամեցան մատնել զիւրեանց տէրութիւնն հեթանոս դրացւոյն, յերկրորդումն կատարեցին իսկ։ Զառաջինն կը պատմէ Բուզանդ, զերկրորդն՝ Խորենացին։ «Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց, և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք, նախարարք, կուսակալք, կողմնակալք, գաւառատեարք, գործակալք և դասապետք շինականաց. ի մի վայր եկեալ ժողովեցան, խօսել սկսան ընդ Ներսիսի և ասեն. Դու, տէր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ է... զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղև ի պատերազմէ, և համակ սրով և սուսերօք և ի սլաքս և ի տէգս նիզակաց գքրտունս երեսաց մերոց ջնջեցաք։ Եւ արդ ոչ կարեմք այսմ ժոյժ ունել, և ոչ կարեմք տալ ճակատս. զի լաւ է մեզ, թէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից, որպէս ընկերքն մեր արարին, զի թողին զնա (զԱրշակ) և գնացին առ թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կռուել։ Թէ պէտ իցէ թագաւորին Արշակայ կռուել ընդ Շապհոյ՝ Վասակաւ և Անդովկաւ աներաւ իւրով տացէ պատերազմ, այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երթալոց ի թիկունս օգնականութեան նորա։ Նմա եթէ պէտ իցէ՝ տացէ պատերազմ, թէ պէտ՝ մի. մեր թողեալ զնա, մեզ չէ փոյթ։ Իսկ սուրբն Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր, եթէ Տեսէք և քաջ զմտաւ ածէք, և յիշեցէք զբանն Տեառն պատուիրանին միաբանութեամբ, որպէս պատուիրեացն՝ ծառայից հնազանդ կալ տերանց իւրեանց։ Զի ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք, յազգէդ Արշակունւոյ. մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք, ոմանք ի ձեռն գաւառատեարք լեալք, գեղից և գանձուց տեարք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց,

լեալ էք և պէսպէս դաստակերտացն: Զի թէպէտև առ արարիչն Աստուած յանցաւոր էին ազգն Արշակունեաց՝ սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղբոյ թօթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով, զոմն իշխանութեամբ, զոմն գործակալութեամբ: Դուք աւադիկ կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւն, և կորուսանել զկեանս ձեր յԱստուծոյ, և մերժել զբնակ տեարսն ձեր, զորս տուեալ է ձեզ յԱստուծոյ, և օտար տերանց ծառայեալ և նոցին անաստուած կրօնիցն ցանկալ: Բայց լաւ լիցի ձեզ զնոյն սիրել և յանձն առնուլ և նմին հաւանել, և մերժել յանձանց ձերոց զարարչապաշտ թագաւորն: Զի թէ բիւր չար իցէ Արշակ՝ սակայն աստուածապաշտ է, և եթէ մեղաւոր ևս իցէ՝ սակայն թագաւոր ձեր է. որպէս և դուքդ ասացէք առաջի իմ, զի այնչափ ամք են, զի մարտեայք ևս ի վերայ անձանց ձերոց և հոգւոց, և ի վերայ աշխարհի, ի վերայ կանանց և որդւոց ձերոց, և որ մեծն է քան զամենայն՝ ի վերայ եկեղեցեաց ձերոց, ի վերայ ուխտի հաւատոց ձերոց, զոր ունիմք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. և համակ Տէր ետ ձեզ յաղթութիւն անուան իւրոյ: Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ ծառայել ձեզ անաստուածն մոգութեան անօրինացն և նոցուն պաշտօնէիցն, ի թողուլ նախ զարարիչն մեր և զնորուն պատուիրանս, զոր պատուիրեաց ձեզ՝ միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս, զորս նորայն արարեալ է: Գուցէ բարկացեալ Տէր Աստուած ձեր՝ և խլիցէ զձեզ արմատաքի, և մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի չար ծառայութիւն սարկութեանն մինչև յաւիտեան, և ոչ երբէք բարձցի լուծն ծառայութեան ի ձէնջ. և բողոքէք դուք առ Տէր՝ և նա ոչ լուիցէ ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայութիւն հեթանոս տերանց և աստուածանգէտ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց, տերանց խստասրտաց, և բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք ճողոպրել յայնմանէ: Իսկ նոքա որ էին ի մի վայր ժողովեալ՝ զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն տանէին, շփոթէին, ամբոխէին և ասէին. Հա՛պա, գնացուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս, զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել: Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց» (Բուզ. Դ. ԾԱ.): Նոյն տեսարան կրկնուեցաւ առաջի Սահակայ յետ ոչ բազում ամաց. «Բայց թագաւորն Հայոց Արտաշիր անհուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս, մինչև տաղտկանալ ի նմանէ ամենայն նախարարացն: Որոց եկեալ առ մեծն Սահակ՝ զբողոք բարձին, հրաւիրելով և զնա յօգնականութիւն իւրեանց՝ չարախօսել առ արքային Պարսից և ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց և պարսիկ ածել ունող աշխարհիս:

Այլ նա ասէ. Ոչ առ սուտս ունիմ զձեզ. իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց, և բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացաւ։ Եւ արդ պարտ է փոքր մի տանել թերութեան առնն, մինչև զելս իրացն խորհել մարթասցուք կայսերբն Յունաց, և ոչ անօրինաց մատնել ի ծաղր և յայպանումն։ Եւ նոքա ոչ կամէին, այլ ջանային համախորհուրդ զնա իւրեանց առնել։ Այլ նա ասէ. Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն՝ այլ գահավէժ առնել։ Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի և ոչ յապաղէի. յուսալով զկանգնումն գլորելոյն. այլ հեթանոսաց յառաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ, թէ Մի՛ մատներ գազանաց զանձն խոստովանող քեզ։ Քանզի դրոշմեալ է աւազանաւն, թէպէտև անառակ է. պոռնիկ է, այլ քրիստոնեայ է. գիճացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. ակար է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց։ Եւ զիա՞րդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս։ Իսկ նախարարացն զմտաւ ածեալ, իբր թէ խաբկանօք իցէ գործն, յապաղել զնոսա զի զթագաւորն պատրաստեցուցէ՝ ասեն ամենեքեան. Վասն զի ոչ համակամեցար մեզ չթագաւորել նմա՝ ա՛րդ և մեք կամեցուք և քեզ չքահանայանալ մեզ։ Եւ միաբանեալ ամենեքին՝ անցին առ արքայն Պարսից Վռամ, հանդերձ Սուրմակաւ ոմամբ արծկէացի փառամոլ երիցու, չարախօսել զարքայէն զիւրեանց զԱրտաշրէ, և զմեծէն Սահակայ՝ զՅունովք գլեալ խորհրդովն» (Խոր. Գ. ԿԳ.)։

4. Ոչինչ ընդհատ ապերախտութեամբ, մանաւանդ թէ նենգութեամբ կը թուի թէ վարուած են նախարարք մեր ընդ վաստակաւոր ցեղին Մամիկոնենից։ ԶՄամիկոնենից գովութեամբ կը խօսի մի՛շտ Բուզանդ։ ԶԱրտաւազդայ որդւոյ Վաչէի անկելոյ ի պատերազմի առ Խոսրովաւ՝ ասէ. «Կարի որդի վաստակաւորի էր և ի վաստակաւոր ազգէ». և զհօրէն ասէ, թէ «Լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին (ի մահուան նորա), զի բազում անգամ էր Տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա» (Բուզ. Գ. ԺԱ.)։ Արշակ ի թագաւորելն՝ իսկ և իսկ ելանէ ի խնդիր Մամիկոնենից, որ առ Տիրանաւ հարբ նորա հեռացած էին բանակէն. «Յայնմ ժամանակի ի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից... ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց, յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընտանութիւնն, զի պառակտեալք և քակեալք էին յընտանութենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակի խոլութեանն Տիրանայ» (Բուզ. Գ. Բ.)։ Պապ հիացմամբ կը խօսի զնոցանէ, խոստովանելով

զվաստակս նոցա ի նախնեաց անտի. «Մահապարտ են, ասէ, այնոքիկ, որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ։ Նախնիք զորա եկեալք առ մեզ՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են, և հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ, և սա միամտութեամբ մինչև ի մահ վաստակեալ է. և բազում անգամ Աստուած ետ մեզ յաղթութիւն ի ձեռս զորա, և շնորհեցաւ բազում խաղաղութիւն» (Բուզ. Ե. Դ.)։ Ինքեանք իսկ Մամիկոնեանք կը յիշեն յաճախ զհաւատարմութիւն իւրեանց և զվաստակ։ Այսպէս Մուշեղ ասէր ցՊապ. «Երդնուր, ասէ Բուզանդ, և ասէր, թէ կեցից և մեռայց ի վերայ քո. որպէս նախնիք իմ ի վերայ նախնեացն քոց, որպէս և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ՝ այնպէս և ես ի վերայ քո. բայց միայն չարախօսացն ունկն մի դնիցես» (Անդ)։ Մանուէլ գրելով առ Վարազդատ՝ կը յիշեցունէ նմա զիւրեանց վաստակս և զփոխարէնն, զոր կրեցին նոյն իսկ Արշակունիներէն. «Յետ այսորիկ պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուէլ առ թագաւորն Վարազդատ և ասէր, թէ Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք, (զի) ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեաւ ի վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան ազգիդ ձերոյ. և փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն՝ արդ որք ի թշնամեացն մեռան, որք մնացին՝ զայն դուք Արշակունիքդ կոտորեցէք։ Արդ Մուշեղ, այր քաջ, եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց զանձն իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, և ոչ կարացին թշնամիքն սպանանել՝ դու կալար ի բազմականի խեղդեցեր» (Բուզ. Ե. Լէ.)։

Փառաւոր գովեստ է Մամիկոնեանց Բուզանդայ Դ. դպրութեան գրեթէ ամբողջ Բ. գլուխն, ուր կը կոչէ զնոսա Բուզանդ «աներկեղ, քաջասիրտ, քաջանուն, բարենշան, բարեհամբաւ, բարեգործ, յաջողակ ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեաց, հանապազ յամենայն ժամ յաղթող, բարիանուն, իրաքաջ»։ Թերևս աւելաբանութիւն համարէինք Բուզանդայ այս գովեստն՝ եթէ չունէաք նաև Փարպեցւոյն փառաւոր վկայութիւնը, թէ «Առանց առաջնորդութեան ազգին այնորիկ (Մամիկոնենից) և ոչ մի ինչ իրք և գործք աշխարհիս Հայոց երթեալ են ի գլուխ» (Փարպ. Լ.)։ Յապստամբութեան անդ Վարդանանց՝ յոյս բոլոր նախարարաց, նորին իսկ Վասակայ, որպէս պատմէ նոյն Փարպեցին՝ էր ի Մամիկոնեանս. «Առանց

նորա (այն է Վարդանայ), ասեն, մեր այս ամենայն կամք և խորհուրդք և ոչ մի ինչ վճարին»։ Եւ պատգամաւորք, որ առաքեցան ի Հայոց դարձուցանել յետս զՎարդան, որ դէմ եդեալ էր երթալ ի Յոյնս հանդերձ ընտանեօք՝ ասեն. «Ոչ է հնար մեզ առանց ձեր (Մամիկոնենից) և ոչ զաւակի մերում երբէք պատահել փրկութեան և կեալ» (Փարպ. անդ.)։

Թուի սակայն, թէ նախարարաց նախանձուն և չարակամութեան փորձն սաէպ տեսած էին Մամիկոնեանք։ Մեծն Վարդան կը յիշէ զայս իբրև ծանօթ ինչ և յայտնի, համօրէն իսկ ազգը կոչելով վկայ։ «Ոչ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ սրոյ կարծիցէ զայս զմէնջ, յորմէ ոչ ոք երբէք զանգիտեալ է յազգիս մերում և ոչ երբէք—ասէ Վարդան ցպատգամաւորսն.—և թէ որպէս ի վերայ ընկերին բարւոյ առաւել քան զանձին միշտ հոգալով զանձըն եդեալ է այսմ տոհմի (Մամիկոնենից)՝ զայն և ամենայն դուք Հայք գիտէք ստուգութեամբ ի պատմութենէ գրոց և ի լսելոյ ձեր յաւագաց։ Բայց ի նենգաւոր խաբէութենէ ձերմէ, զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ՝ զայն ամենայն յիշելով գնացեալ եմք լինել անձնապուրծք, որպէս ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ, և զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուց» (Փարպ. անդ.)։ Զնոյն գանգատ բերաւ յառաջ եղբօրորդի Վարդանայ Վահան՝ ի հրաւիրել զնա նախարարաց յերկրորդ ապստամբութիւնն. «Զձեր ծանուցեալ է փորձիւ իմ, թէ որպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ստեցին» (Փարպ. ԿԶ.)։

ԳԼՈՒԽ Գ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ։

1. Աղբիւրք պատմութեան Արշակունեաց։ 2. Յոյն և Հռոմայեցի պատմիչք։ 3. Ներքին և ազգային պատմիչք. Բուզանդ։ 4. Իրք Հայոց առ Արշակունեօք։

1. Յետ գծելոյ զայս համառօտ տեսութիւն զվարչութենէ թագաւորութեանն Արշակունեաց՝ գանք պատմութեան ներքին և արտաքին քաղաքական մասին։ Նախ պէտք հարցուի մեզ, թէ ինչ աղբիւրներու վրայ կը հիմնենք մեր պատմութիւնը։ Իւրաքանչիւր ազգի պատմութիւնն, որպէս այլուր ասացեալ է մեր (Ա. մասն)՝ կը խնդրուի նախ իւր յիշատակարաններէն և, ի պակասել սոցա՝ ի պատմութեան դրացի ազգաց, ընդ որս ունէր ազգն ընդ երկար և ի մօտոյ աղերս։ Դժբախտութեամբ՝ Արշակունեաց ժամանակի պատմութիւնն Հայոց, ինչպէս յայտնի է՝ չունի բնիկ աղբիւր, ուստի կը մնայ մեզ դիմել երկու մեծ դրացի ազգաց, Պարթևաց և Հռոմայեցւոց։ Հայ կամ իբր հայ աղբիւրք կ'սկսին մտև ազգին ի քրիստոնէութիւն, և այն մեծաւ մասամբ վկայաբանութիւններէ, այն է հոգևոր վէպերէ հաւաքեալ։ Բայց ի Բուզանդայ և ի Փարպեցւոյն չունիմք պատմագիր ազգային, որ իցէ այսմ անուան արժանի։ Խորենացին տալ կու տայ մեզ Արշակունեաց պատմութիւն մի գրեթէ անընդհատ ի սկզբանէ մինչև ի կատարած. սակայն մեր պատմագրաց հօր համբաւեալ գործը, թող զի չէ ժամանակակից՝ ունի, ինչպէս պէտք տեսնենք յիւրում տեղւոջ՝ այնպիսի թերութիւններ, որ կարեմք արկանել զնա ըստ տեղւոյն ի կիր, այլ ոչ վստահել նմա իբրև ստուգիւ վաւերական աղբեր։ Գալով յիշեալ երկու ազգաց դրացեաց՝ ի Պարթևաց չունիմք ամենևին ստոյգ պատմական աղբիւր ազգային, ուր մարթ էր թերևս գտանել բազում ինչ վերաբերեալ մեզ. ինչպէս մերն, նոյնպէս նոցին իրք և գործք՝ կը գտուին ցիր և ցան ի գործս յոյն և հռոմայեցի պատմագրաց։ Ապա կը մնայ մեզ դիմել այս վերջնոց։

2. Ի յոյն և ի հռոմայեցի պատմագրաց գէթ մեր պատմու-

թեան համար կարևորագոյնք և, իբրև ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից, արժանի հաւատարմութեան են Պոլիբիոս և Ստրաբոն՝ Արշակունեաց սկզբան և ծագման համար, և ապա կարգաւ՝ Տակիտոս, Դիոն Կասսիոս և Ամմիանոս, որ գրեթէ մինչև ի վերջ Արշակունի թագաւորութեան կուտան մեզ զարտաքին քաղաքական դիպաց Հայոց հատուածներ, յորս յարելով և ներքին դիպաց յիշատակութիւններ, որովք առատ են Բուզանդ և Խորենացին՝ կ'ունենանք բաւական ընդարձակ բովանդակութիւն այսր կարևորագոյն ժամանակի պատմութեան մերոյ։ ԶՊոլիբիոսէ և զՍտրաբոնէ խօսեցանք յառաջնում մասին մեր այս Քննական պատմութեան (էջ 234, 235)։

Կոռնելիոս Տակիտոս, լատին պատմիչ, որ ծաղկեցաւ յերկրորդում կիսուն Ա․ դարու, առ Փղաւեան կայսերօք և առ առաջին յաջորդօք նոցա Տրայիանոսի և Ադրիանոսի (64—134), կը կարծուի մեռեալ ութսնամենի։ Թող ուրիշ գործերը՝ Տակիտոս ունի Պատմութիւնք և Տարեգիրք անուն երկու կարևոր գրուած։ Պատմութիւնք կը սկսին Գաղբայէ և կը հասնին մինչև Ներուաս (68—98)։ Տարեգիրք կը սկսին ի մահուանէն Օգոստեայ և կ'երթան մինչև ի մահն Ներոնի (14—64)։ Այս երկու պատմական գործոց մեծ մասն հասած է մեզ։ Տակիտոս յարգի է յոյժ ոչ ոճին միայն, այլև դատաստաններուն ողջմտութեան և պատմութեան ճշգութեան համար։ Գրեց՝ ինչ որ ինք տեսաւ անձամբ և կամ լսեց շատ հաւատարիմ ժամանակակից մարդկանէ։ Յօգոստեայ մինչև Ներոն, կամ ըստ Խորենացւոյն յԱրտաւազդէ Ա-ոյ մինչև յԱրտաշէս Բ. Տակիտոս կը յիշէ Հայոց և նոցա դրացեաց վերաբերեալ բազում ինչ նոր և հետաքրքրական։

Դիոն Կասսիոս, յոյն պատմիչ, ծաղկեցաւ ի փոխճանի Բ. դարուն և ի սկզբան Գ-ին։ Վարեց բարձր պաշտօններ առ Կոմոդոսիւ, Պերտինաքսաւ և Սևերոսն Աղեքսանդրիւ (180—230)։ Եղաւ անդամ ծերակուտին, հիւպատոս (229), կուսակալ Փոքուն Ասիոյ և Ափրիկէի։ Թող զայլ գիրս՝ Կասսիոս ունի Հռոմէական պատմութիւն ի գալստենէն Ենեայ յԻտալիա մինչև իւր հիւպատոսութեան տարին։ Այս գործէն 19 գիրք միայն ամբողջ հասած են մեզ, մնացեալներէն հատակտորներ։ Այս պատմութեան մէջ յիշուած է, յԱրտաւազդայ Բ-է մինչև Խոսրով մեծ՝ Հայոց վերաբերեալ բազում ինչ։ Պատմութեան ճշգութեան և կարևորութեան աղագաւ ինչ որ ասացաւ զՏակիտոսէ՝ զնոյն պարտ է իմանալ և զսմանէ։

Յետ այս երկու ուագ պատմագրաց կու գայ Ամմիանոս Մարկեղինոս լատին պատմիչ առ Յուլիանոսիւ (360), և էր ի բանակի նորա, երբ գնաց նա Պարսից դէմ։ Ամմիանոս ևս ունի ի Ներուա-

սայ մինչեւ ի Վաղենտինիանոս (96—375) «Պատմութիւն Հռոմայեցի կայսերաց», ուր կան յիշուած, մանաւանդ Արշակայ եւ Պապայ ժամանակէն՝ զՀայոց ոչ սակաւ դէպք կարեւորք, որոց ժամանակակից եւ մեծաւ մասամբ ականատես էր նա։

Ինչ որ այս երեք պատմիչք կը գրեն զՀայոց՝ են այնպէս կարեւոր, միանգամայն ճշմարիտ, որ թէպէտ մեծ մասն նոցա, մանաւանդ պատմեալքն ի Տակիտոսէ, չեն յիշուած մեր ազգային պատմութեան մէջ (իմա առ Խորենացւոյն, քանզի չունինք այլ պատմիչ քան զնա այն ժամանակին համար)՝ չեն կրնար թողուլ դուրս կատարեալ Հայոց պատմութենէ, առանց ծայրաքաղ թողլու մեր ազգային պատմութիւնն, ինչպէս եղած է ցարդ։

Թող այս պատմիչներն, որ յիշուեցան եւ որ արդարեւ երեւելիքն են՝ կան ուրիշ յոյն եւ լատին մատենագիրք եւ պատմագիրք, յորոց կրնայ առնուլ ինչ ինչ ընտրանաւ, մանաւանդ ժամանակակիցներէն։ Այսպիսի են Կիկերոն եւ Տիտոս Լիւիոս, առաջինն՝ ճարտարախօս, երկրորդն՝ պատմագիր լատին յԱ. դարու նախ քան զՔր., Պլինիոս աշխարհագիր լատին, Դիոդորոս Սիկիլիացի եւ Պլուտարքոս պատմագիրք յոյն, Կուինտոս Կուրտիոս, Վէլլէոս Պատերկուղոս, Յուստինոս, Սուետոնիոս, Յուլիոս Փլորոս լատին պատմիչք Ա. դարու, Ապպիանոս յոյն պատմիչ Բ. դարու, Հերոդիանոս նոյնպէս յոյն պատմիչ Գ. դարու, Րուփոս, Եւտրոպիոս, Սպարտիանոս, Յուլիոս Կապիտոլինոս, Որոսիոս, Աւրելիոս Վիկտոր, Տրեբելլիոս Պողիոն—լատին պատմիչք Դ. դարու, Զոսիմոս յոյն Ե. դարու եւ Պրոկոպիոս նոյնպէս յոյն ի Զ-ումն առ Յուստինիանոսիւ։ Այս օտար պատմիչք, զորս, մանաւանդ զառաջինսն, յիրաւի մարթ էր կոչել աղբիւրս պատմութեան Հայոց՝ յիշեցինք միայն համառօտիւ, խախտելու համար զայն կանխակալ կարծիս, թէ Հայոց պատմութիւնն Հայ պատմագրաց մէջ միայն պարտ է խնդրել, եւ թէ ինչ որ սոքա կը պատմեն՝ ճշմարիտ է, ինչ որ արտաքին պատմիչք՝ սուտ, թէպէտեւ իցեն սոքա ծանր եւ արժանահաւատ, որպիսի է Տակիտոս։ Որեւիցէ դէպք, յիշեալ ի Վարդանայ կամ ի Կիրակոսէ եւ կամ ուրիշ Հայ պատմագրէ, թէեւ հազար եւ աւելի եւս ամօք յառաջ քան զպատմիչն, եւ ոչ միայն առանց ապացուցի, այլ եւ անհեթեթ՝ պարտի լինել ընդունելի, մինչ դէպք այնպէս սերտիւ հիւսեալք Հռոմէական շքեղ պատմութեան հետ, եւ պատմեալք ականատես եւ ժամանակակից մարդոյ՝ պարտին համարուիլ սուտ կամ սխալ, վասն զի պատմուած չեն կամ այլազգ կը պատմուին ի Խորենացւոյն կամ յայլմէ ումեքէ Հայ պատմագրէ։

3. Գալով ներքին կամ ազգային պատմչաց՝ յիշենք առ այժմ

զԲուզանդ միայն։ Մատեանն, զոր կոչեմք Բուզանդ՝ է պատմու-
թիւն Հայոց ի Խոսրովայ որդւոյ Տրդատայ, Կոտակ կոչեցելոյ, մինչև
ի բաժանումն թագաւորութեանն Արշակունեաց, գործ Փաւստոս
Բուզանդ անուն ուրումն յանի, որ կոչուած է թարգմանչէն Քծ
պատմագիր և ժամանակագիր Յունաց, ինչպէս յայտնի է Գ. դպրու-
թեան վերջին ԽԱ. գլխոյն յաւելուածէն. «Կատարեցաւ երրորդ
դարք, քան և մի պատմութեանց դպրութիւնք, ժամանակագիր
կանոնք Փաւստեայ Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի,
որ էր ժամանակագիր Յունաց»։ Այս Հատուածին մէջ փոխանակ
«Փաւստեայ»՝ Վենետիկ տպուածն 1832 ունի «փախստեայք»—«ժա-
մանակագիր կանոնք փախստեայք Բիւզանդեայ»։ Այսպէս՝ անունն
Փաւստոս կը մնայ սակաւ ինչ տարակուսական. Նայելով սակայն
Փարպեցւոյն, որ կը կոչէ զնա «Փաւստոս Բուզանդացի»՝ Հաւանա-
կան է թէ բառն, «փախստեայ» Վենետեան տպագրութեան կամ
ձեռագրին՝ է վրիպակ։ Բիւզանդ անունն սակայն ուրիշ երեք տեղ
կրկնուած է ի մատենին, այն է ի գլուխս վերջին երից գրոց, «Զոր-
րորդ դպրութիւն Բիւզանդեայ». «Հինգերորդ դպրութիւն Բիւզան-
դեայ». «Բիւզանդեայ վեցերորդ խոստաբանութիւն»։ Երրորդ դպրու-
թիւնն միայն ունի փոխանակ Բիւզանդեայ՝ Բուզանդարան—«Բու-
զանդարան պատմութիւնք», եթէ բառն Բուզանդարան չէ վրիպակ։
Եթէ միւս անունն Բուզանդայ էր արդարև Փաւստոս, որ չորից
յիշուած է (Գ. Գ, Ե. ԻԳ, Զ. Ե և Զ) բուն մատենին մէջ իբրև
եպիսկոպոս, թելակալ մեծին Ներսէսի նորա կաթողիկոսութեան բոլոր
ժամանակ, ձեռնադրող նորա ի սարկաւագութիւն (Գ. Գ.) և ի մա-
հուան նորա առաջիկայ (Ե. ԻԳ.), ազգաւ Հոռոմ—պատմագիրն
Փաւստոս Բուզանդ՝ է նոյն Փաւստոս եպիսկոպոս։ Այս կը հետևի
նոյն իսկ պատմութենէն։ Պատմագիրն կը խոստանայ ուրեք տալ ի
վերջ կոյս մատենին տեղեկութիւն զանձնէ, և կուտայ իսկ իւր
վերջին դպրութեան Ե. և Զ. գլուխներուն մէջ Համառօտ տեղե-
կութիւն զՓաւստոսէ ումեմնէ եպիսկոպոսէ. ապա Փաւստոս եպիս-
կոպոս է պատմագիրն Փաւստոս։ Զունի բաւական զօրութիւն առար-
կութիւնն ոմանց, թէ տեղեկութիւնն զՓաւստոսէ եպիսկոպոսէ չէ
այն, զոր պատմագիրն կը խոստանայ տալ զանձնէ, քանզի չէ ըստ
ամենայնի Համաձայն խոստման մատենագրին, այսինքն թէ փոխա-
նակ տրուելու տասն գլխով և ի վախճանի գործոյն՝ տրուած է եր-
կու գլխով միայն և տասն գլխով յառաջ քան զվախճան գործոյն։
Նախ Հատուածն, ուր յիշուած է խոստումնն—«Աստրաս ամենայն
պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան, որ միանգամ զմատեանս
ընթեռնուլք. տունք տասն Համարական թուօք»—է մութ. չյայտ-

ներ թէ տասն գլխով տրուած էր տեղեկութիւնն, թէ տասն գլխով առաջ։ Երկրորդ, և մանաւանդ, դժուարին է ընդունել, թէ պատմագրին և տեղեկութեան մէջ յիշուած անձին անուան նոյն լինելն ըստ պատահման միայն է։ Ուստի ըստ մեզ չիք բաւական պատճառ ընդդէմ, թէ տեղեկութիւնն այն չէ կատարումն խոստման մատենագրին. այս Փաւստոս եպիսկոպոս և Փաւստոս պատմագիր են միևնոյն անձն։ Բայց չէ նոյնպէս բանաւոր առել զնոյն՝ զՓաւստոսէ եպիսկոպոսէ, որ յիշուած է Բարսղի Կեսարացւոյ թուղթերուն մէջ, զի սորա կենաց ժամանակին համգամանք չեն միաբան համգամանաց կենաց և ժամանակին մերոյն Փաւստոսի, թէպէտ Զամչեան զայն Փաւստոս ևս կը համարի նոյն ընդ մերումն։ Տես Զամչ. Ա. 447։

Արդ չէ անհաւանական ասել, թէ Զ. դպրութեան Ե. և Զ. գլուխներն, որ են համառօտ նկարագիր անձին Փաւստոսի եպիսկոպոսի՝ կատարումն են խոստման մատենագրին՝ տալոյ տեղեկութիւն զանձնէ ի վերջ կոյս պատմութեան իւրոյ։ Արդարև ըստ խոստման մատենագրին (տես զվերջին հատուած գլխոց ցանկին Զ. դպրութեան) կը թուի, թէ պատմագիրն ի կատարածի գործոյն տասն գլխով պիտի տար զայն տեղեկութիւն, մինչդեռ զայն տրուած կը գտնենք երկու գլխով միայն, և տասն գլխով յառաջ քան զվախճան գործոյն։ Բայց մթութիւն լեզուին տուած է այնպէս կարծել. հեղինակին միտքն այն չէ։ Բառն «ստորատ» գրուած է փոխանակ «վերջաբանի»։ Ուստի Զ. դպրութեան ցանկին զայն վերջին մասն պարտ է ընթեռնուլ այսպէս. «Ստորատ (վերջ) բովանդակ պատմութեանս։ Յաւզգս իմ տեղեկութիւն, որոյ ընթեռնուն զմատեանս՝ և այլ ևս գլուխք թուով տասն»։ Եւ արդարև Բուզանդայ Զ. դպրութեան առաջին չորս գլուխներն են վախճան պատմութեան նորա, և ունին Ա. գլուխն՝ զպատմութիւն բաժանման թագաւորութեան Արշակունեաց (388)՝ Բ. Գ. և Դ. գլուխներն՝ զպատմութիւն երից յաջորդացն Ներսիսի, այն է՝ Զաւենայ, Շահակայ և Ասպուրակեայ († 390), առ որով կը թուի վախճանեալ ծերունին Փաւստոս. իսկ Ե. և Զ. գլուխք ունին զխոստացեալ տեղեկութիւնն զՓաւստեայ. յետոյ կուգան տասն գլուխք այլևայլ եպիսկոպոսաց և վանականաց վրայ, որ էին նշանաւորք ի ժամանակին։ Բայց եթէ գիտենք ևս, թէ այս մեկնութիւն բանի է, և հեղինակն ճշդիւ չէ պահած գլուխներուն կարգը, փոխանակ դնելոյ ի վերջ գործոյն իւր անձին վրայ տեղեկութիւնը, դրած է յառաջ և երկու գլխով միայն և ոչ տասն՝ այս չեղծաներ մեր պատճառին զօրութիւնը։ Միշտ կը մնայ յայտնի, թէ Փաւստոս եպիսկոպոս և Փաւստոս Բուզանդ պատմագիր՝ են

միևնոյն անձն։ Հին ձեռագիր մատեաններու մէջ մեր տպագրեալ գրոց կարգը և ճշդութիւնը պահանջել խիստ է։

Միւս ևս պատճառ նոյն համարելոյ մեր զՓաւստոս պատմագիր ընդ Փաւստոսի եպիսկոպոսի այն է, զի պատմութիւնն Բուզանդայ է արդարև գործ այնպիսւոյ, որ երկար ժամանակ կեցած է Հայոց մէջ, որպիսի էր Փաւստոս եպիսկոպոս, քաջ հմուտ ներքին գործոց և իրաց Հայոց։ Սաստիկ յարումը, զոր ունի պատմիչն առ Ներսէս մեծ՝ կը ցուցնէ, թէ մերձաւոր էր նա Ներսէսի, տեղեակ և խելամուտ գործոց և փառաց մեծի հայրապետին և միջամուխ գործոց Հայոց։

Երեք մեծ թերութիւն կը գտնեն առ Բուզանդայ, առաջին՝ թշնամութիւն առ ազգն, երկրորդ՝ աւելորդաբանութիւն, և երրորդ՝ տգիտութիւն հայ լեզուի կամ խակութիւն. ուստի և կը հետևցունեն, թէ մատեանն է գրուած օտարէ հայերէն լեզուաւ և յունարէն գրով. (քանզի ոմանք թելադրեալ ի բանից Խորենացւոյն—«Գիր Պարսից և Յունաց, որովք այժմ առ մեզ գտանին ամբաւ գրուցաց մատեանք» Խոր. Ա.. Գ.—կարծեցին, թէ Հայք յառաջ քան զգիւտ գրոյն կը վարէին յոյն և պարսիկ այբուբենիւ. մինչ «գիր» անդ և այլուր առ նախնիս կը նշանակէ գրութիւն կամ լեզու, և ոչ լոկ նշանագիր)։ Բայց Բուզանդ, կատարեալ կղերական, եթէ ուրեք ուրեք կը պարսաւէ կամ մանաւանդ կը մեղադրէ զՀայս, երբ կը գտնէ զնոսա հակառակ կղերին կամ նուազեալս ի բարեպաշտութենէ՝ բազում ուրեք ևս կը գովէ զնոսա, երբ հլու և անսացող կը գտնէ զնոսա եկեղեցւոյ և եկեղեցական կարգաց։ Այսպէս Վրթանայ ժամանակին վրայ կը խօսի գովութեամբ. «Յաւուրս սորա (Խոսրովու) եկաց և եղև քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ՝ երէց որդին Գրիգորի Վրթանէս։ Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յաւուրս սորա աճել բազմացաւ» (Բուզ. Գ. Գ.). և ի Դ. գլուխն Դ. դպրութեան, յետ բերանալիր գովելոյ զմեծն Ներսէս և նորա բարեկարգութիւններն՝ կը յաւելու. «Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց, և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց։ Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն և պաշտօնէից յաճախութիւն»։ Ընդ հակառակն կը պարսաւէ զՀայս իբրև

թուլացեալս ի բարեպաշտութենէ առ Տէրն։ «Զկնի թաղամահն լինելոյ երանելոյն Յուսկան, անառաջնորդք եղեալ՝ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին թորգոմական աշխարհին։ Քանզի առաւ նոցա ոգի մոլորութեան. աչս՝ զի մի տեսցեն, և ականջս՝ զի մի լուիցեն, և սիրտ՝ զի մի իմասցին դառնալ յապաշխարութիւն։ Եւ զխաւարային խորխորատ կորստեան գտեալ, հարեալ իւրեանց անձանց ճանապարհ՝ կործանեցան անկեալք. զի ոչ այն ոք գոյր, որ նոցա մոլեգնութեանն պատկառուկս արկանէր ըստ մեղս գործելոյ, այլ անհովիւք էին։ Զկորստեան ճանապարհն համարձակէին, ի չարիս կամօք գնացեալք և կամօք լեալք որդիք բարկութեան, և առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ առնն Հայոց երկրին։ Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց, որ զպահպանութիւն շանցն պահողաց պահապանացն ի բաց մերժեցին, և կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Մեծ զովութեամբ կը խօսի Բուզանդ զկաթողիկոսաց։ ԶՎրթանայ ասէ այսչափ միայն համառօտիւ, թէ «Լուսաւորէր և առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս իբրև զհայրն, իբրև զեղբայր իւր. իրաւունք և արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ» (Բուզ. Գ. Գ.)։ ԶՅուսկանէ խօսի աւելի ընդարձակ. «Զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ՝ ոչ լաւ համարեցաւ զանցաւորս, այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայէր։ Լաւ համարէր զծառայելն միայն Քրիստոսի, ոչ ինչ ածէր ընդ միտ զսէր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութիւն կամ զընդանութիւն փեսայութեան թագաւորին. այլ յայնմ ամենայնէ ուրացեալ հրաժարէր, և օտարոտիս և զարշելիս և պատրանս համարէր։ Լաւ համարեցաւ զնախատինս Քրիստոսի քան զմեծութիւն թագաւորացն. զճգունս վարուց ընտրեալ անձին իւրոյ՝ յերկրասանամենից և ի վեր առաքինանայր. իւրոց հարցն նմանեալ, և զեղբօրն իւրոյ Գրիգորի զօրինակ բերէր յանձին. զքրիստոսեան լուծն առանց ամենայն յապաղութեան ձգէր մինչև ի վախճան» (Գ. Ե.)։ Իսկ զեղբօրէն նորա զԳրիգորիսէ ասէ. «Առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի և զարմանալի. խստագոյն և դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք և սրբութեամբ, աքնական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ։ Զաւետարանական ընթացսն և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ՝ շնորհօքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել ևս փութայր, զուն եդեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն. զցոյց և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խրն-

դրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց և հեռաւորաց զհոգևոր եռանդն ածէր. իբրև զպատերազմասէր նահատակ՝ միշտ զանձն ի կրթութիւն և ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց և վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոյն մարտրնչել որ վասն Քրիստոսի» (Բուզ. Դ. Զ.)։ Զներսիսէ յառաջ քան զկաթողիկոսութիւն նորա՝ ասէ. «Էր երկիւղած ի Տեառնէ Աստուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր, սուրբ, զգաստ, սաստիկ իմաստուն և առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն, քաղցր, խոնարհ, աղքատասէր, ի սրբութիւնս ամուսնութեանցն օրինաւոր, և կատարեալ սիրովն Աստուծոյ, և առ իւր ընկերս՝ ըստ պատուիրանին — սիրել զամենայն մարդ իբրև զանձրն։ Զի ի զինուորութեանն այսպէս կատարեալ էր վարուք լաւութեամբ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ գնայր նա ամենայն պատուիրանօքն Տեառն, և արդարութեամբ, անարատութեամբ և ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր։ Անձաձրոյթ էր, և ունէր զնախանձն Աստուծոյ, և եռայր սուրբ Հոգւովն. այսպէս իսկ էր ամենայնիւ կատարեալ յամենայնի։ Եւ զաղքատս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա՝ զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակէր ընդ նոսա։ Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամենայն զրկելոց լինէր նա։... Յայնժամ եդ Տէր ի միտս ամենեցուն՝ խնդրել իւրեանց հովիւ զայն, որ նոցա կարող լինէր զառաջնորդութիւն կենաց ճանապարհին ցուցանել։ Եւ մինչդեռ իսկ զձևս զինուորութեան յինքեան բերէր յերևելիսն՝ ներքին մարդովն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր, և ազնուական վարս էր յինքեան կերպարանեալ։ Եւ յուսովն զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստոսի, և թաղակից եղեալ էր ընդ նմին, և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարութեան յուսոյն արդարութեան սպասէր։ Վասն այսորիկ յիրաւի արժանի եղև սա աթոռոյն հայրապետաց և տեղւոյ հարցն իւրոց առաջնոց» (Բուզ. Դ. Գ.)։ Եւս աւելի զկնի կաթողիկոսութեանն յաճախէ Բուզանդ գովեստս զՆերսիսէ. «Եւ նստաւ սուրբն Ներսէս յաթոռ հայրապետութեանն։ Ի հովուութեան նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին. զի ի վարս կարգաց գնացից իւրոց նմանեաց իւրոյ հօրն մեծին Գրիգորի. արդարև հայրաբարոյ գտանէր» (Բուզ. Դ. Դ.)։ Յետոյ կը յարէ Բուզանդ Ներսիսի գործերուն մանր յիշատակութիւնը մեծամեծ գովեստներով, և կը բովանդակէ ասելով. «Ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին» (Անդ)։

Ոչինչ ընդհատ գովութեամբ կը խօսի Բուզանդ զբարեպաշտ

թագաւորաց, որպէս զՏրդատայ և զորդւոյ նորա զԽոսրովէ: ԶՏրդատ կ'անուանէ «քաջ և առաքինի».— «Յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թոռն Խոսրովու, որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի» (Բուզ. Գ. Գ.): և ի գլուխն ԺԳ. կոչէ զնա «յառաջընթաց Քրիստոսի».—«Սիրելի էր աշխարհին պատուել զյառաջընթացն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ»: Զթագաւորութիւնն Խոսրովու նոյնպէս կը գովէ մեծապէս.—«Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն, և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յաւուրս նորա աճել բազմացաւ» (Բուզ. Գ. Գ.): և այլուր (Գ. ԺԱ.) կը կոչէ զնա «քաջ արանց, աշխարհաշէն».—«Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով թագաւորն Հայոց մեծաց. և ժողովեալ աշխար եգեալ լացին զնա ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց»: Նաև զնախարարաց, զՄամիկոնեանց մանաւանդ՝ բազում ուրեք գովութեամբ կը խօսի Բուզանդ, ինչպէս տեսանք վերագոյնն: Պատմիչ մը, որ այսպիսի և այսչափ գրուատեօք կը խօսի ազգին Հայրապետաց, թագաւորաց, զօրավարաց, նոյն իսկ երկրին կարգաց և յօրինուածութեան վրայ ըստ տեղւոյն՝ կրնայ թշնամի կոչուիլ, եթէ ուրեք ուրեք պատմէ ազգին թերութիւններն և մոլորութիւններն եւս անաչառապէս: Քան զգովեստս Բուզանդայ չեն նուազ իրաւացի պարսաւքն, մանաւանդ զժամանակէ խօլութեանն Տիրանայ, մինչ երկու Հայրապետք, Յուսիկ և Դանիէլ, սպանուեցան չարաչար՝ հրամանաւ անխրատ թագաւորին: Մեծագոյն պարսաւ Բուզանդայ զՀայոց կը թուի սմանց այն, զոր ասէ, թէ Հայք ի սկզբանէ ուղղութեամբ չընկալան զքրիստոնէութիւնն, այլ մարդկօրէն պատճառներէ առեալ.—«Ի վաղընջուց, ասէ, յորմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն՝ լոկ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան: Ոչ եթէ որպէս պարտն էր, գիտութեամբ, յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին այն խառնաղանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց, նախարարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդահեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին՝ ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ զոյգն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր ըմ-

սէինն՝ և ոչ կարէին ինչ առնել ի մտի։ Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս, ընդ անօգուտս ևեթ զբօսեալ էին. զոր օրինակ մանկունք տղայք ընդ մանկութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանդարեալք, և զպիտոյիցն և զկարևորացն ոչ ինչ փոյթ արարեալ՝ սոյնպէս և (սոքա) դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնոտի մտացն, ի հնութիւն հեթանոսութեան սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով» (Բուզ. Գ. ԺԳ.)։ Զրպարտութիւն համարէինք թերևս զայս դատաստան Բուզանդայ՝ եթէ քան զայն խստագոյնն չգտանէինք առ Խորենացւոյն, հանդերձ մարգարէութեամբ իմն, որ բաւական է քստմնեցուցանել ամէն հայ ընթերցող։ «Սա—ասէ Խորենացին զՏրդատայ—յետ հաւատոյն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ՝ ևս քան զևս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան, սաստելով և հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարև Քրիստոսի, որպէս զի վկայեսցեն հաւատոյն՝ ամենեցուն և գործքն։ Այլ զխստասրտութիւն կամիմ ասել, թէ և զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ ի սկզբանցն և այսր, որպէս անհամբոյր բարուց, և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնիցն քրիստոնէականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից։ Որում ոչ կարացեալ ներել թագաւորին՝ ընկեցեալ զերկրաւոր պսակն՝ զհետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծակամուտ լեռնակեցիկ եղեալ։ Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս։ Քանզի զհետ առաքեալ կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նոցա, և ունել զթագաւորութիւնն։ Իսկ ի չհաւանել սորոյն՝ տան նմա սրբումն, որպէս անդ ուրեմն ի հինսն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն, և կամ թէ զմերն իսկ ասել՝ կատաղեալ Եբրայեցիքն ըմպելի լեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ։ Եւ զայս արարեալ չէջուցին յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան։ Վասն այսորիկ ի վերայ իմոյս ողբալով ասեմ՝ որպէս Պաւղոս յաղագս իւրոցն և թշնամեաց խաչին Քրիստոսի. բայց ասեմ ո՛չ զիմ բանս, այլ զՀոգւոյն սրբոյ. Ազգ թիւր և դառնացող, ազգ, որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա։ Ո՞րք Արամեանք, մինչև յերբ էք ծանրասիրտք, ընդէր սիրէք զնանրութիւն և զանստուածութիւն։ Ո՛չ ծանեայք, զի սքանչելացոյց Տէր զսուրբս իւր, և ոչ Տէր լուիցէ յաղաղակել ձերում

առ նա։ Բարկացեալ մեղանչեցէք, և յանկողինս ձեր ոչ զղջացարուք, քանզի զենէք զենումն անօրէնութեան և զյուսացեալսն ի Տէր արհամարհեցէք։ Վասն այսորիկ եկեսցէ ձեզ որոգայթ, զոր ոչ ծանեայք, և որսն զոր որսացէք՝ ըմբռնեսցէ զձեզ և նովին որոգայթիւն անկջիք» (Խոր. Բ. ԿԲ.)։

Երկրորդ թերութիւնն, այն է աւելորդաբանութիւն Բուզանդայ է, որպէս արդէն տեսանք՝ ի թիւս, և այն մանաւանդ՝ երբ կը խօսի զթուոյ Պարսից զօրուն։ Գալով երրորդ կարծեցեալ թերութեան Բուզանդայ, այն է տգիտութիւն կամ խորթութիւն լեզուին՝ է բոլորովին սխալ։ Թէ Բուզանդ է թարգմանութիւն, և թարգմանութիւն մը ի թարգմանչաց՝ յայտնի է և առանց հակառակութեան։ Առատ, փափուկ, նոր, անարուեստ կամ մանաւանդ անպաճոյճ լեզուն Բուզանդայ, կամ լաւ ևս ասել թարգմանչին նորա, նշան է ոչ եթէ Հայերէնի տգիտութեան կամ խակութեան մատենագրական ոճոյ, այլ ժամանակին ժողովրդեան լեզուին, զոր քան Եզնկայ, Ոսկեբերանի և այլոց Հարց գործերուն թարգմանութեան կիրթ ոճէ աւելի ընտրած կը թուի թարգմանիչն, և նպատակն էր անտարակոյս՝ տանել զգործն, իբրև տոհմային պատմութիւն՝ յանկագոյն ժողովրդեան ճաշակին, և այս կը բարձրացունէ մանաւանդ քան կը նուազեցունէ Բուզանդայ լեզուին յարգը։ Ըստ մեզ միմիայն թերութիւն Բուզանդայ է ստէպ մուտ տալն սքանչելեաց, և այս ոչ այնչափ Բուզանդայ անձին, որչափ ժամանակին է ընծայելի։ Մեծ առաւելութիւն Բուզանդայ է միաբանութիւնն ընդ ժամանակակից պատմութեան, մանաւանդ Ամմիանու, ընդ որում կ'երթայ զոյգ, մինչ Խորենացին կամ աղբիւր նորա կը հեռանայ։

Բուզանդ իւր յառաջաբանին մէջ—«Խոստաբանութիւն նախագիտելի»—իւր գործին վրայ կը խօսի այսպէս. Այս երրորդ դպրութեան, ասէ, ընդ որում կից են ուրիշ երեք դպրութիւնք, ընդ ամենայն գիրք չորք՝ նիւթն է այս. Պատմութիւն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ, ուր պիտի խօսուի զվարուց քահանայապետաց որոց մինչև յելս նոցա յաշխարհէ, զգործոց Արշակունի թագաւորաց, զօրավարաց և քաջ նախարարաց, զիրաց խաղաղութեան և պատերազմի, շինութեան և աւերածոյ, արդարութեան և անօրէնութեան, աստուածպաշտութեան և ամբարշտութեան. ի թագաւորութենէն Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչև ի վերջին ժամանակն փառթարելոյ թագաւորացն Հայոց, և ի քահանայապետութենէն Վրթանայ որդւոյ Գրիգորի մինչև ի վերջինսն ի նորա տանէն, որք կացին եպիսկոպոսապետ Հայոց։ Զայսմ ամենայնէ գրած եմ յայս չորեսին դպրութիւնս, գլխաքանչիւր դպրութիւն բաժա-

նեալ ի գլուխս, ի սկիզբն իւրաքանչիւրին յարելով գլուխներուն ցանկը: Ահա բնագիրն. «Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ պատմութեանցս. Ժամանակագիր կանոնք մատենից (այսինքն՝ ցանկք գլխոց) և առ նմին դպրութիւնք, այսինքն՝ են սոքա չորք մատեանք, և չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ: Այսինքն կարգ (շարունակութիւն) անցելոց իրաց, գործք և վարք մինչև ցիւրաքանչիւր ելս յաշխարհէս՝ քահանայապետաց սրբոց արանց Աստուծոյ, և թագաւորաց տերանց աշխարհաց Արշակունեաց, և զօրավարաց՝ արանց անուանեաց քաջ նախարարաց, և խաղաղութեան և պատերազմի, և շինութեան և աւերածոյ, և արդարութեան և անօրէնութեան, և աստուածպաշտութեան և ամբարշտութեան. ժամանակագիր արարեալ (այսինքն՝ սկսեալ) ի թագաւորութենէն Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչև ի միւս վերջին ժամանակն վատթարելոյ թագաւորացն Հայոց, և ի քահանայապետութենէն Վրթանայ որդւոյ Գրիգորի առաջնոյ քահանայապետի՝ մինչև ցայնոսիկ ի վերջինսն, որք կացին գլխաւորք եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջէ կարգօք թուօք և համարօք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք: Եւ չորս խոստմունս (ցանկ) չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև ի կատարած սորին»:

Այս յառաջաբանէն կը տեսնուի, թէ Բուզանդ երրորդ կ'անուանէ իւր առաջին դպրութիւնն, ուստի կը դնէ ուրիշ երկու դպրութիւն կամ գիրք յառաջ քան զիւրն: Թէ ինչ էին այս երկու դպրութիւնք՝ կ'իմացունէ Բուզանդ առաջին գլխոյն մէջ: Ըստ Բուզանդայ կային երկու պատմութիւնք, մին՝ Թադէոսի առաքելոյն քարոզութենէն մինչև յակամայ դարձն առաքելասպան Սանատրկոյ և ի մահ առաքելոյն, երկրորդն՝ ի վարդապետութենէն Գրիգորի մինչև ի կատարումն հանգստեան նորա և Տրդատայ: Այս անցեալ ժամանակաց պատմութիւնք, ասէ Բուզանդ, գրուեցան յայլոց. մեք հոս համառօտիւ կը յիշենք, կապելու համար մեր պատմութիւնն երկու առաջին պատմութեանց հետ: Այսպէս ինչ որ առաջին և միջին է և գրուեցաւ ի ձեռն այլոց՝ հոս կը մտնէ իբրև հուն կամ անցք ի վերջին պատմութիւնն, որ է մերն: Զայս պարտ է իմանալ Բուզանդայ Ա.. գլխէն, որ այնպէս մութ և կրճատ է, մինչև յիրաւի համարել մեզ զայն աղաւաղեալ: Ահա բանք Բուզանդայ. «Ի քարոզութենէն Թադէոսի առաքելոյ և նորուն յելից և ի մարտիրոսութենէն մինչև ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն, և յառաքելասպան Սանատրկոյ արքային

մինչև յակամայ հնազանդելն հաւատոյն, և ի Նորան (կարգա՝ ի կատարումն) հանգստեան արքային Տրդատայ, զանցեալ իրացն զառաջնոցն զվարս լուացն և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց՝ այն ամենայն ի ձեռն այլոց գրեցան։ Բայց և մեք ի մերում տստ եդաք փոքր ի շատէ ի կարգի պատմութեան, ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրացն կարգին։ Վասն զի է ինչ մեր պատմութիւն, որ առաջին է, և է ինչ, որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղև՝ այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ։ Բայց զի մի ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հուն մի՝ նշանակեցաք. զոր օրինակ ազխս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութեան։ Այս ինչ, որ ինչ յետ այսորիկ կարգի՝ տստ պատմի առաջն առ սմին»։

Զայս մթին գլուխ կամ յառաջաբան Բուզանդայ, որ, որպէս տեսցաք կամ թարգմանչէն գրուած է այսպէս չփոթ և կամ, որ աւելի հաւանական է՝ աղաւաղեալ է ադէտ գրիչներէ, որք խախտելով պատմութեան կարգը, մթացուցած են իմաստը՝ պարտ է ընթեռնուլ այսպէս. «Ի քարոզութենէն Թադէոսի առաքելոյ, և ի նորուն ելից և ի մարտիրոսութենէն մինչև առաքելասպան Սանատրկոյ արքային յակամայ հնազանդելն հաւատոյն, և ի վարդապետութենէն Գրիգորի և յիւրոյ հանգստենէն մինչև ի հանգիստն Տրդատայ, զանցեալ իրացն զառաջնոցն զվարս լուացն և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց՝ այն ամենայն ի ձեռն այլոց գրեցան։ Բայց և մեք (գնաւին) ի կարգի տստ պատմութեան մերոյ եդաք փոքր ի շատէ, ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին։ Ապա է ինչ ի մերում պատմութեան, որ առաջին է, և է ինչ՝ որ միջին, որք ի ձեռն այլոց գրեցան. բայց զի մի ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հուն մի՝ նշանակեցաք, զոր օրինակ ազխս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութեան։ Իսկ որ ինչ վերջինն է, այսինքն՝ որ ինչ յետ այնոցիկ կարգի՝ տստ պատմի առաջն առ սմին»։ Այսպէս կարգել պատշաճ թուեցաւ մեզ՝ զԲուզանդ ըստ Բուզանդայ ուղղելով։

Բուզանդ Բ. գլխոյն մէջ կը դնէ համառօտիւ Հայոց երկրորդ դարձին պատմութիւնն առ Տրդատաւ ի ձեռն Գրիգորի մինչև ի հանգիստ նորա, որպէս և յաջորդին նորա Արիստակեսայ, նշանակելով զտեղի շիրմաց նոցա. «Ի թագաւորութեանն Տրդատայ որդւոյն Խոսրովու, բարեպաշտութեամբ, հաճոյական սիրով և աստուածպաշտութեամբն հաւատոյ, ծանօթութեամբ ի ձեռն Գրիգորի որդւոյն Անակայ, մեծի քահանայի. և որոյ ընդ նմին կրսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վար-

դպրեւորութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչեւ յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ: Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան և արժանի եղեալ շիրիմք հանգստեան. մեծին Գրիգորի՝ ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն որ անուանեալ կոչի Թորդան, և որբոյն Արիստակեայ որդւոյ նորա յետ խոստովանութեան մահուն իւրոյ, և տարան զնա ի Ծոփաց գաւառէ, և եդին զնա յԵկեղեաց գաւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»: Զայս գլուխ ևս, որ նոյնպէս մութ է և կրճատ՝ պարտ է ընթեռնուլ այսպէս. «Լուսաւորութիւնն Հայոց եղև ի թագաւորութեանն Տրդատայ որդւոյն Խոսրովու, այն որ հաճոյական սիրով հնազանդեցաւ աստուածպաշտութեան հաւատոց ծանութութեամբ ի ձեռն Գրիգորի, Անակայ որդւոյն, մեծի քահանայապետի. յետ որոյ կրտսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչեւ յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ: Սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան և շիրիմք հանգստեան, մեծին Գրիգորի՝ ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն որ անուանեալ կոչի Թորդան, և որբոյն Արիստակեայ որդւոյ նորա՝ յԵկեղեաց գաւառի, ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ, ուր և յետ խոստովանութեան մահուն իւրոյ՝ տարան զնա ի Ծոփաց գաւառէ:

Յայտնի է ուրեմն, թէ առ Բուզանդաւ կային երկու գիրք գրեալք յառաջ քան զնա, անտարակոյս յունարէն լեզուաւ: Առաջին պատմութիւնն էր թերևս վկայաբանութիւն ինչ կամ հոգևոր վէպ առաջնոյ դարձին Հայոց ի ձեռն Թադէոսի, նման Ղերուբնայի ումեմն ընծայեալ ասորական պատմութեան զդարձէն Աբգարու. իսկ երկրորդն էր վկայաբանութիւն Գրիգորի և Հռիփսիմեանց, յորոյ շինեալ է Ագաթանգեղոսի վկայաբանական մասն հանդերձ պատմութեամբ Գրիգորի և Տրդատայ: Այս երկու պատմութեանց վերայ, (որ թուի թէ յարգի էին ի մէջ Հայոց առ Բուզանդաւ, իբրև պատմութիւնք քրիստոնէութեան ժամանակին Հայոց, քանզի հեթանոսութեան ժամանակէն չունէին փոյթ քրիստոնեայ նախնիք մեր) յաւել Բուզանդ զիւրն՝ իբրև երրորդ, բաժանեալ ի չորս դպրութիւնս, զորս կոչեց ոչ Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ, այլ իբր մասն առաջին երկուց՝ Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ:

Այս տեսութեամբ կարեն, թուի մեզ, անհետանալ այն բանի մեկնութիւնք, թէ առաջին երկու դպրութիւնք ակնարկեալք ի Բուզանդայ՝ ունէին զպատմութիւն Հայոց հեթանոսութեան ժամանակին, յօրինեալ ի նմին իսկ Բուզանդայ. թէ բանք Խորենացւոյն, «ի բայ բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ»՝

կ՚ակնարկեն այն պատմութիւնը, և թէ Բուզանդարանն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ Դիոդորոսի Սիկիլիացւոյն մատենադարանին նման այլ և այլ ազգերու պատմութեան հաւաքածոյ, ուր կը գտնուէր նաև հնագոյն պատմութիւնն Հայոց։

ԶԱնատրկոյ և զԱնակայ, որոց մէն մի ունի գլուխ դեր ի պատմութեան կրկին դարձին Հայոց՝ խօսուած է այլուր. հոս այսչափ միայն ասել բաւական է, թէ Բուզանդ այս ակնարկութիւններն առած է հաւանօրէն այն երկու վկայաբանական գրուածներէն, զորոց ասէ թէ կային իբրև առաջին և երկրորդ դպրութիւն յառաջ քան զիւրն։

Դ. Երբ Հայոց առ Արշակունեօք կ՚երթան այնպէս կից ընդ Հռոմայեցւոյն, զի առանց գիտելոյ զպատմութիւն այս վերջնոց՝ գիտել որպէս պարտն է զՀայոցն՝ չէ հնար։ Կայ միւս ևս մեծ սխալ, զոր ունէին նախնիք մեր և զոր ունիմք մեք ևս, այն է կարծել, թէ միջամտութիւնն Հռոմայեցւոց յիրս Հայոց եղև վնասակար այս վերջնոց։ Եթէ քաջ միտ դնենք դիպաց մեր պատմութեան՝ կը տեսնենք, թէ մին ի պատճառաց, և թերևս գլխաւորն, տակաւ նուազելոյ և ջնջելոյ հարստութեանն Արշակունեաց ի համարոյ ազգաց՝ եղև ոչ եթէ զօրանալն, այլ մանաւանդ տկարանալն ազդեցութեան Հռոմայեցւոց ի վերայ Հայոց։ Այն ազդեցութիւն էր, որ պահեց այնչափ երկար զՀայս ինքնօրէն ազիկամխ և ունեցաւ Հայոց համար ամբաւ օգուտներ, յորոց մին է քրիստոնէութիւնն և արդիւնք նորա՝ հայերէն գիրն և դպրութիւն։ Առանց նկատելոյ զայն ազդեցութիւն՝ անհնար է մեկնել, թէ ինչպէս Հայ մթնոլորտի մէջ, խկիւ և ի բնէ արևելեան, կրցաւ ոչ միայն ծագել, այլև տևել այնպիսի երևոյթ մի, որոյ բուն երկինքն էր, գէթ յայնժամ՝ արևմտեանն։ Եթէ պարտիմք ընդունել իբրև պատմական և շատերէ ընդունուած, թէ քրիստոնէութիւնն գտաւ ինքեան նպաստաւոր հին արևմտեան աշխարհի այն մասը միայն, որ կը գտնուէր եթէ ոչ ընդ իշխանութեամբ, գէթ ընդ ազդեցութեամբ հռոմէական պետութեան, մինչ տեղիք, որ արտաքոյ էին այն ազդեցութեան կամ հակառակորդ այնմ՝ մնացին զուրկ ի նրմանէ՝—պարտիմք ընդունել, թէ նաև Հայաստան կը հանդիպէր նոյն բախտին, եթէ չէր վաղուց մտած ընդ հռոմէական ազդեցութեամբ։ Ո՞չ ապաքէն հռոմէական ազդեցութեան արդիւնք են, զի Տրդատ, երկար ժամանակաւ կրթեալ ի մէջ Հռոմայեցւոց (ըստ աւանդութեան ասեմք), «Յունական աշխարհական դպրութեանն յառաջագոյն տեղեակ» (Ագաթ. ՃԻԴ, որ չէ անհաւանական), դաշնակից նոցա և ի ձեռն նոցա տիրեալ իւր հայրենի աշխարհին կամ հաստատեալ՝ լինի առաջին քրիստոնեայ թագաւոր Հայոց, և այս գրեթէ

միևնոյն ժամանակ ընդ առաջին քրիստոնեայ կայսեր։ Վերջին և կատարեալ յաջողութիւն Հայ այրուբենին կը պատմուի լեալ ազդեցութեամբ և ըստ օրինակի յունականին։ Հայաստանեայց եկեղեցւոյ կրօնական և եկեղեցական յերկրուածն կ'ելլէ յունական եկեղեցւոյ ծոցէն իբրև ծնունդ նորա։ Պատմագրութիւնն իսկ, յոյն-հռոմէական հանճարոյ գիւտ՝ կ'սկսի Հայոց մէջ ի ձեռն այնպիսի անձանց, որ են «հայրենի արուեստի հռոմարէն և յունարէն ուսեալ դպրութիւն» (Ագաթ. Յաջք.), և կամ «ազգաւ Հոռոմ»։ Յոյն-հռոմէական ազդեցութեան ոչ զօգուտն միայն այլև զհարկը՝ գիտէր գոնէ Հայոց կղերական մասն, զորմէ յիրաւի է ասել՝ ինչ որ ասացաւ զմեծէն Սահակայ—«Զյունովք գլեալ խորհրդովն»։ Զյարումն Հայոց յարևմուտս խոստովանեցաւ առաջի Պերոզի Գիւտ կաթողիկոս, ամբաստանեալ իբրև մէտ ի Յոյնս. «Այլ որ ասենդ, թէ երթևեկք նորա (են) ի Հոռոմս՝ ոչ ըստ դորա կարծեաց և խօսից այդպէս են երքն, այլ վասն զի զդպրութիւն գիտութեանս մերոյ և զիմաստ բանաւոր ուսմանց յաշխարհէն Հոռոմոց ուսեալ եմ, և են իմ անդ ծանօթք բազում և ուսումնակիցք. այլ և զկերպարան հանդերձիցս զոր ունիմքս մեք՝ անտի գնեմք» (Փարպ. ԿԳ.)։ Այն անցեալ հռոմէական ազդեցութեան շնորհ է ապաքէն, զի այսօր Հայն, մինչ ի տկարագոյն անկեալ ցեղից՝ կը պարծի իբրև անդամ եւրոպական քրիստոնեայ մարմնոյն, և ունի գիր և դպրութիւն եւրոպական ոճով, մինչ համազգին նորա և դրացին, անկախ, այլ բարբարոս Պարսիկն՝ անմասն է յերկոցունց միանգամայն։ Այս տեսութեամբ սկսինք զպատմութիւնն Արշակունեաց խառն ընդ հռոմէականին և ընդ պարթևականին։ Պատճառ սորին յայտնի է. Հայոց այս երկրորդ հարստութիւնն, որ կը կոչուի Արշակունեաց, ինչպէս տեսանք՝ սկսաւ Հայոց հին Արշակունի, այն է թագաւորական ցեղիւ, և ինչպէս պիտի տեսնենք յետոյ՝ յետ ունելոյ զգահն առ ժամանակ մի՝ պատուաստեցաւ ուրիշ թագաւորական, այն է Պահլաւ ցեղիւ, որ տևեց մինչև ի վախճան այսր հարստութեան։ Որովհետև առաջին ցեղն սկսաւ ի զօրանալ հռոմէական ազդեցութեան յԱսիա, և երկրորդն ի զօրանալ պահլաւական ազդեցութեան, իբրև ոսոխի հռոմէականին, և Հայք ունեցան անդադար գործ ընդ այս երկուց՝ հարկ է խօսել նախ զոցանէ երկոցունց, այնչափ միայն սակայն, որչափ հարկաւոր է ի գիտութիւն մերոյն, քանզի նպատակ մեր չէ տալ կատարեալ հռոմէական և կամ պարթևական պատմութիւն, այլ, որչափ մարթ է, կատարեալ Հայ պատմութիւն։

ԳԼՈՒԽ Դ.

ՀՌՈՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ՀԱՄԱՌՕՏԻՒ։

1. Հռոմ։ 2. Պատմութիւն վեցհարիւրամեայ ժամանակի։

1. *Հռոմ, ի սկզբան մայրաքաղաք քաղաքակիրթ աշխարհի, և ապա միջավայր քրիստոնէութեան, և այժմ թագաւորանիստ քաղաք Իտալիոյ, անուանի հոյակապ շինուածովք և անթիւ յիշատակօք պատմութեան և գեղեցիկ արուեստից՝ է ի միջին Իտալիա, ի գաւառին, որ կը կոչուէր Լատիոն, յորմէ Լատին անունն, որ կը տրուի Հռոմայեցւոց, մանաւանդ լեզուին նոցա։ Հռոմ շինեցաւ ըստ աւանդութեան 753 ամօք յառաջ քան զՔրիստոս, առ Տիբեր գետով, իբր 19 հազարամէտր յարևելից հիւսիսոյ փոքու քաղաքին Ոստիայ, ուր Տիբերիս գետ կը թափի ի ծովն Տիւրենական։ Թողլով սկզբան պատմութիւնը, որ կիսով չափ առասպելական է՝ առնունք համառօտիւ յաջորդ վեցհարիւրամեայ ժամանակի պատմութիւն, որ լի է ներքին և արտաքին կռիւներով։*

2. *Պատմութիւն վեցհարիւրամեայ ժամանակի։* *Իշխանութիւն քաղաքին, որ էր ի սկզբան թագաւորութիւն՝ բարձաւ 509-ին արտաքսմամբ վերջին բռնաւոր թագաւորին Տարկուինեայ, Գոռոզն կոչեցելոյ, և վարչութիւնն անցաւ ծերակուտին, որ կար արդէն առ թագաւորութեամբ երբև խորհուրդ կամ ժողով աւագանւոյ ի պատրկաց, այսինքն յազնուականաց, քանզի Հռոմի ժողովուրդն ի սկզբանէ անտի կը բաժնուէր երկու, ազնուական կամ պատրիկ և ռամիկ։ Իսկ և իսկ ընդ տեսչութեամբ ծերակուտին հաստատուեցան երկու տարեւոր իշխանք, որ կ'ընտրուէին ի միջոյ ազնուականաց՝ բդեշխ կամ հիւպատ անուամբ (ի սկզբան կոչուէին պրետորք)։ Բդեշխից հետ դրուեցան երկու հազարապետք, վերակացուք հասարակաց գանձուն՝ նոյնպէս ի միջոյ ազնուականաց։ Այսպէս թագաւորութիւնն փոխուեցաւ յազնուապետութիւն։ Իբր 500-ին հաստատուեցաւ դիկտատորութիւնն, որ էր բացարձակ իշխանութիւն, որ կը տրուէր միում ումեք երբև թագաւորի, և կը տևէր վեց ամիս (միայն դժուարին ժամանակներ)։*

Ազնուականք, յորոց ձեռս էր ամէն իշխանութիւն՝ վաղ հարըստացան և կը բռնանային ռամկին վրայ, ուստի ծագեցան ընդհուպ ներքին խռովութիւնք, և հաստատուեցան ռամկապետք (տրիբունք) և շինուածապետք։ Ռամկապետաց պաշտօնն էր պաշտպան լինել իրաւանց ռամկին, իսկ շինուածապետացն՝ հսկել հասարակաց պարէնին, մանաւանդ ցորենոյ առատութեան և դիւրագնութեան։ Ռամիկն այսչափ զօրանալով՝ սկսաւ խնդրել արտօնութիւններ, որ ցայնժամ ազնուականաց միայն անկ էին։ Շատ երկիրներ կամ արտեր, որ հասարակաց էին և տրուած էին ազնուականաց իբրև ի վարձու, մշակել և տալ տասանորդ հասարակաց գանձուն՝ սկսած էին համարուիլ իբրև ստացուած նոցա։ Ռամիկն որոյ երկիրն փոքր էր՝ սկսաւ պահանջել ագարակային օրէնք, որով տրուէր ռամկին մասն այն երկիրներէն։ Այս օրէնք, որ կոչուեցաւ Կասեան օրէնք— քանզի նախ Կասիոս հիւպատոս (485) արար այնպիսի բաժանումն— կրեց սաստիկ հակառակութիւն ազնուականներէն և մերժուեցաւ։ Նաև դատաւորական իշխանութիւնը կը վարէին ազնուականք ըստ կամի և շատ անգամ մեծ անիրաւութեամբ, ուստի ռամիկն սկսաւ պահանջել նաև գրով օրէնք։ Յետ ծանր խռովութեանց՝ ազնուականք հաճեցան այսմ, և ընտրուեցան պատրիկներէն տասն այր, որ գրեցին կամ խմբագրեցին զօրէնսն Երկոտասան տախտակաց (450). սակայն չվերցաւ բռնութիւնն, քանզի իշխանութիւնն էր միշտ ի ձեռս ազնուականաց։ Ուստի ռամիկը կը պահանջէր (445), հանդերձ արտօնութեամբ խառն ամուսնութեան, այսինքն ռամկաց ամուսնանալոյ ընդ ազնուականս՝ նաև պաշտօններու հաւասարութիւն։ 445-ին վերցաւ հիւպատոսութիւնն և հաստատուեցան խառն ազնուականներէն և ռամկէն չորս զինուորական տրիբունք, որ ունէին հիւպատոսի պաշտօն, և պատրիկներէն երկու համարակարք, որոց գործն էր ցեղերուն ազգահամարը բռնել և ազնուականաց, ծերակուտի անդամներուն իսկ՝ վարուց և գործոց վրայ հսկել։

Այս ամենայն կարգք և օրէնք ոչինչ օգնեցին. աղքատութիւն և բռնութիւն մնացին միշտ ծանրացեալ ռամկին վրայ։ Վերջապէս 376-ին Լիկինիոսի տրիբունի թելադրութեամբ առաջարկուեցաւ նոր օրէնք։ Ըստ այս օրինաց, որ կոչուեցաւ Լիկինեան օրէնք—1. պիտի հաստատուէին դարձեալ հիւպատոսք երկու, մին միշտ ռամկէն։ 2. Ազնուականաց թոյլ պիտի չտրուէր հասարակաց երկիրներէն ունենալ ժառանգութիւն աւելի քան 500 արտավարի գետին, մնացեալն պիտի բաժնուէր ռամկին։ 3. Պարտուց գումարներէն պիտի հանուէին արդէն հատուցեալ տոկոսիքն։ Օրէնքն ընդունուեցաւ մեծ դժուարութեամբ 366-ին, և ռամիկն առ սակաւ սակաւ եղաւ

մասնակից ամէն պատուոյ և իշխանութեան (366—333), դիկտատորութեան, համարակարութեան, հիւպատոսութեան, քրմապետութեան անգամ, և եղաւ կատարեալ հաւասարութիւն։ Այսպէս ազնուապետութիւնն փոխուեցաւ ընկերհաշտութիւն (հանրապետութիւն)։ Թէպէտ ատելութիւնն և հակառակութիւն ի մէջ ազնուականաց և ռամկին չվերցաւ ի սպառ մինչև կայսրութիւնը՝ սակայն քաղաքային առաքինութիւն և զինուորական քաջութիւն սկսան այնուհետև։ Ի միջոցի իբրև 220 ամաց (363—133) Հռոմ եղաւ աշխարհակալ տէրութիւն։ Նուաճեցան Ստորին Իտալիա (342—200), Յունական գաղթականութիւնքն յԻտալիա՝ ինչպէս Տարենտոն, Սիրակուսա և բովանդակ Սիկիլիա (280—272)։ Սիկիլիոյ պատճառաւ, որ կը վերաբերէր Կարքեդոնացւոց՝ ծագեցաւ Պունիկեան պատերազմն, առաջին, երկրորդ, երրորդ, որ վերջացաւ կործանմամբ Կարքեդոնի (263—146)։ Վերին Իտալիա, մինչև Ալպեան գօտին (226—220), Սպանիա (216—206), որ նոյնպէս էր Կարքեդոնացւոց. պարտութեամբն Անտիոքոսի մեծի (190) Փոքր Ասիա անկաւ ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց. Մակեդոնիա, Յունաստան, Լիբիկէ նուաճեցան (148—130), Պերգամա տրուեցաւ նոցա կտակաւ (133)։

Հռոմէական պետութեան այս մեծ իշխանութիւնն, ամբաւ հարստութիւնք, որ եկան նուաճեալ երկիրներէ՝ փոխանակ լաւացունելու Հռոմի ժողովրդեան վիճակը՝ վատթարացուցին մանաւանդ։ Ոմանք միայն դիզելով ամբաւ մեծութիւն՝ առին ամէն իշխանութիւն ի ձեռս, և կը գործէին անհնարին բռնութիւն և անիրաւութիւն, ընդ որովք կը հեծէր ժողովուրդն։ Ժողովրդեան բարեկամներէն ոմանք, ինչպէս Գրակքեանք, ջանացին չափ դնել հարստութեան և բռնութեան այն ազնուականաց, բայց հալածուեցան չարաչար և սպանուեցան (121)։ Մարիոս՝ ռամկին, և Սուղղա՝ ազնուականաց կողմանէ՝ ելան ոսոխ իրարու և թափեցին շատ ամեղ արիւն։ Սակայն այս երկու կատաղի զօրավարք մեծ նպաստ մատուցած էին ի պատերազմունս Նումիտիոյ (118—106) (Թագաւորութիւն յԱփրիկէ յարևմտից Կարքեդոնի) և Գերմանաց (113—103), ի պատերազմին դաշնաւորաց (91—88), (Իտալացի ժողովուրդք, Սամնիտացիք, Մարսք, զորս Հռոմայեցիք ընելով իւրեանց դաշնակից՝ խոստացած էին տալ նոցա հաւասարութիւն, և ապա զլացան)։ Կը մնար Հռոմայեցւոց մի միայն ոխերիմ թշնամի, այն էր Միհրըդատ արքայ Պոնտացւոց, և Տիգրան մեծ արքայ Հայոց, որոց միացեալ զօրութիւնն կ'սպառնայր մեծ վտանգ Հռոմայեցւոց ազդեցութեանն յԱսիա։ Այս վտանգին բնական արդիւնքն էր իբր քառանամեայ պատերազմն ընդդէմ Միհրդատայ և Տիգրանայ։ Պարտու-

թեամբ այս երկուց վերջնոց և նուաճմամբ երկրին Ասորւոց մինչև յԵփրատ՝ Հռոմ, որ էր եւրոպական պետութիւն՝ եղաւ միանգամայն ասիական, ունենալով ինքեան դրացի զՀայս, որ էին արդէն կիսով չափ ընդ Հռոմայեցւովք, և զՊարթևս, որոց իշխանութիւնն կը հասնէր յայնժամ (64) մինչև ցԵփրատ: Զայսու ժամանակաւ հռոմէական հանրապետութիւնն կը փոխուի յագնուապետութիւն, և իշխանութիւնը կը բաժնուի եռապետաց, այսինքն երեք իշխանաց: Առաջին եռապետք եղան Պոմպէոս, Կեսար և Կրասոս (59 նախ քան զՔր.), և ապա Հոկտաւիանոս, Անտոնիոս և Լեպիդոս (42): Հռոմայեցիք, որ յետ մահուն Միհրդատայ և պարտութեանն Տիգրանայ չունէին յԱսիա այլ ոսոխ բայց միայն զՊարթևս՝ խորհեցան զնոսա ևս խոնարհեցունել: Զայս փորձեց նախ Պոմպէոս, յետ առնելոյ դաշնակից զՏիգրան, երթալով Պարթևաց վրայ. բայց հասնելով մինչև Տիգրիս՝ արգելուեցաւ ներքին կռուոց պատճառաւ: Զնոյն փորձեցին աւելի յանդգնաբար Կրասոս և Անտոնիոս, բայց չյաջողեցան, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Եռապետութիւնն չտևեց ընդ երկար: Վերջին եռապետներէն Հոկտաւիանոս և Անտոնիոս — քանզի Լեպիդոս մերժուած էր — տուին պատերազմ ընդ միմեանս, մինչև պարտութեամբն և մահուամբ Անտոնիոսի ի ճակատուն Ակտիոնի (31)՝ վերցաւ եռապետութիւնն, և Հոկտաւիանոս եղաւ ինքնակալ կայսր՝ Օգոստոս Հոկտաւիանոս անուամբ: Այսպէս ազնուապետութիւնն ևս փոխեցաւ ի կայսրութիւն:

ԳԼՈՒԽ Ե.

ՀՌՈՄԱՅԵՑԻ ԿԱՅՍԵՐՔ:

1. Օգոստոս Հոկտաւիանոս: 2. Յաջորդք նորա:

1. Օգոստոս Հոկտաւիանոս (31 նախ քան զՔր.—14 յետ Քր.), էր եղբօրորդի և որդեգիր Կեսարու: Առ սովաւ բոլոր Եւրոպա, բայց ի հիւսիսային բարբարոս մասնէ, նոյնպէս հիւսիսային Ափրիկէ և Եգիպտոս, բայց ի միջին և հարաւային անծանօթ վայրեններէ՝ էին արդէն ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց: Գալով յԱսիա՝ ամբողջ Փոքրն Ասիա և յառաջակողմն Ասիոյ մինչև Եփրատ՝ էր նոյնպէս ընդ Հռոմայեցւովք: Հայաստան, մեծազօրին Տիգրանայ իշխանութեան երկիրն, էր նոյնպէս ընդ ազդեցութեամբ նոցա: Եթէ կար ազգ ոսոխ Հռոմայ՝ այն էր Պարթև ազգն, և այն ևս արդէն տկարացեալ և խոնարհեալ առաջի Հռոմայ, ինչպէս պիտի տեսնենք: Հիւսիսային բարբարոսներէն հռոմէական պետութեան եւրոպական մասին սահմանակից Գերմանք միայն կը խլրտէին, բայց նոքա ևս ինչ էին այն հզօր պետութեան առջև:

Օգոստոսի գերդաստանէն մեր պատմութեան համար յիշուելու արժանի անձինք են. 1. Տիբեր, ուրջու (խորթ որդի) Օգոստոսի, ի Լիւեայ կնոջէն նորա, առաջին ամուսնութենէ այս վերջնոյ. 2. Գերմանիկոս, եղբօրորդի Տիբերի, այսինքն՝ որդի եղբօր նորա Դրուսոսի և 3. Գայիոս, թոռն Օգոստոսի ի դստերէն նորա Յուլեայ: Օգոստոս յետ մահուն Գայիոսի, զոր կը սիրէր՝ տալով Տիբերի որդեգրել (սահմանել ժառանգ) զԳերմանիկոս՝ ինքն ևս առնէ որդեգիր զՏիբեր (Կլաւդիոս Ներոն):

2. *Յաջորդք Օգոստոսի:*

1. Տիբեր (14—37):
2. Կալիգուլա, որդի Գերմանիկոսի (37—41):
3. Կլաւդիոս, հօրեղբայր Կալիգուլայ (41—54):
4. Ներոն, առաջին ամուսնութենէն Ագրիպպինայ, դստեր Գերմանիկոսի (54—68):

Յետ մահուն Ներոնի, մինչև յարևմուտս Վինդէքս, Գալբա, Օթոն և Վիտեղլիոս իրարմէ կը յափշտակէին աթոռը (68—69)՝ յԱսորիս զօրքը կ'ընտրէ

5. զՎեսպասիանոս (69—79)։

6. Տիտոս, որդին (79—81)։

7. Դոմետիանոս, եղբայր նորա (81—96)։

8. Ներուա (96—98)։

9. Տրայիանոս (98—117)։

10. Ադրիանոս (117—138)։

11. Անտոնինոս Պիոս (138—161)։

12. Մարկոս Աւրեղիոս (161—181), որում բարձակից եղաւ ի սկզբան Լուկիոս Վերոս (161—169)։

13. Կոմոդոս, որդի Մարկոսի Աւրեղեայ (180—192)։

Յետ մահուն Կոմոդոսի ընտրուեցան (193) զօրականէն կայսր՝ Պերտինաքս և Յուլիանոս՝ ի Հռոմ, Նիգէր՝ յԱսորիս, Ալբինոս՝ ի Բրիտանիա, Սեպտիմոս Սևերոս՝ ի Լիւրիկէ։ Սկսաւ քաղաքային պատերազմն, և յաղթեց

14. Սեպտիմոս Սևերոս (193—211)։

15. Գետա և Կարակալլա, որդիք Սեպտիմոսի։ Կարակալլա տալով սպանանել զեղբայրն՝ կը թագաւորէ (211—217)։

16. Մակրինոս (217—218)։ Նոյն տարին

17. Հեղիոգաբաղոս (217—222)։

18. Աղէքսանդրոս Սևերոս (222—235)։

19. Մաքսիմինոս Թրակացի (236—238)։ Սա կենդանութեամբ նորա կ'ընտրուին Գորդիանոսք Ա. և Բ, հայր և որդի, բայց կը յաղթուին Մաքսիմինոսէ, և կ'ընտրուին՝ Պուպիենոս Մաքսիմոս և Կեղիոս Բաղբինոս, բայց սոքա ևս կ'սպանուին, և կ'ընտրուի

20. Գորդիանոս Գ, թոռն Գորդիանոսի Ա. (238—244)։

21. Փիլիպպոս Արաբացի (244—249)։

22. Դեկոս (249—251)։

23. Գաղոս Տրեբոնիանոս (251—253)։

24. Վաղերիանոս (253—259)։

25. Գաղիենոս, որդին (259—268)։ Սա սովաւ քայքայեցաւ տէրութիւնն. շատ նահանգներու կուսակալներ եղան ինքնագլուխ, որ կը կոչուին Երեսուն բռնաւորք։

26. Կղաւդիոս Բ. (268—270)։

27. Աւրեղիանոս (270—275)։

28. Տակիտոս (275—276)։

29. Փլորիանոս (276)։

30. Պրոբոս (276—282):

31. Աւրեղիոս Կարոս (282—283):

32. Կարինոս և Նումերիանոս, որդիք Կարոսի (283—284):

33. Դիոկղետիանոս (284—305): Սա ընտրեց ինքեան գահակից զՄաքսիմիանոս (286—305), և բաժնուեցաւ տէրութիւնն: Արեւելք եղաւ Դիոկղետիանոսի, և արեւմուտք՝ Մաքսիմիանոսի:

Երկոքին կայսերք տեսնելով զանձինս անզօր առ ի գդէմ ունել սահմանակից ազգաց, որ սկսած էին զօրանալ՝ ընտրեցին ինքեանց մէն մի օգնական Կեսար անուամբ, մինչ ինքեանք կոչուեցան Օգոստոս: Դիոկղետիանոս ընտրեց զԳաղերիոս, և Մաքսիմիանոս՝ զԿոստանդ Քլորոս, զհայրն մեծին Կոստանդիանոսի, Կղաւդեայ Բ-ի թոռնը: Այսպատմբեալ և գրեթէ բաժանեալ նահանգք նուաճեցան. Մաքսիմիանոս հնազանդեցուց զԱփրիկէ (292), Կոստանդ՝ զԲրիտանիա (296), Դիոկղետիանոս՝ զԵգիպտոս (296), Գաղերիոս յաղթելով Պարսից՝ ընդարձակեց հռոմէական Ասիոյ սահմանը մինչև ի Տիգրիս (297):

Յամին 305 Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս օգոստոսք կը հրաժարին, Գաղերիոս և Կոստանդ, կեսարք՝ լինին օգոստոս. և Մաքսիմինոս (Դայա) և Սեւերոս կ'ընտրուին կեսար:

Այս չորս իշխանաց բաժիններն էին—Կոստանդայ՝ արեւմուտք, Սեւերոսի՝ Իտալիա և Ափրիկէ, Մաքսիմինոսի՝ Ասորիք, Պաղեստին և Եգիպտոս, Գաղերիոսի՝ Փոքր Ասիա, Իլիւրիկէ և Թրակիա:

Յետ մահուն Կոստանդայ (306) կը յաջորդէ նմա որդին Կոստանդիանոս:

Յամին 306 Մաքսիմիանոս հրաժարելուն և որդին Մաքսենտիոս լինին հաղորդ իշխանութեանն, և թիւ իշխանացն լինի վեց —Գաղերիոս, Մաքսիմինոս, Սեւերոս, Կոստանդիանոս, Մաքսիմիանոս և Մաքսենտիոս: Թէպէտ յաջորդ տարին (307) Սեւերոս կը սպանուի՝ փոխանակ նորա կ'ընտրուի Լիկինիոս (ըստ մեզ՝ Լիկինէս): Այս իշխաններէն չորք հետզհետէ մեռան կամ սպանուեցան, և մնացին (313) երկուք միայն, Լիկինիոս և Կոստանդիանոս: Իբր ութ տարի յետոյ (322)՝ կը գրգռին երկու կայսերք իրարու դէմ ի պատերազմ: Լիկինիոս կը յաղթուի (323), և

34. Կոստանդիանոս մեծ՝ լինի միահեծան տէր և առաջին քրիստոնեայ կայսր հռոմէական պետութեան (324—337):

Յետ մահուն Կոստանդիանոսի մեծի կը բաժնուի տէրութիւն յերիս որդիս նորա.

35. Կոստանդիանոս Բ. (337—340) կ'առնու զԳաղիա,

36. Կոստանդ (337—361) զարեւելս, և

37. Կոստաս (337—350) զԻտալիա և զԻլիւրիկէ:

Յետ մահուն Կոստանդիանոսի Բ. բոլոր արեւմուտք կը միանան ընդ իշխանութեամբ Կոստասայ, և այսպէս Հռոմէական պետութիւնն լինի երկու, արեւմտեան և արեւելեան:

Յետ մահուն Կոստասայ դարձեալ կը միանայ տէրութիւնն ընդ ձեռամբ Կոստանդայ, որուն կը յաջորդէ

38. Յուլիանոս եղբօրորդի մեծին Կոստանդիանոսի (361—363):

39. Յովիանոս (363—364):

40. Վաղենտինիանոս (364—375)՝ յարեւմուտս, և եղբայր նորա

41. Վաղէս (364--378)՝ յարեւելս, և այսպէս դարձեալ կը բաժնուի տէրութիւնն:

Վաղենտինիանոսի կը յաջորդէ յարեւմուտս, որդին

42. Գրատիանոս (375—385):

Վաղեսի կը յաջորդէ յարեւելս՝.

43. Թէոդոս Ա. մեծ (379—395), որ և միացուց դարձեալ տէրութիւնը յետ մահուն Գրատիանոսի:

Թէոդոսի յաջորդեցին երկու որդիք նորա

44. Ոնորիոս (395—423) յարեւմուտս, և

45. Արկադէոս (395—408) յարեւելս, որում յաջորդեց յարեւելս՝

46. Թէոդոս Բ. փոքր (408—450): Աս սովաւ վերջացաւ Հայոց Արշակունեաց թագաւորութիւնն (428), ուստի և հոս դադրեցունելով մեր այս համառօտ տեսութիւնն Հռոմայեցւոց պատմութեան վրայ՝ առնունք զՊարթեւացն և զՊարսից:

ԳԼՈՒԽ Ջ.

ՊԱՐԹԵՒՔ։

1. Պարթեւք։ 2. Գործ նոցա ընդ Սելեւկեանս։ 3. Ընդ Հռովմայեցիս։ 4. Պահլաւ տոհմն։

1. Ոչինչ ընդհատ ի Հռոմայեցւոց Պարթեւք և յետ նոցա Սասանեանք ունեցան գործ ընդ Հայոց. ուստի հոս հարկ է մեզ դնել նաև զպատմութիւն սոցա, որչափ հնար է համառօտիւ, ի քաջ տեղեկութիւն մեր ազգային պատմութեան։

Մեր պատմութեան առաջին մասին մէջ, էջ 223—234, խօսեցանք զՊարթեւաց այնչափ միայն՝ որչափ պիտոյ էր մեր յայնժամու խնդրոյն, որ էր ցուցանել, թէ թագաւորեցուցանելն Արշակայ քաջի, ըստ Խորենացւոյն, զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ Հայոց և սերելն հայ Արշակունեաց ի սմանէ՝ չունի ամենևին պատմական հիմն։ Հիմնադիր Պարթեւական պետութեան է Արշակ Ա., առանձինն անուամբ՝ Դարա (Դարեհ կամ Զարեհ), ի ցեղէն Դարեհի Կոդոմանոսի վերջին թագաւորին Պարսից Աքեմենեանց, ինչպէս կը վկայեն գրեթէ միաբան արեւելեան պատմիչք (Ճէֆէրի, Հապիպ Ուսսիյէր, Թէպէրի, Պէճճէթ, Ճէհար և այլք. տես Ա. մասն, էջ 227, և Կոպինոյ, Պատ. Պարս. Հտ. Բ. էջ 479, և 550—553), և այս պատճառաւ կը կոչեն զցեղն Աշկանեան, այն է թագաւորական, թէպէտ թագաւորաց թիւը կը դնեն 12—22 տարբեր անուններով, ինչպէս մեր Խորենացին, հաւանականապէս արեւելեան աղբերէ առնլով՝ կը դնէ չորեքտասան։ Հաւանականագոյնն է սակայն երեսուն կամ երեսուն և մի ըստ դաՀեկանաց նոցա, որոց հետեւեցանք և մեք (տես Ա. մասն, էջ 226), և դարձեալ կը դնենք հոս հանդերձ հաւանական թուականօք նոցա։

Արշակ Ա., Դարեհ ըստ արաբացի մատենագրաց
(255—253 նախ ք. զԳր.)։

Արշակ Բ, Տրդատ (253—217)։

Արշակ Գ, Արտաւան (217—197)։

Արշակ Դ, Պրապատ (197—182)։
Արշակ Ե, Հրահատ Ա. (182—174)։
Արշակ Զ, Միհրդատ Ա. (174—138)։
Արշակ Է, Հրահատ Բ. (138—127)։
Արշակ Ը, Արտաւան Բ. (127—114)։
Արշակ Թ, Միհրդատ Բ. (114—86)։
Արշակ Ժ, (86—76)։
Արշակ ԺԱ, Սանատրուկ (76—68)։
Արշակ ԺԲ, Հրահատ Գ. (68—58)։
Արշակ ԺԳ, Միհրդատ Գ. (58—54)։
Արշակ ԺԴ, Որոդէս Ա. (54—36)։
Արշակ ԺԵ, Հրահատ Դ. (36—1 յետ Քր.)։
Արշակ ԺԶ, Հրահատակ (1—2)։
Արշակ ԺԷ, Որոդ Բ. (2—4)։
Արշակ ԺԸ, Վոնոն Ա. (4—14)։
Արշակ ԺԹ, Արտաւան Գ. (14—44)։
Արշակ Ի, Վարդան (44—47)։
Արշակ ԻԱ, Գոտարզ (47—50)։
Արշակ ԻԲ, Վոնոն Բ. (50)։
Արշակ ԻԳ, Վաղարշ Ա. (50—90)։
Արշակ ԻԴ, Բակուր Ա. (90—108)։
Արշակ ԻԵ, Խոսրով (108—121)։
Արշակ ԻԶ, Վաղարշ Բ. (121—149)։
Արշակ ԻԷ, Վաղարշ Գ. (149—191)։
Արշակ ԻԸ, Արտաւան Գ. (191—199)։
Արշակ ԻԹ, Բակուր Բ. (199—209)։
Արշակ Լ, Վաղարշ Դ. (209—216)։
Արշակ ԼԱ, Արտաւան Ե. (216—226)։

Չ. *Պարթեւք ի սկզբան մինչեւ ի Հրահատ Բ, այն է* 255—127, *ունեցան գրեթէ անդադար գործ ընդ Սելեկեանս։ Առ Հրահատաւ Բ.* (*Արշակ Է,* 138—127) *Պարթեւաց տէրութիւնը կը հասնէր մինչեւ Եփրատ։ Հրահատ այնչափ զօրացաւ ընդդէմ Սելեւկեանց առ Դեմետրիւ Բ. Նիկատորաւ* (146—125), *մինչեւ մերձ էր մտանել յԱսորիս, մինչ յարձակումն Սկիւթացւոց* (*Պահլաւ տոհմին, որ վաղուց կը տիրէր ի Բակտրիա, Ա. մասն, էջ* 227) *ստիպեց զՀրահատ դառնալ յետս։ Առ յաջորդօք Հրահատայ Բ-ի, այն է յԱրտաւանայ Բ.* (*Արշակ Ը,* 127—114) *մինչեւ Հրահատ Գ.* (*Արշակ ԺԲ,* 68—58), *որ կը հանդիպի Միհրդատայ պատերազմներուն ժամանակին՝ իբր* 60 *տարի Պարթեւք եւս էին մեծ յուզման*

մէջ ներքին խռովութիւններէ և կռիւներէ ընդ Սկիւթացիս: Հրահատ Գ. հանդարտեցուց երկիրը և զօրացաւ, մինչև Ղուկուղղոսի և Տիգրանայ խնդրել Հրահատայ օգնութիւնը, բայց Հրահատ ընտրեց պահել չէզոքութիւն:

Յ. Երբ Պոմպէոս վճարեց արևելից գործը, յաղթելով ոչ Միհրդատայ միայն, այլև Տիգրանայ՝ դարձուց զերեսս իւր ի Պարթևս: Գաբինիոս զօրավար Պոմպէի անցնելով զԵփրատ՝ խաղաց մինչև յափունս Տիգրիսի. բայց ներքին խռովութիւնք Հռոմայեցւոց ստիպեցին զՊոմպէոս թողուլ զարշաւանն: Թէ ինչպէս անցան Հրահատայ Գ-ի վերջին տարիներն՝ յայտնի չէ. Հրահատ կը թուի սակայն սպանեալ գաւով, որում մասնակից էին որդիք նորա Միհրդատ և Որոդ: Միհրդատ Գ. (Արշակ ԺԳ, 58—54) սպանուեցաւ եղբօրէն յՈրոդայ, որ թագաւորեց իբրև Արշակ ԺԴ. (54—36): Առ Որոդաւ և առ յաջորդաւ նորա Հրահատաւ Դ. (Արշակ ԺԵ, 36 նախ քան զՔր.—1 յետ Քր.) եղա՛ն երկու երևելի արշաւանք Հռոմայեցւոց, Կրասսոսի և Անտոնիոսի, ի Պարթևս. առաջինն վերջացաւ (53) պարտութեամբն և սպանմամբ Կրասսոսի ի Սուրենայ զօրավարէն Որոդայ, երկրորդն՝ պարտութեամբն և փախստեամբ Անտոնիոսի (36—34 նախ քան զՔր.): Այս յաղթութիւն փքացոյց զՀրահատ Դ, մինչև խիզախել նմա ընդդէմ Հռոմայեցւոց: Երկընչելով սակայն յՕգոստեայ, որ ի գալն յարևելս (20) կը խնդրէր հռոմէական արծուենշան դրօշներն և գերիներ, զորս առած էին Պարթևք ի պատերազմունս Կրասսոսի և Անտոնեայ, սպառնալով պատերազմ, եթէ չդարձունէր զնոսա յետս՝ ոչ միայն կատարեց զխընդիրն, այլ և յորդւոց անտի Հրահատայ Դ-ի տուաւ պատանդ (20 նախ քան զՔր.):

Յուստինոս (մատենագիր Բ. դարու, առնլով ի Տրոգոսէ ՚Պոմպեայ մատենագրէ Ա. դարու) կու տայ մեզ այս պատմութիւնը: «Յերեսուն որդւոց անտի ոչ գիտէր (Որոդ), թէ զո՛րն սահմանեսցէ յաթոռն առ ունելոյ զտեղի Բակրոյ (սպանելոյ ի պատերազմին ընդ Հռոմայեցւոց յԱսորիս, ինչպէս պիտի տեսնենք):՝ Ի բազում հարճից, յորոց եղեն նորա այնչափ որդիք՝ իւրաքանչիւրն գուն գործէր տալ նախամեծար զիւր որդին առնել, և աշխատ առնէին զնա (կանայքն) ազգի ազգի հնարիւք նենգութեանց: Այլ բախտն Պարթևաց, զորոց զգահն ունին գրեթէ միշտ թագաւորք հայրասպանք՝ տայր զթագն չարագունին յորդւոց նորա: (Հրահատ) այն ինչ անուանեալ թագաւոր, որպէս թէ կարի իմն յամէր հայրն ի մեռանել՝ սպանանէր զնա. ապա տայր խողխողել զեղբարսն ամենայն: Յիւր որդւոյն անգամ ոչ խնայէր. քանզի տեսեալ զաւագանի տէրութեանն

զայրացեալս ընդ այնչափ ոճիրս վնասուցն՝ սպան զմին յորդւոց իւրոց, որ յաբրունս հասեալ էր, զի մի՛ գտցի ոք՝ զոր դիցեն փոխանակ նորա։ Անտոնիոս ի պատուհասել զՊարթեւս, զի եղեն նոքա զօրավիգն Կեսարու հակառակորդին նորա՝ խաղաց ի վերայ նոցա վեշտասանիւք յընտիր ընտիր լեգէոնաց իւրոց, այլ չարաչար վկանդեալ ի բազում ճակատս՝ աճապարէր ելանել ի փախուստ։ Ամբարտաւանեալ Հրահատայ յաջողութեամբն՝ շաղախէր զանձն յայլ եւս ոճիրս, եւ ելանէր վտարանդի յիւրոցն։ Բազում աղաչանօք ընդ երկար թախանձեալ նախ զազգս արուարձանեայս եւ հուսկ ապա զՍկիւթացիս՝ գտանէր թիկունս օգնականութեան ի նոցանէ, որ կացուցին զնա միւս անգամ յաթոռն։ Մինչ նա յաքսորս էր՝ Պարթեւք ընտրէին թագաւոր զոմն Տրդատէս անուն, որոյ իմացեալ զմերձենալ Սկիւթացւոցն՝ ապաւինէր բազում բարեկամօք առ կայսր (Օգոստոս), որ յայնժամ էր ի մարտ պատերազմի յաշխարհին Սպանիացւոց. տայր նմա պատանդ յորդւոց անտի Հրահատայ զկրտսերագոյնն, զոր արկեալ էր ի բուռն առ անհոգութեան պահապանացն։ Զայս լուեալ Հրահատայ՝ առաքէր հրեշտակս առ կայսր, խնդրել զպատանեակն եւ զՏրդատ տալ ի ձեռս իբրեւ զիւր ծառայ։ Լուեալ կայսեր զարտունջ Հրահատայ եւ զաղաչանս ոսոխին նորա (զի Տրդատ եւս խնդրէր առնել զգահն՝ խոստացեալ հնազանդել զՊարթեւս իշխանութեանն Հռոմայ, եթէ ի նոցա ձեռն հասանիցէ նմա առնուլ զթագաւորութիւնն) չառնոյր յանձն ո՛չ զՏրդատ մատնել ի ձեռս Պարթեւաց, եւ ոչ լինել սմա օգնական զօրու ընդդէմ Պարթեւաց։ Այլ զի մի՛ թուեսցի թէ շնորհէ եւ ոչինչ՝ յանձնէր Հրահատայ զորդին իւր, զՏրդատ հրաման տայր առնել մեծաւ պատուով շքեղութեան՝ ցորչափ կամք իցեն նմա մնալ առ Հռոմայեցիս։ Յետ այնորիկ իբրեւ ի գլուխ հանեալ զպատերազմն Սպանիացւոց գայր յԱսորիս կարգել զիրս արեւելից՝ երկուցեալ Հրահատայ, թէ գուցէ խաղասցէ ի վերայ նորա կայսր՝ ժողովէր ի կողմանց կողմանց աշխարհին իւրոյ զգերիս զօրացն Կրասոսի եւ Անտոնեայ, եւ արձակէր զնոսա առ Օգոստոս հանդերձ արծուենշան դրօշիւքն, զոր հանեալ էր ի լեգէոնաց։ Օգոստոս առնոյր եւս ի պատանդ զորդիս եւ զթոռունս Հրահատայ, եւ վճարէր զօրութեամբ անուանն բազում ինչ՝ զոր այլոյ զօրավարի չէ երբէք վճարեալ ի ձեռն զինուց» (Յուստ. ԽԲ.)։ Բայց քան զՅուստինոս վաւերականագոյն է յիշատակ այս դիպաց՝ կանգնելն Օգոստոսի ի պատիւ պատերազմի չաստուածոյն Արեայ մեհեան, ուր տուաւ կախել յետս առնուած դրօշներն ի Հրահատայ։ Կան արդարեւ Օգոստեայ դահեկանք, որոց ի մի կողման կայ գիր, Signis receptis S. P. Q. R. Յոմանս պատկեր Արեսի վեցսիւնեայ

մեհենին, ուր կը տեսնուի լեգէոնական դրօշն արծուենշան, 20 ամին։ Կան ուրիշ դահեկանք 18 ամին՝ գրով Civib. et sign. milit. a Part. recup., և պատկեր՝ յաղթական կամար և Օգոստոս չորեքձի կառօք կ'անցնի, երկու պարթև մարդոց մէջ նստած։ (Գաթըրճ. Տիեզ. Պամ. Բ. 98)։ Այսպէս Հրահատ եկաց խաղաղութեամբ ընդ Հռոմայեցիս մինչև ի սպանումն իւր ի Թերմուսա կամ Մուսա անուն իտալացի հարճէն, զոր ղրկած էր նմա Օգոստոս պարգև։ Հրահատ ունի դահեկան, որոյ ի մի կողման կայ Մուսայի պատկերն, և գիր՝ Μουσα (Գաթըրճ. անդ)։ Յամէն իբր 8 կայ Օգոստեայ դահեկան, ուր այր պարթև կը մատուցանէ կայսեր պատանիներ։ Նաև Օգոստոս ասէ ի կտակին. «Արքայ Պարթևաց Հրահատ Որոդայ որդի զորդիս իւր և զթոռունս զամենեսին առաքեաց յԻտալիա, ոչ յաղթեալ ինչ պատերազմաւ, այլ զբարեկամութիւն այսոքիւք իւրոյն պատանդիւք խնդրեալ» (Գաթըրճ. Տիեզ. Պամ. Բ. 99)։ Պարթևաց այս տկարութեան վկայ հաւատարիմ է Ստրաբոն ժամանակակից, որ ի խօսելն զմեծութենէն Հռոմայեցւոց՝ ի վերջ կոյս Զ. դպրութեան, 4, 2, ասէ. «Պարթևք, որ են սահմանակից Հռոմոց՝ ունել ունին ահեղ զօրութիւն. բայց և սոքա խոնարհեցուցանեն այսօր զգլուխ, և են ընդ ազդեցութեամբ Հռոմոց և իշխանաց նոցա։ Ոչ միայն առաքեցին յետս զնշանս յաղթութեանցն կանգնելոց սակաւ մի յառաջ ի նախատինս Հռոմայ, այլ և թագաւոր նոցա Հրահատ կամեցաւ ունել յանձն ի խնամս Օգոստեայ զորդիս և զթոռունս իւր, պատանդք պատուականք սահմանեալք ի կորզել յանձն զմտերմութիւն բարեկամութեան նորա։ Ի մեր իսկ աւուրս բազում անգամ Պարթևք եկուն անել ի Հռոմայ զիշխանն, զոր կամէին ունել ի գլուխ իւրեանց։ Համառօտ իսկ ասել՝ թուի իմն թէ ժամանակ է նոցա և զանձինս և զինչս իւրեանց թողուլ կամաց և հաճութեան Հռոմոց»։

Ի յաջորդաց Հրահատայ Դ-ի չեղան երկայնակեաց ոչ Հրահատակ (Արշակ ԺԶ.) և ոչ յաջորդ նորա Որոդ Բ. (իբր Արշակ ԺԷ.)։ Յետ Որոդայ Բ. կը խնդրեն Պարթևք ի Հռոմայ (10) զերեցագոյնն յորդւոց Հրահատայ զՎոնոն, իբրև Արշակ ԺԸ. (11—14)։ Այսմ վկայ է ոչ Տակիտոս միայն, այլ և կտակն Օգոստեայ (Տախտ. Զ.)։ «Յինէն ազգք Պարթևաց խնդրեցին ի ձեռն իշխանաց ազգացն այնոցիկ, և զթագաւորս իւրեանց ընկալան, Պարթևք՝ զՎոնոն, զայքայի Հրահատայ զորդի, զարքայի Որոդայ զթոռն, Մարք՝...» են (Գաթըրճ. Տիեզ. Պատմ. Բ. 99)։ ԶՎոնոն, զսնեալն ի մէջ Հռոմայեցւոց, վասն կիրթ բարուցն և սովորութեանց՝ մերժեցին Պարթևք իբրև գերդ և օտարասէր, վասն զի չէր հեծներ ձի և ոչ կ'եր-

թար յորս, գեսպակաւ կը շրջէր և միշտ ընդ յոյնս էր կենակից։ Ուստի կոչեցին ի Դահաց զԱրտաւան ումն, որ եկաւ բազմութեամբ մար-սկիւթացի զօրաց, և Վոնոն յետ միանգամ տալոյ ճակատ՝ յաղթուելով աճապարեց անկաւ ի Հայս։ Զայսմանէ աւելի մանր յետոյ։

4. Թագաւորութիւնն Արտաւանայ Գ. (այն է Արշակ ԺԹ, 14—44), է գլխաւոր կէտ ի պատմութեան ոչ Պարթևաց միայն, այլև Հայոց։ Զսմանէ, ինչպէս տեսանք՝ ասէ Տակիտոս, թէ էր սնեալ ի մէջ Դահաց, և Յովսեպոս՝ թէ էր ի Մարաց։ Դահօք կամ Մարօք պարտ է իմանալ սակայն այն հիւսիսային արևելեան թագաւորութիւնը, որ հաստատուեցաւ ի Բահլ (այն է Բակտրա, հին նուիրական քաղաք Արեաց յետ անկման յունական թագաւորութեան Բակտրիոյ), ուստի և կը կոչուի ի հին մատենագիրս մեր (Ագաթ. Խոր.) տէրութիւն Պահլաւաց, և կը տիրէր հիւսիսային արևելեան սկիւթացի ցեղերու, զորս մերքն (Ագաթ. և մանաւանդ Բուզ.) սովոր են կոչել Մազքութս կամ Քուշանս. յԵղիշէէ և Փարպեցւոյն կը կոչուին նոքա նաև Հեփթաղք և Հոնք, յարգի գիտնոց՝ Մար—Սկիւթացի։ Այս հիւսիսային արևելեան թագաւորութեան տիրող ցեղը, Պահլաւ կամ Պահլաւիկ՝ էր համազգի Պարթև Արշակունեաց, և ունէր ուրոյն դահեկանս, որ կան ցայժմ, ոչինչ աննման դահեկանաց Պարթևաց։ (Զայսմանէ տես և յառաջնում մասին պատմութեան մերոյ, 227—230)։ Այսպէս Արտաւանաւ Գ., որ այն ցեղէն էր՝ փոխուեցաւ Պարթևաց տիրող ցեղն և անցաւ Պահլաւ տոհմին, յորում տևեց մինչև ի վերջին համանուն թագաւորն Պարթևաց Արտաւան Ե. (Արշակ ԼԱ., 216—226)։ «Արաբացի մատենագիրք, գրիչք պատմութեանն Պարթևաց, յԱրտաւանայ աստի նոր իմն հարստութիւն դնեն սկսանել, կոչելով զսա Աշկանեան, իսկ զառաջինն՝ Աշակեան» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. 99. ծան. 3)։ Պահլաւ տոհմն կը համարուէր թէ կրօնիւք և թէ սովորութեամբ ազնուագոյն քան զՊարթև տոհմն, և կը կոչուէր ի նոցունց իսկ Սասանեանց թշնամեաց նորա՝ «Պատուական», «Պատուականագոյն», «Քաջատոհմիկ» (Խոր. Բ. ՀԲ, Գ. ԾԱ.), մինչ Պարթև տոհմն անարգուած էր իբրև ապականեալ արևմտեան բարուք և կրթութեամբ։ Արդարև Արտաւանաւ Գ. նոր զօրութիւն և մեծութիւն առաւ թագաւորութիւնն Պարթևաց։

Արտաւան տեսնելով, թէ մնաց թագաւորութիւնն յիւր ձեռս, բարձմամբ կամ խոյս տալով հակառակորդին (Վոնոնի)՝ ամբարտաւանեցաւ, և տեսեալ զՏիբեր ծերացեալ՝ խորհեցաւ առնուլ զՀայս ընդ իւրով իշխանութեամբ կամ ազդեցութեամբ։ Խաղաց գնաց դէպ

ի Կապադովկիա, պահանջելով Հռոմայեցիներէն հին Պարսից (Աքեմենեանց) երկիրներն յԱսիա։ Սակայն Պարթեւք, որ ձանձրացած էին յԱրտաւանայ՝ առաքեցին (35) պատգամաւորս ի Հռոմ խնդրել այլ թագաւոր։ Տիբեր հաճեցաւ խնդրոյն, և ղրկուեցաւ Հրահատայ Դ-ի որդին Հրահատ, որ պատանդ էր ի Հռոմ, բայց մինչև հասեալ ի Պարթեւս՝ մեռաւ յԱսորիս։ Յայնժամ Տիբեր ղրկեց ի թոռանց նորին Հրահատայ Դ-ի զՏրդատ, զոր վանեց Հրահատ Դ. Սկիւթացւոց օգնութեամբ։ Տրդատ խոյս տուաւ յերեսաց Արտաւանայ, որ չյերկարեց ի կեանս, քանզի սպանուեցաւ դաւով յորդւոյն իւրմէ ի Գոտարզայ։ Վարդան, եղբայր Գոտարզայ, իբրև Արշակ Ի. (44—47) կը թագաւորէ քաջութեամբ, ապա անգութն Գոտարզ, (Արշակ ԻԱ., 47—50), ապա հօրեղբայր նորա Վոնոն Բ, որ կը թագաւորէր Մարաց՝ կը յաջորդէ իբրև Արշակ ԻԲ. կարճ ժամանակ († 50). յետ նորա որդին Վաղարշ Ա. (Արշակ ԻԳ, 50—90)։ Յովսեպոս չգիտեր զՎոնոն, այլ Գոտարզայ, զոր կը դնէ սպանուած դաւով՝ կը պատմէ յաջորդել զՎաղարշ, զորմէ ասէ թէ էր եղբայր Գոտարզայ։ «Պարթեւք սպանին զՎարդան և եդին փոխանակ նորա զեղբայր նորա զԳոտարզ, որ նոյնպէս յետ սակաւուց սպանաւ դաւով, և Վաղարշ եղբայր Գոտարզայ պայազատէ զնա» (Յովս. Նախն. պատմ. Ի. Բ.)։ Վաղարշ, որ յետ Արտաւանայ երևելին է ի թագաւորս Պարթեւաց Պահլաւ ցեղէ՝ խորհեցաւ ի գլուխ հանել Արտաւանայ խորհուրդը, դնել Պահլաւ ցեղէ թագաւոր Հայոց վրայ, և այս պատճառաւ ունեցաւ երկայն և արիւնահեղ պատերազմ ընդ Հռոմայեցիս։

Տակիտոս կը պատմէ երկար զգործս Պարթև թագաւորաց ի Հրահատայ Դ-է մինչև Վաղարշ Ա. յիշելով մանր բազում ինչ որ կը վերաբերի մեզ։ Մենք այն երկար պատմութենէն պիտի առնունք յետոյ մեր մասը միայն։ Վաղարշ, յետ տեսանելոյ զեղբայր իւր զՏրդատ հաստատեալ ի վերայ գահուն Արշակունեաց ի Հայս (65)՝ մեռաւ, և յաջորդեց նմա Բակուր Ա. (Արշակ ԻԴ, 90—108), որ գեղեցկացուց զՏիգրոն, ապա Խոսրով Ա. (իբր Արշակ ԻԵ, 108—121), առ որով նորոգեցաւ պատերազմն ընդ Հռոմայեցիս, դարձեալ վասն Հայոց։ Յարշաւանս Տրայիանոսի, որ շատ երկիրներ, ինչպէս զՀայս, զԱսորեստան և զՄիջագետս նուաճելով արար նահանգ՝ Խոսրով խոյս կուտայ ի վերին գաւառս, և ապա դառնալով կ'առնու վերստին իշխանութիւնը (121)։ Խոսրովու յաջորդեց Վաղարշ Բ. իբր Արշակ ԻԶ. (121—150), առ Ադրիանոսիւ և Անտոնինոսիւ։ Ադրիանոս դարձուց նուաճեալ գաւառներն, Հայաստան, Ասորեստան և զՄիջագետս, և Եփրատ եղաւ դարձեալ սահման երկուց

թագաւորութեանց։ Պարթեւք այնչափ պէտս ունէին խաղաղութեան՝ որչափ Հռոմայեցի կայսերք։ Բայց խաղաղութիւնը չտեւեց երկար։ Առ Վաղարշաւ Դ. (Արշակ Իէ, 151—192), պատերազմը նորոգուեցաւ ի մէջ Պարթեւաց և Հռոմայ, դարձեալ Հայաստանի համար։ Ղուկիոս Վերիոս եկաւ արեւելք, յունական քաղաքն Սելեւկիա, որ ի սկզբանէ անտի տէրութեանն Պարթեւաց եղած էր ինքնորէն աղիկամի, և Տիգրոն՝ առնուեցան անհնարին աւերմամբ և կոտորածով։ Սելեւկիա չկարաց կանգնել միւս անգամ, Տիգրոն միայն նորոգուեցաւ։ Արտաւան Դ. (Արշակ ԻԸ, 192—199), իրեն դէմ դրգռեց զՍեպտիմոս Սեւերոս, վասն զի Արտաւան Սեւերոսի քաղաքական պատերազմին ժամանակ ընդդէմ Նիգերի՝ թեր եղած էր այս վերջնոյն։ Տիգրոն երկրորդ անգամ առնուեցաւ պաշարմամբ. Արտաւան որ կը պաշտպանէր քաղաքը՝ հազիւ պրծաւ, և Հռոմայեցիք առին 100,000 գերի և մեծագին աւար (197)։ Բակուր Բ. և (Արշակ ԻԹ, 199—209) յաղթուեցաւ նոյն Սեւերոսէ, բայց Հռոմայեցիք ոչինչ շահեցան այս յարձակումներէն։ Սակայն Կարակալլա առաւ զՕսրոհայաստան (զՄծբին), և Պարթեւաց տէրութիւնն սկսաւ երթալ ի կործանումն։ Սաէպ յեղափոխութիւնք, որ կը ծագէին թէ առ յեղյեղուկ բնութեան ազգին և թէ յոռի վարչութենէ՝ սպառած էին երկրին ույժը։ Ի թագաւորութեանն Վաղարշաւ Դ. (Արշակ Լ, 209—216), և Արտաւանայ Ե, (Արշակ ԼԱ, 216—226)՝ խռովութիւնք սկսան յաճախել թագաւորական ընտանեաց մէջ։ Կարակալլա խնդրեց Արտաւանայ դուստրն ի կնութիւն, որպէս զի, եթէ զլանար Արտաւան՝ կայսրը պատճառ ունենար պատերազմի։ Ըստ ոմանց՝ Արտաւան մերժեց խնդիրը, և Կարակալլա խաղաց իսկոյն Միջագետաց վրայ. ըստ այլոց՝ Արտաւան անձամբ բերաւ աղջիկը, և Կարակալլա սոսկալի նենգութեամբ տուաւ կոտորել հարսնեւորներն, և Արտաւան հազիւ զերծաւ (216)։ Մակրինոս կնեց դաշինս խաղաղութեան Պարթեւաց հետ, բայց յետ ամաց ինչ ծագեցաւ յեղափոխութիւնն, որ կործանեց զպետութիւնն Պարթեւական (Պահլաւ), և կանգնեց զՊարսիցն (Սասանական) (226)։

ԳԼՈՒԽ Է.

ՍԱՍԱՆԵԱՆՔ։

1. Պատճառք անկման Պարթեւաց։ 2. Սասանեան թագաւորք։ 3. Արտաշիր. Կրօնական նորոգումն։ 4. Համառօտ պատմութիւն Սասանեանց։

1. Բարեպաշտագոյն Պահլաւ ցեղն, որ Արտաւանաւ Դ. առած էր Պարթեւական թագաւորութիւնը՝ չեղաւ բաւական գոհացունել արիական ցեղերուն մոլեռանդութիւնն, որ Յունաց հետ որեւիցէ մերձաւորութիւն կը համարէր անկրօնութիւն։ Այս, ինչպէս նաեւ թագաւորական ընտանեաց մէջ ստէպ գժտութիւնք եւ կռիւք՝ քաջալերեցին զԱրտաշիր ամն պարսիկ՝ յարուցանել Արտաւանայ Դ-ի տասներորդ տարին այն մեծ ապստամբութիւնն, որ կործանելով Պահլաւ տոհմը՝ Սասանեան ցեղին տուաւ Պարթեւական տէրութիւնը, որ այնուհետեւ կոչուեցաւ Սասանեան։ Արտաշրի ծագման վրայ առ Խորենացւոյ կային այլեւայլ միմեանց հակառակ զրոյցք՝ նա մանաւանդ առասպելք, յորոց ինչ ինչ կը համառօտէ Խորենացին, խոստովանելով թէ են բարբաջմունք. «Անտեղի է մեզ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափաքայ, եւ արտադատութեան հրոյն մանուածոյ որ ի Սասանայ, եւ պատումն զհօտիւն, եւ լուսնակն, եւ ախտարմողացն յառաջասացումն որ են քաւդեայք, եւ որ ինչ զկնի այսորիկ. եւ պոռնկական խորհուրդն Արտաշրի համդերձ սպանութեամբք, եւ անմիտ հանճարաբանութիւն մոգին դըստեր վասն նախազին, եւ որ ինչ այլն ամենայն։ Նաեւ այծին դիցումն մանկանն ընդ հովանեաւ արծուոյն, եւ գուշակումն ագռաւուն, եւ գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն, եւ մենամարտութեանն առաքինութիւն, եւ որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ» (Խոր. Բ. Հ.)։ Այս մութ ակնարկութենէն, զոր կը թուի թէ առած է Խորենացին իւր Խոռօբուտէն՝ սաչափ միայն կը գտնենք, թէ ըստ աւանդութեան պարսիկ մատենագրաց ոմանց՝ Արտաշիր զոր եւ Արտաշէս կ'անուանեն էր որդի ուրումն Սասանայ եւ կնոջ Բաբեկ (Փափաք) անուն իշխանի

որ սոսկած էր զկինն լինել անձնատուր Սասանայ, վասն զի տեսած էր երազ, թէ այն խառնակ միութենէն պիտի ծնանէր նշանաւոր ոք, որպիսի եղաւ Արտաշիր յաղթութեամբքն ի վերայ Արտաւանայ։ Այլք կը պատմէին այլ ազգ. որպէս թէ Սասան էր հովիւ ուրումն Փափաքայ, զորոյ զդուստրն արար կին. ի մերձենալ Սասանայ առ կինն՝ ելաւ հուր ի Սասանայ և պատեց զհօտն և ծագեց լուսին. զայսմանէ քաղդեայք գուշակութիւններ ըրին մանկան վրայ, որ պիտի ծնանէր։ Դարձեալ ըստ այլոց՝ Սասան էր որդի Բուհանան անուն ուրումն թագաւորի, որոյ կինն էր քոյր Սասանայ, և մերժուելով ի սմանէ վասն անարժան խառնակութեան՝ կը փախչի ի Հնդիկս հանդերձ մանկամբն։ Թէ ինչ է «անմիտ հանճարաբանութիւն մոգին գտեր վասն նախազին»՝ չէ յայտ. կը պատմուէր սակայն, թէ զԱրտաշիր մանուկ կը սնուցանէ այծ, արծուին լինի հովանի, և առիւծ հանդերձ գայլու կը սպասաւորէ մանկանն, որ վարժեալ ի մենամարտութիւն՝ կը դառնայ ի հայրենիս։

Առասպելական պատմութիւն է նաև այն, զոր կը կարդանք ի յունարէն օրինակին Ագաթանգեղոսի։ Ըստ այսմ՝ Արտաւան էր աստեղագէտ և կը պարապէր ի զննութիւն աստեղաց, և հայելով ի նոսա կը հմայէր, կը գուշակէր հանդերձեալը, մանաւանդ ինչ որ պիտի պատահէր իւր թագաւորութեան։ Օր մի, մինչ նստած էր Արտաւան յառագաստին ընդ կնոջ իւրում՝ նայելով յաստեղս սկսաւ հմայել։ «Կը տեսնեմ, ասէ ցկինն, յընթացս աստեղաց, զի եթէ ոք որդ. ապստամբի իւր թագաւորէն՝ պիտի յաջողի. ուստի կասկած ունիմ թագաւորութեանս համար». զայս ասելով եմուտ ի քուն։ Նաժիշտ տիկնոջն, Արտադուխտ անուն, որ էր ի սենեկին՝ լսելով զայս — քանզի ծանօթ էր Արտաշրի — գնաց պատմել նմա թագաւորին գուշակութիւնը, և առնլով ի նմանէ խոստումն երդմամբ, որ եթէ հասնէր թագաւորութեան ընէր զնա տիկնայ տիկին՝ յորդորեց զնա կատարել զգործ ապստամբութեանն, զոր գիտէր թէ կը խորհէր Արտաշիր։ Հաւանականագոյնն սակայն այս է.— Պարս կոչուած գաւառն, որ էր արիական գաւառներուն հարաւայիններէն, յարևելից Տիգրիսի՝ կը թուի կառավարեալ ի սկզբանէ հետէ առանձին իշխանօք։ Այս իշխաններէն էր Արտաշիր որդի Սասանայ (226—240)։ Արտաւան կը ջանայ նուաճել ապստամբութիւնը, բայց յաղթուելով ապստամբ մասէն՝ կը սպանուի։

2. Սասանեան թագաւորք որ տիրեցին յԱրտաշրէ (226) և այսր՝ են —

1. Արտաշիր (226—240)։
2. Շապուհ Ա., որդի նորա (240—271)։

3. Որմիզդ կամ Որմզդատ Ա. (271—272):
4. Վռամ Ա. (272—275):
5. Վռամ Բ. (275—292):
6. Վռամ Գ. (292 ամիս ինչ):
7. Ներսեհ (292—302):
8. Որմիզդ կամ Որմզդատ Բ. (302—309):
9. Շապուհ Բ. (309—381):
10. Արտաշիր Բ. (381—385):
11. Շապուհ Գ. (385—389):
12. Վռամ Դ, Կրման (389—400):
13. Յազկերտ Ա. (400—421):
14. Վռամ Ե. (421—442):
15. Յազկերտ Բ. (439—458, կամ 442—460):
16. Պերոզ (460—483):
17. Վաղարշ (483—487, կամ—491):

(Մինչև Վաղարշ կը հասնի մեր պատմութեան այս մասը):

Յ. Գլխաւոր գործ Արտաշրի եղած կը թուի ածել հին զրադաշտական կրօնքն յիւր նախկին մաքրութիւն: Իբր ութսուն հազար մոգ ժողովելով՝ որոշեց մոգապաշտութեան վարդապետութիւնը և պաշտօնը: Այսպէս յունական կռապաշտութեան և բազմաթիւ աղանդներու առաջն առնուեցաւ: Բոլոր աղանդներէն կը թուի թէ հինգ միայն ընդունուեցան, զորոց անունները կուտայ Եղիշէ, այն է Համակդենն, Ամպարտքաշն, Բոգպայիտն, Պաճլաւիկն և Պարսկադենն՝ իբրև ընկալեալ աղանդք մոգութեան: Արտաքոյ սոցա կար միւս ևս աղանդ, որ ըստ նոյն Եղիշէի կը կոչուէր Մոգպետի: «Այս հինգ կեշտք են, որ գրուեալ ունին զամենայն օրէնս մոգութեան, բայց արտաքոյ սոցա է միւս ևս այլ վեցերորդ, զոր մոգպետն կոչեն» (Եղիշ Ը. 253): Մեծ պատիւ կը վայելէր բոլոր այս աղանդոց գլխաւորն, որ կը կոչուէր «իշխան դենպետ», որպիսի էր մոգպետն որում յանձնուեցան Ղևոնդեանք և որ, ըստ պատմութեան Եղիշէի, տեսնելով զՂևոնդեանս բանտին մէջ համակ լուսեղէն՝ հաւատաց և մկրտուեցաւ. պատմութիւն՝ զոր կը ստեղծէ Եղիշէ Գործոց առաքելոց բանտապետին պատմութեան նմանութեամբ:

Արտաշիր նուաճելով նաև ապստամբութիւններն և անկախ իշխանութիւններն, որ եղած էին Պարթև թագաւորաց տկարութենէն՝ բերաւ երկիրն ի միութիւն և զօրացուց թագաւորական իշխանութիւնը: Այսպէս կանգնեցաւ նոր պարսկական պետութիւնն իբրև աստուածապետական խալիֆայութիւն, աշխարհական և եկեղեցական միանգամայն: Յետ այսր ամենայնի Արտաշիր կամեցաւ նաև յա-

թութիւններով փառաւոր երևցունել զտէրութիւն իւր, բայց գտաւ ինքեան ահաւոր թշնամի զՀռոմայեցիս։ Պատրաստելով 120 հազար զօրք, 1800 գերանդագէն կառք և 70 փիղ՝ պահանջեց Հռոմայեցիներէն հին Պարսից բոլոր երկիրներն առ Կիւրոսիւ, որոյ յաջորդ և զաւակ կ'անուանէր զանձն. բայց կրեց սաստիկ ընդդիմութիւն Աղեքսանդր Սևերոս կայսերէ։ Թէպէտ Սևերոս չկարաց տանել կատարեալ յաղթութիւն ի գլուխ՝ բայց Արտաշիր ևս չեղաւ ձեռնհաս հանել զՀռոմայեցիս յԱսիոյ, և ոչ զՄիջագետս կարաց կորզել ի Հռոմայեցւոց։ Բայց և այնպէս Արտաշրի թագաւորութեան ժամանակն, որ տևեց 14 տարի՝ մարթի համարուիլ նոր դարագլուխ ի պատմութեան Արևելից։

4. Արտաշրի յաջորդեց որդին Շապուհ Ա. (240—271), առ որով եղան ձախող պատերազմունք ի մէջ երկու մեծ տէրութեանց, բայց ի վախճանի Հայաստան և Միջագետք հնազանդեցան Սասանեանց։ Արդարև Վաղերիանոս խաղաց անձամբ Միջագետաց վրայ, բայց յաղթուելով (260) բռնուեցաւ։ Ազնուամիտ կայսրն առ վշտին մեռաւ թշնամանօք ի գերութեան, և մորթն հանուելով՝ խոտով լցուած կախուեցաւ հրապարակաւ։ Պարսիկք առնլով զԱսորիս և զԿիլիկիա՝ եկան մինչև ի Կեսարիա Կապադովկացւոց, մինչ յանկարծ քաջն Ոդոնատ, իշխան Պալմիրայ, վանեց զնոսա անդր քան զԵփրատ։ Պալմիրա եղաւ սակայն ուրոյն տէրութիւն ազատ ի Հռոմայեցւոց, և յաջորդն Ոդոնատայ Զենոբիա զարհուրեցուց զՇապուհ, մինչև խնդրել սմա թագուհւոյն դաշնակցութիւնը։ Շապուհ մեռաւ, մինչ Զենոբիա կը կռուէր ընդ Աւրելիանու։

Շապհոյ Ա-ոյ յաջորդեցին Որմիզդ Ա. (271—272), Վռամ Ա. (272—275)։ Այս երկու թագաւորք չէին պատերազմասէրք։ Առ սոքօք Կարոս տիրեց Միջագետաց, առաւ զՍելևկիա և զՏիզբոն, անցաւ զՏիգրիս։ Կայսեր մահը միայն ազատեց Սասանեանց տէրութիւնն ի մեծ վտանգէն։

Հանդարտութեամբ անցաւ Վռամայ Բ-ի (275—292), և Վռամայ Գ-ի (292) թագաւորութիւնը։ Հռոմայեցւոց հետ պատերազմն սկսաւ առ Ներսեհիւ (292—302), որ նուաճեց միւս անգամ զՀայս ապստամբեալս, և խորհեցաւ հանել զՀռոմայեցիս յԱսիոյ. բայց յաղթուեցաւ չարաչար ի Գաղերիոսէ, որ էր յայնժամ զօրավար Դիոկղետիանոսի։ Դիոկղետիանոս դրաւ սահման երկու տէրութեանց մէջ՝ զՔավրար կամ Քաբուր գետ. Միջագետք տրուեցան Հռոմայեցւոց, և կնքեցան դաշինք խաղաղութեան, որ տևեց իբր 40 տարի։

Ներսեհի յաջորդեց Որմիզդ Բ. (302—309), ապա որդին Շապուհ Բ. երկայնակեաց (309—381)։ Շապուհ ոչ միայն վանեց զԱ-

րաբացիս, որ մինչև Տիգրոն եկած էին, այլև փորձեց առնուլ Հռոմայեցիներէն երկիրներն յայսկոյս Տիգրիսի, բայց կասեցաւ՝ ակնածելով ի համբաւոյն Կոստանդիանոսի մեծի, առ որով տևեց արդարև խաղաղութիւնն, որ եղաւ առ Ներսէհիւ: Յետ մահուն Կոստանդիանոսի՝ Շապուհ սկսաւ պատերազմն ընդ Հռոմայեցիս: Երիցս պաշարեցաւ երեքպարսպեանն Մծբին, որ կը նկատուէր իբր պատուար ընդդէմ արևելից, առնուեցաւ Ամիդ մեծ կորստեամբ ի Պարսից: Շապուհ, թէպէտ յաղթող՝ տեսաւ թէ դժուարին էր նմա կատարել զԱսիա նուաճելու խորհուրդը, և կրեց սաստիկ յարձակումն Յուլիանոսէ, որ մեծամեծ յաղթութեամբք մտաւ Պարսկաստանի սիրտը, բայց յանդգնութեամբն յաղթուելով սպանուեցաւ (369), և Հռոմայեցիք փանեցան ի սպառ: Յաջորդն Յուլիանու Յովիանոս ստիպուեցաւ դաշամբ (որոյ պայմաններէն մին էր ձեռնթափ լինել ի Հայոց) հրաժարել ի Միջագետաց: Մծբին և ուրիշ քաղաքներ և ամրոցներ ի Միջագետս՝ անցան Պարսից: Յետ այս ամենայն փառաւոր յաջողուածոց՝ մեռաւ Շապուհ, և յաջորդեցին նմա

Արտաշիր Բ. (381—385), Շապուհ Գ. (385—389), Վռամ Դ. (389—400), Յազկերտ Ա. (400—421): Այս թագաւորաց ժամանակ Սասանեանք ներքին յուզմամբք և Կրմանից դէմ կռիւներով էին զբաղեալ: Յազկերտի Ա-ի հետ բարեկամութեամբ էր Արկադէոս, որդին Թէոդոսի մեծի, մինչև նմա յանձնել զիւր որդին Թէոդոս (408): Ի շնորհս Հռոմայեցւոց՝ ազատութիւն մեծ կը վայելէին քրիստոնեայք ի Պարս. բայց Յազկերտի վերջին տարիներն անմիտ նախանձ եպիսկոպոսի մը, որ կործանեց ատրուշան մի ի Շօշ՝ տուաւ պատճառ հալածման ընդդէմ քրիստոնէից, մինչև Վռամայ Ե. (421—442) պահանջել Հռոմայեցւոց երկիրն ապաւինող քրիստոնեաներ: Հռոմայեցիք չառին յանձն տալ, և ծագեցաւ պատերազմ: Վռամ խաղաց յարևմուտս, մինչև ստիպել կայսեր՝ տալով հարկ Ասիոյ բաժնին համար՝ հեռացունել զՎռամ: Առ Յազկերտիւ Բ, յաջորդաւ Վռամայ (440—457)՝ Հռոմայեցիք դադրեցուցին հարկը: Յազկերտ չէր բարեկամ քրիստոնէից: Նմա յաջորդեցին երկու որդիք նորա Պերոզ և Որմիզդ. բայց Պերոզ օգնութեամբ Հեփթաղաց սպանեց զեղբայր իւր (460) և տիրեց միահեծան (460—483): Առ սովաւ եղաւ երաշտութիւն մեծ, ըստ արևելեան աւանդութեան եօթը տարի: Պերոզ հակառակ իւր դաշանց խաղալով Հեփթաղաց վրայ՝ կ'սպանուի, և կը յաջորդէ Վաղարշ (483—491), առ որով կը վերջանայ մեր Պատմութեան այս երկրորդ մասը:

ԳԼՈՒԽ Ը.

ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ։

1. Երկրորդ հարստութիւն Հայոց. Հռոմայեցիք: 2. Հռոմայեցւոց մուտն ի Փոքրն Ասիա. Ցայնժամու վիճակ այն երկրին: 3. Դաշնակցութիւն ի մէջ թագաւորութեանց Փոքուն Ասիոյ. Հայք. Արտաքսիաս:

1. Երկրորդ հարստութիւն մեր, զոր սովոր եմք կոչել Արշակունեաց՝ կ՚սկսի և կը զօրանայ Հռոմայեցւոց ազդեցութեան սկսելովն և զօրանալով յարևելս, ինչպէս այն ազդեցութեան տկարանալովն և դադարելով՝ կը տկարանայ և կը դադարի։ Հռոմայեցւոց ազդեցութեան Ասիոյ մէջ սկսելուն թուականն է՝ Սելևկեան թագաւորներէն Անտիոքոսի մեծի (222—186) պարտութեան տարին, որ է 190 նախ քան զՔր.։ Անտիոքոս մեծ, Սելևկեանց վեցերորդն, յետ յաղթելոյ ոսոխաց իւրոց Պտղոմեանց (203—198) և նուաճելոյ Փոքուն Ասիոյ յունական քաղաքներն, մինչ կը խորհէր անցնել ի Յոյնս՝ յարոյց ընդդէմ իւր զՀռոմայեցիս, որ ակն դրած էին Յունաստանի և Փոքուն Ասիոյ։ Ի զուր Հռոմայեցի պատգամաւորք եկան յԵփեսոս առ թագաւորն՝ հաւանեցուցանել զնա ազատ թողուլ նուաճեալ քաղաքներն և ի բաց կալ Յունաստան գրաւելու խորհրդէն։ Խրոխտ Անտիոքոս պատասխանեց խստիւ, և սկսաւ պատերազմն ընդ Հռոմայեցիս։ Անտիոքոս յաղթուեցաւ առ Սաղամինեաւ (191), յաջորդ ամին՝ առ Մագնեսեաւ, և ծանր պայմաններով հազիւ կարաց գնել հաշտութիւնը։

2. Երբ Հռոմայեցիք յետ պարտութեանն Անտիոքոսի դրին ոտն ի Փոքրն Ասիա՝ երկրիս այն մասին մէջ,—թող երեք յոյն գաղթականութիւններն առ Եգէական ծովուն, Դորիա, Յոնիա, Եոլիա, հանդերձ անուանի յունական քաղաքօք, որոց երևելիքն էին Եփեսոս, Զմիւռնիա և այլք՝—կային մանր մանր թագաւորութիւնք, յորոց միջի նշանաւոր կը համարուին Պերգամոն, Բիւթանիա, Գաղատիա, Կապադովկիա և Պոնտոս։

Պերգամոնի թագաւորութիւնն սկսաւ 283-ին նախ քան զՔր.

և 129-ին անցաւ Հռոմայեցւոց՝ մահուամբ վերջին թագաւորին Պերգամոնի, Արիստոնիկեայ, որ իբրև ապստամբ սպանաւ ի Հռոմ։

Բիւթանիոյ թագաւորութիւնն կար յԸ. դարուն նախ քան զՔր. թրակացի ժողովուրդներէ։ Առ Աղեքսանդրիւ նուաճեցաւ, բայց յետ սակաւուց առաւ զիւր անկախութիւնն մինչև 75 նախ քան զՔր., երբ թագաւոր երկրին Նիկոմեդ Գ. թողուց կտակաւ Հռոմայեցւոց զտէրութիւնն։

Գաղատացի հրոսակներ 278-ին ն. ք. զՔր. հրաւիրուելով Բիւթանիոյ թագաւորէն՝ հաստատուեցան յետ բազում աւարառութեանց գրեթէ ի միջոցին Փոքուն Ասիոյ առ Ալիւս գետով, և երկիրը կոչուեցաւ յանուն նոցա Գաղատիա։ Հռոմայեցի հիւպատոսն Մանլիոս Վուլսոն նուաճեց (189) այս աւազակաբարոյ ժողովուրդն, որ այնուհետև առ սակաւ սակաւ ընդելացաւ յունական քաղաքակրթութեան, և մտնելով ընդ պաշտպանութեամբ Հռոմայեցւոց՝ տնեց ո՛չ իբրև թագաւորութիւն, այլ իբրև ինքնօրէն գաւառ։ Առ Օգոստոսիւ Գաղատիա եղաւ նահանգ հռոմէական։

Կապադովկիա կար յԷ. դարուն նախ քան զՔրիստոս։ Նուաճեցաւ առ Կիւրոսիւ, որ բաժնեց զայն երկու սատրապութիւն, Պոնտոս և բուն Կապադովկիա անուամբ։ Ըստ Պոլիբեայ՝ Կապադովկիոյ թագաւորք էին յիշխանաց Պարսից։ Աղեքսանդր թողուց զԿապադովկիա ինքնօրէն. Սելևկեանք յանձնեցին զերկիրն կուսակալաց, որ յետոյ եղան ինքնիշխան դէպ յամն 312։ Արիարաթ Ե. (220—166) ի թագաւորս Փոքուն Ասիոյ եղաւ առաջին, որ բարեկամացաւ Հռոմայեցւոց յետ պարտութեանն Անտիոքոսի առ Մագնեսեաւ, պարտութիւն որ զՓոքրն Ասիա արկ ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց։ Կապադովկիա եղաւ նահանգ առ Տիբերիւ, 18 յետ Քսի։

Պոնտոսի թագաւորութիւնն սկսաւ Զ. դարուն նախ քան զՔր.։ Առաջին թագաւոր երկրին եղաւ մին յիշխանաց Պարսից։ Թագաւորք Պոնտոսի կը կոչուէին ընդհանրապէս Միհրդատ, ինչպէս Կապադովկիային՝ Արիարաթ։ Պոնտոսի վերջին թագաւորն եղաւ Միհրդատ Ը. Եւպատոր (123—63), կոչեցեալն Մեծ, որոյ մահուամբ (63) երկիրն եղաւ նահանգ Հռոմայեցւոց։

3. Այս թագաւորութիւնք Փոքուն Ասիոյ, որոց գրեթէ ամէնքը տևեցին մինչև ի կէսն Ա. դարու նախ քան զՔր.՝ անկան ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց, որպէս տեսաք, յամէն 190, յետ ճակատուն առ Մագնեսեաւ. էին լի նախանձու իրարու դէմ և տեւլութեամբ առ Հռոմայեցիս. բայց այս վերջիններուն ահը չէր թողուր և ոչ միումն՝ մեծանալ վնասու միւսոյն։ Իբրև վեց տարի յետոյ քան զտիրելն հռոմէական ազդեցութեան ի Փոքրն Ասիա՝ Փառ-

նակ արքայ Պոնտոսի յարձակեցաւ ի վերայ Եւմենեայ արքային Պերգամոնի, բայց օգնութեամբ Հռոմայեցւոց ոչ միայն դարձաւ յետս հանդերձ տուգանօք պատերազմին, այլեւ կազմուեցաւ ի մէջ թագաւորութեանց Փոքուն Ասիոյ (180) դաշնակցութիւն մի, որոյ մասնակից էր, ըստ Պօղիբեայ ժամանակակից պատմագրի՝ նաեւ վերին Հայոց թագաւորն Արտաքսիաս, ինչպէս տեսանք Մասն Ա. էջ 82, 83 եւ 236:

Հոն տեսանք նաեւ ի Ստրաբոնէ, որ գրեթէ ժամանակակից է, թէ ինչպէս Արտաքսիաս եւ Զարիադրէս, մին Մեծին Հայոց հիւսիսային արեւելեան մասին (Երասխայ), եւ միւսն հարաւային արեւմըտեան մասին (Ծոփաց) կուսակալ ի կողմանէ Սելեւկեանց՝ յետ պարտութեան տեառն իւրեանց Անտիոքոսի մեծի՝ կապեցին թագ եւ նուաճելով դրացի ազգերէ գաւառներ՝ ընդարձակեցին զտէրութիւն իւրեանց:

ԳԼՈՒԽ Թ.

ԱՐՏԱՔՍԻԱՍԱՅ ՑԵՂՆ 190-ԷՆ ՆԱԽ ՔԱՆ ԶՔՐ. ՄԻՆՉԵՒ Ի ՍԿԻԶԲՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ։

1. Տիգրան մեծ: 2. Ստրաբոն, Պոմպէոս Տրոգոս զՏիգրանայ: 3. Գլխաւոր գործ Տիգրանայ: 4. Թագաւորք Պոնտոսի: 5. Միհրդատ. պատերազմունք նորա ընդդէմ Հռոմայեցւոց. Ստրաբոն, Յուստինոս, Ծննիոս Փլորոս: 6. Դաշնակցութիւն Տիգրանայ ընդ Միհրդատայ. Ղուկուղղոս: 7. Վկայութիւն Կիկերոնի: 8. Տիգրան նուաճի. Հայք բարեկամ Հռոմայեցւոց: 9. Աղերս Հայոց ընդ Պարթեւաց: 10. Դիոն Կասսիոս զՏիգրանայ եւ զորդւոյն: 11. Բարք Տիգրանայ: 12. Թէոդոր Ռէյնաք զՀայոց: 13. Աւանդութիւն մի ի հանդէս դաշնակցութեանն Տիգրանայ ընդ Միհրդատայ: 14. Հնագոյն դիք Հայոց: 15. Դիցապաշտութիւնն Հայոց եւ Կապադովկացւոց: 16. Կրօնական աղերս ընդ Կապադովկացւոց: 17. Մաժաք ըստ Ստրաբոնի: 18. Փոքր Հայք: 19. Պոնտոս:

1. Պօղիբիոս չյիշեր զյաջորդս Արտաքսիասայ, և ոչ Ստրաբոն կը յիշէ Արտաքսիասայ անմիջական յաջորդներն, այլ միայն, իբրև ի նորա զաւակէն կամ յաջորդներէն՝ զՏիգրան մեծ և զԱրտաւազդ։ «Տիգրանէս ի զաւակէ Արտաքսիասայ, առ զմասն երկրին (Հայոց) որ ձգի առ Մարօք, Աղուանիւք և Վրօք մինչև ի Կողքիս և ի Ծովեզերեայն Կապադովկիա»։ Եւ սակաւ մի յետոյ.—«Յաջորդն Տիգրանայ Արտաւազդ լինէր յաջող և բարենշան, ցորչափ եկաց ի բարեկամութեան Հռոմայեցւոց»։ Ստրաբոն ասելով զՏիգրանայ, թէ էր ի զաւակէն Արտաքսիասայ, և ոչ յաջորդ նորա՝ կուտայ իմանալ, թէ ի մէջ այս երկուց կային այլ թագաւորք։ Այլ զոցանէ չունիմք ստոյգ տեղեկութիւն ժամանակակից աղբիւրներէ, այլ խառն ի խուռն ինչ և կարկատուն։ Տրոգոս Պոմպէոս միայն, մատենագիր Ա. դարու առ Յուստինոսի՝ կը յիշէ զԱրտաւազդ ոմն թագաւոր Հայոց ի պատերազմի ընդ Միհրդատայ Բ-ի (100—86), ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։ Ուստի և մեք թողեալ զսոսա, իբրև մեր պատմութեան անստոյգ ժամանակին վերաբերեալ, և բաւական համարելով ինչ որ ասացաւ զսկզբնաւորութենէ երկրորդ հարստութեանն Հայոց Ար-

տաքսիասաւ յառաջնում մասին Պատմութեան մերոյ, էջ 235—241՝ կ՚սկսինք մեր պատմական ժամանակն ի Տիգրանայ մեծէ, որ կը թուի թագաւորեալ 90-ին կամ ամօք ինչ յառաջ նախ քան զՔրիստոս։

Տիգրանայ թագաւորելուն թուականն անտի յայտնի է, որ 70-ին նախ քան զՔր., երբ Ղուկուղղոսի դեսպանն Ապպիոս Կղաւդիոս եկաւ՝ Տիգրան էր թագաւոր ի 25 ամաց հետէ. ապա թագաւորած էր նա 95-ին (Պլուտ. Ղուկուղ. 21)։ Իսկ մահ նորա դիպեցաւ ի փետրուարի 54-ին (ըստ Կիկ. վասն Սեստ. Գ. 59), կամ 56-ին (ըստ Պլուտ. Կրաս. 49), և ի մեռանելն էր 85 ամեայ։

Տիգրանայ ներքին գործոց վրայ ի Հայս իւր թագաւորութեան գրեթէ քառասնամեայ ժամանակին մէջ՝ չունիմք առոյգ տեղեկութիւն առ ի չգոյէ տոհմային ժամանակակից պատմութեան։ Առոյգ է միայն լնուլն նորա Հայոց երևելի քաղաքներն հրեայ գերիներով, զորս բերաւ ի Պաղեստինէ յարշաւանին յԱսորիս, հաւանականապէս նաև Յունաց երևելի աստուածներուն պատկերներով յարշաւանին ի Փոքրն Ասիա և ի Յոյնս ընդ Միհրդատայ, ընդ որում էր նիզակակից ինքն Տիգրան։ Զարտաքին քաղաքականութենէ նորա միայն գիտենք ժամանակակից օտար պատմիչներէ ինչ ինչ կարևոր, որպիսի են թագաւորել նորա Ասորւոց, պատերազմն ընդ Հռոմայեցիս, նախ իբրև օգնական Միհրդատայ և ապա առանձինն, և պարտութիւն նորա։

2. Տիգրանայ վրայ հնագոյն և անգին յիշատակարան է Ստրաբոնի սա հատուածն, որ սակաւ տողերու մէջ կ՚ամփոփէ այս Հայ աշխարհակալին ամբողջ պատմութիւնն անաչառ։ «Տիգրան, ի գաւակէն Արտաքսիասայ, կալաւ իբրև թագաւոր զբունն Հայաստան, այն է զբովանդակ մասն երկրին, որ ձգի զՄարօք, զԱղուանիւք և զՎրօք մինչև ի Կողքիս և ի ծովեզերեայն Կապադովկիա, մինչ Արտանէս (ըստ Ստեփ. Բիւզ. Արշակէս) ի զաւակէն Զարեհադրեայ, ժառանգէր զհարաւայինն Հայաստան, մանաւանդ զմասն արևմտից հարաւոյ, այլ ընդ հուպ արկաւ յաթոռոյն և սպանաւ ի Տիգրանայ, որ եկաց այնպէս միահեծան տէր համօրէն երկրին։ Բայց և ընդ Տիգրան անցին այսպէս անցք։ Ի սկզբան արգելեալ էր առ Պարթևս իբրև պատանդ. սակայն յաջողեցաւ, տուեալ նոցա հովիտս եօթանասուն ի Հայոց՝ առնուլ զթագաւորութիւնն. յետոյ զօրացեալ՝ հան ի նոցանէ զոր միանգամ եառ, այլև աւերէր զերկիր նոցա, մանաւանդ շուրջ զՆինուէիւ և զԱրբելաւ։ Յետ այնորիկ հնազանդեցոյց ընդ իւրով իշխանութեամբ զԱտրպատական և զԿորդուս, և առ սակաւ սակաւ զմնացեալ մասն Միջագետաց. հուսկ ապա անցեալ ըստ Եփրատ՝ նուաճէր զինու զօրութեամբ զԱսորիս իսկ և զՓիւնիկէ։

Հասեալ նորա յայնչափ աստիճան զօրութեան՝ արկ մօտ ի կամուրջն կամ Զեւգմայն Եփրատայ՝ հիմն նորոյ քաղաքին, զոր կոչեաց Տիգրանակերտ, և ուր ժողովեաց զբնակիչս երկոտասան քաղաքաց Յունաց, զոր անմարդացոյց յայն սակս։ Այլ մինչև ի գլուխ հանեալ նորա զոր ձեռն արկեալ էր՝ կրեաց յարձակումն ի յաղթողէն Միհրըդատայ՝ ի Ղուկուղղեայ, որ տուեալ հրաման բնակչացն Տիգրանակերտի դառնալ ի քաղաք ծննդեան իւրեանց՝ կործանեաց զմայրաքաղաքն նոր, որ չև էր հասեալ ի կատարումն, և ած գնա լինել աւան դուզնաքեայ, այլ և զՏիգրան վանէր յերկրէն Ասորւոց և ի Փիւնիկեայ» (Ստր. ԺԱ. 15)։ Զլինելն Տիգրանայ կանխաւ պատանդ առ Պարթևս՝ կը յիշէ նաև Պոմպէոս Տրոգոս, մատենագիր Ա. դարու առ Յուստինեայ (Դպր. ԼԸ. 3). «Տիգրան թագաւորէր յայնժամ ի Հայս։ Լեալ սորա երբեմն պատանդ ի Պարթևս՝ արձակեցաւ յետոյ ի նոցանէ ի թագաւորութիւն հարց իւրոց»։

3. Գլխաւոր գործք Տիգրանայ են սակայն թագաւորել նորա Ասորւոց (87—63) և պատերազմն ընդ Հռոմայեցիս։ Ըստ Ստրաբոնի, ինչպէս տեսանք՝ Տիգրան զինու զօրութեամբ տիրեց Ասորւոց և Փիւնիկէի, անտարակոյս ոչ առանց հաճութեան գէթ մեծի մասին Ասորւոց, որ ձանձրացած էին յանպիտանութենէ վերջին Սելևկեանց։ Յետ մահուն Անտիոքոսի մեծի (186), զորոյ պարտութիւնն յիշեցինք վերագոյնն՝ Սելևկեանց տէրութիւնն սկսաւ նուազել և տկարանալ։ Սելևկոս Փիլոպատոր (Հայրասէր, 186—174), որ չէր մոռացած թէ Պերգամոնի թագաւորն Եւմենէս իւրովանն նպաստած էր ի պարտութիւն հօր նորա Անտիոքոսի մեծի առ Մագնեսեաւ՝ ի պատերազմին Փառնակայ արքային Պոնտոսի ընդդէմ Եւմենեայ (տես ի վերոյ) եղաւ օգնական Փառնակայ, բայց արգելաւ ի Հռոմայեցւոց և սպանաւ թունաւորեալ յիւրմէ պաշտօնէէն Հեղիոդորոսէ թելադրութեամբ Եւմենեայ։ Յաջորդ Սելևկոսի Անտիոքոս Եպիփան (Երևելի, 174—164), զոր արժան էր կոչել մանաւանդ, ասէ Պողիբիոս, Եպիման (Անմիտ)՝ թագաւորեց արդարև անմտաբար, թէպէտ ցուցուց ոչ սակաւ քաջութիւն ի պատերազմին ընդդէմ Մայրասէրն Պտղոմեայ, և մտաւ ի Պեղուսիոն. բայց Հռոմայեցի պրետորն Պոմպիղիոս մատոյց նմա նամակ ի ծերակուտէն, որ կը հրամայէր նմա առ ժամուն ելանել յԵգիպտոսէ։ Անտիոքոս խռովեցաւ, բայց հնազանդեցաւ։ Այս Անտիոքոս է, որ փորձեց հաստատել մի միայն կրօնս իւր բոլոր տէրութեան մէջ՝ մուծանելով ամենայն ուրեք յունական պաշտօն, բայց տեսաւ ընդդիմութիւն, մանաւանդ ի Հրէից, զորոց տաճարը պղծած էր կուռ պատկերներով, և տուաւ առիթ Մակաբեանց՝ զդէմ ունել դիւցազնաբար

և լինել ինքնօրէն: Անտիոքոս առ ագահութեան փորձեց կողոպտել զերևելի մեհեանն Անահտայ յԵղիմայիս (ի Պարսս). բայց արտաքսուելով քաղաքացիներէն ամօթով՝ մեռաւ չարաչար ի Բաբելոն, ըստ Պարսից՝ ի պատիժ սեղանակապուտ փորձին ընդդէմ մեհենին իւրեանց, ըստ Հրէից՝ պղծելուն համար Երուսաղէմի տաճարին սրբութիւնը: Անտիոքոսի Եպիփանու յաջորդեց որդին Անտիոքոս Եւպատոր (Հօրամօյն, 164—162). բայց յետ սակաւուց Սելևկեայ Փիլոպատորի որդին Դեմետրիոս Ա. Սոտեր, որ էր պատանդ ի Հռոմ՝ խոյս տալով եկաւ յԱսորիս, և յաղթելով Անտիոքոսի սպան զնա և թագաւորեց (162—150). բայց ատելի եղաւ ոչ իւր հպատակաց միայն, այլև դրացի ազգաց, որ յարուցին նմա ոսոխ զԱղեքսանդր ոմն Բաղա, որ յաղթելով Դեմետրիոսի՝ թագաւորեց (149—146), բայց ինքն ևս յաղթուեցաւ ի ժառանգէն Դեմետրիոսի Դեմետրիոսէ Բ. Նիկատոր կոչեցելոյ և սպանաւ:

Ժառանգք Դեմետրիոսի Սոտերայ, Դեմետրիոս Նիկատոր, որ բռնուեցաւ գերի ի Պարթևաց, և եղբայր նորա Անտիոքոս Է. Սիդեթէս, որ սպանաւ յԵղիմայիս, ի միջէ կողմանէ, և բռնաւորք ոմանք միւս կողմանէ—ինչպէս Տրիփոն ոմն և Աղեքսանդր Զեբինա, որդի Աղեքսանդրի Բաղայի, ապա Անտիոքոս Ը. Գրիպոս, որդի Դեմետրիոսի Նիկատորայ, և եղբայր նորա ի մօրէ Անտիոքոս Թ. Կիզիկեցի, որդի Անտիոքա Սիդետայ և վեցեքին որդիք Անտիոքոսի Գրիպոսի, Սելևկոս Զ, Անտիոքոս ԺԱ Եղբայրասէր, Փիլիպպոս, Դեմետրիոս Գ Եւքերոս (երջանիկ), և Անտիոքոս ԺԲ, որ կոչուեցաւ Դիոնիսիոս, ինչպէս նաև Անտիոքոս Ժ, որ կոչեցաւ բարեպաշտօն, որդի Անտիոքոսի Կիզիկեցւոյ,—146-է մինչև 85 ներքին կռիւնեով, սոսկալի արիւնհեղութեամբ, քաղաքներ աւերելով և մեհեաններ կողոպտելով այն աստիճան զզուեցուցին ժողովուրդը, որ Տիգրան մեծ դիւրաւ կարաց գտնել մուտ յԱսորիս (85), որպէս ասացաք՝ ոչ առանց հաճութեան ազգին: Պոմպէոս Տրոգոս, կամ մանաւանդ Յուստինոս ի համառօտութեան նորա՝ զթագաւորելոյն Տիգրանայ ի վերայ Ասորւոց ունի այսպէս: «Եւ զի էր ի մէջ երկուցն եղբարց (Անտիոքոսի Ը. և Անտիոքոսի Թ.) անհաշտ թշնամութիւն՝ իբրև պատերազմն անողոք սպառէր և՛ զթագաւորսն և՛ զթագաւորութիւնն Ասորւոց՝ ժողովուրդն այնուհետև դիմէր յարտաքնոցն օգնականութիւն, և խնդրէր զօտարսն կացուցանել թագաւոր: Ոմանք յօժարէին ի Միհրդատ արքայ Պոնտոսի, այլք՝ ի Պտղոմէոս թագաւոր Եգիպտացւոց. և զի Միհրդատ էր ի կռուի ընդ Հռոմայեցիս, և Պտղոմէոս համակ թշնամի Ասորւոց՝ միաձայն հաւանութեամբ ամենեցուն ընտրեցաւ Տիգրան արքայ Հայոց, որ ոչ հզօր

միայն էր ինքնին, այլև դաշնակից Պարթևաց։ Տիգրան, կոչեցեալ ի թագաւորութիւն անդր Ասորւոց՝ վայելէր խաղաղութեամբ ամս ութևտասն ի թագաւորութեանն, ոչ տուեալ երբէք պատերազմ ընդ ումեք, և ոչ այլ ուստեք կրեալ յարձակումն։ Բայց երկիրն, թէպէտև ապահով ի թշնամեաց՝ ապականէր գետնաշարժիւ, յորմէ կորեան հարիւր և եօթանասուն հազար մարդիկ, և ոչ սակաւք ի քաղաքաց։ Այս նշանք, ըստ հմայից, զփոփոխութենէ իրաց յայտ առնէին։ Արդարև իսկ յետ մատնելոյ Տիգրանայ ի պարտութիւն ի Ղուկուղղեայ՝ Անտիոքոս որդի Կիզիկենայ կարգեցաւ ի նմին իսկ ի Ղուկուղղեայ թագաւոր Ասորւոց։ Այլ զոր Ղուկուղղոսն ետ՝ տանայր յետոյ Պոմպէոս, և Կիզիկենայ, որ պահանջէր զթագն՝ տանէր պատասխանի. «Զատմ, ասէ, թագաւոր Ասորւոց, եթէ խնդրիցէ ես ազգն՝ զայնպիսի ոք, որ զամս ութևտասն, մինչ ունէր Տիգրան զերկիրն՝ թաքուցեալ յանկեան ուրեք աշխարհին Կիլիկեցւոց, ապա ի պարտելն Տիգրանայ ի Հռոմայ՝ պահանջէ զայլոց վաստակոց զվարձս. և զի չիշխեաց հանել զթագաւորութիւնն ի Տիգրանայ՝ ապա ի մեկնելն նորա չէ պարտ տալ նմա՝ որում պաշտպանելն ոչ գիտաց, և ոչ մատնել միւսանգամ կամիցիմ զԱսորիս ապատակութեան Հրէից և Արաբացւոց»։ Այսպէս Պոմպէոս առնէր զԱսորիս նահանգ, և յանմիաբանութենէ թագաւորաց համազգեաց՝ արևելք լինէին տակաւ Հռոմայեցւոց» (Յուստ. Խ. 1. 2)։ Ըստ Յովսեպոսի՝ Հրեայք լսելով, թէ Տիգրան մտաւ յԱսորիս և ունէր ի մտի գալ ի վերայ Հրէից ևս՝ երկեան յոյժ։ Թագուհին Աղեքսանդրա կամ Սաղոմէ (79—71) զրկեց հրեշտակս մեծամեծ ընծայիւք առ Տիգրան, մինչ պաշարած էր նա (70) զՊտղոմայիդ (Աքր) քաղաք Փիւնիկեցւոց, զոր ունէր Սեղինէ կամ Կղէոպատրա, Անտիոքոսի Կիզիկեցւոյ այրին. և Տիգրան հաճելով, յետ առնլոյ զՊտղոմայիդ մեկնեցաւ առանց մտնելոյ ի Հրէաստան, մանաւանդ որ լսեց, թէ Ղուկուղղոս, յետ յաղթելոյ Միհրդատայ՝ կը խաղար ի վերայ Հայոց։ «Զայնու ժամանակաւ լու եղև, եթէ Տիգրան արքայ Հայոց մտեալ էր յԱսորիս հինգ հարիւր հազար արամբք, և ունէր ի մտի գալ նաև ի Հրէաստան։ Այսպիսի մեծ և անակնկալ վտանգ զարհուրեցոյց զտիկինն Աղեքսանդրա և զհամօրէն թագաւորութիւնն։ Առաքեաց նա ընծայս մեծամեծս առ Տիգրան ի ձեռն հրեշտակաց, մինչ էր նա ի պաշարել զՊտղոմայիդ։ Բամբիշն Սեղինէ, Կղէոպատրայն կոչեցեալ, որ տիրէր յայնժամ Ասորւոց՝ ետ խրատ հպատակաց իւրոց քաջութեամբ զդէմ ունել Տիգրանայ։ Հրեշտակք Աղեքսանդրայ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝ ածին զթագաւորն յաղերս, ունել զութ տիկնոջն և ազգին։ Տիգրան ընկալաւ զպատգամաւորսն քաղցրու-

թեամբ և արձակեաց բարւոք ակնկալութեամբ։ Իբրև առ նա զՊտղոմայիդ, լուեալ եթէ Ղուկուղղոս, որ զհետ պնդեալ էր Միհրդատայ, առանց ի բուն արկանելոյ զնա—զի զերծաւ նա ի Վիրս—մտեալ ի Հայս աւերէր և յաւարի առնոյր զերկիրն՝ դարձաւ յետս» (Յովս. Նախն. պատմ. ԺԳ. 24)։ Տիգրանայ գրաւելն զԱսորիս և արութիւնք Միհրդատայ ի Փոքուն Ասիա լինէին այնպիսի ժամանակ (117—87), մինչ Հռոմայեցիք զբաղեալ էին ներքին և արտաքին կռիւներով առ Մարիոսիւ և Սուղղայիւ, ինչպէս արդէն տեսանք։

4. Յետ անկանելոյ Ասիոյ 190-էն հետէ, այն է ի պարտութենէն Անտիոքոսի մեծի առ Մագնեսեաւ, ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց՝ թագաւորք Պոնտոսի էին, որ քան զայլս աւելի կամէին թօթափել զայն ազդեցութիւն, և զայս առնել չէր հնար՝ բայց նուաճելով համօրէն Փոքր Ասիա։ Ուստի Փառնակ արքայ Պոնտոսի (184) սկսաւ աշխարհակալութիւնը. նուաճելով զՍինոպ քաղաք Պափղագոնիոյ՝ արար զայն թագաւորանիստ, և յարձակեցաւ ի վերայ Եւմենայ արքայի Պերգամոնի, բայց հարկեցաւ յերկիւղէ Հռոմայեցւոց կալ յետս, թողով տուգանս պատերազմի։ Այս առթիւ եղաւ ի մէջ թագաւորաց Փոքուն Ասիոյ այն երևելի դաշնադրութիւնն, որոյ մասնակիցներէն մին էր նաև Արտաքսիաս արքայ վերին Հայաստանի, ինչպէս արդէն յիշուեցաւ։ Յաջորդն Փառնակայ Միհրդատ Զ. (157) այն ձախողութենէն զանգիտելով՝ մնաց բարեկամ Հռոմայեցւոց, բայց որդի և յաջորդ նորա Միհրդատ Է. Եւպատոր ձեռն արկ խնդրել իւր հաւուն Փառնակայ վրէժը։

5. Միհրդատայ և նորա պատերազմներուն վրայ կը գտնենք բազում ինչ առ Ապպիանու, Պլուտարքեայ, Վէլլէոսի, Յուստինոսի, առ Դիոնի և առ այլս՝ որ չեն ժամանակակից։ Ստրաբոն, իբրև աշխարհագիր՝ կ'անցնի միայն ուրեք ուրեք համառօտ. ասէ սակայն, թէ առ իւրով ժամանակաւ կային պատմիչք գործոց Միհրդատայ, ուստի հարկաւ ժամանակակից, բայց թէ ովք էին՝ չյիշեր։ Ժամանակակից պատմիչ կամ գէթ վկայ գործոց Միհրդատայ ունիմք զնոյն ինքն Ստրաբոն և զԿիկերոն, մին աշխարհագիր և միւսն ճարտարախօս, որ ըստ դիպաց և եթ կը յիշեն զիրս Միհրդատայ, են սակայն արժանի հաւատարմութեան։ Ստրաբոն ի համառօտ պատմութեանն զՏիգրանայ, ինչպէս տեսանք ի վերոյ՝ կը յիշէ միայն զառումն Տիգրանակերտի ի ձեռն Ղուկուղղեայ և զվանումն Տիգրանայ յերկրէն Ասորւոց և Փիւնիկէի, առանց ամենևին յիշելու նորա դաշնակցութիւնն ընդ Միհրդատայ. բայց յիշելով Ղուկուղղոսի գալն ի վերայ Տիգրանայ՝ կը ցուցնէ թէ գիտէր զՏիգրան դաշնակից և օգնական Միհրդատայ։ Իսկ զՄիհրդատայ կը յիշէ միայն

ինչ ինչ ի Հարաւանցի. զորօրինակ զգնալն նորա ի Բոսփոր Կիմմերեան, բայց եբրև Հալածեալ ի Հայրենի երկրէն, այսինքն զփախուստ նորա յետ պարտութեանն ի Պոմպէոսէ.—«Այսպիսի են կեանք ժողովրդոց երկրին (Բոսփորոսի)։ Իսկ զիշխանութիւն տէրութեանն յանձնէ ցեղապետաց, որ սեփծուզն կոչին, և են ընդ իշխանութեամբ այլոց բռնակալաց. Հենիոխքն, զորօրինակ, ունէին թագաւորս չորս ի ժամանակին՝ զի Միհրդատն Եւպատոր, Հալածեալ ի թագաւորութենէ Հարց իւրոց, Հարկէր երթալ խնդրել տեղի ապաստանի ի ներքին կողմանս անդ Բոսփորայ» (Քրիմէ, Ստր. ԺԱ. Բ. 13)։ Ստրաբոն գրէ նոյնպէս զարշաւանս Միհրդատայ ի Կողքիս (Կովկասի կողմերը).—«Ի Հին ժամանակս, ասէ, էր արդարև նշանաւոր երկիրն, որպէս գիւրին է դատել յառասպելաց անտի արշաւանին Յասոնի. բայց յետոյ բաժանեցաւ երկիրն ի բազում գաւառս, որոց տիրէին թագաւորք զուգնաքեայք, որ սեփծուզն կոչէին. այլ իբրև զօրացաւ յոյժ Միհրդատ Եւպատոր՝ Համօրէն Կողքիս նուաճեցաւ։ Այլ Միհրդատ ծառայս բարեկիրս և զիւր մտերիմն առաքէր անդր կուսակալ, որպէս զՄոփաթեանէս զիմ մօրեղբայր» (Անդ. 18)։ Եւ այլուր (ԺԲ. Գ. 11) խօսելով զԱինոպայ՝ ասէ. «Քաղաքս այս… եղև ազատ բազում ժամանակս, և չկարաց պահել զինքնօրէնութիւնն մինչև ի սպառ. պաշարեալ առաւ նախ ի Փառնակայ, ապա ի պայազատաց նորա մինչև (ի Միհրդատ) յԵւպատորն, կամ լաւ ևս՝ մինչև ի կործանումն մեծի թագաւորին ի ձեռաց Հռոմոց»։ Իսկ զպատմագրաց Միհրդատայ ասէ Ստրաբոն այսչափ ինչ. «Պատմիչք պատերազմացն Միհրդատայ, տա որս պարտ իցէ մեզ դիմել՝ յիշեն նախ զԱքէս, ապա զԿողքացիս», այլովքն Հանդերձ (ԺԱ. Բ. 15)։ Ոչ ժամանակակից միայն, այլև միջամուխ էր Կիկերոն, որ ի ճառին զՄանիղեան օրինաց (pro lege Manilia), *և ի ճառին ի պաշտպանութիւն Մուրենայ՝ կը Համառօտէ Միհրդատայ պատերազմներուն պատմութիւնը։ Մանիղիոս տրիբուն ժողովրդեան, կուսակից Պոմպէի, առաջարկեց* (68) *տալ Պոմպէի զՀրամանատարութիւն պատերազմին ընդդէմ Միհրդատայ, և Կիկերոն ջերմաջերմ պաշտպանեց զառաջարկութիւնն Մանիղեայ։*

Կնէոս Պոմպէոս էր Սուղղայի կուսակիցներէն, ազնուապետական, բայց սիրելի նաև ժողովրդեան։ Եղած էր գործակից Կրասսի ի քաղաքային պատերազմին ի Սպանիա առ Սերտորիոսիւ (77—72) *և ի պատերազմին գերեաց յԻտալիա առ Սպարտակոսիւ* (73—71). *նուաճած էր մանաւանդ զՀէնս, որ ուազակութեամբ մեծամեծ վնասներ կը գործէին ի Միջերկրականին ծովեզերեայ քաղաքաց Հռոմայեցւոց* (67)։ *Այս պատերազմներէն ետքը առաւ Պոմպէոս*

զօրաց հրամանատարութիւնն ընդդէմ Միհրդատայ փոխանակ Ղուկուղղոսի։ Իսկ Ղիկկինիոս Մուրենայ էր տեղակալ Սուղղայի և բազում իւիք եղև նպաստ ի յաղթութիւնն նորա (87) ընդդէմ Արքեղայոսի զօրավարին Միհրդատայ առ Քերոնեաւ։ Ամբաստանեալ ի Կատոնէ, որպէս թէ նենգութեամբ առած էր Մուրենայ զօրավարութիւնը՝ ջերմաջերմ պաշտպանուեցաւ ի Կիկերոնէ։ Այս երկու ճառք Կիկերոնի կ'ամփոփեն արդարև Միհրդատայ և դաշնակցին նորա Տիգրանայ պատերազմներուն վրայ ընդ Հռոմայեցիս գրեթէ ամէն կարևոր կէտ։ Բայց և այնպէս, որպէս զի ամենևին առանց պատմական վկայութեան չթողուին այս կարևոր անցք, որ մեզ ևս կը վերաբերին, միանգամայն ի լուսաւորութիւն Կիկերոնի ճառերուն, (յորոց կարևոր մասեր, որ մեր խնդրոյն անկ են՝ պիտի բերենք ի ստորև)՝ դնենք հոս Միհրդատայ վրայ երկու ընդարձակ հատուած, որ զՄիհրդատ և զպատերազմն նորա ընդ Հռոմայեցիս կը ցուցնեն մեզ բովանդակ։ Այս պատմական հատուածոց մին է Յուստինոսի (մատենագիր Բ. դարու), և միւսն Ենեայ Փլորայ (մատենագիր ըստ ոմանց Ա., ըստ այլոց՝ Բ. դարու)։ Յուստինոս կ'առնու ի սկզբանէ և կը բերէ մինչև ի պատերազմն ընդ Հռոմայեցիս՝ առանց մտնելու յանցս այն մեծ պատերազմին. Փլորոս կ'սկսի՝ ուր կը թողու Յուստինոս։ «Ժողովուրդն Հռոմէական կամեցաւ տալ վարձս թագաւորաց՝ որոց լեալ էր նմա օգնական ընդդէմ Արիստոնիկեայ արքային Պերգամայ (թշնամւոյն Հռոմայեցւոց)։ Միհըրդատ (Զ.) արքայ Պոնտոսի էառ զվերինն Փռիւգիա. որդիք Արիարաթայ արքային Կապադովկացւոց, որ մեռեալ էր ի պատերազմի՝ ընկալան զԼիկայոնիա և զԿիլիկիա։ Այսպէս ժողովուրդն Հռոմէական ընդ որդիս իւրոյ դաշնակցին գնաց ազնուագոյնս քան զմայր նոցա. քանզի մինչ Հռոմ ի նոցա տխեղծ հասակին ընդարձակէր զտէրութիւն նոցա՝ մայրն զկեանս նոցա բառնայր։ Լաւոդիկեայ (այս էր անուն կնոջն) եղեն յԱրիարաթայ մանկունք վեց, յորոց բազումք արդէն հասեալ էին յարբունս. ուստի երկուցեալ կնոջն, թէ ընդ հուպ կորուսցէ զիշխանութիւնն՝ զհինգն ի նոցանէ կորոյս դեղովք. կրտսերագոյնն զերծեալ յանագորոյնութենէ մօրն՝ եղև թագաւոր յետ մահուն Լաւոդիկեայ, զոր վասն անգթութեանն չարամահ սատակէր ժողովուրդն։ Իսկ Միհրդատ (Զ) արքայ Պոնտոսի մեռանէր յանկարծ, թողեալ որդի մի յիւր անուն, որ եհաս անագան ուրեմն յայնպիսի մեծութիւն, մինչև գլել զթագաւորս ոչ իւրոյ դարուն միայն, այլև զօրս յառաջ քան զնա եղեն։ Զամս քառասուն տևեալ պատերազմ ընդ Հռոմայեցւոց՝ ելևելս առնէր զնոքօք. հարեալ ի Սուղղայէ, ի Ղուկուղղեայ և յայլոց զօրավարաց

քաջաց, Հուսկ ապա ի մեծէն Պոմպէոսէ՝ հանապազ առնոյր անդրէն զէնս ուժգնագոյնս և պայծառագոյնս. պարտութիւնքն առնէին զնա ևս իմն ահագին: Հուսկ ուրեմն մեռանէր ի ծերութեան, ոչ բռնի ինչ ի թշնամեաց, այլ ինքնակամ և ի թագաւորութեան անդ իւրոց հաւուց, զժառանգութիւն նոցա թողեալ իւրուրոյն որդւոյն: Երկինք իսկ լինէին գուշակ նշանօք զառյապա մեծութենէ նորա: Զի յամին, յորում ծնաւ նա և յորում սկսաւ զառաջինն թագաւորել՝ զաւուրս եօթանասուն երևէր աստղ գիսաւոր այնպէս պայծառ, մինչև թուել բորբոքել համօրէն երկնից: Տարածութիւն նորա ունէր զչորրորդ մասն երկնից, պայծառութիւնն յաղթէր արեգական, և ելանելն նորա և մտանել տևէր ժամս չորս: Ի մանկութեանն Միհրդատ էր նշաւակ նենգութեան խնամակալաց, որոց հեծուցեալ զնա յերիվար ամեհի՝ ախպէին արձակել նիզակ յարշաւանի. այլ մանուկ իշխանն վարեալ զնժոյգ իւր ճարտարութեամբ ի վեր քան զիւր տես՝ ունայնացուցանէր զդաւն: Յայնժամ մտաբերեցին ի թոյն, և նա առ երկիւղին ըմպէր յաճախ անդեղեայս, և հզօր դարմանովք կացոյց զանձն այնպէս յապահովի ի հնարից նոցա՝ մինչև ի ծերութեանն կամեցեալ առնուլ թոյն՝ ոչինչ ստնանէր նմա: Կասկածեալ ապա, թէ առ ի չգոյէ թունոյ թշնամիք նորա արկցեն սուր ի կիր՝ կեղծաւորէր սիրել զորս. ուստի զամս եւթն ոչ յագարակի և ոչ ի քաղաքի ագանէր ընդ յարկաւ, այլ թափառելով անցուցանէր զամենայն գիշեր ի խորշս լերանց, առանց տալոյ ումեք գիտել զիւր դադար: Անդ կրթէր զանձն մերթ ի փախչել և մերթ ի պնդել զհետ էրէոց. էր զի և ոգորէր ընդ նոսա: Այսպիսի կենօք զգուշացաւ ի դարանաց և պնդեաց զմարմին իւր խստամբերութեամբ: Հասեալ ի տիս վարելոյ զիշխանութիւնն՝ խորհեցաւ ընդարձակել մանաւանդ զտէրութիւնն՝ քան իշխել որում ունէրն: ԶՍկիւթացիսն, ցայնժամ աննկունս, որոց սատակեալ էր զԶոպիւրիոն զօրավար Աղեքսանդրի մեծի երեսուն հազարօքն, սպանեալ զԿիւրոս և զերկերիւր հազարս ի Պարսից, և փախստական արարեալ զՓիլիպպոս արքայ Մակեդոնացւոց՝ նուաճէր մեծաւ յաջողութեամբ: Յաղթութեամբն այնուիկ զօրացեալ՝ կալաւ զՊոնտոս և ապա զԿապադովկիա: Յետոյ ապա ի մտի եդեալ զրաւել զԱսիա՝ թողոյր զաղտ զթագաւորութիւն իւր, և առանց ուրուք գիտելոյ շրջեցաւ ընդ աշխարհն բարեկամօք ոմամբք առ ի տեղեկանալոյ անձամբ հանգամանաց երկրին և դրից միոյ միոյ ի քաղաքաց: Անտի անց ի Բիւթանիա, և որպէս թէ տէր լեալ Ասիացւոց՝ ուսաւ զհանգամանս տեղեացն, որ մարթէին նպաստ լինել նմա ի յաղթութիւն: Ապա դարձ արարեալ ի թագաւորութիւն իւր, ուր կարծէին զնա

մեռեալ՝ գտանէ որդի մի ի մատաղ տիս, զոր ծնեալ էր Լաւոդիկէ քոյր նորա և կին՝ յօտարութեան անդ առնն։ Այլ մինչ մաղթէին նմա և՛ զդարձն իւր այսրէն, և՛ զծնունդ որդւոյն՝ թոյնն սպանոյր կենաց նորա։ Լաւոդիկէ, որ կարծելով զնա մեռեալ, առեալ էր զանձն Հոմանեաց՝ ակն ունէր ծածկել զյանցանսն այլով իմն ոճրով, որ աՀաւոր ևս էր, և ի գաղտնեան առնն պատրաստէր նմա թոյն։ Միհրդատ տեղեկացեալ դաւոյն ի գերւոյ ումեմնէ՝ պատժէր զգործիչսն։ Ի Հասանել ձմերան՝ անցուցանէր զայն ոչ ի խնջոյս, այլ ի ճամբարս. ոչ ի ծոց Հանգստեան, այլ ի կրթութիւնս զինուորութեան. ոչ ի մէջ ընկերաց ուրախութեան, այլ ընդ ոսոխս արժանաւորս, վարժեալ զանձն ի ձիավարել և մրցել վասն վարձուց ըմբշութեան և ձիարշաւի։ Զօրն նորա ևս կրթէր զանձն Հանապազ ի տանել իբրև զնա աշխատութեան և գործել զանձն անյաղթ իբրև զթագաւոր իւր։ Միաբանեալ ընդ Նիկոմեդայ (արքայի Բիւթանացւոց)՝ եմուտ կալաւ նա զՊափղագոնիա և բաժանեաց զայն ընդ իւրում դաշնակցին։ Իմացեալ ծերակուտին, եթէ թագաւորքն երկոքին զրաւեցին զերկիրն՝ առաքէր Հրեշտակս առ նոսա, Հրաման տուեալ դարձուցանել զայն յառաջին տէր նորա։ Միհրդատ, որ մեծութեամբ զանձն Հաւասար Հռոմայեցւոց կարծէր՝ ետ պատասխանի ամբարտաւանութեամբ, թէ Հօր նորա ժառանգեալ էր զայն թագաւորութիւն. զարմանայր ևս, թէ զիա՞րդ որ ինչ Հօր ուրուք էր առանց Հակառակութեան՝ չանկանիցի որդւոյն։ Եւ առ ոչինչ զսպառնալիսն Համարեալ՝ կալաւ և զԳաղատիա։ Իսկ Նիկոմեդ չգտեալ բարբառ՝ խոստանայր տալ այսրէն զՊափղագոնիա իւրում տեառնն։ Ապա փոխեալ զանուն որդւոյն ի Պիղեմէն, որ էր Հասարակաց անուն թագաւորաց Պափղագոնացւոց՝ պաՀեաց զերկիրն այնու պիտակ անուամբ, որպէս թէ դարձուցեալ իցէ զաշխարՀն ի տոՀմ անդր բնիկ թագաւորաց։ Այսպէս ծանակ լեալ Հրեշտակացն՝ դառնային ի Հռոմ։ Միհրդատ յետ գործելոյ զառաջին սպանութիւն իւր, ի մաՀ մատնելով զիւր կին՝ եդ ի մտի կորուսանել զորդիս միւսոյ ևս քեռ իւրոյ, որ նոյնպէս Լաւոդիկէն կոչէր, այրւոյն Արիարաթայ արքայի Կապադովկացւոց, զոր առեալ էր Միհրդատ սպանանել ի ձեռն Գորդեայ։ Զի՞նչ օգուտ էր նմա տալ փողոտել զՀայրն, եթէ թողոյր զորդիսն յաջորդել նմա յաթոռն, զոր տենչայր յափշտակել։ Մինչ յայսմ մտաց խորՀրդի էր նա՝ լսէր եթէ Նիկոմեդ արքայ Բիւթանացւոց կալաւ զԿապադովկիա, որ կայր մնայր անտերունչ յետ մաՀուան թագաւորին, և անդէն որպէս թէ առ գթոյն առաքէր օգնութիւն քեռ իւրում մերժել զՆիկոմեդ։ Այլ Լաւոդիկէ արդէն ի բանի լեալ էր ընդ Նիկոմեդայ և եղեալ նորա կին։

Զայրացեալ Միհրդատայ՝ հալածէր զզօրսն Նիկոմեդայ յաշխարհէն Կապադովկացւոց և տայր զթագաւորութիւնն զայն որդւոյ քեռն իւրոյ. գործ արդարև գեղեցիկ, եթէ չէր լեալ նմա ախտ ոճրոյ։ Արդարև յետ ամսոց ինչ կերպարանէր կոչել յաքսորէն զԳորդիոս, յորոյ ձեռն սպանեալ էր նա զԱրիարաթ. ակն ունէր եթէ մանուկ թագաւորն ընդդիմացեալ դարձի առնն՝ տայցէ պատճառս պատերազմի, և կամ, եթէ հաճեսցի՝ մարթ իցէ նմա կորուսանել զորդին ձեռամբ սպանչի հօրն։ Իմացեալ մանուկն Արիարաթ զխորհուրդն Միհրդատայ և զայրացեալ տեսանել զսպանող հօրն իւրոյ կոչեցեալ յաքսորէն հրամանաւ մօրեղբօրն՝ գումարեաց զօր բազում։ Միհրդատ հան ի ճակատ ութսուն հազար հետևակ, տասն հազար հեծեալ և կառս գերանդաւորս վեցհարիւր. այլ տեսեալ զի քեռորդին իւր, գտեալ օգնութիւն ի թագաւորաց դրացեաց, հանէր ընդդէմ նորա ոչ սակաւ զօրութիւն քան զնորայն՝ երկուցեալ յելից պատերազմին դիմէր ի դաւաճանութիւն, և հրաւիրեալ զմանուկ արքայն ի խորհուրդ՝ չոգաւ առ նա, թագուցեալ դաշոյն զմիջովն։ Իբրև այրն առաքեալ յԱրիարաթայ ըստ սովորութեան թագաւորաց յուզել զՄիհրդատ՝ տանէր զձեռն իւր խնամով յորովայն անդր նորա՝ ասէ Միհրդատ ընդ խաղ. Զգոյշ լեր, գուցէ գտանիցես այլ զէնս քան զոր խնդրեսն։ Այսու կատակաւ թագուցեալ զմատնութիւնն՝ առնոյր մեկուսի զմանուկ թագաւորն պատճառանօք խօսելոյ ի ծածուկ, և հարկանէր զնա յանդիման երկուցն բանակաց. և տայր զԿապադովկիա որդւոյ իւրում, որ էր ութամեայ, տուեալ նմա անուն Արիարաթ, և զԳորդիոս խորհրդական։ Այլ Կապադովկացիքն տաղտկացեալք յանգթութենէ և ի զրկանաց գործակալացն Միհրդատայ՝ յետս կացին, և կոչեցին յԱսիացւոց աշխարհէն ուր սնեալն էր՝ զեղբայր թագաւորին իւրեանց, որ նոյնպէս Արիարաթ կոչէր։ Միհրդատ տուեալ պատերազմ ընդ նմա՝ հար զնա և եհան ընդ աշխարհն։ Թագաւորս այս մանուկ յետ սակաւուց հիւանդացեալ առ վշտին մեռանէր։ Ի մահուան նորա երկուցեալ Նիկոմեդայ, թէ գուցէ Միհրդատ, որ տիրեալ էր Կապադովկիայ, կամիցի և զԲիւթանիա կցել յայն՝ զերիտասարդ ոմն գեղեցիկ տեսլեամբ հաւանեցուցանէր ասել, թէ իցէ ի զաւակէն Արիարաթայ, որպէս թէ լեալ էին փոխանակ երկուցն՝ երեք որդիք, և խնդրել ի ծերակուտէն զթագաւորութիւն հօր իւրոյ։ Առաքէր ի Հռոմ և զկին նորա Լաւոդիկէ վկայել, եթէ արդարև եղեն նորա որդիք երեք յԱրիարաթայ։ Իմացեալ Միհրդատայ զնենգութիւնն՝ յետին ժպրհութեամբ առաքէր ի Հռոմ զԳորդիոս յայտ առնել ծերակուտին, թէ մանուկն զոր եդ ինքն յաթոռն Կապադովկացւոց

էր որդի Արիարաթայն այնորիկ, որ մեռեալ էր ի պատերազմելն
վասն Հռոմայեցւոց ի կռուին ընդդէմ Արիստոնիկեայ։ Սակայն տե-
սեալ ծերակուտին, եթէ դիտաւորութիւն երկուց թագաւորաց եւս
էր յափշտակել թագաւորութիւն մի պիտակ անուամբք՝ հան զԿա-
պադովկիա ի Միհրդատայ, և առ հաճեցուցանելոյ զնա՝ զՊափղա-
գոնիա հանէ ի Նիկոմեդայ. ապա զի մի տրտմեցուսցէ զթագաւորսն
զերկոսին, տալով այլոց զոր հանէրն ի նոցանէ՝ շնորհեաց երկուց
ազգաց եւս զազատութիւն։ Այլ Կապադովկացիքն մերժելով զպար-
գեւն՝ ասեն, եթէ չէ մարթ նոցա լինել առանց թագաւորի։ Ապա
ծերակոյտն տայր նոցա թագաւոր զԱրիոբարզան։

6. Զայնու ժամանակաւ Տիգրան թագաւորէր ի Հայս։ Գնա-
ցեալ սորա երբեմն պատանդ ի Պարթեւս՝ արձակեցաւ յետոյ ի նո-
ցանէ ի թագաւորութիւն անդր հարց իւրոց։ Միհրդատ կամեցաւ
առնել զնա դաշնակից իւր ի պատերազմին, զոր ի վաղուց անտի
խորհէր տալ ընդ Հռոմայեցւոց։ Եւ զի Տիգրան չունէր ամենեւին
պատճառս տրտնջելոյ զՀռոմայեցւոց՝ Միհրդատ ի ձեռն Գորդեայ
տայր նմա խրատ խաղալ ի վերայ Արիոբարզանայ, որ էր վատ
արանց։ Միհրդատ ի ծածկել զխորամանկութիւն իւր՝ տայր Տիգ-
րանայ կնութեան զդուստր իւր Կղէոպատրա։ Ի խաղալ Տիգրանայ
ի վերայ Արիոբարզանայ՝ խոյս տայր սա հանդերձ գանձիւքն ի Հռոմ,
և այսպէս Միհրդատ տեսանէր զինքն տէր Կապադովկիայ օգնու-
թեամբ Տիգրանայ։ Զայնու ժամանակաւ մեռեալ էր Նիկոմեդ, և
նորին որդի, նոյնպէս Նիկոմեդ կոչեցեալ, արկեալ յաթոռոյն ի Մի-
հրդատայ՝ գայր ապաշաւոր ի Հռոմ, և ծերակոյտն տայր վճիռ հաս-
տատել միւսանգամ զերկոսին թագաւորսն իւրաքանչիւր յիւրում
գահու։ Վասն այսր գործոյ առաքեցան Ակուիղիոս և Մանղիոս
Մաղտինոս։ Յայս համբաւ Միհրդատ դնէր ուխտ դաշանց ընդ
Տիգրանայ՝ կռուել ընդդէմ Հռոմայեցւոց, եդեալ ի մէջ իւրեանց
պայմանս, զի քաղաքք և գաւառք նուաճեալք՝ լիցին Միհրդատայ,
իսկ գերին և աւարն՝ Տիգրանայ։ Միհրդատ գիտացեալ քաջ զվտ-
անգս պատերազմին զոր յարուցանէր՝ առաքէ հրեշտակս առ Կիմ-
բրացիս, առ Գաղատս յոյնս, առ Սարմատս և առ Բաստառնս,
խնդրել թիկունս օգնականութեան, քանզի վասն պատերազմին ընդ
Հռոմայեցիսն, զոր խորհէր ի վաղուց՝ շահեալ էր նորա կանխաւ
երախտեօք զմիտս ազգացն այնոցիկ։ Գումարէ նոյնպէս զօրս ի
Սկիւթացւոց և վառէ զարեւելս ընդդէմ Հռոմայ։ Դիւրաւ յաղթեաց
Ակուիղայ և Մաղտինեայ, որոց զօրքն համակ յԱսիացւոց անտի էին,
եհան զնոսա յերկրէն հանդերձ Նիկոմեդաւ, և գտանէր ընդունե-
լութիւն մեծ յամենայն քաղաքս։ Գտանէր ի նոսա ոսկի և արծաթ

բազում և պատրաստութիւն մեծ պատերազմի՝ արարեալ յառաջնոց թագաւորաց անտի։ Լեալ տէր այսչափ ընչից՝ թողոյր ամենայն քաղաքաց զպարտս նոցա, զառանձինն կամ զհասարակաց, և կացուցանէր զնոսա ազատս ի հարկաց զամս հինգ։ Ապա ժողովեալ զզօրս իւր՝ արկանէ նոցա ճառ, և չթողու ինչ՝ որ մարթէր գրգռել զնոսա ի վանել զՀռոմայեցիս յԱսիոյ։... Յետ այսպէս գրգռելոյ զզօրականն՝ ի քսաներորդ երրորդ ամի թագաւորութեան իւրոյ սկիզբն առնէ Միհրդատ պատերազմին ընդդէմ Հռոմայեցւոց» Յուստ. գլր. Լէ. ԼԸ.)։

Լսենք այժմ Փլորոսի։ «Ազգք Պոնտոսի ձգին ի հիւսիսոյ մինչև ի Պոնտոս Եւքսինոս, յորմէ առեալ է նոցա զանունն։ Էետէս է հնագոյն թագաւոր ազգացն այնոցիկ և աշխարհաց։ Յետոյ ապա իշխեաց նոցա Արտաւազ ոմն ի զաւակէ միոյ յեօթն իշխանացն Պարսից, և ապա ուրեմն Միհրդատ, առանց հակառակութեան մեծն ի թագաւորս անդ։ Բաւական եղև մեզ ամս չորս կռուել ընդդէմ Պիւռոսի, եօթնևտասն՝ ընդդէմ Աննիբաղայ. Միհրդատ զդէմ կալաւ մեզ զքառասուն ամ, մինչև պարտեալ յերիս արինահեղ ճակատս՝ ընկճեցաւ ի բարենշանէն Սուղղայ, ի Լուկուղղեայ քաջէ և ի մեծէն Պոմպէոսէ։ Պատճառ այսր թշնամութեան, այն զոր ինքն եբեր ի մէջ առ Կասսիոս դեսպան՝ էր յարձակելն Նիկոմեդայ արքայի Բիւթանացւոց ի սահմանս իշխանութեան իւրոյ։ Այլ արդեամբ՝ ամբարտաւանութիւնն էր, որով փքացեալ ցանկայր ունել զբովանդակ Ասիա, և եթէ գոյր հնար՝ զԵւրոպն իսկ զկնովին։ Յոռութիւնք մեր տային նմա յոյս և համարձակութիւն։ Քաղաքային կռիւք, որ պատառէին զմեզ՝ թուէին նմա ժամ պատեհ. Մարիոս, Սուղղա, Սերտորիոս ցուցանէին նմա ի հեռուստ զկողս տէրութեանն մերկ։ Ի մէջ այնպիսի վիրաց ընկերհաշտութեանն և այնչափ յուզմանց և խռովութեանց՝ մրրիկ պոնտական պատերազմին պատրաստեալ ի հեռաւոր բարձունս անդ հիւսիսոյ և իբր այն թէ ընտրելով զժամանակն՝ եկն պայթել ի վերայ Հռոմայեցւոց վաստակելոց և մատնելոց յերկպառակութիւն։ Բիւթանիա բարձաւ իսկոյն յառաջնում ճգան պատերազմին։ Նոյն երկիւղ անդէն վարանեալ ունէր զԱսիա։ Քաղաքք և ժողովուրդք, որ ընդ մերով իշխանութեամբ՝ փութային իմն մտանել ընդ իշխանութեամբ թագաւորին։ Ամենայն ուրեք մօտ՝ շտապէր զյաղթութիւնսն, և անագորունութիւնն էր նմա փոխանակ քաջութեան։ Զինչ քան զայն անագորունութիւն կայցէ արդարև, քան միով հրովարտակաւ հրաման տալ՝ սուր ի վերայ եդեալ կոտորել զամենայն այր Հռոմայեցի, որ միանգամ գտանէր յԱսիա։ Յայնժամ բռնաբարեցան տունք և մեհեանք և բագինք,

ամենայն իրաւունք մարդկեղէնք և աստուածեղէնք։ Այն և սարսափ Ասիացւոց հորդէր ևս թագաւորին ճանապարհ յԵւրոպա։ Տեղակալք նորա Արքեղայոս և Նէոպտղոմէոս, զորս զատուցեալ էր յեւրոց զօրացն՝ ունէին զԿիկղադս, զԴեղոս, զԱթէնս իսկ, զզարդ Յունաստանի. այլ Հռոդոս եկաց հաւատարիմ մերում կողման։ Այն զոր արկանէր թագաւորս այս՝ տարածէր ընդ աշխարհն Իտալացւոց, նա մինչև ի քաղաք անդր Հռոմայ։ Ղուկիոս Սուղղա, զօրավարն այն մեծ, աճապարեաց և անկեալ ուժգնութեամբ, որ նորա միայնոյ գործ էր՝ վանէր զնա։ Նախ պաշարէր զԱթէնս. տագնապէր զնա սովով, և ո՛ կարիցէ հաւատալ—զքաղաքն զայն, մայրն հնձոց. հասոյց յայնչափ՝ մինչև ուտել նմա զմարդոյ շաղիղ։ Աւերեաց արագարագ զնաւահանգիստն Պիրէայ, կործանեալ զվեցկին պարիսպ քաղաքին, և յետ նուաճելոյ զընակիչսն ապախտաւորս քան զամենայն մարդիկ (զի այսպէս կոչէր նա զաթենացիս)՝ եթող նոցա զվնասն ի շնորհս նախնեաց նոցա, կրօնիցն պաշտամանց և վասն համբաւոյ անուան նոցա։ Ապա հալածեալ յԵւբէայ և ի Բէովտիայ զպահապան զօրս թագաւորին՝ ցրուեաց զամենայն զօրութիւն նորա յերկուս ճակատս, առ Քերոնեաւ և առ Որքոմենաւ։ Հուպ ընդ հուպ անցեալ յԱսիա՝ յաղթեաց նմին իսկ Միհրդատայ։ Վճարեալ էր վասն նորա՝ եթէ Սուղղայի, փոխանակ համբերելոյ ի գլուխ հանել զյաղթութիւնն՝ չէր աճապարեալ առնել խաղաղութիւն։ Տեսցուք, թէ զիարդ եթող Սուղղա զԱսիա։ Կռեաց դաշինս ընդ արքային Պոնտոսի, որ դարձոյց զԲիւթանիա առ Նիկոմեդ և զԿապադովկիա առ Արիոբարզան, և այսպէս Ասիա եմուտ միւս անգամ ընդ մերով իշխանութեամբ, որպէս էրն յառաջ։ Այլ Միհրդատ չէր վանեալ, և չաջողութիւնք նորա զայրացուցին զնա մանաւանդ քան արկին ի վհատութիւն։ Հրապուրեալ յաղթութեամբքն յԱսիա և յԵւրոպ՝ ոչ օտար ինչ զգաւառսն զայնսիկ համարէր, այլ իբրև ստացուած զոր կորոյս, կամ զոր այլք հանին ի նմանէ, և մարթ էր նմա առնուլ այսրէն պատերազմաւ։ Զորօրինակ բոցք հրդեհի, որ չիցէ շիջեալ իսպառ, բորբոքին անդրէն սաստկագոյնս՝ այնպէս Միհրդատ նորոգեալ զիւր ջան՝ ևս բազմաձեռն գնդաւ խաղաց անդրէն ի վերայ Ասիացւոց, զայս նուագ իւրով բովանդակ զօրութեամբ, որով ծածկէր զծով և զցամաք և զգետս։ Կիզիկոն, քաղաք անուանի, բերդիւքն և պատուարօք, նաւահանգստիւն և աշտարակօքն ի մարմարինէ՝ է զարդ ասիական ծովեզերն, իբրև երկրորդ Հռոմ յԱսիա։ Միհրդատ դարձուցանէ զզէնս իւր ընդդէմ քաղաքին, այլ բնակիչքն քաջալերեցան լինել դիմակալ՝ իբրև պատգամաւորն որ եկն՝ ետ նոցա համբաւ, թէ մերձ էր Ղուկուղղոս։ Նստեալ ի տիկ, զոր

վարէր ոտիւքն՝ պատգամաւորն այսպիսի յանդուգն Հնարիւք անցեալ էր ընդ մէջ նաւատորմղի թշնամւոյն, որ Համարեցաւ զնա ի Հեռուստ իբրև ճիւաղ իմն ծովական։ Իսկ և իսկ փոխէր բախտն. յերկարութենէ պաշարմանն եղև սով ի բանակի անդ Թագաւորին, և ի սովոյ անտի՝ սրածութիւն։ Միհրդատ տայր խոյս, և Ղուկուղղոս պնդէր զկնի, և առնէր ի զօրսն Միհրդատայ կոտորած այնպէս սաստիկ, մինչև Գրանիկն և Եսապ գետոց ներկանել յարեան և յապաժոյժ։ Թագաւորն խորամանկ, որ գիտէր զՀռոմոցն զագաՀութիւն՝ Հրաման տայր զօրուն ի փախչելն թողուլ ցիր և ցան զկարասին իւրեանց և զարծաթ, առ ի կասեցուցանելոյ զյաղթողն ի պնդելոյ զՀետ։ Փախուստն Միհրդատայ ընդ ծով լինէր ոչինչ ընդՀատ ձախող քան զփախուստն նորա ընդ ցամաք։ Տորմիղ նաւացն, որոց թիւն չէր պակաս քան զՀարիւր, աՀեղ կազմածովք պատերազմի՝ Հանդիպէր մրրկի ի Պոնտոս ծովուն, և խորտակէր այնպէս չարաչար, մինչև բերել զնմանութիւն նշխարաց նաւուց խորտակելոց ի ծովային պատերազմի, իբր այն թէ Ղուկուղղեայ էր ի բանի արարեալ զայն և զմրրիկ և զՀողմս՝ Հանել յանդ զպարտութիւն Թագաւորին։

Ամենայն զօրութիւն Հզօր Թագաւորին էր սպառեալ, այլ աղէտքն յաւելուին զքաջութիւն նորա։ Դարձաւ յազգսն արուարձանեայս, և առնէր Հաղորդ չաջողութեան իւրում զամենայն արևելս և զՀիւսիսի։ ՇաՀէր զՎիրս, զԿազբս, զԱղուանս և զՀայսն զերկոսեան։ Բախտն խնդրէր այսպէս ի կողմանց կողմանց պատճառս Համբաւոյ, փառաց և յաղթութեան սիրելւոյ իւրում Պոմպէի, որոյ տեսեալ զԱսիա դղրդեալ և Հրդեհեալ միւս անգամ, և այլոց Թագաւորաց յաջորդեալ բազմութեամբ՝ գիտաց եթէ չէր արժան ի զուր ծախել ժամանակն. չթողացոյց այնչափ ազգաց զօրութեան գալ ի մի վայր։ Աճապարեալ անցանէր ընդ Եփրատ, գործեալ կամուրջս ի նաւաց, և Հասանէր Թագաւորին ի փախստեան նորա, մինչ էր նա ի միջոցի անդ աշխարՀին Հայոց, և, ով բախտաւորութեան առնն, ջախջախէր զնա անդարձ ի միում ճակատու միայն։ Կռիւն սկսանէր ի գիշերի, և լուսին լինէր պատերազմակից. արդարև որպէս թէ վասն մեր պատերազմէր։ Դէպ եղև ծագել նմա ի թիկանց թշնամւոյն և յառաջոյ Հռոմայեցւոց, մինչև զօրաց Թագաւորին, խաբեալ յանՀնարին մեծութենէ ստուերաց իւրեանց՝ զնոսին զըստուերսն Հարկանել, Համարեալ թէ զթշնամիս իւրեանց Հարկանիցեն։ Այսպէս Միհրդատայ կորուստն վճարէր ի նմին գիշերի, և այնուՀետև և ոչ մի ջան ոչ յաջողեաց նմա, թէպէտ և զամենայն Հնարս Հնարեցաւ կանգնել զանձն, զորօրինակ օձ որոյ ջախջախեալ գլուխն իցէ՝ ի վախճանի տտամբն սպառնայ։ Այսպէս յետ անկա-

նելոյ ի Կողքիս՝ կամեցաւ յանկարծ երեւելով արկանել ահ յեզերս Սիկիլիացւոց մինչեւ ի մերն Կամպանիա։ Յուսայր յիւր կողմն արկանել զամենայն երկիրն ի մէջ Կողքսայ եւ Բոսպորայ, հատանել անցանել զԹրակիա, զՄակեդոնիա եւ զՅոյնս, եւ ապա մտանել յանկարծ յԻտալիա։ Խորհուրդ լոկ էր այս, քանզի առեալ զհամբաւ ապստամբութեան խրոց հպատակացն եւ մատնութեանն Փառնակայ իւրոյ որդւոյ՝ սրով արար անձին, իբրեւ թոյնն չեղեւ նմա զամագիտ։ Սակայն զհետ մտանէր նմա Պոմպէոս մեծն շտապաւ ընդ բազում աշխարհս։ Յարեւելից կուսէ եմուտ ի Հայս, կալաւ զԱրտաշատ, զնիստ թագաւորաց երկրին այնորիկ, եւ եթող Տիգրանայ որ աղաչէրն՝ զթագն. ի հիւսիսոյ կողմանէ եմուտ յաշխարհն Սկիւթացւոց, յաստեղաց առաջնորդեալ որպէս ի ծովու. Հնազանդեցոյց զԿողքիս, ներեաց Վրաց եւ խնայեաց Աղուանից։ Ի ճամբարէ անտի իւրմէ առ ստամբ Կովկասու՝ ստիպեաց զՈրոդ արքայ Աղուանից իջանել ի տափարակ, եւ զԱրթոկէս, որ հրամայէր Վրաց՝ տալ նմա զորդին իւր ի պատանդ։ Նա վարձս Որոդայ, որ իւրովք կամօք առաքեալ էր նմա յԱղուանից մահիճս ոսկեղէնս եւ այլ եւս պատարագս» (Են. Փլորոս. Գ. 6)։

7. Այս երկու պատմական հատուածք բաւական են լուսաւորել Կիկերոնի պատմութիւնն, զոր իբրեւ ճարտարախօս մանաւանդ քան իբրեւ պատմագիր կը դնէ մեզ առաջի։ «Պատերազմ ծանր եւ վտանգաւոր դաշնաւորաց ձերոց եւ նիզակակցաց՝ ի վերայ հասեալ կայ յերկուց մեծազօր թագաւորաց, ի Միհրդատայ եւ ի Տիգրանայ։... Մերժեալ անկեալ է ի թագաւորութենէն Արիոբարզանէս արքայ, նիզակակից ժողովրդեանն Հռոմայեցւոց եւ բարեկամ. ի վերայ հասեալ սպառնան համօրէն աշխարհին Ասիացւոց երկու թագաւորք, որ ոչ ընդ ձեզ միայն անհնարին թշնամութեամբ են, այլեւ ընդ նիզակակցաց ձերոց եւ ընդ բարեկամաց. եւ ամենայն իսկ քաղաքք, համօրէն Ասիա եւ Յունաց աշխարհ՝ հարկ համարին ձերում օգնականութեանն ունել ակն վասն մեծութեան տագնապին։... Պարտ եւ պատշաճ է ջնջել սրբել ձեզ զբիծն զայն, զոր ընկալարուք ի Միհրդատեան պատերազմին, որ յառաջ քան զայս էր. այն բիծ հաստատեցաւ խմն եւ հնացաւ ի վերայ անուան ժողովրդեանն Հռոմայեցւոց։ Քանզի նա, որ ի միում աւուր ընդ ամենայն Ասիա, յայնչափ քաղաքս, միով հրեշտակաւ եւ միով ակնարկութեամբ թղթոյ հրամայեաց սպանանել եւ կոտորել արս քաղաքացիս հռոմայեցիս՝ ոչ միայն չելոյծ ինչ տակաւին վրէժս արժանի ըստ խակութեանն, այլ եւ թագաւորէ եւս ի ժամանակէ անտի հետէ ամս իբրեւ քսան եւ երիս, եւ այնպէս խմն թագաւորէ, զի իբր ոչ եթէ

յորջս Պոնտացւոց և Կապադովկացւոց աշխարհին զօղել կամիցի,
այլ ի հայրենի թագաւորութենէն ելանել ի դուրս և ի նահանգս
ձեր, այսինքն ի յոյն Ասիայ շրջել: Քանզի ցայժմ ձեր զօրավարք
այնպէս իմն եռուն ընդ թագաւորին ընդ այնմիկ պատերազմ, զի
զնշանս յաղթութեանն առին ի նմանէ և ոչ եթէ զյաղթութիւնն:
Կատարեաց ձաղանս յաղթութեան Սուղղա, կատարեաց և Մուրե-
նա վասն Միհրդատայ, երկոքին արք զօրաւորք և զօրավարք մե-
ծամեծք, բայց և այնպէս նա, թէպէտ վանեալ վկանդեալ՝ սակայն
թագաւորէր:... Միհրդատ զժամանակն մնացեալ ոչ ի մոռացու-
թիւն առաջին պատերազմին, այլ ի պատրաստութիւն նորոյ պա-
տերազմի դարձոյց. յետ յօրինելոյ կազմելոյ մեծամեծ տորմիղս նա-
ւաց և զօր բազում, յորոց ազգաց միանգամ ժողովելն կարող էր՝
կարծեցուցանէր իմն, թէ ընդ Բոսպորացւոց իւրոյն արուարձանեայց
կամիցի բախել ի մարտ պատերազմի. սակայն մինչև ցաշխարհն
Սպանիացւոց յԷկբատանացւոց քաղաքէն առաքէր հրեշտակութիւն
առ զօրավարսն՝ ընդ որոյ էր մեզ յայնժամ մարտ պատերազմի.
զի յորժամ յերկուս ի հեռաւոր և յայլ և յայլ տեղիս միով միաբան
խորհրդով յերկուց բանակաց ընդ ծով և ընդ ցամաք պատերազմ
ի վերայ կայցէ՝ դուք երկակողմանի կռուովն բաժանեալ պառակ-
տեցիք, և կործանումն այնուհետև տէրութեանս հասանիցէ:... Թէ-
պէտև ապրեցոյց Ղուկուղղոս զԿիւզիկոս քաղաք, զհաւատարիմն
Հռոմայեցւոց, որ պաշարեալ էր ի թագաւորէն մեծաւ բազմու-
թեամբ և սաստկութեամբ. զմեծ տորմիղ նաւացն սանձեաց, զորս
սերտորեան զօրավարք յԻտալիա մղէին տագնապաւ, և բացաւ առա-
ջի լեգէոնացն Հռոմայեցւոց Պոնտոս. Սինոպ և Ամիսոս, յորս ապա-
րանք և գանձք թագաւորին էին, անկան ի բուռն՝ սակայն այնպէս
իմն գնայր Միհրդատ փախստեայ ի թագաւորութենէն, որպէս ի
նոյն աշխարհէն Պոնտոսի Մէդէայն այն կին երբեմն պատմի փա-
խուցեալ. զի ասեն իմն, թէ ի փախչելն իւրում զանդամս եղբօր
իւրոյ ցանեալ սփռէր ի տեղիսն, ընդ որս զհետ նորա մտեալ ըն-
թանայր հայրն, որպէս զի ժողովելն զցրուեալսն և սուգն հայրե-
նի առնիցէ յապաղումն երագութեանն: Ըստ նմին օրինակի և Մի-
հրդատ ի փախչելն իւրում թողոյր ի Պոնտոս բազմութիւն ոսկւոյ
և արծաթոյ և գեղեցիկ գեղեցիկ իրաց, զորս և ի նախնեացն ու-
նէր և ինքն ևս յառաջնում պատերազմին ի համօրէն Ասիայ կո-
ղոպտեալ տարաւ յերկիր թագաւորութեան իւրոյ: Մինչդեռ մերքն
ժողովեն զնոսա մեծաւ զգուշութեամբ՝ ինքն թագաւորն ապրեալ
ելանէ ի ձեռաց: Այսպէս զնա յապաղեցուցանէր արտմութիւն, իսկ
զնոսա, ի մտանելն զհետ՝ ուրախութիւնն: Ընկալաւ զնա յերկիւղի

անդ և ի փախստեան Տիգրան արքայ Հայոց, քաջալերեալ զօրա-
ցոյց զնա, յորժամ անկեալ էր նա ի յուսոյ, մխիթարեաց զնա ի
տրտմութենէն և արծարծեալ կազդուրեցոյց զնա:... Իսկ զօրն մեր,
թէպէտ և առեալ էր զքաղաք թագաւորութեանն Տիգրանայ և
լցեալ բազում աւարաւ՝ սակայն բազում հեռաւորութեամբ վայրացն
և անձկով ընտանեաց յուզեալ շարժէր:... Այլ Միհրդատ և զիւր
գունդն պնդեալ հաստատէր և զայնոսիկ, որ ի թագաւորութենէ
անտի նորա էին ժողովեալ, և գտանէր թիկունս օգնականութեան
ի հարուստ մարգիկ զօրաց բազում թագաւորաց և ազգաց:... Նմին
իրի այնչափ ի պարտութեանն կարաց վճարել՝ որչափ չէշխէր եր-
բէք ըղձանալ՝ յորժամ անվնաս կայր: Քանզի իբրև չոքաւ նա ի
թագաւորութիւն իւր՝ չհամարեցաւ զայն բաւական, որ արտաքոյ
քան զյոյս դիպեալն էր նմա, այսինքն դառնալ երբէք յերկիր
անդր յորմէ մերժեալն էր, այլև յարձակել ևս ի վերայ յաղթող և
մեծապայծառ բանակաց ձերոց իշխեաց: Թոյլ տուք ինձ յայսմ վայ-
րի, ով Հռոմայեցիք, զանց առնել զաղէտիւք մերովք, որպէս
պուէտքն առնեն, յորժամ գիրս Հռոմայեցւոցն գրիցեն. քանզի այն-
չափ իսկ խիստ աղէտքն էին, զի ոչ եթէ պատգամաւոր ի պատե-
րազմէ անտի հասուցանէր զգոյժն ի լսելիս Ղուկուղղեայ, այլ համ-
բաւ ինչ բանից»:

Զայսոսիկ առաջին Միհրդատեան պատերազմին համար. երկ-
րորդ պատերազմին համար նոյն Կիկերոն կը գրէ այսպէս ի ճա-
ռին, զոր խօսեցաւ ի պաշտպանութիւն Մուրենայ. «Եթէ պատե-
րազմն այն, եթէ թշնամին այն, եթէ թագաւորն այն զոյգն ինչ
և արհամարհանաց էր՝ ոչ արդեօք այնչափ փութոյ և հոգոյ
գիրս համարէր ծերակոյտն և ժողովուրդն Հռոմայեցւոց, և ոչ
յայնչափ ամս տևէր պատերազմն, և ոչ զկատարումն պատերազ-
մին այնորիկ այնչափ մտադիւրութեամբ Պոմպէի առնէր յանձն
ժողովուրդն Հռոմայեցւոց: Յամենայն պատերազմաց նորա (Մուրե-
նայ), որ անթիւ իմն են՝ դժնդակ քան զամենայն այն պատերազմ
թուի ինձ, որ ընդ թագաւորին տուաւ և մեծաւ սաստկութեամբ
եղև կռիւն: Եւ իբրև պրծեալ եղ նա ի պատերազմէ անտի և
անկաւ ի Բոսպորոս, յոր չկարէր մերձենալ զօրն հռոմայեցի՝ նա
և ի վերջին իսկ չաջողութեան և ի փախստի պահեալ ունէր զար-
քունական անունն: Նմին իրի և ինքն իսկ Պոմպէոս, յետ տիրելոյ
թագաւորութեան նորա և մերժելոյ զթշնամին յամենայն սահմա-
նաց և ի ծանօթ տեղեաց՝ այնչափ մեծ ինչ զնորա միայնոյ կեն-
դանութիւնն համարեցաւ, զի յորժամ զամենայն առեալ էր, զոր
նայն ունէր և յաղթութեամբ ստացեալ պահէր՝ սակայն և այնպէս

չհամարեցաւ ի գլուխ ելեալ զպատերազմն մինչեւ զնա յաւէտ արկեալ։ Զայս թշնամի արհամարհես դու, ով Կատոն, ընդ որում զայնչափ ամս յայնչափ պատերազմունս այնչափ զօրավարք ետուն ճակատս, որոյ կեանքն և յետ վանելոյ նորա և մերժելոյ այնչափ մեծ համարեալ էր, զի յետ հասանելոյ աւետեաց մահու նորա, այժմ ուրեմն վճարեալ զպատերազմն համարեցաք» (Թարգմ. Գաթրճեանի, Տիեզեր. պատմ. Հ. Ա., էջ 593, 594)։

Ի բանից աստի Կիկերոնի յայտնի կը տեսնուի, թէ Տիգրան էր օգնական Միհրդատայ, թէ Միհրդատ արքայ Պոնտոսի նուաճեց, հակառակ կամաց Հռոմայեցւոց՝ շատ տեղեր ի Փոքուն Ասիա, մանաւանդ զԲիւթանիա և զԿապադովկիա, որ էին ընդ պաշտպանութեամբ Հռոմայեցւոց, և ոչ սակաւ վնաս տուաւ նոցա, մինչեւ տալ կոտորել Հռոմայեցի քաղաքացիներէն շատեր, նուաճեց զՅոյնս (զԵլլադա). թէ երեւելի զօրավարք Հռոմայեցւոց, որպէս Սուղղա, Մուրենա, Ղուկուղղոս, յաղթել յաղթեցին նմա, տիրեցին քաղաքաց նորա և մեծի մասին երկրին, չկրցան սակայն նուաճել զնա. թէ Բոսպորոս և Կողքիս, թերեւս մինչեւ ի Մարս առ Հիւսիսիւ՝ էին ընդ ձեռամբ Միհրդատայ. թէ Միհրդատ միացաւ հռոմայեցի զօրավարաց հետ, որ ապստամբած էին Հռոմայեցիներէն ի Սպանիա, և տուաւ մեծ անձկութիւն և երկիւղ Հռոմայեցւոց. թէ յետ պարտութեանն ի Ղուկուղղեայ՝ գտաւ դարձեալ Միհրդատ օգնութիւն ի Տիգրանայ, որ չտուաւ յանձն տալ զՄիհրդատ, որ ապաւինած էր առ նա՝ ի ձեռս Հռոմայեցւոց, ուստի և բերաւ յիւր վերայ զՂուկուղղոս, որ առաւ զՏիգրանակերտ, թերեւս նաև զԱրտաշատ, զքաղաք թագաւորութեան նորա. թէ հուսկ ուրեմն ղրկուեցաւ Հռոմայեցիներէն Պոմպէոս, որ վախճան տուաւ այս ծանր և դժուարին պատերազմին երկուց արդարեւ մեծազօր թագաւորաց դէմ, և թէպէտ Միհրդատ հազիւ փախստեամբ զերծաւ ի Բոսպորոս՝ չհամարեցաւ սակայն նուաճեալ, և ոչ պատերազմն այն վճարեալ, բայց միայն երբ առնուեցաւ նորա մահուան լուրն (աւետիքն ըստ Կիկերոնի)։

Ց. Յոյն և հռոմայեցի պատմիչք պատերազմացն Միհրդատայ և Տիգրանայ, ինչպէս Պլուտարքոս, Ապպիանոս, Յուլիոս, Դիոն Կասսիոս և այլք՝ կը պատմեն այլ և այլ բազում ինչ, բայց սոքա ամենքն ոչ միայն, որպէս ասացաւ, չեն ժամանակակից, այլ և են բազում ուրեք հակառակք միմեանց։ Ճշմարիտ կամ գէթ հաւանականագոյնն այս է, թէ այս բազմամեայ պատերազմին մէջ յաղթութիւնը մնաց անորոշ։ Միոյ կողման նիւթական և միւսոյն բարոյական զօրութիւնն կը բանէր զնոսա ի հաւասարակշռութեան։

Զայս կ'ակնարկէ ասելն Կիկերոնի, թէ զօրավարք Հռոմայեցւոց «զնշանս յաղթութեանն առին ի նմանէ, ոչ թէ զյաղթութիւնն»։ Նոյնպէս իմա զՏիգրանայ. մերթ կը բարձրացունեն զնա յոյն և հռոմայեցի պատմիչք՝ մինչև տալ Ղուկուղղոսի ակնածել ի նմանէ և մերթ կուտան նմա անկանել յոտս Պոմպէի և զթագ իւր դնել ի գլուխ նորա։ Եթէ զոյ ճշմարտութիւն այսչափ հակառակ պատմութեանց մէջ՝ այս է, թէ Հռոմայեցիք—ինչպէս առ մեօք աշխարհակալ ազգեր, երբ չեն կարող յաղթել բարբարոս կամ կէս բարբարոս ազգերու, որ նիւթական զօրութեամբ կամ իրենց երկրին դիրք ի վեր են քան զնոսա, կը դիմեն նենգաւոր հնարից՝—խորամանկութիւնն առին ի ձեռս, յարուցանելով զորդիս ընդդէմ հարց, ինչպէս զՓառնակ ընդդէմ Միհրդատայ և զկրտսերն Տիգրան զորդին՝ ընդդէմ Տիգրանայ։ Միհրդատ այս ներքին երկպառակութենէն մանաւանդ քան ի զինուց թշնամւոյն վհատեալ՝ կը թուի անձին արարեալ, կամ մանաւանդ սպանեալ դաւով, և Տիգրան ի մատնութենէ որդւոյն, որ կը կոչուի Տիգրան փոքր և էր թշնամութեամբ ընդ հօրն՝ ընկճեալ, յանձն առած կը թուի հրաժարել երկիրներէն, զորս ունէր արտաքոյ Հայաստանի, և շատանալ իւր հայրենի թագաւորութեամբ։ Այսպէս Հայք կը խաղաղին առ ժամն, և լինին բարեկամ և դաշնակից Հռոմայեցւոց, մինչև յարշաւանս Կրասոսի (54) և Անտոնեայ (36) ի վերայ Պարթևաց՝ կամաւ կամ ակամայ զօրօք օգնական և նիզակակից Հռոմայեցւոց լինէր Արտաւազդ, որ կը թուի վաղ իսկ, երբ յամէն 63, բարձակից լեալ հօրն առ կենդանութեամբ իսկ նորա, ինչպէս յայտնի է ի յիշելոյն Կիկերոնի զԱրտաւազդ իբր թագաւոր Հայոց յամին 63, մինչ էր նա (Կիկերոն) պրետոր ի Կիլիկիա։ Կիկերոն Մուրենեան ճառին մէջ կը թուի խոստովանել, թէ Պոմպէոս ոչ այնչափ զինու զօրութեամբ վերջ տուաւ պատերազմին Միհրդատայ՝ որչափ տալով սպանանել զնա։ «Յորժամ, ասէ, Պոմպէոս զամենայն առեալ էր զոր նոյն ունէր և յաղթութեամբ ստացեալ պահէր՝ սակայն և այնպէս չհամարեցաւ ի գլուխ հանեալ զպատերազմն, մինչչև զնա յարևէ արկեալ»։

Գ. Տեսանք համառօտիւ Հայոց յարաբերութիւնն ընդ Հռոմայեցւոց յԱրտաքսիասայ մինչև ի Տիգրան։ Գանք այժմ տեսնել նաև զյարաբերութիւն մեր ընդ Պարթևաց նոյն միջոցին մէջ։ Յայտնի է մեր պատմութենէն, թէ Պարթևք ունեցան ներքին և սերտ յարաբերութիւն ընդ Հայոց։ Մինչև 190 նախ քան զՔր., այն է առ առաջին պարթև թագաւորօք՝ Պարթևք չէին կրնար ունենալ գործ ուղղակի ընդ Հայոց, քանզի Հայաստան մինչև յայնժամ չէր առանձին թագաւորութիւն, այլ էր նահանգ Սելևկեանց

և կը կառավարուէր այս վերջիններուն կողմանէ կուսակալօք. յետ իբր 190-ին նախ քան զՔր. կ՚սկսին Հայք Արտաքսիասիւ լինել անկախ տէրութիւն, ուստի այն թուականէն հետէ պարտ է խնդրել Պարթևաց ազերսն ընդ Հայոց։ Թէպէտ չունինք առ այս ստոյգ պատմական տեղեկութիւն ժամանակակից աղբիւրներէ վասն ժամանակի յառաջ քան զՏիգրան մեծ՝ ի բանից Ստրաբոնի սակայն զնմին Տիգրանայ—թէ էր նա պատանդ առ Պարթևս և թէ յետ մահու հօրն տալով նոցա Հայոց երկիրներէն մեծ մաս մի առաւ իւր հարց թագաւորութիւնը, և ապա հանեց զվրէժն, ոչ միայն առնլով յետս ինչ որ տուած էր, այլև հանելով ի նոցանէ ոչ սակաւ գաւառներ՝—կը տեսնուի բաւ բաւականին, թէ յառաջ քան զթագաւորութիւնն մեծին Տիգրանայ, Հայոց յարաբերութիւնն ընդ Պարթևաց չէր բարեկամական, այլ, գէթ Տիգրանայ հաւուն կամ հօրը ժամանակ՝ կար այս երկու ազգաց մէջ ոսոխութիւն կամ գէթ մրցումն վասն նախաւորութեան ի յառաջակողման Ասիոյ։ Յուստինոս, Բ. դարու Հռոմայեցի պատմիչ, որ ծաղկեցաւ առ Անտոնեամբք և որմէ ունինք Տրոգոս Պոմպէոսի Հռոմայեցի պատմիչին ընդհանուր պատմութեան համառօտութիւնն ի 44 գիրս՝ կը պատմէ զՄիհրդատայ Բ-է (Արշակ Թ, 114–86 ն. ք. զՔր.), թէ «կռուեցաւ ընդ Որդուազդիստայ (Արտաւազդայ) արքային Հայոց» (Յուստ. գիրք ԽԲ. Բ.)։ Այս Արտաւազդ, նայելով ժամանակին (114—86 ն. ք. զՔր.)՝ կը թուի լինել նախորդ Տիգրանայ մեծին, թերևս հայր կամ մանաւանդ հօրեղբայր։ Այս պատերազմն ի մէջ Միհրդատայ Բ. արքայի Պարթևաց և Արտաւազդայ ուրումն արքայի Հայոց է առաջին պատերազմն Պարթևաց ընդ Հայոց, յիշեալ ի պատմութեան։ Թերևս այս պատերազմին արդիւնքն էր այն, զոր կը պատմէ Ստրաբոն և զոր յիշեցաք ի վերոյ, այսինքն թէ Տիգրան տրուեցաւ պատանդ Պարթևաց, և թէ ի մահուան հօրն տալով երկիրներ՝ առաւ հայրենի թագաւորութիւնը, թէպէտ յետոյ հանեց վրէժը։ Տիգրանայ և Միհրդատայ մեծի պատերազմներուն ժամանակ ընդ Հռոմայեցիս, կ՚երևի թէ Պարթևք չիշխեցին խլրտել, թերևս առ ակնածելոյ ի զօրութենէն Տիգրանայ, կամ առ տկարութեան, քանզի յետ մահուն Միհրդատայ Բ. Պարթևաց տէրութիւնը գձձեցաւ ներքին խռովութիւններէ։ Սակայն յետ վերջին պարտութեանն Տիգրանայ և դաշանցն ընդ Պոմպէոսի՝ Հրահատ Գ. (Արշակ ԺԲ, 68—58) մտաւ Հայաստան, բայց ստիպուեցաւ թողուլ փութով առ ահին Պոմպէի, որ Պարթևները նուաճելու դիտմամբ յառաջացած էր մինչև յափունս Տիգրիսի. յաղթող Հռոմայեցին եկաց դատաւոր և որոշեց երկու տէրութեանց սահմանները։

10. Դիոն Կասսիոս կուտայ մեզ այս պատմութիւնն, ուր կը տեսնենք ոչ միայն Հայոց յարաբերութիւնն ընդ Պարթևաց առ Տիգրանաւ, այլև մեծին Տիգրանայ որդւոյն, մանկանն Տիգրանայ թշնամութիւնն իւր հօրը դէմ և վախճանը միջամտութեամբ Պոմպէի, ինչպէս նաև նորին իսկ Տիգրանայ Պոմպէի հետ կռւոյն վախճանը։ Դիոն չէ ժամանակակից, այլ իբր երկերիւր ամօք յետոյ քան զՏիգրան, բայց պատմութիւնն նորա ունի մեծ յարգ, և Դիոն է արդարև հաւասար անուանի պատմագրաց Յունաց և Հռոմայեցւոց. այլուստ դարձեալ հարիւր յիսուն կամ երկերիւր ամաց հեռաւորութիւնն չէ մեծ ինչ Դիոնի համար, որ իբրև անդամ ծերակուտի և հիւպատոս (229) ապա կուսակալ ի Փոքրն Ասիա և յԱփրիկէ առ Սևերոսն Աղեքսանդրիւ (222—235), քաղած է իւր պատմութիւնն պաշտօնական աղբիւրներէ։ Տեսնենք նախ՝ ինչ որ կը պատմէ Դիոն զմանկանէն Տիգրանայ, ընդ որում համամիտ, ըստ մասին նաև օգնական, նմ աներ իսկ էր Հրահատ Գ։

«Տիգրան փոքր (որդի մեծին Տիգրանայ), կացեալ գլուխ արանց ոմանց աւագաց, որ չէին հաճ ընդ իշխանութիւն հօր նորա՝ չոքաւ առ Հրահատ, և զի նա վարանէր խմն, թէ զինչ առնել պարտ էր վասն դաշանցն ընդ Պոմպէի՝ Տիգրան հաւանեցոյց զնա խաղալ ի վերայ Հայոց։ Գային հասանէին մինչև յԱրտաշատ, հնազանդեցուցեալ զամենայն ընդ որս անցանէին, յարձակէին իսկ ի վերայ քաղաքին։ Տիգրան հայրն զահի հարեալ ի մերձենալ նոցա՝ խոյս տայր ի լերինս։ Սակայն Հրահատայ զմտաւ ածեալ, եթէ պաշարումն Արտաշատու մարթէր յերկարել՝ թողոյր ի ձեռս Տիգրանայ մանկան մասն մի ի զօրացն և դառնայր յերկիր իւր։ Տիգրան հայրն գայր յանձամ ի վերայ որդւոյն, որ մնացեալ էր առանձինն, և յաղթէր նմա, որ փախուցեալ դէմ եդ առ հաւն իւր (Միհրդատ Եւպատոր). բայց իմացեալ եթէ Միհրդատ եւս, մտեալ ի պարտութիւն, ունէր մանաւանդ պէտս օգնութեան քան զօրութիւն օգնելոյ այլոց՝ լինէր ի Հռոմայեցիս անդր ապաստան և առաջնորդէր Պոմպէի յարշաւանի նորա ի Հայս ընդդէմ հօրն»։ Պոմպէոս դեռ եկած չէր Տիգրանայ վրայ, այլ էր հետամուտ Միհրդատայ, որ յուսահատ Տիգրանայ ձեռնտուութենէն՝ հիւսիսային կողմերը կը խնդրէր օգնութիւն։ «Իբրև զգաստ լինէր այս (գալուստն Պոմպէի) Տիգրանայ՝ երկուցեալ նորա առաքէր պատգամ առ Պոմպէոս և տայր ի ձեռս նորա զհրեշտակսն Միհրդատայ. այլ հակառակ խորհուրդ որդւոյն՝ լինէր արգել հօրն ընդունելոյ պայմանս հաշտութեան։ Մինչ այս մինչ այն՝ Պոմպէոս (որ գայր ի կողմանց հիւսիսոյ)՝ անցեալ ընդ Երասխ հասանէր մինչև առ պարսպօքն Ար-

տաշատու, թէպէտ և Տիգրան ի նեղ մտեալ թողոյր զքաղաքն երթալ ի բանակ անդր նորա, և առ ածելոյ զնա և՛ յախնածութիւն և՛ ի գութ՝ ջանայր յարտաքին կերպարանս իւր չտալ նշմարել ո՛չ զառաջին մեծութիւն իւր և ոչ զայնր ժամանակի խոնարհութիւնն։ Այլ մերկանայր զպատմուճանն արքունի սպիտակ ծաղաւինոք և զառատոկն համակ ի ծիրանւոյ, այլ դնէր զխոյրն, և զապարոշն ածէր զնովաւ։ Պոմպէոս առաքէր ընդ առաջ նորա նուիրակ մի՝ ազդ առնել նմա իջանել յերիվարէն. քանզի Տիգրան ըստ սովորութեան իւրոյ աշխարհին, կամէր մտանել ի նիւս երիվարի ի ճամբար անդր Հռոմայեցւոց։ Իբրև եմուտ նա անդր հետևոտն՝ հանեալ զթագն ի գլխոյն խոնարհեցաւ, երկիր եպագ Պոմպէի։ Խանդաղատեալ զօրավարին ընդ տեսիլն՝ աճապարեաց ընդ առաջ նորա, կանգնեաց զնա, ած զապարօշն արքունի զգլխովն, նստոյց զնա առ իւր և մխիթարէր զնա ասելով, թող զայլ բանսն՝ թէ չէր նորա կորուսեալ զթագաւորութիւնն Հայոց, այլ շահեալ զբարեկամութիւնն Հռոմայեցւոց։ Յետ քաջալերելոյ զնա այսպէս՝ հրաւիրէր զնա յընթրիս։ Որդին Տիգրանայ, որ նստէր ի ձախմէ Պոմպէի՝ ոչ եկաց յոտն առաջի հօրն, և ոչ մի ինչ նշանակ սիրոյ ցուցանէր նմա. նա և ոչ ի ճաշն յոր հրաւիրեալ էր՝ կամեցաւ գալ, և այս ևս մանաւանդ ած ի վերայ նորա զցասումն Պոմպէի։ Ի վաղիւ անդր յետ լսելոյ զհայրն և զորդին՝ զօրավարն Հռոմայեցի եթող Տիգրանայ զտէրութիւնն, զոր ունէր նա ի հարց անտի. իսկ զգաւառսն, որոց տիրեալ էր նա, այն է, թող զայլ երկիրս՝ զբազում մարզս Գամրաց և Ասորւոց, զՓիւնիկէ, զԾոփս, երկիր սահմանակից Հայոց, յորոց ամենեցուն կազմեալ կայր աշխարհ մեծ և ընդարձակ՝ հանէր ի նմանէ, նա պահանջէր ևս հարկս արծաթոյ. իսկ որդւոյ նորա տայր զԾոփս միայն, ուր էին գանձք թագաւորաց Հայոց։ Մանուկն Տիգրան խնդրէր զգանձսն թախանձանօք, և ոչ կարացեալ առնուլ (զի այլ ուստեք չէր հնար Պոմպէի տալ հատուցանել զարծաթն խոստացեալ), զչարեալ դնէր ի մտի փախչել։ Այլ Պոմպէի իմացեալ զխորհուրդն՝ զգուշանայր նմա, և յղէր հրաման առ պահապանս գանձուցն՝ տալ զնոսա Տիգրանայ հօր։ Իբրև արքն չառնուին յանձն տալ առանց հրամանի մանկանն Տիգրանայ, զոր համարէին տէր երկրին՝ Պոմպէոս առաքէր զնա ինքն ի բերդ անդր, ուր եդեալ էր զգանձսն, և նորա գտեալ զբերդն փակեալ՝ երթայր հուպ և ակամայ խմն հրամայէր բանալ զդրունսն։ Պահապանքն չանսային նմա ևս, ասէին, եթէ ոչ տայ նա զհրամանն կամաւ, այլ բռնի։ Զայրացեալ Պոմպէի՝ ետ դնել զմանուկն Տիգրան ի բանտի, և այսպէս գանձքն յանձնեցան հօր

նորա։ Պոմպէոս բաժանէր ապա յերիս գունդս զզօրսն, և հաստատէր ձմերոց յԱնահտական գաւառին և առ եզերբ Կուր գետոյ, յետ ընդունելոյ ի Տիգրանայ հօրէն պարգևս բազումս և արծաթ առաւել յոյժ քան զսակ պայմանին։ Այս մանաւանդ յօժարեցոյց զզօրավարն յետ սակաւ միոյ գրել զՏիգրան ի համարի բարեկամաց և դաշնաւորաց Հռոմէական ժողովրդեան և առաքել զորդի նորա ի Հռոմ պահապանօք» (Դիոն. ԼԶ. 49—51).

Դիոն յետ պատմելոյ յաջորդ դպրութեան մէջ զարշաւանս Պոմպէի Վրաց և Աղուանից դէմ՝ կուգայ պատմել հակառակութիւնը, որ կար ի մէջ Տիգրանայ և Հրահատայ, և թէ ինչպէս վերջացաւ այս վէճն առանց պատերազմի, միջնորդութեամբ Պոմպէի։ «Յետ այսպիսի արութեանց (ի Վիրս և յԱղուանս)՝ Պոմպէոս շրջեցաւ ընդ երկիրն և շնորհեաց խաղաղութիւն Աղուանից և այլոց ցեղից բնակելոց առ Կովկասու մինչև ի ծովն Կասպից, ուր յանգի լեառնն այն սկիզբն առեալ ի Պոնտոսէ։ Հրահատ, որ կամէր նորոգել զդաշինսն ընդ Հռոմայեցիս՝ տեսեալ զխաղալ Պոմպէի յառաջ այնպէս արագ, զմնացեալ մասն Հայոց և զմասն Պոնտոսի, որ առընթեր կայ նմա, նուաճեալս ի ձեռն տեղակալաց զօրավարին, և զԳաբինիոս հասեալ յայնկոյս Եփրատայ մինչև ի Տիգրիս՝ զահի հարեալ աճապարէր պնդել զդաշինսն ընդ Պոմպէի, այլ ոչինչ կարաց վճարել։ Պոմպէոս ապաստան ի յաջողութիւնսն, որ եղենն և որոց ունէր ակն առ յապայ՝ արհամարհեաց զնա. խօսեցաւ գոռոզութեամբ ընդ հրեշտակսն և խնդրէր ի Հրահատայ տալ նմա զԿորդուս, որոյ վասն հակառակութիւն էր նորա ընդ Տիգրանայ։ Եւ զի հրեշտակքն չիշխէին տալ նմա պատասխանի, քանզի չունէին հրահանգս ի թագաւորէն՝ Պոմպէոս գրէր առ Հրահատ, և առանց սպասելոյ պատասխանւոյ՝ առաքէր ի Կորդուս զԱփրանիոս, որ կալաւ զերկիրն առանց կռուոյ և տայր Տիգրանայ։... Պոմպէոս զայս օրինակ գնայր ընդ Հրահատայ, ամբարտաւանեալ ընդ զօրութիւն իւր, յայտ արարեալ որոց ցանկանն աշխարհակալութեան՝ եթէ ամենայն ինչ կախեալ ՝կայ զգինուց և թէ նա, որում տան զէնք զյաղթութիւն՝ է տէր ամենայնի։ Նա և ծաղրէր իմն զանուն յորջորջանացն, զոր տայր անձին Հրահատ առ այլ ազգս և առ Հռոմայեցիս իսկ, որք կոչէին զնա արքայից արքայ. այլ Պոմպէոս ի թուղթսն կոչէր զնա առանց յաւելուածոյ՝ արքայ, թէպէտ և տուեալ էր նա զանունն արքայից արքայ՝ Տիգրանայ, յորժամ կատարէր զձաղանսն ՝ի Հռոմ յետ պարտութեան նորա։ Հրահատ երկնչէր ի Պոմպէէ և խնդրէր ածել զնա զիւրև, զայրանայր սակայն զի մերկացոյց զնա Պոմպէոս ի յորջորջանաց անուանէն, որ-

պէս թէ ի թագաւորութենէն մերժանայր զնա։ Առաքեաց առ նա պատգամաւոր՝ տրտունջ լինել զգլխանոյն զոր կրեաց, և արգելուլ նմա անցանել ընդ Եփրատ։ Իբրև Պոմպէոս ոչինչ մեղմանայր ի պատասխանին՝ Հրահատ ի սկզբան անդ գարնանոյն ել ի պատերազմ ընդդէմ Տիգրանայ հանդերձ փեսայիւն իւրով, որ էր որդի Տիգրանայ։ Ի ճակատու ուրեք պարտեալ՝ ապա լինէր յաղթող։ Իբրև Տիգրան կոչէր յօգնութիւն զՊոմպէոս, որ էր յայնժամ յԱսորիս՝ Հրահատ առաքէր դարձեալ պատգամաւորս առ զօրավարն Հռոմայեցի, տրտունջ լինէր զՏիգրանայ և ասացեալ, եթէ զՀռոմայեցւոց ևս ունէր բազում պատճառս տրտնջելոյ՝ ամաչեցոյց և երկեցոյց զՊոմպէոս։ Զօրավարն Հռոմայեցի ի բաց կայր յօգնելոյ Տիգրանայ և ոչ թշնամութիւն ինչ ցուցանէր Հրահատայ, պատճառեալ եթէ չէր նմա յանձն արշաւել ի վերայ Պարթևաց, և զի Միհրդատ կայր տակաւին զէն ի ձեռին։ Ասէր ասէլ, եթէ շատ և բաւական համարէր զոր արարն, և թէ չէին նորա կամք, ցանկալով առնել աւելի ինչ՝ արկանել ընդ վտանգիւ զյաջողութիւնն որպէս Ղուկուղղոս։ Առեալ իմաստնոյ բանն՝ ասէր, եթէ ցանկութիւն անդադարն տիրելոյ է վնասակար, որպէս և ակն դնել յայլոց ինչս է անիրաւ. այլ խօսէր նա այսպէս՝ զի առնել աւելի ինչ չէր ձեռնհաս։ Երկուցեալ ի զօրութենէ արքային Պարթևաց և յանհաստատութենէ բախտին՝ չետ այլ ևս պատերազմ, թէպէտ և բազումք յորդորէին զնա յայն։ Ունայնացոյց զամբաստանութիւնն Հրահատայ, և ուանց աշխատ լինելոյ ջրել զնոսա՝ ետ պատասխանի, եթէ որովհետև վէճն Հրահատայ և Տիգրանայ էր զսահմանաց ինչ՝ կարգէր գերիս ոմանս դատաւոր համոզել զնոսա, և արդարև իսկ առաքէր զայսն։ Տիգրան և Հրահատ ընկալան զնոսա իբրև իրաւարար, և ետուն վախճան գժտութեանն. առաջինն՝ վասն զի զչարեալ իւն էր, զի չընկալաւ օգնութիւն, և երկրորդն՝ քանզի կամէր եթէ թագաւորն Հայոց ունիցի ինչ զօրութիւն, զի թերևս դէպ լիցի նմա ունել պէտս ձեռնտուութեան նորա ընդդէմ Հռոմայեցւոց։ Երկոքին ևս քաջ գիտէին, զի որ ոք յերկոցունց անկաջախջախիցէ զընկերն՝ հորդեսցէ ճանապարհ Հռոմայեցւոց կատարել՝ զոր ի մտին եդեալ էր նոցա» (Դիոն ԼԷ. 5—7)։

11. Օտար պատմիչներէն ոմանք որ չեն ժամանակակից՝ կը նկարագրեն զՏիգրան իբրև անհնարին անգութ և բռնաւոր, որպէս թէ իւր որդւոց երեքը տուաւ սպանանել այլևայլ պատճառներով և թագաւորներ զորս բռնած էր՝ կը ծառայեցունէր իբրև գերի։ Այսպիսի պատմութիւնք այնպիսի ժամանակ և այնպիսի թագաւորէ, եթէ իցեն ևս ճշմարիտ՝ չեն զարմանալի, մինչ զՀռոմայեցի

կայսերաց, և այն գլուագունից, որպիսի կը հռչակուին Կոստանդիանոս և Թէոդոս մեծ՝ այնպիսի գործեր կը պատմուին և են ստոյգ: Բայց Տիգրան, նկատելով ահեղ մեծութիւնն յոր հասաւ նա՝ չէր անմասն մեծանձնութենէ, ինչպէս յայտնի է յառնելու նորա երեսս աղաչանաց Աղեքսանդրայ թագուհւոյն Հրէից և ի քաղցրութենէն, որով պատասխանեց պատգամաւորին Լուկուղղեայ, որ խստիւ կը պահանջէր տալ ի ձեռս զՄիհրդատ: Զիարդ և իցէ՝ սա ճշմարիտ է, թէ Տիգրան եղաւ արդարև մեծ ի թագաւորս իւրոյ ժամանակին, արար զհայս, թէպէտ կարճ ժամանակ՝ աշխարհակալ, և յիրաւի արժանի էր կոչուիլ ի Կիկերոնէ «Մեծազօր թագաւոր»:

12. Ի լրումն Տիգրանայ պատմութեան, որ մեր ազգային պատմութեան գրեթէ մի միայն կարևոր մասն է՝ հարկ կը համարինք արդի գիտնոյ մը (Théodore Reinach) Միհրդատ Եւպատոր անուն գործէն բերել երկայն հատուած մի, ուր հմուտ հեղինակն, յետ գնելոյ համառօտիւ Հայաստանի պատմութիւնն ի մահուանէն Աղեքսանդրի, այն է յանկանելոյ Հայոց ընդ իշխանութեամբ Սելևկեանց, մինչ ի Տիգրան մեծ՝ կը խօսի մանր այս վերջնոյն վրայ: Այս քաղուածէն, ինչպէս կարծենք՝ պիտի տեսնուի, թէ Տիգրանայ պատմութիւնն է իբրև բովանդակութիւն, համատեսիլ պատկեր (panorama) ողջոյն Հայոց պատմութեան: Արարատեան ազգին, իմա հին Հայոց (ըստ Խորենացւոյն Հայկազանց) պատմութիւնն յառաջ քան զԱղեքսանդր, գրեթէ անծանօթ մեզ, կամ գէթ մութ՝ յետ Աղեքսանդրի առ Սելևկեամբք կ'սկսի տակաւ լուսաւորուիլ մինչև Տիգրան, առ որով կ'առնուն իբր թէ գոյութիւն Հայք և՛ իբրև երկիր և՛ իբրև ազգ: Հին հայ-պարսկական մարմնոյ մը վրայ, յոր փոխուած էր հին հայ մարմինը՝ կու գայ հելլենական գոյն, որ կուտայ իւր հզօր ազդեցութիւնը դարերով կրօնից, ոչ հեթանոսականին միայն, այլ և քրիստոնէականին, լեզուին և դպրութեան, որոց զհետ եկած է ուրոյն նկարագիր ընկերական և բարոյական, ցարդ ոչ անզգալի: Ցիրաւի է կոչել մեծին Տիգրանայ ժամանակն, աննման փառաւորութեան հետ, թէպէտ կարճ՝ հայ ազգի մը անձնաւորութեան ժամանակ, այնպէս որ, ըստ մեզ, ի Տիգրանայ և այսր պարտ է խնդրել հայ ազգ. ի Տիգրանայ և անդր Հայը սաղմն է անկերպարան. առ Տիգրանաւ կը ծնանի, կը հասնի ի չափ, կը ծերանայ միանգամայն: Զարմանալի՛ երևոյթ: Բայց ըստ մեզ՝ այն է մանաւանդ զարմանալի, որ մեր տոհմային աւանդութիւնն այս անձին ժամանակէն և պատմութենէն, բաց ի չոր համառօտութենէ՝ ոչ այլ ինչ պահած է, բայց ՄԵԾ անունը: Ինչ որ

եղանք և ենք՝ եղանք և ենք Տիգրանեա: Ահա մեր քաղուածն հին լեզուաւ, վասն գիւրութեան և վայելչութեան:

«Ի վերջին բաժանման տէրութեանն Աղեքսանդրի, սատրապութիւնն Հայոց անկաւ ի բաժնին Սելևկեայ (Ապպիան. Ասոր. 55). այլ իշխանութիւնն Սելևկեանց չկարաց ունել հաստատութեամբ արմատ յերկրի անդ, որ էր լեռնային և ուր պարսկական բարք արձակեալ էին արմատ խորագոյնս քան ի Կապադովկիա: Ցընթացս դարուն երրորդի (ն. ք. գՔր.) է տեսանել յարուցեալ ի Հայս իշխանս ի բնակաց երկրին կամ ի սատրապաց ապստամբելոց, որ սկիզբն առնէին տիրել միահեծան: Սելևկեանք գնային ընդ իշխանսն ընդ այնոսիկ փոքունս մերթ քաղցրութեամբ և մերթ խրոխտ, ըստ չափոյ զօրութեան կամ տկարութեան նոցա. բայց ի յաղթել իսկ իւրեանց՝ շատ և բաւական համարէին ի վարձ յաղթութեանն՝ հպատակութիւն գտնեալ արտաքուստ: Այսպէս յիշատակին ի պատմութեան Արգոատէս (Արտաւազդ) յամին 301, (Դիոդ. Հատ. ԼԱ. 19, 5), Արշամ, դէպ յամն 240, (Պոլիէն. Դ. 17, մատենագիր յոյն Բ. դարու), Քսերքսէս, դէպ յամն 215 (Պոլիբ. Հատ. Ը. 25): Այլ ումն թագաւոր հայ գոյ յիշատակեալ յամին իբր 260 ի Մեմնոնէ (Պատմիչ յոյն մօտ ի Բ. դար):

Պարտութիւնն Անտիոքոսի մեծի առ Մագնեսեաւ (190) եղև վասն համօրէն աշխարհին Հայոց նշան կատարեալ ազատութեան: Երկոքին կուսակալք թագաւորին յաշխարհին յայնմիկ, Արտաքսիաս և Զարիադրէս, երկոքին ևս ազնուականք իրանեանք, որպէս թուի հաշակեցին զանձինս միահեծան, իւրաքանչիւր յիւրում իշխանութեան և առին զանուն թագաւորի հաճութեամբ և պաշտպանութեամբ հռոմէական ծերակուտին: Այսպէս հաստատեցան երկու հայ թագաւորութիւնք, որ տևեալ բաւեցին զողջոյն դարն Բ. նախ ք. գՔր., ի հիւսիսոյ արևելից՝ Մեծ Հայք ի հովտին Երասխայ, ուր ի դիպան վայրի կայր Արտաշատ մայրաքաղաք, շինեալ, որպէս ասեն՝ յԱննիբաղայ. իսկ ի հարաւոյ արևմտից՝ Ծոփք, որոյ քաղաք թագաւորութեանն Կարկաթիոկերտ՝ շինեալ էր ի վերայ բարձրաւանդակի, որ հայի ի դաշտ անդր Դկղադ գետոյ (Ստր. ԺԱ. 14, 15):

Երկոքին տէրութիւնք, թէպէտև կրեցին հակառակութիւն յԱսորւոց առ Եպիփանն Անտիոքաւ (Դիոդ. Սիկ.)՝ կալան պինդ զազատութիւն իւրեանց, առին զաւառս շուրջանակի յամենայն կողմանց, և կալեցան իսկ ժամանակս ինչ զօդիւ նիզակակցութեան ընդ Փոքուն Հայոց: Այլ ընդ հուպ Մեծ Հայք, թագաւորութիւնն Արտաքսիասայ, եղև քան զերկոսին (զԾոփս և զՓոքր Հայս) յառաջադէմ. և անձուկ աշխարհակալութեան նորա ստիպեաց գնալ

խնդրել պաշտպանութիւն յօտարաց։ Յայտնի է, թէ գնդք Փոքր Հայք յարեցան սերտիւ ի Պոնտոս առ Փառնակաւ և ընկղմեցան ի նա յառաջին ամս թագաւորութեանն Միհրդատայ Եւպատորի։ Նոյնպէս Ծոփք նուաճէին անդստին ի կիսոյ Բ. դարուն ն. ք. գՔր.՝ եթէ չէր գտեալ նոցա առ Արխաթարայ Ն-ի նեցուկ հզօր առանց անձին շահու (Դիոդ. Հատկտ. ԼԱ. 22, Պողիբ. Հատկտ. ԼԱ. 15, Ա.)։ Ի վարձ պաշտպանութեան իւրոյ՝ Կապադովկիա յիւր վտարեաց միայն զգլուխ կամրջոյն Տոմիսայ, որոյ գինն էր կարևոր ըստ զինուորութեան և դիպող կայան կարաւանաց, որ երթևեկէին ընդ Ասիա և ընդ Տիգրիս (Ստր. ԺԲ. 2. 1, և ԺԴ. 2. 29)։ Ի վախճանի դարուն Բ-ի յառաջադէմն խաղացք Մեծին Հայոց արգելու ի Պարթևաց, որ առին զՄարս և զՄիջագետս ի Սելևկեանց անտի վտաթարելոյ։ Արշակ Թ, (Միհրդատ Բ, 114—86) ետ պատերազմ ընդ Հայս, յաղթեաց թագաւորի նոցա Արտաւազդայ (Յուստ. ԽԲ. 2. 16), և էառ պատանդ զՏիգրան, իշխան թագաւորազն (Յուստ. ԼԸ. 3, Ստր. ԺԱ. 14, 15)։ Ապպիանոս կոչէ զՏիգրան՝ որդի Տիգրանայ (Ասոր. 48). չէր նա թերևս որդի Արտաւազդայ, այլ որպէս հաւանութեան է՝ եղբօրորդի նորա։ Աւելորդ է զկայ առնուլ առ կարծեցեալ աւանդութեան Հայոց (Խոր. Բ. 3, Յովհ. կաթ. Ը. 9), որպէս թէ Պարթևք կացուցեալ էին ի Հայս զայն Վաղարշակ, շառաւիղ կրտսեր յիւրեանց տոհմէ։ Յետ մահու Արտաւազդայ Միհրդատ չէառ յանձն տալ Տիգրանայ զազատութիւն և զաթոռ հարցն իւրոց՝ բայց տալով նմա թողուլ դաշամբ 70 գաւառս կամ «հովիտս» ի Հայոց (95 ն. ք. գՔր.)։ Ամ թագաւորելոյն Տիգրանայ յայտնի է անտի, զի յամին 70, յորժամ Ապպիոս Կղաւդիոս եկն դեսպանութեամբ ի Ղուկուղղոսէ առ Տիգրան՝ էր սա թագաւոր ի 25 ամաց հետէ (Պլուտ. Ղուկ. 21)։ «Հայն խոնարհեալ, այլ ոչ նուաճեալ» (Ստր. ԺԶ. 1. 19) վկայէ յայտնապէս, թէ Պարթևք ոչ նուաճեցին երբէք զՀայս. և այլուր (ԺԱ. 14. 15) ասէ, թէ Տիգրան էր ի զաւակէ Արտաքսիասայ, ետես այնուհետև շուրջ զիւրև մանր մանր թագաւորութիւնս, որ էին իւրաքանչիւր ընդ վերին իշխանութեամբ Պարթևաց, որպէս Ուռհայաստան, Կորդուք, Ադիաբէն, Մարք Ատրպատականի, որ արդել մեծ էին ընդարձակելոյ նորա։

Այրն, որ կրէր զթագ տէրութեանն Հայոց յայնպիսում դժուարին ժամանակի—(կալեալ նա թագ անդ՝ ուր շինեաց յետոյ զՏիգրանակերտ—Ապպիան. Միհր. 67)—էր ամօք ինչ երէց քան զՄիհրդատ Եւպատոր, այսինքն ծնեալ իբրև յամին 140 ն. ք. գՔր.։ Թէպէտ չկարէր նա գալ ի կշիռ համեմատութեան ընդ դրա-

ցւոյն իւրում ո՛չ հանճարով և ոչ բուսով բարուցն՝ ունէր ընդ նմա զոյգ հաւասար եռանդն սաստիկ մեծանալոյ, որ վաղ մերձեցուցանելոց էր զերկոսին թագաւորսն։ Այն ինչ ելեալ ի գահ՝ սկիզբն արար Տիգրան աշխարհակալութեան, տուեալ մարտ պատերազմի ընդ արքային Ծոփաց, որ Արտանէսն (Վարդանէս) կոչէր (ըստ Ստեփ. Բուզ.՝ Արշակ)։ Կապադովկիա որ չէր տակ պաշտպանել զանձն՝ ոչ մարթացաւ առնել ինչ վասն բարեկամին իւրոյ հնոյ. նա մանաւանդ ստիպեալ իսկ էր սակաւ մի յառաջ խնդրել ի նմանէ թիկունս օգնականութեան, այսրէն վաճառեալ նմա զամբոցն Տոմխայ (Ստր. ԺԲ. 2. 1), որպէս հաւանութեան է՝ ի պատերազմին Արիարաթայ Փիլոմետովրայ ընդդէմ Միհրդատայ։ Վերջինն ի Զարիադրեանց, թողեալ իւրում միայնում զօրութեան՝ ընկճեցաւ, և Ծոփք հանդերձ գաւառօքն (Եկեղեաց) յաւելան ի Մեծ Հայս (Ստր. ԺԱ. 14. 15)։

Նուաճեալ Տիգրանայ զայն կարևոր մասն՝ լինէր դրացի Կապադովկիայ ի ժամանակին՝ զի ընտրութիւնն Արիոբարզանայ ի թագաւորութիւն եղծանէր յերկրին յայնմիկ զազդեցութիւնն Միհրդատայ։ Թագաւորն Պոնտոսի խորհեցաւ խելոյն հնարս շահելոյ զՏիգրան յիւր կողմն։ Ո՛րպիսի օգուտ էր Միհրդատայ, եթէ մարթէր տիրել Կապադովկիայ ընդ վերարկուաւ Տիգրանայ, առանց ծախելոյ ո՛չ մարդ և ոչ դանգ մի և առանց հարկելոյ ցուցանել Հռոմայ բաբուրս յարձակելոյ անդր։ Գորդիոս, այր իւրահամարձակ, առ հրաման երթալ հաստատել ուխտ նիզակակցութեան ի մէջ Միհրդատայ և Տիգրանայ։ Կատարեաց այրն մեծաւ յաջողութեամբ զհրամանն, և ի հաստատութիւն վստահութեան ի մէջ երկուց թագաւորաց՝ քաղաքական դաշնն կնքեցաւ խնամութեամբ ազգատոհմիցն երկոցունց։ Տիգրան արար կին զմին ի դստերաց Միհրդատայ, զԿղէոպատրա, երից կրտսեր տիօք քան զնա, այլ մեծ՝ առաւելութեամբ հանճարոյն և առնացի քաջութեամբ։ Ի կատարումն դաշանցն, որ կռեցան գաղտ ի ձեռն Գորդեայ՝ Հայք անցին ընդ Եփրատ (93)
առաջնորդութեամբ նորին Գորդեայ և անկան ի վերայ Կապադովկիայ։ Անզօրն Արիոբարզանէս, ըմբռնեալ ի զեղծի, փորձել իսկ ոչ կամեցաւ կռուել. ժողովեալ զգանձս իւր չուեաց դէպ ուղիղ ի Հռոմ։ Զօրք Տիգրանայ եդին պահնորդս ի Կապադովկիա, և Գորդիոս կարգեցաւ կուսակալ (Յուստ. ԼԸ. 3)։ Գեղեցիկ էին հնարքն, բայց Միհրդատ զեղծաւ երկայնմտութեամբն հռոմէական ծերակուտին։.. Շիղա կարգեցաւ ի ծերակուտէն երթալ ունել զԿապադովկիա և նստուցանել զԱրիոբարզան միւս անգամ յաթոռն։ Շիղա՝ սակաւաձեռն զնդաւ անց ընդ Տաւրոս, հար զզօրսն Գորդեայ և զգունդն

Հայոց, որ եկեալ էր նմա ի թիկունս. ապա զհետ մտեալ փախըստէիցն՝ սուր յագդեր հասանէր մինչև յափունս Եփրատայ այս առաջին անգամ:... Սակայն Միհրդատ էր, որ կրեաց զպարտութիւնն՝ որում չունէր ակն: Խաբեաց զնա նենգակակցութիւնն Հայոց:

Ի սկզբան ամին 91, իշխանութիւնն Հռոմայեցւոց ի վերայ Փոքուն Ասիայ թուէր միւսանգամ հաստատեալ:... Այլ ի յաջորդամին, 90, ետես Հռոմ զկէս աշխարհին Իտալացւոց զէն ի ձեռին յարուցեալ ընդդէմ—որպէս ասէին—«զայլոց՝ ազատութեանն Իտալիայ»: (Այս էր ընկերական պատերազմն): Հռոմայեցիք կոչեցին յետս զլեգէոնս իւրեանց ցրուեալս, խնդրեալ թիկունս օգնականութեան ի դաշնաւորաց:... Այն ինչ մեկնեալ Սիղայի ի Փոքուէն Ասիայ՝ Միհրդատ նորոգեաց ընդ Տիգրանայ զդաշինսն: Որպէս երբեմն Հռոմայեցիքն ի դաշինսն ընդ Նուզացիս՝ նոյնպէս երկոքին թագաւորքն եդին պայմանս, զի յամենայն մարտս պատերազմաց զորս տայցեն երկուստեք ծախիւք՝ երկիրն նուաճեալ յետ յաղթութեանն լիցի Միհրդատայ, իսկ աւարն, այն է գերիք, անասունք և գանձք՝ Տիգրանայ (Յուստ. ԼԸ. 3, 5): Զօրավարք երկու, որպէս թուի Հայք, Միհրան և Բագուաս, մտեալ երկրորդ անգամ ի Կապադովկիա՝ հանին վտարանդի զԱրիոբարզան, որ չիշխեաց լինել դիմակալ որպէս երիւք ամօք յառաջ, և եդաւ յաթոռն Մաժաքայ որդին Միհրդատայ Արիարաթ:

Ի Պարթևաց Արշակ Թ, Միհրդատ մեծ, մեռաւ ի դէպ ժամանակի (86) և ոչ ետես զքայքայումն տէրութեան իւրոյ: Ի վերայ յաջորդին նորա պայթէր մրրիկն. ի սակաւ ժամանակի թշնամին որ ի ներքոյ և թշնամին որ արտաքոյ՝ հանին ի գլուխ զգործաւերմանն: Պետութիւնն Պարթևաց վատթարեալ, խախտեալ, քակտեալ յամենայն կողմանց՝ ջնջեալ իմն էր առ ժամուն ի համարոյ ազգաց յառաջակողման Ասիայ:

Զայնու ժամանակաւ էր, զի Հայք անցին պայծառութեամբ ի հանդիսի: Յիշեցաք վերագոյնն զհոյակապն կէտ նպատակի և զառաջին յաջողութիւնս արքայի նոցա, այսինքն թէ զիարդ Ծոփք նուաճեցան և Կապադովկիա երկիցս դրաւեցաւ ի հաշիւ Միհրդատայ: Մինչ թագաւորն Պոնտոսի կռուէր ընդ Հռոմայ՝ Տիգրանայ մոռացեալ զուխտ դաշանցն որ ընդ աներոյն իւրոյ—(Լուբերիէ, Գործք. Գ. 362, կարծէ իմն, թէ էր գունդ օգնական Հայոց ի ճակատուն Միհրդատայ. այլ մեք ցուցաք այլուր, թէ այդ կարծիք չեն ճշմարիտ)—խորհեցաւ օգտել ի տկարութենէ անտի Պարթևաց՝ խնդրել զվրէժ իւրոյ նախնի թշնամանաց: Գունդ մի Հայոցի եմուտ յերկիր իշխանութեանն Պարթևաց և լինէր միջամուխ մինչև յԱր-

բեղա և Նինուէ, աւերել, գերփել զերկիրն ընդ որ անցանէր։ Պարթևք ստիպեցան կռել դաշինս ի վնաս իւրեանց, դարձուցանել ի Հայս զեւթանասուն հովիտսն, զորս հանեալ էր նոցա ի նոցանէ յամին 95, նաև տալ նոցա զերկոսին գաւառսն ծաղկեալս հիւսիսային Միջագետաց, այն է զՄիգդոնիա և Ուռհայաստան (Ստր. ԺԱ. 14, 15)։ Հանդերձ այսու հարկ եղև նոցա կռել դաշն նիզակակցութեան ընդ յաղթողին (Յուստ. Խ. 1) և թողուլ կամաց նորա զիւրեանց հին ձեռակերտս (աւատ) ի հիւսիսոյ արևմտից։ Որ աւելի կարևորն էր՝ բդեաշխն Մեծին Մարաց (Դարեհ, որպէս հաւանութեան է, ըստ Ապպիանու, Միհրդ. 106) ետես զՀայս եկեալ հասեալ մինչև ի դուրս Եկբատանայ, որք և այրեցին զապարանս նորա (Իսիդոր Քարակացի Գ. 6)։ Այսպէս ամենայն արուարձականք Տիգրանայ բռնադատեցան ընդունել զվերին իշխանութիւն նորա ծանր ծանր պայմանօք, էր որ աւելի, էր որ պակաս։ Թագաւորք Աղուանից և Վրաց առ Կուր գետով, թագաւորք Մարաց Ատրպատականի —(Միհրդատ արքայ Ատրպատականի տրար կին զմին ի դստերաց Տիգրանայ. Դիոն. Կաս. ԼԶ. 16)—և Մեծին Մարաց, որպէս և թագաւորք Կորդուաց և Ադիաբենայ զվերին Դկղադաւ՝ եղեն հպատակք նորոյ արքայից արքայի, հարին նմա սպաս և եղեն հարկատուք ի ժամանակի խաղաղութեան, և ձեռնտու զօրօք և սատարօք ի պատերազմունս։

Այսպէս պատսպարեալ Տիգրանայ յամենայն կողմանց իբրև գօտւով իմն դաշնաւորօք և հարկատու իշխանօք՝ առ ի ձեռն զառաջին խորհուրդն զաշխարհաց յարևմտից Եփրատայ։ Եր նա յայնժամ, Ուռհայաստանիւ և Կոմագենաւ, տէր անցից գետոյն և մեծի պողոտային կարաւանաց. արաբացի ցեղք, զորս ած նստոյց անդ՝ առնուին բաժ անցից ի վաճառաց ի շահ Տիգրանայ (Պլուտ. Ղուկ. 21, Ստր. ԺԶ. 2, 27, Պլին. Զ. 28, 142)։ Անդուստ դիւրին էր Տիգրանայ ձգել զձեռն քաղել զԱսորիս իբրև պտուղ հասուն։ Բնակիչք երկրին Ասորւոց կոչէին զնա։ Վերջին Սելևկեանք, արդարև գոռոզք՝ չառնուին յանձն, իբրև վաղուց տեարք՝ տեսանել իշխան յերկրին զզուակ կուսակալաց հարց իւրեանց. այլ զինչ կարող էին առնել զօրք նոցա տկարացեալք ընդդէմ ահեղ բանակացն Տիգրանայ, որոց թիւն հասանէր մինչև ի յիսուն բիւր (Յովս. Նխն. պատմ. Հր. ԺԳ. 6, 4)։ Յամէ անտի 83, Տիգրան եղև տէր համօրէն վերին Ասորւոց, բաց յապառաժն Սելևկիոյ, որ նաւահանգիստ էր Անտիոքայ։ Վերջին թագաւորն Սելևկեանց Փիլիպպոս Բ. ապաստանեցաւ ի Կիլիկիա, մինչ որդին Եւսեբոսն Անտիոքոս թագուցանէր զանձն յԱսիայն Հռոմոց (Եւտրոպ. Զ. 14). կանայք և դստերք

թագաւորաց լնուլին զկանանոց յաղթողին (*Պլուտ. Ղուկ.* 14)։ *Անտիոք, մին յարքայանիստ քաղաքաց Տիգրանայ՝ հարկանէր դահեկանս ի պատկեր նորա, և միում ի զօրավարաց նորա Մագդատեայ յանձն էր վարել զԱսորիս իբրև սատրապ* (*Ապպ. Ասոր.* 48)։ *Ոգի առ Ասորւոց աշխարհն զամս չորեքտասան* (*Ապպիան.* 17). *Թէպէտ ընդ օտար իշխանաւ՝ վայելեցին խաղաղութիւն, հանգիստ և ուրս բարենշանս, զորս պղտորեաց միայն ահագին սասանութիւնն, յորմէ կորեան ոգիք իբրև* 170,000 (*Յուստ. Խ.* 2)։ *Յառաջադիմութիւնն Տիգրանայ չէառ անդ զկայ։ Յարեմուտս արկ նա ձեռն ի վերջին ծաղիկ պսակին Սելևկեանց, ի դաշտայինն Կիլիկիա։ Բազում քաղաքաց ծաղկելոց բնակիչք խախտեալ ածան ի Հայս* (*Դիոն Կաս. ԼԶ.* 37, *Պլուտ. Պոմպ.* 28)։ *Դարձեալ ի թելադրութենէ, որպէս առեն, Միհրդատայ՝ Հայք մտին երրորդ անգամ ի Կապադովկիա, կալան զԱրիոբարզան իբրև ի վարմի և տիրեցին մայրաքաղաքին. բնակիչք Մաժաքայ, որպէս և այլոց մետասան քաղաքաց Յունաց, ընդ բնաւ իբրև բիւրք երեսուն՝ ածան առնել շէն մարդաշատ զնոր նիստ արքայից արքայի, աճաւորին Տիգրանայ,* 77 *ն. ք. զԳր.* (*Ապպիան. Միհր.* 6. 7, *Ստր. ԺԱ.* 14. 15, *ԺԲ.* 2. 9)։

Հռոմ, որ թողոյր յանհոգս կործանել կամ շիջանել հին հաբստութեանց, զորս պաշտպանելն պարտէր՝ տեսանէր հանդարտութեամբ զկատել փոխանակ նոցա երկուց նոր զօրութեանց, որ անհնարին թշնամիքն էին ազդեցութեան նորա, զմին՝ ցամաքային, զՀայս, զմիւսն՝ ծովային, զհէնս։ Միհրդատ, խորագիտագոյն, եթէ չունէր յայն ամենայն անցս մասն այնչափ կարևոր, որչափ ընծայէր նմա ի Հռոմ՝ գիտաց գոնեայ օգտել ի նոցունց յամրացուցանել զգիր իւր ի Փոքուն Ասիայ։ Տիգրան էր փեսայ նորա և ոչ դադարեաց երբէք ըստ էութեան ի լինելոյ դաշնաւոր նորա։ Միհրդատ յետ պարտութեանն և փախստեան յերեսաց Ղուկուղղեայ եկն ապաւինել առ նա իբրև առ փեսայ և դաշնաւոր իւր յամին իբր 72 *ն. ք. զԳր.։ Տիգրան էր յայնժամ հզօրագոյնն ի թագաւորս յառաջակողման Ասիայ։ Տէրութիւն նորա ձգէր յափանց անտի Կուր գետոյ մինչև յեզերս Յորդանանու, և ի լերանց աշխարհին Մարաց մինչև ի սարոստ Տաւրոսի. այլ շինուած յօտարոտի մասանց, կազմեալ յամս* 25, *իբրև կոյտ խմն բեկորոց խլելոց ի գրացի ազգաց, չմածուցելոց առ միմեանս։ Ի միջավայրի անդ էին բուն Հայք, բաժանեալ ի բազում գաւառս, որոց թիւ առ Պլինեաւ* (*Բնակ. պատմ. Զ.* 27) *էր* 120։ *Ի հարաւոյ կողմանէ Սելևկեանց, Ասորիք և Կիլիկիա, ուրոյն նախարարութիւն կամ բդեշխութիւն հանդերձ Ան-*

տիոքաւ որ էր մայրաքաղաք։ Իսկ առ սահմանօքն Պարթևաց՝ չոր
իմն մանր մանր թագաւորութեանց, որոց էին բնակ թագաւորք
կամ տոհմային իշխանք, այլ ի սերտ հպատակութեան, որպէս Ուռ-
հայաստան, Կորդուք և Ադիաբենէ։ Յարևելից և ի հիւսիսոյ այլ
ձեռակերտք (fief) դաշնաւոր անուամբ, որոց պարտ էր տալ զօր ի
թիկունս թագաւորին, որ կոչէր զանձն «Արքայից արքայ»։

Նեցուկ տէրութեանն էր բանակ այնպէս անջատ և անյօդ՝
որպէս տէրութիւնն էր։ Նախարարք և սեպուհք էին շունչ իմն և
ոգի, յորոց կազմէր հեծելազօրն կուռ վառեալ, ինքն և երիվարք
նորա։ ՅԱղուանից անտի էին զրահաւորքն պատենազէնք, իսկ
Վիրք, դրացիք նոցա՝ աղեղնաւորք կորովիք։ Թագաւորն Մարաց
Ատրպատականի, փեսայ Տիգրանայ՝ մարթէր գումարել հետևակս
40,000 և հեծեալս բիւր (Ստր. ԺԱ. 13. 2)։ Մարք տային աղեղ-
նաւորս հեծեալս. Արաբացիք՝ զայրուձին անապատի. Կորդուացիք՝
ռահվիրայք էին և շինողք կամրջաց. վարձկան՝ հելլէնք և այլ
ևս ազգի ազգի գունդք զօրաց, ընդ ամենայն, ասեն, իբրև 500,000
այր։ Ի պահպանութիւն այսպիսի և այսչափ զօրաց պիտոյ էր թա-
գաւորին ամբաւ գանձ. և Տիգրան իբրև զՄիհրդատ ունէր քա-
ղաքս մեծամեծս լի գանձուք, որպիսի էին Ոշականն և Բագերդ-
ոչ հեռի յԱրտաշատէ, և Արտագերք առ Եփրատաւ (Արածանի, Ստր.
ԺԱ. 14. 6)։

Տէրութիւնն Տիգրանայ որպէս և դրացւոյն նորա՝ էր այսպէս
խառնուրդ իմն անկարգ ի գաւառաց որ լոկ արևելեան էին, և ի
գաւառաց որ ի հելլենանալ էին։ Հելլենականութիւնն էր յուժի
յաշխարհս այն ինչ նուաճեալս, որպէս ի Կիլիկիա, յԱսորիս, ի Միգ-
դոնիա (Միջագետք հիւսիսոյ), որ առաւել քան կիսով չափ էին
յունացեալք ընդ իշխանութեամբ Սելևկեանց։ Ամենայն ուրեք բայց
անտի՝ արևելք չէին ամենևին փոխեալ. աւանդութիւնք Պարսից
չէին ամենևին անկեալ յուժոյ պնդութենէ։ Ի Հայս ազատանին, որ
միայն յարգի էր յերկրին՝ կեայր վասն որսոյ և պատերազմի միայն,
և առ ուտել և ըմպել։ Արքունիքն՝ ունայն շքով և պերճութեամբ
արկանէր ահ ժողովրդեան որ աղայն էր։ Թագաւորն մեծապատիւ
մեծարեալ, մինչև կոչել աստուած, ոչ երբէք երևէր ի հրապարա-
կի՝ եթէ ոչ մեծաշուք սպասու, զգեցեալ պատմուճան նկարէն, գա-
ւազան-գաւազան, ի սպիտակէ և ի կարմրոյ (Դիոն Կաս. ԼԶ. 52),
և վերարկու ի ծիրանւոյ խորշխորշան. գլուխն պսակեալ բարձր
աստեղազարդ խոյրիւ։ Յորժամ գային առ նա յայցորել՝ թագաւորք
չորք ձեռատունկք կային յոտին, ձեռօք կցելովք առ գահոյիւ նորա,
և ի հեծանել նորա ի ձի՝ ընթանային նոքա առաջոյ նորա հետի,

լոկով պատմուճանաւ։ Թագաւորն զօրէն աւագանւոյն հանէր զմի մասն աւուրն յորս, զայլն՝ յաւնել արդարութիւն և զուարճանալ ընդ կանանւոյն, որ բազում էին թուով ի գրօսանս ծերութեան նորա։

Այլ վաղուց իսկ ազդեցութիւն սովորութեանց արևմտից սպրդեալ էր ի խուժադուժ արքունիս անդր։ Դշխոյն Կղէոպատրա, դուստր Միհրդատայ, հարեալ իբրև զհայր իւր հելլենական հրահանգաց՝ ձգէր ի Հայս արս ճարտարս, հմուտս յունական դպրութեան։ Ամփիկրատէս հռետոր, որ մերժեալ էր արհամարհանօք զհրաւէր Սելևկեանց (Պլուտ. Ղուկ. 22)՝ ընկալաւ զՏիգրանայն։ Մետրոդոր Սկեպսացի, որ յառաջն պաշտօնեալ էր Միհրդատայ՝ կեայր յայնժամ յարքունիս արքային Հայոց, զորոյ և զպատմութիւնն իսկ հար ի մատենի (Ստր. ԺԳ. Ա. 55, Ապոդ. Հաւդ. Դ. 133)։ Որպէս արքունիքն Տիգրանի՝ նոյնպէս և Տիգրանայն տանոյր զհամ յունակա՛ւ թատերայ։ Իբրև Ղուկուղղոս առ զՏիգրանակերտ՝ եգիտ անդ խումբ մի դուսանաց եկեղոց ընծայեցուցանել տեսիլ չքնաղ (Պլուտ. Ղուկ. 29)։ Մանկտին թագաւորազն կրթէր ըստ ոճոյ Յունաց. մին ի նոցանէ Արտաւազդ, որ ժառանգն էր թագաւորութեան՝ եղև մատենագիր անուանի (Պլուտ. Կրաս. 33)։ Եթէ պետութիւնն Հայոց էր տևեալ բաւեալ՝ չիք տարակոյս թէ արագ արագ փոխէր ի հելլենութիւն, որպէս Պոնտոսն և Կապադովկիա։ Յունական տարրն, այնպէս՝ հզօր յԱսորիս և ի Միջագետս՝ գործէր ապաքէն իբրև խմոր ազգայ և փոխէր յիւր պատկեր զմնացեալ զանգուածն։ Յոյնք խրագգած էին այսմ. զիջանէին անազորոյն և զառազ բռնակալին Տիգրանայ, համարեալ զայն իբրև կարևոր անցս ի պատրաստութիւն նորոյ յաղթութեան քաղաքավարութեան նոցա։ Շինութիւն Տիգրանակերտի չէր բաւական ի դերև հանել զյոյս նոցա։ Ապա կէտ նպատակի արևելեան իշխանին չէր ազատ յամբարտաւանութենէ. նորոյն Սաղմանասարայ պետոյ էր նոր Նինուէ. այլ ընտրութիւն տեղւոյն յայտ առնէ, թէ չէր առանց խորհրդոյ և իմաստութեան։ Հին մայրաքաղաքն Արտաշատ էր այնուհետև կարի ի բացեայ ի միջավայրէ անտի տէրութեանն։ Անտիոք էր պատուանդան ոտից Սելևկեանց. անդէն հաստատել զաթոռն՝ տայր կորուսանել զմերձաւորութիւնն տեղեաւ և խնամով ընդ իւրոց ժառանգական գաւառաց։ Տիգրան ընտրեաց կշիռ զմիջին տեղին. հաստատեաց զիւր նիստ զոգ ի միջոցի անդ տէրութեանն իւրոյ ընդարձակելոյ, երեսուն և եօթն մղոնիւք հեռի ի Մծբնայ, ի տեղւոջ անդ, ուր քան ամօք յառաջ կալեալ էր զթագ նախնեաց իւրոց։ Տեղին էր դիպան ըստ ամենայնի. ի հիւսիսոյ՝ լեառնն Մասիոս,

բազում Տաւրոսի, դաշտ մեծանիստ կրայն, որոյ մանր մանր բլուրք
բերեն զնմանութիւն ալեաց ծովու քարացելոյ, և ի հարաւոյ՝ դաշտք
Միջագետաց մեծատարածք և միակերպք. ի մէջ երկոցունց սոցա,
առ եզերբ լերինն և անապատին՝ երկիրն է պտղաբեր, ոռոգեալ ի
գետոց, որ թափին ի Տիգրիս և յԵփրատ և զոր հատեալ անցանէ
պողոտայն մեծ կարաւանաց, պողոտայ, որ Զևգմայիւ, Եդեսիաւ,
Մծբնաւ, Արբեղաւ կապէ զԱսորիս և զՄարս։ Մայրաքաղաքն նոր
«Տիգրանակերտ», այն է քաղաք Տիգրանայ՝ եւ յերկրէ որպէս յուս-
թիւք։ Աւագ տոհմք թագաւորութեանն բռնադատեցան, սպառնա-
լեօք գրաւելոյ յարքունիս՝ փոխել անդր զբնակութիւն իւրեանց.
բնակիչք երեք հարիւր հազար, Ասորեստանեայք, Մարք, Կորդուք
և այլք, գաղթեցին բռնի ի քաղաքն նոր։ Առ առնելոյ մարդաշատ
զքաղաքն՝ Տիգրան յամին իբրև 77 յարձակեցաւ ի Կիլիկիա և ի
Կապադովկիա, խաղացոյց զբնակիչս երկոտասան քաղաքաց ծաղկե-
լոց, յորս նշանաւոր էր Մաժաք (Ստր. ԺԱ. 14. 15, Պլուտ. Ղուկ.
21)։ Տիգրանակերտիւ թուէին արդարև յարուցեալ քաղաքք մեծա-
մեծք հնոյն Ասորեստանի և Բաբելացւոց, հանդերձ պարսպօքն յա-
ղիւսոյ յիսուն կանգնոյ բարձրութեամբ, լայնք մինչև բաւական
լինել շինութեան ապարանաց, հանդերձ ամուր միջնաբերդաւն,
հոյակապ ապարանիւքն արտաքոյ պարսպաց, և շուրջանակի որմա-
ծիւք երէոց յորս և աւազանօք ձկանց, արարուած զարմանալի այլ-
աւօրեայ՝ արևելեան հանճարոյ, կենդանի պատկեր հայ պետու-
թեանն ծնելոյ յանկարծ, այլ որ կործանելոցն էր ընդ շնչել հող-
մոյն ձախողանաց։

Զի թէպէտև էին պայծառ յաջողութիւնք Տիգրանայ՝ այլ ի
պատահելոյ անակնկալ դիպաց. չէր նա ի բնէ մեծ ոք, այլ ան-
հնարին փառասէր և ժիր. եօթանասնամենի չէր կորուսեալ զիւր
կայտառութիւն։ Սակայն եթէ մարմինն էր զօրեղ՝ միտքն էին մէ-
ջին իմն, անձուկ և անզգոյշ։ Քան զմիտն չէր մեծարգի բոյս բա-
րուցն։ Անագորոյն և գեղծ, մէտ ի հեշտանս և արհամարհոտ. յող-
դողդ ի սիրելն որպէս և յատելն, վասնորոյ և յիրաւի անբաւական
յածել զիւրև ոչ զդաշնաւորս իւր և ոչ հնազանդեալս, և ոչ իսկ
զորդիս իւր։ Անչափ սէր պերճութեան և անհնարին ամբարտաւա-
նութիւն առնէին զնա ատելի արևելեայց անգամ. այլ ամբարտա-
ւանութիւն չէ մեծութիւն. զոյզն ինչ խրատ կամ ազդ, թէպէտև
յօգուտ նորա՝ զայրացուցանէր զնա։ Ի յաջողութեան չէր ոք իշխան
խօսել առ նա համարձակ կամ գործել ազատ. իսկ յաւուր փորձա-
նաց և չաջողութեան ընկճէր նա յական թօթափել, և լինէր նկուն
այնպէս արագ և գձձէր՝ մինչև թշնամեաց նորա անգամ ամաչել

ընդ խոնարհութիւն նորա: Քսան և հինգ ամք թագաւորութեան և անխափան յաջողութեան ետուն նմա սխալակել և արկանել զաշխարհ ի պատրանս. դրացիք հաւատային թէ իցէ զօրութիւն մեծ, սուտակասպասք՝ թէ ոգի իմն իցէ, և ինքն յաստղ իւր յուսացեալ էր. այլ բախտն թուի բարձրացուցեալ զնա յանչափս, զի արասցէ զնա դահավէժ ի խորխորատ, ապշեցուցանել զաշխարհ ի տեսիլ նկնութեան նորա:

Ի բախել Միհրդատայ զդուռն Տիգրանայ յետ փախստեանն՝ յուշ առնէր նմա զխնամութիւնն, զհիւրընկալութիւն և զթշուառութիւն, զհին դաշինսն որ առնէին մի զերկոսին թագաւորսն, նա և զշա՛հ աշխարհին Հայոց, որոյ ազատութեանն կայր վտանգ մօտալուտ յաւուր յորում արծուէնշանք Հռոմայ կանգնէին առ Եփրատաւ: Արդարև ի քսան և ի հինգ ամաց հետէ Տիգրան չէր դադարեալ ի թշնամութենէ առ Հռոմայեցիս յայտնի կամ ի ծածուկ: Արշաւել նորա ստէպ ի Կապադովկիա, նուաճելն զԱսորիս և զդաշտայինն Կիլիկիա՝ էին մէն մի թշնամանք վերին իշխանութեանն Հռոմայեցւոց. կանուխ կամ անագան կոչելոց էր նա տալ համարս. ո՛չ ապաքէն լաւ էր կանխել ունել զառաջս. օգտել ի դիպաց, առ ունելոյ զՀռոմ ի չափու, մինչդեռ Պոնտոս չէր ընկճեալ ի սպառ: Այս խորհուրդ ճշմարիտ էր յամին 73 և 72. նա և յամին 71 ունէր տակաւին զօրութիւն. զի թէպէտև Միհրդատ չունէր ոչ զօրս և ոչ թագաւորութիւն, բայց և ոչ մին ի մեծամեծ ամրոցաց նորա էին տուեալ ձեռս և չտային թոյլ Հռոմայեցւոց ամփոփել զբովանդակ զօրութիւն իւրեանց: Այլ հպարտութիւնն Տիգրանայ կարճամիտ և կարճատես, քաջալերեալ ի խորհրդոյ նենգամիտ մարդկան՝ արար զնա այնպէս խուլ թախանձանաց Միհըրդատայ՝ որպէս լեալ էր առաւ միով յառաջ թախանձանացն Կղէոպատրայ: Սովորութիւն է անագորոյն մտաց գժտել ընդ թշուառս, զի ունիցին բարուրս չօգնելոյ նոցա: Տիգրան կեղծաւորեցաւ ունել խէթ ընդ աներոյ իւրում. չառ յանձն ընդունել զնա առաջի իւր. և զի չկարէր զլանալ նմա ի սպառ զհիւրընկալութիւն՝ կարգեաց նմա դունդ պահապան, և ի բնակութիւն նորա բերդ մի ամուր ի խորս ուրեք աշխարհին Հայոց ի ճախճախուտ երկրի: Միհրդատ երբև կալանաւոր ասպնջականին իւրոյ և արգելեալ յանգործութեան՝ եկաց ամիսս քսան ի վնասակար երկրին (յաշնանոյ ամին 71 մինչև ի գարուն 69 տարւոյն ն. ք. զՔր.) սրտատուչ յառնուլն հետ զհետէ զհամբաւ անկանելոյ ի ձեռս թշնամւոյն ամուր ամուր քաղաքաց իւրոց, որ էին ակնկալութիւն դարձի նորա:

Ի նմին ձմերան ամպք սկսանէին կուտել զՏիգրանաւ, և նա

չառնոյր ի միտ, թէ մրրիկ սաստիկ ի վերայ կայր։ Յայտնէ անտի առմանն Կարկրայ (Սեբաստիայ) Ղուկուղղոս եւ հրաման աներոյ իւրում Ապպեայ Կղաւդեայ, որ երթեալ էր ընդ նմա յԱսիա՝ երթալ պահանջել ի Տիգրանայ տալ ի ձեռս զՄիհրդատ։ Արդարև կարևոր էր Հռոմայ ածել զթշնամին իւր զբռամբ, այլ միւս ևս գործ էր փորձել զՏիգրան։ Չէր մարթ Հռոմայ, առանց անկանելոյ ի պատուոյ՝ թոյլ տալ Հայոց առնուլ կալ և հաստատութիւն յեզերս Միջերկրականին։ Յորչափ դաշտայինն Կիլիկիա և Կոմագէն էին ի ձեռս Տիգրանայ՝ չէր հնար Կապադովկիայ լինել ազատ, և իշխանութիւնն Հռոմայեցւոց ի Փոքուն Ասիայ էր վտանգի։ Յետ նուաճելոյ Տիգրանայ զԱսորիս և զՓիւնիկէ՝ Հրեայք, որ էին ընդ պաշտպանութեամբ Հռոմայ, և Եգիպտոս էին ի տագնապի։ Տրտունջք յամենայն կողմանց յաճախէին ի Հռոմ։ Ղուկուղղեայ մնայր յընտիր առնել Տիգրանայ ամօթալից դաշն ի բաց կալոյ յաշխարհաց նուաճելոց, կամ պատրաստ լինել ի պատերազմ։ Դեսպանն Հռոմայեցի մոլորեալ ի ճանապարհին ընթանայր զհետ Տիգրանայ ընդ բովանդակ աշխարհն Հայոց, մինչև յետ յածելոյ հասեալ յԵփրատ գետ և ապա յԱնտիոք՝ լուաւ եթէ Տիգրան էր յաշխարհին Փիւնիկեցւոց ի նուաճել զվերջին տեղիս, զոր ունէին տակաւին Սելևկեանք։ Պտղոմայիդ, ուր ամրացեալ էր դշխոյն Սեղինէ՝ արգել զՏիգրան զձմեռն ողջոյն։ Կղաւդիոս զայս պարապ համարեցա դիպող յածել զիւրև զքաղաքսն Ասորւոց և զդաշնաւորս բարբարոսս Տիգրանայ։ Իշխանն Կորդուաց Զարբիենոս և այլք ոմանք ի ձեռակալաց Տիգրանայ ետուն գաղտ ձեռս ի Կղաւդիոս, խոստացեալ յետս կալ։ Մինչ այս նենգութիւնք նիւթէին հակառակ իրաւանց ազգաց՝ Տիգրան դառնայր յԱնտիոք։ Պտղոմայիդ եղև անձնատուր, և Սեղինէ անկաւ ի ձեռս յաղթողին։ Դիւրին է գուշակել զզարմանս Տիգրանայ, որ արբեալն էր այնչափ յաջողութեամբ՝ ընդ պատգամաւորութիւնն Ղուկուղղեայ՝ տալ ի ձեռս զՄիհրդատ ի ձաղանս։ Որ աւելի յանդգնութեան էր՝ զօրավարն հռոմայեցի գրէր ի նամակին «Առ Տիգրան արքայ», փոխանակ արքայից արքայի, որպէս սովոր էր նա տալ դրոշմել ի դահեկանս իւր։ Զգնել շուք դեսպանին էր արդարև ծանր, այլ ծանրագոյն ևս էր խոտել զանուն յորջորջանացն։ Տիգրան ժպտելով, ասեն, առ զգիրն արհամարհօտ, զոր ևս իմն ծանրագոյն գործէր զգոռոզութիւն պատգամաւորին։ Տայր պատասխանի Տիգրան, թէ առանց թեկն ինչ ածելոյ աներոյն իւրում՝ չկամէր ազարտել զանձին պատիւ, տալով զնա ի ձեռս. և առ հատուցանելոյ զփոխարէն թշնամանացն Ղուկուղղեայ՝ չետ նմա ի նամակին իւրում զյորջորջանաց անուանն «Իմպերատոր»։ (Զմե-

բանի յամին 71—70. Պլուտ. Ղուկ. 19. 21, 23. Մեմնոն. 4. 46)։

Այս հարուածք գրէի գուշակ էին հարուածոց սրոյ, սակայն Տիգրան առ անմտութեանն եթող անցուցանել զամ մի ողջոյն առանց ի միտ առնլոյ, եթէ պատասխանին իւր էր հաւասար հռչակելոյ պատերազմ։ Ի կէր արկ, մանաւանդ թէ կորոյս զայն ժամանակ ի պատրաստել գնաւակատիս քաղաքին իւրոյ նորոյ և ի պատուհասել զիշխանսն զձեռականս իւր, որք ի բանի լեալ էին ընդ Ապպեայ Կղաւդեայ։ Զիշխանն Կորդուաց ետ սպանանել հանդերձ տամբն ի բերդս նորա յաշխարհին առ Դկղադաւ, ի Սատաղ և յայլս (Պլուտ. Ղուկ. 29, Ստր. ԺԶ. 1. 24)։ Իսկ զարքայն Պոնտոսի և զթախանձանաց նորա փոյթ օգնութեան՝ չարար ամենևին փոյթ, մինչ Ղուկուղղոս հանէր ի գլուխ զնուաճումն քաղաքաց Պոնտոսի։ Ղուկուղղոս չետ պատասխանի իսկ և իսկ Տիգրանայ ի չլսել նորա բանից դեսպանին իւրոյ, զի մինչև արկեալ ձեռն ի գործ՝ համարէր ի դէպ ածել զրամբ զվերջին ամրութիւնսն Պոնտոսի։ Անկումն Սինոպայ և Ամասիայ առնէր զձեռն նորա արձակ. ուստի և յամին 70 - 69 ետ ժմերել զօրուն ի Պոնտոս և ի Կապադովկիա, և պատրաստէր բազում գաղտնեօք միաբան ընդ Արիոբարզանայ անցանել ընդ Եփրատ գարնայնի։ Գործն ըստ իրաւանց թուէր արդար, այլ ըստ օրինացն պատերազմի ունէր դժուարութիւն բազում։ Հայաստան էր երկիր անծանօթ Հռոմոց, որ դիտէին զայն համակ լեռնային, ոռոգեալ ի մեծամեծ գետոց, խստաշունչ հողմովք, կարճ ամարամբք, զորոց զհետ գային երկայն և սաստիկ ձմերունք. գարձեալ մնայր կրել ընդդիմութիւն մեծ ի բնակչացն, որ առ ի չգոյէ զինուորական արուեստին՝ մարթէին զդէմ ունել օտար թշնամւոյն մոլեկան կրօնիւքն և սովորութեամբ ազգին. նա և ի զօրս իւր չէր վստահ Ղուկուղղոս։

Մինչ Ղուկուղղոս պատրաստէր յարձակել ի Հայս՝ Տիգրան առ ի միտ թէ պատերազմն մօտալուտ էր, և մտանէր ի հնարս հայթայթանաց զդէմ ունել վտանգին։ Ի գարնան 69 ամին, քան ամսովք յետոյ քան զգալուստն Միհրդատայ ի Հայս՝ յանձն առ Տիգրան խօսել ընդ նմա։ Պատահել միմեանց երկուց թագաւորաց եղև մեծաշուք և բազում վստահութեամբ երկուստեք ուրախ բազմամբ, մինչև փարատել զամենայն կասկած տարակուսի։ Որոց մի անգամ արկեալ էր քսութեամբ թշնամութիւն ի մէջ փեսային և աներոյ՝ լուծին զվրէժն մահուամբ։ Մետրոդոր Սկեպսացի պրծաւ ի սրոյ յանկարծահաս մահուամբ, առեալ թոյն, որպէս կարծէր (Պլուտ. Ղուկ. 22, Ստր. ԺԳ. 1. 55)։ Թագաւորքն երկոքին միա-

բանեցան, թէպէտ անադան, չմնալ յարձակմանն Հռոմայեցւոց· այլ սկիզբն առնել կռուոյն ի Փոքրն Ասիա։ Միհրդատ առնոյր վաշտ մի 10,000 հեծելոց՝ միւսանգամ նուաճել զթագաւորութիւն իւր, և Տիգրան հրաման տայր զօրավարաց իւրոց մտանել ի Կիլիկիա Հռոմոց և ի Լիկաւոնիա. այլ ի սկսանել անդ գործոյ պատերազմի Հռոմայեցիք մտեալ էին յերկիրն Հայոց։ Ղուկուղղոս բաժանեալ էր զզօրս իւր յերկուս. արք 6,000 ընդ ձեռամբ Սոռնատեայ մնային պահել զՊոնտոս. ի մնացելոցն որ էին լեգէոնք երկու վաղերեանք և օգնական զօրն յԱսիացւոց, Գաղատացիք և Թրակացիք, ընդ ամենայն արք իբրև քսան հազար, կազմէր բուն բանակն (Պլուտ. Ղուկ. 24)։ Կամուրջք որ արկան ձմերանի անցանել ընդ Եփրատ՝ էին կարճ, զի գետն յորդեալ յանձրևաց գայր դարիւ և դարիւ. այլ յանկարծ նուազէին ջուրքն գիշերայն, մինչև մարթել անցանել զօրուն զբեթէ հետիոտս (Սալուստ. Հտկտ. Գ. 11)։ Առաջին բերդն առ ձախոյ եզերբն՝ էր Տոմիսա, որ առաւ և տուաւ Կապադովկացւոց. յետոյ անց զօրն ընդ Ծոփս առանց հանդիպելոյ ընդդիմութեան յերեսաց բնակչացն, որ այն ինչ մտեալ էին ընդ լծով Հայոց, և առանց յամելոյ ի պաշարման փոքր փոքր ամրութեանց։

Ղուկուղղոս անցեալ էր ընդ Տիգրիս արևմտեան ոչ հեռի յականց անտի, և խաղայր դէպ ուղիղ ի կիրճս Տաւրոսի և ի վերայ Տիգրանակերտի, մինչ Տիգրանայ ազդ եղև մերձենալ նորա։ Մինչև ցայնժամ ճամբարն Հայոց կեայր լի անրջովք։ Խնդիր մեծ այն էր գիտել, թէ մնալո՞ց էր արդեօք Ղուկուղղոս յԵփեսոս ի դիմի հարկանել ասիական գնդաց, եթէ տալոց էր խոյս առանց կռուոյ յայնկոյս ծովուն։ Առաջին պատգամաւորն որ ետ զգոյժ, թէ գայր Ղուկուղղոս դիմագրաւ՝ կախեցաւ զի ստեաց. այլ ընդ հուպ յայտնի եղև, թէ պարտ էր ի փախուստ աճապարել կամ տալ ճակատ։ Վայր մի զմտաւ ած Տիգրան մարթել զդէմ ունել թշնամւոյն զօրօքն որ ընդ ձեռամբ իւրով էին։ Մի ի զօրավարաց նորա Միհրբարզան առ բաժին մի հեծելոց, 3,000 այրուձի և պատուէր՝ ածելոյ զՂուկուղղոս մեռեալ կամ կենդանի։ Զօրավարն պատահէր Հռոմայեցւոց զճանապարհայն, մինչ յառաջապահն կազմէր բանակ։ Ղուկուղղեայ պատուէր տուեալ էր Սեքստիլեայ զառաջս միայն ունել թշնամւոյն 1,600 ձիաւորօք և նոյնչափ հետևակօք, այլ նա ստիպեցաւ տալ ճակատ, և տարաւ զյաղթութիւնն. Միհրբարզան սպանաւ և զօրն ցրուեցաւ։ Յայս գոյժ Տիգրան խոյս ետ ի հիւսիսակողմն Տիգրիսի դիմակալ լինել Հռոմոց ի բուն Հայս։ Մագագատէս կուսակալ Ասորւոց կոչեցաւ իւրով պահապան գնդաւն. իբրև ի նշան հրաժարելոյ իւրոյ ի թագաւորութենէն Սե-

լևկեանց՝ Տիգրան ետ գլխատել զգլխոյն Սեղինէ, որ էր ի բերդին Սելևկիայ ի Կոմագէն դէմ յանդիման Զևգմայ, ուր էր նա ի դիպահոջ (Ստր. ԺԶ. 2. 3)։ Երկու ամրոցք մեծամեծք ի հարաւոյ Տիգրիսի յանձն լեալ էին, մին, Տիգրանակերտ՝ Մանկեայ զօրավարի, միւսն, Մծբին՝ Գուրասայ, եղբօր թագաւորին։ Ինքն Տիգրան խաղացոյց զբուն բանակն յայնկոյս լերանց, որում հետամուտ էր Մուրենա, որ հան ի նմանէ ի կիրճս անդ զբեռինսն և զգունդն վերջապահաց։ Միւս ևս գունդ յԱրաբացւոց որ երթայր խառնել ի բուն բանակն՝ արգելաւ և հարաւ ի զօրապետէն Սեքստիլեայ (յամարայնի 69)։

Այս սկիզբն յեղակարծ կռուոյ հակառակ էր յոյժ պատերազմական հանճարոյն, զորոյ զհանդէսն տուեալ էր ցայնժամ Ղուկուղղոս։ Փախուստն Տիգրանայ եղև այնպէս արագ, մինչև ոչ ժամանել նմա առնուլ զգանձս իւր և զկանանին որ էին ի Տիգրանակերտ։ Մայրաքաղաքն իսկ և իսկ պաշարեցաւ ի Սեքստիլեայ․ զօրավարն կալաւ առանց կռուոյ զարուարձանն և զարքունիսն որ էին արտաքոյ պարսպացն, այլ քաղաքն և միջնաբերդն թուէին զդէմ ունել ի սպառ։ Պահանորդքն, որ էին ի յոյն և ի կիլիկեցի վարձկանաց՝ տեղային ի վերայ պաշարողացն զնետսն իբրև զանձրև, և նաւթ եռացեալ, որ սպառէր զմեքենայս պաշարմանն (Պլին. Բ. 101, 235)։ Մինչդեռ Հռոմայեցիք կռուէին ընդ բերդին ականս և խրամս հատեալ՝ Տիգրան գումարէր զզօրս իւր ի վերայ բարձրաւանդակին Վանայ։ Բազումք ի հնազանդելոց նորա եկին ի կոչն․ թագաւորք Ադիաբենայ և Ատրպատականի ածին զօրս ի թիկունս․ Աղուանք և Վիրք և Արաբացիք Բաբելոնի առաքեցին նոյնպէս զիւրեանցն։ Միհրդատ կոչեցաւ իւրովք հեծելովքն, և խաղայր նա յամր՝ առաքեալ առաջի իւր զզօրավար իւր Տաքսիլոս, որ խրատ տայր Տիգրանայ՝ չդնել զիւր թագն ի վտանգի․ լաւ է, ասէր, յերկարել զգործն, և հեծելովքն որովք առաւել էր քան զթշնամին՝ հատանել զպաշարն Հռոմայեցւոց։ Այս իմաստուն խրատ, որում նպաստ լինէր և Միհրդատ պատգամաւորօքն՝ չկարաց յաղթել թեթևադրութեան սուտակապատացն և սաստիկ տենչանացն Տիգրանայ՝ ազատելոյ զկանայս և զգանձս իւր որ արգելեալ կային ի մայրաքաղաքին։ Ի սկզբանն յաջողէր ամենայն։ Գունդ մի 6,000 հեծելոց եղև ձեռնհաս ճեղքել ի գիշերի զգունդ պաշարողացն, տեղացեալ ի նոսա նետս իբրև զտարափ, և առեալ զհարճս թագաւորին և զգանձսն մեծագինս՝ հորդեցին իւրեանց ճանապարհ ընդ գումարտակ զօրուն Հռոմայ և Թրակացւոց, թողեալ ի ճանապարհի բազմութիւն վիրաւորաց և գերեաց (Մեմնոն Գ. 56, և Ապպիան. Գ. 85)։

Զայսմանէ լսէ Պլուտարքոս, զի չէր ի պատիւ Ղուկուղղեայ արուեստին և քաջութեանն։ Այս յաջողութիւն փոխանակ գոհացուցանելոյ զՏիգրան՝ ևս առաւել զայրացոյց։ Թէև զօրաց նորա հասանէր յայնժամ յ80,000 պատերազմողաց, որ ծաղիկն էին արևելից. համարէր զանձն բաւական հզօր ի բաց վանել զպաշարիչս մայրաքաղաքին իւրոյ առանց մնալոյ օգնական զօրուն Միհրդատայ։ Իբրև էջ նա ի հովիտ անդր Տիգրիսի և ետես զգոյզն բանակ Ղուկուղղեայ, զակիզ ածեալ յայնկոյս գետոյն ի դաշտին՝ քամահեաց. «կարի իմն են, ասէ, եթէ ի դեսպանութիւն գան, իսկ եթէ ի պատերազմ՝ սակաւ յոյժ են»։ Տաքսիղոս փոքր միւս ևս և տուժէր զկեանս, զի յամառէր խրատ տալ՝ մի՛ մտանել ի կռիւ։

Ղուկուղղոս առեալ համբաւ, թէ գայր նմա զօր յօգնականութիւն՝ յանդգնեցաւ յանդգնութիւն մեծ, այն է տալ ճակատ առանց բառնալոյ զպաշարումն։ ԶՄուրենա թողեալ վեց հազարօք յանդիման Տիգրանակերտի՝ ինքն մնացելովքն հետևակաց, իբր 10 կամ 12 հազար արամբք (24 վաշտիւք), 1,000 աղեղնաւորօք և պարսաւորօք և բովանդակ այրուձիովն որ էին երեք հազար՝ խաղաց ընդ առաջ Տիգրանայ (Մեմնոն Գ. 57. այլք ի պատմագրաց դնեն աւելի)։ Մեծ էր արդարև խոյրն, այլ ասիացի զինուորք էին իբրև հօտ առանց քաջութեան, առանց հրահանգաց՝ առանց հրամանատարի։ Զերկուսին բանակսն բաժանէր Տիգրիս գետ, որ անտի սակաւիկ մի հեռի կազմէր արմուկն յարևմուտ կոյս և տայր անցս։ Հռոմայեցիք ունէին զառափարակն. գետեզրն զոր կալեալ էին Ասիացիքն՝ էր անհարթ. ի միջավայրի անդ նոցա բլուր մի տափարակ դիւրին յառնուլ։ Ի վեցերորդումն հոկտեմբեր ամսոյ ամին 69, Տիգրան ետես այգուն, զի լեգէոնք Հռոմայեցւոց ելին ըստ ճամբարն կարգաւ՝ զթիկունս առ թշնամին դարձուցեալ՝ կոչեաց զՏաքսիղոս ցուցանէ նմա մատամբն զխաղալ նոցա յետս. այլ այն ինչ խօսեալ նորա՝ տեսանէ զի զկայ առին Հռոմայեցիքն մօտ ի հուն մի գետոյն, և սկսան անցանել յայնկոյս բաժին առ բաժին։

Տիգրան հազիւ մարթացաւ կարգել զզօրս իւր ի ճակատ. փեսայ նորա, արքայն Ատրպատականի, կալաւ զաջ թևն, թագաւորն Ադիաբենայ՝ զձախն, ինքն էր ի միջոցին։ Հետևակազօրն կայր յետոյ կուսէ. այրուձին կուռ վառեալ ծածկէր զաջ թևն առ ստոր բլրոյն. ի թիկանց անտի ի վերայ բարձրաւանդակին ամրացեալ էր աղխ և կազմած պատերազմին։ Զօրութիւն Ասիացւոցն էր յայրուձին և ի գունդ աղեղնաւորացն, այլ չեղև մարթ վարել ոչ զմին և ոչ զմիւսն։ Ղուկուղղոս յական թօթափել իմացաւ զհանդամանս

տեղւոյն, և թէ զիա՛րդ յարձակելոց էր։ Ընդ անցանել զօրուն ի ձախակողմն անդր գետոյն՝ խաղացոյց զայրուձին Գաղատացւոց և զԹրակացւոց ի վերայ զրահաւորացն Հայոց, հրաման տուեալ իւրոցն տակաւ ընկրկել յետս և ձգել զնոսա ի դիւրն. ինքն իջեալ յերիվարէն՝ մերկացաւ զսուսերն և սկսաւ ելանել ընդ բլուրն, որպէս թէ յարձակեսցի վաշտիւք երկուք որ գային զկնի։ Ճանապարհն էր եւթն հարիւր կանգուն երկայնութեամբ։ Հասեալ ի կատար անդր՝ Ղուկուղղոս գոչեաց ի ձայն ահեղ, «Յաղթութիւն», և անկաւ իբրև զկայծակն ի վերայ աղխուց թշնամւոյն. սպասաւորք և գրաստք լեալ ցիր և ցան՝ արկին ահ ի ճակատ անդր աջոյ թևին։ Ի նմին ժամու այրուձին Հռոմայեցւոց դարձոյց զերեսս և ած յիւր վերայ զզրահաւորսն Հայոց որ պնդէին զհետ նոցա։ Ղուկուղղոս ունէր զյետոյս նոցա, պատուէր տուեալ հետևակաց իւրոց՝ հարկանել զազդերս նոցա որ միայն էին անզրահ։ Զրահաւորքն ոչ կացին մնացին բախելոյ ընդ միմեանս. ցրուեցան ընդ ամենայն կողմանս, և անկան ի թանձրութիւն անդր հետևակազօրուն։ Գունդքն լուծանին ցրուին կարգ ըստ կարգէ, և վաղվաղակի դաշտն և բլուրք ծածկին ի բազմութենէ փախստէիցն։ Արգելեալք ի ծանրութենէ զրահիցն և ի խուռն բազմութենէն կծկեալք կապեալք՝ Ասիացիքն կոտորեցան չարաչար, հետամուտք հալածեցին զնոսա ասպարէսս քսան, ի տարաժամել աւուրն միայն զկայ առեալ. յայնժամ ուրեմն տայր Ղուկուղղոս ժողովել զկապուտն։ Ասիացիքն կորուսին 30,000 այր ի ճակատուն։ Ըստ համբաւոյն Ղուկուղղեայ առ ծերակոյտն՝ հինգ մեռեալ և հարիւր վիրաւորք անկան ի ճակատուն ի Հռոմայեցւոց անտի։ Անօգուտ պարծանք, զոր եթէ համարեսցուք ճշմարիտ՝ նուազեցուցանէ զփառս յաղթողին մանաւանդ քան յաղթելոյն։

Տիգրան խոյս ետ ի ճակատէն 150 հեծելովք, ընկեցեալ զխոյրն հանդերձ ապարօշիւն առ ի չտալոյ ծանօթս։ Զտեղի առ յառաջնում բերդին որ դիպեցաւ նմա զճանապարհայն։ Անդ եկն եգիտ զնա Միհրդատ։ Թագաւորն Պոնտոսի ճանապարհ արարեալ կարճ օթևանօք ի Տիգրիս կոյս՝ հանդիպէր գունդ գունդ փախստէից, որ ետուն նմա զգոյժ պարտութեանն։ Երկոքին թագաւորքն տեսին զմիմեանս այլակերպս յոյժ, և ոչ որպէս զառաջին նուագն։ Քանի՜ սրտառուչ էր տեսիլն։ Միհրդատ էջ յերիվարէն, իբրև ետես զՏիգրան. գիրկս արկ նմա արտասուօք, ետ նմա պատմուճան արքունի, զթիկնապահս իւր և զսպասս։ Ի միում աւուր կարճամիտ թագաւորն, որ սակաւ մի յառաջ ողողէր ի փառաւորութենէ՝ անկեալ գնէր ի մեծամիտ պարծանացն ի յատակ անդր անյուսութեան։ Միհրդատ զամենայն հնարս հնարեցաւ քաջալերել զնա և տալ

նմա յանվեհեր քաջութենէն, որով լի էր նա։ Տիգրան երբեւ մանուկ ծեր՝ եդ շուք լրջմտութեան աներոյն իւրոյ, եւ եդ ի մոռանալ զայս նուագ, առանց ընդ բանս ինչ ածելոյ, հրամանաց եւ կարգաց Միհրդատայ յերս քաղաքի եւ զինուորութեան։ Եւ զի անցեալ էր տարին եւ մօտ ի կատարած՝ չէր մարթ ունել զառաջս վնասուց պատերազմին Տիգրանակերտի. ամենայն գաւառք ի հարաւոյ Տիգրիսի կորուսեալ էին։ Ի քաղաքին պաշարելոյ՝ յոյն եւ կիլիկեցի զինուորք, վարձկանք, ընդ հրամանատարութեամբ զօրապետաց Միհրդատայ՝ իսկ եւ իսկ ի վաղիւն յետ պատերազմին սկսան խլրտել. կուսակալն Մանկէոս հան ի նոցանէ զզէնսն եւ խորհեցաւ ընդ սուր հանել զամենեսին. այլ վարձկանքն արգելին զբարբարոսն բրօք, եւ մատնեցին ի ձեռս Հռոմայեցւոց զմասն միջնաբերդին, որում պահ ունէին։ Ղուկուղղոս ոչ դրժեաց պայմանացն· կանայք եւ ստացուածք Յունաց խնայեցան, եւ բնակիչք քաղաքացն եւ աւանաց Յունաց, զորս խախտեալ ածեալ էր Տիգրան ի գործել շէն զնոր մայրաքաղաքն՝ արձակեցան ի տեղիս իւրեանց. ապա մատնեցաւ քաղաքն յաւար։ Անչափ էր կողոպուտն. ի տան արքունի գանձուն գտան քանքարք 8,000, այսինքն իբր 24,000 բիւր դահեկան արծաթի, եւ գինք կահուց եւ կարասեաց վաճառաց էին իբր 8,000 բիւր. իւրաքանչիւր զինուոր էառ բաժին դահեկանս (դրամ) 800։ Ի թատրոնին զոր շինեալ էր Տիգրան, այլ չեւ էր կատարեալ զնուագատունն՝ հռչակեցան տօնք ի պատիւ յաղթութեանն Ղուկուղղեայ, եւ Տիգրանակերտ եղեւ այնուհետեւ աւան անշուք։

Այլ եւս քաղաքք ի հարաւոյ Տիգրիսի եւ բազումք ի գաւառատեարց, որ խնդրէին պարապ թօթափելոյ զլուծն՝ ձեռս ետուն ի յաղթող անդր։ Ի թուոյ սոցա էին արքայն Կոմագենայ Անտիոքոս Ա, որպէս Միհրդատն ի զաւակէ Աքեմենեանց ի հօրէ, եւ Սելեւկեանց ի մօրէ, եւ հզօր բդեաշխն Արուեստանի (հիւսիսային Միջագետաց· Դիոն Կաս. ԽԷ. 27)։ Զօրն Հռոմայեցւոց, տէր համօրէն գաւառացն Տիգրանայ ի հարաւոյ Տիգրիսի բաց ի Մծբնայ՝ ձմերեաց ի Կորդուս, որոյ բերդքն ոչ կալան զդէմ։ Եգիտ նա ի նոսա պաշար բազում ցորենոյ, եւ արար յուզարկաւորութիւն մեծ Զարբիենայ (իշխանին Կորդուաց. ձմերայնի 69—68)։ Ի նմին ձմերան Միհրդատ եւ Տիգրան գումարեցին զզօրս իւրեանց վասն պատերազմին որ առաջի կայր։ Իմաստութիւն եւ պնդութիւն արքային Պոնտոսի յայտ յանդիման երեւէր յամենայն հնարսն, զոր հնարէին երկոքին թագաւորքն միաբան։ Հատին անցին զամենայն աշխարհն Հայոց կոչել զերիտասարդս ի զէն վասն հայրենի աշխարհին։ Գրեցին զբովանդակ աշխարհն ի զինուորութիւն, կալեալ զուժեղագոյնս

միայն ընդ դրօշու: Այսպէս գումարեցին հետևակս իբրև 40 և հեծեալս իբրև 30 հազար (Փղեգոն, Տրագ. Հատւ. 12. Ապպիան համարի հետևակս 70,000 և հեծեալս 35,000), որ բաժանեցան ի վաշտս և ի գունդս, և կրթեցան որչափ մարթ էր ըստ Հռոմոց օրինի ի ձեռն սպայից Յունաց կամ եկաց իտալացւոց ի սպասու Միհրդատայ: Այս բանակ չէր ի Հայոց միայն, այլ և ի Վրաց, ի Մարդաց և մանաւանդ ի Մարաց, զորս ածէր փեսայն Տիգրանայ Միհրդատ, արքայ Ատրպատականի: Զձմեռն ողջոյն և զգարունն կազմեցին զէնս, և բաշխեցին պաշար ցորենոյ ի բերդս բերդս: Ջանային մանաւանդ ցուցանել զպատերազմն իբրև կրօնից և ազատութեան, և առ ևս առաւել գրգռելոյ ի յասումն զժողովուրդն պաշտօնամէր՝ հանին համբաւ իբր թէ վախճան արշաւանին Ղուկուղղեայ էր առնել կապուտ կողոպուտ զմեհեանսն մեծագանձս և զառաւել նուիրականս, որպիսի էր մեհեանն Անահտայ ի վերայ ճանապարհին յԱրտաշատայ յԵկլեատանս (Կեկ. վասն Մանիդ. օր. Թ. 23): Նմ ասէին ևս, թէ պատերազմն այն ոչ ընդդէմ Տիգրանայ և Միհրդատայ միայն էր, այլ հակառակ ամենայն թագաւորաց արևելից, նա և զՊարթևս ջանային ձգել ի կուսն: ԶԱնատրուկ ծեր (76—68) պայազատեալ էր Հրահատ Գ, որ աստուածն կոչեցաւ (Փղեգ. անդ): Սա խորհէր բարձրացուցանել զտէրութիւն իւր, զանկեալն և զնուազեալ ի քսան ամաց հետէ:

Յեռնտուութիւնն Պարթևաց ունէր կշիռ մեծ. երկուստեք ընծայէին նմա մեծարանս, ի Տիգրանայ և ի Միհրդատայ ի միոջէ կողմանէ (Սաղուստ. Հատւ. Դ. 20, այն է անուանի թուղթն Միհրդատայ առ Արշակ), ի նոր դաշնաւորաց Ղուկուղղեայ, ի մանր մանր թագաւորաց Տիգրիսի և Եփրատայ ի միւսմէ կողմանէ: Տիգրան խոստանայր Հրահատայ ի վարձ ձեռնտուութեանն զամենայն երկիրն, զոր հանեալ էր ի նախնեաց անտի նորա, այն է զվերին Միջագետս, զԱդիաբենէ և «զմեծամեծ հովիտսն»: Ղուկուղղոս կայր ի զգուշի, կցեալ սպառնալիս խոստմանցն, յուղարկեալ նմա զգաշինսն, զոր կռեալ էր Պարթևաց քսան և երիւք ամօք յառաջ ընդ Սիղայի: Հրահատ մինչև մտեալ յուխտ՝ կամեցաւ զննել զգետինն: Լինել եղև նա ունկնդիր Տիգրանայ, սակայն փութացաւ և առնել հրեշտակս ի բանակ անդր զօրավարին Հռոմոց: Ղուկուղղոս բազում մեծարանս եդեալ հրեշտակացն՝ յանձն արար տեղակալին իւրում Սեքստիղեայ երթալ ի Տիզբոն յողջոյն Հրահատայ. այլ ընտրութիւն դեսպանին խրատոյ զՊարթևն. Սեքստիղիոս էր այր պատերազմող, որ կարի իմն ի մօտոյ դիտէր զպատրաստութիւն զօրութեանն Պարթևաց: Հրահատ ած զմտաւ, թէ կարծե-

ցեալ պատգամաւորն էր լրտես, և եդ ի մտի ի բաց կալ ի լինելոյ ձեռնտու արքեամբ։ Տեսեալ զամենայն հանդերձանս պատերազմի՝ ետ երկոցունց կողմանց ևս ակն ունել օժանդակութեան նորա։ Երկիւղ Պարթևին չէր ունայն. մինչ Ղուկուղղոս կերպարանէր խնդրել զօգնութիւն նոցա՝ արքեամբ նիւթէր արշաւանս ի վերայ Տիգրանի, և ետ վասն այսորիկ հրաման Սոռնատեայ գալ զկնի իւր գնդօքն, զորս թողեալ էր ի Պոնտոս։ Այլ զօրք տեղակալին իմացեալ զխորհուրդ արշաւանին՝ չառին յանձն թողուլ զբանակատեղիս իւրեանց, և զօրն Կորդուաց յայտ արար նոյնպէս, թէ չէր հաճ ընդ նոր արշաւանն։ Այս առաջին ազդն էր, յորմէ պարտ էր զգաստանալ Ղուկուղղեայ. արդարև ի բաց եկաց նա ի կռուելոյ ընդ Պարթևս, այլ ոչ ի հանելոյ ի գլուխ զգործ նուաճելոյ ի սպառ զՀայս։

Անցեալ էր գարունն, յորժամ զօրն Հռոմայեցւոց թողեալ զբանակատեղին որ ի Կորդուս՝ անց ընդ լերինսն, որ անջրպետեն զհովիտն Տիգրիսի ի բարձրաւանդակէն Հայոց. այս ճանապարհ էր, ընդ որ անց երբեմն բիւրն Յունաց ի նահանջելն յետս։ Մեղմագոյն ժամանակ տարւոյն ի Հայս տևէ ամիսս չորս, ի յունիս ամսոյ մինչև ի սեպտեմբերիս ամիս, և բոյսք արձակին անդ այնպէս անագան, զի մինչ Ղուկուղղոս մեկնեալ ի Միգդոնիայ յամարայնի ել ի դիւր անդր Վանայ՝ եգիտ զի տակաւին չէր ատոքացեալ ցորեանն։ Երկոքին թագաւորքն դաշնակիցք, թէպէտ և առաւել թուով՝ յամառեալ կացին յետս ի տալոյ ճակատ։ Հարստագոյն մասն զօրուն, որում հրամայէր Միհրդատ՝ ղակիշ ածեալ կայր իբրև յամբի ի վերայ բլրոյ, ի կողմանէ գնդին ասպատակաց. մինչ Տիգրան, այրուձիովն, շուրջ գայր զՀոռոմովքն և ջանայր առնուլ զպաշար նոցա։ Ղուկուղղոս վանէր ի բաց զյարձակումն, նա առ իսկ մթերս ինչ ի մթերից Տիգրանայ. այլ ի զուր աւերէր նա զերկիրն ասպատակաւ և ած փոս շուրջ զբանակաւն Հայոց.—դաշնաւորքն կացին մնացին անշարժ ըստ իմաստուն խորհրդոյն Միհրդատայ։ Ղուկուղղոս եղև առաջին, որ կորոյս զհամբերութիւնն։ Ժողովեալ զլեգէոնս իւր՝ ել ընդ հովիտն Արածանւոյ ի վեր, դէմ եդեալ ի կողմն Արտաշատու, ուր Տիգրանայ եդեալ էր զկանայս իւր և զկաց մնաց գանձուցն։ Որպէս յանցելում ամին՝ զայս նուագ ևս Տիգրան չունէր ժոյժ տեսանել զկանանին իւր անկեալ ի ձեռս օտարի։ Առեալ զզօրս իւր լինէր նմա հետամուտ զհիւսիսային ափամբ գետոյն։ Յետ երթալոյ իբրև չորից աւուրց ճանապարհ՝ Ղուկուղղեայ հասեալ ի հուն մի՝ կարգէր զզօրս իւր յերկուս ճակատս, իւրաքանչիւր յերկոտասան գնդաց, և անցոյց նախ

զայրուձին։ Հեծելազօրն Մարդացւոց և նիզակաւորք Վրաց հարան ուժնութեամբ ի դիմի. այլ իբրև գունդ հետևակացն ևս անց յեզր անդր աջակողման գետոյն՝ բարբարոսքն չհանդուրժեալ ելին փախստեայ. այրուձին Հռոմոց զհետ պնդեալ նոցա՝ կոտորեցաւ նոր իմն օրինակաւ։ Փախստեայքն ստէպ ստէպ զերեսս դարձուցեալ՝ տեղային ի վերայ Հռոմայեցւոց իբրև զտարափ նետս թևաւորս մխեալս ի թոյն, որ բեկանէին ի մարմնի և առնէին վէրս անհնարինս։ Մինչ այս մինչ այն՝ Տիգրան իւրով թիկնապահօքն և փեսայ նորա մարականն գնդաւն կուռէին դէմ առ դէմ երկոտասան վաշտուցն Հռոմոց, և արքայն Պոնտոսի ջանայր խուճապեցուցանել զնոսա յետուստ։ Վայր մի վտանգ մեծ կրեցին Հռոմայեցիքն. այլ Ղուկուղղոս կոչեաց զայրուձին իւր, որ կալաւ զդէմ Տիգրանայ՝ մինչ ինքն ճեղքէր զգունդն մարական. իսկ զՄիհրդատ խախտեցին վաշտք երկրորդ զօրաբաժնին։ Դաշնաւորքն սրացան ելին ի ճակատէն, թողեալ մեռեալս 5,000 և բազմութիւն գերեաց, յորոց միջի գտանէին ոչ սակաւ արք աւագք։ (Սեպտեմբեր 68 ամի. Պլուտ. Ղուկ. 3, Տիտ. Լիւ. և Փղեգոն ի Հտկտ., Դիոն Կաս. ԼԶ. 7)։

Այս նուագ ևս Ղուկուղղոս եղ յաղթող յանհաւասար պատերազմէն։ Տեղի ճակատուն էր խռնեալ մեռելովք և վիրաւորօք. Արտաշատ էր տակաւին հեռի, և ամառն Հայոց մերձ էր ի կատարած։ Այն ինչ գնացեալ նոցա օթևանս ինչ՝ սկսան սառնամանիք և ձիւնաբերք։ Ակնկալութիւնն հասանելոյ «ի Կարքեդոնն Հայոց» և նովին ի վախճան պատերազմին՝ ետ ժամանակ մի ևս ժուժկալել զօրուն, այլ որչափ խաղային յառաջ՝ այնչափ դժնդակ լինէր չուն։ Ամենայն ուրեք անտառք և ճահիճք, անձուկք քարանձաւաց, գետք կցեալք կիսով, որոց սառն բանայր ընդ ոտիւք երիվարացն և հատանէր զկարթս նոցա։ Երիվարք դժկամակէին ըմպել զջուր աւազանաց սառուցելոց. զօրն ստիպեալ բանակել ի տղմի՝ տառապէր անհնարին. պաշարն ևս էր անօսր և յոռի։ Լէգէոնականք ոչ յամեցին տաղտկալ, և զօրավարքն աղաչէին զՂուկուղղոս՝ հարկանել փող դարձի, եթէ չէին նմա կամք տալ ցրուել բանակին։ Նա չառ յանձն զառաջինն, այլ զօրականն սկսաւ խռովել. բանակն հնչէր գիշերայն ի գոռալոյ զինուորացն։ Ղուկուղղոս խառնէր աղերս պաղատանաց ընդ խոստմունսն. այն իմն էր վիշտ նորա, զի փառք նորա ելանէր ողջոյն ըստ ձեռն։ Հուսկ ուրեմն որպէս դատապարտեալ ի մահ՝ յանձն առ հարկանել փող դառնալոյ յետս, և ած զզօրսն ընդ այլ ճանապարհ և ոչ ընդ որ եկեալն էր, դառնալ ի Միջագետս։

Անդ ամառն էր տակաւին, և Հռոմայեցիք դիպող համարե-

ցան զայն ի պաշարել զՄծբին, որ մի միայն վայրն էր ընդ ձեռամբ Տիգրանայ ի Հարաւոյ Տիգրիսի։ Քաղաքն էր ամուր յոյժ. ունէր պարիսպս երկուս յաղիւսոյ թանձունս, անջրպետեալս ի միմեանց խրամով, և մանաւանդ Հրամանատար, որ արժէր ողջոյն բանակ մի,—Կալլիմաքոս, ճարտարապետ քաջ։ Զամառն ողջոյն Մծբին գծէմ կալաւ յարձակմանցն Ղուկուղղեայ։ Իբրև սկսան աւուրք ձմերայնոյ՝ բերդապահքն լուծան լքան։ Յանկարծուստ յարձակումն որ եղև ի գիշերի մինչդեռ մրրիկ էր՝ արար զՀռոմայեցիս տէր պարսպին արտաքնոյ. պահակապանքն ըմբռնեալք ի քուն՝ խողխողեցան. խրամն լցաւ մացառօք, և երկրորդ պարիսպն որ չէր կարի ամուր՝ առաւ նոյնպէս։ Գուրաս, եղբայր Տիգրանայ, որ ամրացեալ էր ի միջնաբերդն՝ եղև անձնատուր դաշամբ, և եգիտ մարդասիրութիւն. այլ Կալլիմաքոս, ընդ որում ոխ մեծ ունէր Ղուկուղղոս՝ արկաւ ի շղթայս իբրև չարագործ։ Աւարն էր այնպէս առատ, որպէս ի Տիգրանակերտ (Աշուն 68)։

Առն Տիգրանակերտի եղև վերջինն ի յաջողութեանց Ղուկուղղեայ։ Վաղ իսկ սկսեալ էր բախտն փոփոխել, և ձախողանք զայլն կուռ զմիմեանց կնի այնպէս արագ, որպէս կանխաւ յաղթութիւնքըն։ Իսկ և իսկ յետ մեկնելոյ Հռոմայեցւոց զկնի ճակատուն Արածանւոյ՝ դաշնաւորքն եգին ի մտի գալ ի վէգ։ Միհրդատ զումարտակաւ 8,000 արանց, որոց չորք հազարքն էին ի Հայոց՝ ձեռն արկ նուաճել միւսանգամ զՊոնտոս։ Տիգրան կալաւ վերստին զբազում գաւառս ի հիւսիսոյ Տիգրիսի և պաշարեաց զօրաբաժին մի Հռոմայեցւոց, զատուցեալ ընդ ձեռամբ Լ. Փաննեայ։ Ղուկուղղոս առեալ էր զՄծբին, յորժամ առ զհամբաւ վտանգելոյ տեղակալին իւրոյ. աճապարեաց երթալ նմա ի թիկունս, և եհաս ի ժամու զերծուցանել զնա. այլ մինչ հեռւին էր նա՝ ստահակեցաւ զօրն որ առ Մծբնաւ։

Ղուկուղղոս յուզի անկեալ գտանելոյ յետս՝ ընկալաւ զհամբաւ յաջողութեանցն Միհրդատայ ի Պոնտոս։... Թագաւորն Ատրպատականի, փեսայ Տիգրանայ, եմուտ ի Կապադովկիա վաշտւք հեծելոցն, և առնէր այրեացաւեր զերկիրն և սատակէր զմանմանր զօրաբաժինս Հռոմայեցւոց ցրուեալս յաշխարհին։ Ինքն Տիգրան յետ հնազանդելոյ զՀայս՝ պատրաստէր անցանել ընդ Եփրատ։... Ղուկուղղոս չեղև յուսահատ. ջանայր գտանել լինել արգել միանալոյ երկուց թագաւորացն։ Խաղայր ի վերայ Տիգրանայ. կարծէր յանկարծ ի վերայ հասանել զօրուն Հայոց պարտասելոյ յաշխատութենէ ճանապարհին։ Լեգէոնք նորա ի սկզբան թուէին անսալ նմա. այլ հասեալք ի կէս ճանապարհացն, որ տանէին յԵփրատ կոյս

և ի Գաղատիա՝ կալան նոքա լռութեամբ զճանապարհն արևմտից, դարձուցեալ զթիկունս իւրեանց առ թշնամին։ Ղուկուղղոս յուսաբեկ յուսակտուր յածէր այսր անդր ի զօրուն, համբուրէր զձեռս զօրագլխացն ստահակելոց, յաղերս անկեալ և յարտասուս հարեալ. սակայն չգոյր ոք որ անսայր։... Զայնու ժամանակաւ Տիգրան (Պլուտ. Ղուկ. ԼԵ. 7), ըստ Ապպիանու (Միհր. 91) Միհրդատ ևս՝ քանդէին, գերփէին զԿապադովկիա. հէքն Արիոբարզանէս հալածեալ ի թագաւորութենէն այս վեցերորդ անգամ՝ բողոք բառնայր ի զուր։... Այսպէս յետ եւթնամեայ սաստիկ պատերազմացն իրքն եկին հասին՝ ուստի լեալ էր սկիզբն։ Մեծամեծ յաղթութիւնք Ղուկուղղեայ ունայնացան իբրև զերազ։ Հռոմէական արծուիք այնպէս արագ, որպէս եկեալն էին՝ դարձան յետս յԵփրատայ ի Տաւրոս, ի Տաւրոսէ՝ յԱզիա։... Պատճառք այս ամենայն ձախողութեանց Հռոմայ՝ էին յանդգնութիւնն Ղուկուղղեայ, անպիտանութիւն զօրավարաց նորա, ստահակութիւն զօրուն։...

Որպէս ամենայն արքունիք արևելից, ուր բազմակնութիւն հեղձուցանէ զազդեցութիւն բնութեան՝ նոյնպէս և արքունիք Հայոց մատնեալ էին առանին խռովութեանց։ Տիգրանայ էին որդիք երեք ի կնոջէն իւրմէ սիրելւոյ ի Կղէոպատրայ, ի դստերէն Միհրդատայ։ Ոչ մին ի նոցանէ կամեցաւ սպասել մահուան թագաւորին ծերոյ, և ոչ մին եկեաց առ նովաւ։ Երէցն Զարիադրէս, գործեաց դաւ զառաջինն հանդերձ հայ նախարարօք ոմամբք, որ չէին հաճ ընդ թագաւորին (Վաղեր. Մաքս. Թ. 11)։ Զարիադրէս անկաւ ի ճակատու, այլ օրինակ նորա ոչ իւիք վհատեցոյց զերկրորդն։ Յաւուր միում անկաւ թագաւորն ի ձիոյ յորսի. որդւոյն թողեալ զնա կիսամահ՝ եդաւ զթագն։ Երրորդ որդին, մանուկն Տիգրան, մնաց առ ծերունւոյն վիրաւորելոյ և տարաւ նմա խնամ մեծաւ փութով։ Ուշաբերեալ թագաւորին և իմացեալ զոր արարին որդիքն՝ զմիոյն ետ հատանել զգլուխն, և միւսում ետ վարձս՝ խոստացեալ նմա զգահն։ Այլ մոլեգին կարիք և անսանձ ցանկութիւն փառաց մայրենի հաւուն վառէին յանձին պատանւոյն որպէս և յեղբարս նորա։ Իբրև ետես նա զհայրն ի խորս անդ Կապադովկացւոց՝ ընկէց զդիմակն և եկաց յետս։ Լուեալ Տիգրանայ զբօթն՝ աճապարեաց գալ յերկիր իւր հանդերձ զօրօքն։ Ի պարտութիւն մատնեալ ապստամբին՝ անկաւ իւրովք գործակցօքն առ արքայն Պարթևաց, զորոյ զդուստրն առեալ էր կին։

Ոչինչ ընդհատ ի Միհրդատայ և ի Տիգրանայ՝ վիշտ վտանգի էր Հռոմայեցւոց ի հինից (Միջերկրական ծովուն)։ Ցորչափ շատանային նոքա աւերելով զտորմիղսն պատերազմի, առնուլ յաւարի

զքաղաքս և զմեհեանս Յունաց կամ առնել զբռամբ զարս աւագս հռոմայեցիս առ ի պահանջելոյ փրկանս վասն ազատութեան նոցա՝ ժողովուրդն Հռոմայ ծիծաղէր իմն զհնարիւք նոցա և համբերէր վնասուցն զոր կրէին նահանգք, թէպէտև ի նախատինս Հռոմայ. այլ եկին աւուրք, զի հողագործք իտալացիք տարեալ եղեն վտարանդի յանդոց իւրեանց, ճանապարհորդք լինէին կապուտ կողոպուտ ի պողոտային Ապպեայ, և հատաւ հաղորդութիւն ի մէջ Սիկիլիայ և Ափրիկէի, երկուց շտեմարանաց Հռոմայ, և գինք ցորենոյ բարձրացան անհնարին։ Յայնժամ ժողովուրդն սկսաւ բողոք բառնալ թէ Սով է, սով, և արկանէր, ոչ յանիրաւի՝ զվնասս չարեացն և զամօթոյն զծերակուտին։ Այլ յամէ անտի 69 ծերակոյտն եդ ի մտի առնել դարման իրացն... Ի սկզբան ամին 67, Ա. Գաբինիոս հազարապետ ժողովրդեան՝ առաջի արկ անուանել նոր ծովապետ անուամբ, այլ արդեամբ հրամանատար ծովու և ցամաքի։ Ընտրութիւն ծովակալին թողաւ ծերակուտին, այլ անուն նորա յամենեցուն բերանս էր։ Այրն էր Պոմպէոս, յաջողագոյնն և սիրելին քան զամենեսին ընկերհաշտութեան, ուստի և հասարակաց վճիռն եղ, և Պոմպէոս առ զհրամանատարութիւնն... Պոմպէոս յետ ձմերելոյ 67—66 ի Կիլիկիա՝ սկիզբն առնէ բանագնաց լինելոյ ընդ Միհրդատայ (Դիոն Կաս. ԼԶ. 45)։ Տիգրան էր զբաղեալ յաշխարհին իւրում։ Միհրդատ ջանայր զիւրև առնել զՊարթևս, այլ հրեշտակք Պոմպէի կանխեցին քան զնորայսն, և խոստմունք Հռոմայեցւոյն և թախանձանք կրտսերոյն Տիգրանայ, փեսային Հրահատայ՝ յաղթեցին։ Հրահատ միամտութեամբ հաւատայր Պոմպէի, որ խոստանայր նմա զօգնականութիւն նիզակակցութեան և սահման նմա՝ զԵփրատ գետ... Մինչ Պոմպէոս խաղայր ի վերայ Միհրդատայ՝ Հրահատ փութաց ի դաշինսն, որ եղեն նորա ընդ Պոմպէի բանիւ և եթ՝ արշաւէր ի Հայս պատճառանօք ածելոյ անդր զփեսայ իւր զկրտսերն Տիգրան։ Հայք հարան ամենայն ուրեք. ծերունին Տիգրան խոյս ետ ի լերինս, և Պարթևք գային մուտ մինչև ի պարիսպս անդր մայրաքաղաքին Արտաշատու։ Անդ գկայ առնոյր յաջողութիւն նոցա։ Կարքեդոնն Հայոց, շինեալ ի սարաւանդակի միում Արարատայ, պատեալ յերեցունց կողմանց յԵրասխայ, և ի չորրորդէն ամուր պատուարաւ՝ խիզախէր ընդդէմ աղեղնաւորացն, որ անվարժք էին յարուեստին պաշարման։ Տաղտկացեալ ի կռուելոյ Հրահատ ի մերձենալ ձմերայնոյն խաղացոյց զմեծ մասն զօրուն իւրոյ յայնկոյս Տիգրիս գետոյ, թողեալ մանկանն Տիգրանայ ստիպել զքաղաքն լինել անձնատուր։ Այն ինչ մեկնեալ էին Պարթևք՝ գայր հասանէր ծերունի թագաւորն և ապաւինեալ ի հաւատար-

մութիւն հպատակաց իւրոց՝ ջախջախէր այս երկրորդ անգամ զորգին իւր ապստամբ։ Մանուկն Տիգրան ած զմտաւ զառաջինն անկանել ի գիրկս Միհրդատայ, և կալաւ զճանապարհն Պոնտոսի. այլ զկնով ճանապարհին իմացեալ զբեկումն հաւուն իւրոյ և յանկարծ փոխեալ զմիտսն՝ չոգաւ ի բանակ անդր Հռոմայեցւոց առ Պոմպէոս, խոստացեալ լինել նմա առաջնորդ յարշաւանին ի Հայս։... Ի տալ խոյս Միհրդատայ անդր քան զՃորոխ յետ վերջին ձախող ճակատուն ընդ Պոմպէի՝ զօրավարն Հռոմայեցի կալաւ զՀայս առանց ճակատու պատերազմի։ Յականց անտի Եփրատայ էջ ի հովիտ անդր Երասխայ, և խաղայր դէպ ուղիղ ի վերայ Արտաշատու առաջնորդութեամբ մանկանն Տիգրանայ։ Ոչ ոք լինէր նմա դիմակալ։ Հընգետասան հրասախաւ հեռի ի մայրաքաղաքէն ծերունին Տիգրան յանդիման լինէր առ դրան ճամբարին Հռոմոց, և գայր անկանել յոտս Պոմպէի իբրև աղաչաւոր։ Ընկալաւ զնա պատուով զօրավարն Հռոմայեցի և եցոյց նմա գութ մեծ։ Արդարև եհան ի նմանէ որչափ ինչ տեղիս նուաճեալ էր նա արտաքոյ աշխարհին Հայոց, զպտուղս բազմամեայ պատերազմաց նորա, և արկ ի վերայ նորա տուգանս իբրև 60,000 քանքարոյ, այլ եթող նմա զՀայաստան, և ընկալաւ զնա ի թիւ բարեկամաց և դաշնաւորաց Հռոմէական ժողովրդեան։

Մնայր յանդ հանել զիրս Տիգրանայ մանկան։ Եթէ էր նորա յուսացեալ ընդունել զթագն ի ձեռաց Պոմպէի՝ խաբեալ էր զանձն անհնարին։ Ի վարձ մատնութեան նորա տուաւ նմա զոյգն գաւառըն Ծոփաց (հանդերձ Կորդուօք, ըստ Ապպիանու, որ դնէ յետոյ անցեալ զամենայն առ Արիոբարզան արքայ Կապադովկացւոց, այլ չէ հաւանութեան), և պահանջեցաւ ևս ի նմանէ՝ տալ ի ձեռս զամուրս գանձուց գաւառին իւրոյ ի հատուցանել զգինս փրկանաց հօրն։ Թոռնն Միհրդատայ ըմբոստացաւ, զի ապախտս մեծ զպարգևն համարէր. նա խրոխտացաւ իսկ այնպէս ընդդէմ Պոմպէի՝ մինչև արկանել զօրավարին զնա ի շղթայս։ Արդարև բռնաբարութիւն էր այս իրաւանց ազգաց և թշնամանք առ արքայն Պարթևաց, որ խնդրէր զազատութիւն փեսային իւրոյ. այլ յայսմ ևս եղև Պոմպէոս յետ յաղթութեանն ամբարտաւան այնչափ՝ որչափ յառաջն լեալ էր մեղմ և զգօն և առատ ի խոստանալ։ Հակառակ բողոքանացն Հրահատայ՝ մանուկն Տիգրան, կին նորա և որդիք առաքեցան ի Հռոմ ի հանդէս ձաղութեանն Պոմպէի»։ Ռէյնաք, Միհրդ. Եւպատոր։

13. Հաճեցունելու համար ազգային աւանդութիւն մը, թէև վկայաբանական՝ յիշենք հոս կէտ մի Հայոց դարձին պատմութենէն,

որ կարէ նաև իբրև ի հանդէս համարուիլ Տիգրանայ դաշնակցութեանն ընդ Միհրդատայ յարշաւանս այս վերջնոյն յարևմուտս ընդդէմ Հռոմայեցւոց: Արդէն յիշեցինք, թէ ի դաշնակցութեանն Տիգրանայ ընդ Միհրդատայ պայման դրուած էր՝ թողուլ նուաճեալ երկիրներն Միհրդատայ, իսկ գաւարն՝ Տիգրանայ: Ըստ Ագաթանգեղոսի՝ յայլևայլ տեղիս Հայոց, մանաւանդ յարևմտեան կամ ի ստորին գաւառս՝ կային յունական դից պատկերներ, զորս ջնջեց Լուսաւորիչ: Ագաթանգեղոս կը յիշէ այս աստուածներն հայերէն կամ արևելեան դիցաբանութեան անուններով—Անահիտ, Տիւր դիք, Արամազդ, Նանէական դիք, Միհր, Վահագն, Աստղիկ, որք ի Խորենացւոյն կը կոչուին յունական անուամբք—Արտեմիս, Ապողոն կամ Հերմէս, Դիոս, Աթենաս, Հեփեստոս, Հերակղէս, Ափրոդիտէ: Ագաթանգեղոս չպատմեր, թէ երբ կամ ուստի և կամ յոյր ձեռն եկած էին այն պատկերք ի Հայս, սակայն համառօտ դիցաբանական մեկնութենէն, զոր կը յարէ ցուցնելու համար այն աստուածոց պաշտօնը կամ ազգաբանութիւնը—այսինքն թէ Տիւր դիք (Ապողոն) էր «երազացոյց երազընդհան», իմա պատգամատու կամ յայտնիչ գաղտնեաց, և «դրիչ ուսման ճարտարութեան», այն է գլուխ Մուսայից, կամ ուսման և դպրութեան պէսպէս ճիւղերուն, թէ Արամազդ (Դիոս) էր հայր աստուածոց, Նանէ (Աթենաս)՝ դուստր Արամազդայ, ըստ առասպելին ծնեալ յուղղոյ նորա, Միհր (Հեփեստոս)՝ որդի նորին Արամազդայ—կը տեսնուի թէ հեղինակն Ագաթանգեղոսի կը ճանչնար այս աստուածոց յունական ծագումը: Ահա բուն բանք Ագաթանգեղոսի:

«Անդէն վաղվաղակի թագաւորն ինքնիշխան հրամանաւն և ամենեցուն հաւանութեամբ գործ ի ձեռն տայր երանելւոյն Գրիգորի զյառաջագոյն զհայրենական հնամեացն նախնեացն և զիւր կարծեալ աստուածսն, չաստուածս անուանեալս՝ անյիշատակս առնել, ջնջել ի միջոյ: Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթեալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղին անուանեալ կարգայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազընդհան պաշտաման Տիւր դից, դպրի գիտութեան քրմացն, անուանեալ դիւան գրչի Որմզդի ուսման ճարտարութեան մեհեան. Նախ ի նա արկեալ ձեռն՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին:... Ապա երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն, զի և անդ զանուանելոցն զսուտ աստուածոցն զբագինսն կործանեսցեն. որ էր ի գեղջն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափառ՝ կից Բարշիմնիայ:... Ապա երթեալ հասանէր յամուր տեղին յանուա-

նեալ յԱնի, ի Թագաւորական կայեանսն Հանգստոցաց գերեզմանաց Թագաւորացն Հայոց։ Եւ անդ կործանեցին զբագինսն եւ զդին Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի։... Յետ այսորիկ անդէն ի սահմանակից ի գաւառն յԵկեղեաց ելանէր... ի մեծ և ի բուն Հայոց Թագաւորացն ի տեղիս պաշտամանցն, յԱնահտական մեհենացն յԵրէզն աւանին.... փշրէին զոսկի պատկերն Անահտականաց դիցն... Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին. քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի։... Ապա փութացեալ հասանէր ի գաւառն Դերջան... ի Մհրական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գեւղն զոր Բագայառիճն կոչեն ըստ պարթեւարէն լեզուին։... Լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվահեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ, ութերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց, որ և անուանեալ ըստ յաճախ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ. զի յայնժամ եւս դեռ չէն կային երեք բագինքն ի նմա. առաջին՝ մեհեանն Վահէվահեան, երկրորդ՝ ոսկեմօր ոսկեծին դից (բուն Անահիտն Հայոց), և բագինն իսկ յայս անուանեալ՝ ոսկիհատ ոսկիամօր դիցն, և երրորդ մեհեանն անուանեալ Աստղկան դից, սենեակ Վահագնի կարդացեալ ըստ յունականին, որ է ինքն Աֆրոդիտէս» (Ագաթ. ՇԸ—ՇԺԴ)։

Ագաթանգեղոսի «ութերորդ» բառը պէտք չէ առնուլ զՎահագնէ՝ որպէս թէ ութ տեղ պաշտօն ունէր Վահագն ի Հայս։ Զիք ուրեք յիշուած ի հին պատմութեան մերում, ոչ առ Ագաթանգեղոսի և ոչ առ Բուզանդայ և Խորենացւոյն՝ ուրիշ պաշտօնատեղի Վահագնի բաց յԱշտիշատայ։ Ագաթանգեղոս կամի ասել, թէ Աշտիշատ էր ութերորդ պաշտօնատեղի ի Հայս։ Արդարեւ ութ տեղիք էին, յորս կը մատուցուէր պաշտօն դից ի Հայս առ Գրիգորիւ ի սկզբան դարձին Հայոց—Արտաշատ, Բագաւան, Անի, Երիզա, Թիլ, Թորդան, Բագայառիճ և Աշտիշատ։

Հաւանական է ուրեմն, թէ այս ամենայն դիք, յունական դիցաբանութեան ամբողջ Պառնասն՝ փոխուց կար ի Հայս յառաջագոյն քան զՏրդատ և զԼուսաւորիչն։ Կը մնայ գիտել, թէ եթէ այն պատկերք, ինչպէս հաւանական է, բերուած էին ի Յունաց—քանզի Հայք ի բնէ կրօնիւք զրադաշտական, անագան ուրեմն ընկալան դիցապաշտութիւնն յարեւմտեան դրացեաց իւրեանց Կապադովկացւոց—երբ բերուեցան և յո՞յր ձեռն։ Խորենացին կը դնէ բերուած առ Արտաշիսիւ ամամբ, զոր կը համարի Հայր Տիգրանու

մեծի։ Արտաշէս որպէս թէ անթիւ զօրօք կ'արշաւէ յարեւմուտս մինչեւ ի Յունաստան եւ աւար առնլով այն պատկերներն՝ կը դրկէ ի Հայս։ Ահա Խորենացւոյն պատմութիւնն ըստ բնագրին։

«Յայնժամ հրաման տայ Արտաշէս զօր յարուցանել յարեւելից եւ ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչեւ ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս եւ յիջեւանս քար ըստ մարդաթուի կարկառ՝ նշան բազմութեանն թողուլ։ Խաղայ յարեւմուտս... եւ գտեալ յԱսիա զպղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ եւ զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր։ Զոր առեալ քրմապետացն որ էին յազգէ Վահունեաց՝ զԱպողոնին եւ զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, զոր արարեալ էր ի Սկիւղեայ եւ ի Դիպինոսէ Կրետացւոյ (անդրիագործք զորս կը թուին ակնարկել Պլինիոս եւ Կեդրենոս), զՎահագն իւրեանց վարկանելով նախնի (կը թուի Վահունիք կը կարծէին զանձինս սերեալ ի Վահագնէ)՝ կանգնեցին ի Տարօն յիւրեանց սեպհական գեւղն Աշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի։ (Տես եւ յԱ.. մասին Պատմութեան մերոյ, էջ 218, 219)։

«Բայց—կը յաւելու Խորենացին—եւ յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդայ, զԱթենայ, զԵփեստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որ ոչ ժամանեալ միջամուտ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. եւ փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի, եւ քուրմք գնացին զհետ լինելով՝ դադարեն առ նոսա»։

Խորենացին ԺԴ. գլխոյն մէջ Արտաշիսի որդւոյն Տիգրանայ կու-տայ զետեղել այն պատկերներն յայլեւայլ տեղիս.—«Յետ Արտաշիսի առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա։... Եւ ժողովեալ զզօրս Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց, որք յետ մահուանն Արտաշիսի հօրն իւրոյ եւ ցրուելոյ զօրացն՝ հետամուտ լեալ դիմեալ գային յաշխարհս մեր։ Որոց ընդդէմ պատահեալ Տիգրանայ՝ արգելեալ ի վերջ նահանջէ.... եւ դառնայ յաշխարհս մեր։... Իսկ քրմացն որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ածեալ զի մի՛ ի խորագոյն Հայս վարիցին՝ պատճառեցան բզձութիւնս, իբր թէ դիքն անդէն կամիցին զընակելն։ Որում հաւանեալ Տիգրան՝ կանգնեաց զողոմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, եւ զԱթենաս ի Թիլ, եւ զԱրտեմիդայ զմիւս պատկերն յԵրիզա, եւ զԵփեստոն ի Բագայառինջ։ Բայց զԱփրոդիտայ զպատկերն իբրեւ Երակղեայ տարփուհի՝ առ նորին պատկերին Երակղեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն։ Եւ ցասուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշխեցին կանգնել զպատկերն Երակղի, առաքեալ ի նորին հօ-

րէ՝ ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգեւղն (Աշտիշատ) յարքունիս առնու յորում պատկերքն կանգնեցան»:

Ըստ Խորենացւոյն Տիգրան յետ այս գործոյ կ'իջնէ ի Միջագետս (ինչպէս կ'երևի՝ ակնարկելով Տիգրանայ Ասորւոց տիրելը, զոր չգիտեր Խորենացին), և գտնելով անդ Ասորւոց Բարշամին անուն աստուծոյ ուրուք պատկերն ի բիւրեղէ, ի փղոսկրէ և յարծաթոյ՝ կու տայ տանել ի Հայս և կանգնել ի Թորդան: Այս է Բարշամինեայն Ագաթանգեղոսի, սպիտակափառն, ինչպէս հաւանական է՝ այսպէս կոչուած վասն բիւրեղին, փղոսկրոյ և արծաթոյ, որ տեսիլ իմն սպիտակ փայլուն կ'ընծայէին պատկերին: «Ապա ինքն (Տիգրան) իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, զոր ի փղոսկրոյ և ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել ի Թորդան» (Խոր. Բ. ԺԴ.): Լուսաւորիչ այս պատմութեան համեմատ գտաւ բոլոր այս կուռց պատկերները ճիշդ Ագաթանգեղոսէ նշանակեալ տեղերն ըստ պատմութեան նորին Ագաթանգեղոսի, որպէս տեսաք վերագոյնն:

Արտաշիսի և Տիգրանայ արշաւանին վրայ հանդերձ մանր մասամբ խօսուած է այլուր (Ա. մասն, էջ 265—268). հոս սա միայն կը յաւելունք համառօտիւ, թէ յառաջ քան զՏիգրան և զՄիհրդատ, այն է յառաջ քան 90 նախ քան զՔր.՝ յարևելից յարևմուտս արշաւանք Փոքուն Ասիոյ և Յունաց վրայ եղած չէ և չկարէր լինել: Բոլոր այն երկիրներն էին ընդ վերին իշխանութեամբ Հռոմայեցւոց, և նախորդք Տիգրանայ չունէին ոչ պատճառ և ոչ զօրութիւն յարձակելոյ, մանաւանդ առանձինն, Հռոմայեցւոց վրայ: նախ Միհրդատ ծնաւ այս խորհուրդը, և այն յետ 90-ին, ինչպէս յայտնի է մեր նախընթաց պատմութենէն: Ուստի ստուգութեամբ կրնանք ըսել, թէ այն պատկերք իբրև աւար յԱսիոյ և ի Յունաց բերուած են ի Հայս, եթէ երբէք բերուած են՝ յարշաւանին Տիգրանայ և Միհրդատայ:

Ագաթանգեղոսի հեղինակն հաւանականապէս վկայաբանութենէ ուսեր կ'առնու, թէ այն դից արձաններն կային ի Հայս այլևայլ տեղեր, և թէ Լուսաւորիչ անհետ ըրաւ զնոսա. սակայն խնդիր է, թէ Խորենացին ուստի առաւ: Խորենացին իւր առաջին աղբիւրը Մարիբաս բերելով մինչև ի վախճան թագաւորութեանն Վաղարշակայ՝ յաջորդաց նորա Արշակայ և Արտաշիսի պատմութեան իբրև աղբիւր կը յիշէ զԱփրիկանոս, որպէս թէ իսկ և իսկ զկնի Մարիբասայ կ'սկսի առնուլ այս անուանի ժամանակագրէն: Բայց չէ հաւանական, թէ Արշակայ և Արտաշիսի և Յունաց պատկերներուն աւարառութեան և բերուելով զետեղուելուն ի Հայս այն երկար և մանր

պատմութիւնը կրնար գտնուիլ ի ժամանակագրութեանն Ափրիկանոսի, և ոչ՝ թէ Խորենացին ունեցաւ երբէք զԱփրիկանոս։ (Զայսմանէ ևս տես յառաջնում մասին Պատմութեան մերոյ, էջ 265, 266)։ Խորենացւոյն պատմութեանն զպատկերաց հաւանական գաղտնիքն այս է։ Խորենացին, որ ինչպէս յայտնի է իւր պատմութենէն, շատ աղօտ և հարևանցի տեղեկութիւն ունի Հռոմայեցւոց պատմութեան, ուստի և Տիգրանայ պատերազմներուն ընդ նոսա թէ Միհրդատայ հետ և թէ առանձին՝ ինչպէս ըսինք, այս երկու թագաւորաց յարձակումներն յարևմուտս կոյս Հռոմայեցւոց դէմ՝ կ'ընծայէ կարծեցեալ Արտաշիսի, Տիգրանայ հօր աշխարհակալութեանն ոգւոյն, և պատմութիւնը կը ձևէ ըստ պատմութեան արշաւանաց Աքեմենեանց, Կիւրոսի և յաջորդաց նորա Դարեհի և Քսերքսի, ի վերայ Յունաց։ (Տես Ա. մասն Պատմութեան մերոյ, էջ 265, 266)։ Եւ որովհետև կը կարդայ յԱգաթանգեղոսի յոյն ճարտարաց նշանաւոր դից պատկերներ լինել ի Հայս՝ կը համարի զնոսա այն արշաւանաց ժամանակ իբրև աւար բերուած ի նմին Արտաշիսէ, և զետեղուած յորդւոյ նորա Տիգրանայ այն տեղերն, ուր գտաւ զնոսա Լուսաւորիչ և ջնջեց։ Հոս ներուի մեզ ընել սա դիտողութիւնը։ Եթէ ի միոջէ կողմանէ, յեցեալ ի վկայութիւն Խորենացւոյն, ընդունինք, թէ առաջին Արշակունիք (Արտաշէս, Տիգրան կամ ո՛ ոք և է) լցին զՀայս Յունաց գեղարուեստին երևելի գործուածներով՝ միւս կողմանէ, յեցեալ ի վկայութիւն Ագաթանգեղոսի՝ պարտիմք ընդունել, թէ քրիստոնէական չափազանց իմն եռանդն ջնջեց կորոյս հին արուեստին այն երևելի մնացորդներն։

14. Գիտել պարտ է սակայն, թէ Հայք յառաջագոյն իսկ քան զՏիգրան ունէին ուրիշ պատկերներ, մանաւանդ Անահտայ, որ կը թուի լեալ ազգային աստուած։ Տրդատ կ'անուանէ զԱնահիտ «փառք ազգիս մերոյ և կեցուցիչ» (Ագաթ. Ե.), և այլուր (Զ.), «Մեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»։ Ստրաբոն ի խօսելն զդից Հայոց՝ զԱնահիտ համարի գլխաւոր աստուած.—«Ամենայն դիք Պարսից, ասէ, անխտիր պատուին ի Մարաց և ի Հայոց· բայց Անահիտ է մանաւանդ զոր պաշտեն Հայք առանձինն, ունին նմա կանգնեալ մեհեանս յայլևայլ տեղիս, մանաւանդ յԵկեղեաց»։ Աշախշատու Անահիտն մանաւանդ թուի թէ կար ի վաղուց։

15. Դիցապաշտութիւնն, որ առաւել քան յայլ գաւառս Հայոց յարևմտեան մասին էր ծաղկեալ՝ էր նման, թերևս և դուստր պաշտամանց Կապադովկիոյ և Պոնտոսի, որպէս է տեսանել ի Ստրաբոնէ։ Յայսմ նմանութենէ և յայլոց, որ կային ի մէջ արևմտեան մասին Հայոց և վերոյիշեալ սահմանակից գաւառաց, թելադրեալ

կրնայինք թերեւս համարել պատմական զաւանդութիւնն նուաճելոյ Արամայ ուրումն Հայոց թագաւորի վաղ ժամանակաւ, ըստ Խորենացւոյն, զարեւմտեան կողմանս Մեծին Հայոց և տալ բնակչացն խօսել Հայերէն՝ եթէ չունէինք Ստրաբոնի վկայութիւնը, թէ արեւմտեան գաւառք Հայոց, որպէս Եկեղեաց, Կարին, Դերջան և այլ ևս գաւառք որ շուրջ զնոքօք՝ էին ի սկզբան Կապադովկացւոց և այլոց սահմանակից ազգաց, և նուաճեալ սոա ուրեմն առ առաջին Արշակունեօք՝ առին զլեզու նոցա.—«Արտաքսիաս և Զարիադրէս... հանին ի Խաղտեաց և ի Մոսինեքաց զԿարին և զԴերջան. և ի Կատայոնացւոց՝ զԵկեղեաց և զամենայն կողմն Անտիտաւրոսի, զաւառք, որ այսր միութեան աղագաւ խօսին այժմ զմի և զնոյն լեզու» (Ստր. ԺԱ. 14. 5)։ Կապադովկիա, կամ Գամիրք ըստ Հայոց, կը կոչուէր ի սկզբան, որպէս ասէ Ստրաբոն՝ բովանդակ արեւմտեան սահմանակից երկիրն Հայոց, երկիր ընդարձակ, որ իբրեւ երկայն իմն պարանոց ձգեալ ի ծոցոյն Իսսոսի (Կիլիկիա) մինչեւ ի հարաւային արեւելեան ծայր Եւքսինոս ծովու՝ կը բաժնէր զԹերակղզին Փոքուն Ասիոյ ի բուն ի մեծէն Ասիոյ։ «Կապադովկացիք, ասէ Ստրաբոն, ի սկզբան էին երկու ազգք ուրոյնք ի միմեանց և՛ տոհմիւ և՛ լեզուաւ։ Նախնիք ի թուելն զազգս այնր մասին Ասիոյ՝ յետ Կապադովկացւոց դնեն զԿատայոնացիս, և զկնի Կատայոնացւոց զՄոզովուրդս որ յայնկոյս Եփրատայ, թէպէտեւ ոչինչ խտիր տեսանեմք այսօր, ո՛չ ի բարս և ոչ ի լեզուս Կատայոնաց և այլոց բնակչաց Կապադովկիայ. սակայն ստոյգ է, թէ Կատայոնք էին ուրոյն ազգ, մինչեւ Արիարաթ, որ զառաջինն եկաց թագաւոր Կապադովկացւոց՝ արկ զնոսա բանի ընդ իւրով իշխանութեամբ»։ Պարսք, յետ տիրելոյ Փոքուն Ասիոյ՝ բաժնեցին, ըստ Ստրաբոնի, զԿապադովկիա յերկուս, սատրապութիւն անուամբ, որ յետոյ առ Մակեդոնացւովք եղան ուրոյն թագաւորութիւնք, Կապադովկիա մեծ և Պոնտոս։ Մօտ ի ժամանակս Ստրաբոնի՝ Հռոմայեցիք տիրելով Փոքուն և յառաջակողման Ասիոյ՝ արարին նահանգ զմեծն Կապադովկիա, որ առ Արքեղայոսիւ վերջին թագաւորաւ մեծին Կապադովկիոյ և առ նախորդօք նորա կը բաժնուէր տասն զօրավարութիւն կամ գաւառ, որոց գլխաւորքն էին Կատայոնիա, Տիանիտիս, այն է Անահտական գաւառ, Մելիտինէ և Մորիմենէ։ Առաջին երեքն էին տեղիք դիցապաշտութեան իբրեւ զԴարանաղին, զԵկեղեաց և զԴերջան, որոց էին սահմանակից։ Ի Կատայոնիա էր Կոմանա քաղաք, ի նեղ և ի խորանիստ հովտի զօտւոյն Անտիտաւրոսի, նուիրեալ Մա անուն աստուածուհւոյն, որ կը թուի լեալ աստուած պատերազմի, որպէս Ենիոյն Յունաց (Անգեղ, տես Ա. մասն, էջ 252,

253) և Պէլլոնայն Հռոմայեցւոց: Առ Ստրաբոնիւ, որ ականատես էր՝ Կոմանայն Կապադովկիոյ էր ընդ իշխանութեամբ քրմապետի, որ էր երկրորդ թագաւորին և թագաւորազն, և թիւ քրմացն, կամ արանց և կանանց նուիրելոց ի պաշտօն աստուածոյն՝ էր աւելի քան զվեց հազար: Ահա բանք Ստրաբոնի. «Ի բուն իսկ յԱնտիտաւրոս, ի հովիտս անձուկս և խորս գոտւոյն է Կոմանա, անուանի մեհենիւն նուիրելով դիցն Մա, նոյն զոր մեքն Ենիոյ կոչեմք: Կոմանա է քաղաք նշանաւոր, բայց զիւր մեծութիւն պարտի մանաւանդ բազմութեան մոլելոց կամ ըղձից և ստրկաց նուիրելոց, որ անդ բնակին: Բնակիչք քաղաքին, թէպէտև ի բնէ Կատայոնք և ըստ անուանն ընդ իշխանութեամբ արքային Կապադովկիոյ՝ են սակայն հպատակք քրմապետին Մայայ: Քրմապետն ունի զտեսչութիւն մեհենին: Յերթալ մեր յայցելութիւն մեհենին՝ թիւ ստրկացն էր վեց հազար, ընդ այր և ընդ կին: Ունի մեհեանն կալուած ընդարձակ, զորոյ զհասն և զմուտ առնու քրմապետն, որ է աստիճանաւ և բարձու երկրորդ զկնի թագաւորին, և մինչև ցարդ գրեթէ միշտ թագաւորն և քրմապետն ընտրին ի նմին տոհմէ»: «Օրինակ պաշտաման աստուածոյն Մա—կը յաւելու Ստրաբոն—ետ կարծել, թէ Ովրեստէս յետ փախստեանն ընդ քեռ իւրում Իփիգենեայ ի Տաւրիտէ (Քրիմէ)՝ եմոյծ յայս երկիր զպաշտօն Տաւրեանն Անահտայ. աւանդութիւնն յաւելու ևս, թէ եղբայրն և քոյր ի նշան սգոյ եդին զգիսակս իւրեանց ի վերայ բագնի դիցն, և ի դիպաց աստի առ քաղաքն զանունն Կոմանա» (Ստր. ԺԲ. 2. 3): «Անուանի էր ի Կատայոնիա նաև մեհեանն Ապողոնի (Վահագն Հայոց), մեծարեալ յոյժ ի Կապադովկացւոց, յօրինակ այլոց պաշտօնատեղեաց, և միւս ևս մեհեան, անուանեալ Կատայոնեանն Ապողոնի, մեծարեալ ընդ ամենայն Կապադովկիա, իբրև տիպ և օրինակ այլոց նուիրական շինուածոց, որ գոն յաշխարհին յայնմիկ» (Ստր. ԺԲ. 2. 5): Երրորդ անուանի մեհեան էր մեհեանն Արամազդայ ի Վենասա քաղաք Մորիմենէ գաւառին: Ի շինուածս մեհենին կը պատսպարւէին քուրմք երեք հազար, և մեհեանն ունէր կալուածս, որ կու տային տարուէ տարի հնգետասան քանքար ի սպաս քրմապետին: «Ի նահանգին Մորիմենայ, ի Վենասա, է մեհեան Արամազդայ, յորոյ ի սահմանին դիւրին է պատսպարել երեք հազար ստրկաց մեհենին, և որոյ կալուածք տան քրմապետին հասս ամի ամի հնգետասան քանքար: Քրմապետս այս, աստիճանաւ երկրորդ զկնի քրմապետին Կոմանայ՝ է իբրև զնա ցկեանս» (Ստր. անդ): Ի նմին գաւառի էր միւս ևս մեհեան Արամազդայ, որոյ քրմութիւնն խոնարհագոյն էր քան զՎենասայն, կարևոր սակայն ըստ բաւակա-

նին: «Բրմապետութիւնն մեհենին Դեկեանն Արամազդայ, երրորդ ըստ պատուոյ քրմութեան՝ խոնարհագոյն է յոյժ քան զքրմութիւնն Վենասայ, չէ սակայն դոյզն ինչ և աննշան» (Ստր. անդ): Ի Տիանիտիս էր Կասդաբաղ քաղաք, անուանի մեհենիւն Անահտայ Պերասիայ, որ «ունի—ասէ Ստրաբոն ականատես—քուրմս կանայս, զորոց ասի թէ գնան բոկ ոտիւք ի վերայ կայծականց հրոյ անվնաս»: «Որպէս զԱնահտայն Հայոց յԵրիզա՝ նոյնպէս զՊերասիայն Անահտայ պատմի—կը յաւելու Ստրաբոն—վէպն Ովրեստեայ և Իփիգենեայ, որոց փոխուցեալ ասեն զպատկեր դիցն ի Տաւրիտայ, որպէս և անունն յայտ առնէ Պերասիա, իբրև թէ եկեալ յայնմ կուսէ ծովուն» (Ստր. Անդ):

16. Այս տեղեկութիւններէն կը տեսնուի, թէ կար, գոնէ կրօնից կողմանէ, սերտ կապ անդէն իսկ առ հեթանոսութեամբ ի մէջ Կապադովկիոյ և արևմտեան մասին Մեծին Հայոց: Այս կապ, որ յետ քրիստոնէութեան խզուած էր, կռապաշտութեան անկմամբ ի Կապադովկիա, մինչև Հայաստան կը դանդաղէր հետևել իւր քրիստոնեայ դրացւոյն՝ պնդեցաւ միւսանգամ յետ դարձին Հայոց ի Քրիստոնէութիւն Կեսարիաւ, որ նշանաւոր է յեկեղեցական պատմութեան մերում կրկին գլխով, իբրև միջոց լուսաւորութեան ազգին և իբրև կեդրոն եկեղեցական իրաւասութեան, որ տևեց իբրև երկու դար: Արդարև Գրիգոր, թէ իբրև առաքեալ և թէ իբրև քահանայապետ Հայոց՝ էր պտուղ Կեսարիոյ: Այս երկու պատճառաւ մանաւանդ կը յիշուի Կեսարիա ստէպ ի գիրս Ագաթանգեղոսի, Բուզանդայ և Խորենացւոյն: Յետ բառնալոյ ձեռնադրութեան կաթողիկոսաց Հայոց Կապադովկիոյ թեմէն, նախ առ Պապաւ ըստ մասին, և ապա բոլորովին առ Սահակաւ՝ Կեսարիա մոռցուեցաւ ի Հայոց. արդէն առ Եղիշէի և Փարպեցւոյն չենք գտներ յիշուած Կեսարիոյ անունը: Բայց զայլ պատմագիրս մեր Խորենացին է, որ աւելի տեղեկութիւն կուտայ մեզ զԿեսարիոյ: Այս հայր պատմագրացն Հայոց կը համարի զԿեսարիա, այն է ըստ մեզ Մաժաք հին անուամբ՝ շինեալ առ Արամաւ, որ ըստ պատմութեան նորա իբրև առաջին աշխարհակալ հայ՝ տիրեց բովանդակ Կապադովկիոյ և Փոքուն Հայոց.—«Որ ինչ յարևմուտս կոյս ընդ Տիտանեանցն է սորա (Արամայ) գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի: Զօրիւք բիւրու հետևակաւ զօրու և երկու հազար հեծելովք հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի որ այժմ ասի Կեսարիա»: Ապա յետ պատմելոյ զպատերազմն և զյաղթութիւն Արամայ՝ Խորենացին կը յաւելու. «Եւ թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխարհին՝ ինքն դառ-

նայ ի Հայս. բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական:... Եւ զդաստակերտն զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք՝ անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել, մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ» (Խոր. Ա. ԺԴ.): Ոչ այսչափ միայն. ըստ Խորենացւոյն Կեսարիա կը մնայ ընդ իշխանութեամբ Հայոց մինչև ի վերջին ամս Տիգրանայ.—«Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ ի պատանին Միհրդատ, չկարծելով ինքեան քուերորդի՝ չտայ նմա մասն ինչ իշխանութեան. և Միհրդատայ արհամարհութիւն կրեալ ի քեռւոյն իւրմէ Տիգրանայ՝ ապստամբութեամբ անկանի առ Կեսար... Սա (Միհրդատ որդի մեծին Միհրդատայ) շինէ զՄաժաք ընդարձակագոյն և պայծառ շինուածովք, և անուանէ Կեսարիա ի պատիւ Կեսարու: Եւ յայնմ հետէ բարձեալ լինի իշխանութիւնն Հայոց ի քաղաքէն յայնմանէ» (Խոր. Բ. ԺԸ.): Զշինութենէ Մաժաքայ առ Արամաւ, ինչպէս նաև զնուաճմանէ Կապադովկիոյ և Փոքուն Հայոց կողմերուն, թէ չեն ամենևին պատմական՝ տես յԱ. մասին Պատմութեան մերոյ, էջ 151, 158, 159, ուր երկար խօսուած է զայսմանէ: Նոյնպէս չէ ամենևին հաւանական, նամանաւանդ հակառակ է ժամանակակից պատմութեան, թէ Կեսարիա էր ընդ ձեռամբ Հայոց, և ի վերջին ամս Տիգրանայ միայն դադարեցաւ ի վերաբերելոյ Հայոց: Եթէ երբէք Կեսարիա և մասն ինչ Կապադովկիոյ գտնուած են ընդ իշխանութեամբ Թագաւորաց Մեծին Հայոց՝ այս եղած է առ Տիգրանաւ, և այն կարճ ժամանակ միայն, այն է ի ժամանակս պատերազմաց Տիգրանայ և Միհրդատայ ընդ Հռոմայեցիս. և զայսմ կարճ ժամանակէ պարտ է իմանալ նաև զասելն Թագաւորին Պապայ, գրելով առ կայսր, ըստ Բուզանդայ, թէ «Կեսարեաւ հետ և տասն քաղաք մեր լեալ էր արդ ի բաց տուր» (Բուզ. Ե. ԼԲ.): Տեսնենք այժմ, թէ ինչ էր Կեսարիա կամ մանաւանդ Մաժաք (Մազաքա ըստ հին անուան, քանզի նոր անունն Կեսարիա կոչուեցաւ սատ ուրեմն, երբ աւելի քան կէս դար յետոյ, առ Տիբերիւ) առ Տիգրանաւ ըստ պատմութեան Ստրաբոնի, որ ոչ միայն մօտ էր ժամանակաւ, այլ և հայրենեօք այն երկրէն:

17. Ստրաբոն երկար կը խօսի զՄաժաքայ, զոր կը կոչէ «մայրաքաղաք Կապադովկացւոց»: «Մաժաք մայրաքաղաք Կապա-

դովկացւոց՝ կոչի և Նեսերիա (Կեսարիա), այլ Արգիական վերադրաւ, զի կայ առ ոտամբ Արգէոս լերին, բարձրագոյն տեղի Կապադովկիոյ, ծածկեալ մշտնջենաւոր ձեամբ, յորոյ ի գագաթանէ, ըստ պատմութեան ճանապարհորդաց, որոց դուն ուրեք յաջողի ելանել անդր՝ երևին, յորժամ պարզ և յստակ է օդն՝ երկոքին ծովք միանգամայն, Պոնտոս և Իսոս (ծոց Կիլիկիոյ)։ Սակայն չէ դիր տեղւոյն յարմար լինելոյ մայրաքաղաք, զի ոչ միայն պակասէ ջուր քաղաքին, այլ և է ամենևին իսկ անպատսպար. քանզի նախնի թագաւորաց Կապադովկացւոց չեղև փոյթ ածել պարիսպ զքաղաքաւն առ հեղգութեան և կամ խորհրդով, զի մի բնակիչքն թիկունս արարեալ զամրութիւն պարսպացն և դիպող համարեալ զբլուրսն որ զնոքօք, յորս ոչ հասանեն նետք՝ գայցեն զաւազակութեամբ։ Յաւել և զայն ևս, զի ցամաք և անբեր է երկիրն շուրջ զքաղաքաւն, և թէպէտև դիւր և ողորկ՝ չէ յարմար ի մշակութիւն, զի է գետինն ապառաժ աւազուտ. թող զի սակաւ ինչ հեռի ի դաշտին թուի հուր վառեալ ընդ երկրաւ, որպէս յայտ է ի ջրհորոց հրոյ, որոց հասանէ ճանապարհորդաց պատահել յաճախ ընդ բազում սայլարէջս։ Վասն այսր ամենայնի հարկ իմն է բնակչաց Մաժաքայ տալ բերել ի հեռաստանէ՝ որ ինչ պիտոյն է ի պաշար իւրեանց։ Նա և որ աղբիւրն թուին լինել մեծութեան երկրին՝ չեն առանց վտանգի։ Որովհետև գրեթէ չիք փայտ ի համօրէն Կապադովկիա, մինչ կողք լերինն Արգեայ ծածկեալ են ընտիր ընտիր մայրեօք կաղնեաց։ Թուի իմն զառաջինն, եթէ Մաժաքացւոց գոնեա զիւրին իցէ գտանել փայտ անդէն մօտ առ իւրեանս. չէ սակայն այնպէս. զի առ ոտամբ անտառացն այնցիկ կաղնեաց՝ են ընդ երկրաւ ի ծածուկ գուբք հրոյ և ջրոյ, առանց արձակելոյ արտաքս ոչ հուր և ոչ ջուր, բայց միայն ուրեք ուրեք են մօրք, և ելանէ յերկրէ գոլորշի, որում մարթ է բորբոքել ի գիշերի. իսկ արտաքուստ ոչ այլ ինչ է տեսանել, եթէ ոչ մարգագեղս կանաչագեղս։ Յայտ ուրեմն է, զի եթէ հմուտք ոմանք երկրին յաջողեսցին բազում զգուշութեամբ երթալ հատանել փայտս յԱրգէոս վասն իւրեանց պիտոյից՝ բազմաց ընդ հակառակն վտանգ մեծ է անտի, զրաստուց մանաւանդ զիւրին է անկանել ի գուբսն յայնոսիկ, զորս ուստեք գուշակել չէ մարթ։ Չեն բազում ժամանակք, զի Մաժաքացիքն բազում ինչ վիշտս վտանգի կրեցին յարշաւանաց Տիգրանայ ի Կապադովկիա։ Խախտեաց զնոսա արքայն Հայոց յերկրէն իւրեանց և խաղացոյց ի Միջագետս, առնել ի նոցանէ զգլխաւոր մասն բնակչացն Տիգրանակերտի։ Այլ յետոյ, յետ առման Տիգրանակերտի ի Հռոմայեցւոց՝ որոց միանգամ կարողքն

էին՝ տուաւ հրաման դառնալ այսրէն ի բնակութիւնս իւրեանց» (Ստր.)։

18. Յետ Կապադովկիոյ սահմանակից էր արեւմտեան մասին Մեծին Հայոց ի հիւսիսոյ Փոքր Հայք կոչուած երկիրն, որ Եփրատաւ կը բաժանուէր ի Հայոց Մեծաց։ Արդէն յիշուած է յԱ. մասին Պատմութեան մերոյ, էջ 160, թէ զիա՛րդ Դարեհ Վշտասպեայ, յետ նուաճելոյ զՀայս (Արարատ)՝ զերկիրն որ ի մէջ Կովկասու և Կորդուաց, ի Մարաց մինչև ի Կապադովկիա՝ Արմնիք անուամբ արար նահանգ, որ իբր եօթներորդ կը յիշուի ի սեպաձև արձանագրութեան նոյն Դարեհի։ Մակեդոնացիք բաժանեցին այս նահանգն յերիս—1. Մեծ Հայք, որ էր ի սկզբան Երասխայ դաշտը (Արաքսենէ) միայն, հաւանականապէս հին Արարատեան թագաւորութիւնն. 2. Ծոփք, և 3. Փոքր Հայք։ Առ Սելևկեամբք, յետ Անտիոքոսի մեծի, այս երեք մասունք Արմին նահանգին եղան մէն մի թագաւորութիւն։ Արտաքսիաս և Զարիադրէս, թագաւորք, մին Երասխայ, և միւսն Ծոփաց՝ դրացի ազգերէ երկիրներ նուաճելով ընդարձակեցին Արմնիոյ, ըստ Յունաց Արմենիոյ երկու առաջին մասերը։ Տիգրան, ի յաջորդաց Արտաքսիասայ, ընդարձակեց իւր տէրութիւնը, միացնելով զԾոփս ընդ Մեծին Հայոց. բայց Փոքր Հայք մնաց անկախ։ Երկու ժամանակակից հեղինակներէ, ի Պողիբեայ և ի Ստրաբոնէ ունինք զայս, զորմէ խօսուած է շատ անգամ ի Պատմութեան մերում։ Հնագոյն և հաւատարմագոյն տեղեկութիւն զՓոքուէն Հայոց է Ստրաբոնին։ «Աշխարհ Փոքուն Հայոց—ասէ աշխարհագիրն յոյն, միանգամայն պատմիչ—է երկիր ըստ բաւականին պտղաբեր, որոյ որպէս և աշխարհին Ծոփաց եղեն միշտ թագաւորք կամ տոհմային իշխանք, որ դաշնակից էին յաճախ ընդ թագաւորս բունն անուանեալ Հայոց, բայց առանձին ևս գործէին։ Իշխանք Փոքուն Հայոց ունէին ընդ իշխանութեամբ իւրեանց զԽաղտիս ևս։ Բայց իբրև սկսաւ զօրանալ Միհրդատ Եւպատոր՝ էառ զամենայն երկիրն զայն, որպէս և զԿողքիս։ Տեսեալ եթէ օգուտ բազում կայր նմա յերկրէն՝ ետ շինել բերդս եօթանասուն և հինգ, իբրև տունս մեծի մասին գանձուց իւրոց։ Մին ի կարևորագունից անտի էր ի վերայ սահմանին Հայոց Մեծաց։ Գիտէր Միհրդատ, եթէ անթիւ դիւրութիւնս մարթէր մատուցանել նմա գօտին Պարխարայ, ջրաւէտն և անտառաշատ, թէպէտև լի ձորովք և սարաւանդիւք, վասնորոյ և ընտրեաց մանաւանդ անդէն շինել իւր տունս գանձուց։ Նա և զայս վերջին ծագ թագաւորութեան Պոնտոսի ընտրեաց իւր ի տեղի ապաւինի ի խաղալն Պոմպէի արագ արագ յաղթութեամբ. և զկայ առեալ յԵկեղեաց՝ կալաւ

մօտ ի Դաստիրա,—ոչինչ հեռի յԵփրատայ, որ բաժանէ որպէս յայտ է՝ զՆկեղեաց ի Փոքուէն Հայոց,—լեառն մի ջրարբի և մնաց անդէն, մինչև առ երկիւղի, թէ գուցէ պաշարեսցի անդ՝ եդ ի մտի անցեալ ընդ Պարխար մտանել ի Կողքիս և անտի ի Բոսփորոս: Մօտ ի Նոյն տեղի, այլ ի Փոքր Հայս՝ Պոմպէոս շինեաց զՆիկոպոլիս քաղաք, որ կայ ցայսօր և է բազմամարդ յոյժ: Ի բազում իշխանաց անտի, որ հաւանութեամբ Հռոմայեցւոց տիրեցին Փոքուն Հայոց՝ վերջինն եղև Արքեղայոս: Իսկ երկրին Խաղտեաց մինչև ի Կողքիս իշխէ այժմ Պիւթոդորիս, կին իմաստուն և վարժ ի վարել գաէրութիւնն: Եղեն սորա ուստերք երկու և դուստր մի: Մին յուստերաց նորա սակաւ մի յառաջ կացուցաւ թագաւոր Հայոց Մեծաց: Պիւթոդորիս ամուսնացաւ ընդ Արքեղայոսի (արքայի Փոքուն Հայոց), և յետ կալոյ ընդ նմա մինչև ի վախճանել նորա՝ այժմ է այրի և տէր աշխարհացն զոր արդէն յիշեցաք: Ասասցուք և որ ինչ վասն Խաղտեաց է: Ընդ երկիր սոցա անցանէ Պարխար: Ցեղք որ ի լերինս բնակեն՝ են վայրենի: Են ցեղք, որոց տեղիք բնակութեան են գլուխք ծառոց կամ տանիք փայտակերտ աշտարակաց որ Մոսինի կոչին, յորմէ Մոսինէքն անուն, զոր ետուն նոցա հինքն: Այս ամենայն բարբարոսք ոչ այլ ինչ ունին յուտել, բայց զմիս էրէոց և վայրի կաղին, որ թօթափին ի ծառոց. ունին և հնարս իմն յարձակելոյ ի վերայ ուղևորաց՝ խոյանալով միայն ի բարձուէ աշտարակաց իւրեանց: Պատմի թէ Եօթնադեանք զերիս գունդս ի զօրացն Պոմպէի սատակեցին՝ յանցանել նոցա ընդ զօտին Մոսքեկայ: Եդեալ էր նոցա յանցս ճանապարհի զօրացն Հռոմոց անօթս լի ըմպելեաւ, խառնելով յորբեցուցիչ իմն մեղուէ, զոր ոստք ծառոց ինչ ծորեցուցանեն. ապա կային մնային տեսանել գելս իրացն: Եւ իբրև տեսին զզօրսն Հռոմոց ի ցնորս արբեցութեան՝ հասեալ ի վերայ կոտորէին զնոսա ըստ իւրեանց հեշտի: Նոյնպիսի են և այժմու Խաղտիք, որ քան զամենայն ցեղս մօտագոյն են ի Փառնակիա, և կոչէին ի հնումն Քաղիւպք» (Ստր. ԺԲ. 3. 18): ԶԽաղտեաց կը գրէ նաև Քսենոփոն իբր երկերիւր և յիսուն ամօք յառաջ քան զՍտրաբոն այսպէս. «Անտի գնացին (Յոյնք) վտաւանս յիսուն, օթևանօք եօթն ընդ աշխարհն Խաղտեաց, որ պատերազմողք են քան զայլ ամենայն ազգս որոց հանդիպեցաք: Հարկ եղև մեզ պատերազմել ընդ նոսա: Ունէին զրահս ի կտաւէ, որ հասանէին մինչև յազդերս նոցա: Փոխանակ քղանցից չուանք գալարեալք իբրև զծոպս կախէին ի զրահից անտի: Ունէին նաև սռնապանս, սաղաւարտ, և զմիջով իւրեանց, պէս գունակ դաշունից Ղակեդեմոնացւոց՝ թուր, որով փողոտեն զգերիս, և ապա հա-

տեալ զգլուխս նոցա՝ գնան, տանելով զկառափունսն ի ձեռին։ Երգեն, կաքաւեն, իբրև տեսանեն զԹշնամին։ Կրեն նաև նիզակ երկայն իբրև կանգունս երիս, միածայր։ Կացին յամուրս իւրեանց, և ապա իբրև տեսին, զի անցանէին Յոյնք՝ զհետ պնդեցան նոցա և կռուէին անդադար։ Յետոյ մտին յամուր տեղիս, ուր տարեալ էր նոցա զամենայն պաշար իւրեանց, մինչև ոչ գտեալ Յունաց պաշար՝ կերան զանասունսն զորս հանեալ էր նոցա ի Տայոց» (Քսենոփ. Նահանջ բիւրուն)։

19. Երրորդ սահմանակից երկիր Մեծին Հայոց յարևմտից հիւսիսոյ էր Պոնտոս։ «Յեղանել Միհրդատայ մեծի ի գահն Պոնտոսի, ասէ Ստրաբոն, թագաւորութիւնն այն ունէր զամենայն երկիրն, յարևելից Ալիւս գետոյ՝ մինչև յաշխարհն Տիբարացւոց և մինչև ի սահմանս Հայոց, և ի միւսմէ կուսէ, այն է յարևմտից Ալիւս գետոյ մինչև յԱմաստրիս ի Պափղագոնիա։ Միհրդատ յաւել ի տէրութիւն անդր յարևմտից զամենայն ծովեզրն մինչև ի Հերակղէա, և յարևելից զամենայն ծովեզրն մինչև ի Կողքիս և ի Փոքրն Հայս։ Այս էին սահմանք Պոնտոսի՝ մինչ յետ մահուն Միհրդատայ Պոմպէոս կալաւ զերկիրն։ Որ ինչ (Փոքուն) Հայոց և Կողքիսայ անկ էր՝ զայն բաժանեաց մանր մանր իշխանաց, որոց օգնական լեալ էր նմա ի պատերազմունս Միհրդատայ» (Ստր. ԺԲ. 3. 1)։ Արևմտեան մասին Հայոց դիցապաշտութեան ոչ սակաւ վերաբերութիւն ունին տեղիք ինչ հեթանոսական պաշտամանց, որ նշանաւոր էին ի Պոնտոս։ Այս տեղեաց գլխաւորն էր երկրորդն Կոմանա, այն է Կոմանայն Պոնտոսի առ Իրիս գետով։ «Քաղաքս այս — ասէ Ստրաբոն ականատես — զոր սովորութիւն է կոչել Կոմանա Պոնտական առ ընտրելոյ ի համանուն քաղաքէն մեծին Կապադովկիայ՝ նուիրեալ է նմին դից, որում և նոյն, և ունի մեհեան շինեալ զնոյն ձև և զօրինակ։ Նա և սպաս պաշտամանն է գրեթէ նոյն, եթէ ըստ զոհիցն և պատգամաց, և եթէ ըստ պատուոյն մեծարանաց որ մատուցանի քրմապետին։ Բայց նմանութիւնն առաւել էր մանաւանդ առ նախնի թագաւորօք Պոնտոսի, մինչ երկիցս ի տարւոջ, յելս դիցն ի ճեմ (թափօր)՝ ածէր քրմապետն զապարօշն զգլխով, և մեծապատիւ մեծարէր իբրև երկրորդ ի տէրութեանն զկնի թագաւորին։... Կոմանայս այս է երևելի վաճառաշահ քաղաք և մին ի գլխաւոր մթերանոցաց վաճառացն եկելոց ի Հայոց։ Ի ճեմս դիցն խռնին անդր ի բազում կողմանց, ի քաղաքաց և ի գիւղից՝ բազմութիւնք արանց և կանանց, ցանկացեալք լինել հանդիսատես տօնին. Նա և զամն ողջոյն գա-
յացելութիւն քաղաքին օտարականք, որոց ուխտս եդեալ իցէ զո-

հել ի բագնի անդ դիցն։ Տենչանք զեղխութեան և հեշտանաց հասարակաց իմն են բնակչացն. պարտէզք նոցա են այգեստանք, և բազմութիւն կանանց նուիրելոց, յորոց շատք սորուկք են մեհենին՝ կեան խառնակութեամբ։ Մարթ է ասել յիրաւի, թէ փոքր իմն Կորնթոս է քաղաքն։ Ի Կորնթոս, որպէս յայտ է՝ մեծ բազմութիւն յայրատ կանանց սպասաւորաց ի մեհենի Աստղկան՝ հրապուրեալ ձգեն անդր, նոյնպէս ի ժամանակս տարեկանաց՝ անթիւ բազմութիւն օտարականաց։ Վաճառականք ընչեղք և զօրականք գան անդր ի սպառսպուռ կործանումն, յայն սակս լեալ է ի բանս կարգի առակաց, թէ Չէ ամենեցուն տուեալ բնակել ի Կորնթոս։ Ահաւասիկ որ ինչ կայր մեզ ասել զԿոմանայ» (Ստր. ԺԲ. 3. 32—36)։ Բայց քաղաք նուիրեալ բուն Անահտայ էր Զեղա, զորմէ ասէ Ստրաբոն, թէ էր ի վերայ բարձրաւանդակի, որ կը կոչուէր Շամիրամայ։ (Տես Ա. Մասն, էջ 21, 22)։ «Զեղա, ասէ Ստրաբոն, ունի մեհեան անուանի նուիրեալ Անահտայ, այն է դիցն զոր պաշտեն և Հայք»։ (Տես Ա. մասն, էջ 271)։ Միայն աստ աւելի իմն համեստութիւն կայ ի պաշտամունսն. և այս է պատճառ, զի բնակիչք Պոնտոսի առ հասարակ, յորժամ ունիցին արկանել ձեռն ի գործ ինչ կարևոր՝ անդր մանաւանդ երթան երդնուլ միմեանց... Այլն ամենայն, որպէս թիւ քրմացն, պատիւն և բարձ զոր ունին քրմապետքն առ արքայի՝ նոյնպէս է աստ որպէս ի Հայս։ Այժմ այս մեհեան է ընդ իշխանութեամբ Պիւթոդորայ տիկնոջ, բայց և յառաջագոյն իսկ քան զնա բազում ինչ կրեաց ի Թագաւորաց, որ պակասեցուցին զթիւ քրմացն և ցամաքեցուցին զաղբիւր մեծութեան նորա, գրաւեալ զմեծ մասն կալուածոց մեհենին յարքունիս, և երկիրն որ մեհենիցն նուիրեալ էր՝ բաժանեցաւ ի բազում իշխանութիւնս։ Առաջինք ի Թագաւորաց Պարսից ոչ առ դուզնաքեայս ունէին զքաղաքն, այլ համարէին իբրև տեղի սրբութեան դիցն Պարսից, և թողուին քրմապետաց իշխել միահեծան։ Բնակիչք քաղաքին էին յայնժամ համակ քուրմք, յորոց միջի քրմապետն ունէր զառաջին տեղին, պաշարեալ ի բազմութենէ սպասաւորաց։ Կեայր ի յղփութեան, վարելով զերկիրն իբրև իւր սեպհական» (Ստր. ԺԲ. Գ. 37)։

Ստրաբոն կը յիշէ ի Կապադովկիա Շամիրամեան կոչուած ուրիշ բլուր կամ բարձրաւանդակ, որոյ վրայ շինուած էր քաղաքն Տիանա։ «Տիանա, ասէ Ստրաբոն, կոչի երբեմն և Եւսեբիա Տաւրոսի։ Երկիրն շուրջանակի է առ հասարակ պտղաբեր, բազում ուրեք տափարակ։ Իսկ քաղաքն շինեալ է ի վերայ միոյ ի սարահարթ բարձրաւանդակաց անտի, որ կոչին Շամիրամայ, շուրջ պա-

տեալ գեղեցիկ և հզօր պարսպաւ» (Ստր. ԺԲ. 2. 7)։ Տիանա, որպէս և գաւառն Տիանիտիս՝ կը յիշեցունեն զԱնահիտ (Տես Ա.. Մասն Պատմութեան մերոյ, էջ 270). և էր արդարև, ըստ նմին Ստրաբոնի, ուչ կարի հեռի ի Տիանայ անուանի մեհեանն Անահտայ Պերասիայ զոր յիշեցաք վերագոյն։

ԳԼՈՒԽ Ժ.

ՊԱՐԹԵՒՔ ԵՒ ՀՌՈՄԱՅԵՑԻՔ ՅԵՏ ՏԻԳՐԱՆԱՅ։

1. Աղերս բարեկամութեան Պարթեւաց եւ Հայոց: 2. Ենիոս Փլորոս: 3. Պարթեւք յԱսորիս: 4. Դէպք յետ մահուն Կեսարու: 5. Իրք Հրէից զայնու ժամանակաւ: 6. Արտաւազդ Ա: 7. Հայք զկնի Արտաւազդայ: 8. Թագաւորք զկնի Արտաւազդայ մինչեւ Վոնոն:

1. Յետ մահուան Միհրդատայ մեծի, երբ Հռոմայեցիք (Պոմպէոս) նուաճելով զԱսորիս մինչեւ Եփրատ եւ առնելով նահանգ եղան սահմանակից Պարթեւաց, եւ կ՚սպառնային խաղալ յառաջ՝ բնական էր Պարթեւաց մօտենալ Հայոց։ Առ Արտաւազդաւ որ յաջորդեց հօրն 54 կամ 56 ն. ք. զՔր.՝ երկու ազգաց մօտաւորութիւնն կը թուի յայտնի։ Խնամութիւնն որ արդէն կար,— քանզի քոյր Արտաւազդայ էր կին Բակրայ արքայորդւոյն Պարթեւաց,— փոխուած էր յընտանութիւն։ Եթէ պարտ է հաւատալ Պլուտարքոսի,—եւ արդարեւ չէ անհաւանական,—Արտաւազդ եւ Որոդ (Արշակ ԺԴ. 54—36), այնպէս ընտանի էին, մինչեւ տալ միմեանց խնջոյս եւ ընթեռնուլ յունարէն քերթուածներ։ «Որոդ, ասէ նոյն մատենագիր, չէր ինչ անտեղեակ յոյն լեզուի եւ դպրութեան, եւ Արտաւազդ (որդի Կղէոպատրայ) յօրինէր երգս եւ ճառս եւ պատմութիւնս։ Իբրեւ բերաւ գլուխն Կրասոսի ի դուռն տաճարին, ուր բազմեալ էին երկոքին թագաւորքն ի ճաշ՝ ոմն ի գուսանաց անտի Յասոմն անուն երգէր զԱգաւեայ ողէտսն ի յոյն լեզու»։ Այսպէս առ Որոդաւ, որ կը հանդիպի Տիգրանայ վերջին տարիներուն եւ Արտաւազդայ թագաւորութեան սկզբան՝ Հայք, առ երեսս բարեկամ եւ դաշնակից Հռոմայեցւոց՝ էին սրտով միաբան ընդ Պարթեւս եւ մէտ ի սոսա մանաւանդ քան ի Հռոմայեցիս։ Սակայն չունինք ամենեւին վկայութիւն ի պատմութենէ, թէ Արտաւազդ յայտնի հակառակեցաւ Հռոմայեցւոց, իբրեւ բարեկամ Պարթեւաց։ Կրասոսի արշաւանաց ժամանակ (54) չիք ամենեւին ակնարկութիւն վաւերական պատմութենէ, թէ Արտաւազդ—(Տիգրան մեռած էր յայնժամ ըստ նոր

և ստուգագոյն Հաշուի. տես վերագոյնն)—օգնեց Պարթևաց. իսկ յարշաւանսն Անտոնիոսի (36) կը տեսնենք զԱրտաւազդ 6,000 հեծելովք օգնական Անտոնեայ, թէպէտ յանկարծ կը թողու զՀռոմայեցին և կը մեկնի առ եղեռանէ իւր։ Զայս կ'ակնարկէ Ստրաբոն յասելն զԱրտաւազդայ. «Յաջորդն Տիգրանայ Արտաւազդ եղև բարենշան, ցորչափ եկաց ի բարեկամութեան ընդ Հռոմայեցւոց. այլ իբրև մատն եղև Անտոնեայ վասն Պարթևաց ի մեծի պատերազմին նորա ընդդէմ ազգին այնմիկ՝ քաւեաց ծանրագնի զխալանսն» (Ստր. ԺԱ. 15)։ Խորենացին հակառակ ժամանակակից պատմութեան՝ կը դնէ ոչ միայն օգնական Պարթևաց զՏիգրան, որ արդէն մեռած էր (54), այլև գլխաւոր գործող Կրասոսի և Անտոնիոսի պատերազմներուն մէջ. մանաւանդ թէ Հռոմայեցւոց այն կրկին արշաւանն ուղղեալ կը համարի Տիգրանայ դէմ, իսկ զՊարթևս օգնական միայն Տիգրանայ, մինչև փոխել իսկ զանուանս զօրավարացն ի հայերէն, որպէս զԲարզափառնէս զօրավար Պարթև՝ ի Բարզափրան Ռշտունի, և զԲակուր տակառապետ Պարթևաց՝ ի Գնէլ Գնունի տակառապետ Տիգրանայ (Խոր. Բ. ԺԷ—ԺԹ)։

Ահա այն պատերազմներուն համառօտ պատմութիւնը։

Յետ կռիւներուն Մարիոսի և Սուղղայ, ի մէջ ազնուականաց և ռամկին՝ վերջիններուն կողմը տակաւ տկարացաւ, մինչև, ինչպէս տեսանք՝ Յուլիոս Կեսար, Կրասոս մեծատուն յոյժ և Պոմպէոս, առնլով ի բուռն վերին իշխանութիւնը՝ կազմեցին զառաջին եռապետութիւնն (60)։ Կեսար առաւ զԳաղղիա և զԼիւրիկէ, Պոմպէոս զՍպանիա և զԱփրիկէ, իսկ Կրասոս զԱսորիս։ Յետ մեկնելոյն Պոմպէի յարևելից և յառաջ քան զգալուստն Կրասոսի յԱսորիս՝ Գաբինիոս տրիբուն ժողովրդեան (67), ապա հիւպատոս (58)՝ դրուեցաւ կուսակալ Ասորւոց (57)։ Կրասոս, այր ագահ, գալով յարևելս, յետ կողոպտելոյ մեհեաններ և զտաճարն Երուսաղեմի (54)՝ խաղաց ի վերայ Պարթևաց, և կորեաւ բոլոր զօրօքն Միջագետաց անջուր և աւազուտ անապատներուն մէջ (53)։ Այս պատերազմին մէջ Սուրէն սպարապետ Որոդայ՝ էր զօրավար Պարթևաց։

Զ. Եննիոս Յուլիոս Փլորոս լատին պատմիչ, որ ծաղկեցաւ առ Ադրիանոսիւ ի սկզբան Բ. դարու՝ Կրասոսի արշաւանաց և պարտութեան վրայ կը խօսի այսպէս. «Ժողովուրդն հռոմէական մինչ զինուք Կեսարու նուաճէր զԳաղատացիս ի հիւսիսակողման՝ առնոյր յարևելս վէր սաստիկ ի ձեռաց Պարթևաց։ Զէ մարթ սակայն մեզ տրտունջ լինել զբախտէն. այս մխիթարութիւն պակասէ մերում թշուառութեան։ Ագահութիւն բդեշխին Կրասոսի, որ հակառակ և՛ աստուածոց և՛ մարդկանց կամէր յագեցուցանել զանձն

ռսկւով Պարթևաց՝ պատժեցաւ կոտորածիւ երեքտասան լեգէոնացն և իւրոյ իսկ կենաց կորստեամբ։ Կրասոս բանակեալ էր առ Նիկեփորիոն քաղաքաւ, յորժամ Հրեշտակք առաքեալք յՕրոդայ արքայէ եկին յուշ առնել նմա զդաշինսն կնեալս ընդ Պոմպէի և ընդ Սուղղայ։ Բաղձեալն գանձուց Պարթև թագաւորին և ոչ բարուրս ինչ խորհեցաւ ի բարեքել զանիրաւութիւնն, այլ ասէր միայն. «Տաց պատասխանի ի Սելևկիա»։ Վասնորոյ դիքն վրէժխնդիրք դրժելոյ դաշանց՝ օգնեցին Դաւոյն և քաջութեան Թշնամւոյն։ Նախ Կրասոս Հեռանալը յԵփրատայ, որ միայն մարթէր անցուցանել յայնկոյս զբանակն և լինել պատուար ի թիկանց. ապա վստահ էր յասորի ումն Մազարա անուն, կեղծաւորեալ փախստեայ, որոյ լեալ առաջնորդ բանակին՝ մոլորեցոյց զնա ի դաշտս մեծատարածս, ուր զօրն եղև նշաւակ յամենայն կողմանց յարձակմանց Թշնամւոյն։ Այն ինչ Հասեալ էր Կրասոս ի Խառան՝ երևէին զօրավարք Պարթևաց Սիղղակն և Սուրէն, որոց դրօշք փողփողեալք յոսկւոյ և ի մետաքսէ՝ տատանէին ի կողմանց կողմանց։ Այրուձի նոցա անդէն պաշարէր զմեզ, և տեղայր նետս իբրև կարկուտ ի վերայ մեր։ Այս եղեն աղէտք ողբոյ որ կորուսին զբանակ մեր։ Կրասոս ինքն ձգեալ, որպէս թէ ի խորհուրդ ինչ մտանելոյ իցեն՝ ի տալ նշանին անկանէր արգեօք կենդանւոյն ի ձեռս Թշնամւոյն, եթէ ընդդիմութիւն տրիբունացն չէր ստիպեալ զբարբարոսն սպանանել զնա առ արգելլոյ զփախուստ նորա։ Այլ տարան նոքա զգլուխ նորա. որ եղև նոցա խաղալիկ։ Արդէն իսկ սպանեալ էր նոցա նետահար զորդին Կրասոսի զրեթէ առաջի աչաց հօրն։ Մնացորդ Թշուառ բանակին աճապարեալ ի փախուստ՝ ցրուէր ընդ Հայս, ընդ Կիլիկիա և ընդ Ասորիս. Հազիւ մի ումն ի զինուորաց եկն տալ զգոյժ չարեացն։ Աջ ձեռն Կրասոսի և գլուխ նորա, անջատեալ ի մարմնոյն՝ մատուցան առ Թագաւորն, որ առնէր զնոսա առակ նշաւակի որպէս արժան իսկ էր։ Արդարև հեղին ոսկի հալեալ ընդ բերանն, զի ոսկին սպառեսցէ զանշունչն և զանզգայ նշխար առնն, որոյ սիրտ բորբոքէր ի ծարաւոյ ոսկւոյն» (Փլոր. Գ. 12)։

3. Յետ պարտութեանն և սպանման Կրասոսի՝ զօրավար նորա Կասսիոս, մին ի սպանողաց Կեսարու, մինչ Գաբինիոս մեկնած էր՝ աճապարեց բռնել զԱսորիս, չտալու համար Պարթևաց թոյլ անցնել ընդ Եփրատ. բայց երբ ծագեցաւ պատերազմն ի մէջ Կեսարու և Պոմպէի (51—48)՝ Կասսիոս որ կուսակից էր այս վերջնոյն՝ ստիպուեցաւ մեկնել յարևմուտս (ի Լիւբիկէ)։ Զայսու ժամանակաւ էր որ Պարթևք, առաջնորդութեամբ արքայորդւոյն Պարթևաց Բակրոյ՝ անցան զԵփրատ, մինչ Հռոմայեցիք զբաղեալ էին

քաղաքային պատերազմաւ ի մէջ Պոմպէի և Կեսարու։ Պոմպէոս սպանուեցաւ յԵգիպտոս (48), և Կեսար, որ կը խորհէր միահեծան վարել զիշխանութիւնն իբրև թագաւոր կամ կայսր՝ ընկերհաշտութեան գլխաւորներէն սպանուեցաւ ծերակուտին մէջ դաւով (44)։ Այս խռովութիւնք Հռոմայեցւոց յարևմուտս արդարև նպաստ մեծ եղան Պարթևաց, որոց նպատակն էր վանել զՀռոմայեցիս յերկրէն Ասորւոց։ Հայք կը յուսային թերևս այս առթիւ միւսանգամ ի ձեռս բերել երկիրներն, զորս կորուսած էին ի Միջագետս, յԱսորիս և ի Պաղեստին։ Բայց վրիպեցան ի յուսոյ, քանզի իրք Պարթևաց սկսան տակաւ ձախողել։

4. Յետ մահուան Կեսարու, երբ կազմեցաւ երկրորդ եռապետութիւնն (42) ի մէջ Անտոնեայ, Հոկտաւիոսի և Ղեպիդոսի՝ Անտոնիոս առնլով զարևելս՝ ղրկեց զՎենտիդիոս զօրապետ իւր, որ գալով յԱսորիս վանեց զՊարթևս մեծ կոտորածով։ Յուստինոս Պարթևաց պատերազմներն ընդ Հռոմայեցիս, նախ ի Միջագետս ընդ Կրասոսի և ապա յԱսորիս ընդ զօրավարին նորա Կասսեայ, որ յետ կորստեան եռապետին աճապարելով եկած էր պաշտպանել զԱսորիս ընդդէմ Պարթևաց, որպէս և ընդ Վենտիդիոսի զօրավարին Անտոնեայ՝ կը համառօտէ այսպէս. «Որոդէս (արքայ Պարթևաց) ետ պատերազմ ընդ Հռոմայեցւոց և կոտորեաց զբանակ նոցա ողջոյն հանդերձ Կրասոսիւ և որդւով նորա։ Որդին Որոդայ Բակուր, առաքեալ ի յանդ հանել զպատերազմն՝ եղև նշանաւոր յԱսորիս մեծամեծ արութեամբքն. այլ գրգռեալ ի նախանձ զհայրն իւր՝ կոչեցաւ յետս։ Յետ մեկնելոյ նորա, զօրն Պարթևաց թողեալ յԱսորիս՝ կոտորեցաւ հանդերձ ամենայն զօրավարօքն ի Կասսիոսէ գանձապետէն Կրասսեայ։ Յետ սակաւ միոյ քաղաքային պատերազմն ի մէջ Կեսարու և Պոմպէի պատառեաց զպետութիւնն հռոմէական յերկուս։ Պարթևք կալան զկողմն Պոմպէի եթէ վասն դաշանցն, զոր կռեալ էր նոցա ընդ նմա ի պատերազմին Միհրդատայ, և եթէ վասն սպանմանն Կրասոսի, որոյ որդին գիտէին թէ կռուէր ի բանակին Կեսարու, և կասկածէին իմն, զի եթէ յաղթիցէ Կեսար մանուկն Կրասոս խնդրելոց էր զվրէժ արեան հօրն։ Ուստի յետ անկման կողմանն Պոմպէի օգնեցին Կասսիոսի և Բրուտոսի, հակառակորդացն Աւգոստեայ և Անտոնիոսի։ Իբրև վախճանեցաւ պատերազմն այն (Պոմպէի ընդ Կեսարու)՝ միաբանեալ ընդ Ղաբիենոսի (թշնամւոյն Անտոնիոսի) աւերեցին զԱսորիս և զԱսիա դարձեալ ընդ հրամանատարութեամբ արքայորդւոյն Բակրոյ, որ անկաւ մեծաւ զօրութեամբ ի վերայ ճամբարին Վենտիդիոսի (զօրավարին Անտոնեայ), որ յետ Կասսեայ հարեալ էր զզօրս Պարթևաց, մինչև

եկեալ էր Բակուր։ Վենտիդիոս որպէս թէ երկիւղ ինչ ունիցի՝ մնաց ի պատնէշսն, և կրեաց առ ժամն նախատինս ի նոցանէ։ Այպ տեսեալ զՊարթևս առ խնդութեանն ի զեղծի՝ առաքեաց զմի մասն ի լեգէոնաց իւրոց, որ հարին ցրուեցին զնոսա։ Բակուր կարծեցեալ, թէ իւրքն ի փախստեան իւրեանց ձգեցին զամենայն լեգէոնսն զկնի՝ անկաւ միւսանգամ ի վերայ ճամբարին Վենտիդեայ, համարեալ զճամբարն անպաշտպան։ Յայնժամ Վենտիդիոս խաղացոյց զմնացեալ լեգէոնսն և խորտակեաց իսպառ զզօրութիւնն Պարթևաց հանդերձ նովին իսկ Բակրով։ Ոչ երբէք ուրեք ի պատերազմունս կրեալ էր Պարթևաց այնպիսի անհնարին կոտորած։ Իբրև այս գույժ հասանէր յերկիր նոցա՝ Որոդ առ որ եկեալ էր համբաւ, թէ զօրք նորա աւերեին զԱսորիս և մերձ էին մտանել յԱսիա՝ առեալ յանկարծ զբօթ մահուան որդւոյն և զկոտորած զօրաց իւրոց՝ առ վշտին վտանգի անկանէր յանզգայութիւն։ Անցուցանէր զաւուրս բազումս առանց խօսելոյ ընդ ումեք, չառնոյր ճաշ և ոչ մի բան ոչ կարէր ասել, որպէս թէ համրացեալ էր։ Յետ բազմաց, իբրև մեղմանայր կսկիծն և առնոյր խօսել՝ ոչ այլ ինչ ածէր ընդ բերան, բայց միայն զանուն Բակրոյ» (Յուստ. Գիրք. ԽԲ. 4)։

Այսպէս Պարթևք յետ մնալոյ իբր քսան տարի (54—36) յԱսորիս՝ մեկնեցան, մանաւանդ զի Անտոնիոս նախանձելով իւր զօրավարին Վենտիդեայ յաղթութեանց՝ կու գար անձամբ վճարել Արևելից գործը (36)։

5. Որովհետև Պարթևք և Հայք, մինչդեռ էին յԱսորիս ունեցան գործ մեծ Հրէից հետ՝ հոս հարկ է մեզ խօսել համառօտիւ և՛ զայնանէ, և՛ թէ զինչ էին այն գործք։

Ինչ որ պիտի գնենք հոս Հրէից պատմութենէն՝ համառօտութիւն է Յովսեպոսէ, որ (Նախն. պատմ. Հրէից, Գիրք ԺԲ.—Ի.) կը պատմէ երկար զՀրէից։ Մենք պիտի առնունք որչափ կարևոր է մեզ, քանզի գիտաւորութիւն մեր չէ տալ մանր զպատմութիւն Հրէից։ Մեր քաղուածն ունի հոս Յովսեպոսի յիշեալ պատմութեան ԺԲ. 24 և ԺԵ. 2 գլուխներէն կարևոր կէտեր։ Զհիրկանայ միայն պիտի խօսինք մանր, քանզի յայսմ մասին է մանաւանդ, որ մեր պատմութիւնը (Խոր., Բուզ.) կը տարբերի ժամանակակից պատմութենէ։

Յայտնի է, թէ յետ դարձին իւրեանց ի գերութենէ հրամանաւ Կիւրոսի՝ Հրեայք եղան ընդ իշխանութեամբ Պարսից, ապա ընդ Մակեդոնացւովք և ընդ Սելևկեամբք, սակայն էին ինքնօրէն ընդ գլխաւորութեամբ քահանայապետաց։ Ասորւոց (Սելևկեանց) թագաւորին Անտիոքոսի Եպիփանու հալածանաց ժամանակ Հրեայք

պատմելով առաջնորդութեամբ Մակաբեանց (քահանայական ցեղ)՝ եղան անկախ, ընդդիմանալով քաջութեամբ Սելևկեանց բռնութիւններուն։ Մատաթիա քահանայ և յետ նորա որդիք նորա Յուդա, Յովնաթան և Շմաւոն (167—135) եղան պաշտպան Հրէից ազգին և կրօնից։ Յետ մահուան Շմաւոնի՝ որդին Յովհաննէս, որ կոչեցաւ Հիւրկանոս Ա. (135—107)՝ առաւ գլխաւորութիւնը, ապա որդին Արիստաբուղոս Ա. (107—106), որ առաւ պատիւ և անուն թագաւորի հանդերձ քահանայապետութեամբ։ Սորա կին էր Սողոմէ որ և Աղեքսանդրա։ Ապա եղբայրն Հիւրկանու Աղեքսանդրոս Ա. (106—79), ապա նոյն իսկ Աղեքսանդրա (79—71), որ կարգեց ինքեան յաջորդ զորդին իւր Հիւրկանոս Բ. (71—69), զոր ընկենլով իշխանութենէն եղբայր նորա Արիստաբուղոս Բ՝ կալաւ աթոռը (69—64)։ Կռիւ մեծ ծագեցաւ ի մէջ երկուց եղբարց (66—65)։ Պոմպէոս մինչդեռ էր յարևելս (64)՝ եկաց իրաւարար ի մէջ երկուց եղբարց, յորդորեց զնոսա ի սէր. բայց որովհետև կը թուէր ի կողմն Հիւրկանու՝ Արիստաբուղոս ըմբոստացաւ, և Պոմպէոս գայրանալով առաւ զԵրուսաղէմ, զՀիւրկանոս կացոյց իշխան քահանայապետ Հրէից, զՀրէաստան արար նահանգ, և զԱրիստաբուղոս արկանելով ի շղթայս հանդերձ որդւովքն Աղեքսանդրիւ և Անտիգոնեաւ՝ տարաւ ի Հռոմ ի ձաղանս։

Հիւրկանու (64—39) պաշտպան էին ոչ միայն Հռոմայեցիք, այլև Եդովմայեցւոց կուսակալին Անտիպայ որդին Անտիպատրոս, զոր Յուլիոս Կեսար կացոյց կուսակալ (աշխարհական իշխան) Հրէից (48), և զՀիւրկանոս հաստատեց ի քահանայապետութեան։ Այս Անտիպատրոս զիւր երեց որդին Փասայէլ դրաւ մարզպան Երուսաղէմի և զկրտսերն Հերովդէս (Հերովդէս մեծ)՝ Գալիլեայի։ Արիստաբուղոս Բ. և որդին Աղեքսանդր, զորս Պոմպէոս տարած էր Հռոմ, գալով ի Հրէաստան ջանացին բերել միւսանգամ ի ձեռս զիշխանութիւնն Մակաբեանց, բայց սպանուեցան (49)։ Կը մնար կենդանի Արիստաբուղեայ կրտսեր որդին Անտիգոնոս։ Այս Անտիգոնոս գտաւ օգնութիւն մեծ ի Պարթևաց, մինչ Հռոմայեցիք կը տագնապէին երկրորդ եռապետութեան կռիւներով։ (Քանզի յետ մահու Կեսարու՝ նորա կուսակիցներէն Անտոնիոս և Ղեպիդոս, և Կեսարու որդեգիրն և ժառանգ Գայիոս Հոկտաւիոս կազմեցին երկրորդ եռապետութիւնը (43—30)։ Հոկտաւիոս առաւ զարևմուտս, Ղեպիդոս զԱփրիկէ և Անտոնիոս զարևելս։ Հոկտաւիոս մերժեց զՂեպիդոս (37), և թշնամացաւ ընդ Անտոնիոսի։ Ծագեցաւ քաղաքային պատերազմն ի մէջ այս երկուց աւագ արանց։ Անտոնիոս

յաղթուեցաւ յԱկտիոնի կռուին (31), և Հոկտաւիոս եղաւ միահեծան կայսր և կոչեցաւ Օգոստոս Հոկտաւիանոս (30)։

Անտիգոնոս, որ ըստ պատմութեան Յովսեպոսի կը ջանար յիւր կողմն յանկուցանելով զՀրեայս հալածել զՀիւրկանոս և զՀերովդեանս՝ տեսնելով զանկումն հռոմէական կողման յԱսորիս և զզօրանալն Պարթևաց՝ շահեցաւ զսոսա, խոստանալով նոցա հազար տաղանդ և հինգ հարիւր կին, եթէ մերժելով զՀիւրկանոս և զՀերովդէս եղբարբն Փասայելիւ՝ կացուցանէին զնա թագաւոր։ Բակուր և Բարզափառնէս, երևելի իշխան Պարթևաց (ըստ Խորենացւոյն Բարզափրան Ռշտունի, սպարապետ Տիգրանայ), կը մտնեն ի Հրէաստան (40), և միանալով ընդ Անտիգոնեայ կը պաշարեն զՀիւրկանոս, զՀերովդէս և զՓասայէլ յԵրուսաղէմ։ Փասայէլ և Հիւրկանոս կը ղրկուին առ Բարզափառնէս։ Այլ ումն Բակուր տակառապետ (ըստ Խորենացւոյն Գնէլ Գնունի տակառապետ Տիգրանայ) կը ջանայ խաբկանօք բռնել նաև զՀերովդէս, որ իմանալով կը փախչի գիշերայն։

Պարթևք իբրև ի հեճուկս Հռոմայեցւոց կը կացուցանեն Հրէից թագաւոր զԱնտիգոնոս. Հիւրկանոս և Փասայէլ կը մատնուին ի ձեռս նորա. զառաջնոյն ականջները կտրել կու տայ Անտիգոնոս, որպէս զի չկարենայ լինել քահանայապետ, քանզի օրէնքը կ'արգելուր տալ խեղերու այն պաշտօնը. իսկ Փասայէլ չկրնալով անձին առնել, քանզի կապեալ էր՝ առ յուսահատութեան կը հարկանէ զգլուխն զքարի, և բժիշկք զորս կը ղրկէ Անտիգոնոս դարմանել զնա՝ կը լնուն թոյն ի վէրսն, և կը մեռնի։ Հերովդէս խոյս կու տայ գաղտ, և մեծ դժուարութեամբ հասնելով ի Հռոմ՝ կ'առնու յԱնտոնիոսէ, արևելից եռապետէն, Հրէաստանի թագաւորութիւնը և հռոմայեցի օգնական զօրօք կու գայ (37) ի Հրէաստան զօրավարութեամբ Բենտիդիոսի (Վենտիդիոս)։ Պարթևք առնլով աւար բազում, բաց ի գանձուցն Հիւրկանու, և ինչ որ թողած էր Հերովդէս՝ բազմութեամբ գերեաց, մանաւանդ Մարիսա անուն հարուստ քաղաքէն զոր պաշարմամբ առին՝ կը մեկնին Հրէաստանէ։ Հրեայ գերիք, զորս կը յիշեն Բուզանդ և Խորենացին բերեալ Տիգրանայ և բնակեցուցեալ ի Վան և ուրիշ քաղաքներ՝ չէին այս արշաւանքին ժամանակէն, յորում Տիգրան չունէր մասն և ոչ իսկ կենդանի էր, այլ յառաջ քան զայն, մինչ Տիգրան էր տէր Ասորւոց երկրին և Պաղեստինու։ Բուզանդ գիտէ հրեայ գերութիւն բերուած ի Հայս առ Տիգրանաւ.—«Խաղացուցին (Պարսիկք) յԱրտաշատ քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զորս ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց։... Առ-

նուին և զՆրուանդաշատ և խաղացուցանէին անտի ութ հազար երդ Հրէայս:... Առին և զամուր քաղաքն Վան, որ ի գաւառին Տոսբայ, և խաղացուցանէին անտի ութևտասն հազար երդս Հրէայս: Զայս ամենայն բազմութիւն Հրէից ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ: Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն, բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարուն ի ժամանակին» (Բուզ. Դ. ԾԵ.): Նոյնպէս Խորենացին.—«Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւնն Հրէից նստուցեալ յԱրմաւիր և յաւանին Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյ» (Խոր. Բ. ԺԶ.), և այլուր (Բ. ԺԹ.), «ԶՄարիսացւոց քաղաքն գերի առեալ... և զՀիւրկանոս կալեալ ածին Տիգրանայ հանդերձ գերութեամբն. և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից որ ի Մարիսացւոց՝ ի քաղաքն Շամիրամայ»: Թէ Տիգրան բերած էր հրեայ գաղթականներ ի Հայս՝ այս կը թուի արդարև ճշմարիտ· բայց Խորենացին որպէս և Բուզանդ, առնլով, չենք գիտեր ինչ, թերևս աստրական աղբերէ, և շփոթելով Տիգրանայ տէրութիւնն յԱսորիս և ի Պաղեստին Պարթևաց արշաւանին հետ, որ եղաւ այն երկիրները՝ Հիւրկանու գերութիւնն ևս կ՚ընծայեն Տիգրանայ, որպէս թէ Բարզափրան ոմն Ռշտունի հայ բռնեց զՀիւրկանոս և ղըրկեց ի Հայս առ Տիգրան, և քահանայապետն հրեայ յետ մնալոյ ի Հայս՝ յետոյ ուրեմն առ Արշամաւ արձակուեցաւ գաղտ ի ձեռն Ենանոսի (թերևս Անանիա) ուրումն Հրէի, Բագրատունի իշխանի ըստ Խորենացւոյն: Այս ամենայն է արդարև մին այն աստրական առասպելներէն, որովք լցեալ է մեր յայնժամու պատմութիւնն:

Յովսեպոս հրեայ պատմիչ ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից՝ զՀիւրկանայ կը պատմէ այսպէս. «Տեսաք, ասէ, թէ զիարդ Բարզափառնէս և Բակուր, զօրավարք զօրուն Պարթևաց, կալան զՀիւրկանոս քահանայապետ և զՓասայէլ զեղբայր Հերովդի, որ չոքաւ զլուրովի առ չժուժել ամօթոյ գերութեանն: Մնայ մեզ արդ ասել, թէ զիա՛րդ Հիւրկանոս եղաւ յազատութեան և եկն գտանել զՀերովդէս յետ կալոյ սորա թագաւոր: Հիւրկանոս ածեալ առ Հրահատ Դ. արքայ Պարթևաց (36—9)՝ մեծապատիւ մեծարեցաւ ի նմանէ վասն ազնուականութեան տոհմին, և արձակեալ ի կապանացն՝ առ հրաման բնակելոյ ի Բաբելոն, ուր կային բազմութիւնք Հրէից: Ոչ միայն որ բնակեալն էին ի մեծի քաղաքի անդ պատուէին զնա իբրև զքահանայապետ և թագաւոր իւրեանց, այլ և այլ ամենայն Հրեայք, որ բնակէին յայնկոյս Եփրատայ՝ մա-

տուցանէին նմա զնոյն մեծարանս։ Իբրև լուաւ նա զԹագաւորել Հերովդի՝ ցանկացաւ դառնալ ի հայրենիսն, և ընկալաւ հրաման ի հրահատայ, Թէպէտ բարեկամք նորա շատ եդին նմա ի մտի՝ կալ մնալ անդէն. նա և Հերովդէս իբրև գիտաց զխորհուրդ Հիւրկանայ՝ առաքէր զՍարամալլա ոմն առ հրահատ բազում ընծայիւք, մինչև հրահատայ հաւանեալ արձակէր զնա, և որ ի Բաբելոն բնակեալ հրեայքն էին՝ տային զծախս ճանապարհին։ Հերովդէս մեծարեաց զնա յոյժ առ երեսս, մինչև տալ նմա զառաջին բարձն ի ժողովս, և զոր ինչ պարտն էր առնել առնէր, առ չտալոյ նմա կասկածանս զդաւոյն զոր նիւԹէր նմա գաղտ։...Յետ պարտուԹեանն Անտոնեայ առ Ակտիոնի, Հերովդէս կասկածեալ յՕգոստեայ, Թէ գուցէ ընկենուցու զնա յիշխանուԹենէն ի վրէժ բարեկամուԹեանն զոր ունէր Հերովդէս ընդ Թշնամւոյ նորա Անտոնեայ՝ ետ սպանանել զուԹսնամենին Հիւրկանոս, իբրև այն Թէ գաղտ ի բանի լեալ ընդ Մաղքայ կուսակալի Արաբացւոց՝ կամէր դաւ գործել նմա։ Այսպէս վախճանէր Հիւրկանոս զկեանս իւր, որ այնպէս լի եղև տառապանօք» (Յովս. Նախն. պտմ. ԺԵ. 9)։

Այս է զՀիւրկանայ Յովսեպոսի պատմուԹիւնն, զորոյ վաւերականուԹենէն դժուարին է կարծենք տարակուսել, մանաւանդ ի շնորհս Խորենացւոյն։ Բայց և այնպէս քերԹողահայրն մեր կուտայ մեզ այս պատմուԹիւնն այլակերպ և այլադոյն, մուծանելով անձինս, որ կամ փոխուած են (Բարզափրան՝ փոխանակ Բարզափառնեայ), և կամ ամենևին չկան (Արշամ)։ Ըստ Խորենացւոյն Բարզափրան Ռշտունի, սպարապետ Տիգրանայ, որ չունի ամենևին մասն այն գործերուն մէջ՝ բռնելով դաւով կը ղրկէ առ Տիգրան, արդէն մեռած՝ զՀիւրկանոս կապեալ, որ կը մնայ ի Հայս՝ մինչև Ենանոս ոմն Բագրատունի, ասպետ Թագակապ, հրեայ, յուսով առնլոյ հաւնւր քանքար՝ կ՚արձակէ զՀիւրկանոս, և չկրնալով ընդունել կաշառը, կը տանջուի Թագադիր ասպետն յԱրշամայ. (պիտակ անձն, Աբգարու կարծեցեալ նամակին առ Քրիստոս Ուշամայն, կարգաւած Արշամայ։ Բայց այս պատմական խաղերուն առեղծուածը պիտի լուծուի այլուր մենէ տրուած ակնարկուԹիւններով)։

Ե. Տիգրանայ յաջորդեց որդին Արտաւազդ (86—34), որ հաւանականապէս էր բարձակից հօրն առ կենդանուԹեամբ իսկ նորա։ Ստրաբոն, գրեԹէ ժամանակակից՝ գիտէ զԱրտաւազդ, զորմէ կը գրէ այսպէս. «Յաջորդին Տիգրանայ, Արտաւազդայ յաջողէր՝ ցորչափ եկաց նա բարեկամ Հռոմայեցւոց. այլ մատն լեալ նորա Անտոնեայ ի շնորհս ՊարԹևաց ի պատերազմին Անտոնեայ ընդ ՊարԹևս՝ եկոյծ չարաչար վրէժս ընդ յանցանացն։ Ածեալ յԱնտոնեայ յԱղեքս-

սանդրիա շղթայիւք՝ ածաւ շուրջ ի քաղաքի անդ զհետ կառաց յաղթողին, տալս արկաւ ի բանտ, ուր յետ ծիւրելոյ ժամանակս ինչ սպանաւ ի սկսանել կռուոյն Ակտիոնի» (Ստր. ԺԱ. 14. 15)։

Ստրաբոնի այս համառօտ տեղեկութիւնն զԱրտաւազդայ՝ ոչ միայն կ'ակնարկէ, այլ կը հաստատէ ևս զպատմութիւն յոյն և հռոմայեցի պատմագրաց ոմանց, Պլուտարքոսի, Դիոնի, Ապպիանու, թէ յետ մեծի պարտութեանն Կրասոսի՝ Հռոմայեցիք յղեցին զԱնտոնիոս զօրօք, կամ ինքն Անտոնիոս, իբրև տէր արևելից՝ խաղաց անձամբ ի վերայ Պարթևաց, առ Հրահատաւ Դ. (Արշակ ԺԵ, 36-է նախ քան զՔր. մինչև 1 յետ Քրիստոսի) *յաջորդաւ Որոդայ։ Անտոնիոս կը խնդրէր ի Հրահատայ յետս հռոմէական արծուէնշան դրօշներն և գերին, զոր առած էին Պարթևք ի պատերազմին Կրասսեայ։ Հրահատ մերժեց արհամարհանօք Անտոնիոսի խնդիրն, ասելով թէ թոյլ կու տար նմա միայն անվնաս երթալ երկրէն։ Արտաւազդ առ ահին Անտոնեայ՝ որ մտած էր ի Հայս ընդ որ կամէր անցանել ի Պարթևս՝ կը թուի ստիպեալ առաջնորդել Անտոնեայ հայազունդ զօրօք. բայց գաղտ միաբանեալ ընդ Հրահատայ, կամ ըստ Ստրաբոնի, ինչպէս տեսանք՝ «մատն լեալ Անտոնեայ ի շնորհուկս Պարթևաց», թերևս և թելադրեալ Հոկտաւիանոսէ որ էր ոսոխ Անտոնեայ՝ մոլորեցոյց զզօրս նորա, որ չարաչար յաղթուելով դարձաւ կորանօք յետս։ Անտոնիոս զԱրտաւազդ համարելով պատճառ այս պարտութեան՝ եկաւ բազմութեամբ զօրաց ի Հայս, և բռնելով դաւով զԱրտաւազդ հանդերձ որդւովքն՝ տարաւ պարգև իւր տարփածուին Կղէոպատրայ ի ձաղանս։ Զայս կը յիշէ նաև Յովսեպոս* (Պատմ. Նախն. ԺԵ. 5). — *«Կղէոպատրայ յետ գնալոյ ընդ Անտոնեայ մինչև ցԵփրատ ի խաղալն նորա զօրօք ի վերայ Հայոց՝ եկեալ յԱպամէ և ի Դամասկոս՝ ցանկացաւ տեսանել զՀրէաստան»։ Եւ սակաւ մի յետոյ ասէ. «Յետ նուաճելոյ Անտոնիոսի զՀայս, առաքէ կապանօք յԵգիպտոս զԱրտաւազդ, զորդի Տիգրանայ հանդերձ որդւովք նորա և տայ զնա ի պարգև Կղէոպատրայ հանդերձ մեծագին աւարօքն, զոր առ նա յաշխարհէն յայնմանէ»։ Չէ անգէտ այսմ և Տակիտոս, որ և ոճիր կ'անուանէ Անտոնիոսի այն գործը. — «Հայք միտէին մերթ ի Հռոմայեցիս և մերթ ի Պարթևս, յորմէհետէ Անտոնիոս գործեաց զոճիրն, ընդ անուամբ բարեկամութեան ընկեցեալ ի հողըս զթագաւոր նոցա զԱրտաւազդ՝ արկ զնա ի շղթայս»։ Անտոնիոսի ձախող արշաւանաց վրայ բաւական է յիշել սա համառօտ տեղեկութիւնն ի Վելլէոսէ Պատերկուղոսէ լատին պատմչէ, որ ծաղկեցաւ առ Տիբերիւ. «Իբրև Անտոնիոս երեքտասան լեգէոնօք մտանէր ի Հայս և անտի առա-*

ի Մարս կռուել ընդ Պարթևաց՝ թագաւոր նոցա հարաւ նմա ի դիմի։ Անտոնիոս կորոյս նախ լեգէոնս երկուս, զկահ և զկազմած պատերազմին, զսպասաւորսն և զտեղակալ իւր Ստատիանոս։ Յետ սակաւ միոյ հանդերձ ամենայն զօրօքն, որոց երիր մասն կորեաւ՝ անկանէր յանհնարին տագնապ մինչև չունել ակն ապրելոյ. հազիւ ուրեմն ազատէր խրատու ուրումն հռոմայեցւոյ, որ անկեալ էր գերի Պարթևաց ի ժամանակի պարտութեանն Կրասսեայ։ Այրս այս, որոյ բոյս բարուցն չէր ամենևին փոխեալ ընդ բախտին՝ մատուցեալ գիշերայն առ մին ի պահնորդաց Հռոմոց՝ ազդ առնէր դառնալ յուղւոյն, ընդ որ դէմ եդեալն էր նոցա երթալ, և ունել այլ ճանապարհ ընդ անտառս։ Այս խրատ զերծոյց զԱնտոնիոս և զզօրս նորա, որոց չորիր մասն էր կորուսեալ, որպէս և երիր մասն սպասաւորացն և զերեաց, և գրեթէ բովանդակ կարասին։ Այլ Անտոնիոս յաղթութիւն անուանէր զայս փախուստ, զի այն իսկ ապրեցոյց զնա։ Յետ երից ամաց եկեալ նորա ի Հայս՝ կալաւ հնարիւք զթագաւոր երկրին զԱրտաւազդ, զոր կապեաց շղթայիւք, այլ շղթայիւք ոսկւոյ ի պատիւ թագաւորութեան նորա» (Վէլ. Պատ. Բ. 82)։

Զանցս Հայոց Անտոնիոսի արշաւանին ժամանակ մինչև ի մահն Արտաւազդայ՝ ընդարձակագոյն ևս կը պատմէ Դիոն Կասսիոս։ Յետ պատմելոյ զգործս Անտոնեայ յԱսորիս զկնի պարտութեան և մահուն Կրասսոսի՝ ասէ. «Իսկ առ Պարթևս այլ իմն նոր կերպարանս առնուին իրքն։ Որպէս թագաւոր նոցա, վաստակեալ տիօքն և ցաւովք ընդ մահն Բակրոյ՝ հրաժարէր յիշխանութենէն ի շնորհս Հրահատայ, երիցագունին յորդւոց անտի որ մնացին նմա։ Առեալ սորա զիշխանութիւնն՝ լինէր չար քան զամենայն մարդիկ. տայր սպանանել զեղբարս իւր, զծնեալսն ի դստերէն Անտիոքոսի, զի քան զնա առաւել էին նոքա առաքինութեամբ, որպէս և ազնուականութեամբ ի մօր կուսէ. սպան իւրով իսկ ձեռամբ զՈրոդ, որ չէր հաճ ընդ սպանութիւնսն։ Զայնու ժամանակաւ Անտոնիոս խաղայր ի վերայ Վրաց, և յաղթեալ թագաւորի նոցա Փառնաւազայ՝ առնէր զնա դաշնակից. յետոյ մտեալ նովաւ հանդերձ յԱղուանս՝ հարկանէր զբնակիչսն և զթագաւոր նոցա զԶոբար, զոր և ձգէր յիւր կողմն։... Ընդ Հրահատայ ևս մտանէր ի պայմանս խաղաղութեան, խոստացեալ կալ դաշինս՝ եթէ դարձուցէ զնշանսն և զգերիս կալեալ ի պատերազմին ընդ Կրասսեայ։ Այսպէս խաղայր յառաջ մինչև ցԵփրատ, զոր կարծէր առանց պաշտպանութեան. այլ իբրև գտանէր զերկիրն ամենայն ուստեք զգուշացեալ խնամով՝ խոյս տուեալ խաղայր ընդդէմ Արտաւազդայ արքայի Մարաց,

ըստ թելադրելոյ անուանակցին նորա արքային Հայոց Մեծաց։ Անդլուեալ, եթէ գնացեալ էր Մարն հեռի յիւրմէ երկրէն ի թիկունս օգնականութեան Պարթեւին՝ թողեալ զկահ և զկազմած, զմասն մի ևս ի զօրուէն ընդ հրամանատարութեամբ Ոպպեայ Ստատիանեայ, տուեալ նմա պատուէր գալ զիւր կնի՝ ինքն հանդերձ հեծելովքն և ընտիր ընտիր հետևակօք աճապարէր զչուն, յուսացեալ նուաճել զերկիրն ամենայն. և իբրև հասանէր յանդիման քաղաքին որ նիստն էր թագաւորին՝ կանգնեալ պատնէշս սկիզբն առնէր պաշարմանն։ Իմացեալ զայս Պարթեւին և Մարի՝ թողին զնա սպառել զզօրութիւն իւր, քանզի պարիսպք քաղաքին էին ամուր, և բերդակալք թուով բազում, և յանկարծ անկեալ ի վերայ Ստատիանու որ վաստակեալ էր ի ճանապարհէն՝ հարկանէին սատակէին զամենեսին։ Զայս վճարել կարացին նոքա, զի Հայն չէր ընդ Հռոմայեցւոց. թէպէտև ըստ պատմելոյ ոմանց կարող էր նա օգնել Հռոմայեցւոց՝ այլ չարար այնպէս, և փոխանակ յարելոյ յԱնտոնիոս՝ առանձնանայր յերկիր իւր։ Անտոնիոս յանուն անդ զգոյժն ի Ստատիանեայ՝ փութացաւ յօգնութիւն նորա, այլ հասեալ անագան ուրեմն ոչ այլ ինչ գտանէր բայց դիակունս։ Զահի հարաւ Հռոմայեցին, այլ զի ոչ դիպեցաւ բարբարոսաց ի ճանապարհին՝ համարէր եթէ խոյս տուեալ էր նոցա առ ահի, և ոգի առ։ Յետ այնորիկ ի ճակատու ուրեմն զօր ետ ընդ նոսա՝ հանէր զնոսա փախըստեայս, զի պարսաւորքն Հռոմոց, որոց բազում էր թիւ և որոց հարուածքն հասանէին հեռագոյն ևս քան զնետս Պարթեւաց՝ հասուցին վնաս մեծ զբահաւորաց իսկ նոցա, այլ չէր ինչ մեծ կոտորածն, զի բարբարոսքն ի նիւս երիվարաց աճապարէին ի փախուստ։ Անտոնիոս խաղայր միւսանգամ ի վերայ թագաւորանիստ քաղաքին և պաշարէր զնա առանց գործելոյ մեծ ինչ վնաս թշնամւոյն, այլ կորուսանէր զբազումս ի զօրացն եթէ յառաքելն զնոսա զպաշարէ և եթէ ածելով անձամբ անձին պատիժս պատուհասից բազմաց ի նոցանէ։ Արդարև ի սկզբան, մինչ յերկրէն հանէին նոքա զռոճիկն՝ բուէին և՛ գործոյ պաշարմանն և՛ հայթայթելոյ զկերեանց պարէնն յապահովս. այլ իբրև սպառեցան արդիւնք երկրին, և զօրն Անտոնեայ ստիպէր երթալ հեռագոյնս զպաշարէ՝ յայնժամ դէպ լինէր, զի եթէ սակաւաւորք էին՝ ոչ միայն չկարէին բերել պաշար ըստ բաւականին, այլև սպանեալ ևս լինէին. իսկ եթէ երթային բազմութեամբ՝ պարիսպքն մնային թափուր ի պաշարելեաց, և բարբարոսքն ժամ դիպող զայն համարեալ՝ յարձակէին ի դուրս և զբազումս ի Հռոմայեցւոց սատակէին և զբազում մեքենայիւք հուր հարկանէին։

Այսպէս Անտոնիոս տայր զօրաց իւրոց գարի փոխանակ ցորենոյ, և ի տասն զինուորացն զմին տայր սպանանել։ Միով բանիւ, քան զպաշարեալսն պաշարիչն մանաւանդ կրէր վնաս... Եւ զի յայսր ամենայնի վերայ յամառեալ Անտոնեայ յառաջ մատուցանէր զպաշարումն՝ երկուցեալ Հրահատայ, թէ գուցէ հուսկ ուրեմն վտանգ ինչ քաղաքին հասուցանիցէ եթէ իւրով իսկ զօրութեամբ և եթէ օգնականօք զոր մարթէր գտանել՝ հրեշտակագնաց լեալ խօսէր ի խաղաղութիւն, յայտ արարեալ թէ պատրաստ էր կռել դաշինս։ Ուստի ետ պատասխանի հրեշտակացն առաքելոց յԱնտոնեայ՝ նըստեալ յաթոռ ոսկի, ձեռն ի լար անդր աղեղանն, և մեղադիր Հռոմայեցւոցն լեալ՝ խոստանայր շնորհել նոցա խաղաղութիւն, եթէ բառնայցեն վաղվաղակի զպաշարումն։ Ի լսել Անտոնեայ զպատասխանին՝ երկուցեալ ի գոռոզութենէն Հրահատայ, և յուսացեալ զի եթէ ի բաց կացցէ, դաշինք խաղաղութեանն կռեսցին՝ մեկնեցաւ առանց աւերելոյ զոր ինչ յօրինեալ էր ի գործ պաշարմանն, իբր այն թէ էր յերկրի դաշնաւորաց։ Այն ինչ մեկնեալ նորա՝ Մարք այրէին զմեքենայսն, և զպատնէշսն հիմն ի վեր տապալէին. և Պարթևք ոչ միայն չառաքեցին պատգամ խաղաղութեան, այլ և յեղակարծումն ի վերայ հասեալ՝ բազում չարիս Հռոմայեցւոցն հասուցանէին։ Անտոնիոս տեսեալ եթէ խաբեցաւ՝ չիշխէր միւսանգամ յղել պատգամաւորս. եդ ի մտի փութալ անկանել ի Հայս։ Զօրք նորա ի գնալն զնոր ճանապարհն՝ կրեցին բազում և անհնարին վիշտս վտանգաց։ Զի նոցա ընդ անծանօթ երկիրն ընդայն լինէր լի վրիպակօք, նա և բարբարոսքն կալեալ զկիրճս, ուրեք ուրեք փոսս փորեալ և կամ արկեալ առաջի նոցա խոչ և խութ՝ տագնապեցուցանէին զնոսա ուր և երթային զջրոյ, և ոչ թողուին արօտս։ Եւ եթէ տեսանէին զճանապարհ Հռոմայեցւոցն յաջող՝ խոտորեցուցանէին զնոսա, հաւանեցուցեալ եթէ թշնամին ունի զճանապարհն, և տային նոցա խաղալ ընդ այլ կողմն ուր դարան գործեալ էր նոցա. այսպէս բազումք կորեան ի տառապանաց և ի սովոյ։ Էին ևս ի զօրուէն որ դաղտագնաց ի թշնամի անդր լինէին։ Ի նեղ մտեալ Հռոմայեցւոց՝ խորհեցան այլ իմն հնարս։ Ցաւուր միում անկեալ յորդայլթ, և մինչ նետք իբրև զկարկուտ տեղային ի վերայ նոցա՝ յանկարծ իմն զասպար առ ասպար կցեալ, և զձախոյ ծունկսն յեցուցեալ ընդ գետին՝ յօրինէին զայն զոր կրայն կոչեն։ Բարբարոսքն, որոց չէր այնպիսի ինչ տեսեալ, համարեալ զՀռոմայեցիս անկեալս ի հարուածոց անտի նետիցն, և կարծեալ միով ևեթ հարուածով վճարել զիրսն՝ ընկեցին զկապարճս իւրեանց, և ոստուցեալ ի վայր յերիվարացն՝ եկին հուպ սուսեր ի

ձեռն խողխողել զնոսա միանգամայն։ Յայնժամ յատն կայր փաղանգն ողջոյն, և ի տալ նշանին՝ անկանէր իւրաքանչիւր ի վերայ ախոյանին որ կայր մօտ, և այսպէս զինեալք՝ ընդ անզէնս, պատրաստեալք՝ ընդ որս չունէին ամենևին ակն, զինուորք լեգէոնականք՝ ընդ աղեղնաւորս, Հռոմայեցիք՝ ընդ բարբարոսս—գործէին նախճիրս, մինչև մնացելոցն աճապարել ի փախուստ, և ոչ այլ ևս իշխել լինել նոցա հետամուտ։ Անտոնիոս այնուհետև չկրէր վիշտս յերեսաց թշնամւոյն, այլ ցուրտն տագնապէր զնա։ Ձմեռն էր, և լերինք Հայոց, զորս կայր նմա հատանել անցանել՝ էին ծածկեալ մշտնջենաւոր սառնամանեօք։ Վիրաւորքն, որոց բազում էր թիւ՝ էին նմա մանաւանդ անհնարին աղէտք։ Թէպէտև էր զայրացեալ ընդ թագաւորն Հայոց զի եթող զնա, և լի էր քինու ընդդէմ նորա՝ անսայր և ողոքէր զնա, յուսով առնլոյ ի նմանէ պաշար և արծաթ։ Եւ զի չէր մարթ զօրուն երթալ այլ ևս երկայն ճանապարհ, մանաւանդ ձմերայնի, և վիշտ վտանգին տակաւին ի վերայ կայր՝ Անտոնիոս խօսէր համակ ողոքով ընդ թագաւորին՝ տալ նմա թոյլ ձմերել յերկրի նորա։... Ի սկզբան գարնայնոյն մեկնեցաւ Անտոնիոս և գնաց յԵգիպտոս։... Ի գալ ամին եդ արշաւանս ընդդէմ թագաւորին Հայոց, յուսացեալ յարքայն Մարաց. քանզի թշնամացեալ սորա ընդ Հրահատայ, զի չետ նմա մեծ ինչ մասն յաւարէն և ոչ եդ նմա շուք, և կամեցեալ խնդրել վրէժս յարքայէն Հայոց, զի ած նա զՀռոմայեցիսն՝ խնդրեալ էր զբարեկամութիւն և զնիզակակցութիւնն Անտոնեայ։ Ուրախ լեալ ընդ այս Անտոնիոս՝ եմուտ ի դաշն ընդ Մարին, և սկիզբն առնէր հրաւիրել զՀայն իբրև բարեկամ՝ գալ գտանել զնա յԵգիպտոս, ուր խորհէր դիւրաւ իմն բառնալ զնա ի միջոյ. այլ իբրև կասկածեալ նորա չառ յանձն զհրաւէրն՝ Անտոնիոս խորհեցաւ այլով իմն օրինակաւ արկանել զնա ի խաբս։ Թագուցեալ զբարկութիւնն, թէ գուցէ բորբոքեսցէ զպատերազմն՝ պատճառանօք խաղալոյ միւսանգամ ի վերայ Պարթևաց՝ եթող զԵգիպտոս. այլ զճանապարհայն առեալ համբաւ, եթէ Հոկտաւիանոս գայր ի Հռոմայ՝ դառնայր այսրէն»։

Դիոն յետ պատմելոյ զգործս Հոկտաւիոսի, ոսոխին Անտոնեայ՝ կը յաւելու. «Առ ի խնդրել վրէժս յարքայէն Հայոց առանց բազում աշխատութեան՝ Անտոնիոս ի ձեռն Դեղլիոսի ուրումն խընդրէր զդուստր նորա ի կնութիւն որդւոյ իւրում Աղեքսանդրի, և խոստանայր նմա մեծամեծս, և ապա ի սկզբան գարնան գայր հասանէր յանկարծ ի Նիկոպոլիս Պոմպէի, և առաքեալ կոչէր զարքայն Հայոց պատճառանօք հարցանելոյ զխորհուրդ նորա և խնդրել օգնութիւն ընդդէմ Պարթևաց։ Ի չառնուլ նորա յանձն

դալ, կասկածեալ ի դաւոյն՝ Անտոնիոս առաքէր միւսանգամ զնոյն ինքն զԴեղլիոս խօսել ընդ նմա, և ինքն փութայր հասանել յԱրտաշատ։ Այսպէս և՛ ի ձեռն բարեկամաց, և՛ երկիւղիւ զօրացն, գրելով, ևս և գնալով ընդ նմա իբրև ընդ բարեկամի՝ ած զնա ի հաւան գնալ ի բանակ անդր նորա։ Անդ ձերբակալ արարեալ զնա՝ դնէր ի դիպահոջ առանց կապանաց, և տարեալ զնա անձամբ ուր գանձք նորա էին, զի թերևս մարթ իցէ առնուլ զայն առանց կռուոյ՝ պատճառէր թէ ոչ վասն այլ իրիք կալաւ զթագաւոր նոցա, բայց միայն զի արկանիցէ հարկս ի վերայ Հայոց ի փրկանս անձին և գահու նորա։ Սակայն որ պահէին զոսկին՝ ոչինչ անսացին նմա, և որոց զէն ի ձեռին կայր՝ ընտրեցին թագաւոր փոխանակ նորա զԱրտաշէս, զերէցն յորդւոց նորա. և Անտոնիոս կապէր զԱրտաւազդ արծաթի շղթայիւք, քանզի, որպէս թուի՝ ամօթ իմն համարեցաւ արկանել ի շղթայս երկաթիս զայր, որ թագաւոր լեալ էր։ Յետ այսորիկ յանկուցեալ զոմանս կամաւ, զայլս բռնութեամբ՝ լինէր տէր համօրէն աշխարհին Հայոց, զի Արտաշէս պարտեալ ի ճակատու ուրեք՝ խոյս ետ առ Պարթևս։ Յետ վճարելոյ զայս ամենայն և խօսելոյ զորդի իւր դստեր թագաւորին Մարաց, առ ածելոյ զնա առաւել իմն զիւրև՝ դարձաւ Անտոնիոս յԵգիպտոս, տարեալ ընդ իւր, թող զաւարն մեծ՝ զարքայն Հայոց հանդերձ կանամբ և որդւովք։ Խաղացուցանէր զնոսա առաջի իւր հանդերձ այլովք գերելովք իբրև ի ձաղանս յԱղեքսանդրիա, ուր եկանէր նա ի կառս. և թող զայլ շնորհսն զորս առնէր Կղէոպատրայ՝ ածէր առ նա զՀայն հանդերձ իւրովքն, կապեալ շղթայիւք ոսկւովք։ Տիկինն նստէր ի մէջ բազմութեան յատենի, որ զարդարեալ էր արծաթով՝ յաթոռ ոսկեղէն։ Բարբարոսքն չմատուցին նմա աղաչանս և ոչ եկիր պագին նմա, թէպէտև բռնադատեցան յոյժ և տուաւ նոցա յոյս ազատութեան։ Կոչէին զնա իւրով անուամբ, և այսու յայտ արարեալ զոգւոյն մեծութիւն՝ ստացան անուն պարծանաց, այլ սոյն այս լինէր պատճառք գնալոյ ընդ նոսա խստիւ։ Յետ ձաղանացն Անտոնիոս առնէր ընթրիս Աղեքսանդրացւոց, և ի մէջ ժողովրդեանն խռնելոյ նստուցանէր առ իւր զԿղէոպատրա և զորդիս նորա. ապա յետ բանս ինչ խօսելոյ՝ տայր հրաման անուանել զԿղէոպատրա «Դշխոյ թագաւորաց», և զՊտղոմէոս զկոչեցեալն Կեսարիոն՝ «Թագաւոր թագաւորաց»։ Տայր նոցա ի բաժին զԵգիպտոս և զԿիպրոս։ Այս եղև մասն նոցա, իսկ որդւոցն որ եղեն նմա ի Կղէոպատրայ՝ խոստանայր տալ—Պտղոմեայ՝ զԱսորիս և զամենայն երկիրն յայս կոյս Եփրատայ մինչև ի Հելլեսպոնտոս, Կղէոպատրայ՝ զԼիբէա, որ առ ընթեր կայ աշխար-

Հին Կիւրենացւոց, և եղբօր նոցա Աղեքսանդրի՝ զՀայս և զերկիրն անդր քան զԵփրատ մինչև ի Հնդիկս, քանզի այնպէս իմն համարէր, եթէ իւր իցէ այն ամենայն։ Զայսօրինակ խօսէր նա ոչ յԱղեքսանդրիա միայն, այլև ի Հռոմ գրեալ ցուցանէր զոր միանգամ արարն։ Բայց և ոչ մին ի թղթոց նորա ընթերցաւ հրապարակաւ. բդեաշխքն Դոմիտիոս և Սոսիոս որ ի նորա կողմն էին՝ չետուն թոյլ, թէպէտև կայսր (Հոկտաւիոս) շատ ստիպեաց զնոսա։ Այսպէս չեղև ծանօթ ոչինչ ի գրելոցն Անտոնեայ զՀայոց թագաւորէն, որում արգահատէր կայսր և էր բանադնաց լեալ ընդ նմա հակառակ Անտոնեայ»։

7. Ինչ որ պատմեցինք ի թագաւորութենէն Տիգրանայ մինչև ի գերութիւնն և ի մահ Արտաւազդայ (34) ըստ վկայութեան ժամանակակից և իբր ժամանակակից պատմագրաց, մանաւանդ Կիկերոնի, Ստրաբոնի և Յովսեպայ՝ կրնայ համարուիլ վաւերական։ Թէ ինչ եղան Հայք զկնի Արտաւազդայ՝ կը ցուցնէ մեզ Ստրաբոն համառօտիւ.—«Յետ Արտաւազդայ ոչ սակաւ թագաւորք կացին Հայոց ընդ պաշտպանութեամբ կայսեր և Հռոմայեցւոց, և այս պաշտպանութիւն տևէ տակաւին» (Ստր. ԺԳ. 11, 16)։ Զայս կը գրէր Ստրաբոն ի մէջ 30 և 37 ամաց քրիստոնէական թուականին, այսինքն Տիբեր կայսեր ժամանակ։ Զանցս Հայոց յետ Արտաւազդայ աւելի յայտնի կուտան մեզ ուրիշ պատմիչք, ժամանակակիցք կամ մերձաւորք ժամանակաւ։ Ըստ Դիոնի, ինչպէս տեսանք՝ իսկ և իսկ զկնի ձաղանացն Արտաւազդայ՝ Անտոնիոս կ՚որոշէ թողուլ զՀայս առանձին թագաւորութիւն ընդ իշխանութեամբ որդւոյ իւրոյ Աղեքսանդրի մանկան, ծնելոյ ի Կղէոպատրայ, ընդ հովանեաւ կամ խնամակալութեամբ արքային Մարաց իւրոյ նիզակակցին, սահմանելով զդուստր նորա Յովտապէ ի կնութիւն Աղեքսանդրի (34)։ Մարք, այն է բուն Մարք և Ատրպատական, որպէս և Հայք և ուրիշ ազգեր՝ եղած էին ուրոյն թագաւորութիւններ յետ ակարանալոյ Սելևկեանց, մինչև յԱ. դարու քրիստոնէական թուականին նուաճեցան ի Պարթևաց կամ միացան ընդ նոսա։ (Կայ արդարև ի յիշատակ այսր դաշնկան Անտոնեայ 34-էն նախ քան զՔր., «Ի միւում կողման գիր. Armenia devicta, Հայաստան յաղթեալ, և գլուխ Անտոնեայ հայ խուրիւ, և ի միւսում կողման՝ գլուխն Կղէոպատրայ և գիր. Կղէոպատրայ տիկնոջ թագաւորաց, որդւոց թագաւորաց» (Գաթըրճ. Տիեզ. Պատմ. Բ. 94)։ Կը թուի սակայն, թէ այս որոշումն Անտոնիոսի չկարաց գործադրուիլ. քանզի ըստ Յովսեպոսի և ըստ Տակիտոսի, իսկ և իսկ զկնի Արտաւազդայ, գրեթէ նոյն տարին (34) կամ ամաւ միով յետոյ՝ եկաւ անդրանիկ որդին

Արտաւազդայ Արտաշէս, և օգնութեամբ Պարթևաց թագաւորին Հրահատայ Դ. յաղթելով Մարաց թագաւորին, յանձանձչին Աղեքսանդրի մանկան՝ առաւ հայրենի թագաւորութիւնը, մինչ Անտոնիոս ի կռուի էր ընդ ասոխին իւրում Հոկտաւեայ: «Արտաշէս, երէց որդին Արտաւազդայ, ի լսել անդ զհամբաւ պատերազմին (Անտոնեայ ընդ Հոկտաւիոսի), խոյս տուեալ՝ յետ մահու հօրն թագաւորեաց փոխանակ հօրն» (Յովս. Պատմ. Նախն, ԺԵ. 5): «Ապա (զկնի Արտաւազդայ) Արտաշէս նորին որդի կալաւ զթագաւորութիւնն օգնականութեամբ Պարթևաց» (Տակ.): Ինչպէս յառաջ առ մեծաւ Տիգրանաւ և առ Արտաւազդաւ՝ նոյնպէս առ Արտաշիսիւ նորին որդւով, որոյ թագաւորութիւնն տևեց մինչև 21, և առ յաջորդօք նորա ևս՝ Հայք թէպէտ միահեծան էին (և այս յայտնի է մանաւանդ ի տիտղոսէն «Արքայից արքայ» որ հայ ի դահեկանս նոցա)՝ չէին սակայն բոլորովին ազատ յազդեցութենէ Պարթևաց, որոց զօրութիւնն մեծ էր յարևելս յետ պարտութեանցն Կրասոսի և Անտոնեայ առ Հրահատաւ Դ: Բայց ի գալ Աւգոստեայ յարևելս (29)՝ դարձեալ զօրացաւ Հռոմայեցւոց ազդեցութիւնն անդ: Օգոստոս, ինչպէս կ'երևի պատմութենէն որ զկնի՝ ունէր մասնաւոր խնամ զՀայոց. իբրև դաստակերտ Հռոմայեցւոց կը համարէր զՀայոց աշխարհ: Կրտսերագոյն որդիք Արտաւազդայ, եղբարք Արտաշիսի՝ փոխուած կը թուին ի Հռոմ յԱղեքսանդրիայ, ուր տարուած էին յԱնտոնեայ. քանզի Տիգրան, եղբայր Արտաշիսի, յետ ամաց ինչ, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև՝ ածաւ ի Հռոմայ ի ձեռն Տիբերի առնուլ զթագաւորութիւն հօրն, և Օգոստոս, իբրև վերին իշխան Հայաստանի՝ կը թողու Արտաշիսի թագաւորել, և ապա յետ մահուան նորա կու տայ թագաւորութիւնը եղբօր նորա Տիգրանայ, մինչ կարող էր առնել նահանգ զՀայաստան.—«Ի սպանանել Արտաշիսի, յորժամ կարողն էի առնել (զՀայս) ընդ նահանգաւ՝ լաւ համարեցայ տալ զայն ցՏիգրան», են (Կտակ Աւգոստ. տես ի ստորև): Բայց որովհետև հակառակ էր Արտաշէս Հռոմայեցւոց,—«թշնամի Հռոմայ վասն քինու հօրն», ըստ Տակիտոսի,—«մերժեաց զնա ինքնակալ Ներոն—այսինքն Տիբերիոս Կղաւդիոս Ներոն, որդեգիր Օգոստոսի—ի թագաւորութենէն» ըստ Յովսեպոսի. կամ ըստ Տակիտոսի՝ «սպանաւ յիւրոց ազգականաց»: Զկնի մերժման կամ սպանման Արտաշիսի, Տիբեր հրամանաւ Օգոստոսի ըստ խնդրոյ Հայոց կը թագաւորեցունէ զորդի նորա զՏիգրան (20): «Տիգրան (յետ Արտաշիսի) տուաւ յԱւգոստեայ թագաւոր Հայոց, և ածաւ յերկիր իշխանութեան իւրոյ ի ձեռն Տիբերեայ Ներոնի» (Տակիտոս): Զայս գիտէ նաև Յովսեպոս. «Տիբեր, ասէ, եդ փո-

խանակ նորա (Արտաշիսի) զկրտսերագոյնն յեղբարց նորա որ կոչէր Տիգրան» (Յովս.)։ Գիտէ և Սուետոն. «Առաքեալ (Տիբեր Օգոստոսէ) յարևելս զօրօք՝ ետ Տիգրանայ զթագաւորութիւնն Հայոց, և եդ նմա զթագն ի գլուխ՝ նստեալ յատենի իւրում (Սուետ. ի Տիբ. Թ.)։ Յայտնագոյնս՝ Դիոն.—«Իբրև բնակիչք միւսոյ աշխարհին Հայոց (այն է Մեծին Հայոց) տրտունջ լեալ զԱրտաշիսէ խնդրէին զՏիգրան զեղբայր նորա, որ էր ի Հռոմ՝ Օգոստոս առաքէր զՏիբեր վանել յերկրէն զԱրտաշէս և կացուցանել զՏիգրան։ Սակայն Տիբեր չլինէր ինչ նպաստ յայս գործ. զի մինչև եկեալ նորա՝ սպանեալ էր Հայոց զԱրտաշէս. այլ այս չեղև ինչ արգել Տիբերի պարծելոյ, որպէս թէ էր ինչ վճարեալ իւրով զօրութեամբ, մանաւանդ զի և զոհք ևս սահմանեցան վասն այսր» (Դիոն.)։ Զայս յաղթութիւն Տիբերի կ'ակնարկէ երգն Ովրատիոսի, որ (Ովր. ի թուղթսն, Ա. 12) ի յիշելն զարութիւնսն հռոմայեցի զօրավարաց՝ կը յիշէ և զՏիբերի նուաճելն զՀայս.—«Կանտաբրացին, լուր դուզայս, ՅԱգրիպպայ ձեռն է յորսայս. Իսկ Հայն Կղաւդեայ Ներոնեայ (Տիբերիոս Կղաւդիոս Ներոն) Գոռ զօրութեամբն անկեալ կայ» (Թարգմ. Գաթըրճ.)։ Վիրգիլիոս ևս ժամանակակից, ի կոչելն զԵրասխ «սրտմտող ընդ կամուրջ», pontem indignatus Araxes, կը կը թուի իմանալ, ըստ նոյն Գաթըրճեանի՝ զՀայս, իբր չհանդուրժօղս լծոյն Հռոմայեցւոց.—«Զնոյն ակնարկէ և Վիրգիլիոս (Ենէակ. Ը. ի վերջ կոյս) յորժամ յօրինէ զնկարագիր վահանին զոր ետ, ասէ, Ենեայ՝ Աստղիկ ի դարբնոցէն Հեփեստեայ, յորոյ վերայ նկարեալ կային գործք և արութիւնք որդւոց և թոռանց Ենեայ. ընդ ազգսն նուաճեալս մի ըստ միոջէ՝ վիպին նկարեալ անդ և Դահք աննուաճելիք և Երասխ զայրագին և կոտրիչ կամրջաց (pontem indignatus Araxes), այս ինքն՝ Հայք սանձակոտորք ծառայութեան Հռոմայեցւոց» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. 95)։ Ի հաստատութիւն այս գիպաց կան նաև դահեկաններ յամէն 20 ն. ք. գՔր., զորս մանր կը նկարագրէ Գաթըրճեան.—«Դիպող յոյժ, ասէ, ի հաստատութիւն պատմութեանս և անգին իմն յիշատակարանք վասն անցից Հայոց աշխարհին՝ են դահեկանք գեղեցիկք որ ի մուսարանս Եւրոպայ կան, ոսկի և արծաթի, ամենեքին դրոշմեալ ի սմին ամի (20 նախ քան զՔր.)։ Ի միում կողմանն նոցա է միշտ գլուխ Աւգոստեայ կամ միոյ ուրուք ի դից (Փերոնեայ, Բակքոսի), իսկ ի միւսում կողմանն կայ արձանագիր, երբեմն՝ Հայաստան առեալ (Armenia capta), և պատկեր՝ խոյր Հայոց թագաւորին և առ նմին մի կամ երկու կապարճք գեղեցիկք և աղեղն. երբեմն նոյնպէս՝ Հայաստան առեալ, և պատկեր ինչ այսպիսի, զի դիքն

յաղթութեան Թեւաւոր՝ երանս ածեալ ի վերայ ցլու սանձէ զնա, որով ակնարկի նուաճումն Հայոց աշխարհին յայնկոյս Տաւրոսի (որ թարգմանի՝ ցուլ) և առանձինն Տարօն նահանգի Հայոց, զոր կոչէին Հռոմայեցիք Taurantium կամ Taurauntium, մանաւանդ զի ըստ Ղիբանիոսի իսկ վկայելոյ՝ նշանակ Տաւրոս լերին էր ցուլ ինչ պղնձի յարևելս. երբեմն նոյնպէս՝ *Հայաստան առեալ* և պատկեր՝ Սփինքս մի կծկեալ նստեալ. և պատմեն իսկ Պղինիոս, Սուետոն և Դիոն՝ ի սկզբանն վարել Օգոստեայ սփինքսագիր մատանեաւ ի կնիքս իւր. և երբեմն դարձեալ այսպիսի ինչ արձանագիր. *Հայաստան այսրէն առեալ* (Armenia recepta), *Սքանչելւոյն Կեսարեայ որդի*, և պատկեր՝ կին մի (նշանակ Հայաստան աշխարհի) ի ծնունդս: Առաջինն և չորրորդն ի դահեկանաց աստի արծաթիք են, իսկ երկրորդն և երրորդ՝ ոսկիք: Թող զերեսին արծաթի դահեկանսն, զոր արքն երեքին վերակացուք արքունի դրամահատութեան հատեալ են ի պատիւ Օգոստեայ. ի միումն ի նոցանէ երևեցուցանի Հայաստան իբրև կին անկեալ ի ծունր, խոյր Հայոց թագաւորին ի գլուխ իւր, և արձանագիր շուրջանակի՝ *Սքանչելւոյն Կեսարեայ որդի, Հայաստան առեալ*. և յայլսն երկոսին նոյնպէս Հայաստան ի կերպարանս կնոջ խոնարհելոյ ի ծունր, կարկառեալ առաջի զձեռսն, իբրև թէ զամենայն աւանդիցէ ի ձեռս յաղթողին: Զայսն իմն և բանիւք նկարէ Ովիդիոս ի Պոնտոսէ (ի Տրտմականսն, Ծ. 227) յասելն. Ա՛րդ խնդրէ Հայն խաղաղութիւն, ա՛րդ կարկառեալ մատուցանէ զաղեղնն: Կայ միւս ևս դահեկան արծաթի ի մերում մուսարանի (ի Վանս Մխիթարեանց ի Վիէննա) դոյզնագիւտ յոյժ ի սմին ամէ (20 նախ քան զՔր.). քանզի է նշանակեալ ի նմա Իններորդ նուագն Զօրավարութեանն Օգոստեայ, (այսինքն imp. VIIII, և ոչ VIII, որպէս ընթերցեալ իմն է Միոնէ ի վերայ օրինակի իրիք նորին դահեկանի գտելոյ ի մուսարանին Կոսլենի ուլումն ի Գաղիա). ի միում կողմանն է գլուխ Օգոստեայ, և ի միւսումն՝ զինուոր Հայ կանգուն, նիզակ յաջումն և աղեղն ի ձախումն՝ զինուոր Հայ կանգուն, նիզակ յաջումն և աղեղն ի ձախումն՝ զինուոր Հայ կանգուն, նիզակ յաջումն և աղեղն ի ձախումն՝ գլխայեցուցեալ ի գետին, հայացի հանդերձիւ (կամ զրահիւք) և գլխայ նոյնու, և գիր շուրջանակի՝ Caesar div. f., Armenia capta» (Գոթըրճ. անդ):

Այս Տիգրանայ յաջորդեց որդին Տիգրան կրտսեր հանդերձ քերբն Երատոյիւ, որ էր միանգամայն կին նորա: Տակիտոս յետ պատմելոյ, թէ Տիգրան յաջորդեց Արտաշիսի—«Արտաշէս սպանաւ դաւով յիւրոց ազգականաց, և Տիգրան տուաւ յՕգոստեայ թագաւոր Հայոց և ածաւ յերկիր իշխանութեան իւրոյ ի ձեռն Տիբերեայ Ներոնի—»ինչպէս տեսանք վերը՝ կը յաւելու. «Սակայն աթոռն ոչ

մնայր ընդ երկար Տիգրանայ, և ոչ իսկ որդւոց նորա (Տիգրանայ կրտսերոյ և Երատոյի), զի ըստ սովորութեան բարբարոսաց՝ եղբայր և քոյր էին հաղորդք և՛ անկողնոյ և՛ իշխանութեան։ Ի Տիգրանայ կրտսերոյ և Երատոյէ կան դահեկաններ. դահեկան մի ազնձի, «ունելով ի միում կողմանն զպատկեր այսր Տիգրանայ թագ Հայոց ի գլուխ և գիր շուրջանակի՝ Βασιλευς βασιλεων Τιγρανης (արքայից արքայ Տիգրանէս), և ի միւսումն կողման պատկեր Երատոյայ և գիր շուրջանակի՝ Ερατω βασιλευς Τιγρανου αδελφη (Երատով Տիգրանայ արքայի քոյր)։ Կայ միւս ևս դահեկան նոյնպիսի և գիր շուրջանակի՝ Βασιλευς μεγας νεος Τιγρανης (թագաւոր մեծ կրտսեր Տիգրանէս)։

Տիգրան կրտսեր ևս կը մերժուի, հաւանականապէս հակառակութեանն համար Հռոմայեցւոց դէմ, և կը դրուի Արտաւազդ ոմն։ Տակիտոս յետ պատմելոյ, թէ «աթոռն ոչ մնայր Տիգրանայ և ոչ որդւոց նորա են՝ կը յաւելու. «Այլ ոմն Արտաւազդ կացուցաւ յԱւգոստեայ»։ Աւելի ընդարձակ՝ Վէլլէոս Պատերկուլոս (Գլր. Բ. 94). «Յետ սակաւ միոյ (Տիբեր) առաքեալ յԱւգոստեայ զօրօք այց առնել արևելից և կարգել յարդարել զիշխանութիւն գաւառացն՝ եցոյց զամենայն ազգս առաքինութեան. անուի մտեալ զօրօք ի Հայս՝ արկ զայն ընդ իշխանութեամբ հռոմէական ժողովրդեան, և զթագաւորութիւն երկրին ետ Արտաւազդայ»։ Այս Արտաւազդայ անուան ևս կայ դահեկան, ի միում կողման պատկեր նորա թագ ի գլուխ, և ի միւսումն՝ Յաղթութիւն թևաւոր և գիր շուրջանակի—Βασιλεως βασιλεων Αρταυασδου։ Այս ուղղագրութեան, ինչպէս նաև դրոշմին համար, որ ունի նմանութիւն դրոշմի դահեկանին Տիգրանայ կրտսերոյ և ոչ մեծին Տիգրանայ. դարձեալ թևաւոր Յաղթութեան համար, որ է նշանակ յետնագոյն հռոմէական ժամանակի և ոչ ժամանակին առաջնոյ Տիգրանայ և Արտաւազդայ՝ կը հետևցունէ Գաթրրճեան, թէ այն դահեկան այս Արտաւազդայ է և ոչ առաջին Արտաւազդայ, որդւոյն և յաջորդի Տիգրանայ մեծի.—«Յայտ իսկ հաւանութեան է, թէ ոչ Արտաւազդայ առաջնոյ, այլ այսմ իսկ Արտաւազդայ անկ է դահեկանն նըկարագրեալ վերագոյն, էջ 86, որպէս ցուցանէ նմանութիւն դրոշմին ընդ դրոշմի դահեկանին Տիգրանայ կրտսերոյ առաջին աթոռակալի նորա, քանզի ի դէպ է, թէ ի միոջէ արուեստագիտէ եցեն երկոքին, մանաւանդ զի և անունն Արտաւազդայ է գրեալ առաւել ըստ հռոմայեցի հնչման Αρταυασδου, և ոչ Αρταβασδου, որպէս գրէին արդեօք յոյն արուեստագէտք դրամահատութեան՝ եթէ էր Արտաւազդն Ա. յաջորդ Տիգրանայ մեծի, որոյ դահեկանացն և

դրօշմն ևս այլ իմն նկարագիր ունին։ (Գաթըրճ. Պատմ. Տիեզ. Բ. 96, ծան. 3)։

Այս Արտաւազդայ համար ասէ Տակիտոս, թէ «արկաւ յաթոռոյն ոչ առանց մերոյ կորստեան։ Յայնժամ Գայիոս Կեսար ընտրեցաւ խաղաղեցուցանել զՀայս, և ետ զայն Արիոբարզանայ Մարի, որոյ և՛ դեղն և՛ քաջութիւն հաճոյ էին Հայոց» (Տակ.)։ Զնոյն կը յիշէ և Վելլէոս Պատերկուղոս (Բ. 102). «Գայիոս եմուտ ապա ի Հայս։ Մուտ նորա եղև յաջող, այլ յետոյ յանզգոյշս իմն մատուցեալ ի խօսս մօտ յԱրտագերս՝ խոցեցաւ կարեվէր ի գլխոյն յԱդդոնէ ումեմնէ»։ Ի բանից աստի Տակիտոսի և Վելլէոսի կը տեսնուի, թէ մերժումն Արտաւազդայ եղաւ Հայոց կողմանէ ապստամբութեամբ, որ մեծ վնաս տուած կը թուի Հռոմայեցւոց։ Ապստամբութիւնը կը թուի եղած թելադրութեամբ Տիգրանայ, որոյ օգնական էր Հրահատակ արքայ Պարթևաց (Արշակ ԺԶ. 9—14). քանզի ըստ Դիոնի՝ կը գտնենք զՏիգրան միւսանգամ ի Հայս և զՀրահատակ միջամուխ ի գործս Հայոց, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։ Օգոստոս կ՚ստիպուի ղրկել միւսանգամ զՏիբեր։ Զայս կը ցուցնէ բան Դիոնի, թէ Օգոստոս «ետ Տիբերի իշխանութիւն տրիբունական վասն ամաց հնգից, և յանձն արար նմա զհոգ աշխարհին Հայոց որ յետս կացեալ էր»։ Բայց երբ Տիբեր ընտանեկան դժտութեանց պատճառաւ առանձնացաւ ի Հռոդոս, ինչպէս կը պատմէ նոյն Դիոն՝ Օգոստոս յանձնեց Հայոց գործը որդեգրին իւրում Գայիոսի։ Մինչև եկեալ Գայիոսի՝ Տիգրան կրտսեր կը մեռնի ի կռուի, և աթոռակից նորա և քոյր Երատոյ կը հրաժարի, և Հրահատակ առ ահին ի Հռոմայեցւոց՝ յետ կը կենայ ի Հայոց։ Այսպէս Դիոն. «Լուեալ Հրահատակայ, եթէ Գայիոս էր յԱսորիս իբրև բդեաշխ, կասկածեալ ևս յիւրոց հպատակաց, թէ երկնչէին ի վաղուց հետէ խորհուրդ վատ զնմանէ՝ փութայր առնել խաղաղութիւն, յանձն առեալ ի բաց կալ ի Հայոց։ Բայց թէպէտ և սպանեալ էր Տիգրան ի պատերազմի ընդդէմ բարբարոսաց, և Երատոյ հրաժարեալ յիշխանութենէն՝ Հայք, երբև տուաւ նոցա թագաւոր Արիոբարզանէս ոմն Մար՝ ետուն պատերազմ յամին երկրորդի. այլ ոչ ինչ գործ կարևոր մարթացան վճարել, բայց միայն զի Ադդոն ոմն որ բռնացեալ ունէր զԱրտագերս՝ ձգէր զԳայիոս մինչև առ պարսպաւ քաղաքին, որպէս թէ զգաղտնիս ինչ Պարթևին ունէր ի վեր հանել, և վիրաւորեաց զնա։ Յայնժամ Արիոբարզանէս, և յետ մահու նորա, որ ոչ կարի յամեաց՝ որդի նորա Արտաւազդ առին զՀայս յԱւգոստեայ և ի ծերակուտէն» (Դիոն)։ Զայս յայտնագոյն ևս կը ցուցնէ Սեքստոս Ռուփոս (ԺԹ)։ «Առ Հոկտաւիանոսն կայ-

սերաւ Աւգոստեաւ Հայք յարեան հակառակ մեզ միաբանութեամբ Պարթևաց: Գայիոս Կեսար, թոռն Աւգոստեայ՝ առաքեցաւ յարևելս զօրօք, և ի շնորհս մեծութեան հռոմէական անուան՝ ցածոյց վաղվաղակի զապստամբութիւնն: Հայք որ յայնժամ հզօրագոյն էին քան զՊարթևս՝ եղեն նմա անձնատուր, և նա ջանայր, ըստ օրինակին տուելոյ ի Պոմպէոսէ՝ դատաւորս կացուցանել ազգացն այնոցիկ, մինչ Դոմնէս ումն, զոր կարգեալ էր թագաւորն վերակացու Արտագերից՝ եկն մատուցանել նմա պատճառանօք մատնելոյ զտէր իւր՝ գիր, ուր գրեալ կայ, ասէր, համար գանձուց թագաւորին. և մինչ զօրավարն հռոմայեցի ընթեռնոյր մտադրութեամբ մեծաւ՝ Դոմնէս յարեաւ ի վերայ նորա և հար զնա դաշունիւ: Նենգաւորն սատակեցաւ արդարև ի զօրականէն, բայց Գայիոս վիրաւորեալ մեռաւ ի դարձին իւրում յԱսորիս»: Արիոբարզան կը մեռնի, և որդին Արտաւազդ, որ նմա յաջորդեց հաճութեամբ Հռոմայեցւոց՝ կը մերժուի. յայնժամ Օգոստոս կը ղրկէ Տիգրան զոմն արշակունի, այսինքն ի զաւակէն Արտաքսիասայ: Զվախճանէն այս Տիգրանայ չենք գիտեր ստոյգ ինչ, բայց յետ նորա Երատոյ առաւ միւսանգամ թագաւորութիւնը: Ապա Հայք տաղտկալով ի նմանէ և՛ս մերժեցին, և մնացին առանց իշխանի մինչև Վոնոն, զորմէ ստորև: Տակիտոս չյիշեր զորդին Արիոբարզանայ զԱրտաւազդ. կը թուի ակնարկել սակայն, թէ ունեցաւ նա յաջորդ իւր տոհմէն, քանզի ասէ. «Արիոբարզանէս ըստ դիպաց իմն (այսինքն բնական մահուամբ կամ ի պատահարէ իմեքէ) մեռանէր, և տոհմն նորա մերժէր»: Տակիտոս չյիշեր նաև զվերջինն Տիգրան արշակունի, այլ անմիջապէս կ'անցնի յԵրատոյ, վերջինն ի ցեղէն Արտաքսիասայ, որով կը մարի Արտաքսիասեան (Արտաշէսեան) հարստութիւնն: Ուստի յետ ասելոյ Տակիտոս, թէ «տոհմն Արիոբարզանայ մերժէր»՝ կը յարէ. «Հայք փորձեցին յայնժամ զիշխանութիւն ուրումն կնոջ, որում անունն էր Երատոյ, բայց և զնա արտաքսեցին վաղվաղակի. ապա անկեալ ի վարանս և յանիշխանութեան, ոչ այնչափ ազատք որչափ անտէրունչք՝ եդին հուսկ ուրեմն յաթոռն զփախստեայն Վոնոն»: Բայց կարևորագոյն յիշատակարանն պատմութեան Հայոց այնր ժամանակին, այն է կտակն Աւգոստեայ՝ կը յիշէ և՛ զԱրտաւազդ որդի Արիոբարզանայ, և՛ զՏիգրան վերջին արշակունի, բայց չյիշեր զԵրատոյ, առ որով Օգոստոս կը թուի մեռեալ: Տեսնենք այժմ Օգոստոսի կտակը, որ, որպէս ասացաք՝ կարևորագոյն յիշատակարանն է այնր ժամանակի անցից Հայոց: «ԶՄեծն Հայաստան, ասէ, ի սպանանել թագաւորի նորա Արտաքսեայ (Արտաշիսի, որդւոյ Արտաւազդայ), յորժամ կարողն էի առնել ընդ նահանգաւ

լաւ Համարեցայ ըստ օրինակի նախնեացն մերոց տալ զայն Թագաւորութիւն ցՏիգրան որդի Արտաւազդայ, թոռն Տիգրանայ արքայի (մեծի), ի ձեռն Տիբերեայ Ներոնի, որ որդեգիր իմ էր յայնժամ։ Յետ այնորիկ յորժամ յետս եկաց և ապստամբեաց ազգն այն՝ նուաճեցի ի ձեռն Գայեայ որդւոյ իմոյ, և ետու ի ձեռս Արիոբարզանայ, որդւոյ Արտաւազդայ արքայի Մարաց զի առաջնորդեսցէ, և յետ նորա մահուն՝ որդւոյ նորա Արտաւազդայ։ Իբրև սա սպանաւ՝ զՏիգրան որ էր յարքունի տոհմէ Հայոցն՝ առաքեցի ի գոյն Թագաւորութիւն» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. 97. ծան. 2)։ Զկըտակէն Աւգոստեայ Գաթըրճեան ասէ անդ այսպէս. «Սոցին երաշխաւոր, և գրեթէ Համօրէն իսկ պատմութեանցս՝ գեղեցիկ վկայ կայ անուանեալ Յիշատակարանն Անկիւրական, այսինքն արձանագիր տաճարին կանգնելոյ յԱնկիւրա Գաղատացւոց ի պատիւ Աւգոստեայ (Σεβαστεία, Augustea), յորում կայ քանդակեալ մասն ինչ կտակին Աւգոստեայ, զոր էր նորա յանձն արարեալ Վեստեան կուսանաց, զի տացեն ծերակուտին (Տակիտ. Ա. գլ. Ը.)»։

Ց. Վկայութիւններէն, զորս բերաք ժամանակակից պատմագիրներէ, և նշանաւորագոյներէն, նաև վաւերական յիշատակարաններէ՝ որպիսի են գահեկանք՝ յայտնի եղաւ, թէ իսկ և իսկ յետ կապանացն Արտաւազդայ Ա-ոյ (34) տիրեցին Հայոց ընդ ձեռամբ Հռոմայեցւոց Թագաւորք ութ.—

1. Արտաշէս, երէց որդին Արտաւազդայ (33—21).

2. Տիգրան Բ, եղբայր Արտաշիսի, ի ձեռն Տիբերի Կղաւդեայ Հրամանաւ Օգոստոսի (20).

3. Տիգրան Գ. կամ Տիգրան կրտսեր, որդի Տիգրանայ Բ-ի Հանդերձ քերբն Երատոյիւ, որ էր միանգամայն կին նորա.

4. Արտաւազդ ումն, դարձեալ ի ձեռն Տիբերի, Հրամանաւ Օգոստեայ (6).

5. Արիոբարզան, Մարաց Թագաւորին որդին, ի ձեռն Գայիոսի, Հրամանաւ Օգոստեայ (1 յետ Ք.ի).

6. Արտաւազդ որդի Արիոբարզանայ.

7. Տիգրան Դ. ի տոհմէ Թագաւորաց Հայոց, Հրամանաւ Օգոստեայ.

8. Երատոյ միւսանգամ առանձինն, յետ որոյ անտէրնչութիւն մինչև ի Վոնոն (16 յետ Ք.ի)։

Ապաքէն զարմանք են, որ քերթողաՀայր մեր, այնպէս Համբաւեալ իբրև Հայր պատմութեան մերոյ՝ Տիգրանայ անմիջական յաջորդներուն վրայ ունենալով ժամանակակից պատմիչներ զորս յիշեցինք, մանաւանդ զՅովսեպոս որ ծանօթ է նմա, ոչ բնագրէն,

այլ ինչպէս կը տեսնուի Հայերէն թարգմանութենէ մը՝ թողլով գնոսա կուտայ մեզ նոր իմն աւանդութիւն ասորական, տալով իսկ և իսկ յաջորդել Տիգրանայ կամ Արտաւազդայ՝ երևակայեալ եղբօրորդի մը Արշամ անուն, ինչպէս ըսինք այլուր՝ առ Քրիստոս գըր-կուած կեղծ նամակի մը Ուշամայն առնլով իբրև անձն, որում կու տայ յաջորդել զԱրաբացին (զՈւռհայաստանցին) Աբգար, տողելով բիւր տառասալել մինչև յԱրտաշէս իւր Բ։

Բայց թողլով այս ամենայն նոյա, որ Խորենացւով կը պարծին՝ գանք մեր պատմութեան կարգին։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԱՅՔ Ի ՎՈՆՈՆԷ ՄԻՆՉԵՒ ՏՐԴԱՏ Ա. (ԱՐՏԱՇԷՍ Բ. ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՒՈՅՆ) ԿԱՄ 16—80.

ՊԱՐԹՆԻ—ՀՌՈՄԷԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ:

1. Խռովութիւնք ի Պարթեւս. Վոնոն: 2. Նոր հաստատութիւն ի Պարթեւս. Արտաւան. Վոնոն ի Հայս: 3 Տիբեր. Զենոն—Արտաշէս՝ ի ձեռն Գերմանիկեայ: 4. Արշակ ի կողմանէ Պարթեւաց, Միհրդատ Վիր՝ ի Հռոմոց: 5. Վաղարշ Պարթեւ. վերջին հաստատութիւն Հայոց. Պահլաւք ի Հայս. Տրդատ—Արտաշէս: 6. Հռադամիստ—Երուանդ. պատերազմ ընդ Հռոմայեցիս. Դոմիտիոս Կորբուղոն, զօրավար Ներոնի: 7. Կեսենիոս Պետոս փոխանակ Կորբուղոնի. ձախողել Հռոմայեցւոց: 8. Բանագնացութիւն. պատուաստութիւն գնալոյ Տրդատայ առ Ներոն: 9. Նոյն պատմութիւն ի Դիոնէ: 10. Տրդատ—Արտաշէս երթայ առ կայսր, եւ որ զկնի. Ցիշատակարանք այս դիպաց: 11. Հայք յետ մահուն Ներոնի. Արշաւանք Ալանաց. Ցովսեպոս: 12. Ներքին գործք. Վիպասանք Հայոց. Սմբատ սպարապետ Տրդատ—Արտաշիսի:

1. Յետ սպանելոյ ցեղին Արտաքսիասայ Տիգրանաւ վերջնով եւ Երատոյիւ՝ Հայք մնալով առանց թագաւորի եւ գրեթէ յանիշխանութեան՝ ընտրեցին զփախստեայն Վոնոն ի թագաւոր (16)։ Որպէս զի իմացուի, թէ ով էր այս Վոնոն, որոյ պատճառաւ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, երկու մեծ տէրութիւնք, Պարթեւք եւ Հռոմ, գրգռեցան իրարու դէմ Հայաստանի համար եւ արարին զերկիրն տեսարան արիւնհեղութեան՝ առնունք զպատմութիւնն սակաւ ինչ ի հեռուստ։ Ի համառօտ պատմութեան մերում զՊարթեւաց վերագոյնն յիշուեցաւ, թէ ինչպէս Հրահատ Գ, յաղթողն Անտոնիոսի, յետ մահուն սորա ակնածելով Օգոստոսէ՝ ոչ միայն դարձուց յետս հռոմէական դրօշներն եւ գերիներ, զորս առած էին Պարթեւք ի պատերազմունս Կրասոսի եւ Անտոնեայ՝ այլեւ տուաւ պատանդս յորդւոցն Հրահատայ Գ-ի (20)։ Այս պատանդներէն էր Վոնոն։ Հրահատակ, որդին Հրահատայ, սպաննելով զհայր իւր

Հրահատ Դ՝ այն ինչ թագաւորեալ կ'սպանուի, և Պարթևք կ'ընտրեն զՈրոդ Բ. (Արշակ ԺԷ.), բայց և սա կ'սպանուի իւր խստութեան և անագորունութեան համար։ Յայնժամ Պարթևք կը խնդրէին ի Հռոմայ Հրահատայ Դ-ի որդիներէն մին, և կը ղրկուի նոցա Վոնոն. բայց և սա իւր հռոմէասէր բարուց պատճառաւ մերժուելով՝ խոյս կու տայ ի Հայս յերեսաց Արտաւանայ Գ-ի, զոր կոչեցին Պարթևք Պահլաւ ցեղէն, ինչպէս տեսանք անդ։ Զայս պատմութիւն կ'աւանդեն մեզ Յովսեպոս և Տակիտոս.—«Զայնու ժամանակաւ Հրահատ արքայ Պարթևաց սպանաւ դաւով ի Հրահատակայ յիւրմէ որդւոյն, պէս զայս օրինակ։ Հրահատ որ ունէր բազում որդիս օրինաւորս՝ հարեալ էր կնոջ ումեմն իտալացւոյ, զոր հանդերձ այլովք պարգևօք առաքեալ էր առ նա կայսր (Օգոստոս), և կինն էր արդարև գեղեցիկ։ Ի սկզբան անդ ունէր զնա Հրահատ իբրև զմին ի հարճից իւրոց, այլ սէր նորա տակաւ աճէր. և իբրև եղև նորա ի նմանէ որդի Հրահատակ՝ առնէր Հրահատ զկինն ինքեան ամուսին։ Եւ զի շահեալ տիրեալ էր կինն ի վերայ մտաց թագաւորին՝ եդ ի մտի տալ յանձնել զտէրութիւնն ի ձեռս որդւոյն, և զի չունէր ակն առնել զայն այլով իւիք, բայց տալով հեռացուցանել զորդիսն օրինաւորս Հրահատայ՝ արկ նմա առաջի և տպաչէր առաքել զնոսա պատանդս ի Հռոմ։ Թագաւորն որ չէր իշխէր ժխտել նմա և ոչինչ՝ առ յանձն։ Այսպէս Հրահատակ միայն մնայր առ նմա։ Որդին այն գարշելի այնպէս իմն ճեպէր թագաւորել, մինչև տաղտկացեալ ի սպասելոյ մահուան հօրն՝ տայր սպանանել զնա ըստ խորհրդոյ մօրն, ընդ որում գիտէին թէ կեայր նա ամօթալի կենօք։ Հայրասպանութեան ոսկումն հանդերձ ագգապղծութեամբն գրգռեաց ընդդէմ նորա զհասարակաց ցասումն այնպէս՝ ինչպէս հալածել նմա և մեռանել մինչև հաստատեալ յանիրաւ իշխանութեանն։ Յայնժամ համօրէն աւագանւոյն, որ գիտէին եթէ չէր հնար կալ տէրութեանն առանց առաջնորդութեան թագաւորի, և չկամէին ունել թագաւոր բայց միայն յԱրշակունի տոհմէ, այն է յազգէ թագաւորութեանն՝ համարեալ զտոհմն Հրահատայ պղծեալ անհնարին լրբութեամբ կնոջն այնորիկ իտալացւոյ ընտրեցին զՈրոդ որ էր յարենէ թագաւորաց, ամբառնալ զնա յաթոռն, և առաքեցին առ նա հրեշտակս։ Այլ իշխանս այս էր այնպէս ցասկոտ, այնպէս անագորոյն և այնպէս անհամբոյր՝ մինչև չկարացեալ ժուժել ազգին՝ գործեցին նմա դաւ, և զի Պարթևք կրեն միշտ սուսեր՝ սպանաւ նա ի խնջոյս, և կամ որպէս այլք ասեն՝ յորսի։ Այսպէս մնացեալ Պարթևաց առանց թագաւորի՝ առաքեցին ի Հռոմ խնդրել առ ի թագաւորելոյ ի վերայ նոցա յորդւոց

անտի Հրահատայ Դ-ի զմին, որ էր անդ ի պատանդի։ Տուաւ նոցա Վոնոն, զոր նախամեծար արարին քան զեղբարսն, զի համարէին զնա արժան քան զնոսա համբառնալ միաբան հաւանութեամբ երկուց պետութեանցն աւագաց յայն բարձր աստիճան պատուոյ։ Այլ զի բարբարոսքն այնոքիկ են ի բնէ անհաստատք և յանդգունք՝ գլխաւորքն ի նոցանէ սորջացան իմն փաղփաղակի ընդ ընտրութիւն իւրեանց և ասէին, թէ չկամէին այլ ևս հնազանդել ծառայի. այսպէս կոչէին զիշխանն՝ վասն զի տուեալ էր նա պատանդ Հո-ռոմոց։ Զի ոչ իրաւունք ինչ պատերազմի, ասէին, այլ մին ի պայմանաց ամօթալի խաղաղութեան ետ մեզ զնա ի թագաւոր։ Յետ այսր ապստամբութեան առաքեցին մատուցանել զթագն Արտաւանայ Մարաց (Դահաց) թագաւորի, որ էր ի տոհմէ (Պահլաւ) Արշակունեաց։ Ընկալաւ նա ուրախութեամբ և եկն զօրու ծանու։ Այլ զի աւագանին և եթ ունէր մասն ի փոփոխութեան աստ՝ Վոնոն որում կայր մնայր հաւատարիմ ժողովուրդն՝ յաղթէր Արտաւանայ ի ճակատու ուրեմն և ստիպէր զնա խոյս տալ ի լերինս անդր աշխարհին Մարաց։

Զ. Արտաւան ժողովէր յետոյ բազմութիւն մեծ, տայր երկրորդ անգամ ճակատ, ուր Վոնոն յաղթեալ պարտեալ՝ անկանէր սակաւուք ոմամբք յիւրոց անտի ի Հայս։ Արտաւան յետ առնլոյ կոտորած մեծ Պարթևաց՝ եկն մինչև ի Տիզբոն և այնպէս մնաց տէր երկրին։ Իսկ Վոնոն այն ինչ եկեալ ի Հայս՝ թեկն ածէր թագաւորութեան»։ (Յովս. Պատմ. Նախն. ԺԸ. Գ.)։ Ոչինչ ընդհատ ի սմանէ և Տակիտոս.—«Առ հիւպատոսութեամբ Սիսենայ Ստատիղայ Տաւրոսի և Ղ. Ղիբոնի՝ աղմուկք շփոթից յուզէին զթագաւորութիւնսն արևելից և զհռոմէական նահանգս։ Նշանք տուան ի Պարթևաց, որք յետ հնազանդելոյ թագաւորի զոր նոցին իսկ խնդրեալ էր ի Հռոմայ և ընկալեալ կամաւ՝ արհամարհեցին զնա իբրև զօտար ոք, թէպէտև յարենէ Արշակունեաց։ Թագաւորն այն էր Վոնոն, զոր Աւգոստեայ առեալ էր պատանդ ի Հրահատայ։ Քանզի Հրահատ թէպէտ և վանեալ էր զզօրս և զզօրավարս մեր՝ տայր սակայն Աւգոստեայ զամենայն պատիւ մեծարանաց, և առ լաւ ևս շահելոյ զբարեկամութիւն նորա՝ առաքեալ էր առ նա զմանս յորդւոց իւրոց ի պատանդ, ոչ սակայն առ երկիւղի Հռոմոց, որչափ առ չվստահելոյ յիւրսն։ Յետ մահուն Հրահատայ և պայազատաց նորա՝ գայր հրեշտակութիւն ի Հռոմ յանուն աւագաց թագաւորութեանն, որ տաղտկացեալք ի տեսանելոյ զհեղումն արեանց՝ խնդրէին զՎոնոն, զերիցագոյնն յորդւոց անտի Հրահատայ։ Այս գործ ողոքէր իմն զնապարծութիւն Աւգոստեայ, որ ար-

ձակէր զիշխանն, մեծացուցեալ պարգևօք: Բարբարոսքն ընկալան զնա ուրախութեամբ, որով սովորն են ընդունել զիւրեանց նորոգ-տեարս: Այլ յետ սակաւ միոյ զամօթի հարեալք ընդ ընտրութիւնն՝ մեղադիր իմն լինէին անձանց, իբր այն թէ անպատուեցին զանունն Պարթևաց, այնու զի ածին յայլմէ աշխարհէ թագաւոր, զեղծեալ արուեստիւք թշնամւոյն: Աթոռ Արշակունեացն, ասեն, իցէ ու-րեմն կալեալ և տուեալ իբրև նահանգ մի ի նահանգաց Հռոմոց: Ո՞ւր իցեն փառք այնց դիւցազանց, որոց սպանեալ էր զԿրասոս և վանեալ վտանգեալ զՄարկոսն Անտոնիոս, եթէ ծառայ մի կայսեր, խամրեալ և թառամեալ այնչափ ամաց ծառայութեամբ՝ տիրիցէ ի վերայ Պարթևաց: Այսպէս խօսէին առ ցասման, զոր Վոնոն ևս իմն բորբոքէր հեռանալովն ի սովորութեանց նախնեաց, զի եր-թայր յորս դուն ուրեք, սիրէր սակաւ զերիվարս, չերևէր երբէք ի քաղաքի՝ բայց դեսպակաւ միայն, և անգոսնէր իմն զխրախու-թիւնս երկրին: Ծաղր առնէին զանձնապահս նորա յոյնս և զկնիք նորա դրոշմեալ ի վերայ չնչենագոյն իրաց: Նա և ընտելութիւն նորա և բարուցն քաղցրութիւն, առաքինութիւնք որոց անդէտ են բարբարոսքն՝ նոր ախտք էին վասն նոցա: Օտարն կերպարանք գործէր ի նմա և՛ զբարին և՛ զչար՝ միանգամայն ատելի: Ուստի կոչեցին զԱրտաւան ոմն իշխան Արշակունի, սնեալ ի մէջ Դահաց (Սկիւթացւոց): Սորա պարտեալ յառաջնում ճակատու՝ գտանէր ապա զօրութիւն և ունէր զաթոռն: Վոնոն փախստեալ անկանէր ի Հայս» (Տակ. Տրգր. Բ. 1, 3): Որովհետև Արտաւան Գ. որ կը խորհէր տալ զՀայաստան իւր ցեղին, կ'սպառնար Վոնոնի իբրև իւրում հակառակորդի, և Հայք չէին առանձինն ատակ պաշտպա-նել զնա՝ Վոնոն ապաւինեցաւ առ Հռոմայեցիս, բայց չգտնելով օգնութիւն ի նոցանէ՝ հնարիւք Կրետիկոսի Սիղանոսի կուսակալի տարուելով յԱսորիս արգելաւ: Այսպէս Տակիտոս յետ պատմելոյ զփախուստն Վոնոնի յերեսաց Արտաւանայ և զթագաւորել նորա ի վերայ Հայոց՝ կը յաւելու. «Բայց Արտաւան սպառնայր Վոնոնի: Եւ զի Հայք չէին ըստ բաւականին ձեռնհաս ի պաշտպանել զնա, և եթէ լինէաք միջամուխ ի կռիւ նոցա, հասանէր մեզ մխել ի պատերազմ ընդ Պարթևս՝ կուսակալն Ասորւոց Կրետիկոս Սի-ղանոս ձգեաց զնա յիւր նահանգ և ունէր ի պահեստի, թո-ղեալ նմա զանուն և զնշանսն թագաւորի» (Տակ. Բ. 4): Նոյն-պէս Յովսեպոս.—«Իսկ Վոնոն այն ինչ եկեալ ի Հայս՝ թևակոխէր ի թագաւորութիւն, վասնորոյ առաքէր հրեշտակս ի Հռոմ. այլ Տիբեր որ արհամարհեաց զնա և չկամէր զայրացուցանել զՊար-թևս որ սպառնային տալ պատերազմ ընդ Հռոմայեցիս՝ չառ-

յանձն լինել նմա ձեռնտու։ Այսպէս տեսեալ Վոնոնի զանձն անյոյս ընդունելոյ ինչ ի Հռոմոց, և զի հզօրագոյնն ի ցեղից Հայոց որ բնակէր առ Նպատաւ, ունէր զկողմն Արտաւանայ՝ խոյս ետ առ Սիղանոս կուսակալ Ասորւոց, որ ընկալաւ զնա, զմտաւ ածեալ, զի էր նա ժամանակաւ սնեալ ի Հռոմ» (Յովս. Նախն. պատմ. ԺԸ. 3)։

Յ. Տիբեր կայսր պատեհ առիթ համարեցաւ Արևելից խռովութիւններն՝ հեռացնելու զԴրուսոս Ներոն, որ Գերմանաց յաղթելուն համար կոչեցաւ Գերմանիկոս, զեղբօրորդեգիր, յանձնելով նմա կարգել զՀայս Արտաւանայ ակնկալութենէն։ Գերմանիկոս փեսայացեալ էր Օգոստոսի, առնելով կին զթոռն նորա զԱգրիպպինա, և Տիբեր նախանձու և ատելութեամբ էր ընդ նմա, քանզի երիտասարդն քաջ և առաքինի, զոր ոսոխ իւր կը համարէր Տիբեր՝ էր սիրելի ժողովրդեան։ Ուստի յանձնեց նմա կայսրն Արևելից գործը, յուսալով թէ Գերմանիկոս սպանուէր ի պատերազմին ընդ բարբարոսս և կամ ի նենգութենէ Պիսոնի կուսակալի Ասորւոց, ընդ որում գաղտ ի բանի էր Տիբեր։ Գերմանիկոս չէր անգէտ դաւաճանութեանն նիւթելոյ ընդդէմ իւր, բայց և այնպէս փութացաւ ի Հայս, և գալով յԱրտաշատ պսակեց թագաւոր Հայոց զորդին Պոլեմոնի արքային Պոնտոսի զԶենոն, յոր միտեալ էր ազգն և ցնծութեան աղաղակներով երկիր եպագ իւր նոր թագաւորին, կոչելով զնա ազգային անուամբ Արտաշէս (18)։ Այսպէս ունինք առ Տակիտոսի. «Տիբեր ետես առանց դժկամակութեան զխռովութիւնսն Արևելից, որ տային նմա պատճառանս հանելոյ զԳերմանիկոս ի հին լեգէոնաց իւրոց և մատնել ի նոր նահանգս ի կրկին տագնապ, բախտին և նենգութեան։... Գերմանիկոս էր գիտակ ամենայնի, այլ աճապարեաց նա ի Հայս։ Ի վաղուց անտի հաւատարմութիւն ազգին այնորիկ էր ընդ յերկուանօք և՛ ի պատճառս բուսոյ բարուց բնակչացն, և՛ վասն դրից երկրին, որ շուրջ պատեալ ունի զմեծ մասն նահանգաց մերոց, և միւսով կողմամբն մխի մինչև ի Մարս։ Կացեալ ի մէջ երկուց մեծաց պետութեանց՝ Հայք են գրեթէ միշտ ի կռուի, ընդ Հռոմայեցիս՝ առ ատելութեան, առ նախանձու՝ ընդ Պարթևս։ Յետ բարձման Վոնոնի չունէին նոքա թագաւոր, այլ իղձ ազգին էր ի կողմն Զենոնի։ Իշխանս այս, որդի Պոլեմոնի արքայի Պոնտացւոց, նմանեալ անդստին ի մանկութենէ սովորութեանց և հանդամանաց կենաց Հայոց, որսոց նոցա, խրախութեանց և ամենայն ճաշակաց բարբարոսացն՝ ածեալ էր զԽուրև զաւագանին և զժողովուրդն միաբանամայն։ Գերմանիկոս երթալ յԱրտաշատ քաղաք, և հաւանու-

թեամբ մեծամեծացն, ի ձայն ցնծութեան բազմութեանն՝ ածէ զգլխով նորա զարքունական ապարօշն։ Երկիր եպագ ժողովուրդն տեառն իւրում նորոյ և կոչեաց նմա անուն Արտաշէս, ըստ անուան քաղաքին». (Տակ. Բ. 8.)։ Երբ Հայոց թագաւոր տրուելուն լուրն հասաւ ի Հռոմ՝ ծերակոյտն որոշեց որ Գերմանիկոս (որ Գերմանաց յաղթած էր) հանդերձ եղբարբն Դրուսոսիւ մտնէր յաղթանակաւ ի Հռոմ, և առ մեհենիւն Արեսի կանգնեցան կամարք, և պատկերք նոցա առ նոսին.—«Իբրև ազդ լինէր յայնժամ, թէ Արտաշէս եղաւ յաթոռ թագաւորութեանն Հայոց՝ հրաման վճռոյ ծերակուտին սահմանէր նուէրս Գերմանիկեայ և Դրուսայ, և երկուստեք մեհենին վրէժխնդիրն Արեայ կանգնեցան կամարք յաղթութեան, ուր եդան անդրի պատկերք երկոցունցն (Տակ. Բ. 64)։ Բայց Գերմանիկոս մեռաւ յԱսորիս, թունաւորեալ ի Պիսոնէ (19)։ Զայս կարծիս ունի Սուետոն.—«Գերմանիկոս, հայր Կայիոսի Կեսարու Կաղիգուղայ և որդի Դրուսոսի (եղբօր Տիբերի) և Անտոնիայ, կրտսերագոյն դստերն Անտոնիոսի՝ առաւ յորդեգիրս յիւրմէ հօրեղբօրէն ի Տիբերեայ։ Վարեաց զպաշտօն գանձապետութեան զամս հինգ առաջ քան զտիս՝ յորում թոյլ տուեալ է յօրինաց, և զհիւպատոսութեանն՝ իսկ և իսկ զկնի։ Առաքեալ ի զօրսն ի Գերմանիա՝ կալաւ մեծաւ հաստատութեամբ և բազում խնամով զլեգէոնսն, որոց յառնուլ զզոյժ մահուանն Աւգոստեայ՝ հեստեալ հակառակէին ընդունել կայսր զՏիբեր և նմին Գերմանիկեայ կամէին տալ զտէրութիւնն։ Յաղթեալ նորա թշնամւոյն՝ կատարէր զձաղանսն։ Ապա անուանեալ բդեաշխ երկրորդ անգամ, մինչև առեալ յանձին զպատիւն՝ զոգ իբրև վտարանդի առաքէր խաղաղել զարևելս։ Յետ տալոյ թագաւոր Հայոց և առնելոյ նահանգ զԿապադովկիա՝ մեռանէր յԱնտիոք ամաց իբրև երեսուն և չորից՝ ծիւրական ախտիւ ջերեալ, թունով որպէս կարծի» (Սուետ. ի Կաղիգ. Ա.)։ Զթագաւորելն Զենոնի ի վերայ Հայոց կը թուի ակնարկել «դահեկանն Տիբերի յամէն 19, յորոյ ի միւսում կողմանն կայ պատկեր Յաղթութեան, որ յեցեալ ի գունդ մի կապէ պսակ դափնւոյ» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. 100)։

Տեսնենք այժմ թէ ինչ եղաւ Վոնոն։ Մինչ Հայք զբաղեալ էին իւրեանց նոր թագաւորաւն, որ այնպէս շքով տուաւ նոցա Գերմանիկոսէ՝ Վոնոնի որ էր արգելեալ յԱսորիս՝ հատաւ յոյս թագաւորելոյ Հայոց, մանաւանդ զի Արտաւան կ՚ստիպէր զՀռոմայեցիս հեռացունել զնա յԱսորւոց երկրէն, ուր կը ջանար նա իւր արբանեկաց ձեռօք գրգռել յապստամբութիւն Պարթևաց աւագանին։ Գերմանիկոս փոխեց զՎոնոն ի Կիլիկիա, ի Պոմպէոպոլիս

քաղաք մօտ ի ծովն, ոչ միայն ի շնորհս Արտաւանայ այլեւ հա-
կառակ Պիսոնի իւրոյ թշնամւոյն, որ կամէր սպանել առ իւր զՎո-
նոն, որմէ յաճախ պարգեւ կ'ընդունէր կին Պիսոնի։ Բայց Վոնոն
կաշառելով իւր պահապանները՝ զերծաւ, եւ կը խորհէր ապաւինել
ի Սկիւթացիս օգնութեան համար, սակայն յառաջ քան զելանել
իւր Կիլիկիոյ սահմանէն դուրս՝ սպանուեցաւ (19)։ «Մինչ այս
մինչ այն՝ գային հասանէին հրեշտակք յԱրտաւանայ արքայէ Պար-
թեւաց (առ Գերմանիկոս, 19)։ Յուշ առնէին նմա զուխտ դաշանցն
եւ զբարեկամութիւնս, որ կայէր զերկոսին պետութիւնսն, յաւե-
լեալ թէ Արտաւան ցանկայր նորոգել զայն անձամբ եւ թէ ի
պատիւ Գերմանիկեայ գալոց էր նա մինչեւ ցափն Եփրատայ. խըն-
դրէր սակայն առ ժամն հեռացուցանել զՎոնոն յերկրէն Ասորւոց,
ուստի մօտաւորութեան աղագաւ արբանեակք նորա գրգռէին յապըս-
տամբութիւն զմեծամեծս թագաւորութեանն։.. Վոնոն ածաւ ի Պոմ-
պէօպոլիս, ծովեզերեայ քաղաք Կիլիկեայ. այս եղեւ ի հաճել զմիտս
թագաւորին, միանգամայն ի հեճուկս Պիսոնի, որում սիրելի զանձն
գործեալ էր Վոնոն խնամովքն եւ պարգեւօք, որովք առատանայր
առ կին նորա Պղակինա։.. Զայնու ժամանակաւ Վոնոն որ կայրն
փարանգի ի Կիլիկիա, որպէս պատմեցին՝ կաշառեալ զպահա-
պանսն հնարէր անկանել ի Հայս, անտի առ յԱղուանս եւ ի Հե-
նիոքս, հուսկ ուրեմն առ արքայն Սկիւթացւոց յիւր ազգական։
Պատճառանօք որսոյ հեռանայր ի ծովէն եւ լինէր միջամուխ յան-
տառս, ապա արշաւեալ ամենայն զօրութեամբ երիվարին՝ հասա-
նէր ի Պիւրամոս գետ։ Իբրեւ զգաստ լինէր բնակչացն փախուստ
նորա՝ հատանէին զկամուրջսն, եւ գետն չէ անցանելի։ Լեալ ձեր-
բակալ անդ առ եզերբն ի Վիբեայ Փրոնտոնէ, հրամանատարէ հե-
ծելազօրուն՝ Վոնոն արկաւ ի շղթայս։ Յետ սակաւ միոյ ումն ի
ձիւորաց անտի Ռեմմիոս անուն, որ պահէր զարքայ յառաջ քան
զփախուստն՝ անցուցանէր, որպէս թէ ցասուցեալ իմն, զսուսեր
իւր ընդ անձն նորա։ Սակայն յայտնի եղեւ, թէ էր նա կամակից
փախստեան նորա, եւ սպան զնա զի մի ի վեր ելցէ բանն» (Տակ.
Բ. 58)։

4. Այս միջոցին Արտաշէս (Զենոն) զոր կացոյց Գերմանիկոս
թագաւոր Հայոց՝ մեռած էր, եւ Արտաւան Գ. արքայ Պարթեւաց,
որ ի վաղուց կը խորհէր կալել զՀայս ընդ իւրում ցեղին, տես-
նելով զՏիբեր ծերացեալ՝ համարձակեցաւ կացուցանել զիւր երէց
որդին զԱրշակ թագաւոր Հայոց (34). բայց Տիբեր աճապարեց
ղրկել այլ թագաւոր փոխանակ Արտաւանայ, զորմէ չէին գոհ Պար-
թեւք, եւ Ասորւոց կուսակալին ձեռօք թագաւորեցուցանել Հայոց՝

Վրաց թագաւորին Փարսմանայ եղբայրն Միհրդատ (35)։ Այսպէս ունի Դիոն (ԺԸ. 26). «Զայնու ժամանակաւ Արտաւան Պարթեւ, յետ մահուն Արտաշիսի (արքայի Հայոց—Զենոն), տայր զՀայս որդւոյ իւրում Արշակայ, և զի ոչ պատուհասեաց զնա Տիբեր՝ լինէր ձեռներէց ի Կապադովկիա, և ընդ Պարթեւս իսկ գնայր ամբարտաւանութեամբ, մինչև ոմանց (յաւագաց անտի) վտարանջեալ առաքել հրեշտակս առ Տիբեր՝ խնդրել ի նմանէ թագաւոր ի պատանդից անտի։ Տիբեր առաքէր նախ զՀրահատ որդի Հրահատայ Դ, յետոյ իբրև մեռանէր սա ի ճանապարհին՝ զՏրդատ ոմն որ էր նոյնպէս յարքունի տոհմէ։ Առ դիւրացուցանելոյ նմա առնուլ զթագաւորութիւն իւր՝ գրէր առ Միհրդատ Վիր յարձակել ի Հայս, որպէս զի ստիպեալ Արտաւանայ օգնել որդւոյն՝ ելցէ յիւրմէ երկրէն (ի Կապադովկիայ). և եղև իսկ այնպէս։ Բայց Տրդատ ոչ ժամանեաց թագաւորել ընդ երկար, քանզի Արտաւանայ գտեալ օգնութիւն ի Սկիւթացւոց անտի՝ մարթացաւ վանել զնա։ Այսպիսի էին իրք Պարթևաց։ Իսկ ի Հայս Միհրդատ, որդի, որպէս կարծի Միհրդատայ Վրի և եղբայր Փարսմանայ, որ յետ նորա տիրեաց Վրաց՝ կալաւ զերկիրն»։ Յայտնագոյն ևս Տակիտոս մերձաւոր ժամանակաւ, որ ունի այսպէս. «Արտաւան, հաւատարիմ առ Հռոմայեցիս և արդար առ իւրսն, ցորչափ երկնչէր ի Գերմանիկեայ՝ ոչինչ յապաղեաց յետոյ խրոխտալ ընդ մերում պետութեան և բռնանալ ի վերայ իւրոցն։ Պատերազմունք տուեալք յաջողութեամբ ընդ ազգս արուարձականս՝ փքացուցին զնա ամբարտաւանութեամբ. արհամարհէր նա զծերութիւնն Տիբերեայ իբրև անզէն և տկար, և ակն եդեալ էր ի Հայս։ Իբրև կորոյս երկիրս այս զթագաւոր իւր զԱրտաշէս՝ Արտաւան կացոյց անդ թագաւոր զերէցն յորդւոց անտի իւրոց որ Արշակն կոչէր, և յաւելեալ ի յափշտակութիւն անդր թշնամանս՝ առաքէր խնդրել զգանձսն թողեալս ի Վոնոնէ ի Կիլիկիա և յԱսորիս։ Նոյնժամայն խօսէր և զհին սահմանացն Պարսից և Մակեդոնացւոց և սպառնայր մեծաժպրհութեամբ՝ առնուլ յետս զոր ինչ ունէին Կիւրոս և Աղեքսանդրոս։ Այլ Տիբեր տայ ոսոխ Արտաւանայ զՏրդատ ոմն իշխան ի նմին արենէ, և զՄիհրդատ ոմն Վիր ընտրէ ունել զՀայս, հաշտեցուցեալ զնա ընդ Փարսմանայ եղբօր նորա որ թագաւորէր ի Վիրս, ժառանգութիւն ազգատոհմին, և առնէր յանձն Վիտեղեայ (կուսակալի Ասորւոց) հոկել խռովութեանց որ մօտալուտ ի վերայ կային յարևելս»։

Այսպէս Հռոմ զխորհուրդն Արտաւանայ միացուցանել զարևելս ընդ իշխանութեամբ Պահլաւ ցեղին՝ կը հանէ ի դերև առ ժամն,

զՏրդատ յարուցանելով Հակառակ Արտաւանայ ի Պարթեւս, զՀայս տալով վեր իշխանի:

Միհրդատ զոր Տիբեր կացոյց ի վերայ Հայոց փոխանակ Արշակայ՝ կու տայ դաւով սպաննել զԱրշակ (35) և ինքն վրացի զօրօք գալով կ'առնու զԱրտաշատ: Արտաւան զայրացեալ կը յանձնէ որդւոյ իւրում Որոդայ՝ խնդրել զվրէժ մահուն Արշակայ, վանել զՎիրս և ունել միւսանգամ զՀայաստան: Կը ծագի ի մէջ Պարթևաց և Վրաց այս պատճառաւ պատերազմ մեծ, զոր երկար կը նկարագրէ Տակիտոս, բայց ի պարտութիւն կը մատնին Պարթեւք, և Արտաւան կը հրաժարի առ ժամն ի Հայաստանէ: Ահա բանք Տակիտոսի.

«Միհրդատ (զոր կացոյցն Տիբեր ի վերայ Հայոց) մատուցեալ զառաջինն առ Փարսման՝ հաւանեցուցանէր զնա ձեռն տալ նմա նենգաւ և բռնութեամբ: Գտանէին սոքա որս անօրէնս, որ բազում ոսկւով հրապուրեցին զծառայս Արշակայ լինել տիրասպան, և ինքեանք բազմաձեռն գնդաւ արշաւէին ի Հայս և առնուին զԱրտաշատ քաղաք: Առ այս գոյժ՝ Արտաւան յանձն առնէր զվրէժ քինուն որդւոյ իւրում Որոդայ, տուեալ նմա զօրս՝ առաքէր գնել վարձկանս արտաքոյ: Փարսման ևս մտանէ ի դաշն ընդ Աղուանս և կոչէ զՍարմատս, որոց իշխանք առեալ վարձս երկուստեք՝ վաճառէին զանձինս, ըստ սովորութեան ազգին այնորիկ՝ երկոց հակառակորդաց: Բայց Վիրք, տեարք երկրին, բանային զդրունս Կասպից և ողողէին զՀայս Սարմատօքն իւրեանց: Իսկ որ առ Պարթեւսն գային՝ արգելան դիւրաւ, զի թշնամին ունէր զամենայն անցս. մին միայն, որ մնայր ի մէջ ծովուն և վերջին լերանց Աղուանից՝ էր անկոխ անգնաց սակս ամարայնոյն, զի յայնժամ հողմք տարեւորք ողողեն զափունսն զայնոսիկ: Ի ձմերան և եթ, յորժամ հողմն հարաւոյ նահանջիցէ զջուրսն և տայցէ ծովուն մտանել յիւր սահման՝ ի վեր երեւի աւազն: Որոդ մնայր այսպէս անօգնական: Իսկ Փարսմանայ յեցեալ յիւր օգնականսն՝ յառաջ մատուցանէ զճակատն, և տեսեալ զի խուսէր Որոդ՝ ձայն տայ, նախատէնս կարդայ զօրաց նորա, կոտորէ զհամբարապանսն. բազում անգամ պատէ զնա յառաջապահօքն և ունի իբրև ի պաշարման: Հուսկ ուրեմն Պարթեւք, որ չեն սովոր ժոյժ ունել թշնամանաց՝ խռնին զթագաւորաւն և խնդրեն պատերազմ: Բովանդակ զօրութիւն նոցա էր յայրուձին: Իսկ Փարսման ունէր և հետեւակս. քանզի Վիրք և Աղուանք որ լեռնաբնակք են՝ լաւ ևս տոկան խստամբերութեան և դժնդակ աշխատութեան: Ասի թէ են նոքա ծննդեամբ ի Թեսաղացւոց անտի, որ զհետ չոքան Յասոնեայ: Երկոքին բանակքն ճա-

կոտէին։ Պարթեւն գովէր առ զօրս իւր զազնուականութիւն Արշակունեաց. զ՞ինչ կարող իցեն, ասէ, ընդդէմ ազգի որ տէրն է արեւելից՝ Վիրն առանց փառաւորութեան և վարձկանք նորա անարգք։ Իսկ Փարսման յիշեցուցանէր իւրոցն, թէ չեն երբէք մտեալ ընդ լծով Պարթեւաց, թէ որչափ մեծ իցէ գործն յոր ձեռն արկեալ ուրուք իցէ՝ այնչափ փառս յաճախիցէ յաղթողին, իսկ ամօթ և տագնապ՝ վատին որ փախիցէ։ Եւ ցուցանէր նոցա, յիւրմէ կուսէ՝ գունդս գունդս սուսերաւորաց, ի կողմանէ թշնամւոյն՝ Մարս վառեալս ոսկւով և արծաթով, աստ՝ զօրականք, անդ՝ աւար ի կողոպուտ։ Ձէր սակայն բարբառ և եթ զօրավարին որ քաջալերէր զՍարմատս։ Վառէին նոքա այր զընկեր՝ ոչ սկիզբն առնել կռուոյն նետաձիգ լինելով ի թշնամիս անդր, այլ յարձակել և անկանել յանկարծ ի վերայ նոցա։ Մարտն մատուցանէր տեսիլս ազգի ազգիս։ Պարթեւն, վարժ ի մտանել զհետ և յընկրկել յետս՝ եղանէ ի ճակատէն, ի բացուստ կշռէ զհարուածն։ Սարմատք, թողեալ զաղեղունս իւրեանց որ ոչ կարի հեռի ձգեն զնետն՝ ընթանան նիզակ յառաջ և սուսեր ի ձեռն։ Մերթ, որպէս ի կռուի հեծելոց՝ էր տեսանել յարձակումն և այսրէն դարձ, մերթ խառնուրդ իմն, ուր զէնք ընդ միմեանս բախիցեն և այր զայր մղիցէ։ Հուսկ ուրեմն Աղուանք և Վիրք բուռն հարեալք զախոյանիցն՝ զգետնեն զնոսա և արկանեն ի կրկին տագնապ—բազուկ հեծելոյն ի վերուստ իջուցանէ հարուածս և հետեւակն ի ներքուստ ի մօտոյ։ Փարսման և Որոդ ընթանային այսր անդր, օգնել կամ տալ քաջալերս։ Դիւրին էր ճանաչել զնոսա ի նշանաց անտի պատուոյ նոցա. աղաղակ նոցա և նիզակքն և նժոյգք հանդիպէին միմեանց։ Փարսման որ էր ուժգնագոյն՝ հար ճեղքեաց զսաղաւարտն Որոդայ, այլ տարեալ յերիվարէն՝ չկարաց կրկնել, և իսկոյն պատէին զՈրոդաւ քաջագոյնք յանձնապահաց նորա։ Սակայն շշունջն որ տարածեցաւ թէ մեռաւ Որոդ՝ զարհուրեցոյց զՊարթեւս որ ետուն զյաղթութիւնն։

Արտաւան ի վրէժ այսր պարտութեան՝ խաղայր համօրէն զօրութեամբ Արեաց։ Վիրք որ քաջ տեղեակ էին վայրացն՝ յաղթէին զայս նուագ ևս. այլ Արտաւան՝ չկասէր թերեւս ի գործոյն, եթէ Վիտեղեայ գումարեալ զլեգէոնսն ի մի վայր և հանեալ համբաւ թէ ունիցի արշաւել ի Միջագետս՝ չէր արկեալ նմա ահ ի զինուց Հռոմոց»։

Այսպէս Միհրդատ Վիր կը հաստատուի առ ժամն ի թագաւորութեան Հայոց. բայց մեք մատիցուք ի կարգ պատմութեանն։ Դժբախտութեամբ Է, Ը, Թ և Ժ. դպրութիւնք Տակիտոսի կորուսեալ են, յորս կար անտարակոյս բազում ինչ ոչ զՊարթեւաց մի-

այն, այլև զՀայոց, մանաւանդ զՄիհրդատայ Վրէ, զորոյ պատմութիւնն պիտի տեսնենք այժմ։ Ռ. գլխէն ԺԱ. դպրութեան Տակիտոսի կը տեսնուի սակայն, թէ յաջորդն Տիբերի Կաղիգուղա, չենք գիտեր ինչ պատճառաւ, այլ հաւանականապէս ի շնորհուկս Արտաւանայ՝ հանեց զՄիհրդատ թագաւորութենէն (37), և Պարթևք, ինչպէս կ'երևի՝ կալան (37—41) միւսանգամ զՀայս, ոչ իբրև թագաւորութիւն, այլ իբրև նահանգ ընդ կուսակալաւ։ Բայց՝ յաջորդն Կաղիգուղայ Կղաւդիոս կայսր (41—53) արձակեց զՄիհրդատ ի ժամանակին, զի Արտաւան սպանուած էր (44) և կը թագաւորէին որդիք նորա Վարդան (Արշակ Ի.) և Գոտարզ (Արշակ ԻԱ.), իրարմէ յափշտակելով զթագաւորութիւնն։

Մինչ Պարթևք զբաղեալ էին այս խռովութիւններով (44—50)՝ Միհրդատ Վիր, արձակեալն ի Կղաւդեայ՝ կուգայ ի Հայս Հռոմայեցի զօրօք, ունենալով օգնական զեղբայր իւր զՓարսման։ Մինչ Հռոմայեցի զօրն, վարժ ի պաշարումն, կ'առնոյր մի ըստ միոջէ բերդերը՝ Վիրք կը աւերէին դաշտակողմանց։ Հայք չդրին դէմ, քանզի մարզպան աշխարհին ի կողմանէ Պարթևաց՝ չկարաց զդէմ ունել։ Թէպէտ Կոտիս թագաւոր Փոքուն Հայոց փորձեց արգելուլ զՎիրս, բայց հրամանաւ Կղաւդեայ ստիպուեցաւ կենալ յետ. Նոյնպէս Վարդան, որ պատրաստուեցաւ առնուլ միւսանգամ զՀայաստան, բայց արգելուեցաւ ի սպառնալեաց Հռոմայեցւոց։ Այսպէս զօրացաւ դարձեալ Հռոմայեցւոց կողմը, և Միհրդատ կալաւ անարգել զՀայս։

Զայս ամենայնէ կը խօսի Տակիտոս երկայնագոյնս.—

«Զայնու ժամանակաւ Միհրդատ արքայ Հայոց որ ածաւ առաջի Կղաւդեայ, որպէս պատմեցաք՝ դարձաւ ի թագաւորութիւն իւր խրատուն Կղաւդեայ և վստահացեալ յօգնականութիւն Փարսմանայ։ Թագաւորս այս Վրաց և եղբայր Միհրդատայ ազդ առնէր (ի Հռոմայեցիս անդր), եթէ Պարթևք պառակտեալք յընտրութիւն թագաւորի՝ չունէին ամենևին փոյթ զայլոց իրաց։

Միհրդատայ Վրի իմացեալ զայս ամենայն՝ գտեալ պարապ յարձակէր ի Հայս, զորս զլարձունան և զբերդս նուաճէր Հռոմէական զօրն, մինչ վրացի գունդք աւերէին քանդէին զտափարակսն. քանզի Հայք չեղեն դիմակալ, յետ ճակատ տուեալ ի պարտութիւն մատնելոյ մարզպանին իւրեանց Դեմոնակայ։ Զյաջողութիւնն Միհրդատայ յամեցոյց սակաւիկ մի Կոտիս արքայ Փոքուն Հայոց, առ որ եկեալ յարեալ էին բազումք ի մեծամեծաց (Հայոց)։ Սակայն հրովարտակ մի ի Կղաւդեայ բաւական եղև ունել զնա յետս, և

երկիրն նուաճեցաւ ընդ Միհրդատաւ, որ եցոյց խստութիւն՝ զոր չէր արժան ի սկզբան թագաւորութեանն»։

Միհրդատ, ինչպէս տեսանք՝ զօրացաւ միւսանգամ ի Հայս, մինչ յետ մահուն Արտաւանայ կը թագաւորէին որդիք կամ եղբարք նորա Վարդան և Գոտարզ (Արշակ Ի. և Արշակ ԻԱ. 44—50)։ Յետ մահուն Գոտարզայ՝ ըստ Տակիտոսի «Վոնոն Բ. (Արշակ ԻԲ.) որ էր կուսակալ Մարաց յաջորդականութենէ նորա՝ կոչեցաւ յաթոռն։ Ոչ յաջողութեամբ ինչ և ոչ չաջողութեամբ լինէր հռչակաւոր անուն նորոյ թագաւորին։ Ժամանակ թագաւորութեան նորա եղև կարճ (կը թուի մեռեալ ի նմին ամի 50) և առանց փառաց, և թագն Պարթևաց տուաւ յետ նորա որդւոյ նորա Վաղարշու»։ Յովսեպոս չգիտեր զՎոնոն, այլ Գոտարզայ, զոր կը դնէ սպանուած դաւով՝ կը պատմէ յաջորդեալ զՎաղարշ, զորմէ ասէ թէ էր եղբայր Գոտարզայ.—«Պարթևք սպանին զՎարդան և եդին փոխանակ նորա զեղբայր նորա զԳոտարզ, որ նոյնպէս յետ սակաւուց սպանաւ դաւով, և Վաղարշ (Արշակ ԻԳ.) եղբայր Գոտարզայ պայազատէ զնա» (Յովս. Նախն. պատմ. Ի. Բ.)։ Այսպէս յետ Արտաւանայ՝ երևելին ի թագաւորս Պարթևաց Վաղարշ, Պահլաւ ցեղէ, կ'առնու թագաւորութիւնը։

5. Վաղարշու երկայն թագաւորութիւնը (50—90) եղաւ նշանաւոր Հայաստանի համար, որոյ գահուն վրայ նստաւ նոր թագաւոր Պահլաւ ցեղէ, որ տևեց, ինչպէս արդէն յիշուեցաւ՝ գրեթէ անընդհատ մինչև ի վախճան Հայ Արշակունի հարստութեան։

Տակիտոս կու տայ մեզ մեր պատմութեան այս կարևոր մասն ընդարձակ և այնպէս մանր, քան զոր աւելին չէր կարող տալ և ոչ մի ազգային պատմագիր, եթէ ունենայինք։ Նենգութիւն Վրաց, մեքենաւորութիւն Հռոմայեցւոց և փառասիրութիւն Վաղարշու բերին երկար պատերազմ, որ տուաւ վերջ Հայաստանի իբր 35-ամեայ անիշխանութեան, տալով մեզ մեր հարստութեանց (թագաւորական տոհմերուն) պատուականագոյնը, որոյ ժամանակ եղան ինչ որ Հայք ունին արժանաւոր ի պատմութեան։ Ինչպէս արդէն յիշուեցաւ՝ մինչ Միհրդատ Վիր, եղբայր Փարսմանայ թագաւորին Վրաց, կը թագաւորէր ի Հայս հռոմէական ազդեցութեամբ՝ Վաղարշ Ա. յիշելով իւր նախնւոյն Արտաւանայ Գ-ի խորհուրդը,—Հայաստան կապել իւր ցեղին հետ (տալով զորդին իւր զԱրշակ՝ թագաւոր Հայոց և այսու բերելով այն ձախող պատերազմը, որ յիշուեցաւ ի վերոյ),—յետ տալոյ Մարաց (Ատրպատականի) թագաւորութիւնը իւր երէց եղբօր Բակրոյ՝ Հայոցը կը սահմանէ իւր կրտսեր եղբօր Տրդատայ, որ և Տիրիթ (51)։ Մինչ այս ուրուագիծը

կը պատրաստուէր ի Պարթեւս՝ ուրիշ մեքենայ սկսաւ լարուիլ ի Վիրս։ Զձեռնարկելն Վաղարշու ի կապել զՀայս իւր ցեղին հետ մշտնջենապէս՝ կու տայ մեզ նախ Յովսեպոս.—«Պարթեւք սպանեալ զՎարդան՝ եդին փոխանակ նորա զԳոտարզ զեղբայր նորա, որ նոյնպէս յետ սակաւուց սպանաւ դաւով, և պայազատէր զնա Վաղարշ եղբայր Գոտարզայ։ Թագաւորս այս, որոյ էին եղբարք երկու ի նմին հօրէ՝ տայր միումն, Բակրոյ, որ իմաստնագոյնն էր՝ զթագաւորութիւնն Մարաց, և Տրդատայ, որ կրտսերագոյնն էր՝ զթագաւորութիւնն Հայոց» (Յովս. Նախն. պատմ. Ի. 2)։

Թէպէտ ծանր է մեզ, որ այլ ազգ ուսած ենք մեր պատմութիւնը՝ կը սովրուինք սակայն ստուգագոյն պատմութեան առջեւ զարմանալ, թէ ինչ տկարութեան, մանաւանդ թէ անկածութեան հասած էին յայնժամ Հայք, մինչեւ թողուլ այնպիսի պատուական թագաւորութիւն մի նշաւակ բախտախնդիրներու փառասիրութեան։ Զիարդ և իցէ՝ տեսնենք պատմութիւնը։

6. Փարսման արքայ Վրաց տեսնելով զորդին իւր Հռադամիստ անուն, հզօր և ժիր, ցանկացող թագաւորութեանն Վրաց՝ առ առնել անկասկած զիշխանութիւն իւր, թերեւս և զկեանս, փառասէր որդւոյն մեքենաւորութեանց դէմ՝ կը դրդէ զնա ընդդէմ հօրեղբօր իւրոյ Միհրդատայ, որ կը թագաւորէր ի Հայս։ Հռադամիստ գալով առ Միհրդատ իբր բարեկամ, մանաւանդ թէ ազգական՝ կը շահի յիւր կողմն Հայոց նախարարներէն զոմանս, և ապա վրացի զօրօք կու գայ յանկարծ Միհրդատայ վրայ, որ շփոթելով այս անակնկալ յարձակմանէն՝ կ'ամրանայ Գառնոյ բերդը, որ էր ի ձեռս Հռոմայեցի պահանորդաց ընդ հրամանատարութեամբ Պողիոնի և Կասպերիոսի հարիւրապետաց։ Հռադամիստ կը կաշառէ զՊողիոն, և Միհրդատ մատնուելով ի ձեռս Հռադամիստայ՝ կ'սպանուի մեղմեխանօք կանամբք և որդւովք հանդերձ։ Կասպերիոս որ հակառակ էր այս մատնութեան՝ շատ ջանաց, բայց չկարաց զառաջն առնուլ մատնութեանն։ Ոչ Կասպերիոս միայն, այլեւ ոչ Կուադրատոս կուսակալ Ասորւոց կարացին հեռացնել զՎիրս Հայաստանէ, քանզի Կապադովկիոյ կուսակալն Պեղիգնոս կեցաւ պաշտպան, և թագաւորեց Հռադամիստ, հայ անուամբ Երուանդ (45—53)։

Այս միջոցին Տիրիթ կամ Տրդատ (Արտաշէս Բ. Խորենացւոյն) կը մտնէ ի Հայս պարթեւ զօրօք (51), բայց ձմերան խստութեան պատճառաւ կ'արգելուի Հայաստանի նուաճումը, և Հռադամիստ որ իւր վրացիներով խոյս տուած էր՝ կը դառնայ. բայց առաւել քան զառաջինն բռնանալով՝ ազատելու համար դառնացեալ ժողովրդեան ցասմանէն՝ կը փախչի (53), ի ճանապարհին վիրաւորելով

զկին իւր Զենոբիա՝ զդուստր Միհրդատայ, որպէս զի չլինար նա ի ձեռս թշնամւոյն, թէպէտ զարմանալի իմն դիպուածով ազատելով ի մահուանէ՝ կը տարուի տիկինն առ Տրդատ, և կը պահուի պատուով մինչև ի մահ իւր։ Տրդատ կը գրաւէ զՀայս (53)։ Բայց երբ լուր Հռադամիստայ մերժուելուն և Պարթևաց գրաւելուն զՀայաստան կը հասնի ի Հռոմ՝ որովհետև այս փոփոխութիւն չեղաւ հաճութեամբ Հռոմայեցւոց՝ Ներոն կայսեր (54—68) հրամանաւ կու գայ յարևելս Դոմիտիոս Կորբուղոն, այր անուանի, հրատարակել պատերազմ ընդ Պարթևս, եթէ չառնուն նոքա յանձն թողուլ զՀայս, և Վաղարշէ կը խնդրուի տալ պատանդս Հռոմայեցւոց ըստ սովորութեան իւրոց նախնեաց։ Պատանդք կը տրուին (55), և Կորբուղոն և Կուադրատոս բդեաշխք այս գործին համար կը պսակուին դափնւով հրամանաւ Ներոնի։ Վաղարշ յանձն չառնուր սակայն հանել զՏրդատ, և կը հրատարակուի պատերազմն։ Զմերան սաստկութեան պատճառաւ կ'երկարի պատերազմն մինչև գարուն։ Տրդատ խորագիտութեամբ կը յոգնեցունէ զՀռոմայեցիս առանց յայտնապէս ճակատ տալոյ. բայց դրացի ազգեր, դաշնակիցք Հռոմայեցւոց՝ ուստեք ուստեք յարձակելով կ'աւերեն զերկիրն (55—57)։ Կորբուղոն խրատ կու տայ Տրդատայ՝ խնդրել թագաւորութիւնն ի Հռոմայեցւոց իբրև հպատակ կամ հարկատու, և հաստատուիլ յիշխանութեան։ Որովհետև Տրդատ կը դանդաղէր երթալ առ Կորբուղոն այս նպատակաւ առ ահի կամ առ կասկածանաց Հռոմայեցիք սկսան պաշարել բերդերը։ Կէսք առնուեցան, այլք եղան անձնատուր։ Յայնժամ Կորբուղոն անկասկած և առանց ընդդիմութեան անցնելով զԵփրատ՝ կու գայ ի վերայ Արտաշատու։ Կ'առնուի քաղաքն և լինի այրեցուեր (58)։ Այս բաներուն համար Հռոմ կը մատուցուին պաղատանք, և Ներոն կու տայ հարկանել դահեկան ի յիշատակ եղելոցն։ Կորբուղոն կը դիմէ ի վերայ Տիգրանակերտի, անցնելով ընդ Տարօն։ Տիգրանակերտցիք կը բանան դուռները, միջնաբերդն միայն կ'առնուի յարձակմամբ։ Թէպէտ Տրդատ որ խոյս տուած էր ի Մարս, փորձեց մի անգամ ևս վանել զՀռոմայեցիս՝ բայց չկարացեալ մեկնեցաւ յուսահատ։ Երկիրը մնաց յիշխանութեան այս վերջնոյ, որ դրին Հայոց վրայ թագաւոր Տիգրան զոմն, թոռն Արքեղայոսի արքային Կապադովկիոյ՝ զոր Հայք, թէպէտ ոչ ամենեքին, ձանձրացեալ այնչափ աւերումներէ, ընդունելով ևս զապիկարութիւնն Պարթևաց՝ հաճեցան ընդունել (59)։ Ի յիշատակ այս յաղթութեան ևս կան դահեկանք Ներոնի։ Դահեկան մի յամէն 58, արծաթի, ի միւս կողման գիր Հայաստան առեալ կամ նուաճեալ, և պատկեր Յաղթութեան, պսակ

յաջոյ ձեռին և արմաւենի. և դարձեալ այլ դահեկան, ուր Յաղթութիւնը կը գրէ գիր վահանի վրայ: Դարձեալ ուրիշ դահեկանք ոսկիք և արծաթիք 61, 62, 63 ամին. ի միում կողման գլուխ Ներոնի, ի միւսումն պսակ ի կաղնւոյ կամ Դեմետր չաստուած բերոց երկրի, յաջումն հասկ և ի ձախումն ջահ. և դարձեալ Զինուոր՝ սուր ի ձեռին աջոյ և նիզակ ի ձախումն, և կը կոխէ աջոյ ոտամբ մարդոյ գլուխ և կամ սաղաւարտ մի (Գաթըրճ. Պատ. Տիեզ. Հտ. Բ. էջ 114, 116):

Բայց Վաղարշ, որ ցայնժամ մտած չէր ի կռիւ՝ խորհրդով աւագանւոյն Պարթևաց տուաւ զօրս ի ձեռս Տրդատայ, և ինքն ևս կը պատրաստուէր խաղալ բոլոր զօրութեամբ Պարթևաց: Կորբուղոն որ կարգեալ էր կուսակալ Ասորւոց, ղրկելով զօր յօգնութիւն նոր թագաւորին Տիգրանայ՝ ինք կը մնար զափամբ Եփրատայ ընդդէմ Վաղարշու: Տրդատ կը պաշարէ զՏիգրանակերտ, բայց կ'ընկրկի յետս: Կորբուղոն կ'սպառնայ Վաղարշու, որ կը ղրկէ պատգամաւորներ ի Հռոմ խնդրել զՀայաստան, և կը դառնայ յետս, և Հռոմայեցիք կը թողուն զՏիգրանակերտ (61): Հռոմ կը մերժէ պատգամաւորութիւնը, և կ'սկսի պատերազմն զօրավարութեամբ Կեսեննիոսի Պետոսի առն ամբարտաւանի, որ անդադար կը գրէր ի Հռոմ՝ որպէս թէ ամենայն ինչ վճարեցաւ, մինչ վճարեալ էր և ոչինչ: Կորբուղոն մեծ հանճարով և քաջութեամբ չթողուց Պարթևաց՝ անցնելով զԵփրատ մտանել յԱսորիս, մինչև ստիպուիլ Պարթևաց երթալ ի Հայս ընդդէմ Պետոսի, որ ի նեղ անկեալ՝ կը գրէր ստէպ առ Կորբուղոն գալ յօգնականութիւն ընդդէմ Պարթևաց: Մինչ Կորբուղոն կը պատրաստուէր՝ Պետոս կը ստիպուի խօսել ի հաշտութիւն սա պայմաններով՝ որ Պարթևք թողուն ազատ հռոմայեցի լեգէոններն՝ զորս պաշարած էին, իսկ հռոմէական զօրն ելլէ Հայաստանէ, և Վաղարշու թոյլ տրուի ղրկել պատգամաւորներ ի Հռոմ: Հռոմայեցիք ամօթով կը մեկնին, գերին և աւարը կ'առնուի ի նոցանէ: Կորբուղոն կը հանդիպի փախստէից, Պետոս խորհուրդ կու տայ Կորբուղոնի նորոգել պատերազմը, և ի չառնուլ նորա յանձն՝ Պետոս կը մեկնի ի Կապադովկիա: Յետ բանագնացութեան որ եղաւ Կորբուղոնի ընդ Վաղարշու՝ կ'որոշուի (62), որ Հռոմայեցիք թողուն զՀայս ազատ և Պարթևք քակեն ամրութիւններն, զորս շինած էին յայնկոյս Եփրատայ: Մինչ ծերակոյտն ի Հռոմ կը համարէր զՊետոս և զԿորբուղոն յաղթող, և ուրախութեան տօներ կը կատարուէին՝ հրեշտակք Վաղարշու կը հասնին ի Հռոմ (63) խնդրել զՀայաստան, զոր արդէն զինու զօրութեամբ առած էին. կ'իմացուի Հռոմայեցւոց պար-

տութիւնը և կ'որոշուի նորոգել պատերազմը դարձեալ զօրավարութեամբ Կորբուղոնի։ Պետոս կը կոչուի ի Հռոմ և հազիւ կ'ազատի Ներոնի բարկութենէն։ Բայց այս վրդովումն Հռոմայեցւոց՝ ի ցոյց միայն էր. բաւական էր նոցա, եթէ Պարթևք խնդրէին զՀայաստան ի Հռոմայ։ Բայց և այնպէս Կորբուղոն սպառնալեօք խրատ կու տայ Վաղարշու, որ Տրդատ խնդրէր Հայոց թագաւորութիւնն պարգև ի Հռոմայ և Պարթևք մնային բարեկամ և դաշնակից Հռոմայեցւոց։ Վաղարշ որ ոչ կամէր միւսանգամ բռնուիլ ի պատերազմ՝ կ'առնու յանձն։ Կորբուղոն կը ղրկէ երկու երևելի մարդիկ առ Տրդատ յապահովութիւն, և Տրդատ կ'երթայ առ Կորբուղոն, որ կ'ընդունի զնա մեծ պատուով։ Տրդատ յետ յայտ առնելոյ Հռոմայեցւոց զօրավարին, թէ կ'երթայ առ կայսր խնդրել թագաւորութիւնը ոչ իբրև պարտեալ, այլ միայն ի պատիւ կայսեր՝ հանելով թագաւորական նշանը կը դնէ կայսեր պատկերին առջև, և ապա որպէս թէ առնլով ի ձեռանէ կայսեր՝ կը դնէ ի գլուխ իւր։ Կ'ընդունուի այս պայմանն երկուստեք համբուրիւ թագաւորին (Տրդատայ) և զօրավարին։ Տրդատ յետ երթալոյ տեսնել զեղբարս իւր, զԲակուր ի Մարս, և զՎաղարշ յԵկբատանս, և առնլոյ ի նոցանէ խրատ (64) չառնուլ ինչ յանձն հակառակ պատուոյ Պահլաւական անուան՝ կ'երթայ մեծ բազմութեամբ և շքով առ Ներոն ի Նէապոլիս և ապա ի Հռոմ, ուր մեծ հանդիսիւ կը պսակուի ի նմին իսկ Ներոնէ։ Ի յիշատակ այսր ամենայնի՝ Ներոն կը կոչուի զօրավար (imperator) և կը պսակուի դափնւով ի Կապիտոլիոն։ Տրդատ մեծամեծ պարգևներով և բազմութեամբ արուեստագիտաց ի շինութիւն Արտաշատու՝ կը դառնայ ի Հայս (66)։ Զայս փառաւոր պատմութիւն, որպէս տեսցուք՝ մանր պարագաներով կուտայ մեզ Տակիտոս, որոյ բանք ահաւասիկ.—

«Ի նմին ամի յարեաւ պատերազմ ի մէջ Հայոց և Վրաց, և ապա տարածեցաւ ի Հռոմայեցիս և ի Պարթևս, և ետ պատճառս մեծամեծ յուզմանց ի մէջ նոցա։ Վաղարշ, ծնեալ ի յոյն հարճէ՝ թագաւորէր հաւանութեամբ իւրոցն եղբարց՝ ի վերայ ազգին Պարթևաց։ Փարսման ունէր զՎիրս ի նախնեաց անտի, և Միհրդատ եղբայր նորա պարտէր պաշտպանութեանն Հռոմայեցւոց զաթոռ թագաւորութեանն Հայոց։ Փարսմանայ էր որդի մի Հռադամիստ անուն, վայելուչ հասակաւ, ուժով մարմնոյն անհնարին, յաջողակ յամենայն հրահանգս իւրոյ երկրին և անուանի մինչև յազգս արուարձանեայս։ Պատանին դժկամակէր խմն. զի ծերութիւն հօրն պահէր երկար զփոքր թագաւորութիւնն Վրաց, և կրկնէր զայս այնպէս յաճախ և այնպէս յախուռն՝ մինչև յայտնի լինել թէ ցան-

կայր իշխանութեան հօրն։ Երկուցեալ Փարսմանայ, թէ պատանին փառասէր, անժոյժ և սիրելի ժողովրդեան գուցէ դաւ ինչ նիւթեսցէ նմա որ ի խոր ծերութիւն հասեալ էր՝ այլ իմն յոյս առաջի դնէր նմա, այն է տիրել Հայոց աշխարհին։ Իմ, ասէր, կորզեալ է զայն ի Պարթևաց և տուեալ Միհրդատայ, բայց և այնպէս զգոյշ լինել պարտ է ի վարելոյ բռնութեամբ. Նենգութիւն ապահովագոյն է, և պարտ է յանկարծ ըմբռնել զնա առանց տալոյ նմա ժամանակ զգուշանալոյ անձին։ Յայնժամ Հռադամիստայ պատճառեալ, թէ գժտեալ իցէ ընդ հօրն և տեղի տուեալ ատելութեան մօրուին՝ գայ առ հօրեղբայր իւր։ Ընկալեալ ի նմանէ իբրև որդի և բազում մեծարանս վայելեալ՝ գրգռէ յապստամբութիւն զնախարարս երկրին։ Անգէտ լեալ Միհրդատայ դաւաճանութեանն՝ յաճախէր նմա պարգևս հանապազորդ։ Դարձ արարեալ ապա Հռադամիստայ առ հայր իւր պատճառանօք հաշտութեան՝ յայտ առնէ նմա, թէ այն ինչ որում ակն ունէր ի նենգութենէ՝ է պատրաստ, մնուց է վճարել զմնացեալն։ Փարսման հնարի յայնժամ պատճառս գժտելոյ ընդ եղբօրն, որպէս թէ լեալ նորա ի կռուի ընդ Աղուանս, ի կամելն կոչել զՀռոմս յօգնութիւն՝ արգելեալ իցէ ի Միհրդատայ, վասնորոյ զվրէժն կամիցի հանել կործանմամբ նորա։ Այսպէս տայր զօր բազում ի ձեռս որդւոյն, որոյ արշաւեալ յեղակարծումն՝ ահաբեկ առնէ զՄիհրդատ, որոյ ոչ գտեալ ժամանակ կազմելոյ ճակատ՝ անկանի ի բերդն Գառնւոյ, ամուր և՛ դիրքն և՛ հռոմէական պահապանօք ընդ հրամանատարութեամբ Կեղիոսի Պողիոնի վերակացուի և Կասպերիոսի հարիւրապետի։ Զի՛ք ինչ որում այնպէս տգէտ են բարբարոսք՝ որպէս ի կիր արկանելոյ մեքենայս պաշարման, և չի՛ք ինչ ընդ հակառակն յորում գլիցեն մերքն։ Այսպէս Հռադամիստ յետ քանիցս անգամ փորձելոյ առնուլ զբերդն զուր կամ կորստեամբ՝ յորդել արկ զամուրն, և առ զնոց յագահութենէ վերակացուին՝ զոր չէրն հնար առնուլ բռնի։ Ի զուր խնդրէր Կասպերիոս թախանձանօք՝ զայր թագաւոր դաշնակից և թագաւորութիւնն Հայոց, ձեռակերտ հռոմէական ժողովրդեան, մատնել դաւոյ և վաճառել ընդ ոսկւոյ։ Պողիոն պատճառէր զբազմութիւն թշնամւոյն, Հռադամիստ՝ զհրամանս հօրն։ Յետոյ ուրեմն հարիւրապետն խօսի դադարեցուցանել զկռիւն, և երթայ հաւանեցուցանել զՓարսման՝ ի բաց կալ ի պատերազմէն, կամ զգացուցանել կուսակալին Ասորւոց Ումմիդիոսի Կուադրատոսի զկրայ Հայոց։

Վերակացուն (Պողիոն) զերծեալ ի թախանձանաց հարիւրապետին՝ ստիպէ զՄիհրդատ տալ ձեռս ի Հռադամիստ։ Ցուշ առնէ գաղերս եղբայրութեանն, զծերութիւնն Փարսմանայ, զզօ-

խնամութեանն որ կայէր զնոսա (զՀռադամիստ և զՄիհրդատ), զնա՝ իբրև զայր դստեր նորա, և զսա՝ իբրև զաներ Հռադամիստայ։ Յիշեցուցանէր նմա զհամեստութիւնն Վրաց, որ չմերժէին զխաղաղութիւն, թէպէտև էին ի յաջողութեան, զնենգաւորութիւնն Հայոց զկարին ծանօթ, զտկարութիւն ամրոցին թափուր ի պաշարէ, համառօտ իսկ ասել՝ զօգուտ անձնատուրն լինելոյ դաշամբ առ ի խնայելոյ հեղման արեան։ Միհրդատ չէր վստահ ի Պօղիոն, որ հրապուրեալ էր զմիտս ի հարճից նորա, և գիտէր զնա առ սէր ոսկւոյ յօժար առ ամենայն վատթարութիւն։ Մինչ վարանէր նա՝ Կասպերիոս գայ առ Փարսման և խնդրէ զի Վիրք բարձցեն զպաշարումնն։ Թագաւորն տայ հրապարակաւ պատասխանի մեղմեխանօք. բազում անգամ կեղծաւորի հաւանել, մինչ պատգամաւորք նորա ազդ առնեն առ Հռադամիստ՝ փութալ ճեպել ամենայն հնարիւք առնուլ զամուրն։ Պարգևք յաճախէին խակագործաց, և Պօղիոն կաշառաբեկ զիւր զօրականն արարեալ՝ գրգռէ զնոսա ի ծածուկ խնդրել խաղաղութիւն, սպառնացեալ թողուլ լքանել զբերդն։ Յանհնարս մտեալ Միհրդատայ՝ առնու յանձն խօսել ընդ Հռադամիստայ ընդ որում կռելոց էին դաշինքն, և ելանէ յամրոցէն։ Ի հասանել նորա՝ զիրկս զնովաւ արկանէ Հռադամիստ, դնէ նմա մեծարանս, կոչելով զնա հայր և աներ։ Երդնու չառնել ինչ նմա վնաս ոչ սրով և ոչ դեղով, յետոյ տանի զնա յանտառ մի մօտաւոր, ուր, ասէր, հրաման տուեալ է պատրաստել զոհս, զի խաղաղութիւնն կնքեսցի առաջի դիցն։ Սովորութիւն է թագաւորացն այնոցիկ, յորժամ դաշինս ինչ կռիցեն՝ ունել զաջոյ ձեռանէ միմեանց և կապել պնդով զբոյթսն։ Իբրև ժողովիցի արիւնն ի ծայրսն՝ թեթև ինչ ցուսմն տայ ցայտել արեանն, և իւրաքանչիւր ի դաշնաւորաց անտի լիզու զարիւն ընկերին։ Այս նուիրումն արեան թուի նոցա տալ դաշինն խորհրդական իմն զօրութիւն։ Այրն որ կապելոցն էր զմատունս նոցա՝ պատճառանօք իմն գթեալ, կալաւ զբարձիցն Միհրդատայ և զարկոյց զնա յորսայս։ Անդէն և անդ պաշարեցաւ թագաւորն ի բազմութենէն, և արկեալ ի շղթայս և յոտնակապս՝ տարաւ ընդ քարշ, որ յետին թըշնամանքն են առ բարբարոսս։ Ժողովուրդն ընդ որում խստիւ վարէր թագաւորն՝ խնդրէր վրէժս թշնամանօք և շարժմամբք սպառնալեօք։ Էին ևս զորս այս մեծ փոփոխութիւն բախտին ածէր ի գութ։ Կին նորա երթայր զկնի մանր մանկամբք, և հնչեցուցանէր ողբովքն զօդս։ Մուծին զնոսա ուրոյն ի սայլս ծածկեալս մինչև առին հրաման ի Փարսմանայ։ Եղբայր և դուստր չէին ինչ յաչս բարբարոսին այնորիկ, և էր նա մէտ և յօժար առ ամենայն

ոճիր։ Սակայն առ ամօթոյն չետ սպանանել զնոսա առաջի իւր։ Հռադամիստ եւս յիշեաց զերդումնն, չարկ ընդդէմ հօրեղբօրն և քեռն ոչ սուր և ոչ թոյն, այլ ետ տարածանել զնոսա ի գետնի և առնել հեղձամահ, կուտեալ ի վերայ նոցա ծանր ծանր կարասիս։ Որդիքն իսկ Միհրդատայ խողխողեցան, զի յորտասուս հարան ի տեսանել զկորուստ ծնողացն (45)։

Առեալ Կուադրատեայ զհամբաւ դաւոյն, որ արկ զթագաւորութիւնն Միհրդատայ ընդ իշխանութեամբ սպանողաց նորա՝ կոչեաց զխորհրդականսն, հան նոցա զիրսն ի վեր, և հարցանէր թէ խնդրիցէ՞ արդեօք վրէժս։ Սակաւք կացին պաշտպան հասարակաց պատուոյն։ Բազումք միտեալ յապահովագոյն կողմն՝ պնդէին թէ ուրախ լինել պարտ էր նոցա մանաւանդ ընդ եղեռն օտարաց, նա՛ արժան իսկ էր արկանել զորումն ատելութեան ի մէջ բարբարոսաց, որպէս արարեալ իսկ էր յաճախ կայսերաց Հռոմոց՝ տուեալ զնոյն իսկ զՀայաստան ոչ այնչափ իբրև պարգև, որչափ իբրև առիթ երկպառակութեան։ Թող, ասեն, Հռադամիստ վայելեսցէ զանիրաւ ստացուածն, միայն թէ վայելեսցէ ատելի և վատանուն. միթէ լաւ եւս ծառայելոց էր շահուն Հռոմայեցւոց երկիրն՝ եթէ էր փառաւորագոյն։ Այս խորհուրդ յաղթէր. այլ առ ի չթուել հաճեալ ընդ ոճիրն, և թէ գուցէ Կղաւդիոս տացէ հրամանս հակառակս՝ ստիպեցին զՓարսման թողուլ զՀայս և կոչել զորդին իւր։

Կապադովկիա ունէր կուսակալ զՅուղիոս Պեղիգնոս, այր, որում մարմնոյն տգեղութիւնն, որպէս և ոգւոյն վատթարութիւն՝ բերէր անարգանս, բայց էր նա ի մտերմաց անտի Կղաւդեայ ի ժամանակին, զի նա դեռ իբրև զոյգն ոք անցուցանէր ընդ խեղկատակս զպարապոյ ժամս իւր անմտութեամբ։ Պեղիգնոս հանէ յիւրում նահանգի գունդ մի օգնական զօրաց, որպէս թէ այսրէն նուաճելոց իցէ զՀայս, և յետ կապուտ կողոպուտ առնելոյ զդաշնակիցս մանաւանդ քան զթշնամիս՝ թողեալ յիւրոցն, կրեալ յորձակումն ի բարբարոսաց, առանց հնարից հայթայթանաց գնայ առ Հռադամիստ։ Կաշառաբեկ լեալ ի նմանէ՝ խրատ ետ նմա զառաջինն դնել զթագն, և իբրև ձեռնտու երթեալ հաստատէր իւրովն ճոխութեամբ։ Իբրև հռչակէր ամօթոյ համբաւն՝ առ ի ցուցանել, թէ ոչ ամենայն հռոմայեցի էր Պելիգնոս՝ առաքեցաւ Հեղուետիոս Պրիսկոս հազարապետ հանդերձ լեգէոնաւ, իշխանութիւն առեալ առնելոյ դարման անկարգութեանն՝ որպէս զիարդ պատշաճ նմա թուիցի։ Հեղուետիոս աճապարեալ անցանէր ընդ լեառնն Տաւրոս, և այն ինչ քաղցրութեամբ մանաւանդ քան բռնի սկսեալ էր հաստատել միւսանգամ զհանդարտութիւնն՝ առնոյր հրաման դառնալ

յԱսորիս, առ երկիւղի տալոյ պատճառս պատերազմի ընդ Պարթեւս։ Քանզի Վաղարշու համարեալ ժամ դիպող առնուլ միւսանգամ զՀայս, որ էր վաղուց հարց նորա և դաւով լեալ որս օտարաց՝ գումարեաց զօրս, և պատրաստէր դնել յաթոռ անդր զՏրդատ զիւր եղբայր, որպէս զի տոհմայինքն համօրէն լինէին թագաւորք։ Հասանելն Պարթեւաց (51) եղև բաւական՝ առանց կռուոյ խոյս հալածել զՎիրս, և քաղաքք Հայոց, Արտաշատն և Տիգրանակերտ՝ մտին ընդ լծով։ Ապա ձմեռն սաստիկ և նուազութիւն պաշարի, թերևս առ ոչն հոգալոյ կանխաւ, և հիւանդութիւնք որ յերկուց պատճառաց աստի հասանէին ի վերայ՝ ստիպեցին զՎաղարշ թողուլ առ ժամն զպատերազմն։ Տեսեալ Հռադամիստայ թողեալ զՀայս՝ գայր մտանէր անդր ահեղագոյնս քան զառաջինն. ունէր ապստամբութիւն մի ի նուաճել, և երկնչէր թէ միւս ևս նոր յառնիցէ։ Արդարև Հայք, թէպէտ մէտք ի ծառայութիւն՝ չկարացին ունել ժոյժ, և ընթացան ի զէնս պաշարել զապարանսն։ Հռադամիստ չեգիտ այլ պաճարանս բաց յարագութենէ երիվարաց իւրոց, և անկանէր փախստական (53) հանդերձ կնաւն որ էր յղի· այլ երկիւղ թշնամւոյն և գութ ամուսնութեանն ետուն նմա զօրութիւն, և տոկաց որչափ և մարթէր զառաջինն նեղութեան ճանապարհին։ Այլ ի սաստիկ սարսելոյ ի յերկարել ուղւոյն՝ տագնապեալ աղաչէր զայր իւր զերծուցանել զնա պատուաւոր մահուամբ ի թշնամանաց գերութեանն։ Հռադամիստ զիրկս արկանէր նմա, մատուցանէր քաջալերս. մերթ ընդ քաջութիւն նորա զարմանայր և մերթ երկնչէր թողուլ զնա յայլոց ձեռս։ Յետոյ ուրեմն վառեալ ի նախանձուէ, և զի սովոր ևս էր ի մեծամեծ ոճիրս՝ հանեալ զդաշոյնն հար զնա, և քարշեալ յափն Երասխայ՝ ընկենոյր զնա ի յորձանս գետոյն, զի և զդին իսկ նորա չիցէ հնար հանել, և ինքն շտապաւ հասանէր ի թագաւորութիւն անդր հօրն։ Իսկ զԶենոբիա (այս էր անուն կնոջն) ածին մեղմով ջուրքն ի խաղ անդր գետոյն, մինչդեռ շունչն ի ռնգունսն էր և տայր նշանս կենդանութեան։ Տեսեալ հովուաց զտիկինն և յազնուականութենէ դիմացն գուշակեալ, թէ չէր ի դոյզն տոհմէ՝ կապեցին զվէրսն, և արկին սպեղանիս որ ծանօթ են ի շէնս, տեղեկացեալ ապա զանուանէն և զպատահարէն՝ տարան զնա յԱրտաշատ քաղաք։ Անտի ածաւ նա խնամով իշխանացն առ Տրդատ, որ ընկալաւ զնա մարդասիրութեամբ և պահէր զնա իբրև զշխոյ։

Ի կատարածի տարւոյն (54) գուժկան հասանէր ի Հռոմ, թէ Պարթևք խլրտեցան միւսանգամ և արշաւեալ ի Հայս մերժեցին զՀռադամիստ, որ բազում անգամ տէր երկրին և բազում անգամ

փախստեայ՝ հրաժարեալ իսկ էր յայնժամ ի պատերազմէ։... Ներոն
տայր կոչել, առ ի լնուլ զթիւ լեգէոնացն արևելից՝ գունդս ի մեր-
ձաւոր նահանգաց և տայր հրաման լեգէոնացն՝ խաղալ ի վերայ
Հայոց։ Հրամայէր նոյնպէս երկուց հնազոյն թագաւորաց, Անտիո-
քոսի և Ագրիպպայ՝ ունել զզօրս իւրեանց կազմ և պատրաստ ի
մտանել յերկիր անդր Պարթևաց։ Կամուրջք անկան ի վերայ Եփ-
րատայ. Փոքր Հայք հանդերձ զարդուք թագաւորութեանն տուան
Արիստոբուղեայ, և աշխարհն Ծոփաց՝ Սոյեմայ։ Այլ յառնէր յայն-
ժամ ընդդէմ Վաղարշու նորին որդի Վարդան, և Պարթևք թո-
ղուին զՀայս, և պատերազմն յապաղէր։ Կարևորութիւն իրացն
ստուարանայր ի ծերակուտին, որ տայր պատուէր՝ աւուրս բազումս
մատուցանել դիցն գոհութիւնս, յոր յաւելաւ և այն թէ Ներոն արկցէ
հանդերձս ձաղանաց ցորչափ գոհութիւնքն ձգիցին, մտցէ ի Հռոմ
կատարել նուէրս ձօնեաց, և կանգնեսցին նմա անդրիք ըստ չափոյ
անդրեացն Արեայ վրէժխնդրի, որպիսիք կային ի մեհենի անդ
նորա։ Ընդ ողոքանացն խառնէր և ուրախութիւնն տեսանելոյ զԿոր-
բուղոն ընտրեալ՝ յազատել զաշխարհն Հայոց, և ամենեցուն կար-
ծիք այն էին, թէ բացաւ ասպարէզ արժանաւորաց։ Գունդք
արևելից բաժանեցան այսպէս. մի մասն օգնական զօրուն և
լեգէոնք երկու մնացին յԱսորիս ընդ հրամանաւ Ումմիդեայ Կուա-
դրատեայ կուսակալի նահանգին, նոյնչափ թուով Հռոմայեցիք
և օտարականք տուան Կորբուղոնի, հանդերձ վաշտիւք և այ-
րուձիով որ էին ի ձմերոցս ի Կապադովկիա։ Թագաւորք դաշ-
նակիցք առին հրաման հնազանդել միումն կամ միւսում ըստ օրի-
նի պիտոյից պատերազմին. այլ եռանդն նոցա միտէր մանաւանդ
ի Կորբուղոն անդր։ Զօրավարս այս, առ ի կորզել յանձն իւր զհամ-
բաւ, որոյ ազդեցութիւնն մեծ է ի սկզբան մեծամեծ գործոց՝ խա-
ղայ արագ յԵղիս քաղաք Կիլիկեցւոց։ Անդ գտանէր նա զԿուա-
դրատոս որ եկեալ էր մինչև անդր առ երկիւղի, զի եթէ մտցէ
Կորբուղոն յԱսորիս առնուլ զզօրս նորա՝ կորզիցէ յինքն զամենե-
ցուն աչս. զի էր նա բարձր հասակաւ, բանիբուն լեզուաւ, և հան-
դերձ հմտութեամբն և հանճարով՝ ունէր զարտաքին ինչ հանդա-
մանս որ ունին զիւրեանց ազդեցութիւն։ Արդ՝ երկոքին զօրավարք
մեր տային խորհուրդ Վաղարշու ի ձեռն հրեշտակաց՝ առնել նա-
խամեծար զխաղաղութիւն քան զպատերազմն և նմանել ակնա-
ծութեան իւրոց նախնեաց, տալով պատանդս Հռոմայեցւոց։ Վա-
ղարշ առ առնելոյ զպատրաստութիւնս պատերազմին ի պարապի
և կամ առ հեռացուցանելոյ պատճառանօք պատանդութեան, յո-
րոց ոսոխութենէն կասկածէր՝ առաքէր պատանդ ի մեծամեծաց

անտի Արշակունեաց։ Ընկալաւ զնոսա Հիստէոս Հարիւրապետ, որոյ առաքեալ ի Կուադրատեայ և հասեալ զառաջինն՝ խօսէր վասն երացն ընդ Թագաւորին։ Յայս համբաւ Կորբուղոն հրամայէր զընդապետին Արրիոսի Վարոսի երթալ առնուլ զնոսա ի ձեռաց նորա։ Յարեաւ կռիւ ի մէջ գնդապետին և հարիւրապետին, և առ ի չտալոյ ընդ երկար տեսիլ նշաւակի բարբարոսացն՝ կացուցին իրաւարար զպատանդսն զլխովին և զհրեշտակսն որ ածէին զնոսա։ Սոքա ի մեծարանս նորոյ փառաց և տեղի տուեալ, Թէպէտև Թշնամիք, ծածուկ իմն յօժարութեան՝ նախամեծար զԿորբուղոն առնէին։ Գժտութիւնն սկսաւ յանժամ ի մէջ երկուց զօրավարացն։ Կուադրատոս քանքատէր, եթէ հանաւ ի նմանէ պտուղ բանագնացութեանն. Կորբուղոն բողոքէր ընդ հակառակն, Թէ Պարթևք հաճեցան տալ պատանդս՝ յորժամ փոխեցի ես, ասէ, յերկիւղ զլոյս նոցա որ յառաջն ընտրեալ էին զպատերազմն։ Ներոն առ հաշտեցուցանելոյ զնոսա եհան համբաւ, Թէ ի պատիւ յաջողութեանցն Կուադրատեայ և Կորբուղոնի խրձունք կայսեր զարդարելոց էին դափնեօք։

Մինչ այս մինչ այն՝ Տրդատ յաւելոյր չիւր կողմն անդր զօգնականութիւն եղբօր իւրոյ Վաղարշու, և այնուհետև ոչ ևս դադտագողի յարձակմամբ, այլ յայտնի իսկ պատերազմաւ աւերէր զաշխարհն Հայոց, կողոպտեալ՝ զորս միանգամ կարծէր միտեալս ի մեր կոյս, զգոյշ լեալ ի պատահելոյ զօրուն առաքելոյ ի վերայ նորա. համառօտիւ՝ սրացեալ ընդ ամենայն կողմանս և գործեալ ահ և երկիւղ համբաւով արշաւանացն քան զօրութեամբ զինուց։ Կորբուղոն յետ ի զուր ջանալոյ պատահել նմա պատերազմաւ, վրիպեալ յակնկալութենէ իւրմէ և ստիպեալ, ըստ օրինակի Թըշնամւոյն, տանել զպատերազմն ի տեղիս տեղիս՝ բաժանէր զզօրսն, զի հրամանատարք նորա և զօրագլուխք մարԹիցեն յարձակել ի կողմանց կողմանց միանգամայն։ Ազգ առնէր և Անտիոքոսի՝ մտանել ի նահանգսն սահմանակիցս։ Իսկ Փարասմանայ սպանեալ էր երբև մատնիչ զորդին իւր զՀռադամիստ, և առ ի ցուցանել զհաւատարմութիւն իւր առ մեզ՝ յագեցուցանէր անխնայ զատելութիւն իւր հին ընդդէմ Հայոց։ Հուսկ ուրեմն Խնսիկացիքն, ազգ նշանաւոր ընդելութեամբն առ Հռոմայեցիս, ձգեալ յանժամ զառաջինն ի մեր դաշնակցութիւն՝ ասպատակէին յանկոխ և ի դժուարին տեղիս Հայոց։ Այսպէս վրիպեալ Տրդատայ յորմէ եդեալն էր ի մտի՝ առաքէր հրեշտակս հարցանել յանուն իւր և Պարթևաց. ընդէր, ասէ, մինչ պատանդք տուան, և բարեկամութիւնն նորոգեալ՝ Թուէր իմն աւետել Թէ ի նոր բարութիւնս վայելելոց իցեմք՝

մերկացուցանէք զմեզ ի նախնի ստացուածոց մերոց։ Յաւելոյր ես, թէ եթէ Վաղարշ չառնէ ձեռն ի գործ՝ պատճառք այն են զի ընտրէ մանաւանդ խնդրել զիրաւունս քան դիմել ի զօրութիւն զինուց. սակայն եթէ Հռոմայեցիքդ յամառեալ կայցէք ի պատերազմն՝ Արշակունիք գտցեն միւսանգամ զզօրութիւնն և զբախտ՝ զորս պարտութիւնք Հռոմայեցւոց նշանաւորս գործեցին առաւել քան մի անգամ։ Կորբուլոն, որ գիտէր եթէ ապստամբութիւնն ի Վրկանս արգելեալ ունէր զՎաղարշ՝ ի պատասխանիսն տայր խրատ Տրդատայ՝ ալերս պաղատանաց արկանել ի կեր առ կայսեր փոխանակ զինուց. «Այսպէս, ասէ, մարթ իցէ քեզ բերել ի ձեռս իշխանութիւն իմն տեւական և գա՛հ առանց արիւնհեղութեան, եթէ փոխանակ հեռաւորն և անդգան յուսոյ՝ լինիցիս զհետ այնմ որ մերձաւորագոյնն և ապահովագոյնն է։ Ապա քանզի սուրհանդակք որ երթային և գային՝ չեղեն նպաստ ի հաստատութիւն խաղաղութեանն՝ առաջի եդաւ լինել ժամադիր, զի գլխաւորքն երկոցունց կողմանց մտցեն անձամբ ի խորհուրդ։ Տրդատ կամէր երթալ ի ժամադրութիւնն երիւք հազարօք, իսկ Կորբուլոն չառնէր յայտ զթիւ համարոյ զօրուն որ ընդ նմայն երթալոց էին։ Միայն թէ, ասէ, դայցեն պատրաստութեամբ խաղաղութեան, առանց սաղաւարտից և զրահից։ Ոչ ոք, մանաւանդ այր զօրավար ծեր և զգօն, տայր անձին թոյլ անկանել ի խաբս բարբարոսին։ Թիւն այն սահմանեալ վասն միոյ զօրավարի, և առանց սահմանի վասն միւսոյն՝ ծածկէր դաւ։ Առիմէ բազմութիւն զինուորաց, եթէ կայր հանել զնոսա անգէնս յանդիման այրուձիոյ որ կորովի աղեղնաւորքն էին։ Սակայն և այնպէս Կորբուլոն, որպէս թէ չունէր ինչ ամենևին կասկած՝ ետ պատասխանի, թէ պատշաճագոյն ևս էր զիրաց որ այնպէս կարևորն էին երկուց ազգաց՝ խօսել յանդիման երկուցն բանակաց։ Ապա ընտրեաց տեղի մի, որոյ մի կողմն, զառիվայր մեղմ, դիպողագոյն էր ընդունել զգունդս հետևակացն, և միւս կողմն, հարթ հաւասար դաշտաձև, թողոյր հեծելազօրուն լայնեալ տարածանել։ Ի ժամադիր ժամուն, Կորբուլոն հասեալ զառաջինն՝ կացուցանէր ի թևս զգունդսն օգնականս և զզօրս թագաւորաց դաշնաւորաց. ի միջոցին կարգէր զվեցերորդ լեգէոնն, ամրացեալ երեք հազար արամբք երրորդին, զոր հանեալ էր գիշերայն յայլմէ բանակէ։ Թողոյր արծուի մի միայն առ երևեցուցանելոյ, թէ մի լեգէոն և եթ իցէ։ Օրն տարաժամէր, յորժամ երևեցաւ Տրդատ, այլ այնպէս ի բացուստ, զի դիւրագոյն էր տեսանել զնա քան լսել։ Ձեղև հնար գալ ի մի վայր, և զօրավարն Հռոմայեցի եմայծ միւսանգամ զզօրսն իւրաքանչիւր յիւր ճամբար։

Թագաւորն, և՛ առ ի խուսել ի դարանակալաց, զորոց տայր նմա կասկածել խաղալ մերոյ զօրուն ընդ բազում կողմանս, և՛ առ հատանելոյ զճանապարհ պաշարին որ գայր մեզ յԵւքսինոս ծովէ և ի Տրապիզոնէ՝ մեկնեցաւ շտապաւ, այլ չկարաց զբռամբ ածել զպաշարն, զի որք բերէինն՝ գնացին զլեառն լեռնայն, կալեալ հռոմայեցի զօրօք: Եւ այլուստ, առ արգելուլ զերկարել պատերազմին յանօգուտս և ստիպել զՀայս պաշտպանել անձանց՝ Կորբուլոն եդ ի մտի աւերել քանդել զամուր ամուր տեղիս նոցա: Ամրագոյն վայր գաւառին կոչէր Վողանդ (Թերևս Վանանդ՝ ըստ Գաթրըճեանի, Բ, 113): Կորբուլոն յանձն առ իւրովի արկանել պահ զտեղւոյն, և զորս չէինն այնչափ կարևոր՝ յանձն առնէր Կոռնեղեայ և Փղակկեայ տեղակալի և Ինստէեայ Կապիտոնի վերակացուի բանակատեղւոյն: Յետ այց առնելոյ տեղւոյն շուրջանակի և յարդարելոյ զամենայն ի յարձակումն՝ քաջալերէր զզօրն ընդդէմ թշնամւոյն, որ թափառէրն և չկամէր ոչ ընդ խաղաղութիւն և ոչ ընդ պատերազմ, և որ խուսելովն յայտ իմն առնէր զիւր վատութիւն և զնենգութիւն: Յորդորէր զնոսա հանել ի նըմանէ զապաւէնս նորա և ցուցանէր նոցա փառս և զաւար միանգամայն: Ապա բաժանէր զզօրսն ի չորս առաջս. մին առեալ զկրայսն մերձենայր ի խլել զպարիսպն. միւսն առնոյր պատուէր կանգնել զսանդուղսն. մեծի իմիք բազմութեան տայր հրաման արձակել մեքենայիւք նիզակս և ջահս. հուսկ ապա կացուցանէր ի դիպան վայրի պարսաւորս, որ տեղայցեն ի հեռաստանէ վիրգս իբրև զկարկուտ: Այսպէս տագնապեալ թշնամւոյն յամենայն կողմանց՝ չկարէցէ, ասէր, առաքել ուրեք օգնականս: Այնպիսի իմն էր եռանդ զօրուն՝ զի յառաջ քան զերրորդ մասն աւուրն առնէր զպարիսպն հարթ յատակ, զդրունսն խորտակէր, ելանէր սանդղովք յամուրս անդր, զամենայն այր հասակաչափ անցուցանէր ընդ սուր, իսկ մերքն ունէին վիրաւորս սակաւ, մեռեալ՝ և ոչ զմի ոք: Խուժանն որ չէր յաջողակ ի կռիւ՝ եղև վաճառակուր, և մնացորդ աւարին թողաւ յաղթողաց: Տեղակալին և վերակացուին հանդիպէր նոյն յաջողութիւն: Երեք ամրոցք առան ի միում աւուր ահիւ կամ կամակար մտօք բնակչացն, և մնացեալքն եղեն անձնատուր: Այնուհետև Կորբուլոն համարէր զանձն ձեռնհաս յարձակել ի վերայ Արտաշատու, որ մայրաքաղաքն էր երկրին, և իսկ և իսկ խաղացոյց անդր զզօրն: Երասխ գետ հոսէ առ պարսպօք քաղաքին, և եթէ անցուցանէր զնոսա ընդ կամուրջն՝ արկանէր զլեգէոնն ընդ հարուածովք թշնամւոյն: Անցին ըստ գետն հեռագոյն ընդ հուն մի լայն և ընդարձակ: Տրդատ տատանէր իմն ի մէջ ամօթոյ և

երկիւղի. Թողուլ առնել զպաշարումնն՝ էր խոստովանել զիւր տը-կարութիւն. իսկ արգելուլ զնա ոչ իշխէր առանց արկանելոյ զանձն և զայրուձին յանկոխ տեղիս։ Նդ ի մտի կալ ճակատել և սպասել այգուն լինելոյ, թէ ի կռուել արգեամբ, և թէ արկանել զմեզ յորոգայթ ինչ՝ պատճառելով փախչել։ Բարբարոսքն խուժէին յանկարծ շուրջ զբանակաւն Հռոմայեցւոց, այլ ոչ գտին ի գեղծի զզօրավարն, որոյ էր կազմեալ պատրաստեալ զամենայն ինչ և՛ ի խաղալ յառաջ և՛ ի մարտնչել։ Երրորդ լեգէոնն յառաջանայր յաջմէ, վեցերորդն՝ ի ձախմէ, ընտիր ընտիրքն ի տասներորդէն՝ ի միջոցին։ Կարասին եդեալ էր ի մէջ ճակատուցն, և հեծեալք հազար կային վերջապահք, առեալ պատուէր լինել դիմակալ՝ եթէ կրիցեն յարձակումն, այլ չլինել երբէք հետամուտ։ Վաշտքն և աղեղնաւորք և մնացորդ այրուձիոյն կային զօրավիգն թևոցն. ձախ թևն երկայնեալ ձգէր առ ստորոտով բլրոյն, որպէս զի թըշնամին, եթէ փորձիցէ մտանել զհետ՝ տեսցէ յարձակումն յառաջոյ և ի կողից միանգամայն։ Տրդատ տագնապեցուցանէր զմեզ յիւրմէ կուսէ, առանց իշխելոյ մերձենալ մինչև ի նետընկէց մի, և թուէր իմն մերթ սպառնալ և մերթ զանգիտել, յուսացեալ խախտել զմեր ճակատս և խոյանալ ի վերայ մերոց գնդից զատուցելոց. այլ չեղև գամագիտ ըստ յանդգնութեանն. Հարիւրապետ մի միայն հեծելոց տարեալ յանզգաստս անկանէր նետահար։ Մահ նորա լինէր այլոց ի խրատ զգուշութեան, և ի մերձենալ գիշերոյն մեկուսանայր Թշնամին։

Կորբուղոն եհար բանակ անդէն ի տեղւոջն, և ժամ դիպող համարեալ զգիշերն՝ խորհէր զառաջինն երթալ լեգէոնօքն, առանց կահուց կարասեաց, պաշարել զԱրտաշատ, ուր կարծէր ապաստանեալ զարքայն. այլ տեղեկացեալ նորա ի լրտեսաց, թէ Տրդատ հեռանայր, առանց ուրուք գիտելոյ թէ ի Մարս ինչ կամ յԱղուանս երթայցէ՝ յապաղեաց մինչև յայգն, և ետ խաղալ յառաջ թեթևագոյն գնդաց՝ պատուէր տուեալ պաշարել զմուրն և սկիզբն առնել յարձակմանն ի հեռաստանէ։ Այլ բնակիչքն բացին զդրունսն և եղեն անձնատուր Հռոմայեցւոց հանդերձ ամենայնիւ զոր ունէին (58)։ Այս լինէր ի նոցա փրկութիւն. այլ քաղաքն եղև հրձիգ և աւերեցաւ ի հիմանց, քանզի ի պահել զնա պիտոյ էր գունդ մեծ պահանորդաց, զի էր մեծ և ընդարձակ քաղաքն, և ոչ գոյին մեր գունդք ըստ բաւականին ի բաժանել զնոսա ի գործ պատերազմի և ի պահ այնպիսի տեղւոյ։ Այլազգ դարձեալ, թողուլ կանգուն զքաղաքն առանց դնելոյ զնա յապահովի՝ էր կորուսանել զփառս և զպտուղ յաղթութեանն։ Պատմի իմն, թէ երկնից կամք յայտնի

եղեն նշանաւ իմն. արև պայծառ լուսաւորէր զարտաքոյս քաղաքին, մինչ յանկարծ որ ինչ ի ներքս էր՝ ծածկէր թանձր մառախղով, և փայլատակունք հատանէին։ Գուշակ իմն համարեցաւ այս, թէ դիքն ցասուցեալ մատնէին զքաղաքն ի կորուստ։ Ներոն վասն այսպիսւոյ յաջողութեան ողջունեցաւ կայսր. ծերակոյտն սահմանէր գոհութիւնս դիցն, և իշխանին՝ անդրի պատկեր, կամարս յաղթութեան և պատիւ հիւպատոսութեան ամաց բազմաց։ Խնդրեցաւ ևս տօնս տարեկանաց կատարել ի յիշատակ աւուրցն, յորս յաղթութիւնն հանաւ ի գլուխ և եղև ծանօթ ի Հռոմ և աւետիքն տուան ծերակուտին, թող զայլ անթիւ փաղաքշանս անչափս, մինչև ասել Կասեայ, թէ եթէ հասարակաց շնորհակալութիւնն պարտէր զիւր պատիւ մեծարանաց հաւասարել երախտեաց երկնից՝ զամն ողջոյն հանել ի գոհութիւնս չէր բաւական, սակայն պիտոյ էին աւուրք գործոյ՝ որպէս աւուրք նուիրականք, զի և՛ դիքն պատուեսցին, և՛ գործոց մարդկան չառնիցէ խափան։

Սակայն Կորբուղոն, որ հիմն ի վեր տապալեաց զԱրտաշատ, կամեցաւ, մինչդեռ տիրէր սարսափն՝ առնուլ և զՏիգրանակերտ, զի երկիւղս առաւելուցու ահն և հոյն բնակչացն, յորժամ և զայն քաղաք ևս տեսանիցեն աւերեալ, և կամ խնայելով նոցա շահիցէ համբաւ ողորմածութեան։ Ապա խաղայր գնայր առանց վնասելոյ ումեք, զի մի՛ յուսահատ յուսաբեկ առաջի իւր զբնակիչսն առնիցէ. այլ գնայր ոչ յանգգոյշս վասն յեղյեղուկն բուսոյ բարուց բնակչացն, որ հեղգն և երկչոտ են ի տեսանել զվտանգն, այլ ցանդ յօժարք ի նիւթել զմատնութիւն։ Բարբարոսքն իւրաքանչիւր ըստ իւրոց բարուցն մատչէին իբրև աղաչաւորս, և կամ թողեալ զշէնս իւրեանց և զաւանս՝ աճապարէին ի փախուստ ընդ ճանապարհս անկոխս։ Էին ևս որ յայրս և ի փապարս զօղէին հանդերձ ամենայնիւ որ պատուական էր նոցա։ Զօրավարն հռոմայեցի գնայր իմաստութեամբ—առնելով երեսս աղաչանաց և պնդէր ճեպով զկնի փախստէիցն։ Էր անխնայ առանց ողորմութեան առ որս ի գետնափոր տեղիս ապաստանէին. փակէր զմուտս ապաստանաց նոցա խոռօք և մացառօք, և այրէր զապաստանեալսն ի ներքս կենդանւոյն։ Ցանցանել նորա զսահմանօք Մարդաց, ազգ կիրթ յաւազակութիւն և պաշարեալ անմատոյց լերամբ՝ նեղէր զնոսա ասպատակութեամբ։ Առաքեաց ի վերայ նոցա զՎիրս ասպատակել զերկիր նոցա, և այսպէս զխակութիւն նոցա պատժեալ պատուհասէր արեամբ օտարաւ։ Սակայն եթէ Կորբուղոն և զօրք նորա ոչինչ կորուսին պատերազմաւ՝ բովանդակ զօրութիւն նոցա

ընկճէր ընդ բեռամբ աշխատութեան և տառապանաց։ Ստիպեալք ուտել զմիս արջառոց միայն, նուազութիւն ջրոյ և ամառն տօթակէզ, ստէպն և երկայն չու—հասուցին զնոսա ի յետին տագնապ, զոր ամոքէր սակաւիկ մի համբերութիւն զօրավարին միայն, քանզի և նա իսկ կրէր վիշտս առաւել քան զյետինն ի զօրականաց։ Եկին առա ի տեղիս մշակեալս և քաղեցին զհունձս։ Յերկուց բերդաց անտի յորս ապաստանեալ էին Հայք՝ մին առաւ յարձակմամբ, իսկ այն որ մնաց զառաջին յարձակումնն՝ չկարաց զդէմ ունել պաշարմանն։ Անտի անցանէին յերկիրն Տարօնոյ, ուր Կորբուղոն զերծաւ յաջողութեամբ յանակնկալ իմն վտանգէ։ Ոմն յաւագաց անտի թշնամւոյն ըմբռնեալ ոչ հեռի ի վրանէ անտի զօրավարին դաշոյն ի ձեռն, և արկեալ ի խոշտանգանս՝ խոստովան լինէր թէ էր գլուխ դաւաճանութեան իրիք, և թէ զի՞րդ ի գլուխ ելանելոց էր դաւն և ո՛յք գործակիցքն էին՝ յայտնէր։ Որոց ընդ պատրուակաւ բարեկամութեան նիւթեալ էր զդաւն՝ խայտառակեալ ընկալան զպատիժ պատուհասին։ Յետ սակաւ միոյ գային պատգամաւորք ի Տիգրանակերտէ, թէ բաց էին դրունքն, և էր քաղաքն պատրաստ ընդունել զհրամանսն։ Առաքէր և պսակ յոսկւոյ, իբրև գրաւական հիւրընկալութեանն։ Կորբուղոն ընդունէր պատուով զպատգամաւորսն, և չառնոյր ինչ ի քաղաքէն, զմտաւ ածեալ թէ ևս իմն աւելի կամակար հպատակութիւնն եղիցի փոխարէն բարերարութեանն։ Այլ միջնաբերդն, ուր ապաստանեալ էին երիտասարդք անվեհերք՝ ոչ նուաճեցաւ առանց կռուոյ։ Նա ելեալք յամրոցէն տային պատերազմ, և մղեալք յետս՝ յետուստ ուրեմն տային տեղի, մինչ յառնուլ էր բերդն։ Այսչափ յաջողութեան (Կորբուղոնի) լինէր նպաստ պատերազմն Վրկանից, զորով զբաղեալ էին Պարթևք։ Վրկանից առաքեալ ևս էր առ կայսր խնդրել ի նմանէ լինել բարեկամ նիզակակից, յայտ արարեալ ի հանդէս բարեկամութեան իւրեանց զզբաղումնն զոր տային Վաղարշու։ Եւ զի վտանգ առաջի կայր պատգամաւորացն, ի դարձին իւրեանց լինել ձերբակալ յայնկոյս Արածանւոյ ի վերջապահ գնդէ անտի թշնամւոյն՝ Կորբուղոն գնէր ընդ նոսա զօրս՝ յուղարկել զնոսա մինչև յափունս Կասպից ծովուն, ուստի դարձան նոքա յերկիր իւրեանց, խոյս տուեալ ի սահմանաց Պարթևաց։

Տրդատ փորձէր մտանել ի Հայս ընդ աշխարհն Մարաց։ Զօրավարն (Կորբուղոն) անդէն զօրահատոյց լինէր, և տայր զգունդս օգնականօքն, մարտակն ի ձեռս Վերուլամեայ տեղակալի հանդերձ օգնականօքն, և ինքն արագ արագ զհետ լինէր նմա լեգէոնօքն և ստիպէր զթշնամին ի փախուստ անճապարել, ի բաց կացեալ ի խորհրդոյն

զոր ունէր պատերազմել։ Ապա ուրեմն յետ մաշելոյ ի սուր և ի հուր զորս միանգամ գիտէր թէ առ գուժ թագաւորին էին թըշնամութեամբ ընդ Հռոմս՝ լինէր տէր Հայոց աշխարհին, մինչ երևէր Տիգրանէս, ընտրեալ ի Ներոնէ ի թագաւորութիւն աշխարհին։ Տիգրանս այս, ծնեալ յերևելի տոհմէ Կապադովկացւոց՝ էր թոռն Արքեղայոսի արքայի, այլ արգելեալ բազում ժամանակս ի Հռոմ իբրև պատանդ՝ բերէր յանձին ոգի վատ և գետնաքարշ իբրև զգերւոյ։ Ոչ առանց հակառակութեան լինէր նա ընդունելի։ Արշակունիքն տիրէին դեռևս ի միտս ոմանց, այլ մեծ մասն ազգին, զչարեալք ընդ գոռոզութիւնն Պարթևաց՝ նախամեծար առնէին վթագաւոր տուեալ ի Հռոմայեցւոց։ Առ Տիգրանաւ թողալեգէոն մի հազար արանց, գունդք երեք ի դաշնաւորաց, երկութևք հեծելոց. և զի դիւրին ևս լիցի նմա պահել զիւր նորածին իշխանութիւնն՝ Փարսմանայ, Պողեմոնի, Արիստոբուղեայ և Անտիոքոսի տուան ի Հայոց գաւառք մերձաւորագոյնք յերկիր նոցա։ Կորբուղոն դարձաւ յԱսորիս, որոյ մնացեալ առանց կուսակալի յետ մահուն Կուադրատեայ՝ յանձն եղև նորա խնամոց և փութոյ։ Սակայն թագաւորն Պարթևաց Վաղարշ, իմացեալ զյաջողութիւն Կորբուղոնի և տեսեալ զօտարն Տիգրան եդեալ յաթոռ թագաւորութեանն Հայոց՝ դնէր նախ ի մտի հանել զվրէժն Արշակունեաց, թշնամանս համարեալ զմերժել եղբօր իւրոյ Տրդատայ։ Զմտաածեալ ապա զՀռոմայեցւոցն մեծութիւն և զշուք հնոյ և հաստատուն նիզակակցութեան՝ յետս կայր ի խորհրդոյն։ Ի բնէ դանդաղկոտ՝ վարանէր մանաւանդ յապստամբութենէն Վրկանից, ազգ հզօր, և յանթիւ պատերազմաց յոր բռնադատեաց զնա վտարանջութիւնն այն։ Մինչ այսպէս երերեալ տատանէր նա՝ համբաւ նորոյ իրիք թշնամանաց գայր խթանել զդանդաղութիւն նորա։ Տիգրան ելեալ ի Հայոց ապականէր զԱդիաբենն երկիր սահմանակից Պարթևաց ստէպ ասպատակութեամբք, որ չէին ընդհատ յաւազակութենէ։ Մեծամեծք (Պարթևաց) տրտնջէին դառնութեամբ։ Յորպիսի անարգութիւն իջաք, ասեն, մինչև նուաճել մեզ ոչ ի զօրավարէ հռոմայեցւոյ, այլ ի յանդուգն համարձակութենէ պատանդի, ծիւրելոյ և ծնդելոյ այնչափ ամս ի մէջ գերեաց։ Մանաւանդ որ իշխէրն Ադիաբենայ՝ գրգռէր զցասումն նոցա, հարցեալ թէ զո՞ պարտ էր նմա կարդալ յօգնութիւն և առ ո՞ դիմել։ Ի Հայոց, ասէին, հրաժարեցաք, և մնացեալն ևս երթիցէ զհետ՝ եթէ Պարթևք չկամիցին կալ պաշտպան։ Անձնատուր լինել ի Հռոմայեցիս լաւագոյն իցէ քան նուաճել. այն գերութիւն իցէ մեղմագոյն։ Իսկ Տրդատէս, անկեալն յաթոռոյն և փախստեալ

լութեամբ և մեղմով իմն քրթմնջելով գործէր հզօրագոյն ևս ազդեցութիւն։ Ոչ, ասէ, ոչ եթէ վասութեամբ մեծամեծ տէրութիւնք կային կանգուն. մարդիկ, զէնք, պատերազմունք պիտոյ են։ Ի մէջ տէրութեանց՝ արդարութիւն բնութիւնն է։ Պահել զոր ինչ իւրն է՝ շատ իցէ առանձին մարդոյ. կռուել վասն այնր որ այլոց է՝ փառք են առն թագաւորի։

Տեսեալ Վաղարշու զայս ամենայն՝ կոչէ զաւագանին ի խորհուրդ և կացուցեալ զՏրդատ ի միջի՝ խօսի զայս օրինակ. «Իշխանս այս ի նմին հօրէ յորմէ ես՝ եթող ինձ, վասն աւագութեան տիոյս, զազնուագոյն թագն, և ես ետու նմա զՀայս, զերրորդ գահ մերոյ ազգատոհմին։ (Քանզի Բակուր ունէր զՄարացն)։ Այսպէս թուէր ինձ պահել զտոհմն մեր յաւելութենէ և յոսխութենէ որ անդստին սովոր են տիրել ի մէջ եղբարց։ Հռոմայեցիք հակառակ կային այսմ, և զխաղաղութիւնն զոր ոչ պղտորեցին նոքա երբէք առանց կրելոյ զպատիժ պատուհասին՝ խզեն այսօր ևս առ իւրեանց եղեռանէ։ Ես արդարև արդարութեամբ մանաւանդ քան որեամբ, բանագնացութեամբ քան զինուք կամեցայ զառաջինն պահել զաշխարհս նուաճեալս յիմոց նախնեաց։ Եթէ սխալեցայ ինչ այսպէս դանդաղելով՝ ուղղեցից զսխալն քաջութեամբ։ Զօրութիւն ձեր գոնեայ և փառք՝ են ողջ բովանդակ. յայնր վերայ ունիք և զպատիւ համեստութեան, զորով աւագագոյն մարդկան իսկ չէ պարտ արհամարհել և որ առ գիսն իսկ մեծարգի է»։ Ապա եդեալ պսակ ի գլուխ Տրդատայ՝ տայր Մոնեսայ, միում յաւագաց անտի, զհեծելագունդ իւրոց թիկնապահացն հանդերձ օգնականօքն Ադիաբենացւոց և պատուիրէր հանել զՏիգրան յաշխարհէն Հայոց, և ինքն յետ խօսելոյ ի հաշտութիւն ընդ Վրկանից՝ հանէր ի միջոցի անդ տէրութեան իւրոյ բանակ ահեղ և սպառնայր նահանգացն Հռոմայեցւոց։ Լուեալ Կորբուղոնի զայս ամենայն ի ստոյգ համբաւոյ՝ առաքէ յօգնութիւն Տիգրանայ զՎերուղանոս Սևերոս և զՎետտիոս Բողանոս լեգէոնօք երկու, գաղտ հրաման տուեալ խաղալ գնալ զգուշութեամբ մանաւանդ քան շտապ տագնապաւ, քանզի լաւ համարէր ունել պատերազմ քան առնել։ Նա և գրէր առ կայսր, թէ պիտոյ էր ոք առանձինն գլուխ ի պաշտպանել զՀայոց աշխարհն, և թէ Ասորւոց աշխարհն որում սպառնայր Վաղարշ՝ էր յեւս իմն մեծի վտանգի։ Մինչ այս մինչ այն՝ կարգէր գնէր զմնացորդս լեգէոնացն զափամբ Եփրատայ, վառէր գունդ մի գումարեալ ճեպով ի նահանգի անդ, փակէր զօրօք զանցս՝ ընդ որս էր մուտ թշնամւոյն, և զի երկիրն է գրեթէ անջրդի՝ ունէր զակունս աղբերաց, կանգնեալ առ նօքօք ամրոցս, և թաղէր ևս

փոխս ինչ ընդ կուտակօք աւազոյ։ Մինչ Կորբուղոն այսպէս ամրացուցանէր զԱսորիս՝ Մոնէս կամեցաւ յառաջ խաղացեալ փութոյ յանդուլթեամբ՝ կանխել զհամբաւ մերձենալոյ իւրոյ, բայց և այնպէս գտանէր զՏիգրան արդէն հմուտ իրացն և ի զգուշի։ Տիգրան մտեալ էր ի Տիգրանակերտ, քաղաք ամուր և՛ պահանորդօքն և՛ բարձրութեամբ պարսպացն։ Թող զայն՝ Նիկեփորոս գետ լայնանիստ պատէ զմիով մասամբ պատուարացն, և փոս լայն պաշտպանէ՝ զոր չէր ատակ պահել գետն։ Հռոմայեցի զինուորք էին ի բերդին որ լին էր պաշարօք։ Ոմանք յարանց անտի որոց յանձն էր այն գործ՝ կարի իմն յառաջ մատուցեալ, յեղակարծումն պաշարեցան ի թշնամւոյն, և այս կորուստ տայր այլոցն սրտմտել մանաւանդ քան զանգիտել։ Մանաւանդ զի Պարթևք չէին յաջողակ ի պաշարել, զի ոչ ժտին յարձակել ի մօտոյ. արձակեն ըստ դիպաց իմն նետս, որ վրիպեցուցանեն զնոսա ի յուսոյ և ոչինչ զօրհուրեցուցանեն զթշնամին, որ զատուցեալ իցէ պատուարաւ։ Ադիաբենացիք մատուցեալ ի սանդուղսն և ի մեքենայս՝ դիւրաւ ընկրկէին, և մերքն ելեալ արտաքս յանկարծօրէն՝ արարին զնոսա ցան և ցիր։ Կորբուղոն, թէպէտև գտեալ էր յաջողութիւն՝ խորհեցաւ իմաստութեամբ գնալ ընդ բախտին. տայր առաքէր առ Վաղարշ մեղադիր լինել նմա, զի յարձակեցան Պարթևք ի նահանգ իւր, պաշարեցին զայր թագաւոր դաշնակից և բարեկամ և զզունդս Հռոմայեցւոց։ Ազդ առնէր նմա բառնալ զպաշարումն, ապա թէ ոչ՝ ինքն ևս երթիցէ բանակել յերկրի իշխանութեան Պարթևաց։ Կասբերիոս հարիւրապետ, որում յանձն եղև տանել զպատգամն՝ գտանէր զթագաւորն ի Մծբին, երեսուն և եօթն մղոնիւք հեռի ի Տիգրանակերտէ, և տայր նմա գոռոզութեամբ զպատգամն։ Վաղարշ ի բազմաց հետէ եդեալ էր ի մտի խուսափել ի զինուց Հռոմայեցւոց։ Այլուստ դարձեալ իրք առնն երթային և վատթարանային. պաշարումնն եղև առանց իրիք արդեանց, Տիգրանայ ոչ պակասէին ոչ զօրք և ոչ պաշար. յարձակումն Պարթևաց վանեցաւ յետս. լեգէոնաց մտեալ էր ի Հայս, և այլք որ էին զսահմանօքն Ասորւոց՝ սպասէին հրամանի մտանել յերկիր իշխանութեան նորա, և հեծելազօրն նորա էր ծիւրեալ առ ի չգոյէ արօտից, զի բազմութիւն մարախոյ կերեալ և սպառեալ էր զամենայն դեղ դալար յաշխարհին։ Արդ ծածկեալ զերկիւղն՝ մեղմական բանիւք տայր պատասխանի, թէ ունէր ի մտի յղել պատգամաւորս առ կայսր, խնդրել ի նմանէ զՀայս և պնդել զխաղաղութիւնն։ Ետ հրաման Մոնեսայ թողուլ զՏիգրանակերտ, և ինքն ևս մեկնէր ի բաց։ Բազում այնք էին, որ երկիւղի թագաւորին և սպառ-

նալեաց Կորբուղոնի ընձայեալ զմեկնելն Պարթևաց՝ գովութիւնս յաճախէին զԿորբուղոնէ։ Այլք համարէին գաղտ իմն միաբանութիւն, որով պատերազմն դադարեալ էր երկուստեք և Վաղարշայ կոչեալ յետս զզօրսն։ Քանզի, ասէին, առ իմէ կոչել զհռոմէական բանակն ի Տիգրանակերտէ, հեմ թողուլ լքանել ի խաղաղութեան՝ զոր պաշտպանեալն էր պատերազմաւ։ Միթէ առաւել հեշտեմա-էր անցուցեալ զձմեռն ի խարս անդ Կապադովկացւոց, ընդ տաղաւարօք կանգնելովք ճեպ ի ճեպոյ, քան ի մայրաքաղաքի Թագաւորութեան զոր այն ինչ էր գրաւեալ։ Դադարումն իմն է այս, ասեն, պատերազմի, յանձն առեալ ի Վաղարշէ՝ զի զայլ ոք քան զԿորբուղոն ունիցի իւր ոսոխ, և ի Կորբուղոնէ՝ առ ի չվտանգելոյ զփառսն, գործուած այնչափ ամաց։ Ասացի արդարև, թէ զօրավարս այս խնդրեալ էր զայլ ոք առանձինն զօրավար վասն Հայոց, և ընթանայր իսկ համբաւ զմօտալուտ զալստենէն Կեսենայ Պետայ։

7. Գայր սա վաղվաղակի, և այսպէս բաժանէր զզօրն. չորրորդն և երկոտասաներորդ լեգէոնք, հանդերձ հինգերորդաւն որ կոչեցաւ ի Մեսիայ, որպէս և օգնական զօրն Պոնտոսի, Գաղատացւոց և Կապադովկացւոց՝ եդան ընդ հրամանատարութեամբ Պետոսի. երրորդն և վեցերորդ և տասներորդ և հին զօրականն Ասորւոց երկրին՝ մնացին առ Կորբուղոնի։ Այլ էր նոցա և հրաման՝ ի կարևոր հարկի կցել կամ բաժանել զզօրութիւն իւրեանց։ Բայց Կորբուղոն չառնոյր յանձն ունել ոսոխ, և Պետոս, որում երկրորդ կարգի պատիւն պարտէր լինել բաւական՝ նուազեցուցանէր զարութիւնս մեծի զօրավարին։ Ոչ դադարէր յասելոյ, թէ չիք նորա ոչ ի թշնամեաց անտի զոք սպանեալ և ոչ առեալ աւար. անուամբ լոկով, ասէ, առ զքաղաքս, և մինչ պարտն էր նմա օրէնս դնել, հարկս հարկանել պարտելոց և արկանել զնոսա ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց՝ ետ նոցա թագաւոր՝ որ ստուեր միայն է թագաւորի։

Զայնու ժամանակաւ հրեշտակք Վաղարշու, որպէս ասացի, առաքեալք առ կայսր՝ դարձան յետս առանց վճարելոյ ինչ, և Պարթևք սկսան յայտ յանդիման զպատերազմն։ Պետոս ոչ դանդաղէր ելանել ախոյեան. առեալ ընդ իւր լեգէոնս երկուս, զչորրորդն ընդ հրամանատարութեամբ Փունիսուղանեայ Վետտոնեայ, և զերկոտասաներորդն ընդ զօրավարութեամբ Կաղաւեայ Սաբինեայ՝ եմուտ ի Հայս ձախող գուշակութեամբք։ Յանցանելն զԵփրատ ընդ կամուրջ՝ ձին որ կրէր զզարդս հիւպատոսութեանն՝ խրտուցեալ առանց յայտնի ինչ պատճառաց՝ ելանէր ըստ ձեռն և ապա

դառնայր այսրէն, և մինչ ամրացուցանէին զբանակատեղին՝ սպանդմի ի սպանդից որ կայր մօտ առ աշխատողսն՝ խորտակեալ զվանդակսն որոց այն ինչ կիսով ի գլուխ ելեալ էր՝ զերծաւ ըստ պատուարսն արտաքս: Նա և նիզակք զօրականին արձակէին բոց՝ նշան այնու մանաւանդ արժանի մտադրութեան, զի Պարթևք նիզակօք սովոր են կռուել: Պետոս արհամարհէր զնշանսն, և առանց ի գլուխ հանելոյ զամրութիւնսն և առանց պաշարս հայթայթելոյ՝ ձգէր տանէր զզօրսն անդր քան զՏաւրոս լեառն, որպէս զի առնէր, առից զՏիգրանակերտ և աւերեցից զերկիրն, որում խնայեալ էր Կորբուղոնի: Առնոյր արդարև բազում բերդեան և ստանայր փառս և զառ զաւար՝ եթէ էր զմին խնդրեալ չափով և միւսումն տարեալ փոյթ: Յետ անցանելոյ զընդարձակ վայրօք, զոր չէր մարթ պահել, և ապականելոյ զպաշարսն, զորս հանեալ էր ի թշնամւոյն, ստիպեալ ի մերձենալոյ ձմերայնւոյն՝ ած զզօրսն ի մի վայր: Գրէր առ կայսրն թուղթ, ուր համարելով զպատերազմն վճարեալ՝ թաքուցանէր զիրացն դատարկութիւն ընդ ճոխամտութեամբ բանից: Յայնչափ ժամանակի Կորբուղոն, որոյ չէր և ոչ մի վայրկեան թողեալ զափունս Եփրատայ՝ մօտագոյն ևս ի գետ անդր տանէր զամրութիւնսն, և զի մի՛ ասպատակք թշնամւոյն, որ յածէին ահեղ իմն պատրաստութեամբ ի հանդիպակաց կողման, արգել լինիցին նմա արկանել կամուրջ՝ յառաջ մատուցանէր ի գետ անդր նաւակս մեծամեծս, կապեալս ընդ միմեանս գերանօք, և ի վերայ նոցա տայր կանգնել աշտարակս: Անդուստ վանէր զխուժադուժն բաղլիստրօքն և մեքենայիւք, ուստի քարինք և նիզակք թռուցեալ երթային բացէ ի բաց՝ յո չէր մարթ հասանել նետից: Ապա կամուրջն ի գլուխ ելանէր, և զբլուրս միւսոյ կողման գետոյն ունէին օգնական գունդքն և այլ բանակ լեգէոնացն այնպէս արագ և այնպիսի մեծ զօրութեամբ՝ մինչև ի բաց կացեալ Պարթևաց յարձակելոյ յԱսորիս՝ դարձուցանէին զբովանդակ զօրութիւն իւրեանց ի վերայ Հայոց:

Պետոս առանց ունելոյ կասկած զմրրկէն որ մօտալուտ ի վերայ կայր՝ ունէր հեռի ի Պոնտոս զՀինգերորդ լեգէոնն և տկարացուցեալ էր զայլսն, տուեալ նոցա ստէպ ստէպ պարապ, մինչ լուաւ թէ Վաղարշ զիմեալ գայր զօրու ծանու մեծաւ սպառնալեօք: Կոչեաց Պետոս զերկոտասաներորդ լեգէոնն, և որով յաւելուլն կարծէր զիւր զօրութիւն՝ մատն եղև մանաւանդ տկարութեան իւրոյ: Սակայն մարթ էր պահել զբանակատեղին և յապաղելով ի դերև հանել զխորհուրդ Պարթևին՝ եթէ Պետոսի գիտացեալ էր հաստատութեամբ գնալ ըստ խրատուն իւրոյն խորհրդականաց

և ըստ այլոցն։ Բայց այն ինչ արք յաջողակք ի պատերազմունս զօրացուցին զնա ընդդէմ վտանգին՝ նա առ ի չտալոյ կարծիս, թէ ունիցի պէտս օտար խրատուց՝ յանկարծ փոխէր զամենայն ի յոռեգոյն անդր։ Այսպէս թողոյր զկայանս զօրացն, պատճառեալ թէ ոչ խրամք և պատուարք, այլ զէնք և զօրականք տուան նմա ընդդէմ թշնամւոյն, և խաղացոյց յառաջ զլեգէոնսն՝ որպէս թէ ունիցի ճակատ տալ։ Ապա կորուսեալ հարիւրապետ մի և զոմանս ի զինուորացն, զորս առաքեալ էր դիտել զզօրութիւնն բարբարոսացն՝ աճապարէր դառնալ յետս։ Թուլութիւն Վաղարշու ի լինել նմա հետամուտ՝ դարձոյց զնա յիւր անհանճար վստահութիւն, և կացոյց նա զերկս հազարս ընտիր ընտիր հետևակաց ի մօտագոյն կատար Տաւրոս լերին, արգելուլ զանցս թագաւորին։ Պանոնիացիքն, յորս էր զօրութիւն հեծելազօրուն՝ ճակատեցան ի միում կողման դաշտին, իսկ զկին և զորդիս իւր եդ նա յամրոցին որ Արշամաշատն կոչի, ընդ պահպանութեամբ գնդի միոջ։ Այսպէս ցրուեաց զզօրս իւր, որոց եթէ էր գումարեալ ի միում վայրի՝ լաւ ևս զդէմ ունէին անկարգ հրոսից թշնամւոյն։ Հազիւ իմն, ասեն, հաւանեցուցին զնա յայտ առնել Կորբուղոնի զիւր տագնապ, և սա ոչինչ փութայր հասանել նմա ի թիկունս, զի ի ծանրանալ վտանգին՝ յաճախեսցին նմա փառքն ի զերծուցանելն զնա։ Սակայն հրամայէր զի արք հազարք ի մէն միոջէ երից լեգէոնաց իւրոց, ութ հարիւր հեծեալ և նոյնչափ յօգնական զօրուէն կայցեն կազմ և պատրաստ ի մեկնել։ Իմացաւ Վաղարշ եթէ կալեալ էին անցք, աստ՝ հեծելովք, անդ՝ հետևակօքն Պետոսի, սակայն և այնպէս երթայր զհետ իւրոյ խորհրդոյն, և յաւելեալ զօրութիւն ի սպառնալիս անդր՝ զարհուրեցոյց զայրուձին և արար կոխան զհետևակսն։ Տարկուինիոս Կրեսկենդ եղև ձեռներէց ի պաշտպանել զաշտարակ մի, որ նմա յանձն էր ի պահ. ստէպ ելանէր արտաքս, առնէր ցիր և ցան՝ զորս միանգամ հուպն գային ի բարբարոսաց անտի, մինչև հուրք արձակեալք արտաքուստ պատէին զնա յամենայն կողմանց։ Որոց միանգամ չէր առեալ վէրս՝ զերծան ի բաց ընդ ճանապարհս վարունս. իսկ վիրաւորք դառնային ի բանակ անդր, զքաջութենէ թագաւորին, զթուոյ և զգազանութենէ զօրաց նորա պատմելով, բազում ինչ առ ահին սաստկացուցեալ, զոր նոյնպէս երկիւղն տայր ընդունել դիւրաւ։ Զօրավարն իսկ ոչ ևս կռուէր ընդդէմ այսպիսի անյաջող ընթացից դիպաց։ Թողեալ էր նա զամենայն հոգս պատերազմին և աղաչեալ զԿորբուղոն երկրորդ պատգամաւորութեամբ՝ գալ հասանել ճեպով, ազատել զդրօշսն, զարծուիս, զանունն գրեթէ եղծեալ խախտեալ բանակին թշուառացելոյ, մինչ նոքա զօր

ինչ պարտիցինն առնել առնիցեն մինչև ի սպառել շնչոյ։ Կորբուղոն ոչինչ զաՀի Հարեալ՝ թողոյր զմասն մի զօրաց իւրոց յԱսորիս պաՀել զամուրսն կանգնեալս առ Եփրատաւ, և կալեալ ճանապարՀ զկարճագոյնն և որ մատուցանէր առատագոյն պաշար՝ անցանէր ընդ Կոմագենէ, ապա ընդ Կապադովկիա, և մտանէր ի Հայս։ Վարէր ընդ բանակն ոչ զկաՀ և զկազմած պատերազմին միայն ըստ սովորութեան, այլև բազմութիւն մեծ ուղտուց բարձելոց ցորեան, զի ընդ թշնամւոյն և զսովն ևս վանիցէ։ Առաջին փախստականն որում դիպեցաւ ի ճանապարՀին՝ էր Հարիւրապետն յառաջապաՀ զօրուն Պակտիոս, և յետ նորա բազումք ի զինուորաց։ Բարբանոցն որովք ջանային նոքա անբասիր զիւրեանց փախուստն առնել՝ առնէր պատասխանի, տուեալ խրատ դառնալ անդրէն ի դրօշ անդր իւրեանց և ի գթութիւնն Պետոսի լինել ապաստան։ Ապա Հանդէս առնէր լեգէոնաց իւրոց, մատուցանէր նոցա քաջալերս, տայր յիշել զառաջին արութիւնս իւրեանց և ցուցանէր նոր փառս։ Ոչ եթէ աւանք ինչ կամ քաղաքք դուզնաքեայք Հայոց էին, այլ բանակ Հռոմէական, և ի բանակի անդ լեգէոնք երկու պաշարեալք, որ Հանդերձեալ էին լինել մրցանակ աշխատութեան նոցա։ Եթէ իւրաքանչիւր զինուոր ընկալցի ի ձեռանէ զօրավարին մէն մի պսակ վասն միոյ միոյ ի Հռոմայեցւոց զօրս փրկիցէ՝ քանի փառաւոր լինիցի օրն յորում պսակքն իցեն ըստ թուոյ Հռոմայեցւոցն եղելոց ի վտանգի։ Այսպիսի բանիւք և այլովք սոյնպիսեօք յեռանդն ածէր զզօրականն, յորոց ոմանք մորմոքէին իմն, մանաւանդ ածեալ զմըտաւ զտագնապ ազգականաց իւրեանց և եղբարց՝ երագէին զչուն զցայգ և զցերեկ առանց դադարելոյ։

Այլ Վաղարշ ոչինչ ընդՀատ պնդէր զպաշարումնն, արՀամարՀեալ և՛ զճամբար լեգէոնացն և՛ զամրոցն յորս պաՀէին զայնոսիկ, զորս տիքն առնեն անկարողս ի պատերազմ։ Նա մերձենայր իսկ յամրոցն առաւել քան զսովորութիւնն Պարթևաց, յուսացեալ եթէ այս Համարձակութիւն ձգիցէ զթշնամիսն ի ճակատ։ Այլ չգոյր Հնար Հանելոյ զնոսա ի վրանացն. զմարտկոցն միայն պաշտպանէին, ոմանք՝ առ Հնազանդել զօրավարին, այլքն՝ առ վատութեան, պատճառեալ թէ Կորբուղոնի սպասիցեն, պատրաստք ի ցուցանել՝ եթէ յարձակումնն սաստկանայր՝ զօրինակս Նումանտիոյ և Կաւդինեան կրճից։ Այլ չէին այնչափ աՀագին Սամնիտացիք, ժողովուրդ Իտալիոյ, և Կարքեդոնացիք, թէպէտև ոսոխք մերոյ տէրութեան։ Այո՛, այն փառաւոր Հին ժամանակն ևս, ի մեծամեծ վտանգս՝ քան զամենայն ինչ մեծ զփրկութիւնն Համարէր։ Յաղթեալ զօրավարին ի վատութենէ բանակին՝ գրէր առ Վաղարշ զա-

ռաջին թուղթն, յորում ոչ թէ աղերս ինչ արկանէր Թագաւորին, այլ մեղադիր իմն լինէր մանաւանդ, թէ ընդէր Վաղարշ տայցէ ընդ մեզ մարտ պատերազմի վասն Հայոց աշխարհին, զոր ի վաղուց իսկ ունէին Հռոմայեցիքն և կամ տային զայն Թագաւորի՝ զոր ընտրէր կայսր։ Յաւելոյր ևս, թէ խաղաղութիւնն էր երկուց կողմանց ևս շահեկան։ Վաղարշու, ասէր, չէր պատշաճ հայել յայժմն, զի եկեալ է ընդդէմ երկուց լեգէոնաց համօրէն ուժով իւրոյ տէրութեանն, այլ Հռոմայեցիք ունին զտիեզերս ի վարել զիւրեանց մարտն։ Վաղարշ առանց վիճելոյ տայր պատասխանի, թէ հարկ էր նմա կալ մնալ իւրոց եղբարցն Բակրոյ և Տրդատայ, և թէ էր նոցա լեալ ժամադիր մտանել ի խորհուրդ՝ ուր տայցեն վճիռ զՀայոց աշխարհէն, և զի դիքն արդարք տային զյաղթութիւնն արեան Արշակայ. որ ինչ վասն լեգէոնացն Հռոմոց պաշարելոց է՝ վճարեալ է։ Պետոս յղեաց պատգամ առ արքայն խնդրել խօսել ընդ նմա, և նա առաքէր զՎասակ զհրամանատար հեծելոցն։ Յայնժամ զօրավարն խօսեցաւ զԼուկուղղեայ և զՊոմպէէ և զգործոց կայսերաց եթէ ի պահել և եթէ ի տալ զՀայոց աշխարհն։ Վասակ պնդէր, թէ եթէ Հռոմայեցիք ունին զպատկեր այնր իշխանութեան՝ Պարթևք ունին զճշմարտութիւնն։ Յետ երկար մաքառմանց Մոնաւազ Ադիաբենացի կոչեցաւ ի վաղիւն իբրև վկայ նոցին հաւանութեամբ։ Միաբանեցան զի բարձցի պաշարումն բանակին, զօրն Հռոմայեցւոց ելցէ յաշխարհէն Հայոց, ամրոցք և պաշարք տացին ի ձեռս Պարթևաց, և իբրև այս ամենայն վճարեսցի՝ տացի ժամանակ Վաղարշու առաքել հրեշտակս առ կայսր։ Այլ Պետոս արկ կամուրջ ի վերայ Արածանւոյ որ հոսէր առ բանակաւն, պատճառեալ եթէ պէտս ունիցի այնմ վասն անցուցանելոյ զզօրն յայնկոյս. այլ Պարթևք եդեալ էին ի վերայ Հռոմայեցւոց զայս աշխատութիւն՝ ի հանդէս յաղթութեան իւրեանց. զի նոքա պաշտեցան կամրջաւն, մերքն կալան զհակառակ ճանապարհն։ Համբաւ յաւելոյր, թէ լեգէոնք կրեցին զամօթ անցանելոյ ընդ լծով և զայլ ևս թշնամանս, զորս ձախողանքն առնէին հաւատալի և որոց Պարթևք ևս տային առիթ, զի մտին ի բանակն՝ մինչչև ելեալ անտի Հռոմայեցւոց, և ի մեկնել սոցա կացեալ աստի և անտի ճանապարհին՝ առնուին և տանէին իբրև զիւրեանց՝ զգերիս և զգրաստս որ ի վաղուց էին ի ձեռս Հռոմոց։ Զհանդերձս իսկ և զզէնս անգամ հանէին ի նոցանէ, և զօրականն առ ահին չիշխէր հակառակել, թէ գուցէ ստիպեսցին կռուել։ Վաղարշ ի հանդէս պարտութեանն Հռոմոց տայր զբրահանս կուտել զզէնս և զդիակունս մարդկանն սպանելոց, այլ չէառ յանձն յակն մերոց լեգէո-

նաց անկանել ի փախստեանն. զամբարտաւանութիւն իւր յագեցուցեալ՝ ցանկայր պատուոյ համեստութեան: Խիզախէր ընդդէմ յորձանացն Արածանւոյ հեծեալ ի փիղ, և որ առ նովաւն երթային՝ անցին ի ձի, զի համբաւ տարածանէր, թէ կամուրջն խորտակելոց էր ընդ բեռամբ առ նենգութեան շինողացն, այլ որ համարձակեցանն անցանել՝ գիտացին թէ էր հաստատուն և չգոյր որոգայթ թագուցեալ: Յայտնի եղև սակայն, թէ պաշարեալքն ունէին մթերեալ պաշարս այնչափ՝ մինչև հրձիգ առնել նոցա շտեմարանս ցորենոյ. մինչ, ըստ պատմութեան Կորբուղոնի՝ Պարթևք առ ի չգոյէ պաշարի, տեսեալ ևս զխար երիվարաց իւրեանց սպառեալս՝ հանդերձեալ էին թողուլ զպաշարումն, և Կորբուղոնի առաջի կայր ոչ աւելի քան երից աւուրց ճանապարհ՝ հասանել ի թիկունս պաշարելոցն: Կորբուղոն յաւել ասել, թէ Պետոսի երդուեալ էր առ ոտս նշանացն առաջի հրեշտակաց Վաղարշու, որ էին մօտ իբրև վկայք՝ թէ ոչ ոք ի Հռոմոց անտի մտցէ ի Հայս, մինչև պատգամաւոր ոք կայսեր տացէ գրոյց, թէ հաճի կայսր ընդ խաղաղութիւնն: Եթէ ի ծանրացուցանել զամօթ նախատանացն Պետոսի հընարեցաւ զայսսիկ Կորբուղոն՝ են այլ անցք որոց ստուգութիւնն առանց հակառակութեան է, այն իսկ, թէ Պետոս արար մղոնս քառասուն ի միում աւուր, թողեալ զվիրաւորսն ի ճանապարհին, և թէ այսպէս շտապաւ փախչել նորա ահագին զպարտութիւնն երևեցուցանէր յաչս թշնամւոյն, որպէս թէ սպառսպուռ խորտակեալ էր զօրն: Կորբուղոն որ պատահեցաւ նոցա առ Եփրատաւ՝ ոչ կամեցաւ զի բանակ իւր ցուցցէ նոցա զիւրոց զինուցն պայծառութիւն և զնշանսն պատուոյ և փառաց, զի մի՛ առաւել իմն ի կոր կործանեսցէ զնոսա: Տրտմեալք և ի գութ խանդաղատեալք ընդ կորանս ընկերաց իւրեանց տառապելոց՝ զինուորք Կորբուղոնի ոչ կարացին ունել զարտասուս: Հազիւ յարտասուս անդ իւրեանց ածին զմտաւ տալ և առնուլ ողջոյն: Անդ էր տեսանել ո՛չ մրցումն քաջութեան, ո՛չ տենչ փառաց որ յաջողագոյն ժամանակի էին գործ. գթութիւն միայն տիրէր, մանաւանդ ի խոնարհագոյն կարգս զօրուն: Զօրավարքն երկոքին խօսեցան ընդ միմեանս կարճառօտ: Կորբուղոն վշտանայր իմն, զի ի զուր վաստակեցոյց զզօրականն, մինչ պատերազմին մարթ էր առնուլ վախճան փախստեամբ Պարթևաց: Պետոս տայր պատասխանի, թէ ոչ մին և ոչ միւսն կորոյս ինչ. պարտ էր նոցա զարծուիս իւրեանց մատուցանել յառաջ և ի միասին խաղալ ի վերայ աշխարհին Հայոց, տկարացելոյ դառնալովն Վաղարշու յետս: Կորբուղոն ասէր, եթէ չունէր հրաման ի կայսերէ, թէ վտանգ լեգէոնացն միայն ձգեաց զնա յիւրմէ նա-

Հանդէն, և թէ լեալ անգէտ թէ զինչ առնելոց էին Պարթևք՝ կամէր դառնալ անդրէն յԱսորիս, զի էր յերկրայս թէ հետևակ զօրն, խոնջեալ պարտասեալ յերկարութենէ ճանապարհին՝ գուցէ ոչ լինիցի բաւական զդէմ ունելոյ հեծելազօրուն (Պարթևաց), որ արթունն և զուարթուն էր և զորոյ արշաւանսն դիւրացուցանէր հարթութիւն լայնատարած դաշտացն։ Ապա Պետոս գնաց ձմերել ի Կապադովկիա։ Յետ սակաւ միոյ Վաղարշ առաքէր ստիպել զԿորբուղոն՝ կոչել յետս զպահակսն, զորս կացուցեալ էր նորա անդր քան զԵփրատ, զի գետն լինիցի, որպէս յառաջն՝ անջրպետ ի մէջ երկուց թագաւորութեանց։ Իսկ Կորբուղոն խնդրէր զի զօրք Պարթևաց ելցեն յաշխարհէն Հայոց, և հաճեցաւ թագաւորն։ Ամրութիւնք շինեալք ի Կորբուղոնէ յայնկոյս Եփրատայ՝ քանդեցան, և Հայք մնացին առանց տեառն։ Բայց ի Հռոմ կանգնէին յաղթանակք ի նշան պարտութեան Պարթևաց, և զԿապիտողեան լերամբն բարձրացան կամարք յաղթութեան ի հրամանէ ծերակուտին—մինչդեռ վախճան պատերազմին տակաւին չէր յայտ—և մատուցան յառաջ, առ ապրեցուցանելոյ զաչս, թէպէտ և իրք մերոյն ձախողէին, և ժողովուրդն իրագէտ էր անցից պատերազմին։ Առ լաւ ևս ծածկելոյ զլոյս մտացն ընդ ճշմարտութիւն իրացն՝ Ներոն առնէր առաւել քան զայս. մասն մի ցորենոյն ի պէտս ժողովրդեան էր հնացեալ և փտեալ. ետ ամալ զայն ի Տիբեր գետ, իբրև վստահ յառատութիւն պաշարի. և թէպէտ նաւս իբրև երկերիւր ընկղմեալ էր մրրիկ ի նաւահանգստին, և զայլ ևս հարիւր, որ գային ընդ գետն ի վեր, ծախեաց հրդեհ՝ գին ցորենոյն չյաւելաւ։

Ի սկզբան գարնանայնոյն հասանէին հրեշտակք Պարթևաց հրահանգօք Վաղարշու և թղթով, որոյ պատճէն էր օրինակ զայս։ «Լուեցի, ասէ, զխնդրոյն, զորմէ բազում անգամ եղեն բանք, այն է թէ ո՛ լիցէ տէր աշխարհին Հայոց. քանզի դիք որ տեարքն են ազգաց հզօրագունից իսկ՝ ետուն Պարթևաց, ոչ առանց ամօթոյ Հռոմայեցւոց, զտէրութիւն երկրին այնորիկ։ Յառաջ քան զայս կալայ զՏիգրան փակեալ ի բերդի ուրեք, և ապա, մինչ կարողն էի ջախջախել զՊետոս և զլեգէոնս նորա՝ արձակեցի զնոսա անվնաս։ Զօրութիւն իմ յայտնի էր արդէն ըստ բաւականին, ցուցի արդ և զգթութիւն իմ։ Տրդատ առնոյր յանձն երթալ ի Հռոմ առնուլ զթագն՝ եթէ չէր արգելեալ ի նուիրական պարտուց քրմութեանն. երթիցէ սակայն առ դրօշս և առ պատկերս կայսեր և անդ առաջի լեգէոնաց արասցէ զնաւակատիս իւրոյ թագաւորութեանն»։ Եւ զի այս թուղթ Վաղարշու էր հակառակ թղթոցն Պետոսի, որ կարծեցուցանէր տակաւին անստոյգ զելս պատերազմին՝

Հարիւրապետն որ ընդ Հրեշտակսն եկեալ էր՝ Հարցաւ զկրաց աշխարհին Հայոց։ Հռոմայեցիք, ասէ այրն, ելին յաշխարհէն։ Յայնժամ յայտնի եղև, թէ ընդ հենգն իմն ելեալ Պարթևին՝ խնդրէր զոր ունէրն արդէն ի բուռն։ Ապա խորհուրդ արարեալ Ներոնի ընդ աւագանւոյն Հռոմայ, թէ զո՞րն պարտ էր ընտրել, պատերազմե՞լ վտանգաւ, եթէ առնել խաղաղութիւն կորանօք՝ ոչինչ դանդաղեցան պատրաստել ի պատերազմ, և զի Կորբուղոն ի վաղուց զփորձ առեալ գիտէր և՛ զզօրականն և՛ զթշնամին՝ յանձն եղև նմա գործն, թէ գուցէ այլ ոք, ագէտ իբրև զՊետոս՝ ածիցէ սխալ և ապաշաւ։ Հրեշտակքն արձակեցան՝ առանց լինելոյ ձեռնհաս իմիք, սակայն ընծայիւք, զի մնասցէ յոյս՝ թէ Տրդատ չխնդրէր ի զուր, եթէ իւրովի բերէր զաղաչանսն։ Վերակացութիւնն Ասորւոց յանձնեցաւ Կինկեայ, և զօրն պատերազմիկ՝ Կորբուղոնի։ Յաւելաւ յայն հնգետասաներորդ լեգէոնն, զոր ած առ նա ի Պանոնիայ Մարիոս Կեղսոս։ Գրեցաւ առ չորրորդապետս և առ թագաւորս, առ կուսակալս և առ տեղակալս, հուսկ ապա առ դատաւորս որ վերակացուքն էին մօտակայ գաւառաց՝ հնազանդ լինել հրամանաց Կորբուղոնի, որոյ իշխանութիւնն, այսպէս առաւելեալ՝ գրեթէ հաւասար էր այնմ զոր ընկալեալ էր Պոմպէի ի ժողովրդենէ անտի Հռոմայ ի պատերազմին ընդ հէնս։ Պետոս ի դարձին երկնչէր թէ պատուհասեսցի խստիւ. այլ կայսր փոխանակ պատժոց պատուհասից զծաղրն բաւական համարեալ՝ ասէ ցնա. «Փութամ ներել քեզ, վասն զի այր երկչոտ ես. գուցէ առ անձկութեան անկանիցիս հիւանդ»։ Կորուստ քաջագունից ի զօրուէն և վհատութիւն այլոցն առնէր զլեգէոնն չորրորդ և երկոտասաներորդ անկարօղս ի պատերազմ։ Կորբուղոն փոխէր զնոսա յԱսորիս, և անտի տանէր ի Հայս զվեցերորդն և զերրորդ, գունդք առոյգք, կրթեալք ի վաստակս և ի յաջողութեան. յաւել ի նոսա և զհինգերորդ լեգէոնն, որոյ մնացեալ ի Պոնտոս՝ չեղև ընաւ հաղորդ ձախողանացն, որպէս և զհնգետասաներորդն, որ այն ինչ հասեալ էր, նշանակիրս ընտիրս ի Լիւրիկեցւոց և յԵգիպտոսէ, և որչափ ինչ ունէր յօգնական զօրուէն, հետևակ և հեծեալ, միով բանիւ՝ զզօրս թագաւորաց դաշնաւորաց գումարեալս ի մի վաշտ ի Մետիլինէ, ուր ունէր ի մտի անցանել ընդ Եփրատ։ Անդր ած ժողովեաց զզօրսն յետ զզոհն մատուցանելոյ ըստ սովորութեան, և խոստացեալ ընդ պաշտպանութեամբ կայսեր պայծառ յաջողուածս, յուշ արարեալ նոցա զնոր արութիւնսն, և զչաջողութիւնսն ընծայեալ տխմարութեան Պետոսի։ Խօսեցաւ առ զօրականն այնպիսի իմն ճոխութեամբ, որ յանձին այնպիսւոյ զօրավարի ունի զտեղի ճարտարխօ-

սութեան։ Յետոյ ապա կալաւ զճանապարհն զոր հորդեաց երբեմն Ղուկուղղոս, և երաց զանցսն զորս փակեալ էր ժամանակն։

Յ. Իբրև եկին հրեշտակք ի Տրդատայ և ի Վաղարշէ խօսել խաղաղութիւն՝ Կորբուղոն փոխանակ մերժելոյ զնոսա, առաքէր ընդ նոսա Հարիւրապետս, որ տանէին բանս հաշտութեան. «Զիք, ասէ, հարկ յանչափս մղել զպատերազմն։ Բազում դէպք յաջող եղեն Հռոմայեցւոցս. էր ինչ որ Պարթևացդ էր նպաստաւոր՝ ի խրատ ամբարտաւանութեան էր։ Յօգուտ Տրդատայ է այժմ ընդունել պարգև զթագաւորութիւնն՝ մինչև ի սպառ քանդեալ աւերեալ երկրին. և Վաղարշ լաւ ևս ծառայեսցէ Պարթևաց՝ լեալ նիզակակից Հռոմայեցւոց քան թշնամութեամբ ընդ նոսա, և այս լինիցի վնասակար երկոցունց կողմանց։ Զեմ, ասէ, անտեղեակ ներքին երկպառակութեանց Պարթևաց, և թէ որպիսի ստահակ ազգի թագաւորիցէ արքայն։ Իսկ կայսր մեր, նմին հակառակ, ամենայն ուրեք վայելէ խորին խաղաղութիւն, և չիք նորա այլ պատերազմ բայց ի միջէ աստի յայսմանէ»։ Յայս ամենայն խրատուց վերայ յաւելեալ Կորբուղոնի և արհաւիրս՝ խախտէ ի բնակութեանց իւրեանց զմեծամեծս Հայոց, որոց սկիզբն արարեալ էր ապստամբութեանն, և առնէ զամուրս նոցա հարթ յատակ։ Զդաշտս և զբարձունս, զզօրաւորս և զտկարս—զամենեսին միանգամայն լի առնէ ահիւ և տագնապաւ։ Անուն Կորբուղոնի չտայր երկիւղ բարբարոսաց իսկ, և ոչ ունէին նոքա զատելութիւնն զոր սովորութիւն է ունել առ այլ թշնամի. վասնորոյ և անսային իսկ խրատու նորա, և Վաղարշ որ չէր հակառակ հաշտութեան՝ խնդրեաց դադարեցուցանել զկռիւն ի բազումս ի գաւառաց իւրոց։ Եւ զի Տրդատ ցանկայր խօսել ընդ զօրավարին՝ եղև ժամադրութիւն գալ ընդ հուպ ի մի վայր, և տեղի ժամադրութեանն էր այն, ուր յառաջ քան զաւուրս ինչ պաշարեալ կայր լեգէոնօքն Պետոս։ Բարբարոսքն ընտրեցին զտեղին, զի յուշ առնէր այն նոցա զյաղթութիւնն, և Կորբուղոն ոչինչ ընդդիմացաւ, զի այն յիշատակութիւն, որ հակառակն էր սմին՝ յաւելոյր նմա փառս, զի և ընդ վատ անունն Պետոսի չէր ինչ նմա փոյթ, և զայս այնու մանաւանդ արար յայտ, զի զորդի Պետոսի որ տրիբունն էր զօրաց՝ առաքէր վաշտու միով փոքու թաղել զմնացորդս վերջնոյ պարտութեանն։ Ի ժամադրեալ աւուրն Տիբերիոս Աղեքսանդրոս ասպետ Հռոմայեցի, ի գլխաւորաց անտի որ տուեալ էին օգնական Կորբուղոնի ի պատերազմին, և Վինիանոս Աննիոս փեսայ զօրավարին, որ չէր ի ծերակուտէն վասն տխեղծ տիոցն, այլ իբրև տեղակալ կարգեալ էր ի գլուխ հինգերորդ լեգէոնին՝ չոքան ի բանակ անդր Տրդատայ առնել պատիւ իշխա-

նին և բառնալ այնպիսի պատանդիւ զամենայն կասկած նենգութեան։ Իսկ գլխաւորքն երկուց կողմանց առին ընդ իւրեանս իւրաքանչիւր հեծեալս քսան։ Ի տեսանելն զԿորբուղոն՝ էջ նախ Թագաւորն յերիվարէն, ապա և Կորբուղոն արար զնոյն, և երկոքին մատուցեալ ի հետիոտս ետուն ձեռս միմեանց։ Հռոմայեցին գովեաց յայնժամ զմանուկ իշխանն, զի փոխանակ առնելոյ զանձն զաշավէժ դարահօս ի պատահարս՝ դայր զհետ խրատու իմաստութեան։ Պարթեւն խօսեցաւ բազում ինչ զազնուականութենէ տոհմին, ապա աւելի իմն համեստութեամբ յաւել, թէ կամէր երթալ ի Հռոմ և տանել առ կայսր նշան յաղթութեան՝ որ անծանօթն էր ցայնժամ, այն է արշակունի աղաչաւոր, մինչ Պարթեւաց չէր ի պարտութիւն մատնեալ։ Երկուստեք միաբանէին, զի Տրդատ դիցէ առաջի պատկերին կայսեր զարքունի ապարօշն և առնուցու զայն այսրէն ի ձեռանէ Ներոնի միայն։ Ապա գիրկս արկեալ միմեանց մեկնեցան։ Յետ աւուրց ինչ ընդ մէջ անցանելոյ, տողեալ կարգեցան մեծաշուք փառօք, անտի՝ հեծեալք Պարթեւաց ի գունդս գունդս զարդարեալ նշանօք իւրեանց աշխարհին, և աստի՝ լեգէոնք Հռոմայեցւոց, յորոց ի ճակատն դրօշք արծուէնշանք և պատկերք դիցն, որոց տեսիլն տայր տեղւոյն նմանութիւն իմն մեհենի։ Ի միջոցին կանգնեալ կայր ատեան, աթոռ կայսերական ի վերայ, ուր եդեալ էր անդրի պատկեր Ներոնի։ Տրդատ, յետ ըստ սովորութեան յագելոյ զսպանդսն՝ մատեաւ յառաջ, հան զթագն ի գլխոյն և եդ առ ոտս անդրւոյն. տեսիլ իմն որ խանդաղատեցուցանէր զամենայն անձն և որոյ ազդումն լինէր այնչափ սաստիկ՝ որչափ յանդիման աչաց ունէին զկոտորած և զպաշարումն հռոմէական զօրուն։ Սակայն քանի փոխեալ էին գնացք բախտին։ Տրդատ երթայր երևել ազգաց, և զինչ պակասէր առ ունելոյ զնա առ գերիս։ Կորբուղոն փոյթ առնէր ոչ փառաց միայն, այլ և ուշ ունէր քաղաքավարութեան, և ետ խնջոյս։ Թագաւորն առ ամենայն ինչ նոր որ կորզէր զաչս՝ խնդրէր մեկնութիւն։ «Ընդէր, ասէ, հարիւրապետ մի առնէ ազդ զսկիզբն առնլոյ հսկման. ուստի՞ զայցէ սովորութիւնն յառնելոյ ի ճաշոյ ի ձայն փողոյ, երթալոյ ջահիւ վառեալ զհուր ի վերայ բագնի կանգնելոյ առաջի նուիրաց։ Կորբուղոն բանիւք պատասխանւոյ որ մեծացուցանէին իմն զիրս՝ ելից զնա զարմանօք վասն վաղնջուց սովորութեանցն Հռոմայ։ Ի վաղիւն Տրդատ խնդրէր զի յառաջ քան հարկանել բուռն զայնպիսւոյ երկայն ճանապարհէ՝ տացի նմա թոյլ երթալ տեսանել զեղբարս իւր և զմայրն։ Բայց զդուստր իւր թողոյր պատանդ թղթով աղաչանաց առ Ներոն։

Տրդատ երթայ և գտանէ զԲակուր ի Մարս և զՎաղարշ յԵկբատանս։ Թագաւորն չէր մոռացեալ զիւր եղբայր։ Նա մանաւանդ խնդրեալ իսկ էր ի ձեռն հրեշտակաց ի Կորբուղոնէ, զի մի կերպարանս ինչ գերւոյ կրիցէ եղբայրն, մի յանձնեսցէ զսուր իւր, տացի նմա մուտ համբուրելոյ զկուսակալս գաւառաց Հռոմայեցւոց, մի սպասել առ դրան նոցա, և ի Հռոմ գնասցեն ընդ նմա պատուով իբրև ընդ հիւպատի։ Պատճառ այն էր, զի Վաղարշ սովորեալ յամբարտաւանութիւն արքունեաց արևելից՝ չէր հմուտ ոգւոյն Հռոմոց, առ որս բուն իսկ իշխանութիւնն է ինչ, ստուեր նորա՝ դոյզն ինչ»։

Գ. Աւելի համառօտ, բայց ոչինչ ընդհատ յատակ կը պատմէ Դիոն նոյն պատմութիւնը, զոր պատշաճ կը համարինք դնել հոս, թէպէտ Դիոն իբր մի դար հեռի կը գտնուի ժամանակաւ։ «Մինչ այսպէս զբաղեալ էր (Ներոն)՝ եկն հրեշտակ յաշխարհէն Հայոց և զափնի՝ վասն նորոյ յաղթութեան։ Կորբուղոն գումարեալ ի մի գունդ զլեգէոնսն ցրուեալս և հանեալ զնոսա ընդ հրահանգս, զօրովք անփոյթ արարեալ էր նոցա՝ զարհուրեցոյց զՎաղարշ արքայ Պարթևաց և զՏրդատ թագաւոր Հայոց համբաւով միայն իւրոյ գալստեանն։ Հանգոյն առաջնոց Հռոմոց՝ Կորբուղոն էր անուանի ոչ ազնուականութեամբ միայն իւրոյ տոհմին, ուժով մարմնոյն և իմաստութեամբ ոգւոյն, այլ և էր արդար և հաւատարիմ առ այլս, եթէ առ իւրսն և եթէ առ թշնամիսն։ Սմին իրի և Ներոն սահմանէր զնա առաքել փոխանակ իւր ի պատերազմ, և տայր ի ձեռս նորա բազմութիւն զօրաց, որպիսի չէր նորա տուեալ այլում ումեք, քանզի հաւանեալ էր, եթէ Կորբուղոն էր ձեռնհաս նուաճել զբարբարոսսն և չգրգռել զայլս ի նախանձ։ Ոչ վրիպեցաւ Ներոն յակնկալութենէ իւրմէ, ո՛չ ի միումն և ոչ ի միւսում. Կորբուղոն ոչ այլով իւիք եղև անհաճոյ Հռոմայեցւոց՝ բայց կալովն միայն հաւատարիմ առ Ներոն, քանզի Հռոմայեցիք այնպէս իմն ցանկային ունել զնա կայսր փոխանակ Ներոնի՝ զի զհաւատարմութիւն նորա միայն հարկանէին նմա յերեսս։

Կորբուղոն յետ տիրելոյ Արտաշատու առանց պատերազմի՝ արար զայն հարթյատակ։ Ապա խաղայր ի վերայ Տիգրանակերտի, խնայելով որոց միանգամ հնազանդէին նմա և սատակելով զորս դիմադարձն լինէին։ Քաղաքն եղև անձնատուր, և Կորբուղոն կատարէր և այլ ևս բազում գործս արութեան մեծաւ շքով, որոց կատարածն լինէր ածել զՎաղարշ, որչափ և ահաւոր էր նա՝ ի հաւան ըստ արժանի մեծութեանն Հռոմայեցւոց։ Իմացեալ Վաղարշու, եթէ Ներոն բաժանեալ էր, որպէս զայլ աշխարհս՝ նոյն-

պէս և զՀայոց աշխարհն, և թէ Տիգրան աւերէր զԱդիաբեն՝ պատրաստէր գալ անձամբ ի վերայ Կորբուղոնի, և առաքեաց ի Հայս զՄանաւազ արքայ Ադիաբենացւոց և զՄոնեսէս Պարթև: Սոքա պաշարէին զՏիգրան ի Տիգրանակերտ: Այլ զի պաշարմամբն այնուիկ փոխանակ վնաս ինչ գործելոյ նմա յամենայն խառնուրդս ճակատուց մղէին յետս ի նմանէ և ի Հռոմայեցւոց որ ընդ նմա էին, և զի դարձեալ Կորբուղոն հսկէր մեծաւ զգուշութեամբ ի վերայ Ասորւոց՝ Վաղարշ ի բաց եկաց ի խորհրդոյն և դադարեցաւ ի պատրաստութեանցն: Առաքեալ դեսպանս առ Կորբուղոն՝ հաւանեցոյց զնա տալ միջոց պատերազմին, յանձն առեալ ընդ այնր արձակել դեսպան առ կայսր և բարձեալ զպաշարումն հանել զզօրս իւր յաշխարհէն Հայոց: Ներոն ոչ առնէր նմա պատասխանի և առաքէր զԿեսեննիոս Պետոս ի Կապադովկիա արգելուլ յապըստամբելոյ զՀայս:

Վաղարշու տուեալ ճակատ առ Տիգրանակերտիւ՝ վանէր զՊետոս, որ գայր ի թիկունս քաղաքին. այլ զհետ մտեալ նորա ի փախստեանն՝ խորտակէր զպահանորդսն թողեալ ի թշնամւոյն ի Տաւրոս, և զնա ինքն արկ յարգել ուրեք մօտ յԱրածանի: Սակայն դառնալոց էր յետս ոչինչ վճարեալ—զի չէր մարթ նմա հալել ի պատնէշսն առ ի չգոյէ սպառազէն զօրաց, և հասեալ անդր առանց պաշարի՝ չգտանէր ռոճիկ բաւական ըստ թուոյ բազմութեան զօրուն—եթէ Պետոսի, երկուցեալ ի նետից անտի Պարթևին որ հասանէին մինչև ի բանակետղ անդր, և յայրուձիոյն որ ամենայն ուստեք երևէր՝ չէր լեալ բանագնաց, դաշինս կռեալ և երդմամբ խոստացեալ ելանել յաշխարհէն Հայոց, զոր Ներոն տալոց էր Տըրդատայ: Հաճեալ ընդ այս Պարթևին և ածեալ զմտաւ, թէ մարթ էր դիւրաւ լինել տէր երկրին և շահել զՀռոմայեցիս, իբր այն թէ երախտիս առնէր նոցա, լուեալ ես զմերձենալ Կորբուղոնի, զոր Պետոս կոչեալ էր յօգնութիւն իւր՝ թողոյր պաշարելոցն երթալ ազատ, յառաջագոյն խնդրեալ ի նոցանէ արկանել նմա կամուրջ ի վերայ Արածանւոյ, ոչ զի պէտս ինչ ունէր կամրջին, զի անցեալ էր նա ընդ հուն մի, այլ կամէր ցուցանել նոցա եթէ էր հզօրագոյն քան զնոսա: Ուստի փոխանակ անցուցանելոյ զզօրս իւր ընդ կամուրջն՝ ինքն անց ի լիւղ հեծեալ ի փիղ և ետ անցանել զօրուն այնպէս՝ որպէս անցեալ էր նոցա յառաջագոյն:

Այն ինչ հաստատեալ էր դաշանցն, հասեալ Կորբուղոն անհնարին արագութեամբ յափունս Եփրատայ՝ առնոյր անդէն զտեղի: Իբրև բանակքն երկոքեան (Կորբուղոնին և Պետոսի) եկին առ միմեանս՝ անդ էր տեսանել զմեծ խառն զօրաց և զօրավարաց եր-

կուստեք. մի կողմն էր ուրախ և պարծէր ընդ արագութիւն իւրեանց. միւս կողմն տրտմեալք և ամօթով վասն դաշանցն կռեւոց: Իսկ Վաղարշ առաքէր զՄոնեսէս խնդրել ի Կորբուղոնէ՝ թողուլ զամրութիւնսն որ ի Միջագետս: Պատգամաւորք սաէպ երթային և գային ընդ կամուրջն Եփրատայ, զոր ընդ մէջ հատեալ էր նոցա: Կորբուղոն խոստանայր ելանել ի Միջագետաց՝ եթէ Պարթեւք թողուին զՀայս, և պայմանքն կատարեցան երկուստեք. մինչև Ներոն լեալ իրազեկ եղելոցն և լուեալ զհրեշտակսն առաքեալս ի Վաղարշէ՝ առնէր պատասխանի եթէ առնոյր յանձն տալ զՀայս Տրդատայ՝ եթէ և նա յանձն առնուցու երթալ ի Հռոմ: Ապա յետ հանելոյ զՊետոս ի զօրավարութենէն և ցրուելոյ զզօրսն որ ընդ նմա՝ միւսանգամ յանձն առնէր Կորբուղոնի զպատերազմն ընդդէմ բարբարոսաց: Ունէր ի մտի անձամբ երթալ ի կռիւն, այլ անկեալ յերիվարէն ի ժամու զոհիցն՝ ոչ իշխէր երթալ, և մնաց ի Հռոմ: Կորբուղոն յաչս ամենեցուն պատրաստէր ի պատերազմ ընդդէմ Վաղարշու, նա յղէր իսկ առ նա հարիւրապետ մի՝ սպառնալ զնա հանել զզօրս իւր յերկրէն, այլ ի ծածուկ տայր նմա խրատ առաքել զեղբայր իւր ի Հռոմ, և հաւանեցոյց զնա յայն, զի Կորբուղոն թուէր ունել զօրս առաւել քան զնորայսն: Կորբուղոն և Տրդատ տեսին զմիմեանս ի տեղւոջ ուրեք Հռանդէա անուն: Ոչ ի խորհել միայն եկին նոքա ի մի վայր. կանգնեցաւ բեմ բարձր, յորոյ վերայ եդաւ կէս անդրի Ներոնի. Տրդատ դէմ յանդիման մեծի իրիք բազմութեան Հայոց, Պարթեւաց և Հռոմոց մատեաւ յառաջ ի պատկեր անդր կայսերն և երկիր եպագ նմա. ապա յետ մատուցանելոյ զոհս և աղերս պաղատանաց՝ եհան զթագն ի գլխոյն և եդ ի վերայ պատկերի կայսեր: Մանաւազ և Վաղարշ եկին տեսանել զԿորբուղոն և ետուն նմա պատանդս: Ներոն վասն իրացս այսոցիկ անուանեցաւ ինքնակալ բազում անգամ» (Դիոն ԿԲ. 19—23):

10. Թէպէտ, ինչպէս յայտնի է այս պատմութենէն, Հռոմայեցիք յաղթուած էին մանաւանդ քան յաղթող, և Տրդատ երևելոց էր ի Հռոմ, ըստ պայմանին Վաղարշու, պատուով ըստ օրինի հիւպատոսաց՝ Ներոն խորամանկութեամբ ի պատիւ իւր դարձոյց ընդունելութիւնը, որպէս ասէ Սուետոն, որոյ բանքն ի ստորև: Արդարև լատին պատմիչք ժամանակակիցք (Սուետոն) և մերձաւորք ժամանակաւ (Եւտրոպիոս) կ'ընդունին, թէ Հռոմայեցիք յաղթուեցան այն պատերազմին մէջ.—«Յարևելս ամօթալի պարտութիւն ի Հայս՝ անցոյց զլեգէոնս մեր ընդ լծով» (Սուետ. ի Ներ. ԼԹ.): «Պարթևք հանին ի նմանէ (ի Ներոնէ) զՀայս և ետուն անցանել լեգէոնաց մերոց ընդ լծով» (Եւտր. Է. 14): Տրդատ անկաւ

յուղի երեք հազար հոյ և պարթև հեծելովք և բազմութեամբ մոգուց, քանզի և ինքն իսկ ունէր հանդերձ թագաւորութեամբն՝ պատիւ մոգպետութեան։ Ճանապարհորդութիւնն տևեց ինն ամիս, ոչ սակաւ Հռոմայեցիք կ'երթային ընդ նմա իբրև պատուագիր, և ծախքն էին յարքունուստ հրամանաւ Ներոնի։ Երբ Տրդատ հասաւ յԻտալիա՝ ղրկուեցան դեսպանք, քանզի մինչև հոն եկած էր թագաւորն ի նիւս երիվարի ոսկի սաղաւարտով։ Ներոն էր ի Նէապոլիս՝ երբ յանդիման եղև նմա Տրդատէս, և յետ մըրցութեան խաղուց որ եղան ի պատիւ նորա՝ եկան թագաւորն և կայսրն ի Հռոմ, ուր լինելոց էր թագադրութիւնն։ Բոլոր քաղաքն, որպէս ասէ Տակիտոս՝ զիմաւորեց զՏրդատ, որ էր արդարև վայելուչ դիմօք և հասակաւ։ Հրապարակն ուր պիտի կատարուէր հանդէսն՝ զարդարուած էր մեծագին օթոցիւք. ժողովուրդն սպիտակահանդերձ ի միջոցին, շուրջ պատեալ ի զօրուէն, և տանիք տանց խճողեալ էին բազմութեամբ հանդիսատեսաց։ Ներոն կայսերական պատմուճանաւ, բակ առեալ ի ծերակուտէն և թիկնապահ զօրուէն՝ նստաւ յաթոռ իւր բարձր բեմի վերայ, և Տրդատ ելլելով աստիճաններէն վեր էջ ի ծունր առաջի կայսեր, որ վերցունելով զնա աջոյ ձեռամբն՝ համբուրեց և նստոյց յայլ աթոռ խոնարհագոյն քան զիւրն։ Ապա դրաւ Հայոց թագաւորական թագն ի գըլուխն Տրդատայ ի ձայն ցնծութեան այն ահեղ բազմութեան։ Յետոյ եղան խաղք ի հրամանէ ծերակուտին Պոմպէի թատրոնը, որ զարդարեալ էր ոսկւով և ծիրանեօք ի պատիւ թագաւորին որ կը նստէր յաջմէ կայսեր, և ի վախճանին եղաւ հացկերոյթ մեծ։ Տրդատ յետ այնորիկ յոյն և հռոմայեցի ճարտարօք կը դառնայ ի Հայս, և կը շինուի Արտաշատ։

Տրդատայ Հռոմ երթալուն պատմութիւնն ունի Դիոն այսպէս. «Տրդատ եկն ի Հռոմ, ածեալ ընդ իւր ոչ միայն զորդիս իւր, այլև զորդիս Վաղարշու, Բակրոյ և Մոնաւազայ։ Չու նոցա ընդ ամենայն երկիրն սկսեալ յԵփրատայ՝ լինէր իբրև յաղթական չու։ Տրդատ էր ի ծաղկի հասակին, գեղեցիկ և բարենշան ազնուականութեամբ տոհմին և մտօքն։ Գայր արքունական շքով, երեք հազար պարթև հեծելովք, թող զբազմութիւնն Հռոմայեցւոց որ գնային զհետ նորա։ Քաղաքք ընդունէին մեծաւ հանդերձանօք զնա և զորս ընդ նմա էին և ազգք և ազինք՝ ուրախութեան աղաղակաւ։ Ամենայն պէտք նոցա տուան ձրի, մինչև ծախուցն լինել հասարակաց գանձուն երկերիւր բիւրոց դահեկանաց (2,000,000 տրամի) յաւուրն։ Այս տևեաց զամիսս ինն ճանապարհորդութեանն։ Տրդատ երթայր հեծեալ ի ձի մինչև յԻտալիա. առընթեր

նմա երթայր կին նորա նոյնպէս ի նիւս երիվարի, սաղաւարտ ոսկի ի գլուխն ի նմանութիւն ապարօշի, առ ի ծածկելոյ զդէմսն ըստ սովորութեան երկրին։ Յիտալիա ճանապարհորդութիւնն լինէր կառօք զորս առաքեալ էր նմա Ներոն, և չոքաւ նա գտանել զկայսրն ի Նէապոլիս։ Այլ իբրև մօտ լինէր առ նա՝ չառ յանձն, հակառակ հրամանին զոր ընկալաւ՝ ի բաց դնել զվաղակաւորն. շատ և բաւական համարեցաւ մխել զայն ի պատեանն, թէպէտ և զծունկն իւր եդ ի գետնի և ձեռս ի կուրծս՝ կոչեաց զկայսրն Տէր և երկիր եպագ նմա։

Ներոն զարմացեալ ընդ այս գործ Տրդատայ՝ ընկալաւ զնա պատուով և ետ ի պատիւ նորա սուսերամարտից կռիւ ի Պուտէոլոս։ Պատրոբիոս ազատացեալն կայսեր ունէր զվերակացութիւն խաղուցն, եցոյց այնչափ մեծութիւն և ծախեաց այնչափ, զի մի օր ողջոյն ոչ այլ ինչ էր տեսանել ի վերայ թատերն՝ բայց միայն արս և կանայս և մանկունս եթովպացիս։ Տրդատ ի բարձուէ անտի գահուն նետաձիգ ի գազանսն լինէր, և եթէ պարտ իցէ հաւատալ՝ ի մի հարուած նետից հար և սպան երկուս ցուլս միանգամայն։

Ներոն յետ այսորիկ տանէր զնա ի Հռոմ և դնէր զթագն ի գլուխ նորա։ Քաղաքն ողջոյն էր զարդարեալ ճրագօք և պսակօք. ամենայն ուրեք էր տեսանել խուռն բազմութիւն մարդկան, հրապարակն մանաւանդ լի էր ամբոխիւ, իսկ զմիջոցն ունէր ժողովուրդն կարգ կարգ, սպիտակ հանդերձիւք և դափնեօք. զմնացեալ մասն ունէր զօրն վառեալ ի զէն և ի զարդ, յորոց շողիւնք արձակէին իբրև զփայլատակունս։ Տանիք անգամ շինուածոց ծածկեալ էին բազմութեամբ մարդկան, որ ելեալ էին անդր ի զնին տեսլեանն։ Այս պատրաստութիւնք լինէին ի գիշերի, և Ներոն ի ծագել այգուն մտանէր ի հրապարակն, զգեցեալ պատմուճան յաղթութեան, հանդերձ ծերակուտիւն և թիկնապահօք. ել նա ի բեմ անդր և նստաւ յաթոռն կայսերական։ Յետ այնորիկ Տրդատէս և իւրքն անցան ի մէջ, բակ առեալ ի զինուորաց, և հասեալ առաջի բեմին՝ երկիր պագին կայսեր առաջին անգամ։

Ձայն մեծի աղաղակին որ բարձաւ յայնժամ՝ զարմացոյց զՏրդատ այնպէս՝ մինչև կալ նմա վայր մի անբարբառ իբրև զմեռեալ. այլ իբրև դարձաւ լռութիւնն ի ձայն քարոզին՝ եկն ի միտս իւր, և բուռն առնելով գոռոզութեանն՝ խոնարհեցաւ հարկին և իւրոյ շահուն, և չեղև նմա փոյթ, յուսով այնր զոր ընդունելոց էր՝ խոնարհեցուցանելն զանձն բանիւք, և խօսեցաւ օրինակ զայս. «Տէր, եմ ես զաւակ Արշակայ, եղբայր Վաղարշու և Բակրոյ, և քո ծառա-

ռայ։ Եկի առ քեզ որ նստուած իմ ես՝ երկիր պագանել քեզ իբրև Միհր Աստուծոյ. այն լիցի իմ բախտ՝ զոր մանեսցեն իլք քո՛, զի վասն իմ ես դու Պարկայն և Բախտ»։ Ներոն ետ նմա պատասխանի. «Իմաստութեամբ արարեր գալ այսր տեսանել զիս անձամբ. զի զթագաւորութիւնն, զոր ոչ հայր քո եթող քեզ, և ոչ եղբարք քո որ ետուն զայն քեզ, կարացին պահել՝ զայն ես տամ քեզ. առնեմ զքեզ թագաւոր Հայոց, առ ուսուցանելոյ և՛ քեզ և՛ նոցա, զի ունիմ ես իշխանութիւն առնուլ զթագաւորութիւնս և տալ»։ Յետ խօսելոյ այսպէս՝ հրամայեաց նմա ելանել ընդ ուղին զոր թողեալ էր վասն այսորիկ առաջի բեմին, և իբրև նստաւ Տրդատ առ ոտս Ներոնի՝ Ներոն եդ զթագն ի գլուխ նորա. յայնժամ լսելի եղեն բիւր ձայնք ազգի ազգիք։

Եղեն ևս խաղք թատերականք հրամանաւ ծերակուտին։ Թատրոնն, ոչ տեղի տեսլեանն միայն այլև վայրն գլխովին՝ էր ոսկեզօծ, և ամենայն կարասին որ ի նմա՝ էր ոսկեպատ, ուստի և օրն այն կոչեցաւ օր ոսկւոյ։ Վարագոյրք ձգեալք յօդս առ պատսպարելոյ ի տապոյ արեգականն՝ էին ի ծիրանւոյ. ի միջոցին էր Ներոն ոսկեհուռն հանդերձիւք. վարէր կառս իմն, և շուրջ զնովաւ համակ փայլէին աստեղք յոսկւոյ։ Դարձեալ եղև, որպէս յայտ է՝ սեղան մեծածախ։ Ներոն եհար քնար և վարեաց կառս, զգեցեալ հանդերձ կանաչ և խոյր կառավարաց ի գլուխն։ Տրդատ անարժան զտեսիլն համարեցաւ, և ի գովելն զԿորբուղոն՝ պարսաւէր զնա միայն՝ զի այնպիսի տեառն կայր ի ծառայութեան։ Նաև ի նմին իսկ ի կայսերէ ոչ ծածկեաց զխորհուրդ մտացն, այլ ասէ ցնա յաւուր միում. «Տէր, սքանչելի ծառայ ունիս ի Կորբուղոն»։ Ներոն ոչ իմացաւ զմիտս բանին. յայլ ամենայն ժամանակս՝ Տրդատ խօսէր առ Ներոն բանս համակ ողոքանաց և հնազանդութեան. վասնորոյ և ընկալաւ իսկ, որպէս ասեն, բազում պարգևս, որոց գին հասանէր ի հինգ հազար բիւրս դահեկանաց, և հրաման շինելոյ զԱրտաշատ, վասնորոյ և տարաւ ի Հռոմայ բազմութիւն գործաւորաց, յորոց զոմանս ետ կայսր, զայլս վարձէր թագաւորն գնոց արծաթոյ։ Բայց Կորբուղոն ոչ ետ թոյլ ամենեցուն միանգամայն երթալ ի Հայս, այլ այնոցիկ միայն՝ զորս շնորհեաց կայսր. և այս մանաւանդ ետ Տրդատայ զարմանալ ևս առաւել ընդ մին և գովել զմիւսն աւելի» (Դիոն. ԿԳ. 1—7)։

Ի յիշատակ այս նշանաւոր դիպաց կան դահեկանք. նախ 58 ամէն, որ է ամ առման Արտաշատու՝ կայ դահեկան Ներոնի «արծաթի (quinarius), յորոյ ի միւսումն կողման ի միջի է գիր՝ «Հայաստան» (Armeniac,. այսինքն՝ Armeniaca victoria, կամ Ar-

menia capta), և պատկեր՝ Յաղթութիւն զի ընթանայ պսակ յաջու ձեռին, և կամ պսակ և արմաւենի ևս. իսկ յայլում, դարձեալ ի նոյնպիսի դահեկանի՝ Յաղթութիւն զի գրէ ի վերայ վահանի» (Գաթըրճ. Տիեզ. պատմ. Բ. 114)։ Նոյնպէս յամէն 61, 62, 63 «դահեկանք ոսկիք և արծաթիք Ներոնի, յորոյ ի միում կողմանն է գլուխ Ներոնի մերկ, և ի միւսումն՝ երբեմն պսակ ի կաղնւոյ, երբեմն Դեմետրէ (դիք արմտեաց) կայ կանգուն՝ հասկս յաջում ձեռին և ջահ ի ձախումն. և դարձեալ՝ զինուոր մի կանգուն, յաջու ձեռին վաղակաւոր, և ի ձախումն՝ նիզակ, և աջու ոտամբն կոխէ զկառափն մարդոյ կամ զաղաւարտ մի» (Անդ. 115, ծան. 3)։ Դարձեալ միւս ևս «դահեկան Ներոնի պղնձի, յորոյ ի միում կողմանն է գլուխ Ներոնի պսակաւոր ի դափնւոյ և վահան Եգիդ զլանջօք, և ի միւսումն կողման տաճար Յանեայ դրովք փակելովք և գիր շուրջանակի՝ Paci p. r. terra mariq. parta Ianum clusit. և կամ Հռոմ ի կերպարանս կնոջ նստեալ, նիզակ յաջումն և վահան ի ձախում» (Անդ, 123, ծան. 2)։

Զընդունելութենէն Տրդատայ ի Ներոնէ խօսի Տակիտոս այսչափ ինչ համառօտիւ. «Վասն երկուց դատապարտութեանց (Սորանոսի և Ակրատոսի) ընտրեցաւ ժամանակն՝ յորում Տրդատ գայր ընդունել զթագն Հայոց». և սակաւ մի յետոյ. «Ի ժամուն յորում բնակիչք ամենայն խուժէին արտաքս ի Հռոմայ երթալ ընդ առաջ կայսեր և տեսանել զթագաւորն՝ Թրասէաս ընկալաւ հրաման չմերձենալ»։ Սուետոն ընդարձակ ևս կը պատմէ. «Մարթ է թուել յիրաւի ի մէջ տեսլեանցն զորս ետ (Ներոն)՝ զմուտն Տրդատայ ի Հռոմ։ Թագաւորս այս Հայոց, ձգեալ ի մեծամեծ խոստմանց նորա՝ պարտէր երևել առաջի ժողովրդեան յաւուրն սահմանելոյ հրովարտակաւ, այլ անհարթութիւն օդոյն եղև արգել։ Ներոն եցոյց զնա այնպիսի իմն օրինակաւ որ շահաւորագոյնն էր նմա։ Տողէր շուրջ զհրապարակաւն գունդս վառեալս զինու զարդու, և ինքն նստէր ի բեմին հրապարակախօսաց յաթոռն կայսերական ի հանդերձ յաղթականի, շուրջ պատեալ ի զինուորական նշանացն և ի հռոմէական արծուեաց։ Տրդատ ելանէր ընդ աստիճանսն և անկանէր ի ծունր։ Ներոն կանգնէր զնա և համբուրէր։ Ապա ըստ նորա աղաչանացն՝ հանէր զխոյրն և դնէր զթագն ի գլուխ նորա, մինչ ումն ի հին պրետորաց թարգմանէր բազմութեանն զբանս աղաչաւորին։ Անդուստ ապա ածէր զնա (Ներոն) ի թատրոնն, և յետ ընդունելոյ ի նմանէ այլ ևս մեծարանս հպատակութեան՝ նստոյց զնա ընդ աջմէ իւրմէ։ Ողջունեալ ինքնակալ յետ այնորիկ՝ տարաւ զիւր պսակն ի դափնւոյ ի Կապիտոլիոն անդր և փակեաց զմեհեանն Յա-

նոսի, որպէս թէ չգոյր այլ ևս պատերազմ ի վճարել» (Սուետ. ի Ներոն, ԺԳ)։

Պլինիոս ևս կը յիշէ երիցս զգալուստն և զընդունելութիւն Տրդատայ ի Ներոնէ զայս օրինակ. «Տրդատէս մոգ եկեալ էր գտանել զնա (զՆերոն) ի Հռոմ, բերեալ յանձին իւրում զձաղանս Հայոց աշխարհին, և վասն այսորիկ իսկ կոխէր զնահանգսն ընդ որս անցանէր։ Զէր կամեցեալ երթալ ընդ ծով, զի մոգքն արգելեալ համարին թքանել ի ծով և աւելորդօք ինչ կարեւորօք մարդկութեան զտարրն զայն պղծել։ Ունէր ընդ իւր մոգս, առնէր զՆերոն միջամուխ ի խնջոյս մոգականս. սակայն կայսրն որ տայր նմա թագաւորութիւն՝ չկարէր ընդունել ի նմանէ զարուեստ մոգութեան» (Պլին. Լ. 6)։ Այլուր (ԼԳ. 6) ասէ. «Ներոն որ զնորա կնի զայլ՝ համակէր ոսկւով զթէատրոնն Պոմպէի վասն միոյ աւուր միայն, յորում եցոյց զայն Տրդատայ արքայի Հայոց»։ Եւ այլուր դարձեալ՝ «Տրդատէս թողու ազատ ի Ներոնէ, տուեալ ի գին երեքտասան հազարս հազարաց սեստերտից»։

Ի բովանդակ պատմութեան Հռոմայեցւոց չկայ ամենեւին օրինակ թագաւորի տուելոյ այսպիսի և այսչափ փառաւորութեամբ, մինչև անձամբ պսակել կայսեր ի մայրաքաղաքի անդ ի Հռոմ։ Մեր ազգային պատմութիւնն որ քրիստոնէական է, կամ մանաւանդ Խորենացին՝ չունին զնշմարանս անգամ այս պատմութեան, կամ վասն զի անծանօթ մնաց յիշատակն, կամ թերևս՝ վասն զի անարժան համարեցաւ քրիստոնէական նախանձն Հայոց Ներոնիւ կատարուած դիպուած մի, թէև փառաւոր՝ արձանագրել տեսնել իւր պատմական յիշատակարաններուն մէջ, հաւանականագոյն ևս՝ Խորենացւոյն, որ մի միայն հայ պատմիչն է հեթանոսութեան ժամանակին, աղքատութիւնն մեր պատմութեան արտաքին աղբիւրներուն։ Զիարդ և իցէ՝ եթէ քրիստոնեայ հայն չգիտցաւ կամ չկամեցաւ գիտել՝ հեթանոս վիպասանութիւնն մեր քաջ գիտէր, ինչպէս պիտի տեսնենք ի սորև։

11. Թէ ինչպէս վարուեցաւ Տրդատ յետ մահուան Ներոնի ներքին յուզմանց ժամանակ, մինչ Վինդէքս, Գալբա, Ոթոն և Վիտեղլիոս (68—69) կը ճգնէին կորզել ի ձեռաց միմեանց կայսրութիւնը՝ չէ յայտ. սակայն գիտենք ի Տակիտոսէ, թէ երբ Վեսպասիանոս ընտրեցաւ կայսր (69)՝ Տրդատ փութացաւ հաստատել զբարեկամութիւնն ընդ Հռոմայեցիս։ «Ամենայն նահանգք որ թանան ի ծովէն (Միջերկրականէ) մինչև ի սահմանագլուխս Ասիոյ և Յունաց, և այնք որ ձգին ի ներքս մինչև ի թագաւորութիւնս Պոնտոսի և Հայոց՝ երդուան հնազանդութիւն» (Տակ. Պատմ. Բ. 81)։

և դարձեալ (անդ 82)—«Հրեշտակք առաքեցան առ Պարթևն և առ Հայ ի Վեսպասիանոսէ՝ յորդորել ի հաւատարմութիւն»: Առ նովին Վեսպասիանոսիւ, յետ ոչ բազում ամաց զկնի դարձին Տրդատայ ի Հռոմայ՝ եղաւ Մարաց և Հայոց վրայ արշաւանքն Ալանաց, որոց դէմ Վաղարշ Ա. արքայ Պարթևաց (եղբայր Տրդատայ) խնդրեց Հռոմայեցւոց օգնութիւնը: Դոմետիանոս, կրտսեր որդին Վեսպասիանու, եղբայր Տիտոսի, ջանաց երթալ իբրև հրամանատար օգնական զօրուն, և երբ չյաջողեցաւ՝ կամեցաւ պարգևօք ածել զթագաւորսն Մարաց և Հայոց՝ խնդրել զնա ինքն Դոմետիանոս: Բայց Ալանք մեկնեցան, թերևս յետ խնամութեանն ընդ Հայոց ըստ մեր վիպասանաց, ինչպէս ունիմք պատմել: Զարշաւանն Ալանաց կը յիշէ Սուետոն.—«Իբրև Վաղարշ արքայ Պարթևաց խնդրեաց օգնութիւն ընդդէմ Ալանաց, և միւս ևս հրամանատար յորդւոց անտի Վեսպասանու ջան ի գործ առնէր (Դոմետիանոս), զի ինքն առաքեսցի, և իբրև չկարաց լինել զամագիտ՝ զայլս ևս ի թագաւորաց արևելից փորձէր տրովք և խոստմամբք, զի զնա ինքն խնդրեսցեն» (Սուետոն, ի Դոմիտ.): Յովսեպոս ժամանակակից և ընտանին Փլաւեանց կը յիշէ աւելի մանր զայս արշաւանն,—սոյն Տրդատայ պատահած պատմելով ներդեալ պարանին զխպուածը, զոր իբր յետ երեք հարիւր ամաց մեծին Տրդատայ պատահած կը պատմէ Խորենացին (Բ. ԶԵ.): Ահա բանք Յովսեպոսի. «Այլուր խօսեալ է մեր զԱլանաց, որ բնակեն առ Տանայիս գետով և առ Մէովտիսն ծովակաւ և են ի բնէ Սկիւթացի: Ի մտի եդեալ սոցա զայնու ժամանակաւ յաւարի առնուլ զՄարս՝ առնէին ի բանի զարքայն Վրկանից, զի նա միայն ունէր զանցս ընդ որ էր մուտ յաշխարհն: Պատմի թէ Աղեքսանդր մեծ ետ բանալ զայն կիրճ և թէ փակել նա դրամբք երկաթեօք: Արդ հասեալ նոցա ի Մարս, իբրև ոչ ոք լինէր նոցա դիմակալ՝ յաւարի առնուլն զաշխարհն, վարէին զոչխար և զարջառ բազում, և Բակուր արքայ Մարաց որ թագաւորէր յայնժամ՝ զահի հարեալ յոյժ խոյս տայր ի լերինս, և ստիպեալ տայր քանքարս հարիւր՝ թափել զկին և զհարճս իւր ի ձեռաց բարբարոսացն: Այսպէս անցին նոքա անարգել, աւերեալ զամենայն՝ մինչև ի Հայս, ուր թագաւորէր յայնժամ Տրդատէս: Իշխանս այս հարաւ նոցա ի դիմի, և փոքր միւս ևս՝ և անկանէր ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկէց պարան ի պարանոց նորա, և քարշէր զնա՝ եթէ չէր նորա աճապարեալ հատանել զայն սրովն: Բարբարոսքն ևս առաւել զայրացեալք ընդ կռիւն՝ աւերեցին զաշխարհն և տարան վտարանդի զբազմութիւն գերեաց և կողոպուտ բազում» (Յովս. Պատմ. թարգմ. Հր. Դպր. Է. Գլ.

ԻԹ.)։ Խորենացւոյն պատմութենէն, ուր պարանին դէպքը կ'ընծայուի մեծին Տրդատայ՝ յայտնի է, թէ Արտաշէսն նորա կը կոչուէր և Տրդատ, ապա թէ ոչ անմեկնելի կը մնայ չփոթութիւնն, որ անշուշտ Խորենացւոյն կողմանէ է և ոչ Յովսեպոսի, որ իբր երեք հարիւր ամօք յառաջ է։ Թէ Արտաշէսն Բ. Խորենացւոյն նոյն է ընդ Տրդատայ Տակիտոսի, Յովսեպոսի, Սուետոնի և այլոց ժամանակակից պատմագրաց՝ անտի ևս յայտնի է, զի բազում ինչ զոր սոքա կը պատմեն այս Տրդատայ վրայ՝ ի վիպասանաց մերոց կ'ընծայուի Արտաշիսի։ «Դոմետոն», զորմէ ասեն վիպասանք եկեալ ի Հայս, շինութիւնն—«Հիմնանալ» Արտաշատու յԱրտաշիսէ, մարտ ընդ Ալանս, որ կը յիշուին յերգս՝ բաւական են հաստատել այս նոյնութիւնը։ Զիարդ և իցէ՝ ըստ մեզ գրեթէ առանց երկբայութեան է, թէ Տրդատս այս Տակիտոսի՝ է նոյն ընդ Արտաշիսի Բ. Խորենացւոյն։ Այս նոյնութեան վրայ հիմնեալ՝ ինչ որ Խորենացին կը պատմէ զԱրտաշիսէ իբրև առնուած յերգոց վիպասանաց՝ կը գտնենք հոս իբրև արդարև պատմական, թողլով միայն այլաբանական ձևը։ Ցաւալի է արդարև որ չունինք վիպասանաց երգն ամբողջ զպատերազմէն Արտաշիսի ընդ Հռոմայեցիս։ Խորենացին Դոմետ անունը միայն տեսնելով, որ է անտարակոյս զօրավարն Ներոնի Դոմիտիոս Կորբուղոն, և կարծելով զԴոմետիանոս կայսր՝ կու տայ Արտաշիսի ունենալ գործ ոչ ընդ Դոմետիանոսի միայն, այլ և ընդ Տրայիանոսի և Ադրիանու, այնպէս որ այս պատմութեան նայելով՝ Արտաշէս լինի ապրած մինչև Ադրիանոսի վերջին տարիներն, իբր 135 կամ 137։ Բայց այս ամենուն վրայ պիտի խօսինք յետոյ։ Չէ սակայն հաւանական, թէ Արտաշէս (Տրդատ) ապրեցաւ անդր քան 81 կամ 82, այն է՝ առաջին կամ երկրորդ տարին Դոմետիանոսի։

12. Զիարդ և իցէ՝ մենք գանք այժմ ի պատմեալսն ի վիպասանաց որ կուտան մեզ կարևոր տեղեկութիւններ, մանաւանդ Արտաշիսի ներքին կամ առտնին կենաց վրայ։ Հաւանական է, թէ ինչ որ կը պատմէ Խորենացին զպատերազմէն Ալանաց, զխնամութենէն ընդ նոսա կամ զհարսնութենէ Սաթինկան, զորփանաց սարա ընդ որդւոն Արգամայ կամ Արգաւանայ, զՍմբատայ Բագրատունւոյ զօրավարէն Արտաշիսի, զխոխտ արքայորդւոյն Արտաւազդայ, զոր դիւաբարոյ գիտէ և՛ վիպասանութիւնն և՛ աւանդութիւնն ազգային, զկռուոյն ընդ Մուրացանս, զգրգռութենէ որդւոցն Արտաշիսի ընդ երիցուն, զՎրոյրէ զիմաստնոյ և զբանաստեղծէ, զբաժանմանէ զօրուն, զկարգաց և զյօրինուածոց զոր արար Արտաշէս ի Հայս, որ գրեթէ աւերեալ և անշքացեալ էր բազմա-

մեայ պատերազմներէ՝—առնուած են յերգոց վիպասանաց ըստ նիւթոյն, ուրեք ուրեք նաև բան առ բան։

Ինչպէս տեսանք ըստ Յովսեպոսի՝ մինչ Մարք (Բակուր, 51—91) փախստեամբ և կաշառօք հազիւ կը հեռացունեն զԱլանս՝ Տրդատ կամ Արտաշէս պատերազմով կ'ելլէ ընդ առաջ նոցա, գրեթէ համաձայն մեր ազգային աւանդութեան։ Ալանք կ'արշաւեն մեծ բազմութեամբ ի Հայս. Արտաշէս կու տայ պատերազմ, Ալանք կը քաշուին յայնկոյս Կուր գետոյ։ Որովհետև Ալանաց թագաւորին որդին անկեալ էր գերի ի ձեռս Հայոց՝ Ալանք կը խնդրեն հաշտութիւն՝ խոստմամբ այլ ևս չարշաւելոյ ի Հայս, առ պայմանաւ որ պատանին յանձնուի։ Արտաշէս չհաճիր, և քոյր պատանւոյն կը մտնէ միջնորդ, հաճոյ կը թուի յաչս Արտաշիսի, խնամութիւնն կը հաստատուի և օրիորդն Ալանաց Սաթինիկ կը հարսնանայ Հայոց։— «Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր։ Ժողովէ և Արտաշէս զիւրոյ զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց։ Սակաւ ինչ տեղի տայ ազգ Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշիսի բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա։ Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածին առ Արտաշէս՝ զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեսցէ. և երդմունս և դաշինս ասէր հաստատել զմշտնջենաւորս, որպէս զի մի ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհն Հայոց։ Եւ ի չառնուլ յանձն Արտաշիսի առ ի տալ զպատանին՝ գայ քոյր պատանւոյն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ, և ի ձեռն թարգմանչաց ձայնէ ի բանակն Արտաշիսի. Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց. եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և՛ ի ստրկաց կարգի պահել, և՛ թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել։ Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի իմաստուն բանս՝ գնաց յեզր գետոյն, և տեսեալ զկոյսն գեղեցիկ և լուեալ ի նմանէ բանս իմաստութեան՝ ցանկացաւ կուսին։ Եւ կոչեցեալ զդայեակն իւր զՍմբատ՝ յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն ի կնութիւն իւր և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն և զպատանին արձակել ի խաղաղու-

թիւն։ Եւ հաճոյ թուեցեալ Սմբատայ՝ առ արքայն Ալանաց յղէ տալ զաղջիկն օրիորդն Ալանաց զՍաթինիկ ի կնութիւն Արտաշիսի։ Եւ ասէ արքայն Ալանաց. Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց։ Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն, և ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր։ Որ և ճշմարտութեամբ ունի այսպէս։ Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր՝ լոյքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու զաղջիկն օրիորդն Սաթինիկ։ Դոյնպէս զհարսանեացն առասպելեալ երգեն, այսպէս ասելով. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն։ Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղել իբրև զհիւպատեանն Հռոմայեցւոց. սոպէս և թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ» (Խոր. Բ. Ծ.)։ Սաթինիկ որ այնպէս շքով հարսնացաւ Արտաշիսի՝ կը թուի վրդովեալ զառտնին կեանս նորա սիրահարութեամբքն ընդ որդւոյն Արգամայ (Արգաւանայ ըստ առասպելին) նահապետի Մար ցեղին (Մուրացան, որ ունէր զառ ստորոտովն Մասեաց). պարագայ մը՝ զոր սքողելով կ'անցնի վիպասանն ի պատիւ իւրոյ դիւցազին. «Այլև տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ» (Խոր. Ա. Լ.)։ Ոչ սակաւ կը դառնացունէ զառտնին կեանս Արտաշիսի և երէցն նորա, զաւագն Արտաւազդ, որոյ թելադրութենէն կը ծագի թշնամութիւն ի մէջ թագաւորին և Արգամայ, որպէս թէ ի ճաշուն զոր կու տայ Արգամ արքայի՝ Արգամեանք կամէին դաւել զարքայ, և կը յառնէ անդէն խռովութիւն, մինչև քարշել որդւոց արքայի զծերունին Արգամ, և այս պատճառաւ, ինչպէս կ'երևի՝ կը յառնէ ներքին պատերազմ, որոյ արդիւնքն եղաւ աւեր և ջնջումն Մուրացան ցեղին։—«Ի չափ հասեալ Արտաւազդայ որդւոյ Արտաշիսի եղև այր քաջ, անձնահաճ և հպարտ, և նախանձ բերելով ընդ ծերունւոյն Արգամայ՝ հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի։ Այսպէս ընկեցեալ զնա ի պատուոյն՝ ինքն առնու զերկրորդութիւնն։ Յետ այսր երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ՝ իբր թէ դաւել զարքայն խորհեցան՝ յարուցանեն որդիքն արքայի

ապլշոպ, և անդէն իսկ ի հացին քարշին զգլխն Արգամայ։ Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ՝ դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ, և զբազումս յազգէն Մուրացան սպանանել հրամայեաց և զապարանսն Արգամայ այրել, և զհարճ նորին, որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանդու՝ ածել ի հարճութիւն Արտաշիսի։... Եւ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն՝ յաւելու ևս հանել և զՆախճաւան և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գիւղս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն։ Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոյն Արգամայ՝ ընդդիմանալ նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարբն և որք միանգամ երեւելիք էին յազգէ Մուրացան, և գրաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա. և ոչ ոք ապրեաց ի նոցանէն, բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս՝ ապրեցան ի դրան արքունի»։ «Այս Արգամ է, կը յաւելու Խորենացին, որ յառասպելին Արգաւանն անուանի, և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ»։

Ի բանից աստի Խորենացւոյն կը տեսնուի, թէ ի մէջ Արգամայ և Արտաւազդայ պատերազմի խօսք կար յերգս վիպասանաց այլաբանութեամբ, զոր պարզելով կը պատմէ Խորենացին, որպէս թէ ասիցէ. Ահա բուն պատճառ պատերազմին որ այլաբանութեամբ պատմի յառասպելին։ Այլ թէ Արտաշիսի կենաց ինչպէս ուրիշ շատ պարագաներն, նոյնպէս այս պատերազմն հանդերձ հետևանօք կը յիշուէր յերգս վիպասանաց՝ այսմ Խորենացին զնոյն ինքն զմեկենաս իւր Սահակ կոչէ վկայ. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան... տրփանք Սաթինկան ընդ վիշապազունսն՝ առասպելաբար, այսինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց, մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէ և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն» (Խոր. Բ. ԽԹ.)։ Գալով Մուրացան, այն է Մար ցեղի մը յորևելից Մասեաց՝ յայտնի է և՛ արտաքին (Ստրաբոն) և՛ ազգային (Բուզանդ) պատմութենէ, թէ արևելեան այն մասն Հայոց՝ էր մարական։ Այս յայտնի է մանաւանդ ի վիպասանաց, ուր այն մասն Հայոց կը կոչուի *Մարք*, և Արտաւազդայ ակն դնելն այն մասին, մինչև շինել անդ իւր քաղաք՝ կ՚ակնարկուի, ինչպէս կ՚երևի, հեգնօրէն. «Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց

զՄարակերտ, որ է ի դաշտին որ անուանեալ կոչի Ծարուրայ» (Խոր. Ա.. Լ.)։

Արտաւազդ որ ամէն իշխանութիւն կամէր ունել ի ձեռին՝ յետ հանելոյ զերկրորդական գահն ի Մուրացանայ գրեթէ խայտառ ջնջմամբ նոցա՝ կը թուի ինկած նաև ընդ Սմբատայ, քաջի սպարապետին Արտաշիսի։ Սմբատ, ըստ Խորենացւոյն, յետ մեծամեծ քաջութեանց կ՚երթայ յերկիրն Ալանաց, ազատել զեղբայրն Սաթինկան բռնաւորէ մը, և յաղթելով ապստամբին՝ ոչ միայն կը հաստատէ մանուկ իշխանն ի թագաւորութեան իւրում, այլ և կը բերէ ապստամբներէն գերի, զոր կը բնակեցունէ յարևելից Մասեաց, ի գաւառին Ծաւարշական, զոր կ՚անուանէ Արտազ յանուն երկրին ուստի էին գերեալքն։—Այս Սմբատ «յետ այնչափ արութեանց՝ օգնական Սաթինկայ եղբօրն յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշիսի։ Քանզի մեռաւ հայր Սաթինկան, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց և հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հերքէ Սմբատ և տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ։ Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Ծաւարշական գաւառ, ի վերայ պահելով զընիկ անունն Արտազ, քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի» (Խոր. Բ. ԾԲ.)։ Զգաւառն Ծաւարշական կը յիշէ Խորենացին այլուր ևս (Բ. ԼԴ.) Ծաւարշան անուամբ, առնլով, ինչպէս յայտնի է՝ ի վկայաբանութենէ ուստեք Թադէի (Ինճիճ. Ստոր. հին. Հյ. էջ 202)։ Սմբատ կ՚երթայ նաև յերկիրն Կասպից ապստամբելոց ի Հայոց, և նուաճելով կը բերէ գերի հանդերձ թագաւորաւ նոցա և կը վարձատրուի, բայց ստիպեալ Արտաւազդայ հակառակութենէն՝ կ՚առանձնանայ ի Կորդիս։— «Նաև Կասբից երկիրն ապստամբեն ի մերոյ արքայէն։ Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրօքն Հայոց, ինքն արքայ յուղարկաւոր երթալով աւուրս եւթն։ Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասբից աւերեալ՝ առաւել քան զԱրտազեան գերին ածէ ի Հայս, ընդ որս և զԶարդմանոս անուն թագաւոր նոցին։ Վասնորոյ արժանի ըստ վաստակոցն պարգևէ նմա Արտաշէս զմասն արքունի որ ի շէնս Գողթան և զՈւղտոու ակունս. և առ այսոքիկ և զաւարն ամենայն նմա թողու։ Ընդ որ նախանձեալ Արտաւազդ կամեցաւ սպանանել զՍմբատ. և յայտնեալ խորհրդոյն՝ բազում խռովութիւն վասն այնր լինէր հօրն։ Իսկ Սմբատայ տեղի տուեալ գնաց զկողմամբք Ասորեստանի.

իւրով կամաւ Թողու զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդոյր Արտաւազդ: Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, և ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեաց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և զնորին կողմամբք բնակեցաւ» (Խոր. Բ. ԾԴ): Պատմուածներն զՍմբատայ այս երկու գլուխներուն մէջ (Բ. Դպր., ԾԲ, ԾԴ) կրնան համարուիլ պատմական, իբրև առնուած վիպասանաց երգերէն, և այս շատ հաւանական կը թուի մեզ Սմբատայ անձին նկարագրէն, զոր կը դնէ Խորենացին ի յառաջաբանի ԾԲ. գլխոյն, «ըստ առասպելին», որով չէ անդէպ իմանալ զերգն վիպասանաց.—«Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ, քանզի արդարև ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն. որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ոգւոցն որսորդ, և գեղեցկութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն՝ որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր. և ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի, տուչութիւն յաջողուածոյ ունէր ի մարտս առաւել քան զամենայն ոք»:

Չէ անդէպ նոյնպէս յերգոց վիպասանաց առնուած կարծել Արտաւազդայ առնուլն ստրապետութիւնը, նախանձելն նմա եղբարց նորա ի գրգռութենէ կանանց, մինչև ստիպել Արտաշիսի բաժնել կառավարութեան գլխաւոր պաշտօններն,—Վրոյր անուն ումեմն իմաստնոյ և բանաստեղծի տալ արքունի տան հազարապետութիւնը, կարգել յորդւոց իւրոց զՄաժան քրմապետ, և զզօրսն բաժնելով չորս գունդ, արևելեան, արևմտեան, հարաւային և հիւսիսային՝ տալ մէն մի գունդ Սմբատայ և միւս որդւոց իւրոց Արտաւազդայ, Տիրանայ և Զարեհի. յորոց Զարեհ անկանի ի ձեռս Քարձամայ ուրումն արքայի Վրաց և կ՚ազատի ի ձեռն եղբարց իւրոց և Սմբատայ.—«Իսկ Արտաւազդ յետ գնալոյն Սմբատայ առնու ի հօրէն, որում ցանկայրն՝ զիշխանութիւն զօրացն ամենայնի: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն ի գրգռութենէ կանանց իւրեանց՝ վասնորոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի, զՄաժան կարգէ քրմապետ ի յԱնի գեղջն Արամազդայ: Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարևելեանն Թողու ի վերայ Արտաւազդայ և զարևմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ և զհիւսիսայինն ի Զարեհ: Եւ Զարեհ էր այր սէգ և յորս էրէոց նահա-

տակ, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ. զորոյ զփորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն, և կալեալ զՁարեհ՝ ի բանտի դնէ ի Կուկաս։ Ընդ որում պատերազմեալ Արտաւազդայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ՝ դարձուցանեն զեղբայրն ի մեծ կալանաց և ի բանտէ» (Խոր. Բ. ԾԳ)։

Ըստ Լանկլուայի (Հաւաքածոյ պատմ. Հայոց, Հտ. Բ. էջ 108 ծանօթ. 1), այս պատերազմն Հայոց ընդ Վիրս՝ յիշուած է ի պատմութեան Վրաց Վախտանկայ, զոր հրատարակեց Եդ. Պրոսէ (էջ 69—70, և ի ծանօթութիւնսն)։ Քարձամ անունը զոր կու տայ Խորենացին յանժամու թագաւորին Վրաց՝ է արդարև մերձ Խարթամ անուան առաջնոյ թագաւորին Արմազայ. բայց Խարթամ ի վաղուց մեռած էր յայնժամ. իսկ այն պատերազմն Հայոց եղած է ի թագաւորութեանն Արմազելայ, անուն՝ որ չունի ամենևին նմանութիւն Քարձամ անուան. բայց և այնպէս առանց երկբայութեան է, թէ Վախթանկայ պատմութեան պատերազմն ընդ Հայոց առ Արմազելիւ է գրեթէ նոյն ընդ պատմութեան Խորենացւոյն։ «Յետ աւերմանց, կ՚ըսէ պատմիչն Վիր, զորս գործած էին Հայք ի Վիրս, ոգի առեալ սոցա սակաւ մի՝ միաբանութեամբ այլոց ցեղից յարձակեցան ի Հայս, մինչ զօրք Հայոց և երկու որդիք թագաւորին հանդերձ Սումպատաւ կը կռուէին Պարսից դէմ։ Երբ Վիրք սաստկացուցին պատերազմը՝ Արտաշամ (Արտաշէս) յանձնեց գունդ մի ի ձեռս Զարենի (Զարեհ) պատերազմել ընդ Վիրս։ Խոնուեցան ճակատք ի Ծուախէթ. Զարեն յաղթուելով գերի ընկաւ և դրուեցաւ յամրոցին դրանց Կովկասու։ Վիրք յետոյ արձակեցին զԶարեն՝ առնլով յետս գաւառ մի, զոր գրաւած էին Հայք։ Վրացի պատմիչն կը յիշէ յետոյ ուրիշ պատերազմ, որ եղաւ երիւք ամօք յետոյ և որոյ զհետ եկն խաղաղութիւն ի մէջ երկուց ազգաց։

Խորենացին կը յիշէ իսկ ի համառօտութեան անդ երգոց վիպասանաց զգործոց Արտաշիսի, Արտաշիսի որդւոց նախանձը և գրգռութիւնն ընդ միմեանս ի ձեռն կանանց.—«Արտաշիսի վերջնոյ գործք յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան,... նախանձ որդւոյն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն» (Խոր. Բ. ԽԹ.)։ Չէ անդէպ նաև ի վիպասանաց առնուած կարծել Արտաշիսի ուղղութեանց յիշատակութիւնն ի շինութիւն երկրին. և արդարև վայել իսկ էր այնպիսի շինութեանց ձեռնարկել Արտաշիսի, որ անձամբ տեսած էր այնչափ հռոմէական գաւառներ, մանաւանդ զԻտալիա և զՀռոմ իսկ յերկայն և ի փառաւոր ճանապարհորդութեան իւրում։—«Բազում ինչ գործք յաւուրս Արտաշիսի գործեցան։... (Հայք) ի մեծամեծ արուեստից և

ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս Հինից և ապստամբաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք և կամ ոչ Հասեալք, գշարաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմանց։ Զանզի ոչ այնպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով. և ոչ ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց, այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք. ըստ օրինակի Հիւսիսականաց կողմանց շաղգակերութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք։ Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի» (Խոր. Բ. ԾԹ)։ Արդարև տխուր նկարագիր զՀայոց, եթէ ճշգիւ առնունք զբանս Խորենացւոյն։ Ըստ Խորենացւոյն Հայք, թէպէտ ի պատճառս յաճախութեան ապստամբութեանց և Հինից՝ չկրցան լինել յառաջադէմ և մնացին կէս բարբարոս. չունէին, թող աստեղագիտական և տոմարական Հաշիւներ՝ խոնարհագոյն արուեստներ անգամ, որպիսի են նաւարկութիւն ի ծովակս և ձրկնորսութիւն. երկրագործութիւն իսկ կար դուն ուրեք և անօսր. անտառաբնակ վայրի ժողովրդոց պէս յորսոյ միայն («շաղգակերութիւն») կ'ապրէին Հայք յառաջ քան զԱրտաշէս։ Այս չմիաբանիր արդարև ընդ վկայութեան Քսենոփոնի (տես Ա. մասն), որ Հանդարտ և արգիւնարար ժողովուրդ գիտէ զՀայս, առ որս գտաւ նա առատութիւն արդեանց մշակութեան և Հովուութեան և ինչ որ յուսալի էր ասոի իբր քսան և Հինգ դար յառաջ շինական ժողովրդենէ, մինչև գիտել պատրաստել ազգի ազգի ըմպելիս և իւղս անուշունս։ Եթէ զբանս Խորենացւոյն չափազանց ևս առնունք՝ սաչափ գոնէ ստոյգ է, թէ առ Տրդատ-Արտաշիսիւ սկսան ոգի առնուլ Հայք ներքին և արտաքին խաղաղութիւններէ։ Տրդատ էր երկու մեծ զրացի տէրութեանց Հետ Հաշտ, Պարթևաց Հետ՝ իբրև ազգական և ի նոցանէ զրուած, և Հռոմայեցւոց Հետ՝ իբրև Հաստատեալ ի նոցանէ և դաշնակից։ Այս դիրքը չէզոքացուցած էր այն երկու ազգաց ոսոխութիւնը։ Այսպիսի ինչ ժամանակ Հարկաւ գիպողագոյն էր Հայոց ի բարգաւաճել ըստ տանելոյ ժամանակին, մինչև յիրաւի է մեզ Համարել Արտաշիսի թագաւորութիւնն նոր դարագլուխ մեր պատմութեան մէջ։ Յայտնի ապացոյց մեծութեան Արտաշիսի ժամանակին՝ է մեծ փոյթն վիպասանաց յերգել զայն. «Արտաշիսի վերջնոյ գործք բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան»։ Թերևս այս բարենշան ժամանակն է, որ յաւել Հայերէն լեզուին նոր ազնուական շարժումն, որ տևեց բաւեց մինչև ի կէսն Հինգերորդ դարու։

Որպէս արդէն ասացաւ՝ Արտաշիսի թագաւորութիւնը չանցնիր

առաջին կամ երկրորդ տարին Դոմետիանոսի (81, 82), *մինչ տակաւին կ'ապրէր ի Պարթեւս դիւցազնն պահլաւեան տան Վաղարշ Ա*։

Ի Վոնոնէ մինչեւ ի Տրդատ-Արտաշէս, ինչպէս տեսանք արտաքին եւ ներքին ժամանակակից վկայութիւններէ՝ կացին Հայոց թագաւորք․—

1․ *Վոնոն, եկամուտ* (16), *որ չետ սակաւուց կ'ստիպուի տալ խոյս*։

2․ *Զենոն, զոր Հայք կոչեցին Արտաշէս, ի ձեռն Գերմանիկոսի, հրամանաւ Տիբերի* (18)։

3․ *Արշակ Պահլաւ, որդի Արտաւանայ Գ, զօրութեամբ Պարթեւաց* (34)։

4․ *Միհրդատ Վիր (Սանատրուկ յաւանդութեան Հայոց) ի կողմանէ Հռոմայեցւոց, հրամանաւ Տիբերի* (35)։

Միհրդատ կը հանուի հրամանաւ Կաղիգուղայ (37), *եւ Հայաստան կը մնայ ընդ ձեռամբ Պարթեւաց իբրեւ նահանգ* (37—41)։

5․ *Միհրդատ երկրորդ անգամ հրամանաւ Կղաւդեայ* (41—45)։

6․ *Հռադամիստ (Երուանդ յաւանդութեան Հայոց), որդի Փարսմանայ արքայի Վրաց, հնարիւք Փարսմանայ* (45—53)։

7․ *Տրդատ (ըստ Խորենացւոյն կամ մանաւանդ ըստ վիպասանաց Արտաշէս), եղբայր Վաղարշու Ա, Պահլաւ ի կողմանէ Պարթեւաց* (53)։

8․ *Արշակ ոմն պատերազմին ժամանակ ի կողմանէ Հռոմայեցւոց* (58)։

9․ *Տրդատ-Արտաշէս կը հաստատուի հաճութեամբ Հռոմայեցւոց* (64—82)։

Ի Տրդատ-Արտաշիսէ մինչեւ ի մեծն Տրդատ նորին համանուն կամ մինչեւ ի վախճան թագաւորութեանն Պարթեւաց՝ կուգայ Հայաստանի համար դարձեալ խռովալից ժամանակ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՀԱՅՔ Ի ՄԱՀՈՒԱՆԷՆ ՏՐԴԱՏ-ԱՐՏԱՇԻՍԻ ՄԻՆՉԵՒ Ի ՏՐԴԱՏ ՄԵԾ:

ՀՌՈՄԷԱԿԱՆ—ՍԱՍԱՆԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ:

1. Արտաւազդ յաջորդ Տրդատ-Արտաշիսի. առասպել զնմանէ: 2. Աշխադար, որդի Տրդատ-Արտաշիսի: 3. Տրայիանոս յարեւելս. Պարթամասիր: 4. Պարթամասպատ. Հայաստան նահանգ: 5. Ադրիանոս. Հայք միւսանգամ թագաւորութիւն: 6. Անտոնինոս Պիոս. Աքեմենիդ: 7. Վաղարշ Գ. Պարթեւ. Սոյեմոս. Ղուկիոս Վերոս: 8. Սանատրուկ. Սեպտիմոս Սեւերոս: 9. Վաղաշ արքայ Հայոց: 10. Կարակալլա. Վաղարշ կը բանտարկուի: 11. Մակրինոս. Կը դրկէ թագ առ Տրդատ Բ. որդի Վաղարշու: 12. Կործանումն Պահլաւ ցեղին: 13. Դիտաւորութիւն Արտաշրի: 14. Պատճառք անկման Հայոց: 15. Թէ ի՛նչ եղաւ Արտաշիր: 16. Կարծիք զյաջորդութենէն Սեւերոսի: 17. Մահ Արտաշրի. Հայք առ յաջորդօք նորա: 18. Գորդիանոս: 19. Իրք արեւելից առ յաջորդով նորա Փիլիպպոսիւ մինչեւ ի Վաղերիանոս: 20. Շապուհ Ա. Ողենատոս իշխան Պաղմիրայ: 21. Հայք առ Շապհով. Արտաւազդ արքայ Հայոց: 22. Անկումն Պաղմիրայ. Յաջորդք Աւրեղիանու—Պրոբոս, Կարոս, Նումերիանոս: 23. Ներսեհ. Կրկին ճակատք առ Դիոկղետիանոսիւ. Գաղերիոս:

1. Տրդատ-Արտաշիսի կը թուի յաջորդեալ մոլեգինն Արտաւազդ, որ պատահարէ, հաւանականապէս յորսի՝ կը թուի անհետացեալ յետ կարճ թագաւորութեան, մինչեւ չթողուլ յիշատակ յարտաքին պատմութեան: «Յետ Արտաշիսի, ասէ Խորենացին, թագաւորէ Արտաւազդ որդի նորա,... որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի որսալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ՝ ազմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի ի խոր իմն, և խորասոյզ լեալ անհետի» (Խոր. Բ. ԿԱ): Արտաւազդայ բամեծ, և խորասոյզ լեալ անհետի» (Խոր. Բ. ԿԱ): Արտաւազդայ բարուց, որպէս և նորա կարճառօտ թագաւորութեան և վախճանին վրայ ասացեալքն ի Խորենացւոյն ըստ ամենայնի կը հաստատուին ի վիպասանաց և յազգային գրուցաց: Ըստ վիպասանաց Գողթան,

որպէս ասէ Խորենացին, Արտաւազդ տեսնելով բազմութիւն ինքնակամ սպանելոց ի մահուան հօրն՝ կը գանգատի նմա, թէ անմարդի արար զերկիրն, և վասն այսր անիծելով զնա Արտաշէս կը գուշակէ, թէ որսի ժամանակ բռնուելով ի դիւաց պիտի տարուէր ի Մասիս և անդէն պիտի մնար յանլոյս բանտի։—«Զամանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս, եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ, ասելով ցհայրն. Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս որպէս թագաւորեմ։ Վասնորոյ անիծեալ զնա Արտաշիսի ասաց այսպէս, եթէ Դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես և զլոյս մի տեսցես» (Խոր. Բ. ԿԱ)։ Զայս հաստատելու համար Խորենացին կը բերէ պառաւական զրոյց մի, թէ Արտաւազդ շղթայակապ արգելուած է այրի ուրեք, և երկու շունք անդադար կը կրծեն շղթաներն, որպէս զի ազատի և երթայ տալ վախճան աշխարհի. բայց դարբնաց կռաններուն ձայնէն կը զօրանան շղթայքն։ Այս առասպելին հաւատալով՝—ասէ Խորենացին—առ իւրով իսկ ժամանակաւ սնապաշտ դարբինք կիրակի օրեր երիցս և չորիցս կը բախէին սալը։—«Զրուցեն զամանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ (Արտաւազդ) յայրի միում, կապեալ երկաթի շղթայիւք, և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին՝ յաւուր միաշաբաթւոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ» (Խոր. Բ. ԿԱ)։ Ասելն Եզնկայ, թէ «Մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց և ունելոց է զաշխարհս»—կ'ակնարկէ վերոյիշեալ առասպելը սակաւ ինչ տարբեր։ Եզնկայ այս տեղեկութիւնն չմարթի լինել ի Խորենացւոյն որ յետոյ է քան զնա, այլ է անշուշտ ազգային ինչ աւանդութենէ։ Այսպիսի ինչ աւանդութիւն, բաց ի վերոյիշեալ առասպելէն՝ կը յիշէ Խորենացին և կը բերէ վկայութիւն դարձեալ յերգոց վիպասանաց. «Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զսա գիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմիցն Աժդահակայ, վասնորոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս։ Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս, եթէ Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և դև փոխանակ եդին»։ Ասուել ողջամիտք սակայն առ

Խորենացւով կը համարէին զԱրտաւազդ մոլեգին ի ծնէ, և այն մոլեգնութեամբ կորեաւ իսկ.—«Բայց ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ ի ծննդենէն և եթ մոլութեամբ լեալ, մինչ նովիմբ և վախճանեցաւ» (Խոր. անդ)։

2. Յամէն 82 մինչև 107, այն է յերկրորդ ամէն Դոմետիանոսի մինչև ցիններորդ ամն Տրայիանոսի՝ չկար ամենևին վէճ Հայաստանի համար ի մէջ Պարթևաց և Հռոմոց, մինչ յաջորդն Դոմետիանոսի կարճակեացն Ներուաս (96—98) զբաղեալ էր ներքին ուղղութեամբք, և յաջորդ նորա Տրայիանոս (98—117) Դակաց դէմ պատերազմներով։ Ուստի և ի Հայս կը թագաւորէին որդիք Տրդատ-Արտաշիսի, Արտաւազդ և Աշխադար (82—108)։ Պարթևք, որոց նպատակն էր միշտ հանել զՀռոմայեցիս յԱսիոյ, մանաւանդ ի Հայոց և ի Միջագետաց՝ կը ջանային միշտ այս երկու երկիրներն կապել սերտիւ ընդ իւրեանս, տալով նոցա թագաւոր ի մօտաւոր ազգականաց իւրեանց։

3. Խոսրով Ա. (Արշակ ԻԵ, 108—121) արքայ Պարթևաց տեսնելով, ինչպէս կ'երևի, զթագաւորն Հայոց զԱշխադար (ըստ Գաթըրճեանի՝ որդի և ոչ թոռն Տրդատ-Արտաշիսի) միտեալ ի Հըռոմայեցիս ըստ սկզբան հօրն՝ մերժեց զնա յաթոռոյն և տուաւ զՀայս իւր եղբօրորդւոյն Պարթամասիրայ (109)։ Տրայիանոս չհաճեցաւ այս փոփոխութեան, մանաւանդ որ հպարտ Հռոմայեցին չէր համարէր արժանի՝ թագաւորութիւն կոչել զՀայս, այլ լոկ իբրև դաստակերտ (աւատ) հռոմէական պետութեան, և ունէր ի մտի, քանդելու համար Պարթևաց ակնկալութիւնն ի սպառ՝ առնուլ զինքնօրէնութիւնն ի Հայոց և ի Միջագետաց, որ բաժանեալ էր ի բազում թագաւորութիւնս, և առնել զնոսա նահանգ։ Տրայիանոս կ'ատիպէր զԽոսրով կոչել յետս նոր թագաւորը և թողուլ զԱշխադար իւր բախտին։ Խոսրով չանսաց, և Տրայիանոս յետ իսպառ յաղթելոյ Դակաց յարևմուտս՝ որոշեց դարձուցանել իւր զօրութիւնն յարևելս։ Տրայիանոս կը պատճառէր Հայաստանի խնդիրը, բայց բուն դիտաւորութիւնն էր ստանալ համբաւ աշխարհակալի, ըստ օրինակին Աղեքսանդրի նուաճելով զարևելս մինչև ի Հնդիկս։ Բանագնացութիւնք Հայոց համար արդէն սկսած էին, մինչ Տրայիանոս (որ կը գտնուէր ի Փոքրն Ասիա, 114) սկսաւ մեծ պատրաստութեամբ խաղալ ի վերայ Հայոց, մերժելով զդեսպանս և զընծայս Խոսրովու, որ կը խնդրէր կայսրէն հաստատել զՊարթամասիր ի թագաւորութիւն Հայոց փոխանակ Աշխադարայ։ Մերժեց գոռոզ Հռոմայեցին զխնդրուածն ասելով. «Հանդէս բարեկամութեան ի գործոց է և ոչ ի բանից»։ Տրայիանոս մտաւ ի Մեծ

Հայս մինչ Կարնոյ կողմը, և չանսալով մեղմեխանաց Պարթամասիրայ, որ Հրեշտակօք կ'աղաչէր զկայսր տալ նմա զթագաւորութիւն Հայոց՝ կոչեց զնա առաջի իւր: Պարթամասիր հանելով թագը՝ դրաւ աթոռին աստիճաններուն վրայ, յուսալով թէ կայսրը պիտի դնէր զայն միւսանգամ ի գլուխ նորա: Բայց զօրքը տեսնելով թագաւորը մերկ ի թագէն կայսեր առջև, այնպէս ուժգին աղաղակեց՝ որ Պարթամասիր սոսկացեալ կամէր խօսս տալ, բայց լեալ ձերբակալ՝ ասէ համարձակութեամբ ցկայսր, թէ եկած էր առ նա ոչ իբր կալանաւոր, այլ ինքնակամ ի կոչ նորա, յուսով առնլոյ զթագն ի ձեռաց կայսեր: Տրայիանոս պատասխանեց. «Զունիմ ի մտի տալ այլ ևս զՀայս իբրև թագաւորութիւն, այլ առնել նահանգ հռոմէական», ինչպէս կը պատմէ Դիոն Կասսիոս: Այսպէս երկիրն, ուր կը բխեն ակունք Եփրատայ և Տիգրիսի (Բիգդէր)՝ փոխուեցաւ ի նահանգ հռոմէական (115), և եղաւ Հրաման Հայոց՝ մնալ իւրաքանչիւր յիւր երկրին: Պարթամասիր մերժեալն, ինչպէս կը կարծուի, կամելով ընդդիմանալ պատերազմաւ՝ սպանուեցաւ ի ճակատու: Ապա առանց դժուարութեան հնազանդեցան յաղթողին բովանդակ անդրկովկասեան Ասիա, այն է Կողքիս, Վիրք, Աղուանք և ասիական Սարմատք: Հռոմայեցի պահապան զօրք դրուեցան ի քաղաքս և ի բերդս Հայոց. սակայն Տրայիանոս համօրէն զօրութեամբն խաղաց ի Միջագետս, ուր նուաճեցան և եղան նահանգ մանր մանր իշխանութիւնք և քաղաքք—Ուռհայաստան, Ադիաբեն, Մծբին: Զօրքը ձմերելով ամուր ամուր տեղեր ի Հայս և ի Միջագետս՝ կը պատրաստուէր մեծ արշաւանին յաջորդ տարւոյն համար (116): Տրայիանու փափաքն էր նուաճել Բաբելոն, կործանել Պարթևաց մայրաքաղաքը և տեսնել Հնդկաց ովկիանոսն. ուստի ի սկզբան գարնան անցնելով ընդ Տիգրիս՝ մտաւ Պարթևաց ձմերոցն ի Տիզբոն, ուր ողջունեցաւ լեգէոններէն «Ինքնակալ Պարթևական» (Imperator Parthicus), ինչպէս կը վկայէ դահեկանն, ի միում կողման գլուխ Տրայիանոսի և ի միւսումն յաղթական նշանք պարթև զինուք, ի ներքոյ երկու Պարթև կալանաւորներ և գիր՝ «Պարթևաստան առեալ» (Parthia capta): Հոն հպարտ ազգն Պարթևաց թողուց հռոմայեցի յաղթողին՝ դնել յիւր վերայ նոր թագաւոր զորդին Աշխադարայ, զԹշնամին Խոսրովու զՊարթամասպատ, որ և կրկոյս աթոռը՝ երբ Տրայիանոս ստիպուեցաւ դառնալ յետ, և ժողովուրդն ի Հռոմ պարծանօք տեսաւ զդահեկան Տրայիանոսին իւրոյ, ի միում կողման զՏրայիանոս նստած յատենի իբրև դատաւոր աշխարհի, հռոմայեցի զօրավար մի առընթեր, Պարթևն առաջի նորա ի ծունր ձեռնամած, և գիր

ի լուսանցս՝ «Թագաւոր տուեալ Պարթեւաց» (Rex Parthis datus)։ Իրենց դուռները բացին առաջի յաղթողին՝ Ասորեստանի և Բաբելոնի քաղաքներն, ինչպէս նաև յունական քաղաքն Սելևկիա և ապա Տոզ, ուր առնուեցաւ գերի դուստր փախուցելոյն Խոսրովու և Պարթև թագաւորաց աթոռն ի ձոյլ ոսկւոյ, որոյ առաջի ի գետին խոնարհած էին այնչափ զօրաւորներ։ Յետ այսչափ յաղթութեանց, ասէ Դիոն Կասսիոս, ցանկացաւ կայսրն (117) տորմղիւ, ըստ օրինակին Աղեքսանդրի, որում կը փափաքէր լինել նմանող՝ նաւարկել մինչև ի Կարմիր ծով։ Կը պատմուի թէ ի տեսիլ Ովկիանու և նաւի որ կ'երթար ի Հնդիկս՝ Տրայիանոս գոչեց. «Եթէ էի մանուկ (սակայն էր յայնժամ 64 ամաց)՝ երթայի ի Հնդիկս»։ Ի Հռոմ, յափշեալն այսչափ աշխարհակալութեանց վրայ՝ կը պատրաստուէին ձօղանք, բայց Տրայիանոս փոխանակ խորհելու ի Հընդիկս արշաւել՝ կը տեսնէր մօտ զիւր վախճան, և մինչ կ'զբաղէր նա միտ դնել զարմանալի հոսանաց, ուր միացեալն Տիգրիս և Եփրատ կը թափին յՈվկիանոս՝ ի թիկանց նորա կը յաճախէին ապըստամբութիւնք քաղաքաց և ազգաց մի զմիոյ կնի։ Բոլոր Ասորեստան ընդվզեալ՝ հազիւ արկաւ միւսանգամ ընդ լծով։ Սելևկիա, յետ հալածելոյ իւր հռոմայեցի կուսակալներն՝ առնուելով վերստին մատնեցաւ ի սուր և ի հուր։ Մինչ զօրավարք կայսեր այսպէս ապստամբութեանց դէմ կը մաքառէին նոր նուաճեալ երկրին այլևայլ մասերուն մէջ և ծերացեալն Տրայիանոս կը փութար տենդոտ երկրէն հիւանդագին դառնալ յԻտալիա՝ հասաւ նմա օրհասն ի Սեղինոս (յետոյ Տրայիանուպոլիս) Կիլիկիոյ յամին 117, թողլով զտէրութիւնն Ադրիանոսի։

Այսպէս կը պատմէ Դիոն. «Յետ այսորիկ (այսինքն յետ յանգհանելոյ զպատերազմն Դակաց, տալոյ պատուհասել զթշնամիս իւր և զօրդորելոյ զՀռոմ շինուածովք) ձեռն արկ (Տրայիանոս) արշաւել ի վերայ Հայոց և Պարթևաց, պատճառեալ թէ թագաւորն Հայոց փոխանակ ընդունելոյ զթագն ի նմանէ՝ առեալ էր յարքայէն Պարթևաց. այլ արդեամբ կամէր հաճել զիւր սնապարծութիւն։ Ի ժամանակի արշաւանացն ի վերայ Պարթևաց հասեալ նորա յԱթէնս՝ հանդիպէր անդ հրեշտակացն առաքելոց ի Խոսրովայ, որոց եկեալ էր խնդրել խաղաղութիւն հանդերձ ընծայիւք պատարագաց։ Լուեալ Խոսրովու, եթէ Տրայիանոս յուղի անկեալ գայր կատարել զսպառնալիս իւր արդեամբ՝ զահի հարաւ, և իջեալ ի հպարտութենէն առաքէր աղաչել զնա չտալ ընդ նմա պատերազմ. խնդրէր ի նմանէ զՀայս վասն Պարթամասիրայ որդւոյ Բակրոյ և աղաչէր յղել տա նա թագ. քանզի, ասէր, Աշխադարայ

ցուցեալ անարժան գնացս ընդդէմ Հռոմայեցւոց և Պարթևաց՝ ար-
կեալ էր յոթռոյն ի ձեռն նորա։ Տրայիանոս չընկալաւ զպարգևս
նորա և ոչ ետ նմա ո՛չ բանիւ և ո՛չ գրով պատասխանի, բայց
միայն՝ թէ բարեկամութիւն ճանաչի ի գործոց և ոչ ի բանից,
ուստի և ի գալ իւրում յԱսորիս՝ արասցէ որ ինչ արդարն է։ Պըն-
դեալ նորա յայս խորհուրդ՝ դէմ եդ երթալ ի Սելևկիա ընդ Ասիա,
ընդ Կիլիկիա և ընդ աշխարհս սահմանակիցս... Հնազանդեցուցեալ
զամենայն առանց կռուոյ՝ եկն ի Սատաղ և մինչև յԵկեղեաց, և
պատուհասեալ զՊարթամասիր արքայ Հայոց՝ նուաճեաց զՀայս։
Պարթամասիր գրէր ի սկզբան իբրև թագաւոր առ Տրայիանոս.
իբրև չընկալաւ պատասխանի՝ գրեաց միւս ևս թուղթ, ուր եբարձ
զթագաւորն անուն, և խնդրէր ի նմանէ առաքել զՅունիոս կու-
սակալ Կապադովկացւոց, որպէս թէ շնորհս ինչ ունիցի խնդրել
ի նորա ձեռն։ Տրայիանոս առաքէր առ նա զորդին Յունեայ, և
ինքն չու արարեալ մինչև ի Սամոսատ զոր առ առանց պատերազմի՝
եկն անտի դարձեալ ի Սատաղ։ ՅԵկեղեաց ընկալաւ զՊարթամա-
սիր։ Տրայիանոս նստեալ էր յատենի առ եզերբ պատնիշին։ Պար-
թամասիր տուեալ նմա ողջոյն՝ հան զթագն ի գլխոյն և եդ ա-
ռաս կայսեր և կայր յոտին լռութեամբ առաջի նորա, և մնայր
հրամանի՝ առնուլ այսրէն զթագն։ Իբրև զօրն եբարձ զաղաղակ
մեծ, իբր այն թէ յաղթութիւն մեծ հանաւ ի գլուխ—քանզի տե-
սանէին թագաւոր Արշակունի, որդի Բակրոյ, եղբօրորդի Խոսրովու՝
կանգուն առանց թագի առաջի կայսեր իբրև զգերի—զահի հարեալ
Պարթամասիր՝ համարեցաւ ծաղր լեալ և կորուսեալ զանձն։ Դար-
ձաւ յետ կոյս, որպէս թէ ի փախուստ մտաբերիցէ. այլ տեսեալ
զանձն պաշարեալ՝ խնդրէր շնորհս չխօսել ի մէջ բազմութեան.
ուստի մուծեալ ի վրան անդր կայսեր՝ չկարաց որում ցանկայրն
հասանել։ Ելեալ բարկութեամբ արտաքս՝ ածաւ միւսանգամ ի բա-
նակ անդր հրամանաւ Տրայիանոսի, որոյ ելեալ դարձեալ ի բեմն՝
հրամայէր նմա ասել առաջի ամենեցուն զինչ և կամիցի, զի մի
անգէտ լեալ ուրուք խօսելոցն առանձինն՝ հանցէ համբաւ այլա-
կերպ ի ճշմարտութենէ։ Առ այս բան ոչ կարացեալ ժուժել Պար-
թամասիրայ՝ ի մէջ այլոց բանից զայս խօսեցաւ համարձակ՝ ասաց,
եթէ ո՛չ յետ ի պարտութիւն մատնելոյ ի ճակատու և ո՛չ իբրև
կալանաւոր եկեալ էր անդր, այլ ինքնակամ, հաւատացեալ թէ
չէր կրելոց զրկանս, այլ ընդունելոց զթագաւորութիւն իւր՝ որպէս
Տրդատն ընկալաւ ի Ներոնէ։ Տրայիանոս ամենայն բանից նորա
ետ զպատշաճ պատասխանիս. իսկ վասն Հայոց աշխարհին ասաց,
եթէ չունէր ի մտի տալ զայն ումեք, այլ իբրև ստացուած Հռո-

մայեցւոց՝ ունելոց էր երկիրն կուսակալ Հռոմայեցի. իսկ Պարթամասիրայ թոյլ ետ Տրայիանոս գնալ յո՛ և կամք իցեն նմա: Արձակեաց զՊարթամասիր հանդերձ Պարթևօքն որ եկեալ էին ընդ նմա, եդեալ ընդ նմա պահապանս՝ չտալ թոյլ նմա խօսել ընդ ումեք և տալ մտաբերել ի խակութիւն. ետ ևս հրաման Հայոց որ ընդ նմա էին՝ մնալ յերկրին իւրեանց, զի էին այնուհետև ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց:... Տրայիանոս յետ դնելոյ պահանորդս ի դիպան դիպան վայրս Հայոց աշխարհին՝ եկն յԵդեսիա և անդ ետես զառաջինն զԱբգարոս... որոյ որդին Արբանդէս շահեցաւ զբարեկամութիւն կայսեր:... Ի մէջ այլ բազում պատուոց, որ տուան Տրայիանու ի ծերակուտէն՝ էր Օպտիմոս (ազնուագոյն) յորջորջումն:.. Յետ առնլոյ զՄծբին՝ կոչեցաւ և Պարթևական (Parthicus). այլ նա պարծէր Օպտիմոս յորջորջմամբ քան այլովքն ամենեքումբք, զի այս յորջորջումն զբարս նորա մանաւանդ քան զգէնսն առնէր յայտ:... Տրայիանոս ի գարնան եմուտ յերկիր անդր թշնամւոյն...: Անց ընդ Տիգրիս և եկն ի Տիզբոն, որոյ առն ետ նմա առնուլ զԶօրավարն (Jmperator) անուն, և կրկին անգամ զանունն Պարթևական:.. Յառաջ մատուցեալ մինչև ցՈվկիանոս և տեղեկացեալ զբուսայ բարուց ծովուն, ի տեսանելն նաւ մի որ երթայր ի Հնդիկս՝ ասէ. Երթայի և ես ի Հնդիկս՝ եթէ էի տակաւին մանուկ:... Ի Հռոմ, թող զայլ ինչ բազում՝ կանգնեցաւ նմա կամար ի հրապարակին, և լինէր պատրաստութիւն երթալ ընդ առաջ ի դարձին, հեռագոյն քան զոր մարթ էր. այլ նա չէր մտանելոց ի Հռոմ և ոչ գործել ինչ այնուհետև արժանի իւրոց արութեանցն առաջնոց, նա՛ կորուսանելոց իսկ էր զարդիւնս նոցա: Արդարև ի ժամուն զի նաւարկէր նա ի վերայ Ովկիանու և դառնայր այսրէն յարշաւանացն՝ խռովութիւնք ծագեցան ի մէջ ազգաց նուաճելոց, և յայտնի եղև ապստամբութիւնն. ոմանք արտաքսէին զպահանորդսն եդեալս ի նոսա, այլք սուր ի վերայ եդեալ կոտորէին զնոսա: Լուեալ Տրայիանու զայս ամենայն մինչ էրն ի Բաբելոն՝ առաքէր զԼուսիոս և զՄաքսիմոս ընդդէմ ապստամբացն: Մաքսիմոս սպանաւ ի ճակատու ուրեք. Լուսիոս, թող զայլ յաջողութիւնս՝ տիրէր Մծբնայ, առնոյր յարձակմամբ զԵդեսիա և տայր հրոյ ճարակ զքաղաքն: Երիկիոս Կղարոս և Յուղիոս Աղեքսանդր առին զՍելևկիա և այրեցին»:

4. «Իսկ Տրայիանոս երկուցեալ, թէ գուցէ և Պարթևք դարձուցեն կապարճս՝ փութացաւ տալ նոցա թագաւոր: Հասեալ ի Տիզբոն՝ գումարէր յընդարձակ ուրեք դաշտի զամենայն Հռոմայեցիս և զՊարթևս որ գտան անդէն. ապա ելեալ ի բեմ մի բարձր

և խօսեալ բանիբուն ճարտարութեամբ զիւրոց յաղթութեանց՝ կացոյց թագաւոր Պարթևաց զՊարթամասպատ (զորդի Աշխադարայ թշնամւոյ նոցա, ըստ Գաթըրճեանի), որում եդ զթագն ի գլուխ։ Մինչ անցանէր նա ընդ Արաբիա՝... սկսաւ ախտն։ Այն ինչ կամէր միւսանգամ դարձուցանել զզէնսն ի վերայ Միջագետաց, տեսեալ զի ծանրանայր հիւանդութիւնն՝ եդ ի մտի դառնալ յԻտալիա ընդ ծով։ Այսպէս Հռոմայեցիք յետ նուաճելոյ զՀայս, զմեծ մասն Միջագետաց և զաշխարհին Պարթևաց՝ կորուսին զպտուղ և՛ վաստակոց իւրեանց և վտանգաց։ Պարթևք արկեալ զՊարթամասպատ ի թագաւորութենէն՝ առին միւսանգամ զազատութիւն իւրեանց։ Տրայիանոս հասեալ ի Սեղինոն Կիլիկեցւոց զոր Տրայիանուպոլիս կոչեմք՝ յանկարծ փչէր զոգին, յետ կալոյ ի տէրութեանն զամս իննևտասան, զամիսս վեց և զաւուրս հնգետասան» (Դիոն ԿԸ.)։

Զարշաւանսն Տրայիանոսի կը յիշեն նաև Եւտրոպիոս և Սեքստոս Րուփոս լատին պատմիչք Դ. դարու։—«Տրայիանոս առ միւսանգամ զՀայս, զոր կալեալ էր Պարթևաց, և սպան (114) զՊարթամասիրիս որ ունէր զաշխարհն։ Ետ թագաւոր Աղուանից, հնազանդեցոյց զարքայն Վրաց, Սաւրոմատաց, Բոսփորայ, Արաբացւոց, Ուռհայաստանի և Կողքայ։ Տիրեաց աշխարհին Կորդուաց, Մարդաց և Մարաց։ Առնէր երիս նահանգս զՀայս, զԱսորեստան և զՄիջագետս» (Ետրոպ. Ը. 3)։ «Տրայիանոս, որ յետ Աւգոստեայ պնդեաց զոյժ և զօրութիւն հռոմէական պետութեան՝ առ այսրէն զՀայս ի ձեռաց Պարթևաց և հան յարքայէն Հայոց Մեծաց զթագն և զգահ։ Ետ թագաւոր Աղուանից, արկ ընդ իշխանութեամբ Հռոմոց զազգս Վրաց, Բոսփորայ, Կողքիդայ, կալաւ զՈւռհայաստան, զԱրաբիա և նուաճեաց զԿորդուացիս և զՄարկոմեդս (զՄարս Հայոց)․․ արար նահանգ զՀայս, զԱսորեստան և զՄիջագետս» (Սեքս. Րուփ. 20)։

Տրայիանոսի արշաւանաց վաւերական վկայ են այլևայլ յիշատակարանք։ Նախ դահեկանն, զոր ծերակոյտն տուաւ դրոշմել ի Հռոմ, «ի միում կողման Տրայիանոս նիզակաւ ի հանդերձ զօրականի, ի մէջ նշանաց Եփրատ և Տիգրիս գետոց. ընդ ոտիւք Հայաստան կապեալ շղթայիւք, շուրջանակի գրով՝ «Հայաստան և Միջագետք արկեալ ընդ իշխանութեամբ հռոմէական ժողովրդեան» (Գաթըրճ. Պատ. Տիեզ. Բ. էջ 174)։ Երկրորդ՝ կոթողն Տրայիանոսի, ուր քանդակուած էին անցք Պարթամասիրայ։ «Ի կոթողի աստ, որ յետոյ ածաւ ի շինութիւն կամարին Կոստանդիանոսի մեծի՝ ցայսօր նշմարի Պարթամասիր մորուօքն առաջի Տրայիանոսի յանդիման զօրացն» (Անդ)։ «Կան նաև դրամք Տրայիանու, յորս է գիր

րջանակի՝ «Պարսկաստան առեալ», կամ «Տուաւ թագաւոր Պար-
կաց» (Rex Parthis datus S. C.) և կամ «Թագաւորութիւնք
հմանեալք» հանդերձ պատկերաւ նորա, զի սահմանէ զթագա-
րութիւնս.—ամենեքին յամէ 116» (Անգ)։

5. Ադրիանոս կայսր յաջորդն Տրայիանու (117—138) իսկ և
կ թողուց իւր մեծ այլ փառասէր նախորդէն նուաճեալ երկիր-
րն, ընդ որս և զՀայս, առնելով դարձեալ զԵփրատ արևելեան
հման հռոմէական պետութեան, ինչպէս էր յառաջ։ Թագաւորք
կու ազգաց դարձան իրենց աթոռներն, Խոսրով (որում յաջոր-
ց Վաղարշ Բ. իբր Արշակ ԻԶ. 121—149) ի Պարթևացն և Պար-
մասպատ ի Հայոցն (118—139)։ Այսպէս կը պատմեն Սեքս-
ս Ռուփոս (դար Դ), Եւտրոպիոս (դա՛ր Դ) և Սպարտիանոս (դար
։ «Ընդ փառսն Տրայիանոսի նախանձեալ Ադրիանոս յաջորդ նորա՝
րովք կամօք տայր հրաման զօրացն Հռոմայեցւոց դառնալ յետս.
ողոյր զՀայս, զՄիջագետս և զԱսորեստան, և ի մէջ Հռոմոց և
րթևաց զԵփրատ դնէր միւսանգամ սահման» (Սեքս. Ռուփ. Ի)։
ախանձեալ ընդ փառս Տրայիանու առաջնոյն իւրոյ՝ անդէն թո-
լր զերեսին գաւառսն, զորս Տրայիանու արարեալ էր նահանգ,
կոչեաց զզօրսն յԱսորեստանէ, ի Միջագետաց և ի Հայոց, և
մէր զի սահման տէրութեանն լինիցի Եփրատ» (Եւտր. Ը. 7)։
դրիանոս զՊարթևս կալաւ միշտ ի բարեկամութեան, զի կոչեաց
ոս զթագաւորն զոր եդեալ էր ի վերայ նոցա Տրայիանոս։ Թոյլ
ի Հայոց ունել թագաւոր, մինչ առ Տրայիանոսիւ կուսակալ և եթ
նէին նոքա» (Սպարտ. Ի)։ Այս թագաւորը կը թուի թէ էր Պար-
մասպատ որդի Աշխադարայ, ինչպէս ունի Գաթըրճեան։

6. Առ Անտոնինոսիւ Պիոսիւ (138—161) յաջորդաւ Ադրիա-
սի՝ թագաւորեց Պարթևաց Վաղարշ Բ. (Արշակ ԻԶ. 121—149)
ջորդ Խոսրովու, և Հայոց՝ ի նմին Անտոնինոսէ կամ հրամանաւ
րա՝ Աքեմենիդ (140—159), որպէս թուի որդի Պարթամասպա-
այ, ըստ Բաբելոնական անուանեալ վիպասանութեան Յամբղի-
սի ուրումն ժամանակակցի ասորւոյ ի վերջ կոյս Բ. դարու առ
տայ (Գաթըրճ. Պատմ. տիեզ. Բ. 174, ծան. 6)։ Թէպէտ Աքե-
նիդայ անունը չունինք այլուր յայտնի՝ ունինք սակայն դահե-
ն Անտոնինոսէ Պիոսէ յամէն 140—143, ուր կը տեսնուի Ան-
նինոս որ կը պսակէ թագաւոր Հայոց։ «Գտանեմք վասն դիպացս
նոցիկ դրոշմեալ դահեկան, յորոյ ի միւում կողմանն կայ. Անտո-
նոս հիւպատ երրորդ անգամ, Աւգոստոս (Antonius Cos. III.
ugustus), և ի միւսումն կողման դնէ թագ ի գլուխ Հայոց թա-
ւորին ինքնին կայսր, կացեալ կանգուն պճղնաւորաւ և շուրջա-

նակի գիր՝ «Տուաւ թագաւոր Հայոց. Հր. Ծերակուտին». (Rex Ar-
meniis (կամ Armeniae) datus S. C.), դրոշմեալ՝ յամէ 140—14
(Գաթըրճ. անդ)։
Վաղարշ էր բարեկամութեամբ ընդ Անտոնինոսի, առ որ գր
կեց պսակ ոսկի, խնդրելով յետս ոսկեղէն աթոռը՝ զոր հանած է
ի Պարթեւաց Տրայիանոս։ Այսմ վկայ է Անտոնինոսի դահեկան
յորոյ «ի միւսմ կողմանն կայ գլուխն Անտոնինեայ և ի միւսու
կայ կանգուն կին Պարթև, որ ի ձախուն ունի աղեղն հանդե
կապարճիւք, աջու ձեռամբն մատուցանէ պսակ ճաճանչաւոր (նշ
նակ արևելից). գիր շուրջանակի «Պարթևաստան. Հրա Ծերակ
(Parthia S. C.) (Գաթըրճ. Պատ. Տիեզ. Բ. 175)։ Վաղարշ չհաս
իւր խնդրոյն, քանզի, ինչպէս կը պատմէ Յուլ. Կապիտոլինոս
գրեց ի վերջ կոյս Գ. դարու, այսինքն իբր 100 տարի յետոյ՝ «Ա
տոնինոս չառ յանձն տալ թագաւորին Պարթևաց զաթոռն ոսկ
ղէն, զոր հանեալ էր ի Պարթևաց Տրայիանոս» (Յուլ. Կապիտ. յԱն
Պի. Թ)։ Այս գլացումն, ինչպէս նաև թերևս դրուիլն Հայոց վր
նոր թագաւոր առանց նորա հաճութեան՝ զայրացոյց զՎաղա
այնպէս, մինչև խորհել նմա յարձակել ի Հայս, բայց կասեց
զնա Անտոնինոսի նամակն, ինչպէս ունի նոյն պատմագիր. «Թը
թով և եթ եպև բաւական դարձուցանել զթագաւորն Պարթևաց
խորհրդոյն զոր ունէր յարձակելոյ ի Հայս» (Յուլ. Կապիտ. անդ)
7. Վաղարշու Բ-ի այս խորհուրդն կատարուեցաւ (161—16
առ յաջորդաւ նորա Վաղարշու Գ. (Արշակ Իէ. (149—191), յ
մահուն Անտոնինոսի Պիոսի, առ յաջորդաւ նորա Մարկոս Ավր
ղիոսի, կամ մանաւանդ առ Ղուկիոսիւ Վերոսիւ աթոռակցաւ ն
րա (161—169), մինչ կը թագաւորէր Հայոց Աքեմենիդայ որդ
Սոյեմոս (159—169)։ Խոսրով զօրավար Վաղարշու մտաւ ի Հայ
Սոյեմոս խնդրեց իսկոյն օգնութիւն Սևերիանոսէ կուսակալէ Կա
պադովկիոյ։ Պատերազմն եղաւ ի դաշտին Եկեղեաց, ձախող
Հռոմայեցւոց և՛ Պարթևաց։ Սոյեմոս զերծաւ ի Հռոմ, ուր առ
սինկղիտոսութեան պատիւ։ Մեռած էին երկոքին զօրավարք, Սև
րիանոս ի ճակատու և Խոսրով ի բանտի, քանզի անկաւ գերի։ Մե
էր սակայն Հռոմայեցւոց կորուստը, և յաղթութիւնն հանդերձ Հա
աստանիւ էր ի ձեռս Պարթևաց (161—162)։ Զայս պատերազմ գր
Ղուկիանոս ժամանակակից (Վասն պատմագր. ԻԱ. ԻԵ.)։
Պարթևաց արշաւանին, Հռոմայեցւոց բեկման և Հայոց ի Պար
թևաց նուաճուելուն լուրն հասաւ ի Հռոմ։ Իրար անցան Հռոմայ
ցիք, և հարկ եղաւ Ղուկիոսի Վերոսի, գիտմամբ արշաւելոյ գ
Պարթևս՝ գալ յարևելս անձամբ։ Յուլիոս Կապիտոլինոս (դար

բաւական ընդարձակ կը պատմէ Ղուկիոսի այս արշաւանն, որ երկրորդն է յետ արշաւանին Տրայիանու: Ըստ Յուլիոսի՝ Վաղարշու յարձակման նշաւակ եղած էին ոչ Հայք միայն և Կապադովկիա, այլ և Ասորիք.— «Զայնու ժամանակաւ եղև Պարթևաց պատերազմն զոր Վաղարշ, որ պատրաստեալ էր յայն առ Անտոնինոսիւ Պիոսիւ՝ ետ ընդ մեզ առ Մարկոսն Աւրելիոսիւ և առ Վերոսիւ, յետ փախստեայ հանելոյ զԱնդիտիոս Կոռնելիանոս, որ կուսակալ էր յայնժամ Ասորւոց: Վերոսի եղև յանձն պատերազմն հաւանութեամբ ծերակուտին, և հաստատեցաւ ի խորհրդեանն՝ մնալ Անտոնինոսի ի Հռոմ, ուր հասարակաց իրք պահանջէին կալ նմա անդէն: Բայց և այնպէս յուղարկէր նա զՎերոս մինչև ի Կապուա, թողեալ նմա ընկեր զոմանս ի սենկղիտիկոսաց զիւր բարեկամս, և յաւել ի նոսա արս գլխաւորս յամենայն գործակալութեանց: Այլ ի դարձին ի Հռոմ իմացեալ, եթէ Վերոս հիւանդացեալ էր ի Կանուսիոն՝ անկաւ յուղի երթալ տեսանել զնա, յետ դնելոյ ուխտս յանդիման ծերակուտին վասն առողջութեան նորա: Իբրև լուաւ, եթէ անկեալ էր նա միւսանգամ ի ճանապարհ՝ եկն այսրէն ի Հռոմ, ուր իսկ և իսկ կատարէր զուխտսն: Վերոսի հասեալ յԱսորիս՝ հատանէր յանառակութիւնս: ՅԱնտիոք և ի Դափնէ կրթէր զանձն ի գոտեմարտիկ կռիւս և ի գազանամարտի: Զպատերազմն Պարթևաց մղեաց ի ձեռն զօրավարաց իւրոց, և առնոյր զԻնքնակալն անուն: Ի Հայս իրքն յաջողէին ևս իմն առաւել ի ձեռն Ստատեայ Պրիսկեայ, որ առ զԱրտաշատ, և տուաւ երկոցունց կայսերացն ևս անունն Հայական: Անտոնինոս ի սկզբան անդ առ համեստութեան չառնոյր յանձն զպատիւն, այլ յետոյ ուրեմն հաւանէր: Ի վճարել ապա պատերազմին Պարթևաց՝ կոչեցան և Պարթևականք: Անտոնինոս դարձեալ մերժէր զյորջորջումն, և ընդունէր հուսկ ուրեմն (Յուլիոս Կապիտ. ի Մարկ. Աւրել. Ը. Թ.): Զպատմութիւն արշաւանին Ղուկիոսի այսպէս կը համառօտէ Դիոն գրեթէ ժամանակակից. «Ղուկիոս էր յուժի և յաստիկ մտնկութեան և էր մէտ ի պատերազմ: Վասնորոյ և Մարկոս Անտոնինոս, յետ փեսայացուցանելոյ զնա ինքեան, տալով նմա զդուստր իւր Ղուկիղղա՝ առաքեաց զնա մղել զպատերազմն ընդդէմ Պարթևաց: Վաղարշ արդարև այն ինչ սկսեալ էր զպատերազմն, պաշարեալ յամենայն կողմանց լեգէոն մի ողջոյն հռոմայեցի, պահանորդ յամուր բերդին Եկեղեաց, ընդ հրամանատարութեամբ Սևերիանու: Վաղարշ կորոյս ի կորուս նետիցն զլեգէոնն և զզօրավարս նոցա, նաև ոչ դադարէր արշաւել ի քաղաքս Ասորւոց, զօրս առնէր ահարեկս: Ղուկիոս հասեալ յԱնտիոք առնէր հան-

դէս զօրուն, ունէր ընդ իւրով ձեռամբ բազում հազարս զօրավարաց, և կացեալ ի քաղաքի անդ կարգէր յարգարէր զպէտս պատերազմին և յանձն առնէր Կասեայ զբանակն։ Սա քաջութեամբ զդէմ կալաւ Վաղարշու և սարտուցեալ ի նմանէ զդաշնակիցս նորա՝ եղև նմա հետամուտ ի փախստեանն։ Խաղաց մինչև ի Տիգրոն, հրձիգ արար զՍելևկիա, և զապարանսն Վաղարշու կործանէր ի հիմանց։ Այլ ի դարձին կորոյս զբազումս ի զօրացն ի սովոյ և ի սրածութենէ և եմուտ յԱսորիս մնացորդօք բանակին» (Դիոն ՀԱ. 1, 2)։ *Զկարգ և իցէ՝ Հռոմայեցիք այս անգամ ևս թափեցին զՀայս ի Պարթևաց, և Սոյեմոս հաստատուցաւ ի թագաւորութեանն ի Ղուկիոսէ Վերոսէ* (169)։ *Այս պատմութեան ևս վկայ են դահեկանք։ «Ի դահեկանսն Մարկոսի Աւրելիոսի կայ ի միում կողմանն յետ անուան նորա՝ «Հայական»* (Armeniacus) *և ի միւսում կողմանն՝ կին մի նստեալ տրտում տխուր առաջի դրօշուն Հռոմայեցւոց, և ի ներքոյ գիր՝ «Հայաստան»* (Armenia)· *դահեկանք արծաթիք յամէ* 164, 165, 166։ *Իսկ Ղուկեայ Վերեայ, բաց ի նոյնպիսեաց, յորս երևի դարձեալ Հայաստան ի կերպարանս կնոջ նստեալ տխուր ձեռն ի ծնօտին առ նշանի յաղթութեան Հռոմայեցւոց՝ կան և դահեկանք այսպիսի ինչ գրով, «Յաղթութիւն Աւգոստեայ, Հ. Ծ», և պատկեր դից Յաղթութեան և առ ոտսն նստի Հայաստան ի մէջ հայրենական զինուց, յեցեալ ի նաւ մի (յամէ* 163 *և* 164)· *կամ ինքն Վերոս կացեալ կանգնէ նշան յաղթութեան և այր հայ կայ կըքեալ ի ներքոյ նշանին և առաջի կայսեր· (դահեկան պղնձի յամէ* 165)· *կամ կայսր զնիզակն ճօճեցուցանէ ի վերայ առն հայոյ (յամէ* 165), *և կամ նստի կայսր ի դահոյսն իւր* (sede curuli) *և բակ առեալ կայ զօրականն, և ի մէջի անդ կայ արքայն Հայոց, որում դնէ թագ ի գլուխ ինքնին կայսր Վերոս, և գիր շուրջանակի՝ թէ «Տուաւ թագաւոր Հայոց»* (Rex Armeniis datus)· *դահեկան ոսկի յամէ* 164 *և արծաթի՝ յամէ* 165» (Գաթրըճ. Բ. 176)։

Ց. *Մինչ յետ մահուն Կոմոդոսի* (180—192) *յաջորդին Մարկոս Աւրելիոսի, Պերտինաքս, Դիդիոս, Նիգէր, Ալբինոս և Սեպտիմոս Սևերոս կը կռուէին վասն կայսրութեան* (191, 192), *և Վաղարշ Գ. արքայ Պարթևաց (Արշակ Իէ,* 149—191) *յարեցաւ ի Նիգէր ի հակառակորդն Սեպտիմոսի՝ Սանատրուկ որդի Սոյեմայ, որ կը թագաւորէր յայնժամ ի Հայս* (190)՝ *մնաց չէզոք, չյարելով և ոչ ի մին ի նոցանէ։ Այսպէս Հերովդիանոս. «Նիգէր առաքէ խնդրել թիկունս օգնականութեան յարքայէն Պարթևաց և յարքայէն Հայոց և յարքայէն Ագրացւոց։ Արքայն Հայոց ետ պատասխանի՝*

եթէ չկամէր օգնել ումեք, միայն ի մերձենալ Սեւերոսի հսկելոց էր ի պահպանութիւն երկրին իւրոյ։ Արքայն Պարթեւաց խոստացաւ Նիգերայ՝ տալ հրաման նախարարաց իւրոց գումարել զօրս. այսպէս առնել սովորութիւն է թագաւորաց աշխարհին ի սկսել նոցա տալ պատերազմ, քանզի չունին ընդ ձեռամբ իւրեանց զօրս ըստ օրինի զինուորեալս թոշակօք։ Իսկ արքայն Ադրացւոց առաքեաց առ Նիգէր գունդ աղեղնաւորաց ի թիկունս» (Հերոդ. Գ. 1)։ Առ Դիոնի ունինք զանուն թագաւորին Հայոց՝ Սանատրուկ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ։

Ղ. Առ Վաղարշու Դ. (Արշակ ԻԲ, 191—209), առ որով կը թագաւորէր Հայոց համանուն նորա Վաղարշ որդի Սանատրկոյ՝ Պարթեւք եւ Հայք միաբանելով արշաւեցին Հռոմայեցւոց երկիրներն, մինչ Սեպտիմոս Սեւերոս ի կռուի էր ընդ հակառակորդաց իւրոց (193—197)։ Այս կռիւներէն ետքը, Սեպտիմոս Սեւերոս լինելով յաղթող, վրէժ խնդրելու համար ի Պարթեւաց եւ ի Հայոց՝ ելաւ յարեւելս։ Պարթեւաց դէմ սկսաւ երրորդ արշաւանն Հռոմայեցւոց, այն է Սեպտիմոսի արշաւանն. Միջագետք գրաւեցան եւ Տիզբոն մատնուեցաւ յաւեր (198)։ Վաղարշ արքայ Հայոց որ յառաջագոյն խիզախէր ի պատերազմ ընդդէմ Սեւերոսի, զահի հարեալ ի մերձենալ նորա՝ ընծայիւք, պատանդօք եւ օգնական զօրօք հաշտեցուց կայսրը, որ ճանչցաւ զնա։ Այսպէս ունինք առ Դիոնի. «Սեւերոս յետ այսորիկ դարձոյց զզէնսն ընդդէմ Պարթեւաց, քանզի մինչ էր նա զբաղեալ քաղաքային պատերազմաւ՝ ժամ պատեհ համարեցան նոքա լինել տէր Միջագետաց, արշաւէին անդր անթիւ բազմութեամբ, եւ առնուին իսկ զՄծբին՝ եթէ չէր Ղետոս, որ զերծոյց զքաղաքն յորում ինքն իսկ պաշարեալ էր։ Պարթեւք ոչ կային մնային զգալստեան կայսեր, այլ մեկնեցան յերկիր իւրեանց, եւ Սեւերոս օգնութեամբ նաւուց, զորս ետ շինել ի վերայ Եփրատայ՝ խաղացեալ յառաջ ընդ գետն եւ ընդ ցամաք առ ափամբքն՝ ոչինչ յամէր, բարւոք եւ արագ վարեալ զնաւսն, յորոց ի շինուածս անտառք առ Եփրատաւ լինէին նպաստ փայտից առատութեամբ — լինել տէր Սելեւկիայ եւ Բաբելոնի, զորս թողեալ էր Պարթեւաց։ Առնոյր եւ զՏիզբոն, զոր մատնէր յաւար զօրուն, եւ առնէր կոտորած մեծ ի քաղաքին, կալեալ կենդանւոյն իբրեւ հարիւր հազար այր։ Սակայն չեղեւ հետամուտ Վաղարշու եւ չեկաց ի Տիզբոն, այլ որպէս թէ արշաւան նորա ոչ վասն այլ իրիք էր, եթէ ոչ առ առնուլ զկողոպուտ քաղաքին՝ մեկնեցաւ ի բաց, եւ՛ վասն վայրացն անտեղեկութեան, եւ՛ առ ի չգոյէ կարեւորացն. ընդ այլ ճանապարհ դառնայր այսրէն, զի սպառեալ էր զպա-

շարըն և զարօտս զօրս գտեալ էր զառաջինն։ Զօրքն անկան յուղի, ոմանք ընդ ցամաք առ Տիգրիսիւ, այլք նաւատորմղիւն։ Վաղարշ (արքայ Հայոց) որդի Սանատրկոյ, որ կանխաւ մատուցեալ էր ի պատերազմ ընդդէմ Սեւերոսի՝ յառաջ քան զմտանելն ի կռիւ խնդրեաց և ընկալաւ հաշտութիւն խաղաղութեան։ Առաքեաց առ նա կայսրն հրեշտակս, և շնորհեցաւ նմա մի մասն Հայոց փոխանակ հաշտութեան» (Դիոն. ՀԵ. 9)։ Այսպէս ունի նա և Հերովդիանոս, միայն սա Հայոց հետ հաշտութիւնը յառաջագոյն կը դնէ քան զարշաւանն ի Պարթեւս.—«Զլինելն Բարշամայ արքային Ատրացւոց դաշնակից Նիգերայ արարեալ պատճառս պատերազմի՝ խաղաց Սեւերոս յարեւելս։ Հասեալ անդր՝ համարեցաւ ժամ պատեհ դնել արշաւանս ի Հայս. այլ թագաւոր երկրին կանխէր առաքել նմա ոսկի, ընծայս մեծագինս և պատանդս, և խնդրէր զնիզակակցութիւն նորա և զբարեկամութիւն։ Հաճեալ Սեւերոսի ընդ այնչափ նշանս հպատակութեան՝ խաղայր գնայր ի վերայ Ատրացւոց» (Հերովդ. Գ. 1)։

10. Սեպտիմոսի որդին Անտոնինոս Կարակալլա (211—217) նորոգեց պատերազմն ընդ Պարթեւս առ Վաղարշու Ե. (Արշակ Լ. 209 – 216)։ Կարակալլա կամէր առնել նահանգ նաեւ զՀայս, ուստի կոչելով զՎաղարշ արքայ Հայոց բանտարկեց զնա (211)։ Հայք զայրանալով ընդդիմացան նմա պատերազմաւ և յաղթեցին։ Կարակալլա կամեցաւ առնել հաշտութիւն Պարթեւաց հետ սա պայմանաւ, որ Արտաւանայ Ե-ի (Արշակ ԼԱ., 216 – 226), յաջորդին Վաղարշու Ե-ի, դուստրը տրուի նմա կնութեան, յուսալով այնու լինել ժառանգ պարթեւական պետութեան, բայց չյաջողեցաւ, և կայսրն սպանաւ յաջորդ տարին (217)։

Այսպէս ունինք առ Դիոնի (մատենագիր Գ. դարու), որ յետ պատմելոյ այս կայսեր անառակութիւնը և բռնութիւններն՝ կը յաւելու. «Տեսցուք այժմ, թէ զիարդ գնայր նա ի պատերազմի։ Յետ նենգաւ հաւանեցուցանելոյ զԱբգարոս արքայ Ուռհայաստանի գալ տեսանել զնա իբրեւ բարեկամ՝ կալեալ կապէր զնա շղթայիւք, և այնպէս տիրէր երկրին որ մնացեալ էր անտերունչ։ Իսկ զթագաւորն Հայոց, որ էր գժտութեամբ ընդ իւր որդիս՝ կոչէր նոյնպէս առ ինքն գրով բարեկամութեան, պատճառանօք համոզելոյ զնոսա ի հաշտութիւն, և գնայր ընդ նմա որպէս գնացն ընդ Աբգարու։ Սակայն Հայք փոխանակ յարելոյ ի նա՝ ընթացան ի զէնս, և ոչ ոք այնուհետեւ հաւատայր նմա, մինչեւ ի միտ առնուլ նմա ի փորձոյ, թէ քանի վնասակար է առն թագաւորի վարել նենգութեամբ ընդ բարեկամս։... Թէոկրիտոս զոր առա-

քեաց նա զօրօք ի վերայ Հայոց՝ մատնէր չարաչար ի պարտութիւն» (Դիոն. Հէ. 12, 21)։ Նոյն պատմիչ այլուր (ՀԸ. 1, 2, 3) յառաջ կը տանի պատմութիւնն այսպէս. «Յետ այնորիկ (այն է յետ պարտութեան իւրոյ ի Հայս) խաղացոյց զզօրս իւր ընդդէմ Պարթևաց պատճառանօք, եթէ Արտաւան չառ յանձն տալ նմա զգուսար իւր, զոր կայսրն խնդրէր ի կնութիւն. (Արտաւան արդարև զիտէր քաջ, եթէ զիտաւորութիւն կայսերն էր բանիւ ածել զգուսար նորա ի կնութիւն, այլ արդեամբ ի բուռն առնուլ զթագաւորութիւնն Պարթևաց)։ Անտոնինոս Կարակալլա աւերէր զմեծ մասն երկրին որ շուրջ զաշխարհաւն Մարաց, յարձակեալ մեծաւ ստակութեամբ՝ կործանէր զպարիսպս, առնոյր զԱրբեղա, և բացեալ զգերեզմանս թագաւորաց՝ ցրուէր զոսկերս նոցա. զի Պարթևք չեղեն նմա դիմադարձ, այլ խոյս ետուն ի լերինս յայնկոյս Տիգրիս գետոյ առ պատրաստելոյ զանձինս ի մարտ։... Պարթևք և Մարք զայրացեալ, զի այնպիսի վիշտս ետ նոցա կրել՝ գումարեցին զօր բազում։ Զահի հարեալ կայսեր՝ ինքն ևս առնէր պատրաստութիւն, այլ ոչ ժամանեաց տալ պատերազմ, քանզի սպանաւ ի մէջ զօրացն, զորս մեծարէրն այնչափ և յորս կարի իմն վստահ էր»։

11. *Յաջորդն Կարակալլայի Մակրինոս՝ ստիպուեցաւ առնել հաշտութիւն ընդ Արտաւանայ, ղրկեց նաև թագ առ Տրդատ Բ. որդի թագաւորին Հայոց Վաղարշու, որ մեռած էր ի բանտի* (216)։ *Այսպէս Դիոն. «Մակրինոս տեսեալ զԱրտաւան զայրացեալ յոյժ ընդ այնչափ վիշտսն որ անցին ընդ նա՝ յարձակեալ ի վերայ Միջագետաց բազմութեամբ զօրաց՝ առաքեաց նախ իւրովք իսկ կամօք զգերիսն բանիւք բարեկամութեան, հրաւիրեալ զնա առնել խաղաղութիւն, զպատճառս վնասուցն անցելոց արկեալ ի Կարակալլա. այլ Արտաւան փոխանակ ընդունելոյ զխնդիր նորա՝ պահանջէր ի նմանէ կանգնել միւսանգամ զամրոցսն և զքաղաքս կործանեալս, հանել զզօրսն ի Միջագետաց և առնել հատուցումն այլոց ևս վնասուց գործելոց և քանդելոյ շիրմաց թագաւորացն. և ապաւինեալ ի բազմութիւն զօրացն գումարելոց և արհամարհեալ զՄակրինոս իբրև աննշան ոք հասեալ յաւագութիւն՝ բրդէր ի ցասումն անհնարին և ակն ունէր զոր խնդրէրն առնուլ։ Մակրինոս առանց ինչ յապաղելոյ խաղայր ընդ առաջ թշնամւոյն որ եկեալ էր մինչև ի Մծբին, և ճակատ տուեալ և մատնեալ ի պարտութիւն՝ գնոց առնոյր զխաղաղութիւնն, բազում գանձիւք և պատարագօք շահեալ և՛ զԱրտաւան և՛ զաւագանին նորա։ Ոչինչ արգել զնա դադարեցուցանել և զթշնամութիւնն ընդ Հայս։ Հաճեալ Տրդատայ*

(որդւոյ Վաղարշու)՝ ընկալաւ զԹագն, զոր առաքեաց առ նա Մակրինոս (218), առ զմայր իւր արգելեալ զամիսս մետասան ի բանտի ի Կարակալլայ, զաւարն հանեալ ի Հայոց և զկալուածս հօր իւրոյ ի Կապադովկիա» (Դիոն. ՀԸ. 26, 27)։

12. Բայց Պարթևաց տէրութիւնն հասած էր ի վախճան։ Ինչպէս յիշեցինք՝ Արտաւան Ե. չեղաւ ձեռնհաս նուաճել մեծ ապստամբութիւնը որ յարեաւ Թելադրութեամբ Արտաշրի Սասանեանց, և հուսկ ուրեմն յետ ճակատուց ինչ Արտաւան սպանուեցաւ, ընկճեցաւ Պահլաւ ցեղն, և տիրեց Արտաշրիւ (226) Պարսիկ ցեղն, որ կոչեցաւ Սասանեան։

13. Յետ կործանելոյ Պահլաւ ցեղն ի Պարթևս՝ Արտաշրի առաջին գործն եղաւ ջանալ կործանել նաև զՀայոցն։ Արտաշրի և յաջորդաց նորա ջանքն ելին ի դերև, բայց և այնպէս Սասանեան հարստութեան սկիզբն ի Պարսկաստան՝ է դարագլուխ ի պատմութեան ոչ Պարսից միայն, այլ և Հայոց։ Բարեկամութիւնն որ կար ի մէջ Հայոց և Պարթևաց ի պատճառս ազգականութեան տիրող ցեղին իբրև Պահլաւ՝ փոխուեցաւ ի թշնամութիւն, և Հայք միտեցին ի Հռոմայեցիս անդր, թշնամիս Սասանեանց, որ կը ջանային ոչ միայն ջնջել Պահլաւ հարստութիւնն որ կը տիրէր ի Հայս, այլև մերժել հանել զՀռոմայեցիս յԱսիոյ։ Սասանեանց այս խորհուրդը չյաջողեցաւ։ Յետ սաստիկ և անստոյգ պատերազմաց Հռոմայեցւոց ընդ Սասանեանս, ի պատերազմէն Աղեքսանդրի Սևերոսի (226) մինչև ի վերջին ճակատն Գաղերիոսի (297), և իբր 70-ամեայ շփոթութեան, կամ ըստ ազգային աւանդութեան (Ագաթանգեղոս) նոյնչափ ամաց անիշխանութեան ի Հայս՝ Պահլաւ հարստութիւնն Հայոց կը հաստատուի մեծաւ Տրդատաւ ի ձեռն հռոմէական զօրութեան, քրիստոնէութիւնն կը մտնէ յաղթական ի Հայս դարձեալ հռոմէական ազդեցութեամբ, և իբր հարիւր ամօք յետոյ գիւտիւ նշանագրին կ'սկսի փառաւոր մատենագրութիւն. քրիստոնէական քաղաքակրթութիւն կը զօրանայ ի ձեռն մեծարոյ քահանայութեան, Թագաւորութիւնը կ'առնու աւելի ազգային ձև, և պատմութիւնն, որ մինչև ցայն վայր էր օտար և հեթանոս աղբիւրներէ՝ կ'սկսի լինել տոհմային, որպէս տեսցաւ այլուր։ Ահա փառաւոր սկիզբն, բայց վախճանը կը գտնենք տխուր։

Մեր կարճ պատմութեան մէջ զՍասանեանց՝ անցանք համառօտիւ զԱրտաշրէ, հիմնադրէն Սասանեան հարստութեան, թէ ինչպէս կործանելով Պահլաւ ցեղն, որ իբր յերկերիւր ամաց հետէ (Արտաւանաւ Գ. 44) կը տիրէր Պարթևաց՝ նոր կրօնական, քաղաքային և զինուորական կարգօք հաստատեց տէրութիւնը, որ

առ յաջորդօք նորա, մանաւանդ առ Շապհով Բ, առ Յազկերտիւ Ա. և առ Վռամաւ Ե. զօրացաւ այնպէս՝ մինչև սպառնալ բազմիցս հռոմէական պետութեան։ Յորմէ հետէ Հռոմայեցիք գտան մուտ յԱսիա՝ բոլոր արևելեան մեծ տէրութեանց—նախ Միհրդատայ հանդերձ Տիգրանաւ և ապա Պարթևաց, մերթ առանձինն և մերթ Հայոց հետ, ինչպէս նաև Սասանեանց—գլխաւոր ջանքն եղաւ զՀռոմայեցիս հանել յԱսիոյ։ Թէպէտ և ոչ բոլորովին, գէթ սաչափ միայն յաջողեցան, որ Հռոմայեցիք չկրցան իսպառ նուաճել զերկիրն անդր քան զԵփրատ. Միջադէտք մեծաւ մասամբ, որպէս և Հայք՝ մնացին տատանեալ ի մէջ այն երկու ազգաց, առաւելապէս, մանաւանդ Հայք՝ ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց։ Հայք, թէև ուրոյն թագաւորութիւն՝ չեղան կարող, երկրին դրից և ուրիշ ներքին և արտաքին պարագաներու պատճառաւ, ունենալ անկախ գոյութիւն։ Լեզուի, սովորութեանց, թերևս նաև կրօնից մերձաւորութեամբ, առ Պահլաւ-հարստութեամբ նաև տիրող ցեղին ազգականութեան պատճառաւ՝ Հայաստան միտեալ լիւր յարեւելեան դրացին մանաւանդ քան յարևմտեանն, բայց և ոչ միում յարեալ կատարելապէս (Տակիտոս)՝ առ Սասանեամբք (առ որովք եղաւ Հայաստան քրիստոնեայ) խզեց կրօնից և ազգականութեան կապը միանգամայն, ուստի և գրգռեց Սասանեանց ատելութիւնն իրեն դէմ. և թէպէտ աւելի սերտիւ կապեցաւ Հռոմայեցւոց հետ իբրև դաշնակից և կրօնակից և ազատեցաւ նոքօք քանի քանի անգամ Սասանեանց կողմէն սպառնացեալ վտանգէն՝ հուսկ ուրեմն հռոմէական ազդեցութեան տակաւ տկարանալովն յարևելս և ներքին երկպառակութիւններէ հիւծեալ՝ ի վախճանի անկաւ իսպառ ընդ իշխանութեամբ երկու հին ոսոխ տէրութեանց։

14. Այս դժբախտ ճակատագրէն թելադրեալ՝ կը փորձուին ոմանք երբեմն քրիստոնէութեան ընծայել զանկումն մեր, որպէս թէ Հայք քրիստոնէութեան պատճառաւ էր որ եղան ատելի երկու դրացեաց ևս, Սասանեանց և Յունաց միանգամայն. Սասանեանց՝ իբրև քրիստոնեայ, և Յունաց՝ իբրև հերձուած արևելեան եկեղեցիէն, որոյ դուստր էր քրիստոնեայն Հայաստան։ Բայց պատճառք անկման Հայոց են պէսպէս, ներքին և արտաքին։ Ներքին պատճառք են, որպէս ասացաւ՝ դիրք երկրին, որ առնէր զնա ասպարէզ անդուլ պատերազմաց ի մէջ երկու հակառակորդ տէրութեանց (Ռիզզէր). սակաւութիւնն—«Եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ» (Խոր. Ա. Գ), և աւատային (féodal) դրութիւնն։ Իսկ արտաքին պատճառք են՝ երկու դրացի մեծ տէրութեանց միայն մոլեռանդութիւնն և միւսոյն յոռի քաղաքականու-

թիւնն։ Այնպէս որ եթէ Հայաստան մնար ևս հեթանոս՝ հաւանական է թէ կործանէր արաբական զօրութեննէն, ինչպէս եղաւ քան զնա շատ աւելի հզօր արևմտեան դրացին, նաև կ՚ընկղմէր ի նմա կրօնիւ, ինչպէս եղաւ միւս դրացին, արևելեանն. մինչ քրիստոնէութիւնն իբրև եկեղեցի՝ տուաւ գրեթէ բարբարոս Հայուն ոչ միայն լինել մասնակից քրիստոնէական քաղաքակրթութեան, այլև ունել միութիւն՝ որմէ զուրկ էր և յորոյ ի շնորհս կայ ցարդ և կը շնչէ։

15. Դնելով այս դրութիւնը՝ գանք այժմ բուն պատմութեան ըստ Դիոնի, որ Աղեքսանդր Սևերոսի (222—235) վերջին տարին հրաժարեցաւ քաղաքական գործերէ, ուստի և էր ժամանակակից և ի մօտոյ տեղեակ։ Արտաշիր ի սկզբան տէրութեան իւրոյ (226) յարձակելով ի Հայս՝ տեսաւ ընդդիմութիւն մեծ յայնժամու թագաւորէն Հայոց, առ որ ապաւինած էին որդիք Արտաւանայ.—«Բազում ապստամբութիւնք յարեան (առ Աղեքսանդրիւ Սևերոսիւ) ի կողմանս կողմանս։ Էին որ թէպէտև սաստիկ յոյժ ցածուցան. այլ անցք որ ի Միջագետսն անցին՝ էին ահաւորագոյն ևս և բաւական ի զարհուրեցուցանել զամենեսին, ո՛չ ի Հռոմ միայն, այլ և ի գաւառս։ Արդարև Պարսիկ ոմն Արտաշէս (Արտաշիր) անուն, յետ յաղթելոյ Պարթևաց յերիս ճակատս և սպանանելոյ զթագաւոր նոցա զԱրտաւան՝ խաղաց ի վերայ Ատրացւոց քաղաքին, առնել զնա տեղի ապաւինի արշաւանաց իւրոց ի վերայ Հռոմոց։ Կործանէր զբազումս ի պատուարաց քաղաքին, այլ կորուսեալ բազմութիւն մեծ զօրաց ի գարանի ուրեք՝ անցանէր ի Մարս, և գրաւեալ մերթ բռնութեամբ և մերթ երկիւղիւ զմեծ մասն երկրին, որպէս և աշխարհին Պարթևաց՝ գայր մինչև ի Հայս։ Անդ փանեալ վկանդեալ ի բնակաց երկրին և ի Մարաց ոմանց և յորդւոցն Արտաւանայ՝ ելանէր փախստեայ, որպէս ասեն ոմանք, կամ որպէս այլք ասեն՝ դառնայր յետս գումարել մեծ ևս բազմութիւն զօրաց» (Դիոն. գիրք Զ. 3)։ Թագաւոր երկրին հաւանականապէս էր այն, առ որ ըստ նմին իսկ Դիոնի, ինչպէս տեսանք վերագոյնն՝ ամօք ինչ յառաջ (218) Մակրինոս ղրկած էր թագ, այն է Տրդատ Բ, որդի Վաղարշու։ Չեն արդարև զարմանք, թէ որդիք Արտաւանայ ապաւինած էին առ Տրդատ Բ. կամ Խոսրով, և այնպէս սատկութեամբ ընդդիմացան Արտաշրի. քանզի երկու թագաւորք, Տրդատ Բ. (ըստ ազգային աւանդութեան Խոսրով) և Արտաւան կը թուին լեալ մօտաւոր ազգականք, հաւանականապէս եղբարք իսկ։ Ագաթանգեղոսի «եղբայրութիւն ազգականութեան» և Եղիշէի նամակին «հօրեղբայր» բառերուն միայն նայելով՝ յառաջ-

նում մասին պատմութեան մերոյ (էջ 86, 87) ասացաք, թէ Ար-
տաւան և Խոսրով էին եղբարք. կայ սակայն ուրիշ աւանդութիւն
ազգային, որ յայտնի իսկ կը դնէ զԱրտաւան, զվերջինն Պարթև
թագաւորաց՝ եղբայր Խոսրովու: Այսպէս ունիմք ի յունարէնն Ագա-
թանգեղոսի. «Յետ մահուն Արտաւանայ, սպանելոյ յԱրտաշրէ յոր-
դւոյ Սասանայ՝ այս գոյժ հասանէր առ Խոսրով արքայ Հայոց եղ-
բայր Արտաւանայ, որ (Խոսրով) էր երկրորդ ի տէրութեանն Պար-
թևաց» (Ագաթ. Յուն. Գլ. Ա). և ի գիրսն Զենոբայ. «Ընդ ժամա-
նակս թագաւորութեանն Խոսրովայ որդւոյ Վաղարշայ վրէժխնդիր
լինէր (Խոսրով) Արտաւանայ եղբօր իւրոյ. և ի գոռալ երկուց թա-
գաւորացն, արքային Հայոց և Պարսից՝ սաստկացաւ մարտ պատե-
րազմին, և զօրացաւ արքայն Հայոց, և սկսաւ ապականել զերկիրն
Պարսից ամս տասն... և եղև միջնորդ արքայն Ճենաց, և ոչ կա-
րաց զբաւել զսիրտ նորա ի հաշտութիւն, այլ սովով և սրով հա-
նէր (Խոսրով) զվրէժս եղբօրն իւրոյ զոր եսպան արքայն Պարսից»
(Զենոբ, Պատմ. Տարօն. էջ 20, տպ. Վենետ. 1832): Արդարև ոչ
Ագաթանգեղոսի յունարէն յաւելուածին և ոչ Զենոբայ կրնանք
ընծայել կատարեալ հաւատարմութիւն. աւելի զօրաւոր է սակայն
վկայութիւնն Ագաթանգեղոսի և Եղիշէի նամակին, եթէ այն նա-
մակն է վաւերական, այսինքն գրուած բուն ազգին կողմանէ և ոչ
գիւտ Եղիշէի պատմութիւնը գրողին. և այս երկու վերջինք, մա-
նաւանդ նամակն՝ չեն հակառակ եղբայրութեանն Խոսրովու և Ար-
տաւանայ: Արդ որպէս ասացաք՝ Արտաշիր, ըստ Դիոնի, տեսնելով
Հայոց և Մարաց միացելոց կողմանէ ընդդիմութիւն՝ կ'երթայ ժո-
ղովել նոր և աւելի զօրս յարևելեան սահմանաց Պարսից և կու-
տայ (230—234) պատերազմ ընդ Աղեքսանդրի Սևերոսի, ընդ որում
կը թուի թէ միաբան էին Հայք:

16. Սևերոսի յաջողութեան վրայ միաբան չեն կարծիք հա-
մայեցի պատմչաց: Ըստ Լամբրիտիոսի (լատին պատմիչ իբր ժամա-
նակակից, այսինքն 50 ամօք միայն յետոյ քան զՍևերոս) Սևերոս
եղաւ յաղթող, թէպէտ Հերոդիանոս գրեթէ նոյնչափ յետոյ՝ կը
պատմէ զհակառակն: Կը դնենք հոս Լամբրիտիոսի պատմութիւնը,
որ հաւանականագոյն կը թուի շատ կողմանէ. «Աղեքսանդր չուեաց
մեծաւ պատրաստութեամբ ընդդէմ հզօր ազգին Պարսից և յաղ-
թեաց արքային նոցա Արտաշրի: Էր տեսանել զկայսր որ երթայր
ի թևս իւրոյ բանակին, քաջալերէր զզօրսն, շրջէր ի ճակատու անդ
ընդ նետիւք թշնամւոյն, ցուցանէր քաջութիւն զարմանալի և
տայր բանիւքն ազնուական իմն եռանդն իւրաքանչիւր զինուո-
րի: Յետ յաղթելոյ և առնլոյ փախստեայ զհակառակորդն զայն ա-

Հեղ, որ եկեալ էր ընդդէմ նորա եօթնհարիւր փղօք, հազար և ութհարիւր գերանդաւէն կառօք և բազում հազարօք հեծելոց՝ Աղեքսանդր դարձաւ խոյոյն յԱնտիոք և մեծացոյց զզօրսն աւարօքն զոր առեալ էր ի Պարսից. զի տայր հրաման զօրապետացն և զինուորաց՝ պահել զոր ինչ առեալ էր նոցա յերկրէ անտի թշնամւոյն: Յայնժամ զառաջինն տեսան կալանաւորք պարսիկք ի մէջ Հռոմայեցւոց: Եւ զի թագաւորք ազգին այնորիկ նախատինս մեծ համարէին անձանց, եթէ հպատակք նոցա անկցին գերի՝ գնեցան գերեալքն արծաթոյ: Աղեքսանդր զգինս փրկանացն թողոյր նոցա՝ որոց կալեալ էր զնոսա, զմասն ինչ միայն անտի առեալ ի գանձն: Աղեքսանդր երթայր յետ այնորիկ ի Հռոմ, ուր կատարեաց նա մեծաւ շքով զձաղանսն և խօսեցաւ առ ծերակոյտն օրինակ զայս. (քաղուած ի դիւանէ անտի ծերակուտին, եօթներորդ աւուր կաղանդացն հոկտեմբեր ամսոյ). Ծերակոյտ Հռոմայեցւոց, յաղթեցաք Պարսից: Երկայն ճառք աւելորդ են, պարտ է միայն գիտել ձեզ, թէ զինչ նոցա զօրութիւնն էր, որպիսի պատրաստութիւն նոցա: Էին նոցա եօթն հարիւր փիղք, աշտարակօք բարձելովք աղեղնաւորօք և նետիւք: Կալաք ի նոցանէ հարիւրս, երկերիւրք սպանան ի ճակատու անդ, ածաք այսր զութևտասանսն միայն: Ունէին կառս գերանդաւէնս հազար. մարթ էր մեզ բերել ի նոցանէ երկերիւր, որոց երիվարք կորուսեալ էին, այլ չթուեցաւ մեզ կարեւոր, քանզի դիւրին է ցուցանել ձեզ այլս: Յաղթեցաք հարիւր և քսան հազար հեծելոց և սպանաք ի պատերազմի անդ տասն հազար սպառազէն վառեալ, զորոց զզէնսն տուաք մերոց զինուորաց: Կալաք զբազումս ի Պարսից զորս վաճառեցաք: Նուաճեցաք զամենայն երկիրն որ միջոցի անդ երկուց գետոց, այն է զՄիջագետս, զոր կորուսեալ էր Հեղիոգաբաղայ: Խորտակեցաք և արկաք ի փախուստ զԱրտաշիր, զահեղն և՛ զօրութեամբ և՛ համբաւով, և աշխարհն Պարսից ետես զնա փախստեայ, թողեալ զնշանսն անդէն ի տեղւոջն՝ ուր երբեմն կորուսեալ էր մեր զմերսն: Ահա՛, ծերակոյտ Հռոմայեցւոց, զոր ինչ արարաք: Չեն աստ պէտք ճարտարխօսութեան: Զինուորք մեր գան մեծացեալ. յաղթութիւնն տայ մոռանալ զվաստակ: Ձեզ անկ է արդ սահմանել աղերս պաղատանաց առ ի յայտ առնելոյ զշնորհակալութիւն մեր առ դիս: Ծերակոյտն ետ պատասխանի ի ձայն ցնծութեան. Աւգոստէդ Աղեքսանդրէ, տեսանեմք զնշանս յաղթութեան ձերոյ, տեսանեմք և զյաղթութիւն ձեր: Փա՛ռք մանուկ կայսեր մերում, հօր հայրենեաց, քահանայապետիդ մեծի: Փա՛ռք մեզ, եմք ամենայն ուրեք յաղթող: Վստահ ի յաղթել է նա՝ որ գիտէն հրամայել զօրուն: Երանելի՛ է

ծերակոյտս, երանելի՜ զօրք, երանելի՜ ժողովուրդն Հռոմէական։— Աղեքսանդր յետ արձակելոյ զծերակոյտն՝ ել ի Կապիտոլիոնն, մատոյց զոհս դիցն և եդ ի մի մեհենին պատմուճանս պարսիկս։ Ապա մատուցեալ առ ժողովուրդն՝ ասէ. Արք Հռոմայեցիք, յաղթեցաք Պարսից և ածաք այսրէն զզօրս մեր լի աւարօք։ Խոստանամք բաշխել ձեզ պարգևս. վաղիւ տացուք ի կրկէսի անդ խաղս պարսկականս։ Զայսոսիկ գտաք ի տարեգիրս և յայլ բազում մատեանս։ Բայց և այնպէս ոմանք ի մատենագրաց ասեն, եթէ Աղեքսանդր ոչ միայն չկարաց յաղթել արքայի՜ն Պարսից՝ այլ և մատնութեամբ միոյ ուրումն ի գերելոց անտի՝ ստիպեցաւ, առ ի չմատնելոյ ի պարտութիւն՝ աճապարել ի փախուստ։ Այլ ասել զայս հակառակ բազմացն կարծեաց չէ մարթ նոցա, որոց անցեալ իցէ ընդ բազում մատեանս։ Քանզի, ասեն, Աղեքսանդր կորոյս զզօրսն ի սովոյ, ի ցրտոյ և ի հիւանդութենէ, որպէս Հերովդիանոսն պատմէ։ Աղեքսանդր լի փառօք, ընկերութեամբ ծերակուտին և կարգին ասպետաց, համօրէն ժողովրդեան և բազմութեամբ կանանց և մանկտւոյ, մանաւանդ կանանց զօրականին, գնաց հետի յապարանսն, մինչ կառք նորա յաղթական երթայր զկնի նորա, ձգեալ ի չորից փղաց։ Բարձեալ ի վերայ բազկաց բազմութեանն՝ հազիւ աբար (Աղեքսանդր) զկարճն զայն ճանապարհ ի չորս ժամս, մինչ ամբոխն աղաղակէր. Ողջ լիցի Հռոմ, զի ողջ է Աղեքսանդր։ Ի վաղիւն զկնի խաղուց կրկէսին և տեսլեանց ի թատերն՝ բաշխեաց կայսր պարգևս Հռոմէական ժողովրդեան և ըստ օրինակին Անտոնինոսի, որ նուիրեալ էր ի յիշատակ Փաւստինեայ արծաթ ի սնունդ մանկանց և աղջկանց՝ Աղեքսանդր հաստատէր այնպիսի ինչ ի յիշատակ Մամեայ (մօր իւրոյ)։ Պատերազմն մատուցաւ յառաջ ի ձեռն Յունեայ Պաղմատեայ» (Լամբր. յԱղեքս. Սևեր. 54—58)։ Զիարդ և իցէ՝ հաւանականագոյն է, թէ Արտաշիր յաղթուեցաւ ի Հայոց և ի Հռոմայեցւոց միացելոց, թէպէտ ոչ առանց մեծի վնասու այսց վերջնոց։

17. Աղեքսանդր Սևերոս կ'սպանուի (235), և մինչև 238՝ Մաքսիմինոս Թրակացի, երկոքին Գորդիանոսք, ապա Պուպիէնոս Մաքսիմոս և Բաղբինոս կ'սպանուին հետզհետէ, և կ'ընտրուի Գորդիանոս Գ. (238—244)։ Այս միջոցին, այն է 235—238՝ կը մեռնի Արտաշիր, մինչ կը պատրաստէր նոր յարձակումն ի վերայ Հայոց և Հռոմայեցւոց։ Բայց Հայք կը թուի թէ էին ազատ ընդ ազդեցութեամբ Հռոմայեցւոց և բարեկամ նոցա, քանզի առ Մաքսիմինոսիւ Թրակացւով (235—238) կը գտնենք զՀայս օգնական նիզակակից նմա ի պատերազմին ընդդէմ Գերմանաց (236).—Մաքսի-

մինոս «ածէր ընդ իւր ամբաւ բազմութիւն զօրաց, գրեթէ զհամօրէն գունդ Հռոմայեցւոց, որպէս և բազմութիւն մեծ աղեղնաւորաց յԱրուեստանէ, յՌուհայաստանէ և ի Հայոց» (Հերոդ. Ի. 5)։ Առ Շապհով Ա. (240—271) կ'սկսի թշնամութիւնն աւելի մեծ զօրութեամբ։ Շապուհ կը յարձակի (241) Հռոմայեցւոց երկիրներուն վրայ ի Միջագետս և յԱսորիս։ Մծբին կը պաշարուի և կ'առնուի յետ երկար և յամառ ընդդիմութեան։ Շապուհ կ'սպառնայ Անտիոքայ, կը խաղայ մինչև ի Կապադովկիա և ի Կիլիկիա։ Կը թուի թէ Հայաստան ևս չմնաց ազատ յարշաւանաց Շապհոյ, քանզի, ինչպէս պիտի տեսնենք յետոյ՝ Արտաշատ մայրաքաղաք Հայոց ինկած էր ի ձեռս Պարսից, երբ Գորդիանոս Գ. սկսաւ զիւր արշաւանն ընդդէմ Պարսից (243)։

18. Թէ ինչ եղաւ Տրդատ Բ. և ով յաջորդեց նմա՝ չունինք յիշատակութիւն արտաքին ժամանակակից պատմութենէ։ 218-էն, որ է տարին յորում Տրդատ Բ. ընկալաւ թագ ի Մակրինոսէ յաջորդէն Կարակալլայի, մինչև ի գերութիւնն Վաղերիանոսի (260), կը գտնենք միայն յիշուած Տրեբեղղիոսէ Պոլիոնէ, հռոմայեցի պատմագրէ ոչ հեռի ժամանակաւ՝ Արտաւազդ ոմն իբր թագաւոր Հայոց, ինչպէս պիտի տեսնենք ի ստորև։ Գորդիանոսի արշաւանն ընդդէմ Պարսից յաջողեցաւ, ինչպէս կը պատմէ Յուլիոս Կապիտոլինոս գրեթէ ժամանակակից (այն է իբր 40 ամաւ յետոյ քան զԳորդիանոս).—«Գորդիանոս յետ բանալոյ զմեհեանն Յանոսի, (իբրև ի նշան թէ կայր պատերազմ առաջի)՝ խաղաց ի վերայ Պարսից այնպիսի ահեղ բանակաւ և այնչափ ոսկւով, մինչև մարթել օգնութեամբ դաշնաւորացն և իւրոյ զօրուն յաղթել ազգին այնմիկ։ Անցեալ ընդ Միսիա հարկանէր վանէր, զհետ մտեալ հալածէր զորս միանգամ թշնամի էին նմա ի Թրակիա. ապա միջամուխ լեալ յԱսորիս՝ խաղայր ի վերայ Անտիոքայ, որ յայնժամ ի ձեռս Պարսից էր։ Անդ բազում ճակատս տուեալ յաղթէր, խախտէր զթագաւորն Պարսից Շապուհ. ապա զկնի Արտաշատու առնոյր զԱնտիոք, զԽառան և զՄծբին, քաղաքս, որ ընդ Պարսից իշխանութեամբ էին։ Թագաւորն Պարսից երկնչէր յոյժ ի Գորդիանոսէ, մինչև—թէպէտ գիտէր զիւր զօրութիւն և զմերն—հանել զզօրս իւր ի քաղաքաց մերոց և թողուլ զբնակիչս նոցա առանց իրիք վնասու և բռնութեան։ Այսպէս Պարսիկք, զորս երկիւղ էր տեսանել յԻտալիա՝ մտանէին յերկիր իւրեանց յահէ զօրացն Գորդիանու, և արևելք համօրէն լինէին միւսանգամ Հռոմայ։ Գորդիանոս ունի թուղթ առ ծերակոյտն օրինակ զայս. ԶԱնտիոք կորզեցաք ի լծոյ Պարսից։ Տուաք միւսանգամ հռոմէական պետութեան զԽառան և զայլ ևս քաղաքս։ Մա-

տեսաք յառաջ մինչև ի Մծբին, և եթէ չնորհեսցեն մեզ դիք՝ երթիցուք մինչև ի Տիզբոն (Յուլ. Կապիտ. ի Գորդ. Գ, ԻԶ. ԻԷ)։

19. Գորդիանոս կ'սպանուի 244, և յաջորդ նորա Փիլիպպոս (244—249) ի դաշինս ընդ Շապհոյ թողուց Պարսից զՄիջագետս և այսպէս մնաց առ յաջորդօք նորա, առ Դեկոսիւ (249—251) և առ Գաղոսիւ (251—253), որ զբաղեալ էին գթական պատերազմներով և ներքին խռովութեամբք։ Յաջորդն Գաղոսի Վաղերիանոս (253—260) կու գայ յարևելս (259), բայց յաղթուելով կը բռնուի գաւով։

20. Այնուհետև Շապուհ առաւել ևս համարձակութիւն առնլով կը խաղայ Անտիոքայ վրայ և կը գարձունէ յաւեր զքաղաքն. բայց ի դարձին յետս, մինչ կ'անցնէր ընդ Եփրատ՝ Պալմիւրայի իշխանն Ոդենատոս կը զարնէ զնա չարաչար Ուռհայի մօտ; կ'առնու զՄծբին, կը վանէ զՇապուհ ի Միջագետաց և կը կոչուի ի Հռոմայեցւոց «Դուքս արևելից». բայց ինքն իւր առաջին յաղթութենէն հետէ առ Եփրատաւ (260) կը կոչէր զանձն Թագաւոր Պալմիւրայ» (Րիդդէր)։

Պալմիւրա, ըստ Արաբացւոց Թատմոր, անուանի քաղաք անապատին Արաբիոյ, ի մէջ Ասորւոց երկրին և Եփրատայ, Պալմիւրա, այսինքն արմաւենի կոչուած ի Հռոմայեցւոց իւր գեղեցիկ արմաւենիներուն պատճառաւ, մեծանուն և փառաւոր իւր սքանչելի գրիւքն իբրև ճանապարհ վաճառականութեան ի մէջ արևելից և արևմտից—կը կարծուի չինեալ ի Սողոմոնէ։ Ունեցաւ երկար ժամանակ փոքր իշխաններ, որ պահեցին զինքնօրէնութիւն իւրեանց մինչև Գ. դար, երբ եղան հարկատու Հռոմայեցւոց։ Այս իշխաններէն էր Ոդենատոս այս, որ մեծամեծ քաջութիւններ գործեց ոչ միայն Պարսից դէմ, ինչպէս պատմուեցաւ հոս, այլև երեսուն բռնաւորաց (ապստամբ իշխանք, որ առ Վաղերիանոսիւ, Գաղիենոսիւ, Կղաւդեաւ, Աւրեղեաւ, 253—270, եղան ինքնագլուխ հռոմէական պետութեան այլևայլ տեղերը) չատերուն դէմ, մինչև արժանի լինել առնուլ, ինչպէս ըսինք՝ «Դուքս» կամ «Զօրավար արևելից», նաև «Օգոստոս» տիտղոսը։ Այրին Ոդենատոսի Զենոբիա յետ մահուան առն իւրոյ առաւ անուն «Դշխոյ արևելից», բայց յաղթեց իրեն դէմ Աւրեղիանու (270—275) երկրորդ յաջորդին Գաղիենոսի զէնքը։ Զենոբիա յաղթուելով ձաղեցաւ ի Հռոմ յԱւրեղիանոսէ. հանդերձ նորա կորեաւ նաև իշխանութիւնն Պալմիւրայ, որ եղաւ նահանգ հռոմէական յամին 272։ Պալմիւրայի հոյակապ աւերակները կան ցարդ, 245 հազարամէտր ի հարաւոյ արևելից Բերիոյ և 268 հազարամէտր ի հիւսիսոյ արևելից Դամասկոսի։ Կը պահեն

տակաւին Թատմոր անունը։ Յամի 1691 եղան ծանօթ Եւրոպացւոց և նկարագրուած են գեղեցիկ ի Վոլնէյէ։ Հոս կը գտնենք երևելի մատենագրի մը խօսքը. «Ո՜րպիսի մեծ շահ օգտի կայր մնալը կողմանցն Եփրատայ՝ եթէ խաղաղութիւնն, որ եկն ետ ընդ ետ զկնի, և իմաստունն վարչութիւն, որպիսի էր Պալմիւրայն, ուր վաճառականութիւն, արուեստք և գիտութիւնք էին ի ծաղկի՝ լեալ էին տեւական, և չէր ի ձեռն Աւրելիանու այնպէս արագ արագ ի վերայ հասեալ և՛ Զենոբիայ և՛ հոյակապ մայրաքաղաքին Պալմիւրայ կործանումն, որով ոչ միայն շողաւորն տեսիլ այն ինչ երևելոյ տէրութեանն յանկարծ ի մառն մտանէր, այլ և համօրէն արուարձանեայ երկրին լինէր այն առ եղեռանէ»։

21. Տապհոյ առաջին արշաւանին ժամանակ, ինչպէս տեսանք՝ Հայք նուաճեցան ընդ Տապհով (241—243). այլ առ Գորդիանոսիւ, առ որով Տապուհ մղեցաւ յետս՝ առին դարձեալ զազատութիւն իւրեանց (244)։ Երկրորդ արշաւանին ժամանակ յետ կալանացն Վաղերիանու (260)՝ Տապուհ չդպաւ Հայոց, նա մանաւանդ արար զնոսա բարեկամ և դաշնակից, քանզի Վաղերիանոսի գերութեան ժամանակ, մինչ կ'իշխէր Հայոց Արտաւազդ ոմն՝ կը գտնենք զՀայս Տապհոյ կողմը, ինչպէս յայտնի է նամակէն զոր գրեց Արտաւազդ առ Տապուհ և զորոյ օրինակը կու տայ մեզ Տրէբեղղիոս Պողիոն լատին պատմիչ (իբր 50 ամօք յետոյ քան զՎաղերիանոս).—«Արտաւազդ արքայ Հայոց գրեաց առ Տապուհ զթուղթն որ զկնի. Ուրախ եմ ընդ փառս քո, այլ երկնչիմ թէ արծարծեցեր զհուր պատերազմի մանաւանդ քան յաղթեցեր։ ԶՎաղերիանոս խնդրեսցեն և՛ որդի նորա, և՛ թոռն, և՛ զօրավարք Հռոմայեցւոց, և՛ համօրէն Գաղղիա, և՛ Աֆրիկէ ողջոյն, և՛ բովանդակ Սպանիա, և՛ ամենայն Իտալիա, և՛ ամենայն զօրք, որ են ի Լիւրիկէ և յարևելս և ի Պոնտոս դաշնակիցք Հռոմայ կամ ընդ իշխանութեամբ նոցա։ Կալար դու զայր ոմն ծեր, և յարուցեր հակառակ քեզ զամենայն ազգս երկրի, թերևս և հակառակ մեզ՝ որ առաքեցաք քեզ օգնական. դրացի քո եմք և կրեմք հանապազ վիշտս, յորժամ կռուիք ընդ միմեանս» (Տրեբ. Պող. ի Վաղեր. Է.)։ Այս բարեկամութիւնն Հայոց կը տևէր առ Աւրելիանոսիւ (270—275), ինչպէս յայտնի է ի նամակէն Զենոբիայ թագուհւոյն, հակառակորդին Հռոմայեցւոց, առ Աւրելիանոս կայսր.—«Զենոբիա տիկին արևելից առ Աւրելիանոս Աւգոստոս. Ոչ ոք երբէք խնդրեաց զոր դուդ պահանջես՝ նամակաւ։ Քաջութիւն է, որ տայ վճիռ յիրս պատերազմի։ Խնդրես յինէն անձնատուր լինել, որպէս թէ չգիտիցես, եթէ զԿղէոպատրա կամեցաւ մեռանել մանա-

ւանդ քան մասն լինել իւրում պատուոյ: Զպակասէ մեզ ի Պարսից օգնութիւն, որում սպասեմք իսկ. Սարակինոսք ի մեր կոյս են, Հայք ի մեր կողմն: Աւազակք երկրին Ասորւոց հարին զբանակ քո. զի՞նչ լինիցի, եթէ գայցէ ձեռնն որում ամենայն ուստեք ակն ունիմք: Ապաքէն ի բաց թողուցուս յայնժամ զգուշութիւնդ, որով հրամայես ինձ լինել անձնատուր, որպէս թէ իցես յաղթող ամենայն ուրեք» (Փլաւիոս Վոպիսկոս լատին պատմիչ առ Դիոկղետիանոսիւ, ուստի և ժամանակակից. յԱւրել. ԻԷ.): «Թէպէտ և—կը յաւելու պատմիչն—(կայսրն) և՛ զօգնութիւնն որ առաքէր ի Պարսից՝ արգել, և՛ զգունդս Սարակինոսաց և՛ զՀայոցն որոց ակն ունէր գշխոյն՝ կասեցոյց, յինքն յանկուցեալ զնոսա եթէ սպառնալեօք և եթէ հնարիւք»:

22. Յետ անկման Պալմիւրայ Աւրելիանոս կը պատրաստուէր խաղալ ի վերայ Վռամայ Ա. (273—276), բայց մեռաւ. Նոյնպէս Պրոբոս (276—282), մինչ մօտ էր սկսել պատերազմն առ Վռամաւ Բ. (276—294): Կարոս (282—284) յաջորդն Պրոբոսի կատարեց իւր նախորդներուն խորհուրդը: Արշաւանքն սկսաւ: Երկչոտ Վռամ խնդրեց հաշտութիւն, և կը պատմուի, թէ երբ հրեշտակք Վռամայ եկան առ Կարոս խօսել հաշտութեան վրայ՝ գտան զնա ի ճաշու, որ էր պատառ մի ճարպ խոզի և չոր ոլոռն: Կայսրն գլուխ իւր որ էր կնտակ՝ բանալով ասէ. «Եթէ թագաւորն ձեր չառնու յանձն ընդունել զպայմանս Հռոմայ՝ արարից զերկիր նորա այնպէս մերկ՝ որպէս գլուխս իմ է» (Տիւր. Պատ. Արևել.): Այս սպառնալիք կատարուեցան ըստ մասին: Կարոս զարկաւ Պարսիկներն ի Միջագետս, առաւ Սելևկիա և Տիզբոն, անցաւ յաղթական մինչև յայնկոյս Տիգրիսի: Ի վերայ կար Պարսից վտանգ մեծ, որմէ զերծոյց զնոսա կայսեր մահը (284): Յաջորդն Կարոսի Նումերիանոս (284), զանգիտելով կեցաւ յետ: Զայնու ժամանակաւ, այն է 284—294, կամ ի մահուանէ Կարոսի մինչև ի թագաւորութիւնն Ներսեհի (294—303) յաջորդին Վռամայ Բ՝ չկայ յիշուած պատերազմ ի մէջ Պարսից և Հռոմոց: Միջագետք էին ի հանդարտութեան, նոյնպէս Հայք:

23. Այսպիսի հանդարտութեան մէջ էին արևելք առ մեղմն և երկչոտ կառավարութեամբ Վռամայ Բ-ի, մինչ թագաւորելով Ներսեհ կամեցաւ հետևել իւր նախնւոյն Շապհոյ փառասէր խորհրդոյն,—հանելով զՀռոմայեցիս յարևելից՝ տիրել միահեծան համօրէն արևմտեան Ասիոյ: Ներսեհի առաջին գործն եղաւ յարձակել ի Հայս, ուր կը թագաւորէր թերևս տակաւին Արտաւազդ, յիշեալն ի Տրեբելլիոսէ Պողիոնէ, և Կարոսի արշաւանքէն հետէ հաւանա-

կանապէս կը գտնուէր ի բարեկամութեան Հռոմայեցւոց։ Ներսեհ
մօտ էր սկսել զթշնամութիւնն ուղղակի ընդ Հռոմայեցւոց՝ մինչ
Դիոկղետիանոս, որ կը դիտէր զընթացս արեւելից իբր տասը տարիէ
հետէ (284—294), տեսնելով Ներսեհի յանդուգն խորհուրդը՝ որո-
շեց ընդդիմանալ նմա պատերազմաւ։ Ինքն գալով նստաւ յԱնտիոք,
դիտել ի մօտոյ հռոմէական բանակին գործերն։ Զօրավար կարգե-
ցաւ Գաղերիոս (յետոյ կայսր), որ արդէն նշանաւոր եղած էր յա-
փունս Եփրատայ։ Պատերազմն ի սկզբան չեղաւ յաջող (296)։
Երիցս յետս մղեցան Հռոմայեցիք. բայց Գաղերիոս անցնելով զԵփ-
րատ 25 հազար զօրօք, փոխանակ դնելու իւր լեգէոններն ի վը-
տանգի Միջագետաց բաց դաշտերուն մէջ՝ հորդեց իւր ճանապարհ
ընդ մէջ լերանց Հայաստանի, որոյ բնակիչք իսկ և իսկ փութացին
ի նպաստ նորա։ Պարսիկք խորտակեցան չարաչար, և Ներսեհ վի-
րաւորեալ ստիպուեցաւ ի փախուստ և աճապարեց խօսել ի հաշ-
տութիւն։ Դիոկղետիանոս դրաւ զՔոպար (Քափուր) գետ սահման
ի մէջ երկուց տէրութեանց։ Միջագետք որ վաղուց էին ընդ վի-
ճիւ՝ թողան Հռոմայեցւոց այլ եւս հինգ գաւառօք անդր քան
զՏիգրիս։ Այս դաշնադրութեան մէջ էր նաև Հայաստան, յոր յաւե-
լաւ Ատրպատական կամ հիւսիսային արևմտեան մասն նորա. Թա-
գաւորն Պարսից հրաժարեցաւ վերին իշխանութենէ Հայաստանի
վրայ, Գաղերիոս առաւ տիտղոս «Հայական» (Armeniacus), ինչպէս
կայ ի հրովարտակին Հալածանաց Գաղերիոսի առ Եւսեբեայ (Եկեղ.
Պատմ. Գիրք Ը. Գլ. ԺԱ.)։ Այսպէս ունինք առ Եւտրոպիոսի, որ
ծաղկեցաւ առ Կոստանդիանոսիւ և է գրեթէ ժամանակակից. «Գա-
ղերիոս Մաքսիմիանոս յառաջնում ճակատուն ընդ Ներսեհի, ընդ
մէջ Կալլինիկեայ և Խառանու՝ չեղև յաջող առ ի չգոյէ իմաստու-
թեան մանաւանդ քան քաջութեան, զի սակաւաձեռն գնդաւ ել
ընդդէմ մեծի բազմութեան։ Ի բաց վանեալ ի թշնամեացն՝ չոգաւ
առ Դիոկղետիանոս, որոյ հանդիպեալ նմա ի ճանապարհին՝ ընկալաւ
սաստ, անարգանօք, մինչև տալ նմա ընթանալ զբազում հրասախս
զկնի իւրոյ կառաց։ Այլ Գաղերեայ միւսանգամ զօրաժողով լեալ ի Լիւ-
րիկէ և ի Միւսիա՝ տայր դարձեալ պատերազմ ընդ Ներսեհի հաւուն
Որմզդի և Շապհոյ ի մեծ Հայս, և տանէր ի գլուխ յաղթութիւն
մեծ, ցուցեալ ոչ սակաւ իմաստութիւն և քաջութիւն, մինչև ան-
ձամբ անձին լրտեսել զբանակ թշնամւոյն երիւք հեծելովք միայն։
Յետ առնելոյ փախստական զՆերսեհ (297)՝ առնոյր յաւարի զբա-
նակ նորա, ունէր զկանայս նորա, զքորս և զորդիս և զբազումս
յաւագանւոյն Պարսից որ էին ընդ բանակին, և գանձս բազումս,
և զնա ինքն վանեալ վկանդէր մինչև յամայի վայրս իւրոյ թագա-

ւորութեանն։ Այսպէս մեծաւ յաղթութեամբ եկեալ գտանէր զԴիոկղետիանոս, որ էր յայնժամ ի Միջագետս զօրու ծանու և ընդունէր զնա մեծաւ պատուով» (Եւտր. գիրք Թ. Գլ. ԻԴ, ԻԵ.)։ Նոյնպէս կը պատմէ և Սեքստոս Ռուփոս Հռոմայեցի պատմիչ ոչ հեռի ժամանակաւ. «Առ Դիոկղետիանոսիւ կայսերաւ եղև յաղթութիւն նշանաւոր ընդդէմ Պարսից։ Գաղերիոս Կեսար, յետ յառաջնում ճակատու յարձակելոյ սաստկութեամբ ի վերայ անթիւ բազմութեան թշնամւոյն դոյզն գնդաւ՝ ի պարտութիւն մատնեալ դառնայր յետս։ Դիոկղետիանոս ընդունէր զնա անհնարին ցասմամբ, մինչև տալ նմա հրամանս ինչ ընթանալ առաջի կառաց իւրոց, թէպէտև կրէր նա ծիրանիս։ Բազում դժուարութեամբ առնոյր Գաղերիոս հրաման՝ միւսանգամ զինու զօրութեամբ փորձել զիւր բախտ, յետ ամրացուցանելոյ զքանակ իւր գնդօք բանակելովք ի սահմանագլուխս անդր Դակիայ։ Հասեալ ի մեծ Հայս՝ Գաղերիոս գնաց անձամբ հեծելովք երկու տեղեկանալ զօրութեան թշնամւոյն։ Քսան և հինգ հազարաւ անկանէր ի վերայ ամբութեանցն Պարսից, հարկանէր յանկարծ զանթիւ բազմութիւն զօրաց նոցա և բազում նախճիրս գործէր։ Թագաւորն Պարսից Ներսեհ զերծանէր մազապուր. այլ կանայք նորա և դստերք լինէին ձերբակալ, և պահեցան մեծաւ զգաստութեամբ։ Ընդ այս զարմացեալ Պարսից՝ խոստովան լինէին, եթէ Հռոմայեցիք գեր ի վերոյ էին քան զնոսա և՛ զօրութեամբ զինուց և՛ բարուց ազնուականութեամբ, և տային զՄիջագետս հինգ նահանգօք յայնկոյս Տիգրիս գետոյ» (Սեքս. Ռուփ. Գլ. ԻԵ.)։ Եւ դարձեալ ի գլուխն ԺԴ.—«Ի ժամանակս Դիոկղետիանոսի Հռոմայեցիք ի պարտութիւն մատնեալ յառաջնում ճակատու՝ յերկրորդումն հարին զՆերսեհ արքայ Պարսից և հանին ի նմանէ զկին և զդստերս նորա, զորս պահէին բազում զգաստութեամբ։ Զկնի դաշանցն տուան մեզ Միջագետք, և հաստատեցան միւսանգամ սահմանք տէրութեանն անդր քան զափունս Տիգրիս գետոյ, մինչև իշխանութեան մերոյ ձգել ի վերայ հինգ ազգաց բնակելոց յայնկոյս գետոյն։ Պայմանք դաշանց տևեալ բաւեցին մինչև յաւուրսն Աւգոստոսն Կոստանդեայ»։

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Երկրորդ մասին։

ԳԼՈՒԽ Ա. Երկրորդ հարստութիւն. Արշակունիք։ Ընդհանուր տեսութիւն. . . . . . . եր. 1

ԳԼՈՒԽ Բ. Ցոյց բարուց Հայոց իբրև ազգ . . . . . . » 56

ԳԼՈՒԽ Գ. Քաղաքական մասն պատմութեան Արշակունեաց. . . . . » 64

ԳԼՈՒԽ Դ. Հռոմ. Պատմութիւն նորա համառօտիւ . . » 80

ԳԼՈՒԽ Ե. Հռոմայեցի կայսերք . . . . » 84

ԳԼՈՒԽ Զ. Պարթևք . . . . » 88

ԳԼՈՒԽ Է. Սասանեանք . . . . » 96

ԳԼՈՒԽ Ը. Հայ Արշակունիք . . . . » 101

ԳԼՈՒԽ Թ. Արտաքսիասայ ցեղն 190-էն նախ քան զՔր. մինչև ի սկիզբն քրիստոնէական հաւատոյ. . » 104

ԳԼՈՒԽ Ժ. Պարթևք և Հռոմայեցիք յետ Տիգրանայ. . » 169

ԳԼՈՒԽ ԺԱ. Հայք ի Վոնոնէ մինչև Տրդատ Ա. (Արտաշէս Բ. ըստ Խորենացւոյն), կամ 16—80։
Պարթև-Հռոմէական ազդեցութիւն . . » 193

ԳԼՈՒԽ ԺԲ. Հայքն ի մահուանէն Տրդատ-Արտաշիսի մինչև ի Տրդատ մեծ։
Հռոմէական-Սասանեան ազդեցութիւն . » 251

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

		Ռ.	Կ.
32	Հաւատարիմ Սավիտրին, Վայլտների	—	10
33	Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցի	—	25
34	Յաւելուած ի գիրս պատմութեան Ասողկան	—	20
35	Նաւի փոքրաւորը, Մ. Ռոզենհայնի, թարգմ. Ի. Յ.	—	15
36	Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի, թարգմ. Ի. Յ.	—	15
37	Մեծապատիւ Մուրացկաններ, Յ. Պարոնեանի	—	40
38	Ազգային ջոջեր, Յ. Պարոնեանի	1	—
39	Բը-ա-բա, Է. Օժէշկօյի	—	15
40	Շնիկ, Կուլիկովայի, թարգմ. օր. Ա. Սահակեան	—	5
41	Շչեդրինի երեք զրոյցներ	—	10
42	Տարասկոնցի Տարտարէնը, Դօդէի, թարգմ. բժ. Թ. Զ.	—	40
43	Օրլէանի կոյսը, Օստրոգորսկու, թարգմ. Յ. Խ.	—	25
44	Յ. Արարատեանի կեանքը, թարգմ. Պ. Պ.	—	75
45	Գաղափարական քահանայ, Պոտապենկօի, թարգմ. Յ. Ս.	—	75
46	Ընտանիքի լոյսը, Աննենսկայա, թ. օր. Վ. Տ.-Յովսէփեանի	—	10
47	Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի	1	—
48	Քիմիա Ռօսկօյի, թարգմ. Ա. Մելիք-Ալլահվերդեանի	—	40
49	Շչեդրինի երեք վէպիկ, թարգմ. Մ. Ղազարեանի	—	15
50	Սասմայ ծուեր, Գարեգին սարկաւագ	—	50
51	Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի	—	25
52	Դաստիարակութիւն, թարգմ. Մ. Ղ.	1	—
53	Մրուռան, Ի. Շմիդտ, թարգմ. Ս. Քալանթարի	—	20
54	Խան-Միրան, գրեց Սէյլան	—	20
55	Տարաս-Բուլբա, Ն. Գոգօլի, թարգմ. Մ. Աբեղեանի	—	40
56	Փշրանքներ, Գ. սարկ. Յովսէփեանի	—	50
57	Երկու քոյր, Ղ. Աղայեանցի	—	25
58	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50
59	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50
60	Փորձանքների բժշկարան, Բրօքերի, թարգմ. Օհանեանի	—	20
61	Մակբեթ, Շէկսպիրի, թարգմ. Ա. Մալխասեանցի	—	50
62	Պաստեօր, Ս. Բալադեանի և Ա. Քալանթարի	—	20
63	Խօլերա, բժ. Վ. Արծրունու	—	5
64	Խարազի տղայ, Ս. Քամալեանի	—	40
65	Հանրամատչ. բնախօսութիւն, Վ. Լունկեվիչի, թ. Կ. Գիւլն.	1	—
66	Փարաւոնի աղջիկը, Էբէրսի, թարգմ. Գ. Շահբուդաղեանի	—	80
67	Խուն-խոր, Յ. Ղազարեանցի	—	60
68	Էլգուջա, վէպ, թարգմ. Տ. Փիրումեանի	—	45
69	Չորրորդ մոգ, Վան-Դէյկի	—	5
70	Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	—	50

[Հռ. 504]

Աշխ․ 663

71 Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ
72 Զրոյցներ հողի մասին, Ս. Բալալեանի . . . .
73 Աստղաբաշխութիւն, Ֆլամմարիօնի, թ. Տ. Յովհաննիսեանի 1 —
74 Մանուկների հոգատարութիւնը, Պօկրօվսկիյ, թ. բժ. Թ. Զ. — 20
75 Մուկուչի հաւիկը, Պ. Նեգվանօվի . . . . — 15
76 Երկու հեքեաթ, Կարմէն Սիլ՚վայի . . . . — 10
77 Կովկասի գերին, Լ. Տոլստոյի, թարգմ. Պ. Պ. . . . . . — 20
78 Անճոռնի բադիկը, Անդէրսէնի . . . . — 5
79 Վէպիկներ, Շիրվանզադէի . . . . — 40
80 Դարվինիզմ, Ս. Բալալեանի . . . . — 40
81 Պետրոս Դուրեան, Արշակ Չօպանեանի . . . . — 50
82 Շիլիօնի կալանաւորը, Մօրից Հարտմանի, թ. Կ. Գիւլնազ. — 60
83 Համլէտ, Շէկսպիրի, թ. անգլիեր. Յովհ.-խան Մասեհեանի — 75
84 Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի, մասն Ա. 1 —
85 Նոյն, Մասն Բ. . . . . 1 —

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080174

Աշուղ
663